Մաքսային համակարգի փոփոխություններին վերաբերող նախաձեռնություններն ու օրենսդրական նախագծերը պետք է մատչելի լինեն հասարակությանը, քննարկվեն տարբեր շահագրգիռ կողմերի հետ և նոր միայն որոշումներ կայացվեն՝ հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի տեսակետներն ու դրանց վերաբերյալ հիմնավոր եզրահանգումները:

Այս սկզբունքի ապահովման մյուս ուղղությունը պետք է լինի մաքսային ընթացակարգերում և մաքսային գործում կանխատեսելի, անկողմնակալ ու հստակ գործելակերպի ձևավորումը:

Հարկ ենք համարում նշել, որ հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքները մշակվել են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2012-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, կարևորելով հատկապես նշյալ ծրագրի պետական եկամուտների քաղաքականությանն առնչվող մասով ամրագրված՝ հետևյալ երկու կարևորագույն նպատակադրումները.

1. առաջիկա տասնամյակի ընթացքում ռեսուրսային շրջանակի ընդլայնման հիմնական աղբյուր պետք է հանդիսանան հարկային եկամուտները, իսկ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը մինչև 2025 թվականի ավարտը պետք է կազմի շուրջ 27-28 տոկոս,

2. հարկային և մաքսային վարչարարության բարելավումը պետք է դիտարկվի որպես գործարար ու ներդրումային միջավայրի առաջիկա բարեփոխումների գերակայություն:

Մինևույն ժամանակ, հատկանշական է այն, որ հարկային եկամուտների աստիճանական աճի միջոցով ռեսուրսային շրջանակի ընդլայնման և գործարար միջավայրի բարելավման ու մրցունակության ապահովման նպատակներն անխուսափելի հակադրություններ ունեն իրենց մեջ: Հետևաբար, եթե նույնիսկ հաշվի առնենք այն, որ վարչարարության բարեփոխումները կարող են իրականացվել առանց որևէ բացասական հետևանքի, ապա հարկման բազայի ընդլայնմանն ուղղված քաղաքականությունը չի կարող իր ոչ բարենպաստ ազդեցությունը չունենալ ներդրումների և տնտեսական գործունեության ընդլայնման վրա: Այս առումով, նպատակային պետք է համարվի հարկային եկամուտների՝ անհրաժեշտ մակարդակով աճը (ներառյալ հարկման բազայի ընդլայնման միջոցով), իսկ գործարար միջավայրի և հարկային համակարգի տարածաշրջանային մրցունակության հիմնախնդիրները պետք է դիտարկվեն որպես սահմանված նպատակին հասնելու սահմանափակումներ:

Այս առումով, հարկային ու մաքսային օրենսդրության փոփոխությունների հիմքում դրվող սկզբունքների և այդ փոփոխությունների ուղղությունների մշակման ժամանակ պետք է հաշվի առնել այն, որ

1. պետական եկամուտների քաղաքականության ու վարչարարության հիմքում դրվող սկզբունքները պետք է բխեն երկրում իրականացվող տնտեսական քաղաքականության ուղղվածությունից և հիմնված լինեն ազգային տնտեսության առանձնահատկությունների վրա,

2. հարկային ու մաքսային ոլորտներում պետական քաղաքականության մշակման ու վարչարարության իրականացման համատեքստում պետք է մշտապես ուշադրության կենտրոնում պահել կայուն և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման, ազգային տնտեսության համար գերակա համարվող ճյուղերի շարունակական զարգացման, ներդրումների խրախուսման, տնտեսության արտադրատեխնիկական հիմքի կատարելագործման ու նորացման, հասարակության տարբեր սոցիալական խմբերի եկամուտների արդարացի վերաբաշխման նպատակադրումները,

3. Հայաստանի Հանրապետությունում պետք է ձևավորել այնպիսի հարկային ու մաքսային համակարգեր, որոնք իրենց գրավչությամբ, կայունությամբ ու արդիականությամբ մրցունակ կլինեն առնվազն տարածաշրջանային համանման համակարգերի համեմատությամբ:

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՐՈՆՈՄԻԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ

ՎԼԱԴԻՍԻՐ ԼԻՊԱՐԻՏՈՎԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր,*

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն

ՍՎԵՏԱ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՆԱ ՀԱՐՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Մակրոտնտեսական ակտիվության վրա հարկային և մաքսային մարմինների գործունեության փոխադարձ կապի ազդեցության գնահատման խնդիրը հանդիսանում է ցանկացած երկրի տնտեսական քաղաքականության գերակայություններից մեկը: Ընդ որում, այդ ուղղությամբ իրականացվող բոլոր միջոցառումները կապված են պետական բյուջեում հարկային և մաքսային եկամուտների և մակրոտնտեսական ցուցանիշների ապահովման հետ: Մակրոտնտեսական գործունեության ցուցանիշները ոչ միայն տեղեկատվություն են տալիս, թե որքանով են վերը նշված նպատակները իրագործվելու, այլ նաև ապահովում են ընդհանուր տնտեսական միջավայրի վերաբերյալ պատկերացումներ:

Բանալի բառեր. Հարկային համակարգ, մաքսային համակարգ, մակրոտնտեսական ցուցանիշներ, գործարար միջավայր, հարկային վարչարարություն, հարկային քաղաքականություն, մաքսային քաղաքականություն, հարկային եկամուտներ:

ВЗАИМОСВЯЗЬ ДЕЯТЕЛЬНОСТИ НАЛОГОВЫХ И ТАМОЖЕННЫХ СЛУЖБ И МАКРОЭКОНОМИЧЕСКОЙ АКТИВНОСТИ

ВЛАДИМИР ЛИПАРИТОВИЧ АРУТЮНЯН, *д.э.н., профессор*

директор Института экономики им. М. Котаняна НАН РА, член-корр. НАН РА

СВЕТА АЛЕКСАНДРОВНА АРОСЯН, *к.э.н.*

научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Проблема оценки влияния взаимосвязи деятельности налоговых и таможенных служб на макроэкономическую активность является одним из приоритетов экономической политики любой страны. Причем, все мероприятия, осуществляемые в этом направлении, связаны с обеспечением налоговых и таможенных поступлений в государственный бюджет, а также макроэкономических показателей. Показатели макроэкономической деятельности дают не только информацию о том, насколько вышеуказанные цели осуществимы, но и обеспечивают представление об общей экономической среде.

Ключевые слова: налоговая система, таможенная система, макроэкономические показатели, деловая среда, налоговое администрирование, налоговая политика, таможенная политика, налоговые доходы.

THE INTERRELATION BETWEEN THE ACTIVITIES OF TAX AND CUSTOMS AUTHORITIES AND MACROECONOMIC ACTIVITY

VLADIMIR LIPARIT HARUTYUNYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*

Director, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of Armenia

Corresponding Member, National Academy of Sciences, Republic of Armenia

SVETA ALEKSANDR HAROSYAN, *Candidate of Sciences (Economics)*

Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The issue of estimation of the impact of tax and customs authorities upon the macroeconomic activity is among the top priorities of the economic policy of every country. Furthermore, all the measures implemented for that purpose are connected with ensuring collection of tax and customs revenues for the state budget and stability of macroeconomic indicators. The macroeconomic indicators inform not only about the possibility of reaching the mentioned goals but also about overall economic environment.

Keywords: Tax system, customs system, macroeconomic indicators, business climate, tax administration, tax policy, customs policy, tax revenue

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԶԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐՈՒ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տնտեսական հարաբերությունների զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ բոլոր հասարակական-քաղաքական ֆորմացիաներում պետությունն այսպես թե այնպես մասնակցել է տնտեսական գործընթացներին: Հայտնի է, որ տնտեսագիտությունը սահմանափակ ռեսուրսների պայմաններում հասարակական ընտրության մասին գիտություն է, որը փորձում է տալ չորս հիմնական հարցերի պատասխան. ի՞նչ արտադրել, ինչպե՞ս արտադրել, ու՞մ համար արտադրել և ինչպե՞ս ընդունել դրա վերաբերյալ որոշումները¹: Այս տեսանկյունից, պետական գնումների համակարգը կապված է վերոհիշյալ խնդիրների հետ, որն իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է գնումների ոլորտում իրականացվող ընտրության հիմնախնդրի, պետության դերի և այն մոտեցումների վրա, որոնց օգնությամբ պետությունը որոշումներ է ընդունում և ներգործություն ունենում տնտեսավարման պայմանների վրա:

Պետական գնումների ոլորտում ի՞նչ արտադրել հարցադրման պատասխանը կապված է «պետական պատվեր» հասկացության հետ, որն իրենից ներկայացնում է հասարակական կարիքների բավարարման նպատակով ապրանքների մատակարարման, աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման հիմնավորված ու ձևակերպված պահանջմունք: Վերջինս հիմք է հանդիսանում հասարակական բարիքների արտադրության և տրամադրման նպատակով պետական ռեսուրսների հատկացման համար: Ինչպե՞ս արտադրել հարցը կապված է պետական պատվերը կատարողների ընտրության, իսկ ու՞մ համար արտադրել հարցը՝ տարբեր հասարակական կարիքների բավարարման համար՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման համար պետական ռեսուրսների բաշխման խնդրի հետ: Պետությունն է որոշում, թե որ հասարակական կարիքներն են ենթակա առաջնահերթ բավարարման և այդ նպատակով ի՞նչ ապրանքներ ու ծառայություններ են անհրաժեշտ գնել:

Պետական գնումների ոլորտում որոշումների ընդունումը պայմանավորված է տնտեսական գործունեության պայմանների ձևավորմանն ուղղված պետական քաղաքականությամբ, տնտեսության վրա պետության ներգործությամբ և տնտեսական կյանքում նրա ունեցած դերով:

20-րդ դարավերջին, հատկապես նախկին վարչահրամայական համակարգի փլուզումից հետո, սկսեցին ուժեղանալ խառը տնտեսության մոդելի ձևավորման միտումները, քանի որ ինչպես ցույց է տալիս հասարակական զարգացման պատմությունը բացարձակ շուկայական համակարգն ի գործու չէ դիմագրավելու ճգնաժամերին և հաղթահարելու դրանց բացասական հետևանքները: Նման մոդելն, ըստ էության, ենթադրում է սեփականության ու ձեռնարկատիրության տարբեր ձևերի և տեսակների առկայություն ու տնտեսական կարգավորման տարբեր մոտեցումների համադրում, ինչի արդյունքում պետությունը հանդես է գալիս միաժամանակ որպես այդ համակարգի գործունեության երաշխավոր և սուբյեկտ:

Տեսության մեջ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ հասարակական բարիքների էության բնութագրման վերաբերյալ: Մասնավորապես, Պ. Մամուլեսոնը հասարակական է համարում այն ապրանքները, որոնք միևնույն չափով իրականացնում են օգտակարության երկու կամ ավելի գործառույթներ²: Մ. Բլաուզը հասարակական բարիքների հատուկ բնույթը պայմանավորում է դրանց սպառման միայն համատեղ և հավասար չափով լինելու հետ³:

Հասարակական բարիքները դիտարկելով պետական ծախսերի համատեքստում, Ստիգլիցը առանձնացնում է այդպիսի ծախսերի հետևյալ հիմնական հատկանիշները. դրանց օգտագործ-

¹ Стиллиц Дж. Ю. Экономика государственного сектора. М.:ИНФРА-М, 1997г. стр.18.

² Самуэльсон П., Нордхаус В. Экономика М.: Бином-КноРус, 1999г. стр. 432.

³ Блауг М. Экономическая мысль в ретроспективе. М., 1994г. стр. 549.

ման սահմանափակման անհնարինությունը և նման սահմանափակման ոչ ցանկալիությունը¹: Այդ իսկ պատճառով, պետությունը ստիպված է իր վրա վերցնել հասարակական բարիքների արտադրությունը և այդ նպատակով անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորման համար օգտագործել հարկային մեխանիզմները:

Պետք է նշել, որ շուկան առավելապես հակված է մասնավոր հիմքի վրա ստեղծված բարիքների արտադրությանը, քանի որ դրանք, որպես կանոն, բաժանելի են և, հետևաբար, հասանելի անհատ գնորդների համար, և երկրորդ, վերջիններս կարող են ստանալ այդ բարիքները միայն համապատասխան գին վճարելու դեպքում: Ի տարբերություն մասնավոր բարիքների, հասարակական բարիքները բաժանելի չեն և չեն կարող վաճառվել անհատ գնորդներին: Դրանց վրա չի տարածվում նաև անհասանելիության սկզբունքը, քանի որ գոյություն չունեն համապատասխան միջոցներ չվճարող սուբյեկտներին հասարակական բարիքից օգտվելուց զերծ պահելու համար: Դրա օրինակ կարող է հանդիսանալ ազգային պաշտպանությունը: Միաժամանակ, պետք է նշել, որ գուտ հասարակական բարիքներին զուգահեռ գոյություն ունեն նաև այնպիսիները, որոնք բաժանելի չեն, սակայն դրանց համար կիրառելի է բացառման սկզբունքը: Ինչպես նշում է Ջ. Ստիգլիցը, շատ ապրանքներ տարբեր աստիճանով ունեն այս կամ այն հատկանիշը, օրինակ, օգտագործման բացառումը կարող է լինել հնարավոր, սակայն ոչ ցանկալի, կամ էլ հնարավոր, սակայն շատ թանկ²: Քանի որ նշված հատկանիշները կարող են դրսևորվել ինտենսիվության տարբեր աստիճանով, և հստակ սահման գոյություն չունի մասնավոր և հասարակական բարիքների միջև, մասնագիտական գրականության մեջ օգտագործվում են «խառը հասարակական ապրանքներ» կամ «կվազիհասարակական ապրանքներ» հասկացությունները: Մասնավորապես, Լ. Յակոբսոնը խառը հասարակական ապրանքները բնութագրում է որպես ապրանքներ, որոնց մոտ գոնե մեկ հատկանիշն արտահայտված է ողջամիտ աստիճանով³:

Ներկայումս տնտեսագիտության տեսությունը պետական կարիքները դիտարկում է որպես որոշակի հասարակական պահանջունքներ, որոնք մասնավոր բիզնեսն ազատ շուկայի պայմաններում տարբեր առաջին հերթին, տնտեսական օգուտների բացակայության պատճառով, չի ցանկանում բավարարել: Այդ գործառույթը ստիպված է իրականացնել պետությունը, որն իր վրա է վերցնում հասարակական պահանջունքների բավարարման ֆինանսավորման խնդրի լուծումը: Այդ ուղղությամբ պետական մարմինների գործունեության արդյունք է հանդիսանում հասարակական բարիքների արտադրությունը⁴:

Այսպիսով, պետական կարիքների տակ պետք է հասկանալ այնպիսի հասարակական պահանջունքները, որոնք ձևավորվում են ելնելով սոցիալական օգտակարության բարձր աստիճան ունեցող «ապրանքների» նկատմամբ գոյություն ունեցող հանրային պահանջից: Ընդ որում, դրանք կարող են կրել ինչպես համապետական, այնպես էլ տեղային բնույթ, երբ դրանց հիմնական օգտագործող հանդես են գալիս առանձին տարածաշրջանների բնակիչները: Համապատասխանաբար, կախված նպատակների կարևորության աստիճանից և մակարդակից, հասարակական բարիքների արտադրությունը կարող է ֆինանսավորվել պետական կամ տեղական բյուջեների հաշվին:

Տնտեսական հարաբերություններում և հատկապես պետական կառավարման համակարգում լայնորեն օգտագործվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «պետական գնումները» և «պետական պատվերը»: Դրանք բնորոշվում են որպես հանձնարարական, որոնք տրվում են պետության կողմից համապատասխան ապրանքների արտադրության կամ ծառայությունների մատուցման համար, հետապնդելով կարևորագույն համապետական պահանջունքների բավարարումն ապահովելու նպատակ⁵: Որպես կանոն, երկրի բյուջետային օրենսդրությամբ ընդհանուր գծերով սահմանվում են այդ կարիքների բավարարման նպատակով ապ-

¹ Стиглиц Дж. Экономика государственного сектора. М.: ИНФРА-М, 1997г. стр. 121.

² Стиглиц Дж. Экономика государственного сектора. М.: ИНФРА-М, 1997г. стр.124.

³ Якобсон Л. Экономика общественного сектора. Основы теории государственных финансов..М.: 1996 г. стр.42.

⁴ Афанасьев М., Афанасьева Н., Кныш В. Государственные закупки в рыночной экономике». СПб: СПбГУЭФ, 2004г. стр.9.

⁵ Экономический словарь. Под ред. А. Архипова. М.: Проспект, 2001г. стр. 143.

րանքների և ծառայությունների ձեռքբերման հիմնական ուղղությունները: Անհրաժեշտ է նշել, որ կարևորվում են նաև պետական գնումները, որոնց միջոցով, ըստ էության, իրականացվում է.

- ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական ծառայությունների մատուցումը,
- պետական սեփականություն հանդիսացող կազմակերպություններում բյուջետային ներդրումների կատարումը,
- պետական ռեզերվների համալրման նպատակով անհրաժեշտ ապրանքների ձեռքբերումը,
- պետական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածության խնդրի լուծումը:

Հարկ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ շատ հաճախ «պետական պատվեր» և «պետական գնումներ» հասկացությունները չունեն հստակ տարանջատում և շատ հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ այն դեպքում, երբ դրանց տնտեսական էությունը տարբեր է¹: Նման մոտեցումը հիմնականում պայմանավորված է գնումային գործընթացի ոչ բավարար կանոնակարգվածությամբ, իսկ վերոնշյալ հասկացությունների տարանջատման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է առանձնացնել հասարակական պահանջմունքների բավարարման նպատակով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի հետևյալ առանցքային փուլերը: Առաջին՝ պետական պատվերի ձևավորում որպես պետական պահանջմունքների ծավալի որոշման ուղղությամբ միջոցառումների համալիր, որն իրականացվում է պետական իշխանության կողմից և իրավական ամրագրում է ստանում առաջիկա տարվա բյուջետային փաստաթղթում: Երկրորդ՝ պետական պատվերը որպես օֆերտայի ձև. պետական մարմինները, բյուջետային հիմնարկները և բյուջետային միջոցներ ստացող սուբյեկտները, որպես պատվիրատուներ, դիմում են տնտեսավարող սուբյեկտներին՝ տրամադրելու ապրանքներ, իրականացնելու աշխատանքներ և մատուցելու ծառայություններ սահմանված ժամկետներում և ծավալներով: Երրորդ, պայմանագրերի կնքումը, որով սահմանվում են պատվիրատուի պահանջմունքների բավարարման պայմանները: Չորրորդ, ապրանքների մատակարարման, աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման վերաբերյալ կնքված պայմանագրերի իրականացման հիման վրա պետական գնումների իրականացումը: Ինչպես նշում են որոշ տնտեսագետներ, պետական պատվերի էությունն արտահայտվում է ոչ միայն պայմանագրերի կնքման փաստի, այլ նաև գնումների պլանավորման, պետական պահանջմունքների ձևավորման և պաշտոնական ամրագրման մեջ: Այս իմաստով «պետական գնումներ» հասկացությունն արտացոլում է պետական պատվերի իրականացման փուլը²:

Այսպիսով, պետական գնումները կարելի է սահմանել որպես բյուջետային միջոցների հաշվին պետության կողմից երկրի ներսում կամ արտերկրում արտադրվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ հասարակությանն անհրաժեշտ բարիքներով ապահովելու նպատակով: Իր տնտեսական էությամբ «պետական գնումներ» կատեգորիան արտացոլում է հասարակական պահանջմունքները՝ արտահայտված պետական պահանջարկի տեսքով: Մեր կարծիքով, պետական պատվերի տակ պետք է հասկանալ պետական կարիքների համար ապրանքների մատակարարման, աշխատանքների իրականացման ու ծառայությունների մատուցման հիմնավորված և ձևակերպված պահանջարկը, իսկ պետական պատվերի տեղաբաշխման տակ՝ նշված քայլերի իրականացման համար պայմանագիր կնքելու նպատակով մատակարարների որոշմանն ուղղված գործողությունները:

«Պետական գնումներ» հասկացությունն, ըստ էության, ամրագրում է պետական պատվերի իրականացման փաստը: Այսինքն, պետական գնումը հանդիսանում է պետական պատվերի իրականացման գործընթացի վերջին և ավարտական փուլը: Կախված ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների անվանացանկից և պատվերների տեղաբաշխման եղանակից, գնում-

¹ Афанасьева Н. Прокьюремент в системе государственного регулирования предпринимательства. С-Пб.: ГУЭиФ, 2001г. стр. 13, Венчугов М. Организационное обеспечение системы государственных закупок. СПб: ГУЭиФ, 2001г. стр. 7, Золотарева А. Совершенствование системы закупок товаров, работ и услуг для государственных услуг. М.: ИЭПП, 2003г. стр. 42, Лобанова Е., Шелемина И. Госзаказы и контракты в системе государственного регулирования. Вопросы экономики. М. 1991г. N7. Сироткина Н. Государственные и муниципальные закупки как часть бюджетного процесса в РФ. Нижний Новгород: ГУ ВШЭ, 2006г. стр. 23.

² Афанасьев М., Афанасьева Н., Кныш В. Государственные закупки в рыночной экономике. СПб.: СШГУЭФ, 2004г. стр.10.

ների գործընթացի փոխկապակցված փուլերը կարող են ժամանակագրական առումով համընկնել կամ ունենալ ժամանակային ճեղքվածք: Մասնավորապես, ուղղակի գնումներով ձեռք են բերվում այն ապրանքները, որոնք առկա են ապրանքային շուկաներում, մինչդեռ մի շարք ապրանքների ձեռքբերումն իրականացվում է երկարաժամկետ պայմանագրերի հիման վրա:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում դեռևս գոյություն չունի պետական գնումների համընդհանուր ձևակերպում: Խնդիրը կայանում է նրանում, որ պետության դերն ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործում տարբեր երկրներում տարբեր է: Մասնավորապես, ներկայումս առավելապես աճի միտում ունեն պետության և մասնավոր հատվածի համագործակցության դեպքերն այնպիսի ծառայությունների մատուցման գործում, որոնք ավանդաբար վերապահված են եղել պետությանը: Ըստ էության, պետական գնումներն իրենցից ներկայացնում են պետական կարիքների բավարարման նպատակով ապրանքների ձեռքբերում, որոնք նախատեսված չեն առևտրային վերավաճառքի կամ առևտրային վաճառքի նպատակով այլ ապրանքների արտադրության մեջ օգտագործելու համար:

Տնտեսագիտության տեսությունը հասարակական կարիքների բավարարման նպատակով ապրանքների և ծառայությունների ձեռք բերումն, ընդհանուր առմամբ, դիտարկում է որպես պետական սեկտորի գործունեության հիմնական ուղղություններից մեկը, որը խառը տնտեսության պայմաններում իրականացնում է կարևոր դեր ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխման գործում: Ըստ էության, այդ գործընթացի ֆինանսական ապահովվածությունն իրականացվում է հիմնականում բյուջետային միջոցների հաշվին: Դրա հետ կապված, պետական պատվերի ձևավորման և տեղաբաշխման ուղղությամբ գործունեությունը դիտարկվում է տարբեր ասպեկտներով՝ կախված մասշտաբից, մակարդակից ու տնտեսական բովանդակությունից:

Պետական պատվերի տակ, նեղ իմաստով, հասկացվում է պետական կարիքների համար ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման ծավալների որոշման և պետական պատվերի տեղաբաշխման ուղղությամբ նպատակաուղղված գործունեությունը: Լայն իմաստով, «պետական պատվեր» հասկացությունն օգտագործվում է հասարակական պահանջումների բավարարման ուղղությամբ պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև ծագող տնտեսական հարաբերությունների համախումբը բնութագրելու համար: Այս համատեքստում պետական պահանջարկը դիտարկվում է որպես տնտեսության կարգավորման գործիք, որը ներգործում է դրա կառուցվածքի և դինամիկայի վրա, իսկ պետական պատվերների համակարգը՝ որպես պետական կարգավորման հիմնարար ինստիտուտներից մեկը: Այլ խոսքով, պետական գնումները պետք է դիտարկել որպես ինքնուրույն ինստիտուտ, որն իրենից ներկայացնում է ամբողջականությամբ և միասնականությամբ բնութագրվող փոխկապակցված ու փոխկախված տարրերի կազմակերպված համախումբ:

Հարկ է նշել, որ պետական գնումների համակարգի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ գնումներն իրականացվում են բյուջետային միջոցների հաշվին, իսկ ձեռքբերման ենթակա ապրանքների և ծառայությունների բնութագրիչների որոշումն, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է պետական լիազոր մարմինների կողմից: Ընդ որում, պետական պատվերների ձևավորման և տեղաբաշխման գործընթացում ծագող պայմանագրային հարաբերությունների ամբողջ համախումբը ենթակա է պետական նպատակային կարգավորման:

Պետական գնումների համակարգն, ըստ էության, կարելի է դիտարկել որպես համախառն պահանջարկի ձևավորման կարևոր գործոն, որն էական ազդեցություն ունի տնտեսական աճի և բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացման վրա: Պետական պատվերները, հանդիսանալով համախառն պահանջարկի մի մասն, ուղղակիորեն նպաստում են պետական ծախսերի և արտադրության ծավալների մեծացմանը, թողնելով էական դրական ազդեցություն երկրի տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշների՝ մասնավորապես, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) վրա: Պետությունն, իրականացնելով իր ծախսերը, որոշակի ապրանքների և ծառայությունների առումով ստեղծում է լրացուցիչ պահանջարկ, ինչն էլ հանգեցնում է ՀՆԱ-ի աճին: Մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների դիմաց ստանալով համապատասխան պետական ֆինանսական միջոցներ, տնտեսավարող սուբյեկտներն

ավելացնում են սեփական ծախսերը սպառման նկատմամբ սահմանային հակվածության հիման վրա, դրանով իսկ նպաստելով ընդհանուր պահանջարկի և ՀՆԱ-ի ավելացմանը: Այդ մեխանիզմի հաշվին պետական ծախսերի աճը բերում է ազգային եկամտի մուլտիպլիկատիվ աճին, ինչը փաստորեն տեղի է ունենում մասնավոր ներդրումների ավելացման հաշվին: Այս տեսանկյունից, բյուջետային քաղաքականությունը դառնում է տնտեսության պետական կարգավորման կարևոր ուղղություններից մեկը:

Պետական գնումների կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ դրանք հանդես են գալիս նաև որպես մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմանը նպաստող կարևոր գործոն: Պետությունը, որպես տնտեսական գործունեության ակտիվ մասնակից, հասարակական պահանջունքների բավարարման համար իրականացնելով մեծածավալ աշխատանքներ, կարող է ունենալ որոշակի դրական ազդեցություն տնտեսական աճի, զբաղվածության մակարդակի բարձրացման, մատուցվող սոցիալական ծառայությունների որակի բարելավման և սոցիալ-տնտեսական այլ ցուցանիշների վրա: Միաժամանակ, պետական գնումների համակարգը հանդիսանալով ընդհանուր մակրոտնտեսական համակարգի մի մասը, պետական ծախսերի չիմնավորված ավելացման կամ կրճատման պատճառով կարող է խախտել համակարգի հաշվեկշռվածությունը և հանգեցնել բացասական հետևանքների: Դրանց հավանականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական ծախսերի քանակական մեծությունը հնարավորություն չի տալիս ամբողջությամբ գնահատել պետության տնտեսական գործունեության դերը և պետական ներգործության մասշտաբները: Այդուհանդերձ, պետական գնումները մնում են որպես տնտեսական քաղաքականության ճկուն գործիք և հանդիսանում են տնտեսական աճի, գործարար ակտիվության բարձրացման ու կառուցվածքային անհրաժեշտ փոփոխությունների իրականացման կարևոր միջոց:

Պետական գնումները ենթադրում են պետական պատվերների ձևավորում, որոնց տեղաբաշխման և կատարման տնտեսական մեխանիզմի դերում հանդես է գալիս, այսպես կոչված, «պետական» շուկան: Դրանում պայմանագրային հիմքի վրա պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև սահմանվում ու հաստատվում են տնտեսական կապեր, որոնք, ըստ էության, հետապնդում են որոշակի հանրային պահանջունքների բավարարման նպատակ: Այդպիսի շուկան, ընդհանուր առմամբ, կարելի է դիտարկել որպես կազմակերպված և ինստիտուցիոնալիզացված փոխանակում: Համաձայն Ջ. Հոջսոնի, այդ փոխանակումը ներառում է պայմանագրային համաձայնությունները և սեփականության իրավունքի փոփոխությունը, իսկ շուկան կազմված է ինստիտուտներից և մեխանիզմներից, որոնք կոչված են գործունեության այդ տեսակներին հաղորդելու կառուցվածք, կազմակերպում և լեգիտիմություն¹: Հիմնվելով այս մոտեցման վրա, կարելի է առանձնացնել մի քանի կողմնորոշիչներ ու առանձնահատկություններ, որոնք հնարավորություն են տալիս բնութագրելու «պետական» շուկան: Դրանք են.

Առաջին՝ «պետական» շուկայի կենսագործունեությունը կարևոր նշանակություն ունի տնտեսավարման ֆինանսատնտեսական պայմանների ստեղծման համար: Մի կողմից, այդ շուկան հանդիսանում է այն խողովակը, որով բյուջետային միջոցների զգալի մասը համալրում է շրջանառության մեջ գտնվող դրամական կապիտալը, իսկ մյուս կողմից՝ այն կարելի է բնութագրել որպես տնտեսության ոլորտների միջև նյութական ռեսուրսների վերաբաշխման գործիք:

Երկրորդ՝ պետությունը հանդիսանում է միակ սպառողը և, որպես այդպիսին, ունի շուկայում միակ գնորդին հատուկ բոլոր հատկանիշները: Նա վերահսկում է կոնկրետ բարիքների նկատմամբ պահանջարկը, հանդես գալով որպես դրա միակ գնորդ:

Երրորդ՝ պետական տնտեսավարման այնպիսի կարևոր առանձնահատկություն, ինչպիսին է ապագա գնորդի կողմից ապրանքի հիմնական բնութագրիչների որոշումը, կրճատում է տնտեսավարող սուբյեկտների կողմից առևտրային ծրագրերի կազմման հնարավորությունները: Այլ կերպ ասած, վերջիններիս տնտեսական գործունեությունը սահմանափակվում է պետության կողմից նախանշված շրջանակներով: Գործնականում, դա նշանակում է, որ պետական մարմին-

¹ Ходжсон Д. Экономическая теория и институты. М.:Дело. 2003г. стр..256.

ներն այդ շրջանակներում մեծապես մասնակցում են մասնավոր ֆիրմաների կողմից իրակա-նացվող կառավարման գործառույթներին:

Չորրորդ՝ պետական գնումների նպատակով հատկացվող ֆինանսական միջոցների ծա-վալը, որպես կանոն, բավականաչափ մեծ է, ինչի պատճառով պետությունը շուկայում իրա-կանացում է ինչպես գնորդի, այնպես էլ ներդրողի գործառույթներ, ինչը բնութագրական չէ մրցակցային շուկայի համար:

Հինգերորդ՝ ի դեմս պետության, արտադրողները (մատակարարները) ձեռք են բերում կա-յուն և վճարունակ գործընկերոջ, որն ապահովագրված է շուկայական ռիսկերից: Հենց այդ պատճառով էլ որոշ մասնագետներ կարծում են, որ պետության հետ պայմանագրային հարաբե-րությունների մեջ մտնելը մասնավոր ձեռնարկատերերի համար հանդիսանում է խիստ գրավիչ, քանի որ երաշխավորում է կայուն շուկա և եկամուտներ, ինչպես նաև հնարավոր արտոնու-թյուններ¹: Դրա հետ կապված, «պետական» շուկան համընդհանուր շուկայական մեխանիզմ-ներին և ինստիտուտներին զուգահեռ, ունի նաև հատուկ ստեղծված ինստիտուտներ, որոնք կանոնակարգում են տնտեսավարման հարաբերությունների առանձնահատկությունները: Մաս-նավորապես, որպես այդպիսիք հանդես են գալիս օրենսդրական դաշտը, վերահսկողության համակարգը, շուկայի կառավարման կառույցները և այլն:

Այսպիսով, կարելի է նշել, որ յուրաքանչյուր երկրում համապետական շուկան ապահովում է համազգային (համախառն պահանջարկ), իսկ պետական շուկան՝ պետական պահանջ-մունքների (պետական պահանջարկ) բավարարումը: Պետական պատվերներն օգտագործելով որպես կարևոր տնտեսական գործիք, պետությունը լուծում է որոշակի սոցիալ-տնտեսական խնդիրներ՝ խթանելով տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացումը, գիտական հետազոտու-թյունների իրականացումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը և այլն: Մասնավորապես, Եվրա-միության անդամ պետություններում ընդհանուր ինտեգրացիոն գործընթացի շրջանակներում ստեղծված է պետական պատվերների միասնական եվրոպական շուկա: Որոշ առանցքային ոլորտներում պետական պատվերներն օգտագործվում են որպես կարգավորման գործիք, որը հնարավորություն է տալիս ներդրումների իրականացման ոլորտում տեղական արտադրող-ներին կողմնորոշել նախընտրելի որոշումների ընդունմանը, տնտեսության մրցունակության պահանջներին բավարարող կառուցվածքային փոփոխությունների իրականացմանը:

Ներկայումս զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում հատկապես մեծ է պետական գնումների դերը տեխնիկական առաջընթացի խթանման գործում: Պետական գնումների ազդեցությունը նոր տեխնոլոգիաների մշակման և ներդրման գործընթացի վրա դրսևորվում է, առաջին հերթին, պետական պատվերների միջոցով այդ ապրանքների նկատ-մամբ պահանջարկի ավելացմամբ, և երկրորդ, պետական գնումների շուկայի միջոցով նոր տեխնոլոգիաների փորձարկմամբ: Շատ երկրներում պետական պատվերներն օգտագործվում են նաև փոքր բիզնեսի պետական աջակցության նպատակով: ԱՄՆ-ում պետության հետ 50 հազար դոլարը գերազանցող պայմանագրի կնքման դեպքում գլխավոր կապալառուն պար-տավոր է պատվերի մի մասը կոռպորացիան սկզբունքով փոխանցել ենթակապալառուին: Բացի այդ, սահմանվում են նաև պայմանագրերում փոքր բիզնեսի մասնակցության նպատակային կողմնորոշիչներ: Մինչև 10 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ առևտրային ցանցում առկա ապրանքների գծով պայմանագրերը պետք է հատկացվեն միայն փոքր բիզնեսին²:

Պետական գնումների ոլորտում իրականացվող քաղաքականության գլխավոր նպատակը նվազագույն ծախսերով անհրաժեշտ արդյունքի ստացումն է: Գնորդը պետք է գտնի այնպիսի մատակարար, որը բոլոր անհրաժեշտ պայմանների բավարարմամբ կառաջարկի ապրանքների և ծառայությունների նվազագույն գին: Խնդրի լուծման հիմնական ուղին հանդիսանում է բաց մրցույթների անցկացումը, որոնք նախապես հայտարարված պայմաններով ապրանքների արտադրման և ծառայությունների մատուցման նպատակով պատվերների տրամադրման հատուկ մեթոդ են: Հիմնական նպատակը կոնկրետ ժամանակահատվածի համար մրցութային

¹ Дерябина М.А., Цедилин Л.И. Государственно-частное партнерство: теория и практика, М.: ИЭ РАН, 2007, стр.. 20.

² Студенцов В. Государственные закупки: масштаб, структура, регулирование. Риск. 1995г. № 2-3

հիմունքներով առաջարկությունների ներգրավումն է կազմված մի քանի մասնակիցներից՝ առավել ձեռնտու և շահավետ պայմաններով գործարքի իրականացման համար: Ըստ էության, դա մրցակցային համակարգ է, որն ամբողջությամբ համահունչ է շուկայական տնտեսավարմանը և հնարավորություն է տալիս ապահովել ինչպես առավել շահավետ տնտեսական պայմաններ, այնպես էլ պատվերների իրականացման միջոցով լուծել որոշակի սցիալ-տնտեսական խնդիրներ:

Այսպիսով, ապրանքների և ծառայությունների պետական գնումները հանդիսանում են հասարակական վերարտադրության կարևոր բաղկացուցիչ մաս, ինչը որոշվում է ապրանքային արտադրանքի իրացման ընդհանուր ծավալում «պետական» շուկայի զգալի բաժնով: Պետական գնումների համակարգը հնարավորություն է տալիս իրականացնել արտադրության և ապրանքային շրջանառության շուկայական կարգավորում, նպաստել տեղական արտադրության զարգացմանը, նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը, տնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավմանը, փոքր բիզնեսի աջակցությանը և այլն:

Ընդհանուր առմամբ, պետական գնումների համակարգի ուսումնասիրությունը ենթադրում է պետական կարիքների համար գնվող ապրանքների և ծառայությունների շուկայի համակողմանի հետազոտություն: Ըստ էության, «պետական շուկայում» հասարակական կարիքների բավարարման և պետական գործառույթների կատարման նպատակով իրականացվում են պետական գնումներ: Ընդ որում, մի շարք տնտեսագետներ «պետական շուկային» են վերագրում նաև պետական գույքի իրացումը, այլ կերպ ասած, որպես «պետական շուկա» են դիտարկում նաև պետական գույքի վաճառքի շուկան¹: Իր հերթին, տրվում է նաև պետական շուկայի հետևյալ սահմանումը, ըստ որի. «Ապրանքների և ծառայությունների պետական շուկան պետական սպառման կարիքների համար կառավարության դրանց մատակարարման նպատակով պետական պատվերների տեղաբաշխման, կառավարման և կատարման պետական տնտեսավարման մեխանիզմ է»²: Այս տեսանկյունից պետական գնումները, հանդիսանալով պետական պատվերների իրացման եզրափակիչ փուլ, բնութագրում են շուկայական փոխանակման էությունը:

Պետական գնումների շուկայում, ըստ էության, գործում են մասնակիցների երկու հիմնական խմբեր՝ պետական պատվիրատուներ և պետական պատվերների կատարողներ: Պետական պատվիրատուների՝ որպես պետության շուկայական գործակալների դերում հանդես են գալիս մասնագիտացված կառույցները կամ պետական պայմանագրեր կնքելու իրավասություն ունեցող նախարարությունները, դրանց առանձին ստորաբաժանումները, պետական գերատեսչությունները և այլ պետական կազմակերպությունները: Այսպիսով, պետական պատվիրատուն կարող է դիտարկվել որպես պետական գնումների շուկայի սուբյեկտ, որը ձգտում է առավելագույնի հասցնել գնվող ապրանքի օգտակարությունը ֆինանսական սահմանափակումների պայմաններում: Մի շարք տնտեսագետներ նշում են, որ հանրային նպատակների ձեռքբերման համար խիստ կարևոր է գիտակցել ռացիոնալ շուկայական վարքագծի կանոնները, որպեսզի դրանք հաշվի առնվեն պատվիրատուի գործունեության ոլորտը կանոնակարգող օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի մշակման ժամանակ³: Այսինքն, գնումների արդյունավետությունը կարող է արտահայտվել ինչպես պետական պատվերների մրցութային տեղաբաշխման ժամանակ ֆինանսական ռեսուրսների տնտեսումների, այնպես էլ բյուջետային միջոցների արդյունավետ պլանավորումից և օգտագործումից ստացվող արդյունքի մեծությամբ: Այս դեպքում, պետական պատվիրատուին հատկացվող բյուջետային միջոցների օգտագործման տնտեսական արդյունավետությունն ապահովվում է պետական պատվերների պլանավորման և տեղաբաշխման օպտիմալացման, ինչպես նաև դրա իրականացման նկատմամբ վերահսկողության ճիշտ կազմակերպման ճանապարհով: Դիտարկելով ժամանակակից տնտեսությունում պետական գնումների տեղն ու դերը, առանձնացվում են պետական գնումների իրականացման մի քանի

¹ Управление государственными закупками в Санкт-Петербурге, под ред. В.В. Бланка, Ю.П. Панибратова, СПб., СПбГАСУ. 2004.С.7.

² Федорович В.А., Патрон А.П., Заварухин В.П. США: Федеральная контрактная система и экономика, М., Наука, 2002, С.889.

³ Кныш В. Маркетинговая концепция управления государственными заказами, СПб.: Изд-во СПбГУ, 2000г. стр. 103

ուղղություններ, որոնք ապահովում են պետության բնականոն կենսագործունեությունը և հասարակական պահանջմունքների բավարարումը¹.

- պաշտպանության ու երկրի անվտանգության ապահովման նպատակով ռազմական տեխնիկայի և սպառազինությունների, վառելամթերքի, պարենամթերքի, բուժսարքավորումների և դեղորայքի գնումներ,
- պաշտպանական բնույթի շինությունների և կառույցների շինմոնտաժային աշխատանքներ,
- պետական հիմնարկների ու բյուջետային կազմակերպությունների համար սարքավորումների, գույքի և ապրանքների գնումներ, այդ սուբյեկտների գործունեության համար անհրաժեշտ կառույցների շինմոնտաժային աշխատանքներ,
- պետական բնակարանային ֆոնդի շինարարության գործընթացում իրականացվող գնումներ,
- պետական պահուստների (ռեզերվների) համալրման համար ապրանքների, տարերային աղետների և տեխնոգեն վթարների հետևանքների վերացման նպատակով իրականացվող գնումներ,
- միջպետական պարտավորությունների իրականացման համար գնումների իրականացում,
- ամբողջությամբ կամ մասնակիորեն բյուջետային միջոցների հաշվին ֆինանսավորվող ծրագրերի իրականացման համար ապրանքների գնումներ:

Հարկ է նշել, որ շուկայական տնտեսություն ունեցող բոլոր զարգացած երկրներում պետական շուկայի հատուկ ոլորտն ունի փակ սեգմենտներ: Այսպես, Եվրոպական Միությունում (ԵՄ) պաշտպանության գծով պատվերների մեծ մասը չի ենթարկվում պետական գնումների ընդհանուր կանոններին: ԵՄ անդամ պետություններում սեփական շահերի պաշտպանությունն ապահովելու համար գործում է հատուկ ազգային օրենսդրություն, որը կարգավորում է տվյալ ոլորտում պետական պատվերի տեղաբաշխումը և իրականացումը²: Միաժամանակ, պետական շուկայի առավել բացության անհրաժեշտության մասին են նշում ԱԱՀ-ի և ՄԱԿ-ի միջազգային փորձագետները, որոնց կարծիքով համաշխարհային տնտեսությունում ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրավիճակն առաջին պլան են մղում ոչ թե ռազմական ուղղվածություն ունեցող պետական սպառումը, այլ մարդկային կապիտալում ներդրումների իրականացումը, կայուն տնտեսական զարգացումը, գլոբալ մրցակցությունը³:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ պետական գնումների համակարգի ձևավորման ու զարգացման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությունը պետք է հիմնված լինի այնպիսի մոտեցումների ու սկզբունքների վրա, որոնք հնարավորություն կտան առավելագույնս խուսափել հնարավոր չարաշահումներից և բյուջետային միջոցների ոչ արդյունավետ օգտագործումից:

¹ Дудкин В. Петров Ю. Индикативное планирование- механизм координации деятельности государственных и негосударственных субъектов управления экономикой. Российский экономический журнал, 1998, №7-8.

² Бертран Карсин. Развитие законодательства ЕС о закупках. Доклад на Конференции «Развитие законодательства о размещении и исполнении государственных и муниципальных заказов в РФ», М.: 2008г.
http://www.expounion.ru/exb_det.php?m=6&exb=1511

³ Arrowsmith S. Public Procurement regulation: an introduction. 2010.
<http://www.nottingham.ac.uk/pprg/documentsarchive/asialinkmaterials/publicprocurementregulationintroduction.pdf>

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐԸ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
Երևանի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոն

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ-ում բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովման գործում պետական գնումների համակարգի գործունեության կատարելագործման հիմնախնդիրներին: Վերջիններիս ուսումնասիրությունն իրականացվել է պետական կառավարման մեթոդաբանության ժամանակակից սկզբունքների հիման վրա, ինչը թույլ է տալիս համակողմանիորեն գնահատել տնտեսության վրա պետության ներգործության սահմանները և որոշել տնտեսական կյանքում նրա միջամտության ուղղություններն ու չափերը:

Բանալի բառեր. *հասարակական պահանջարկներ, հանրային բարիքներ, պետական կարիքներ, պետական ծախսեր, պետական գնումներ, պետական պատվեր:*

РОЛЬ СИСТЕМЫ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК В ДЕЛЕ ОБЕСПЕЧЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ БЮДЖЕТНЫХ РАСХОДОВ

ВАРДАН БАБКЕНОВИЧ БОСТАНДЖЯН, *д. э. н., профессор*
кафедра финансового учета Ереванского государственного университета

Аннотация

Статья посвящена проблемам совершенствования деятельности системы государственных закупок в деле повышения эффективности бюджетных расходов РА. Исследование, проведенное на основе современных принципов методологии государственного управления, позволило всесторонне оценить границы влияния государства на экономику и определить направления и степень его вмешательства в экономическую жизнь.

Ключевые слова: *общественные нужды, общественные блага, государственные нужды, государственные расходы, государственные закупки, государственный заказ.*

THE ROLE OF THE PUBLIC PROCUREMENT SYSTEM IN ENSURING THE EFFECTIVENESS OF BUDGETARY EXPENDITURES

VARDAN BABKEN BOSTANJYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Chair of Finances and Accounting, Yerevan State University

Abstract

The article is dedicated to the problems of improving the activity of the public procurement system through improving the effectiveness of budget expenditures in the Republic of Armenia. The study was conducted on the basis of modern principles of public administration methodology, which makes it possible to comprehensively assess the boundaries of the state's influence on the economy and determine the directions and measures of its impact on economic life.

Keywords: *Public needs, public goods, needs of the state, Government spending, government procurement, government order*

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 15T-5B103 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках научного проекта № 15T-5B103.

This work was supported by the RA MES State Committee of Science, in the frames of the research project № 15T-5B103.

ՇՈՒՇԱՆ ՍԱՍՈՒՆԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող


ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Շուկայական տնտեսության զարգացման համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ աշխատանքի շուկան տնտեսության կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Աշխատանքի շուկան իրենից ներկայացնում է աշխատանքի ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի հասարակական հարաբերությունների համակարգ: Այստեղ ձևավորվում և կարգավորվում են մի կողմից վարձու աշխատողների, այսինքն՝ աշխատանք առաջարկողների, մյուս կողմից՝ գործատուների՝ աշխատանքի պահանջարկ ներկայացողների հարաբերությունները:

Ընդհանրապես, աշխատանքը մարդու մտավոր և ֆիզիկական կարողություն է, որը մասնակիորեն կամ լրիվությամբ գործածվում է որոշակի արդյունքի հասնելու նպատակով՝ ներառյալ այն հոգևոր բավարարվածությունը, որը ձեռք է բերվում անմիջականորեն կատարված աշխատանքից: Կատարված աշխատանքի դիմաց տրվում է աշխատավարձ, որն ըստ ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է՝:

Աշխատանքային ռեսուրսներն իրենցից ներկայացնում են իգական և արական սեռի բնակիչներին, ովքեր հնարավորություն ունեն մասնակցելու ապրանքների և ծառայությունների արտադրությանը: Պլանային տնտեսության ժամանակ աշխատանքային ռեսուրսները զբաղվածության վիճակագրության հիմնական ցուցանիշներն էին հանդիսանում: Դրանք կարևորագույն նշանակություն ունեն նաև շուկայական տնտեսության պայմաններում, քանի որ իրենց մեջ ներառում են այնպիսի կարևոր տարրեր, ինչպիսիք են՝ տնտեսապես ակտիվ բնակչությունը և աշխատանքային տարիքի բնակչությունը:

Աշխատանքային ռեսուրսների թվաքանակը որոշվում է՝ ելնելով աշխատունակ տարիքի բնակչությունից և աշխատունակ տարիքի աշխատողներից, իսկ ՀՀ-ում աշխատունակ տարիքը սահմանվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով: ՀՀ-ում աշխատունակ տարիքի բնակչություն է համարվում 16-63 տարիքի բնակչությունը: Բայց քանի որ աշխատանքային ռեսուրսների մեջ մտնում է միայն աշխատունակ բնակչությունը, հետևաբար աշխատունակ տարիքի բնակչության թիվը որոշելու համար անհրաժեշտ է աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակից հանել աշխատունակ թոշակառուներին, որոնք ստանում են հատուկ թոշակներ: Աշխատանքային ռեսուրսների թվաքանակի մեջ անհրաժեշտ է ներառել նաև այն թոշակառուներին, ովքեր դեռ շարունակում են աշխատել: Աշխատանքային ռեսուրսների թվաքանակը որոշվում է ելնելով բնակչության ընդհանուր թվաքանակից (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը²

¹ ՀՀ Աշխատանքային օրենսգրք, հոդված 178, Երևան 2012, էջ 86:

² Ա.Հ. Համբարձումյան, Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ, 2011թ, էջ 16:

Աշխատանքային ռեսուրսները ցույց են տալիս, թե ինչպիսի քանակական և որակական հատկանիշներով են աշխատանքային ռեսուրսները բաշխված գյուղատնտեսության, սեփական ձեռնարկությունների, գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության միջև: Աշխատանքային ռեսուրսները իրենց մեջ ներառում են տնտեսապես ակտիվ և տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը: Տնտեսապես ակտիվ բնակչության մեջ ներառվում են զբաղվածներն ու գործազուրկները: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը 15-75 տարեկան այն անձինք են, ովքեր հետազոտվող ժամանակահատվածում չեն եղել զբաղված կամ գործազուրկ: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության մեջ ներառվում են աշխատունակ տարիքի առկա ուսուցման սովորողներն ու ուսանողները, տնային տնտեսություն վարողները, երեխաներին ու հիվանդ հարազատներին խնամողները, ինչպես նաև այն անձինք, ովքեր տարբեր պատճառներով չեն աշխատում:

Բնակչության դասակարգումն ըստ զբաղվածության կարգավիճակի, որն այժմ կիրառվում է ՀՀ վիճակագրական ծառայությունների կողմից, ամբողջությամբ համապատասխանում է ՄԱԿ-ի կողմից առաջարկված զբաղվածության կարգավիճակի դասակարգչին: Ըստ զբաղվածության կարգավիճակի դասակարգվում է միայն տնտեսապես ակտիվ բնակչությունը, այսինքն՝ զբաղվածներն ու գործազուրկները: Այս դասակարգչի միջոցով որոշվում է անհատի սոցիալական դրությունը հասարակության մեջ: Վարձավճարի դիմաց աշխատելն այն աշխատանքային գործունեության տեսակն է, որի ժամանակ կնքվում է աշխատանքային պայմանագիր, և աշխատանք կատարողը ստանում է աշխատավարձ, որն ուղիղ կապ չունի կազմակերպության շահույթի հետ:

Սեփական կազմակերպությունում աշխատողների՝ իրենց աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը ուղիղ կախվածության մեջ է գտնվում եկամտից, որը ստացվում է ապրանքների և ծառայությունների արտադրությունից: Այն անձինք, ովքեր նման գործունեությամբ են զբաղվում, ընդունում են նաև կառավարչական որոշումներ և պատասխանատվություն են կրում կազմակերպության գործունեության համար: Ըստ զբաղվածության կարգավիճակի դասակարգչի առանձնացնում են նաև հետևյալ խմբերը¹

- **Վարձու աշխատողն** անձ է, ով աշխատում է գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստանում է դրամական և (կամ) բնաիրային փոխհատուցում՝ աշխատավարձ:
- **Ոչ վարձու աշխատողն** անձ է, ով իրեն ինքնուրույնաբար է ապահովում եկամտաբեր տնտեսական գործունեությամբ և զբաղված է սեփական գործում (բիզնեսում), կայացնում է արտադրական որոշումներ կամ լիազորում է այլ անձի (անձանց), գործունեությունն իրականացնում է վարձու աշխատողների ներգրավմամբ կամ առանց վարձու աշխատողների:
- **Գործատուն** անձն է, ով ինքնուրույնաբար կամ մեկ կամ մի քանի գործընկերների հետ միասին ղեկավարում է սեփական բիզնեսը և մշտապես վարձում է մեկ կամ ավելի աշխատողներ:
- **Ինքնազբաղվածն** անձ է, ով զբաղված է եկամտաբեր գործունեությամբ ինքնուրույնաբար՝ առանց աշխատողների ներգրավման, եթե նույնիսկ ներգրավվում է աշխատողներ, այն չի կրում մշտական բնույթ (օրինակ, գյուղացիական տնտեսություն վարող անձը սեզոնային աշխատանքների համար կարող է որոշակի աշխատանքներ կատարելու համար ժամանակավորապես ներգրավել վարձու աշխատուժ):
- **Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամն** անձ է, ով աշխատում է ընտանիքին պատկանող ընտանեկան կազմակերպությունում (տնտեսությունում) օժանդակելու, օգնելու նպատակով և չի ստանում դրամական և (կամ) բնաիրային փոխհատուցում:

Ըստ զբաղվածության կարգավիճակի՝ դասակարգվում են ոչ միայն զբաղվածները, այլ նաև գործազուրկները: Այս դեպքում գործազուրկների զբաղվածության կարգավիճակը որոշվում է ըստ իրենց նախկին զբաղեցրած աշխատանքի:

¹ Վիճակագրական ծառայության պաշտոնական կայք էջ http://www.armstat.am/file/article/rep_ashx_09a_2.pdf

Բնակչության դասակարգումն ըստ զբաղվածության դասակարգչի իրականացվում է ըստ հարցումների, բնակչության զբաղվածության խնդիրների ուսումնասիրման միջոցով, բնակչության սոցիալ-դեմոգրաֆիկ հետազոտության միջոցով: Այսպիսով՝ բնակչության մասին տվյալներն ըստ նրանց կարգավիճակի կարևոր տարր են հանդիսանում հասարակության սոցիալական կառուցվածքի հետազոտության համար:

Աղյուսակ 1

Աշխատանքային ռեսուրսների պատկերը ՀՀ-ում 2016թ-ի սկզբի դրությամբ¹

	Ընդամենը	Տղամարդ	Կին	Քաղաք	Գյուղ
Աշխատանքային ռեսուրսներ	2 286.0	1 046.9	1 239.1	1 360.6	925.4
Տնտեսապես ակտիվ բնակչություն	1 326.5	702.7	623.8	759.3	567.3
Զբաղվածներ	1 087.5	569.8	517.7	551.2	536.3
Գործազուրկներ	239.1	132.9	106.1	208.1	31.0
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	959.5	344.2	615.3	601.3	358.2

1 000 մարդ

Տնտեսապես ակտիվ բնակչությունը բնակչության այն մասն է, որն ապահովում է աշխատանքի առաջարկն ապրանքների և ծառայությունների արտադրության համար²: Բնակչության տնտեսական ակտիվությունը որոշելու համար հաշվարկվում է տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակի գործակիցը, որը հավասար է տնտեսապես ակտիվ բնակչության և ամբողջ բնակչության ընդհանուր թվաքանակի հարաբերությանը՝

$$Q_{\text{SUE}} = \frac{\text{Թ-SUE}}{\text{ԹԲ}}$$

Q_{SUE} - ն տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակի գործակիցն է,

Թ-SUE -ն որոշակի ամսաթվի դրությամբ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակն է,

ԹԲ -ն բնակչության թվաքանակն է որոշակի ամսաթվի դրությամբ:

Այսինքն՝ տնտեսական ակտիվության մակարդակը ցույց է տալիս տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվաքանակում:

2016թ. առաջին եռամսյակի դրությամբ ՀՀ-ում տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակը հասավ է 0.58-ի³:

Տնտեսապես ակտիվ բնակչությունն իր մեջ ներառում է տնտեսության մեջ զբաղվածներին, գործազուրկներին, զինվորականներին և կրոնավորներին; Ըստ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, զբաղված են համարվում այն գործունակ անձինք, ովքեր զբաղված են զբաղվածություն համարվող գործունեության որևէ տեսակով⁴:

Զբաղվածության թվաքանակի և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի միջոցով հնարավոր է հաշվարկել բնակչության զբաղվածության գործակիցը:

$$Q_{\text{R}} = \frac{\text{Թ}_{\text{R}}}{\text{Թ-SUE}} \cdot 100$$

Որտեղ՝ Q_{R} -ն բնակչության զբաղվածության մակարդակն է,

Թ_{R} -ն զբաղվածների թվաքանակն է որոշակի ամսաթվի դրությամբ,

Թ-SUE -ն որոշակի ամսաթվի դրությամբ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակն է:

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից ՀՀ ԱՎԾ-ի տվյալների հիման վրա:

³ Գործակիցը հաշվարկվել է հեղինակի կողմից ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական հրապարակումների տվյալների հիման վրա:

⁴ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 4, 5:

2016թ.-ի վերջի դրությամբ նախնական տվյալներով ՀՀ-ում բնակչության զբաղվածության գործակիցը կազմել է 81.9 %¹:

Զբաղվածության մակարդակը հաշվարկվում է ինչպես ըստ ամբողջ բնակչության թվաքանակի, այնպես էլ ըստ առանձին սեռի, տարիքային խմբերի և այլն: Այսպիսով զբաղվածության մակարդակը զբաղվածների տեսակարար կշիռն է աշխատանքային ռեսուրսների թվաքանակում:

Ըստ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի գործազուրկ են համարվում աշխատանք փնտրող աշխատունակ և գործունակ այն չզբաղված անձինք, ովքեր չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի տեսակների, աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում, պատրաստական են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ²: Գործազուրկի կարգավիճակ տրվում է ՀՀ կառավարության սահմանած անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 7 օրվա ընթացքում: Այսինքն՝ գործազուրկների թվին պատկանում են 16 տարին լրացած բոլոր այն աշխատունակ բնակիչները, ովքեր ակտիվ կերպով աշխատանք են փնտրում և պատրաստ են գտնելու դեպքում անցնել աշխատանքի: Հիմնականում տարբերում են գործազրկության 3 տեսակ՝ ֆրիկցիոն, կառուցվածքային և ցիկլային: Գործազրկությունը լինում է նաև թաքնված, բնական, փաստացի, սեզոնային, հարկադրական, կամավոր և այլն: Թաքնված գործազրկությունը առաջանում է այն դեպքում, երբ բարձր որակավորում ունեցող աշխատողները զբաղված են լինում ցածր որակավորմամբ աշխատատեղում կամ աշխատում են ոչ լրիվ աշխատանքային օր: Բնական գործազրկությունը իր մեջ ներառում է ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկությունները: Այն կոչվում է բնական, քանի որ տնտեսությունում չկա մի այնպիսի ոլորտ, որտեղ այդ գործազրկության տեսակից չլինի, իսկ փաստացի գործազրկությունը իրենից ներկայացնում է բնական և թաքնված գործազրկությունների գումարը: Գործազրկության մակարդակի գործակիցը ցույց է տալիս գործազուրկների տեսակարար կշիռը տնտեսապես ակտիվ բնակչության ընդհանուր թվաքանակում:

Այսինքն՝

$$G_q = \frac{\text{Թ}_q}{\text{Թ}_{\text{տաք}}} 100$$

Որտեղ՝ G_q -ն բնակչության գործազրկության մակարդակի գործակիցն է,

Թ_q -ն գործազուրկների թվաքանակն է որոշակի ամսաթվի դրությամբ,

$\text{Թ}_{\text{տաք}}$ -ն տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակն է որոշակի ամսաթվի դրությամբ:

2016թ.-ի վերջի դրությամբ ՀՀ-ում բնակչության գործազրկության մակարդակը կազմել է 18.4%:

Աղյուսակ 2

Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ կրթության, 2016թ., դեկտեմբեր

Գործազուրկներ	2012	2013	2014	2015	2016
Գործազրկության մակարդակը	16.4	17.2	17.1	16.6	18.4
Գործազուրկների թիվը, այդ թվում՝					
կանայք	45.4	41.3	47.3	53.1	53.4
երիտասարդներ	14.6	17.7	15.6	19.0	19.2
մինչև 55 տարեկան անձինք	37.3	41.6	55.4	65.7	66.3
55-ից բարձր	10.5	14.4	10.5	11.3	12.9

¹ Գործակիցը հաշվարկվել է հեղինակի կողմից ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական հրապարակումների տվյալների հիման վրա:

² «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 7:

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են, որ 2016թ.-ին 2012թ.-ի համեմատությամբ գործազրկության մակարդակը աճել է 2%-ով: 2015թ. և 2016թ. գործազուրկների ընդհանուր թվաքանակում ավելի մեծ մասնաբաժին ունեն կանայք, մինչդեռ 2012թ. և 2013թ. հակառակ պատկերն է նկատվում: Գործազուրկների մեջ մեծ մասնաբաժին են կազմում մինչև 55 տարեկան անձինք, որը պայմանավորված է նշված տարիքի բնակչության մեծ քանակով:

Աշխատանքի շուկան, լինելով շուկայական տնտեսության ինքնուրույն բաղադրիչ, սերտորեն կապված է տնտեսական համակարգի մյուս բաղադրիչների, մասնավորապես՝ ապրանքների ու ծառայությունների շուկայի և կապիտալի շուկայի հետ: Այդ կապը փոխադարձ է, քանի որ դրանցից յուրաքանչյուրի գործունեությունը պայմանավորված է մյուսների գործունեությամբ: Աշխատանքի շուկան ապրանքների և ծառայությունների շուկայի հետագա զարգացման կարևոր նախադրյալն է, իսկ վերջինս իր հերթին զգալի ազդեցություն ունի աշխատանքի շուկայի ընդլայնման, զարգացման, աշխատանքի նկատմամբ պահանջարկի ավելացման գործում:

Ներկա ժամանակահատվածում ՀՀ աշխատաշուկային խիստ բնորոշ է աշխատանքի պահանջարկի կտրուկ անկումը, որի հետևանք են հանդիսանում տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի տարեցտարի նվազումը, գործազուրկների թվաքանակի և գործազրկության մակարդակի աճը: Աշխատողների ներգրավվածությունը Հայաստանի տնտեսությունում ցածր է, որի հետևանքով երկրում բարձր է գործազրկության մակարդակը: Խնդիրներ կան առաջարկվող աշխատատեղերի և աշխատողների մասնագիտական համապատասխանության հարցերում:

Այսպիսով՝ վերը նշված վիճակագրական տվյալներն անհրաժեշտ են զբաղվածության իրավիճակի կարգավորման, աշխատանքային գործընթացի գնահատման և կատարելագործման, զբաղվածության, եկամուտների և կյանքի մակարդակի այլ ցուցանիշների միջև փոխհարաբերությունների չափման, աշխատանքի արտադրողականության դինամիկայի ուսումնասիրման համար: Աշխատանքի շուկայի մասին տեղեկատվությունը կարևոր գործիք է հանդիսանում պետության տնտեսական և սոցիալական քաղաքականության մշակման համար:

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՇՈՒՑԱՆ ՍԱՍՈՒՆԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆ

*ՀՀ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Համառոտագիր

Աշխատանքի շուկան և բնակչության զբաղվածությունը շուկայական տնտեսական համակարգում առանցքային տեղ են զբաղեցնում: Աշխատանքի շուկան շուկայական տնտեսության առավել ծավալուն, բարդ կարգավորվող և դժվար կանխատեսվող ոլորտներից է: Մի կողմից, այն ենթարկվում է շուկայի օբյեկտիվ օրենքներին և օրինաչափություններին, մյուս կողմից՝ դրա բարձր փոփոխականությունը և ինդրահարույց բնույթը պայմանավորված է աշխատանքի շուկայի հիմնական գործող անձանց ընդգծված սուբյեկտիվ վարքագծով:

Բանալի բառեր: Աշխատանքի շուկա, զբաղվածություն, գործազրկության մակարդակ, վիճակագրական ծառայություն, աշխատավարձ, աշխատանքային ռեսուրսներ, աշխատունակ տարիք:

ПОКАЗАТЕЛИ, ХАРАКТЕРИЗУЮЩИЕ РЫНОК ТРУДА В РА

ШУШАН САСУНИКОВНА АСАТРЯН

младший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

Рынок труда и занятость населения занимают центральное место в рыночной экономической системе. Рынок труда является одним из наиболее емких, сложно регулируемых и трудно прогнозируемых сфер рыночной экономики. С одной стороны, он подвергается объективным законам и закономерностям, а с другой стороны, его высокая волатильность и проблемный характер обусловлены подчеркнута субъективным поведением основных действующих лиц рынка труда.

Ключевые слова: рынок труда, занятость, уровень безработицы, статистическая служба, заработная плата, трудовые ресурсы, трудоспособный возраст.

INDICATORS DESCRIBING THE LABOR MARKET IN THE RA

SHUSHAN SASUNIK ASATRYAN

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

Labor market and employment play a crucial role a market-oriented economic system. The labor market is one of the most complex, and hard to regulate and forecast areas of the market economy. On the one hand, it is affected by normal rules and logics of the market, and on the other hand, it is highly volatile and complex that is explained by the subjective behavior of the main actors of the labor market.

Keywords: Labor market, employment, unemployment rate, statistical service, wage, labor force, working age

ՇՈՒՇԱՆ ՍԱՍՈՒՆԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆ

*ՀՀ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Տնտեսվարման ներկա փուլում Հայաստանի Հանրապետության համար կարևորվում է ստվերային տնտեսության կրճատման, հարկային ու մաքսային կարգապահության բարձրացմանն ուղղված վարչարարության միջացառումների իրականացումը և դրանց արդյունքում թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանն ուղիների մշակումը:

ՀՀ-ում հարկային և մաքսային մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ուղիները ներկայացնելուց առաջ անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ հարկային համակարգի բարեփոխումների հիմնական ուղղությունները, որոնք իրենց էությունը բավականին բարդ գործընթացներ են և պահանջում են ինչպես միջոցներ, այնպես էլ ժամանակ: Այդ բարեփոխումների սկզբնական փուլում դրական արդյունքները, որոնք կարող են արտահայտված լինել տնտեսական այնպիսի ցուցանիշներում, ինչպիսիք են արտադրության մակարդակը, ներդրումները կամ տնտեսական աճը, անմիջապես ի հայտ չեն գալիս, և դա այն դեպքում, երբ ծախսերը այդ գործընթացի մշտական ուղեկիցներն են¹:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ տնտեսության առկա դինամիկայի և հարկային ու մաքսային համակարգի զարգացման հարաբերությունները մեծապես չեն համապատասխանում կառուցվածքային, ինստիտուցիոնալ, ինչպես նաև ֆինանսական հատվածներում փոխհարաբերությունների զարգացմանը: Այս թերություններին զուգընթաց հարկային ու մաքսային համակարգն ունի նաև ներքին հակասություններ՝ կապված ներքին կառուցվածքի իրական դերի և նշանակության անհամապատասխանության հետ, որոնք էլ հանգեցնում են հարկային և մաքսային մարմինների գործունեության անկատարելիությանը:

ՀՀ հարկային համակարգի հիմնախնդիրները խմբավորված են երկու հիմնական խմբերում՝

- հարկային համակարգի ներքին հիմնախնդիրներ,
- տնտեսության կառուցվածքային հիմնախնդիրներ:

Հարկային համակարգի ներքին հիմնախնդիրները ներառում են.

1. անուղղակի հարկերի գերակշռումն ուղղակի հարկերի նկատմամբ, որը ցածր եկամուտների պարագայում բերում է եկամուտների վերաբաշխման անհավասարության,

2. սեփականության ինստիտուտի անկատարության ու անպաշտպանվածության հետևանքով ՓՄՁ սուբյեկտների միջև հարկային բեռի անհավասարաչափ բաշխումը,

3. հարկման մեխանիզմների խաչաձևաձուլությունը և, որոշ դեպքերում, միևնույն օբյեկտի բազմակի հարկումը,

4. հարկման անարդարացիությունը, հարկային բեռի անհավասարաչափ բաշխումը, ինչը բերում է տնտեսության մեջ ստվերայինության մակարդակի աճին և հարկային համակարգի նկատմամբ վստահության անկման,

5. հարկային վարչարարության միակողմանիության, անարդյունավետության և հարկային մարմիններում կոռուպցիայի առկայությունը:

Հատկապես վերջին երկու բացասական ազդեցություններն իրենց հերթին բերում են տնտեսության մեջ տնտեսվարող սուբյեկտների գործունեության, շրջանառության ծավալների և եկամուտների՝ հարկային դաշտից դուրս գալուն, հետևաբար և հարկային մուտքերի նվազմանը:

¹ Տ. Վ. Հարությունյան, Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում Երևան, 2016, էջ 257:

Հաջորդ խմբում արտացոլված են տնտեսության կառուցվածքային զարգացման հիմնախնդիրները, որոնց հիմքում ընկած է անարդյունավետ հարկային համակարգը և տնտեսական զարգացումների հետ չհամաձայնեցված հարկային քաղաքականությունը: Այստեղ կարևորվում են հետևյալ հիմնախնդիրները.

1. միջանկյալ շրջանառության կամ արտադրական գործընթացների հաջորդական փուլերում հարկման բարձր մակարդակը,

2. հումքային և անավարտ արտադրանքի արտահանման շրջանառության հարկային արտոնությունները,

3. ներքին շուկայում չարտադրվող և մոտ ապագայում արտադրություն ծավալելու միտումներ հանդես բերող ապրանքների ու ծառայությունների ներմուծման հարկման բարձր մակարդակը, որը հանգեցնում է տնտեսության կառուցվածքի կայացման և զարգացման երկու հիմնարար գործոնների խաթարմանը: Դրանք են՝

ա) միջճյուղային գործընթացների ակտիվացումը, արտադրության ապրանքայնության աճը և սրանց միջոցով հավելյալ արժեքի ստեղծման ինտենսիվության աճը,

բ) հարաբերական առավելությունների պահպանումը և տնտեսության կողմից դրանց ամբողջական յուրացումը:

Այս երկու գործոնների բացակայության հետևանքներն են ՀՀ-ում տնտեսության տարբեր հատվածներում շահութաբերության շարունակական անկումը, ինտեգրացիայի և կապիտալիզացիայի ցածր մակարդակը, ինչպես նաև անընդմեջ աճող արտաքին առևտրային պակասուրդն իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Բացասական ազդեցությունների այս շղթան ՀՀ տնտեսության զարգացմանը խոչընդոտող հիմնական հանգամանքն է: Եթե անգամ հարկային վարչարարության և հարկման սկզբունքները, որոնք շարադրված են հիմնախնդիրների առաջին խմբում, ենթարկվեն հիմնարար բարելավման, ապա դա բավարար չի լինի այս խմբի հիմնախնդիրների լուծման համար, ինչը կարող է թեկուզև բերել վստահելի հարկային համակարգի առկայության դեպքում տնտեսական աճի երկարաժամկետ դանդաղեցման և, անգամ, տնտեսության ցնցման երևույթների:

ՀՀ-ում անընդմեջ իրականացվում են հարկային և մաքսային մարմինների գործունեության թափանցիկությանն ու հաշվետվողականությանն ուղղված աշխատանքներ, այդ թվում՝ «ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի գործունեության համառոտագիրը», որտեղ ներկայացվել են նոր ընդունված իրավական ակտերը և դրանց հակիրճ մեկնաբանությունները: ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվում են հասարակական հետաքրքրություն ունեցող օրենսդրական ակտերի նախագծերը, գործող օրենսդրական ակտերը, հաշվետվությունների ձևաթղթերը և հարկ վճարողների իրազեկման համար նախատեսված այլ տեղեկատվություն¹: Մաքսային ծառայության պաշտոնական կայք էջում ևս տեղադրվել և շարունակվում են տեղադրվել բազմաթիվ նորություններ, ինչպես նախագծերի, այնպես էլ միջազգային իրադարձությունների վերաբերյալ²: Շարունակում է աճել ՀՀ ֆինանսների նախարարության հարկ վճարողների հեռախոսագանգերի սպասարկման կոնտրոնի կողմից հեռախոսակապով և էլեկտրոնային եղանակով տրամադրվող պարզաբանումների թվաքանակը: Հարկային և մաքսային մարմինների կողմից ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով 2012թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կազմում ձևավորվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ներքին աուդիտի վարչությունը, հաստատվել են վարչության գործառնությունները, անձնակազմի պաշտոնական անձնագրերը և «ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին աուդիտի կանոնակարգը»:

2017թ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն մշակել է վարչարարության ծրագիր, որին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել հոկտեմբերի 6-ի նիստում: Ուղենշային այդ փաստաթղթով սահմանվում են այն հիմնական ուղղություններն ու միջոցառումները, որոնց հիման

¹ ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայք էջ <http://taxservice.am/>

² ՀՀ Մաքսային ծառայության պաշտոնական կայք էջ <http://customs.am/>

վրա առաջիկայում պետք է իրականացվեն եկամուտների ապահովման վարչարարական աշխատանքները:

Եկամուտների վարչարարության բարելավման միջոցառումները կոչված են ընդլայնել հարկային և մաքսային մարմինների կարողությունները, որոնք առաջնահերթ պետք է ուղղվեն ստվերային շրջանառությունների բացահայտմանը, ռիսկային տնտեսավարող սուբյեկտների մոտ հարկային հսկողական ամբողջ գործիքակազմի կիրառմանը և մաքսային հսկողության խստացմանը: Զուգահեռաբար կիրականացվեն համապատասխան միջոցառումներ՝ հարկային և մաքսային հանցագործությունների կանխարգելման, դրանց խափանման և բացահայտման ցուցանիշների, ինչպես նաև պատասխանատվության կիրառման թափանցիկության բարձրացման ուղղությամբ: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է կրճատել տնտեսության ստվերային հատվածը՝ ամրապնդելով երկրի տնտեսական անվտանգությունը, ավելացնել պետական բյուջեի հարկային եկամուտները, ինչպես նաև բարձրացնել հարկային և մաքսային վարչարարության արդյունավետությունն ու ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի գործունեության թափանցիկությունը¹:

Այս առումով խնդիր է դրվում վերլուծական կարողությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի բարելավմամբ բացահայտել ռիսկային հարկ վճարողներին ու կատարված իրավախախտումները, հարկային ներուժը, վարչական հսկողությունն ուղղել ռիսկային հարկ վճարողներին կամ ոլորտներին: Միաժամանակ՝ ենթադրվում է, որ վերլուծական դիտարկումների կենտրոնում են լինելու և աննկատ հսկողություն է իրականացվելու այն ոլորտներում, որտեղ հարկման դրույքաչափերի նվազման կամ այլ արտոնությունների տրամադրման ուղղությամբ հարկային քաղաքականության փոփոխություններ են տեղի ունեցել՝ այդ ոլորտներում աշխատանքները կենտրոնացնելով ստվերային շրջանառությունների բացահայտման, բիզնեսի տրոհման, ագրեսիվ հարկային ծրագրավորման և սահմանված արտոնությունները չարաշահելու դեպքերի բացահայտման վրա:

Այս խնդիրների լուծման համար նախատեսվում են վարչարարական միջոցառումներ, որոնք կարճաժամկետ հատվածում նպատակաուղղված են ստվերի կրճատմանը, հարկային եկամուտների գծով լրացուցիչ մուտքերի ապահովմանը, ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործմանն ու վարչարարության արդյունավետության բարձրացմանը: Ակնկալվում է, որ ծրագրված աշխատանքների հետևողական իրականացման արդյունքում երկարաժամկետ հատվածում կամրապնդվի հարկ վճարողների ինքնազնահատման համակարգը, կաշխուժանա հանրային հսկողությունը և կբարձրանա վստահությունը ՊԵԿ-ի գործունեության նկատմամբ, հարկեր չվճարելը կդառնա ոչ շահավետ²:

Բացի վերոնշյալներից հարկային ու մաքսային գործունեության համար կարևորվում են թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, որոնք ներառված են նաև ՀՀ կառավարության N 1141-Ն որոշման մեջ, քանզի այն դարձել է կարևորագույն և առանցքային հարց ՀՀ-ում³: Հետևաբար թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է տեղեկատվության լիարժեք հասանելիության ապահովումը, որի համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- տեղեկատվության տրամադրման ընթացակարգերի ու ժամկետների հստակեցումը, դրանց խախտումների համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանումը,
- պետական մարմիններում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակումը և համապատասխան փաստաթղթերում վերջիններիս գործառույթների ամրագրումը,
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտության դեպքում լրացումների և փոփոխությունների կատարումը՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին,

¹ <http://armef.com/hy/news/meknabanutyun/cragri-irakanacum/>

² <http://armef.com/hy/news/meknabanutyun/cragri-irakanacum/>

³ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 2015 թվականի սեպտեմբեր, N 1141-Ն:

- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակումը:
 - Հանրությանը տեղեկատվության տրամադրման և հետադարձ կապի ապահովման նոր գործիքներ ներդնելը:
 - Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է նաև բարձրացնել իշխանության մարմինների և հանրային ինստիտուտների գործունեության թափանցիկությունը: Այս նպատակով իրականացվելիք միջոցառումներն ընդգրկելու են հետևյալները՝
 - պետական ծառայողների ընտրության գործընթացում էթիկայի կանոնների պահպանումը գնահատելու ուղեցույցների մշակումը,
 - պետական ծառայողների ընտրության և առաջխաղացման՝ հանրության համար հասկանալի և վստահելի համակարգի գործարկումը,
 - պետական ծառայության թափուր պաշտոնների մեծ մասը մրցութային կարգով լրացնելն ապահովելը և թափուր պաշտոնների լրացման գործընթացը համակարգող և մշտադիտարկում իրականացնող իրավասու մարմին նշանակելը,
 - իրականացված աշխատանքների, գործունեության արդյունքների, այդ թվում՝ ֆինանսական գործառնությունների վերաբերյալ պարբերական հաշվետվությունների հրապարակումն ապահովելը,
 - քաղաքական որոշումներ ընդունողների գործունեության հրապարակայնության նվազագույն չափանիշների սահմանումը,
 - պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային հետաքրքրություն ներկայացնող երևույթների ու խնդիրների վերաբերյալ հանրությանն ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն տրամադրող կառուցակարգերի մշակումը:
- Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորման կարևոր նախադրյալներից է նաև ֆինանսական թափանցիկության ավելացումը:
- Այս նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝
- ՀՀ պետական բյուջեի մշտադիտարկման կառուցակարգերի կատարելագործումը.
 - անկախ աուդիտի համակարգի զարգացումը.
 - աուդիտորական եզրակացությունների հրապարակայնության մեծացումը:
- Կատարված հետազոտությունները թույլ են տալիս կատարելու ստորև ներկայացվող եզրակացություններն ու առաջարկությունները, որոնց համար առաջարկվում են հետևյալ միջոցառումները.
- Հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական կարողությունների բարձրացումը. հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ու ատեստավորման չափանիշների ներդրումը, որը կնպաստի նրանց մասնագիտական կարողությունների բարձրացմանը: Ստուգում իրականացնող աշխատակիցներին օժանդակելու նպատակով անհրաժեշտ է մշակել ստուգումների և ընթացիկ հսկողության այլ գործիքների իրականացման օժանդակող ուղեցույցներ, այդ թվում՝ անուղղակի եղանակով հարկային պարտավորությունների հաշվարկման և չափազրումների իրականացման միասնական ստանդարտների վերաբերյալ:
 - Անհրաժեշտ է ներդնել ներքին հսկողության և աուդիտի խստացում՝ ուղղված կոռուպցիոն ու հովանավորչության դեպքերի և ռիսկերի բացահայտմանը. էթե կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվի հարկային և մաքսային ծառայողների լայն ընդգրկուն ռոտացիաներ, կիստացվի վերահսկողությունը հարկային և մաքսային ծառայողների գործունեության նկատմամբ, ապա նրանց վերաբերյալ բողոքները կամ ընդունած վարչական ակտերի անվավեր ճանաչման բոլոր դեպքերը կդառնան ծառայողական քննության առարկա:
 - Անհրաժեշտ է մեծացնել տնտեսավարող սուբյեկտներին մատուցվող ծառայությունների շրջանակը, այսինքն՝ նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնել, ինչն էլ կնպաստի տնտեսավարող սուբյեկտ-

ների հարկային պարտավորությունների պատշաճ կատարմանը և անզուգուղիությամբ կատարվող իրավախախտումների կանխարգելմանն ու հարկային եկամուտների սահուն և կանխատեսելի հավաքագրմանը:

- Անհրաժեշտ է ներդնել հարկային մարմնի գործունեության արդյունքների վերաբերյալ հանրությանը պարբերաբար իրազեկման գործիքներ: Օրինակ՝ հարկային և մաքսային մարմինների իրականացրած վարչարարության արդյունքները տեղադրել այդ մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերում, և պարբերաբար հրապարկել համակարգի վարչարարության արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունները և ՊԵԿ-ի գործունեության տարեկան հաշվետվությունները:
- Անհրաժեշտ է հեռուստատեսությամբ և ռադիոյով կազմակերպել հաղորդումներ, որոնց միջոցով հանրությանը պարբերաբար իրազեկել բացահայտված հարկային իրավախախտումների, կիրառված պատասխանատվության միջոցների, ինչպես նաև հարկային ու մաքսային բնագավառներում միջազգային նորությունների վերաբերյալ:
- Անհրաժեշտ է մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարելավում, մոտիվացիոն համակարգերի կիրառում: Առավել կարևոր է հարկային և մաքսային մարմնի աշխատակիցների ճիշտ մոտիվացումն ու խրախուսումը, և ըստ այդմ էլ կարող են նվազեցվել կոռուպցիոն ռիսկերը: Օրինակ՝ նյութական խրախուսման ժամանակ նպատակահարմար կլինի հաշվի առնել նաև տվյալ աշխատակցի աշխատանքային ստորաբաժանումը և մասնագիտական պատրաստվածությունը: Հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետության գնահատման ժամանակ օգտակար կլինի հաշվի առնել նաև այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են մեծ լարվածությամբ ու կատարողականության բարձր ցուցանիշներ ապահովելու պայմաններում աշխատելու ունակությունը և այլն:
- Նպատակահարմար կլինի հստակեցնել հարկ վճարողների և հարկման օբյեկտների հաշվառման համակարգը:
- Ցանկալի է պարզեցնել հարկային օրենսդրությունը և վերացնել տարբերացումներն ու հակասությունները:
- Անհրաժեշտ է մշակել միջոցառումներ՝ ուղղված հարկային և մաքսային օրենսդրության կիրառման մեթոդական բազայի ստեղծմանը, գործողությունների կատարելագործմանն ու հնարավորինս պարզեցմանը, հարկային մարմինների կողմից նախատեսվող և կատարված փոփոխությունների մասին հարկատուների օպերատիվ իրազեկման վերաբերյալ:
- Հարկային վարչարարության բարելավման նպատակով կարևոր նշանակություն կունենան փաստաթղթաշրջանառության շարունակական կրճատումը և թափանցիկության ապահովումը, ինչպես նաև խոշոր հարկատուների հանդեպ առավել ուշադիր ու անաչառ աշխատանքը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ծավալների մեծացումը և հարկային մարմնի կառուցվածքի օպտիմալացումն ու հարկային համակարգում աշխատողների թվի կրճատումը:

Ամփոփելով այս ամենը կարելի է փաստել, որ ՀՀ-ում հարկային և մաքսային մարմինների թափանցիկության և հաշվետվողականության ապահովման համար անհրաժեշտ է լուծել վերոնշյալ հիմնախնդիրները:

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՍԱՔՍԱՅԻՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՇՈՒԷԱՆ ՍԱՍՈՒՆԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆ

*ՀՀ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Համառոտագիր

Տնտեսվարման ներկա փուլում հարկային և մաքսային մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը հանդիսանում է պետության կարևորագույն խնդիրներից մեկը, ինչի լուծումը հնարավորություն կտա ձևավորել ժամանակակից ու տնտեսության ներկայիս իրավիճակին համապատասխանող մրցունակ հարկային և մաքսային համակարգ: Կիրառելով ճիշտ քաղաքականություն՝ այն կվերաճվի հզոր տնտեսական լծակի, որի միջոցով կապահովվի ինչպես պետության համար ցանկալի եկամուտների մակարդակ, այնպե՛լ էլ տնտեսության կայուն զարգացման բարենպաստ պայմաններ:

Բանալի բառեր. Թափանցիկություն, հաշվետվողականություն, տնտեսության կայուն զարգացում, ստվերային տնտեսություն, կոռուպցիա, հարկային վարչարարություն, մաքսային վարչարարություն, բարենպաստ տնտեսական պայմաններ

ПУТИ ОБЕСПЕЧЕНИЯ ПРОЗРАЧНОСТИ И ПОДОТЧЕТНОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ НАЛОГОВЫХ И ТАМОЖЕННЫХ ОРГАНОВ В РА

ШУШАН САСУНИКОВНА АСАТРЯН

младший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

На современном этапе хозяйствования обеспечение прозрачности и подотчетности деятельности налоговых и таможенных органов является одной из важнейших задач государства, решение которой позволит сформировать конкурентоспособную и соответствующую нынешней ситуации налоговую и таможенную системы. При правильном применении политики это превратится в мощный экономический рычаг, с помощью которого могут быть обеспечены как желаемый для государства уровень доходов, так и благоприятные условия для устойчивого развития экономики.

Ключевые слова: прозрачность, подотчетность, устойчивое развитие экономики, теневая экономика, коррупция, налоговое администрирование, благоприятные экономические условия.

THE WAYS OF PROVIDING TRANSPARENCY AND ACCOUNTABILITY OF THE ACTIVITIES OF TAX AND CUSTOMS AUTHORITIES IN THE RA

SHUSHAN SASUNIK ASATRYAN

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

At the current stage of economic activities ensuring the transparency and accountability of the activities of tax and customs bodies and/or authorities is one of the most important objectives of the government, the and addressing these issues would allow forming a competitive tax and customs system in line with the current economic situation. With the application of the right policy, it will turn into a powerful economic lever, through which both the level of income desired by the state and favorable conditions for the sustainable development of the economy can be ensured.

Keywords: Transparency, accountability, sustainable development, shadow economy, corruption, tax administration, favorable economic conditions

ՍՈՒՄԱՆ ԱՐԿԱՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*Շուշիի տեխ. համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի
ագրոֆիզնես ամֆիոնի ավագ դասախոս*

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ (IPO) ՈՐՊԵՍ ԼՂՀ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից տնտեսությունում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները առնչվում են ֆինանսական և, մասնավորապես արժեթղթերի շուկայի հետ, որտեղ հիմնական դերը կապիտալի շուկայինն է: Վերջինս էլ համարվում է տնտեսական աճի ապահովման և հասարակության սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրների լուծման ֆինանսական կարևոր բաղադրիչը: Արդի պայմաններում ՀՀ-ում և ԼՂՀ-ում տնտեսությունը կարիք ունի ներդրումների, և կայուն տնտեսական աճ ապահովելու համար միայն բանկային վարկերը բավարար չեն: Հետևաբար անհրաժեշտ է ունենալ արտադրության ֆինանսավորման գործուն համակարգ և, հատկապես, զարգացած արժեթղթերի շուկա:

IPO (բաժնետոմսերի նախնական հրապարակային առաջարկ) հասկացությունը ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չէ, և միայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում է, որ տրված են դրան առնչվող մի շարք հասկացությունների սահմանումներ, ինչպես՝

- հրապարակային առաջարկ է համարվում արժեթղթերի որակավորված ներդրող չհանդիսացող 100-ից ավելի անձանց կամ անորոշ թվով անձանց ուղղված առաջարկը,
- արժեթուղթ թողարկելն անձի գործողությունների ամբողջությունն է՝ ուղղված նույն դասի արժեթղթերի համախմբի առաջացմանը,
- արժեթղթի վաճառք է համարվում տվյալ արժեթղթի առուվաճառքի, փոխանակման կամ հատուցելի ցանկացած այլ գործարք,
- տեղաբաշխում է համարվում արժեթղթերի առաջին վաճառքը ներդրողին. տեղաբաշխումը կարող է իրականացնել թողարկողը կամ օրենքով նախատեսված ներդրումային ծառայությունները մատուցելու իրավունք ունեցող անձը (տեղաբաշխողը),
- հրապարակային տեղաբաշխում է համարվում արժեթղթերի տեղաբաշխումը հրապարակային առաջարկի միջոցով:

Մակրոտնտեսական համատեքստում ընդունված է առանձնացնել IPO-ի հետևյալ գործառույթները:

Առաջին՝ IPO-ի շուկան տնտեսության մեջ ներդրումների ներգրավման միջոցով խթանում է տնտեսական աճը:

Երկրորդ՝ IPO-ի շուկան ենթադրում է տնտեսության կառուցվածքային բարեփոխում: IPO-ի լայնածավալ իրականացումը նպաստում է տնտեսության իրական հատված կապիտալի ներգրավմանը, կառուցվածքային բարեփոխմանը վերամշակող և գիտատար ճյուղերի զարգացմանը:

Երրորդ՝ IPO-ի շուկան ապահովում է տեղեկատվության տարածում, և այն հանդիսանում է տնտեսության վիճակի ինդիկատոր:

Չորրորդ՝ IPO-ի շուկայի հաջորդ գործառույթն ինֆլյացիայի զսպումն է:

Հինգերորդ՝ IPO-ի շուկան ապահովում է ֆոնդային շուկայի կապիտալացման բարձրացում, առևտրի ծավալների մեծացում և իրացվելի գործիքակազմի ընդլայնում, իսկ տնտեսության կապիտալացումը բազմաթիվանոթակ հասկացություն է:

Վեցերորդ՝ IPO-ի շուկան խթանում է նաև վենչուրային ֆինանսավորման զարգացումը:

Թվարկված գործառույթները հայրենական շուկայում գտնվում են ցածր մակարդակում և գրեթե բացակայում են:

Հայաստանի և Արցախի տնտեսությունների մասնակիցների համար հրապարակային արժեթղթերի շուկան համեմատաբար նոր երևույթ է, ինչը պայմանավորված է հայկական ֆինանսական շուկայի բանկային վարկավորման գերակայությամբ:

ԼՂՀ-ի տարածքում միակ ընկերությունը, որն իրականացրել է IPO, «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն է: Չնայած դասական մոտեցմամբ IPO չի ներկայացնում, քանի որ կատարվել է արտաբորսայական շուկայի միջոցով: Նշված ընկերության կանոնադրական կապիտալը կազմում էր 5 մլրդ դրամ, իսկ IPO-ի ընթացքում առաջարկվել են 3285 մլն դրամ ծավալով բաժնետոմսեր՝ 1000 դրամ անվանական արժեքով և 1050 դրամ տեղաբաշխման գնով: Նախատեսված ծավալից տեղաբաշխվել է բաժնետոմսերի 26,2%-ը և չնայած տիրող անբարենպաստ իրավիճակին (դրամի կտրուկ արժեզրկումն այն բանից հետո, երբ ՀՀ կենտրոնական բանկը հայտարարեց դրամի լողացող փոխարժեքի քաղաքականությանն անցնելու մասին)՝ այն կարողացավ հավաքագրել շուրջ 1 մլրդ դրամ (տե՛ս աղյուսակը):

Աղյուսակ


«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ ամփոփ ֆինանսական գործակիցները՝ ըստ 2012-2016թթ.

Ցուցանիշի անվանումը	31.12.2012	31.12.2013	31.12.2014	31.12.2015	31.12.2016
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), մլն. դրամ	25.0	33.15	67.68	88.33	176.80
Մեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	2.2	3.02	5.93	7.45	14.10
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	1.6	2.24	4.24	5.29	10.26
Զուտ շահույթի մարժա (NPM), %	22.0	23.28	25.79	36.00	51.67
Կապիտալի համարժեքության ցուցանիշ, %	76.0	72.33	71.69	70.40	75.06
Ֆինանսական կախվածության ցուցանիշ, %	31.0	38.26	39.50	42.05	33.22
Բացարձակ իրացվելիության գործակից	0.15	0.141	0.048	0.457	2.994
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.20	1.91	2.76	1.54	6.85
Ընդհանուր իրացվելիության գործակից	2.05	1.98	3.02	1.62	7.16
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2.95	2.83	3.23	2.43	4.34
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունը, օրերով	124.0	129.04	113.08	150.35	84.15
Պաշարների շրջանառելիության գործակից	12.2	15.14	8.73	8.40	9.22
Պաշարների շրջապտույտի տևողությունը, օրերով	29.8	24.10	41.81	43.47	39.57
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	8.79	0.128	0.142	0.149	0.157
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	4152.2	2849.57	2575.43	2452.28	2331.57


«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն ունեցել է բավական իրացվելի երկրորդային շուկա, իսկ ըստ ընկերության կապիտալացման՝ այն ընդգրկվել է բաժնետոմսեր թողարկողների առաջատար հնգյակի մեջ ու նպաստել կապիտալացման աճին:

Լրացուցիչ տեղաբաշխված 3,287,926 հատ բաժնետոմսերի ցուցակումը իրականացվել է նախկինում տեղաբաշխված և ցուցակված թվով 7,362,074 հատ բաժնետոմսերի հետ միասնական կարգով: Ներկայումս կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված են ընկերության թվով 10,650,000 հատ բաժնետոմսեր, որոնց շնորհիվ է 00AHEKS10KR3 տարբերակիչ ծածկագիրը:

Այնուհետև, ուսումնասիրելով ԼՂՀ արդյունաբերական ընկերությունների ֆինանսավորման աղբյուրների կազմում բանկային վարկի դերը՝ տեսնում ենք, որ տարեցտարի այն աճում է: Եթե 2011թ. տարեվերջին արդյունաբերությանը տրամադրվել է 5,11մլրդ ՀՀ դրամ ծավալի միջոցներ, ապա 2016-ի տարեվերջին այս ցուցանիշը կազմել է 24.1մլրդ ՀՀ դրամ: Իսկ արդյունաբերությանը տրամադրված վարկերի ծավալը ՀՆԱ-ում տարիներ շարունակ մեծ բաժին է կազմում և սկսած 2014-ից ամեն տարի միջին հաշվով շուրջ 18-20% է: Այսինքն՝ արդյունաբերական կազմակերպությունները ֆինանսական միջոցների պահանջ ունեն, և վարկունակ են դրանք ներգրավելու համար, այսինքն՝ դրանք կարող են միջոցներ ներգրավել արժեթղթերի թողարկմամբ: Նաև համեմատելով տնտեսության մյուս ոլորտներին տրամադրված վարկերի ծավալը տեսնում ենք, որ այնտեղ ըստ ոլորտների տրամադրած վարկերի ընդհանուր ծավալում ամենամեծ տեսակարար կշիռն առևտրից հետո զբաղեցնում է արդյունաբերությունը:



Գծապատկեր 1. ԼՂՀ-ում արդյունաբերությանը տրամադրված վարկերի ծավալը (մլրդ դրամ)



Գծապատկեր 2. ԼՂՀ-ում արդյունաբերությանը տրամադրված վարկերի ծավալը (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ)

Կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ ըստ ԼՂՀ արդյունաբերական կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների կարելի է եզրակացնել, որ դրանք կարող են արժեթղթերի շուկայից միջոցներ ներգրավել բաժնետոմսերի և պարտատոմսերի թողարկմամբ: Ունենալով մեծ ներուժ և ֆինանսական դրական ցուցանիշներ՝ արդյունաբերական կազմակերպությունները դրականորեն կրնադունվեն շուկայի կողմից և կկարողանան ներգրավել դրամական միջոցներ:

Վերոհիշյալ ուսումնասիրված ցուցանիշներից ակնհայտ են դառնում, որ ԼՂՀ-ում կան համապատասխան նախադրյալներ իրականացնելու արժեթղթերի թողարկում:

Եթե 7.0 մլրդ ՀՀ դրամ դրամական միջոցների ձեռքբերումն իրականացվի ոչ թե վարկերի միջոցով, այլ կորպորատիվ պարտատոմսերի IPO թողարկմամբ, ապա դա հիմք կհանդիսանա ԼՂՀ արժեթղթերի շուկայի կայացման և զարգացման համար: Ինչպես նշեցինք 2016թ արդյունաբերությունը 24.1 մլրդ դրամ վարկ է ստացել:

IPO կորպորատիվ պարտատոմսերի թողարկումն ի համեմատ վարկերի ունի մի շարք առավելություններ, և ըստ որոնց ֆինանսական շուկայում պարտատոմսերն ունեն համեմատաբար ցածր տոկոսադրույքներ, և դրանց արդյունքում արժեթղթերի շուկայից կարելի է ներգրավել շատ ավելի մեծ քանակի միջոցներ, որոնք ունեն փոխառության ավելի երկար ժամկետ:

Այսպիսով Լեռնային Ղարաբաղի տնտեսության ֆինանսավորման համար որպես այլընտրանքային աղբյուր կարելի է օգտագործել արժեթղթերի շուկան: Հիմնավորման համար ենթա-

դրենք՝ կազմակերպությունը ցանկանում է ներգրավել 820.6 մլն ՀՀ դրամ ծավալով միջոցներ, որպեսզի թողարկի 8206 պարտատոմս 100 000ՀՀ դրամ անվանական արժեքով, ապա արդյունքում հրապարակային տեղաբաշխման ծախսերը կկազմեն 410300ՀՀ դրամ: Տեղաբաշխման արդյունքում ձևավորված տարեկան միջին կշռված եկամտաբերությունը կկազմի 8.8% է, իսկ սահմանային եկամտաբերությունը՝ 9.3%: Ամսական միջին եկամտաբերությունը կկազմի 0.78%: Հետևաբար՝ զուտ տոկոսի մարումը ամսվա կտրվածքով կկազմի 6.4 մլն ՀՀ դրամ, իսկ տարեկանը՝ 76 մլն ՀՀ դրամ:

Իսկ եթե կազմակերպությունը 820.6մլն ՀՀ դրամը ձեռք բերի բանկից վարկի տեսքով, ապա այդ միջոցների ներգրավման դեպքում, բացի տարեկան տոկոսային ծախսերից, զուտ տոկոսի մարումը կկազմի 118.2 մլն ՀՀ դրամ: Ընդ որում՝ վարկը ձեռք է բերվել 12% տոկոսադրույքով, որի 6%-ը սուբսիդավորում է ներդրումային հիմնադրամի կողմից: Արդյունքում ստացվում է, որ հիմնադրամի կողմից տարեկան զուտ տոկոսի մարումը կկազմի 59.1 մլն ՀՀ դրամ: Հաշվարկներից պարզ է դառնում, որ IPO-ի դեպքում ներդրումային հիմնադրամը կխնայի 22.2 մլն ՀՀ դրամ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ամենամեծ առավելությունը, որ կարող են ձեռք բերել նման ընկերությունները, դա դրամական միջոցների մուտքն է դեպի էժան փոխառու միջոցների շուկա: Սակայն դրանով թողարկող ընկերությունների հնարավորությունները և առավելությունները չեն սահմանափակվում: Մոտ ապագայում այդ ընկերությունները բավարար թափանցիկություն և պարտավորությունների կատարման պարտաճանաչություն ցուցաբերելու պարագայում հնարավորություն կունենան իրականացնել բաժնետոմսերի հրապարակային առաջարկ (IPO), ինչն արդեն սովյալ ընկերության զարգացման լիովին նոր մակարդակ է:

Այսպիսով՝ ՀՀ և ԼՂՀ IPO-ների շուկայի ակտիվացման և կապիտալի շուկայի զարգացման համար անհրաժեշտ է հարթել շուկայում առկա խնդիրները, որոնց համար միջոցառումներ պետք է ձեռնարկվեն ընկերությունների և պետական մարմինների կողմից: Դրանք են.

- համապատասխան պայմաններ ստեղծել IPO իրականացնելու մտադրություն ունեցող ընկերությունների հայտնաբերման և աջակցման՝ խթանման աշխատանքներ պետական մարմինների կողմից,
- բանկերում, խոշոր ընկերություններում կորպորատիվ կառավարման կանոնների ներդրման վերաբերյալ օրենսդրական պարտադիր պահանջի կիրառում,
- կենսաթոշակային ու ներդրումային հիմնադրամների վերաբերյալ օրենսդրական և բարեփոխումների պարտադիր իրականացում,
- օտարերկրյա ներդրողների համար ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծում,
- ՀՀ և ԼՂՀ ներդրումային դաշտի վերաբերյալ ֆորումների, համաժողովների, տեղեկատվական ու գովազդային այլ միջոցառումների իրականացում՝ պետական մարմինների, ինչպես նաև ընկերությունների կողմից իրենց ինտերնետային կայքերի, հեռուստատեսությամբ, տեղեկատվական կայքերի և այլ միջոցներով գովազդների միջոցով:

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ (IPO) ՈՐՊԵՍ ԼՂՀ ԱՐԺԵՐՈՒԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՄԱՆ ԱՐԿԱՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Շուշիի տեխ. համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի ագրոբիզնես ամբիոնի ավագ դասախոս

Համառոտագիր

Ֆինանսական ռեսուրսների ներգրավումը IPO-ի ընթացքում հնարավորություն է տալիս ընկերությանը ձեռք բերել զարգացման համար անհրաժեշտ ակտիվներ, որը հնարավոր չէ ձեռք բերել ներքին ռեսուրսներով, և որոնց ձեռքբերումը նպատակահարմար չէ իրականացնել վարկեր ներգրավելու միջոցով: Հայաստանի և Արցախի տնտեսությունների մասնակիցների համար հրապարակային արժեթղթերի շուկան համեմատաբար նոր երևույթ է, ինչը պայմանավորված է հայկական ֆինանսական շուկայի բանկային վարկավորման զերակայությամբ:

Բանալի բառեր. նախնական հրապարակային առաջարկ, արժեթղթերի շուկա, ֆոնդային շուկա, կապիտալի շուկա, ֆինանսական ռեսուրսներ:

ПЕРВИЧНОЕ ПУБЛИЧНОЕ РАЗМЕЩЕНИЕ АКЦИЙ (IPO) КАК ПРИОРИТЕТНОЕ НАПРАВЛЕНИЕ РАЗВИТИЯ РЫНКА ЦЕННЫХ БУМАГ НКР

ՍՍԱՆ ԱԲԿԱՐԻԵՎՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

старший преподаватель кафедры агробизнеса сельскохозяйственного факультета Шушинского технологического университета

Аннотация

Привлечение финансовых ресурсов в ходе IPO позволяет компании приобрести необходимые для развития деятельности активы, которые не могут быть получены за счет внутренних ресурсов и приобретение которых нецелесообразно осуществлять за счет привлечения кредитов.

Для участников экономики Армении и Арцаха рынок публичных ценных бумаг является относительно новым явлением, что обусловлено преобладанием банковского кредитования на финансовом рынке РА.

Ключевые слова: первичное публичное размещение, рынок ценных бумаг, фондовый рынок, рынок капитал, финансовые ресурсы.

INITIAL PUBLIC OFFERING (IPO) AS A PRIORITY DIRECTION OF THE DEVELOPMENT OF THE SECURITIES MARKET IN THE NKR

SUSAN ABKAR AVETISYAN

*Senior Lecturer, Agribusiness Department
Faculty of Agriculture Shushi Technological University*

Abstract

The attraction of financial resources during the IPO allows the company to acquire assets necessary for the development of activities that cannot be acquired via internal resources and the acquisition of which is not sensible to implement due to the credits extended to companies. For the economic actors in Armenia and Artsakh, the market of public securities is a relatively new phenomenon, due to the predominance of bank lending in the financial market of the Republic of Armenia.

Keywords: Initial public offering, securities market, stock market, market capital, financial resources

ԵՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՆ ՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ցանկացած երկրի, այդ թվում նաև ՀՀ-ի հարկային վարչարարության բարելավումը ծառայեցվում է տնտեսության զարգացմանն ու բնակչության բարեկեցության բարձրացմանը: Նույն նպատակին են միտված նաև Հայաստանում վերջին երկու տասնամյակից ավելի ժամանակահատվածում իրականացված տնտեսական բարեփոխումները: Ակնհայտ է, որ շուկայական տնտեսության ձևավորման և դրա հետագա զարգացման համար անհրաժեշտ են որոշակի նախադրյալներ¹: Տնտեսական անցման գործընթացը ենթադրում է երկրի ֆինանսական, դրամավարկային, բանկային, հարկաբյուջետային, սոցիալական և կառուցվածքային համակարգերում արմատական բարեփոխումների իրականացում: Շուկայական հարաբերություններին անցմամբ պայմանավորված հարկային բարեփոխումների իրականացման ընթացքում անհրաժեշտ է իմաստավորել հարկերի դերը ընդլայնված վերարտադրության գործընթացում²: Ուստի, հույժ կարևոր է, որ հարկային վարչարարության համակարգում լավագույնս ներդաշնակվեն հարկերի հարկաբյուջետային և կարգավորիչ գործառնությունները, արդյունավետ և համաչափ բաշխվի ընդհանուր հարկային բեռը, ինչպես նաև առանձին արտադրական կազմակերպությունների, տվյալ ճյուղի և ազգային տնտեսության զարգացման շահերը: Համաշխարհային պրակտիկայում քիչ չեն դեպքերը, որ նշված մտահոգությունների անտեսումը պատճառ է դառնում տնտեսության միակողմանի զարգացմանը, իսկ առանձին դեպքերում կրճատում է ազգային մրցակցային առավելությունների հաջող իրացման հնարավորություններն ինչպես երկրի ներքում, այնպես էլ արտաքին շուկաներում:

Հարկային վարչարարության դերն ավելի է կարևորվում 21-րդ դարում համաշխարհային տնտեսությունում գնալով սրվող մրցակցության և տնտեսական բարեփոխումների արդի փուլում: Այն անմիջական ազդեցություն ունի ազգային տնտեսության կայացման, դրանում կառուցվածքային հիմնավորված տեղաշարժերի, տեղական արտադրության խթանման, ներդրումային միջավայրի գրավչության ու ֆինանսական համակարգի մրցունակության և արդյունավետության բարձրացման գործում: Տեղական ներդրումների սահմանափակ ծավալները, ինչպես նաև դրանց օգտագործման անարդյունավետությունը թույլ չեն տալիս ձևավորել գրավիչ ներդրումային միջավայր, որը թույլ կտա առավել նպատակային բնույթ հաղորդել առկա ֆինանսական միջոցներին: Այս ամենին հարկ է ավելացնել նաև հարկային վարչարարությանն առնչվող օրենքների հաճախակի փոփոխությունները և դրանց հետևանքները:


Հարկային վարչարարությունում առկա խնդիրները գործնականում դժվար հաղթահարելի են, որոնց հանգուցալուծումը միտված է տեղական շուկայում գործարարության աշխուժացման ավելացմանը, ինչպես նաև ազգային տնտեսության զարգացման համար անհրաժեշտ հիմքերի ձևավորմանը: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով տրամադրվում են մի շարք արտոնություններ, որոնք կապված են նշված ներդրումների հետ: Մասնավորապես ՀՀ-ում օտարերկ-

¹ Braithwaite, John, Pittelkow, Yvonne and Williams, Robert, ‘Tax compliance by the very wealthy: Red flags of risk’, in Valerie Braithwaite (ed.), *Taxing Democracy: Understanding Tax Avoidance and Evasion*, 2003, Ashgate, Aldershot, pp. 205-243.

² “Recent Experience with the Value-Added Tax – An Overview”, Միջազգային արժույթային հիմնադրամի փաստաթուղթը (№ EBS/00/14), 7 փետրվար, 2000թ., pp.67:

րյա ուղղակի ներդրումները (այսուհետ ՕՌՆ) չեն կարող նվազ բարենպաստ լինել, քան ներքին ներդրումները, այսինքն՝ դրանց համար սահմանված են հավասար պայմաններ: Ոչ մի արգելք գոյություն չունի կապված ՕՌՆ-ների, կապիտալի ներհոսքի և դրա դիվերսիֆիկացիայի, շահույթի վերաբաշխման հարցերում¹: Դրա հետևանքով թույլ է պաշտպանված ներքին ներդրումային միջավայրը, ինչն էլ իր հերթին բերում է ներքին ներդրումների նկատմամբ օտարերկրյա կապիտալի նախապատվության բարձրացմանը:

Այսպես, ըստ գծապատկեր 1-ի 2008թ. համաշխարհային ճգնաժամից հետո կտրուկ նվազել է ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը, ինչը բացատրում է ՀՀ-ում ներդրումային քաղաքականության արդյունավետության ցածր մակարդակը, ինչպես նաև ներդրումային հոսքերի նվազումը: Ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2015թ.-ին 2014թ.-ի համեմատ նվազել է 0.01 նիշով, իսկ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2015թ.-ին 2006թ.-ի համեմատ նվազել է 15.1 նիշով: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2008թ.-ին՝ կազմելով 40.9% և այն համեմատելով 2015թ.-ի տվյալների հետ ստացվում է, որ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է 20.1 նիշով: 2008թ.-ին ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը պայմանավորված է շահութահարկի մասով օտարերկրյա ներդրումներին տրվող արտոնությունների հետ: Եթե օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների) կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը 1998 թվականի հունվարի 1-ից հետո կազմում է առնվազն 500 մլն դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է 100%-ով²:



Գծապատկեր 1. 2006-2015թթ. ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան ՀՀ-ում, %³

Բացի վերոնշյալից կարևորվում է նաև ՀՀ-ի և ԵՏՄ-ում ընդգրկված երկրների կողմից ներդրողների պաշտպանվածության վարկանիշը, որոնք ամփոփված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՀՀ-ի և ԵՏՄ տարածաշրջանային երկրների ներդրողների պաշտպանվածության ինդեքսը⁴

Ցուցանիշներ	Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան
Ներդրողների պաշտպանվածությունը	49	94	25	35	100

¹ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1552>.
² «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 39 հոդված(ՀՕ-155, ՀՀՊՏ 1997.12.03/27):
³ <http://minfin.am/minfin.am/index.php?cat=69&lang=1>.
⁴ <http://www.doingbusiness.org/>.

Աղյուսակ 1-ից երևում է, որ ԵՏՄ տարածաշրջանային երկրների ներդրողների պաշտպանվածության ինդեքսները տարբեր են: Այսպես, Ղազախստանում այն կազմում է 25, Ղրղզստանում՝ 35, ՀՀ-ում՝ 49, Բելառուսում՝ 94, իսկ Ռուսաստանում՝ 100:

Միաժամանակ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության վերլուծության և համեմատության համար կատարվել են միջազգային համեմատություններ, մասնավորապես ըստ աղյուսակ 2-ի:

Աղյուսակ 2

Ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրների ցանկը, 2015թ.¹

Հ/հ	Երկիր	Ներդրումներ/ՀՆԱ,%
1.	Վիետնամ	41.9
2.	Կարո Վերդե	41.6
3.	Լեսոտո	40.8
4.	Չինաստան	40.5
5.	Հայաստան	39.0
6.	Հնդկաստան	39.0
7.	Սան Տոմե	38.8
8.	Գայանա	35.3
9.	Կոնգո	34.5
10.	Նիկարագուա	34.5

¹Օստրալիայում՝ գծապատկեր 1-ում և աղյուսակ 2-ում ՀՀ-ի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության գնահատականները տարբեր են՝ ելնելով տարբեր աղբյուրներից: Տարբերության պատճառ են հանդիսանում փոխարժեքների տատանումները, տարբեր երկրների արժույթների հարաբերակցության տարբերությունը ԱՄՆ դոլարի նկատմամբ:

Մեկ այլ միջազգային կազմակերպության գնահատականի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Վիետնամում՝ 41,9%: Վերջինս պայմանավորված է երկրի կայուն սոցիալ-տնտեսական վիճակի, տնտեսական կայուն աճի, ներդրումների ակտիվության բարձր մակարդակի, ներդրումային հոսքերի համահարթեցման և տնտեսության դիվերսիֆիկացիայի զարգացմամբ, օրենսդրության կայունությամբ և առաջադիմականությամբ (առաջին հերթին հարկային և ներդրումային), ֆինանսավարկային միջոցների հասանելիությամբ, ինչպես նաև էժան աշխատուժի հետ (աղյուսակ 2)²: Իսկ ՀՀ-ի ներդրումներ/ՀՆԱ գնահատականը կազմել է 39%:

Վերադառնալով ՀՀ տնտեսության ներդրումային միջավայրի և հարկային վարչարարության փոխառնչությանը՝ արտաքին աղբյուրներից ներդրումների ծավալի մեծացման հետ միաժամանակ ներդրումային գրավչության վրա ազդում են նաև ներքին աղբյուրների հաշվին իրականացվող տեղական ներդրումներից: Հետևաբար, ՀՀ-ում տնտեսական քաղաքականությունը պետք է միտված լինի խնայողությունների ձևավորմանը, որոնք համալրում են ներդրումային միջոցներին և հնարավորություն են ընձեռում դրանք օգտագործելու տնտեսության իրական հատվածի տարբեր ոլորտներում:

Ինչպես վկայում է շուկայական հարաբերությունների անցման տարբեր պետությունների հարուստ փորձը, միայն պետության ակտիվ մասնակցության պարագայում կարելի է ակնկալել շոշափելի արդյունքներ: Ընդ որում, ներդրումային քաղաքականության դերը պետք է խիստ կարևորել տնտեսական ազատականացման հենց սկզբնական փուլից, և այդ առումով պետությունն իր կարգավորիչ լծակներով պետք է պաշտպանի տնտեսավարող սուբյեկտների իրավունքները և ներդրումների համար ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ³: Նախ և առաջ, բոլոր հարկատուների արդյունավետ գործունեության համար պետությունը պետք է ապահովի անհրաժեշտ օրենս-

¹ <http://infotables.ru/strany-i-goroda/43-ekonomicheskaya-statistika-stran-mira/431-dolya-investitsij-ot-vvp-stran-mira-tablitsa>.

² http://www.ved.gov.ru/exportcountries/vn/about_vn/laws_ved_vn/invest_law_vn/.

³ Spahn P., Fochtinger W. Germany. In: Fiscal Federalism in Theory and Practice. Ter-Minassian (ed.). Washington, D.C.: International Monetary Fund, 1997, pp.119-121.

դրախրավական դաշտ, ինչը կարևոր է ոչ միայն ընթացիկ, այլև երկարաժամկետ ներդրումների իրականացման համար: Պետության մասնակցությունը երկրի ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացին նպատակահարմար է իրականացնել ազգային տնտեսության տարբեր ճյուղերի նպատակային ֆինանսավորման, համաֆինանսավորման և այլ միջոցներով, որոնց իրագործմանն էապես պետք է նպաստեն կիրառվող հարկային ու հակամենաշնորհային քաղաքականությունը: Երկրում ներդրումային արդյունավետ քաղաքականության հետևողական իրականացման արդյունքում իրատեսական է ակնկալել տնտեսության զարգացման համար բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորում, որն էլ կնպաստի հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը:

Հարկային վարչարարության բաղկացուցիչ մասն է համարվում հարկային լոգիստիկան, որը նախնական անալիտիկ կանխատեսումային գործունեություն է և որի նպատակն է կապիտալի և առևտրային աշխատուժի օգտագործման առավել նպաստավոր ոլորտների բացահայտումը¹: Տնտեսական բարեփոխումների փուլում հարկային վարչարարության կարևոր մասն է կազմում հարկային գործընթացների բարելավումը կամ այլ կերպ՝ օպտիմիզացումը: Վերջինս հարկային պարտավորությունների կրճատումն է հարկատուների առևտրային գործունեության ծավալման ժամանակ, որն իրականացվում է հարկային բոլոր արտոնությունների և հարկերից ազատման հրահանգների և այլ իրավական ակտերի կիրառման միջոցով: Հարկային օպտիմիզացումը կապված է կազմակերպության ընթացիկ գործունեության հետ, որը լինում է երկարաժամկետ և ընթացիկ: Երկարաժամկետ հարկային օպտիմիզացիան ենթադրում է օրինական մեթոդների այնպիսի կիրառում, որոնք փոքրացնում են հարկային բեռը հարկատուի գործունեության ամբողջ ընթացքում: Ընթացիկ հարկային օպտիմիզացիան ենթադրում է օրինական մեթոդների այնպիսի կիրառություն, որոնք թույլ են տալիս նվազեցնել հարկային բեռը յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար: Տնտեսական բարեփոխումների, մասնավորապես, հարկային վարչարարության բարեփոխման հիմնական նպատակներից մեկը ձեռնարկատերերի ստվերային տնտեսական գործունեության կանոնակարգումն է և պատշաճ հարկազանձումը: ՀՀ-ում ներկայումս մեծ վտանգ է ներկայացնում կազմակերպությունների ստվերային գործունեությունը, որի համար կան նաև որոշակի օբյեկտիվ նախապայմաններ: Դրանցից կարելի է առանձնացնել. 1) հարկային բեռի անհավասար բաշխումը, 2) կոռուպցիոն ռիսկերը, 3) պետական վերահսկողության անարդյունավետության մակարդակը, 4) տնտեսվարող սուբյեկտների հարկային վճարումներից խուսափելու մակարդակը:

Հարկ է նշել, որ հարկային իրավախախտումների և հանցագործությունների «դասական» պատճառներից մեկն է հանդիսանում այն, որ հարկային օրենքները ոչ միշտ են համապատասխանում օրենսդրության հիմնական սկզբունքներին՝ կայունությանը, համընդհանրությանը և անաչառությանը, ինչն իջեցնում է այդ օրենքների արդյունավետությունը²: Ստվերային տնտեսության տեսակարար կշռի կրճատումը և հարկվող տնտեսության ծավալների ավելացումը հարկային վարչարարության կարևորագույն թիրախներից են, ինչը կարող է իրականություն դառնալ միայն տնտեսական քաղաքականության այլ ուղղություններով նախատեսված միջոցառումների ու ծրագրերի արդյունավետ համադրմամբ: Այս ուղղությամբ տնտեսական բարեփոխումների վերջին տարիների որոշակի ձեռքբերումներից կարելի է համարել հարկային վարչարարության պետական ռազմավարության իրականացումը:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ հետխորհրդային գրեթե բոլոր երկրներում, անկախացման առաջին տարիներից հարկային վարչարարությունը սկսեց օգտագործվել պետական եկամուտները հավաքագրելու և դրա օգնությամբ հիմնականում կարճաժամկետ խնդիրներ լուծելու նպատակով: Իրականում նման նպատակի իրագործումը հնարավորություն է տալիս պետությանն իրականացնել իր առջև դրված տարբեր ծրագրերի ֆինանսավորման գծով պարտավորություն-

¹ Feldman, Naomi, E. and Slemrod, Joel, 'Estimating tax noncompliance with evidence from unaudited tax returns', *Economic Journal*, 2007, Vol. 117, Issue 518, pp. 327-352.

² Dubin, Jeffrey A., 'Criminal investigation enforcement activities and taxpayer noncompliance', in *The IRS Research Bulletin: Proceedings of the 2004 IRS Research Conference, Statistics of Income Division, Internal Revenue Service, Department of the Treasury*, 2004, Washington DC, pp. 3-35.

ներք, սակայն ավելի երկար ժամանակահատվածում կարող է ունենալ նաև հակառակ էֆեկտը: Բանն այն է, որ «ամեն գնով» հարկերի հավաքագրումը կարող է նաև վանել տնտեսվարողներին, առաջացնել «կապիտալի փախուստ» երկրից: Հարկային վարչարարության եվոյուցիոն զարգացման վերլուծությունը վկայում է, որ վերջին տարիներին արմատավորվում է հեռանկարային և միջնաժամկետ նպատակադրումների միջոցով ռազմավարության կիրառումը: Հատկանշական է, որ ներկայումս մշակման փուլում գտնվող հեռանկարային զարգացման ռազմավարությունից բացի, պետական եկամուտների մասով մշակվում է ոչ միայն ոլորտային զարգացման¹, այլև ներոլորտային՝ հարկային և տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի զարգացման և այլ ռազմավարություններ, որը, ինչ խոսք, էական առաջընթաց կարելի է համարել²: Նման փաստաթղթերի մշակման ժամանակ, մեր կարծիքով, առանցքային նշանակություն ունի պետության կողմից ձևակերպվող հեռահար նպատակների, այդ թվում՝ գործարարության զարգացման, ներդրումային միջավայրի առողջացման, փոքր և միջին բիզնեսի զարգացման ներդաշնակեցումը՝ հարկային վարչարարության կարճաժամկետ խնդիրների հետ մեկտեղ³:

Ընդհանուր առմամբ, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը պայմանավորված է հետևյալ հիմնահարցերի հանգուցալուծմամբ.


- վարչարարության հիմնարար սկզբունքների, հատկապես՝ արդյունավետության, համընդհանրության և արդարության սկզբունքների պատշաճ կիրառում,
- արտահանմանն ուղղված նոր հարկային արտոնությունների տրամադրում,
- Մաքսային միությանն անդամակցելու պարագայում տեղական արտադրության համար հարկային բարենպաստ դաշտի ձևավորում,
- Հայաստանի տնտեսության մրցակցային առավելությունների իրացմանը նպաստող հարկային վարչարարության իրականացում,
- ուղղակի հարկերի տեսակարար կշռի մեծացումը անուղղակի հարկերի նկատմամբ,
- հարկեր / ՀՆԱ հարաբերակցության ավելացում,
- կոշտ հարկային վարչարարության զուգակցումը ճկուն հարկային քաղաքականության հետ,
- պետության և տնտեսավարող սուբյեկտների շահերի ներդաշնակեցում,
- ազատական տնտեսության և պետության միջամտության օպտիմալ ռեժիմների կիրառում,
- ներդրումային միջավայրի գրավչության բարձրացմանը միտված հարկային բարեփոխումներ,
- աշխատատեղերի ստեղծմանը նպաստող հարկային վարչարարության ծավալում,
- հարկային օրենքների պարզեցում, մասնավորապես՝ փոքր և միկրո բիզնեսի ներկայացուցիչների համար,
- վերամշակող ճյուղերի զարգացմանն ուղղված հարկային վարչարարության իրականացում,
- հարկային տարբեր օրենքներում առկա հակասությունների վերացում,
- օրենքների կիրառման համար համապատասխան իրավական դաշտի ձևավորում,
- հարկային մարմինների և ձեռներեցների միջև գործընկերային հարաբերությունների հաստատում,
- հարկային տեսուչների որակավորման բարձրացում,
- համարժեք պատժամիջոցների կիրառման միջոցով՝ կաշառակերության դեպքերի աստիճանական վերացում,
- տնտեսական անվտանգության ապահովում:

ՀՀ-ում հարկային վարչարարության արդյունավետության գնահատման կարևոր ցուցանիշ է հանդիսանում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը, որը 2006-2016թթ. ունի ավելանալու միտում (տե՛ս գծապատկեր 2-ը):

¹ Հարկային վարչարարության 2012-2014թթ. ռազմավարություն:

² Հարկային մարմնի SS ոլորտի զարգացման ռազմավարություն:

³ DeLuca, Donald, Greenland, Arnold, Hennessy, Sean, Kindlon, Audrey and Stavrianos, Michael, ‘The tax compliance burden of small businesses – A profile of 50 businesses’, in The IRS Research Bulletin: Proceedings of the 2004 IRS Research Conference, Statistics of Income Division, Internal Revenue Service, Department of the Treasury, 2004, Washington DC, pp. 97-137.



Գծապատկեր 2. ՀՀ հարկեր/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան 2006-2016թթ., %¹

Այսպես, ըստ գծապատկեր 2-ի, հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ամենաբարձրը եղել է 2013թ. և կազմել է 23.4%: Դա պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ 2013թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը՝ իր մեջ ներառելով նախկինում «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները²: Մինչ այդ, պետական բյուջե եկամտահարկ հավաքագրվել է միջինում 58566.8 մլն դրամ, իսկ 2013թ.-ից 2016թ. հավաքագրվել է միջինում 297408.3 մլն դրամ³: 2013թ.-ից հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կտրուկ աճել է, ինչը պայմանավորված է եղել ՀՀ տնտեսությանը բնորոշ իրավիճակային փոփոխությունների հետ:

Այսպիսով, ընդհանրական առումով նշենք, որ հարկային վարչարարության գործիքակազմի և հարկային համակարգում բարեփոխումների իրականացման արդյունքում անհրաժեշտ է ձևավորել հարկային-գործարար միջավայր-պետություն փոխշահավետ համագործակցության ձևաչափ, ինչը մի կողմից հնարավորություն կտա ձևավորել մրցունակ հարկային համակարգ, մյուս կողմից բիզնես միջավայրը այդ մրցունակ հարկային համակարգից հնարավորինս չպետք է տուժի, ինչպես պետական բյուջեի եկամուտների հավաքագրումը, այնպես էլ պետք է իրականացվի պետության գերակա նպատակի սոցիալական քաղաքականության իրականացումը:

¹ <http://data.worldbank.org/indicator/GC.TAX.TOTL.GD.ZS?end=2012&locations=AM&start=2002>, http://www.taxservice.am/Shared/Documents/Publications/PEK_tarekan_hashvetutyun2009.pdf, armstat.am.

² «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք(ՀՕ-246-Ն, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1 Հոդ.1634.20):

³ armstat.am.

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՆ ՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, *տ.գ.թ.*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Հարկային վարչարարության գործիքակազմի և հարկային համակարգում բարեփոխումների իրականացման արդյունքում անհրաժեշտ է ձևավորել հարկային-գործարար միջավայր-պետություն փոխա-հավետ համագործակցության ձևաչափ, ինչը մի կողմից հնարավորություն կտա ձևավորել մրցունակ հարկային համակարգ, մյուս կողմից բիզնես միջավայրը այդ մրցունակ հարկային համակարգից հնարավորինս չպետք է տուժի, ինչպես պետական բյուջեի եկամուտների հավաքագրումը, այնպես էլ պետք է իրականացվի պետության գերակա նպատակի սոցիալական քաղաքականության իրականացումը:

Բանալի բառեր՝ հարկային հանցագործություններ, տեղական ներդրումներ, հարկային լոգիստիկա, հարկային օպտիմիզացիա, ստվերային տնտեսություն, ներդրումային արդյունավետ քաղաքականություն, կապիտալի փախուստ, շահերի ներդաշնակեցում:

ИНСТРУМЕНТАРИЙ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ И ПРИОРИТЕТЫ РЕФОРМЫ НАЛОГОВОЙ СИСТЕМЫ В УЛУЧШЕНИИ БИЗНЕС-СРЕДЫ

КРИСТИНЕ ЮРЬЕВНА БАГДАСАРЯН, *к.э.н.*

старший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

ТАТЕВИК СМБАТОВНА ПАРСАДАНЯН, *к.э.н.*

младший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

В результате реформирования инструментария налогового администрирования и налоговой системы необходимо сформировать формат взаимовыгодного сотрудничества «налоговая система-бизнес среда-государство», что, с одной стороны, позволит создать конкурентоспособную налоговую систему, а с другой стороны, бизнес-среда по мере возможности не должна пострадать от этой системы: поступление доходов в государственный бюджет должно осуществляться в целях реализации социальной политики, являющейся приоритетным направлением деятельности государства.

Ключевые слова: налоговые преступления, местные инвестиции, налоговая логистика, налоговая оптимизация, теневая экономика, эффективная инвестиционная политика, бегство капитала, гармонизация интересов.

TAX ADMINISTRATION TOOLKIT AND THE PRIORITIES OF THE TAX SYSTEM REFORM TO IMPROVE THE BUSINESS ENVIRONMENT

KRISTINE YURI BAGHDASARYAN, *Ph.D. in Economics*

Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

TATEVIK SMBAT PARSADANYAN, *Ph.D. in Economics*

Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

As a results of the reforming of the tools and instruments of the tax administration and tax system it is required to shape the guiding principles of mutually beneficial cooperation "tax system-business environment-government," which, on the one hand, would allow to build a competitive tax system, and on the other hand, the business environment, to the extent possible, should not suffer from this system: revenues of the state budget needs to be spent to carry out to the social policy, the priority of the government.

Keywords: Tax crime, local investment, tax logistics, tax optimization, shadow economy, effective investment policy, capital flight, harmonization of interests

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԳՆԱՋԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ

Հարկային բեռը և դրա օպտիմալացման խնդիրը ցանկացած երկրի տնտեսական քաղաքականության գերակայություններից է: Ընդ որում, այս ուղղությամբ իրականացված բոլոր միջոցները կապված են պետական բյուջեում հարկային եկամուտների ապահովման ծախսերի օպտիմալ բաշխման հետ: Պետական բյուջեի հիմնական եկամուտ հանդիսացող հարկերի հետ մեկտեղ պետական ծախսերը հանդես են գալիս որպես պետության կողմից տնտեսության զարգացման վրա ներագրող գործիք: Պետական ծախսերի համակարգի միջոցով տեղի է ունենում ազգային եկամտի էական մասի վերաբաշխում պետության տնտեսական ու սոցիալական քաղաքականության իրականացման համար¹:

Հարկային բեռի օպտիմալացման առումով տրվել են տարբեր գնահատականներ: Օրինակ, Լի Ջի հեղինակը ուսումնասիրել է, թե հարկաբյուջետային քաղաքականությունը որքան արդյունավետ է արձագանքում «երկրորդային ճգնաժամի» շրջանում², և դա ինչպես է ազդում գործարար միջավայրի և տնտեսության զարգացման վրա: Ուայթի կողմից առաջարկված մոտեցումն օգտագործելով՝ հեղինակի կողից առանձնացվել է «երկրորդային ճգնաժամի» 57 դրվագներ³: Մեկ այլ հեղինակի՝ Կիմ Դոնգի կողմից առաջարկված մեթոդներին հետևելով⁴՝ Լի Ջին բացահայտել է «երկրորդային ճգնաժամի» տևողությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ հարկաբյուջետային քաղաքականությունը չի ազդում «երկրորդային ճգնաժամի» կրճատման վրա, քանի որ երկարաժամկետ հատվածում հարկային քաղաքականության դիրեկտիվ մեթոդների կիրառման դեպքում տնտեսությունը չի զարգանում և այն բերում է գործարար ակտիվության անկմանը⁵:

Մեկ այլ հեղինակի՝ Ժու Խոնդոզը գնահատել է հարկային բեռը և հարկային համակարգի դերը տնտեսության զարգացման գործում՝ կիրառելով ստոխաստիկ տարբեր մոդելներ և մեթոդներ⁶:

Չարին և ուրիշներ հարկային քաղաքականության և բիզնես գործընթացների մոդելների փոխադարձ կապն ուսումնասիրելով հիմնավորել են, որ հարկային քաղաքականությունն է բերում բիզնեսի արդյունավետության բարձրացմանը⁷:

Տոգել Լուկաս, Ռոեգեր Վերներ, Խերզ Բերխարդը⁸ վերանայելով ընդհանուր հավասարակշռության միջակայքային դինամիկ մոդելի կանխավարկածը, հարկային համակարգին բնորոշ տնտեսական օրինաչափություններին համաձայն հիմնավորել են, որ տնտեսության զարգացման վրա ազդում են ոչ միայն պետական ծախսերը, տրանսֆերտները, սպառման ծախսերը, աշխատուժն ու կապիտալը, այլև շատ կարևոր է հարկային համակարգի դերը վերջինիս զարգացման գործում:

Հանսենի, Լարսի, Թոմասի աշխատանքներում արտացոլվում է սահմանափակ և օպտիմալացվող տնային տնտեսությունների նկատմամբ հարկաբյուջետային քաղաքականության դրական ազդեցությունը, ըստ որի՝ մի խմբի հարստության մեծացումը, որպես կանոն, նվազեց-

¹ Мельников В.Д. Финансы.- А.: Экономика, 2011. – 603с.

² Li Jie, The effectiveness of fiscal and monetary policy responses to twin crisis // Applied – 2013. - №45 (27). –pp. 3904-3913.

³ Lieven Baele, Pilar Soriano The Determinants of Increasing Equity Market Comovement: Economic or Financial Integration, pp- 3-31

⁴ Kim, Dong Heon, What is an oil shock? Panel data evidence // Empirical – 2012. – № 43 (1). – pp. 121-143.

⁵ White, H. A Heteroscedasticity-Consistent Covariance Matrix Estimator and a Direct Test for Heteroscedasticity // Econometrica. – 1980. – № 48 (4). – pp. 817-838.

⁶ Zhu, Xiaodong. 1992. Optimal fiscal policy in a stochastic growth model. Journal of Economic Theory 58 (2):250–289.

⁷ Chari, V.V., Lawrence J. Christiano, and Patrick J. Kehoe. 1994. Optimal Fiscal Policy in a Business Cycle Model. Journal of Political Economy 102 (4):617–652

⁸ Vogel Lukas, Roeger Werner, Herz, Bernhard The Performance of Simple Fiscal Policy Rules in Monetary Union // Open Economies Review. – 2013. – № 24 (1), SI. – pp. 165-196.

նում է մեկ այլ խմբի հարստությունը¹: Հարկային համակարգում առկա թերություններն ու բացթողումները բերում են հարկային բեռի անհավասարաչափ բաշխմանը, իսկ դրա բարձրացումը նպաստում է նրան, որ բնակչության հարստության չափավոր միջին աճը հակադրված է ոչ օպտիմալ վարած քաղաքականության ժամանակ բնակչության հարստության կորուստներին²:

Անաստաչյի Կարանտունիսի «Հոռետեսական սպասումների կառավարումը և հարկաբյուջետային քաղաքականությունը» աշխատությունում³ ուսումնասիրվել է օպտիմալ հարկային քաղաքականությունը, համաձայն որի կառավարությունը բախվում է հոռետեսական սպասումները ձևավորող հասարակության վախի հետ, երբ տեղի է ունենում պլանավորված պետական ծախսերի կրճատում կամ պետական բյուջեի սեկվեստոր: Հեղինակը առանձնացրել է երկու դրույթներ, որոնք ձևավորել են վերջնական արդյունքները: Մի կողմից, կառավարությունն անհավանական հոռետեսական իրավիճակների հարկային աղավաղումների համակենտրոնացման շարժառիթ է ունեցել, մյուս կողմից՝ հասարակության ներքին սպասումները դրդել են սպասումների կառավարման նոր շարժառիթներին⁴:

Սուիզին «Քեյնսականությունն ու հանրային կառավարումը»⁵ աշխատությունում նույնպես առաջնային է համարել հարկային համակարգի դերը տնտեսության զարգացման, պետական կարգավորման գործիքակազմի կիրառման դեպքում:

Հետևաբար, ամփոփելով տարբեր հեղինակների հարկային քաղաքական գնահատման մոտեցումները, կարելի է եզրակացնել, որ քանի դեռ չի լուծվել հարկային համակարգի արդյունավետության բարձրացման խնդիրը, միանշանակ լիարժեք չենք կարող գնահատել դրա դերը գործարար միջավայրի վրա: Այդ խնդրի լուծումը ենթադրում է տարբեր մոտեցումներ, որոնց մեջ, մասնավորապես, կարելի է նշել խնդրի լուծման «որակյալ» մեթոդը: Այն կայանում է ամբողջ հարկային օրենսդրության կառավարման և կատարելագործման մեջ: Կարելի է գնահատել հարկային քաղաքականության արդյունավետությունը տարբեր տեսանկյուններից, հատկապես տնտեսավարող սուբյեկտի և պետության առումով: Պետության հարկային քաղաքականության արդյունավետության գնահատումը ֆիզիկական և իրավաբանական տեսանկյունից գիտական հետաքրքրություն չի ներկայացնում, քանի որ այստեղ գործում են ուղիղ և պարզ տրամաբանություն՝ որքան շատ հարկային հավաքագրում, այնքան վատ: Պետության տեսանկյունից հարկային բեռի գնահատման ժամանակ հնարավոր են վերլուծության երկու չափորոշիչներ.

- հարկային բեռի արդյունավետության գնահատում, որն ազդում է տնտեսական համակարգի և գործարար ակտիվության, ուղղակի և անուղղակի հարկերի օպտիմալ հարաբերակցության վրա,
- հարկային բեռի արդյունավետության գնահատում, պետական բյուջեում հարկային եկամուտների ավելացման վրա:

Որպես կանոն, այդ երկու գնահատականները հակադիր են, և ըստ առաջին չափորոշիչի, արդյունավետ հարկային քաղաքականությունը կարող է լինել ընդհանրապես ոչ արդյունավետ, իսկ ըստ երկրորդ չափորոշիչի՝ արդյունավետ: Բացի այդ, նույնիսկ միևնույն չափորոշիչի շրջանակում հարկային քաղաքականությունը չի կարող ունենալ միանշանակ արդյունք, այսինքն՝ տնտեսական գործընթացների ժամանակ կարող են առաջանալ բիզնեսի, պետության և հասարակության շահերի բախումներ և առաջացնել տնտեսական աղավաղումներ:

Տնտեսության զարգացման, հարկային բեռի, հարկային եկամուտների անուղղակի կապն ու դրա օպտիմալ հարաբերակցությունը ենթադրում է, որ անհրաժեշտ է իրականացնել հարկային համակարգում բարեփոխումներ: Որպես կանոն, այդ կապը, ի սկզբանե, ցույց է տրվել հարկային տնտեսագիտությունում հայտնի Լաֆֆերի կորի միջոցով, որում ֆունկցիոնալ կախվածություն գոյություն ունի պետության հարկային եկամուտների և հարկային բեռի մակարդակի միջև:

¹ Hansen, Lars Peter, Thomas Sargent, and Thomas Tallarini. 1999. Robust Permanent Income and Pricing. *Review of Economic Studies* 66:873–907.

² Vogel Lukas, Roeger Werner, Herz, Bernhard The Performance of Simple Fiscal Policy Rules in Monetary Union//*Open Economies Review*.-2013.-№24(1), Sl.-pp. 165-196.

³ Anastasios Karantounias, Managing pessimistic expectations and fiscal policy // *Theoretical Economics*. – 2013. – № 8 (1). – pp. 193-231.

⁴ Karantounias Anastasios, Managing pessimistic expectations and fiscal policy//*Theoretical Economics*.-2013.-№8 (1).-pp. 193-231.

⁵ Sweezy, A. (1972) The Keynesians and Government Policy, 1933–1939, *American Economic Review*, 62, 2, 116–124.

Նշենք, որ Լաֆֆերի կորի հասկացությունը գտնվում է հարկային կարգավորման տեսության կենտրոնական տեղում: Ընդ որում, հստակ ուսումնասիրությունները կատարվում են երկու ուղղությամբ,

1. Առաջինը ենթադրում է արտադրական և հարկային գործընթացների մոդելավորում և Լաֆֆերի պարաբոլային կախվածությունից մշակված ձևաչափերից տեսական դուրսբերում, այսինքն՝ շեշտը դրվում է, այսպես ասած, «հրակային կորի բեկման էֆեկտի» և դրա առաջացման պայմանների հայտնաբերման վրա:
2. Երկրորդ ուղղությունը կապված է առանձին երկրների համար, այսպես կոչված, Լաֆֆերի կետերի մեծությունների հաշվարկման հետ: Այս դեպքում տնտեսական համակարգի ֆունկցիոնալ առանձնահատկություններն իրենց տեղը զիջում են կոնկրետ վիճակագրական տվյալներին և ալգորիթմներին¹: Մի շարք դեպքերում տեսական ձևաչափերի մշակումը զուգակցվում է էմպիրիկ հաշվարկների հետ, որն ապահովում է առաջին և երկրորդ մոտեցումների միավորումը: Այսպիսի դեպքերը շատ քիչ են և ունեն ցածր արդյունավետություն:

Այդ երկու ուղղությունների շրջանակներում գոյություն ունեն խնդրի վերլուծության մոտեցման տարբերություններ: Պայմանականորեն դրանց կարելի է բաժանել երկու խմբերի.

- առաջին խմբում, որպես կանոն, մշակվում է համակարգի նկարագրական միկրոտնտեսական մոտեցումը², և պայմանականորեն վերցրած մեկ տնտեսվարող սուբյեկտի համար հաշվարկված արդյունքները «պիլոտային մոտեցմամբ» տարածվում են բոլոր տնտեսվարող սուբյեկտների վրա այնքան ժամանակ, մինչև կատարվող վերլուծությունը կհասնի իր ընդհանրական մակարդակին,
- երկրորդ խմբում կիրառվում է սկզբունքային ամփոփ կառուցվածք³, ինչը թույլ է տալիս կատարել մակրո ընդհանրացումներ:

Վերջին շրջանում ուսումնասիրություններ են կատարվել, որոնցում առանձնացվել են տարբեր գնահատականներ հարկային համակարգի առանձին կողմերի արդյունավետության տեսանկյունից՝ շեշտադրում կատարելով դրանց ազդեցությանը գործարար միջավայրի բարելավման վրա⁴: Այդ ուսումնասիրություններում, հատկապես, առանձնացվում են հարկային համակարգի արդյունավետության բարձրացման միջոցով տնտեսությունում ստեղծված ավելացրած արժեքը ինչ մուլտիպլիկատիվ արդյունք է տալիս տնտեսական քաղաքականության արդյունավետության, հասարակության բարեկեցության բարձրացման վրա: Օրինակ, ավելացված արժեքի հարկը, շահութահարկը, եկամտահարկը, գույքահարկը ինչպես կարող են ազդել գործարար միջավայրի բարելավման, տնտեսությունում ավելացրած արժեքի ստեղծման, տնտեսության ոլորտներում եկամտաբերության բարձրացման վրա: Դրա հետ մեկտեղ Լաֆֆերի կորի

¹ Гусаков С.В., Жак С.В. Оптимальные равновесные цены и точка Лаффера // Экономика и математические методы. 1995. Т. 31. Вып. 4, Балацкий Е.В. Лафферовы эффекты и финансовые критерии экономической деятельности // Мировая экономика и международные отношения. 1997. № 11, Балацкий Е.В. Точки Лаффера и их количественная оценка // Мировая экономика и международные отношения. 1997. № 12, Балацкий Е.В. Налог на имущество фирм и накопление основного капитала // Мировая экономика и международные отношения. 1999. № 3.

² Соколовский Л.Е. Подоходный налог и экономическое поведение // Экономика и математические методы. 1989. Т. 25. Вып. 4, Аркин В., Сластников А., Шевцова Э. Налоговое стимулирование инвестиционных проектов в российской экономике. М.: РПЭИ/Фонд Евразия. 1999, Капитоненко В.В. Инфляционный сдвиг налоговой ставки на кривой Лаффера // Экономика и технология: межвузовский сборник научных трудов. М.: РЭА, 1994, Гусаков С.В., Жак С.В. Оптимальные равновесные цены и точка Лаффера // Экономика и математические методы. 1995. Т. 31. Вып. 4.

³ Мовшович С.М., Соколовский Л.Е. Выпуск, налоги и кривая Лаффера // Экономика и математические методы. 1994. Т. 30. Вып. 3, Балацкий Е.В. Точки Лаффера и их количественная оценка // Мировая экономика и международные отношения. 1997. № 12, Балацкий Е.В. Налог на имущество фирм и накопление основного капитала // Мировая экономика и международные отношения. 1999. № 3.

⁴ Соколовский Л.Е. Подоходный налог и экономическое поведение // Экономика и математические методы. 1989. Т. 25. Вып. 4, Мовшович С.М., Соколовский Л.Е. Выпуск, налоги и кривая Лаффера // Экономика и математические методы. 1994. Т. 30. Вып. 3, Аркин В., Сластников А., Шевцова Э. Налоговое стимулирование инвестиционных проектов в российской экономике. М.: РПЭИ/Фонд Евразия. 1999, Капитоненко В.В. Инфляционный сдвиг налоговой ставки на кривой Лаффера // Экономика и технология: межвузовский сборник научных трудов. М.: РЭА, 1994, Гусаков С.В., Жак С.В. Оптимальные равновесные цены и точка Лаффера // Экономика и математические методы. 1995. Т. 31. Вып. 4, Балацкий Е.В. Лафферовы эффекты и финансовые критерии экономической деятельности // Мировая экономика и международные отношения. 1997. № 11, Балацкий Е.В. Точки Лаффера и их количественная оценка // Мировая экономика и международные отношения. 1997. № 12, Балацкий Е.В. Налог на имущество фирм и накопление основного капитала // Мировая экономика и международные отношения. 1999. № 3.

հասկացությունը, ի սկզբանե, ստեղծվել է ընդհանուր հարկային բեռի օպտիմալացման համար, այսինքն՝ Լաֆֆերի կորի վրա գտնել կետեր հարկային բեռի միջին ցուցանիշի համար: Վերջինս պետք է ընկալել որպես ՀՆԱ-ում պետական բյուջեի հարկային մուտքերի մաս:

Այդ առումով, մշակվել են տարբեր տնտեսաչափական մոդելներ և ձևաչափեր, որոնք այս կամ այն կերպ որոշել են, թե Լաֆֆերի կորի վրա որն է այն օպտիմալ կետը, որը կարող է բերել հարկային եկամուտների ապահովմանը և տնտեսության զարգացմանը: Այդ խնդրի լուծման համար ներկայացնենք այն վարկածը, որ ՀՆԱ-ում արտադրության ծավալը կախված է հարկային բեռից՝

$$\theta = \frac{T}{X},^1$$

որտեղ՝

T- բյուջեում հարկային մուտքերի գումարն է:

(θ) կախվածությունը մոտարկվում է անուղղակի ֆունկցիայով, որի պարամետրերը ենթարկվում են քանակական գնահատման: $X(\theta)$ ֆունկցիայի նույնականացումը թույլ կտա հաշվարկել Լաֆֆերի կետերը:

Լաֆֆերի կորի առաջին կետը պայմանականորեն նշանակենք θ^* տառով, որի դեպքում արտադրական կորը հասնում է իր $X = X(\theta)$ առավելագույն արժեքի այն ժամանակ, երբ տեղի է են ունենում հետևյալ պայմանները՝ $\partial X(\theta^*)/\partial \theta = 0, \partial^2 X(\theta^*)/\partial \theta^2 < 0$

Լաֆֆերի երկրորդ կետը պայմանականորեն նշանակենք θ^{**} , որի դեպքում այսպես ասած, «հարկային կորը»՝ $T = T(\theta)$ հասնում է իր առավելագույն արժեքի այն ժամանակ, երբ տեղի ունենում հետևյալը՝ $\partial T(\theta^*)/\partial \theta = 0, \partial^2 T(\theta^*)/\partial \theta^2 < 0$:

Կարելի է ասել, որ Լաֆֆերի առաջին կետը տնտեսական առումով նշանակում է հարկային բեռի այն սահմանը, որի ընթացքում արտադրական համակարգը չի անցնում անկման շրջան: Լաֆֆերի երկրորդ կետը ցույց է տալիս հարկային բեռի այն մեծությունը, որի շրջանակից դուրս հարկային մուտքերի ծավալի մեծացումը հնարավոր չէ:

Ընդհանուր առմամբ դրված խնդիրը կարելի է լուծել տնտեսաչափական մեթոդների միջոցով, որոնց հիմքում ընկած է այն դրույթը, որ արտադրության ծավալը ոչ ուղղակիորեն է կախված հարկային բեռից: Այդ դեպքում, ՀՆԱ-ի ծավալը բավական է մոտարկել հետևյալ բազմանդամային ռեգրեսիայի միջոցով.

$$X = \sum_{i=0}^m \beta_i \theta^i, \quad (1)$$

որտեղ՝

β_i - հետադարձ դինամիկ շարքերի հիման վրա վիճակագրական գնահատման ենթակա պարամետրն է:

Հաշվի առնելով բանաձևը և հարկերի ծավալների մեծությունը՝

$$T = \theta X, \quad (2)$$

կարելի գրել հետևյալ հարաբերակցությունը՝

$$T = \beta_0 \theta + \sum_{i=1}^m \beta_i \theta^{i+1} : \quad (3)$$

Այս ուսումնասիրությունը կատարելու համար պետք է ներկայացնել երկու «սկզբնական» ցուցանիշները՝ T և X դինամիկ շարքերի տեսքով: Իմանալով այդ երկու մեծությունները՝ ըստ բանաձև (2)-ի կարելի է հաշվարկել երկրորդային ցուցանիշը՝ θ - ն, հետագայում հետազոտությունների արդյունքում որոնվում է համապատասխան մակարդակի բազմանդամ (1): Ցանկալի է, որ այն լինի քառակուսային կամ խորանարդային ֆունկցիայի, քանի որ բազմանդամի ավելի բարձր կարգը կարող է խոչընդոտել Լաֆֆերի կետի որոնմանը:

Բանաձև (1)-ը ունի մի շարք առանձնահատկություններ: Նախ, β_i պարամետրերի ստաց-

¹ Балацкий Е.В. Лафферовы эффекты и финансовые критерии экономической деятельности // Мировая экономика и международные отношения. 1997. № 11.

ման համար անհրաժեշտ է ունենալ վիճակագրական առումով «երկար» ու «լավ» դինամիկ շարքեր: Երկրորդ, **β** պարամետրերը անընդհատ են ժամանակի մեջ, ինչը բերում է Լաֆֆերի կետերի կայունության: Դա այդքան էլ իրատեսական չի կարող ներկայացնել տնտեսական իրավիճակը և դրանում տեղի ունեցող փոփոխությունները, քանի որ ավելի ճիշտ կլիներ ենթադրել, որ Լաֆֆերի կետերը հանդիսանում են ժամանակի մեջ «լողացող» մեծություններ:

Անդրադառնալով հարկային բեռի օպտիմալացման խնդրին, հարկ ենք համարում վերլուծել ՀՀ հարկային համակարգն ու հարկային օրենսդրությունը, իսկ հետո միայն պարզել, թե դրանք ինչպես են ազդում գործարար միջավայրի վրա:

ՀՀ հարկային համակարգն անցել է ձևավորման ու զարգացման՝ ավելի քան երկու տասնամյակ ընդգրկող ժամանակահատված, և թեև այդ ընթացքում առանձին օրենսդրական փոփոխություններով մշտապես լուծվել են հարկային համակարգի կատարելագործման, մրցունակության բարձրացման, ազգային տնտեսության գործարար միջավայրի բարելավման ու պետական բյուջեի համար անհրաժեշտ հարկային եկամուտների ապահովման խնդիրները, այդուհանդերձ համաշխարհային տնտեսության զարգացման ներկա միտումները, նոր մարտահրավերները, տարածաշրջանային զարգացումներն ու տնտեսական միությունների շրջանակներում ընթացող ինտեգրացիոն գործընթացները հարկային հարաբերությունները նորովի կարգավորելու օբյեկտիվ անհրաժեշտություն են առաջացրել: Այս իմաստով, հարկային օրենսգրքը կարևորվում է տնտեսության ակտիվացման, գործարար միջավայրի հետագա բարելավման ու օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում, ինչի արդյունքում հնարավոր է ապահովել երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ: Շատ կարևոր է նաև այն, որ հարկային օրենսգրքի առկայությունը խոսում է առավել կայացած, կայուն և կանխատեսելի հարկային համակարգի ու հարկային միջավայրի մասին: Հետևաբար, հարկային օրենսգրքի առկայությունը նաև կարևոր ու դրական ազդակ է ՀՀ տնտեսության ինտեգրման արդի մարտահրավերներին, ինչպիսին է ԵԱՀԿ, տարածաշրջանային երկրների հետ նոր ձևաչափի, ներդրողների ու միջազգային գործընկեր կազմակերպությունների համար:

ՀՀ հարկային օրենսգրքի հիմքում ընկած են հարկային քաղաքականության հիմնարար տարրերը, ինչպիսիք են՝ հարկման դրույքաչափերը, հարկման բազաները, հարկային արտոնությունները և հարկի հաշվարկման ու վճարման կարգին վերաբերող հետևյալ հիմնական մոտեցումները: Բացի այդ, կարևորվել է հարկման այնպիսի դրույքաչափերի կիրառությունը, որոնք մի կողմից չեզոք ազդեցություն կարող են ունենալ հարկային միջավայրի վրա, մյուս կողմից հնարավորություն են տալիս տնտեսության տարբեր ոլորտների, տարբեր չափերի, ինչպես նաև հարկման տարբեր համակարգերում գտնվող հարկ վճարողների համար սահմանել հավասարակշռված և տնտեսապես հիմնավորված հարկային բեռ:


Վերլուծելով գործարար միջավայրի վրա հարկային համակարգի ազդեցության խնդիրները, հարկ ենք համարում անդրադառնալ հարկային օրենսգրքի հիմքում ընկած հարկման բազաների որոշման սկզբունքների ու կանոնների վերանայմանը: Վերջինս հնարավորություն կընձեռնի մի կողմից ամրապնդել հարկման արդարության սկզբունքները, ինչը կդրսևորվի հարկման բազաների որոշման սկզբունքների միասնականացմամբ, մյուս կողմից՝ սահմանել առավել հիմնավորված հարկման բազաներ, ինչը կդրսևորվի հարկման բազան արհեստականորեն մեծացնող և տնտեսագիտական որևէ հիմնավորում չունեցող սահմանափակումների վերացմամբ: Արդյունքում հիմնական հարկատեսակների գծով հարկման բազաները կձգգրտվեն՝ դրանով իսկ ամրապնդելով հարկման արդարացիության սկզբունքը:

Հարկային օրենսգրքի հիմնական օրենքների վերլուծության արդյունքում պարզվել է, որ վերջինիս հիմքում ընկած է հարկերի հաշվարկման և վճարման կարգի պարզեցումն ու ազատականացումը: Խոսքը վերաբերում է ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով հաշվանցումների կատարման և դեբետային մնացորդների օգտագործման կարգի ազատականացմանը (տնտեսագիտական հիմնավորում չունեցող սահմանափակումների վերացմամբ), ներդրումային նշանակություն ունեցող ապրանքների ներմուծման համար ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետների երկարացմանը, շահութահարկի գծով կանխավճարների հաշվարկման համակարգի ազատականացմանը, շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով մի շարք նորմավորվող ծախսերի (հատկապես ապրանքների արտահանման, արտաքին շուկաներում

գովազդի ու մարքեթինգի իրականացման, կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ կատարվող) համար նախատեսված նորմաների վերացմամբ, հարկերի հաշվարկման ու վճարման, հարկային մարմիններին հաշվետվությունների ներկայացման պարբերականության կրճատմամբ և այլն:

Կատարված վերլուծության արդյունքների հիման վրա կարող ենք հիմնավորել, որ ՀՀ-ում հարկային համակարգում առկա խնդիրների լուծման և, այսպես ասած, «անթերի հարկային քաղաքականություն» իրականացնելու համար պետք է գործի հետևյալ պայմանը $\theta^* > \theta$:

Այդ առումով, անհրաժեշտ է հաշվարկել առանձին հարկատեսակների բեռի ազդեցությունը հարկային համակարգի կայունության վրա, մասնավորապես, առանձնացվել են պետական բյուջե հավաքագրվող ուղղակի հարկային բեռի (շահութահարկ/ՀՆԱ և եկամտային հարկ/ՀՆԱ) և անուղղակի հարկային բեռի (ակցիզային հարկ/ՀՆԱ և ԱԱՀ/ՀՆԱ) ցուցանիշները: Այսպես, 2001-2015թթ. հիմնական հարկատեսակների հարկային բեռը աճի և նվազման տարբեր միտումներ, սակայն միջինը ուղղակի հարկերի բեռը՝ շահութահարկի և եկամտային հարկի մասով կազմել են համապատասխանաբար՝ 2,16% և 2,42%, աճել է, իսկ անուղղակի հարկերի բեռը՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով կազմել է համապատասխանաբար՝ 7,85% և 1,57% (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. 2001-2015թթ. հիմնական հարկատեսակների հարկային բեռը, %.¹

Հատկանշական է նաև այն, որ ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորվում են տարբեր մակարդակների իրավական ակտերով (ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ, հարկային մարմնի հրամաններ և այլն): Արդյունքում, մի կողմից նկատելիորեն բարդացել է հարկային հարաբերություններ կարգավորող օրենսդրությունից օգտվելը, մյուս կողմից հարկային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի այս տարանջատվածությունն ու բազմազանությունը ստեղծել են մի այնպիսի իրավիճակ, երբ միևնույն նշանակությունն ունեցող հասկացությունները տարբեր իրավական ակտերում կիրառվում են տարբեր եզրույթներով, երբ միատեսակ հարկային հարաբերությունները կարգավորվում են տարբեր սկզբունքներով ու կանոններով: Այս առումով, ՀՀ հարկային օրենսգրքի ընդունմամբ հնարավոր կլինի նկատելիորեն կենտրոնացնել և միօրինակ դարձնել հարկային հարաբերություններ կարգավորող բազմաթիվ իրավական ակտերը, ինչի արդյունքում հարկային օրենսդրությունը կդառնա առավել համակարգված, իսկ դրանից օգտվելը՝ դյուրին: Մասնավորապես, առաջարկվում է հարկային օրենսգրքի շրջանակներում կարգավորել ինչպես հարկ վճարողների հարկային հաշվառման, հարկերի հաշվարկման ու վճարման, հարկ վճարողների սպասարկման ու նրանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացման, հարկային պարտավորությունների ու գերավճարների հաշվառման, այնպես էլ հարկային օրենսգրքի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցների կիրառության, հարկային հարցերով վարչական վարույթի իրականացման, հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների կիրառության ու հարկային ծառայողների գործողությունների և անգործության բողոքարկման հետ կապված հարաբերությունները:

¹ http://www.armstat.am/file/article/finansner_2015_1.pdf

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ԸՈՒՐՁ

ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Համառոտագիր

Հարկային բեռի գնահատումը կարևորվում է ուղղակի և անուղղակի հարկերի տեսանկյուններից, քանի որ դրանք ազդում են տնտեսական ակտիվության վրա: Բիարկե, առաջին հերթին անհրաժեշտ է բացահայտել և հիմնավորել հարկային համակարգում գոյություն ունեցող թերություններն ու բացթողումները, որոնք կաշկանդում են վերջիններիս օպտիմալ հարաբերակցությանը, քանի որ հարկային քաղաքականության անկայունությունը, ինչպես նաև հարկային օրենքներում հաճախակի փոփոխությունները, բացասաբար են ազդում սոցիալական անապահով խավի կենսամակարդակի վրա:

***Բանալի բառեր.** Հարկային բեռ, հարկային եկամուտներ, տնտեսվարող սուբյեկտ, հարկաբյուջետային քաղաքականություն, բնակչության կենսամակարդակ, հարկային համակարգ:*

К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ НАЛОГОВОГО БРЕМЕНИ

КРИСТИНЕ ЮРЬЕВНА БАГДАСАРЯН, *к.э.н*

старший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

Оценка налогового бремени важна с точки зрения прямых и косвенных налогов, так как они влияют на экономическую активность. Конечно, в первую очередь необходимо выявить и обосновать существующие в налоговой системе недостатки и упущения, которые сдерживают их оптимальное соотношение, поскольку нестабильность налоговой политики, а также частые изменения налоговых законов негативно влияют на уровень жизни социально необеспеченных слоев населения.

***Ключевые слова:** налоговая нагрузка, налоговые доходы, хозяйствующий субъект, налогово-бюджетная политика, уровень жизни населения, налоговая система.*

ON THE ISSUE OF ESTIMATING THE TAX BURDEN

KRISTINE YURI BAGHDASARYAN, *Ph.D. in Economics*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

Estimating the tax burden is crucial from the point of view of direct and indirect taxes, since they affect the economic activity. Certainly, first, it is required to identify and justify the current pitfalls and shortcomings of the tax system that suppresses the optimal ratio of the direct taxes to indirect taxes, since the instability of tax policy and frequent changes in the tax-related laws negatively affect the standards of living of the socially vulnerable people.

***Keywords:** Tax burden, tax revenue, legal entity, fiscal policy, standards of living of the population, tax system*

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱՌԴԴՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՄԵԹՈԴԸ: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԴԴՏԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱՌԴԴՏԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներքին աուդիտի առանձին ուղղությունների մեկնաբանման համար օտարերկրյա տնտեսագետներն օգտագործում են տարբեր տեսակի հասկացություններ: Համընդհանուր ընդունված է ներքին աուդիտը տարանջատել երեք հիմնական տեսակների՝

1. կառավարչական աուդիտ,
2. համապատասխանության աուդիտ,
3. ֆինանսական հաշվետվությունների աուդիտ:

Ներտնտեսական վերահսկողության արդյունավետության և կազմակերպության արտադրողականության տեսանկյունից տարբերվում են կառավարչական աուդիտի երեք հիմնական չափանիշներ.¹

1. գործառույթային,
2. կազմակերպչական,
3. հատուկ:

Գործառույթային կառավարչական աուդիտը դա տնտեսական համակարգերի կամ ենթահամակարգերի մեկ կամ մի քանի գործառույթների աուդիտն է, որի օգնությամբ կարելի է ստուգել կազմակերպության առանձին ստորաբաժանումների դրամական հաշվարկների հետ կապված գործառույթները:

Կազմակերպչական կառավարչական աուդիտի դեպքում հիմնական ուղղվածությունը միտվում է կազմակերպության ներսում իրականացվող գործառույթների արդյունավետ փոխհամագործակցելու փաստի բացահայտմանը:

Հատուկ կառավարչական աուդիտի նշանակությունը որոշվում է կազմակերպության վարչական ապարատի պահանջմունքներով, որն իրենից ներկայացնում է կազմակերպության կառավարման համակարգի և իրականացվող գործառույթների արդյունավետության գնահատման մակարդակի հետազոտություն:

Կառավարչական աուդիտը իրականացվում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին աուդիտորների կողմից:

Արտաքին աուդիտորների կողմից կառավարչական աուդիտ անցկացնելու համար պատվիրատու կազմակերպությունը պետք է աուդիտորական ընկերության հետ համապատասխան աուդիտորական պայմանագիր կնքի: Սովորաբար դա լինում է այն դեպքում, երբ կազմակերպությունում բացակայում է ներքին աուդիտի ստորաբաժանումը, կամ ներքին աուդիտորները չեն տիրապետում տվյալ ոլորտին հատուկ անհրաժեշտ փորձի:

Կառավարչական աուդիտի արդյունավետության գլխավոր սկզբունքն է արտաքին և ներքին աուդիտորների անկախությունը²:

Ներքին կառավարչական աուդիտի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով, այդ թվում՝

- բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բարդ կազմակերպչական կառուցվածքով,
- թողարկվող արտադրանքի տեսականու զանազանությամբ,

¹ Бурцев В.В. Классификация внутреннего аудита // Бухгалтерский учет. - 2008 г. - № 47. - с.84-85.

² Правила (стандарты) аудиторской деятельности // Составление и комментарии д. э. н. Данилевского Ю.А. - М.: Библиотека журнала "Бухучет", 2007. - 346 с.

- հիմնական և օժանդակ արտադրությունների ուղղվածություններից ու բարդության աստիճանով,
- հիմնական կազմակերպությունից կառուցվածքային ստորաբաժանումների հեռավորությունից,
- կազմակերպության աշխատակիցների կատարած աշխատանքների և գործողությունների վերաբերյալ բավարար չափով օբյեկտիվ ու անկախ գնահատական ստանալու բաժնետերերի ձգտումով,
- արտադրական կազմակերպություններում կառավարչական հաշվառման համակարգի ներդրումով,
- աշխատանքային գործընկերների կողմից կազմակերպության նկատմամբ վստահության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ և այլն:

Բարձր որակի ներքին կառավարչական աուդիտ իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալները՝¹

- կազմակերպությունում ծագած խնդիրների լուծման գործընթացում դրական արդյունքի հասնելուն նպաստակա ուղղվածության մակարդակը,
- կազմակերպության գործունեության ուղղությունների ուսումնասիրումը և առաջադրված խնդիրների հստակեցումն ու ճիշտ պատկերացումը,
- կատարվելիք աշխատանքների մանրակրկիտ պլանավորումը,
- աուդիտորական ստանդարտների, թեստավորումների և գործընթացների առկայությունը,
- խմբի ղեկավարի կողմից անընդհատ հսկողությունն աուդիտորների կատարած աշխատանքների նկատմամբ,
- բարձր որակավորված անձնակազմի առկայությունը,
- կառավարչական աուդիտի անցկացման պլան-ժամանակացույցի առկայությունը:
Ներքին կառավարչական աուդիտի ստուգման ուղղություններն են՝
- կառավարչական հաշվառման վարման ճշտության ստուգում,
- կարճաժամկետ ֆինանսական ներդրումների հաշվառման ստուգում,
- դրամարկղային գործառնությունների ստուգում,
- ծախսերի և ծախսումների հաշվառման ստուգում,
- ֆինանսական արդյունքների հաշվառման ստուգում:

Կառավարչական աուդիտը հանդիսանալով օբյեկտիվ տեղեկատվության ստուգմանը նպաստակա ուղղված ստուգման ձև՝ ուսումնասիրությունների ընթացքում պետք է կիրառի գիտականորեն հիմնավորված մեթոդներ:

Կառավարչական աուդիտը կառուցվում է կազմակերպության կառավարման համակարգի իրավիճակային մոտեցման մեթոդաբանության հիման վրա: Տվյալ ուղղվածության առանձնահատկությունը և կառավարչական վերլուծության մեթոդը հիմնականում որոշվում է աուդիտի առարկայի բնույթից:

Կառավարչական աուդիտի իրականացման ժամանակ տվյալների հավաքագրումը կատարվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- փաստացի վերահսկողություն,
- հաստատում,
- փաստաթղթավորում,
- դիտարկում,
- հարցում,
- թվաբանական ճշտություն,
- վերլուծական ընթացակարգեր:

Վերոնշյալ մեթոդները հիմք են հանդիսանում կազմակերպության գործունեության կառուցվածքային վերլուծության կատարման համար և հնարավորություն տալիս կանոնակարգել առևտրային ու արտադրական կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը:

¹ Панкова С.В. Об организации внешнего контроля качества аудита // Аудиторские ведомости. - 2000 г. - № 2. - с.71 - 74.

Կառավարչական աուդիտի պրակտիկայում լայնորեն օգտագործվում են փաստաթղթավորման, հարցման և դիտարկման մեթոդները: Կառավարչական աուդիտի ընթացքում հատկապես կարևոր նշանակություն ունի ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման գծով երաշխավորությունների մշակման և պահուստների բացահայտման համար վերլուծական ընթացակարգերի կիրառումը:

Կառավարչական աուդիտում փաստաթղթերի ստուգման հիմնական ձևերից են՝

- օրինականության ստուգումը,
- թվաբանական ճշտության ստուգումը,
- ժամանակագրական ստուգումը,
- հանդիպակաց ստուգումը,
- ետհաշվարկի կատարման մեթոդը,
- արտացոլված տնտեսական գործառնությունների օրինականության և հիմնավորվածության ստուգումը:

Իր հերթին փաստաթղթային հսկողության մեթոդները կարելի է բաժանել երկու խմբի՝

1. փաստաթղթերի ձևի նկատմամբ գերակայությունության ստուգում,
2. փաստաթղթերում արտացոլված տվյալների իրականության ստուգում:

Փաստաթղթերի ձևի նկատմամբ գերակայությունության ստուգումը ներառում է՝

- փաստաթղթերի կազմման ձևակերպման ճշտության և ամբողջականության ստուգում,
- հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների համադրում՝ առաջադրված նորմատիվների հետ,
- փաստաթղթերում արտացոլված գործառնությունների օրինականության համապատասխանության ստուգում:

Փաստաթղթերում արտացոլված տվյալների իրականության ստուգման մեթոդներին են պատկանում՝

- հանդիպակաց ստուգումը,
- փոխադարձ ստուգումը,
- համեմատական ստուգումը:

Փաստաթղթային ստուգումը կարելի է լրացնել փաստացի հսկողությամբ, քանի որ անհրաժեշտության դեպքում դրանց ամբողջականությունն ու անժխտելիության օրինականությունը հաստատվում է հենց փաստացի հսկողության օգնությամբ:

Հարցման գործընթացում հաճախորդը տալիս է գրավոր կամ բանավոր տեղեկատվություն աուդիտորի կողմից առաջադրված հարցերին: Չնայած հարցման արդյունքում հաճախորդից հնարավոր է ստանալ արժեքավոր տեղեկատվություն, սակայն վերջինս աուդիտորը չի համարում վերջնական, քանի որ այն չի ստացվում անկախ աղբյուրից և կարող է աղավաղված լինել ի օգուտ հաճախորդի: Ուստի տվյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է ամրապնդել այլ ապացույցներով:

Դիտարկման տակ հասկացվում է աուդիտորի կողմից արված ենթադրությունները կոնկրետ գործողությունների գնահատման ժամանակ: Տվյալ մեթոդի կիրառման ժամանակ շատ քիչ դեպքերում է հնարավոր լինում բավարար քանակությամբ ապացույցներ հավաքագրել: Հիմնականում անհրաժեշտություն է լինում ապացուցել նախնական կազմած պատկերը մեկ այլ տեսակի ապացույցներով¹:

Անհրաժեշտ է հստակ սահմանազատել կառավարչական աուդիտը ֆինանսական հաշվետվությունների աուդիտից, որոնց գծով գոյություն ունեն երեք հիմնական տարբերություններ՝

1. աուդիտի նշանակման կարգը,
2. եզրակացության տրամադրման կարգը,
3. ոչ ֆինանսական հատվածների ներառման աուդիտորական ստուգումներում:

Ըստ աուդիտի նշանակման կարգի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է որոշել տնտեսական գործառնությունների ճիշտ արտացոլումը հաշվառման մեջ և

¹ Бархатов А.П., Епинин Г.А. Программа внутреннего аудита в организации // Аудиторские ведомости. 2003 г. - № 3. - с.52-60.

հաշվետվություններում: Կառավարչական աուդիտի ժամանակ գլխավոր նպատակը կազմակերպության արդյունավետության և արտադրողականության որոշումն է: Միաժամանակ ֆինանսական հաշվետվությունների աուդիտը ստուգում է արդեն կատարված գործառնությունների արդյունքները, իսկ կառավարչական աուդիտը նպատակաուղղված է կազմակերպության տնտեսական գործունեության զարգացման հեռանկարներին:

Ըստ եզրակացության տրամադրման կարգի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ աուդիտորի կողմից տրված եզրակացությունը հասանելի է բոլորին, իսկ կառավարչական աուդիտորական եզրակացության օգտագործողներ հանդես են գալիս հենց ստուգվող կազմակերպության վարչական ապարատի աշխատակիցները:

Ըստ ոչ ֆինանսական հաստատվածների ներառումն աուդիտորական ստուգումների, որի համաձայն կառավարչական աուդիտը վերլուծում է կազմակերպության տնտեսական գործունեության և կառավարման համակարգի արդյունավետության ու արտադրողականության մակարդակը և, արդյունքում, այն իրականացվում է բավականին մեծ մասշտաբով: Ֆինանսական հաշվետվությունների աուդիտը սահմանափակվում է անմիջականորեն ֆինանսական հաշվետվությունների օբյեկտիվության վրա ազդող խնդիրների որոշմամբ:

Ֆինանսական հաշվետվությունների և կառավարչական աուդիտների միջև եղած տարբերությունները կարելի է ցույց տալ հետևյալ աղյուսակի տեսքով:

Աղյուսակ

Կառավարչական և ֆինանսական հաշվետվությունների աուդիտի տարբերությունները

<i>Ֆինանսական հաշվետվությունների աուդիտ</i>	<i>Կառավարչական աուդիտ</i>
1. Արդեն ստացված արդյունքների ստուգում և վերլուծություն	1. Ստուգում և վերլուծություն՝ ուղղված ապագա արդյունքների բարելավմանը
2. Ֆինանսական արդյունքների ստուգում	2. Ֆինանսական արդյունքների մեծացում և կազմակերպության առջև դրված այլ խնդիրների լուծում
3. Նախագգուշական բնույթի ստուգում	3. Կատարողական բնույթի ստուգում
4. Ըստ նպատակայնության՝ համապատասխան գործընթացների և վերլուծության մեթոդների կիրառում	4. Ըստ նպատակայնության՝ դրված առաջադրանքների կատարում և ռեսուրսների արդյունավետ օգտագործում
5. Տեղեկատվության հիմնական աղբյուր են հանդիսանում ֆինանսական տվյալները	5. Օգտագործվում են ինչպես ֆինանսական, այնպես էլ կառավարման համակարգի, ռազմավարական ծրագրերի, բիզնես-ծրագրերի, աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվությունը

Ինչպես ֆինանսական հաշվետվությունների և համապատասխանության աուդիտը, այնպես էլ կառավարչական աուդիտն այժմյան պայմաններում լայնորեն կիրառվում է տնտեսավարող սուբյեկտներում, քանի որ վերջինս մեծացնում է հաճախորդների վստահությունը կազմակերպությունում գործող ներքին համակարգերի և գործընթացների նկատմամբ:

Ի տարբերություն աուդիտի մնացած ձևերի, կառավարչական աուդիտի գործընթացը սովորաբար բավականին ժամանակահատված է զբաղեցնում (մոտ մեկ ամիս): Այստեղ նաև պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ էական մեծ ժամանակ է զբաղեցնում կատարված վերլուծությունների հիման վրա աուդիտորների կողմից կազմակերպության կառավարման համակարգի արդյունավետ գործունեության ապահովմանն ուղղված համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակման ու իրականացման գործընթացը: Այն կարող է տևել 3-6 ամիս:

Ընդհանրական առումով նշենք, որ կառավարչական աուդիտի փորձը վկայում է այն մասին, որ վերջինս, որպես նորարարություն և բավականին արդյունավետ գործիք, արդի շուկայական հարաբերություններում էապես նպաստում է տնտեսավարող սուբյեկտի ներքին վերահսկողական համակարգի ու բիզնես-գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱՌԻԴԻՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՄԵԹՈՂԸ: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱՌԻԴԻՏԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆՆԱ ԱՇՈՏԻ ԲԱՅԱԴՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտ ամբիոն

Համառոտագիր

Կառավարչական աուդիտի էությունը հիմնականում համընկնում է ֆինանսական աուդիտի էությանը, տարբերությունը միայն կայանում է ստուգվող օբյեկտի մեջ: Դրա համար էլ կառավարչական աուդիտն իրականացվում է հենց այն սկզբունքների, ստանդարտների և ստուգումների անցկացման ձևերի հիման վրա, որոնք կիրառվում են ֆինանսական աուդիտի ժամանակ:

Կառավարչական աուդիտը կառուցվում է կազմակերպության կառավարման համակարգի իրավիճակային մոտեցման մեթոդաբանության հիման վրա: Տվյալ ուղղվածության առանձնահատկությունը և կառավարչական վերլուծության մեթոդը հիմնականում որոշվում է աուդիտի առարկայի բնույթից:

Բանալի բառեր. կառավարչական աուդիտ, համապատասխանության աուդիտ, ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, դիտարկում, հարցում, ժամանակագրական ստուգում:

ТИПЫ И МЕТОДЫ УПРАВЛЕНЧЕСКОГО АУДИТА. РАЗЛИЧИЯ МЕЖДУ АУДИТОМ ФИНАНСОВОЙ ОТЧЕТНОСТИ И УПРАВЛЕНЧЕСКИМ АУДИТОМ

АННА АШОТОВНА БАЯДЯН, *к.э.н., доцент*
кафедры управленческого учета и аудита
Армянского государственного экономического университета

Аннотация

Сущность управленческого аудита в основном совпадает с финансовым аудитом и отличие лишь в объекте проверки. Поэтому управленческий аудит осуществляется именно на основе тех принципов, стандартов и форм проверок, которые используются при финансовом аудите.

Управленческий аудит строится на методологии ситуационного подхода к системе управления организацией. Специфика конкретного направления и метод операционного анализа в основном определяются природой и характером предмета аудита.

Ключевые слова: управленческий аудит, аудит соответствия, аудит финансовой отчетности, наблюдение, опрос, хронологическая проверка.

TYPES AND METHODS OF MANAGEMENT AUDIT. DIFFERENCES BETWEEN FINANCIAL AUDIT AND MANAGEMENT AUDIT

ANNA ASHOT BAYADYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Chair of Managerial Accounting and Auditing
Armenian State University of Economics

Abstract

The essence and the meaning of the management audit is basically the same as in case of financial audit and the only difference is in the object of inspection. Therefore, management audit is carried out on the basis of those principles, standards, and forms of control, which are used in the financial audit. Management audit is based on the methodology of the situational approach to the system of the management of the organization. The specifics of a particular direction and the method of operational analysis are mainly determined by the nature and character of the subject of the audit.

Keywords: Management audit, compliance audit, financial statements audit, observation, survey, audit trial

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱՌԴԻՏԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Կառավարման համակարգում իր ուրույն տեղն ունի կառավարչական աուդիտը, որը հանդես է գալիս որպես կառավարչական գործունեության անկախ հետազոտման և գնահատման ձև:

Կառավարչական աուդիտն իրենից ներկայացնում է կազմակերպության կառավարման համակարգի գործունեության նկատմամբ հսկողության իրականացման սկզբունքների և մեթոդների համախումբ, որն ուղղված է հակասությունների, տեղեկատվության անհամապատասխանության հայտնաբերմանն ու վերացմանը:

Ներկա ժամանակներում կառավարչական աուդիտի պահանջարկն էլ ավելի է մեծանում՝ հիմնված հետևյալ հանգամանքների վրա՝

1. այն դեպքում, երբ ներդրողներն ուզում են գնահատել կազմակերպության որևէ հատվածի կառավարման համակարգը,
2. այն կարող է օգտակար լինել կազմակերպություն ձեռք բերելիս,
3. այն անհրաժեշտ է կազմակերպության սեփականատերերին և ղեկավարներին կառավարման համակարգի արդյունավետության, ինչպես նաև դուստր ընկերությունների, մասնաճյուղերի և առանձին ֆիրմաների գործունեության գնահատման ժամանակ:

Կառավարչական աուդիտի թերություններից է այն, որ վերջինս այդքան էլ մեծ ուշադրություն չի դարձնում արտաքին գործարար միջավայրին: Մասնավորապես, ֆինանսական ցուցանիշների միջոցով հնարավոր չէ հստակ կանխատեսումներ կատարել կազմակերպության գործարար միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ: Ֆինանսական գործակիցները հիմնականում կիրառվում են ներքին գործունեության ուսումնասիրման ժամանակ և, ցավոք, թույլ չեն տալիս հստակ համեմատել կազմակերպության ցուցանիշները մրցակից ընկերությունների համապատասխան ցուցանիշների հետ: Տվյալ փաստը նույնպես շատ էական է, քանի որ այն հնարավորություն կտար աուդիտորներին ուսումնասիրել նաև մրցակցային դաշտը, որի հիման վրա էլ առաջարկել շուկայում կիրառել առավել արդյունավետ գործելու մեթոդներ և հնարավորություններ: Սա էլ իր հերթին թույլ կտար կազմակերպություններին ամրապնդել իրենց դիրքը մրցակցային դաշտում և շուկայում:

Կառավարչական աուդիտի անցկացումը կազմակերպություններում ունի շատ արդյունավետ և դրական կողմեր, այդ թվում.

1. Կառավարման համակարգի գնահատման հիման վրա աուդիտորների կողմից տրվում են համապատասխան խորհուրդներ կազմակերպության կառավարման որակի բարձրացման գծով: Տվյալ պարագայում «կառավարման որակ» հասկացությունը բնութագրվում է որպես կազմակերպության արդյունավետ կառավարման համակարգ, ինչպես նաև բարձր և միջին կառավարող օղակի որակավորման բարձր մակարդակ:
2. Կառավարչական աուդիտի ներդրումն օգտակար է ինչպես փոքր, այնպես էլ մեծածավալ գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար: Երկուսի դեպքում էլ աուդիտի ներդրումն ուղղված է կառավարման համակարգի գործունեության բարելավմանը:
3. Կառավարչական աուդիտի ստեղծումը կազմակերպության ներսում ոչ միայն վերջինիս արդյունավետ կառավարման խնդիրն է, այլ նաև շուկայական պայմաններում նրա դիրքի ամրապնդմանն ու մրցակցային պայմաններին դիմակայման խնդիր, քանի որ կառավարչական աուդիտը հնարավորություն է տալիս արագ հարմարվել և, ճիշտ վերլուծություններով պայմանավորված, դիմակայել այժմյան շուկայական հարաբերություններում անընդհատ փոփոխվող մրցակցային դաշտին:

Կառավարչական աուդիտի էությունը կայանում է կազմակերպությունում կառավարման համակարգված արդյունավետության ցուցանիշները առկա կառավարման գործընթացների հետ համեմատման մեջ:¹ Արդյունավետ կառավարման ցուցանիշների համակարգը գնահատելու հնարավորություն է տալիս կազմակերպության աշխատանքը 4 հիմնական չափանիշների հիման վրա: Դրանք են՝

- ֆինանսական ցուցանիշները,
- հաճախորդների հետ փոխհարաբերությունները,
- ներքին բիզնես-գործընթացները,
- անձնակազմի վերապատրաստումը:

Վերոնշյալներից ֆինանսական ցուցանիշները գնահատելու հնարավորություն են ընձեռում կատարված գործառնությունների և գործարքների տնտեսական հետևանքները: Ֆինանսական ցուցանիշները հիմք են հանդիսանում կազմակերպության կողմից կազմված պլանների և որդեգրած ռազմավարության համապատասխանության որոշման համար, միաժամանակ վերահսկողություն սահմանելով դրանց իրագործման կատարման նկատմամբ: Ֆինանսական ցուցանիշները, կախված բիզնեսի զարգացման փուլերից (տնտեսական աճ - կայուն վիճակ - արդյունքների բարելավում), կարող են իրարից խիստ տարբեր լինել:

Նշված մակարդակներից յուրաքանչյուրի համար կարելի է առանձնացնել երեք տեսակի ֆինանսական ուղղվածություն, որոնք կնպաստեն կազմակերպության բիզնես-ծրագրերի իրականացմանը: Այդ ուղղվածություններն են՝

- եկամտի ավելացումը և գործունեության ծավալների մեծացումը,
- ծախսերի կրճատումը և արտադրության մեծացումը,
- ակտիվների օգտագործումը և ներդրումների մեծացումը:

Արդյունավետ կառավարման ցուցանիշների համակարգի գնահատման չափանիշներից հաջորդը հաճախորդների հետ փոխհարաբերություններն են, որոնք իրենցից ներկայացնում են այնպիսի ցուցանիշների համակարգ, որոնց միջոցով գնահատվում և վերլուծվում է հաճախորդների պահանջմունքների բավարարման մակարդակը, առկա հաճախորդների պահպանումը և նոր հաճախորդների ներգրավումը:²

Հաջորդ չափանիշը, դա ներքին բիզնես-գործընթացներն են, բիզնես-ծրագրերի կատարելագործմանն ուղղված համապատասխան վերլուծությունները, որոնք թույլ կտան՝

- մշակել այնպիսի բիզնես-առաջարկներ տվյալ կազմակերպության հաճախորդների համար, որոնք կապահովեն վերջիններիս բազայի պահպանում և թվաքանակի աճ,
- բավարարել ներդրողների սպասումները՝ կապված բարձր ֆինանսական եկամտաբերության հետ:

Վերջին չափանիշը՝ անձնակազմի վերապատրաստումն է, որը բնորոշում է այնպիսի ենթակառույցների ստեղծման անհրաժեշտությունը, որոնք կապահովեն գործունեության երկարաժամկետայնություն: Իսկ գործունեության արդյունավետության բարձրացման և երկարատևության ապահովման գործում էական դերակատարում ունեն կազմակերպության 3 հիմնական բաղադրիչներ, դրանք են

- աշխատակազմը,
- ստորաբաժանումները,
- կազմակերպչական կառույցները:

Կառավարչական աուդիտի անցկացման արդյունքներով հնարավոր է լինում առավելագույնս օբյեկտիվորեն իրականացնել կազմակերպության կառավարող օղակի որակավորումը: Կառավարման համակարգի մանրակրկիտ վերլուծության հիման վրա հնարավոր է լինում տվյալ աշխատանքից հեռացնել այն աշխատակիցներին, որոնք չեն համապատասխանում որա-

¹ Золотарев В.С. Управленческий аудит как элемент антикризисного процесса на предприятии: Науч. - практ. пособие / В.С. Золотарев, Н.А. Аюбов; М-во образования Рос. Федерации, Рост. гос. экон. ун-т (РИНХ). - Ростов н/Д: РИНХ, 2002. - 177 с.

² Бурцев В.В. Управленческий аудит системы управления финансами организации // Аудиторские ведомости. - 2000 г. - № 8. - с.3 - 10.

կավորման և մասնագիտական պատրաստվածության ժամանակակից պահանջումներին: Այն հնարավորություն է տալիս նաև ճիշտ կիրառել կազմակերպության մասնագիտական ներուժը և վեր հանել այն աշխատակիցների կարողությունները, որոնք տիրապետում են բարձր մասնագիտական գիտելիքների և կարող են կատարել պատասխանատու ու կազմակերպության գործունեությունը բարելավող աշխատանքներ¹:

Նշենք, որ անցկացված կառավարչական աուդիտի արդյունքների հիման վրա աուդիտորների կայացրած որոշումները՝ կապված աշխատակիցների աշխատավայրերի փոփոխության հետ, գրեթե վիճարկելի է կազմակերպության ղեկավարության կողմից: Այդ կերպ կառավարչական աուդիտի ոլորտը խիստ տարբերվում է վերահսկողության ոլորտից և ունի յուրահատուկ բնույթ: Կառավարչական աուդիտը, որպես կանոն, օրինական կարգավիճակ է ստանում միայն այն ժամանակ, երբ կազմակերպությունում ստեղծվում է ներքին աուդիտի ծառայությունը: Ցանկացած պարագայում կառավարչական աուդիտի իրականացումը միայն ուժեղացնում է կազմակերպության գործունեության արդյունավետության և արդյունքայինության ցանկալի մակարդակի հասնելու նկատմամբ վերահսկողությունը:

Կառավարչական աուդիտի արդյունավետությունը, որպես գործունեության տեսակ, պահանջում է վերջինիս անցկացման բարձր մասնագիտական ներուժի ապահովման մակարդակ ստուգումների իրականացման բոլոր փուլերում: Աուդիտի արդյունավետությունն ապահովելու համար այն պետք է անցկացնել համապատասխան աուդիտորական պլանով, որում նշված է լինելու կատարման ժամանակահատվածների, ստուգվող հատվածների և ստուգումների ընթացքում կիրառվող հնարավոր մեթոդների վերաբերյալ տեղեկատվությունը: Կառավարչական աուդիտի պլանավորումը նշանակում է կազմակերպությունում առկա առաջնային խնդիրների որոշում և դրանց լուծման ուղղությամբ համապատասխան մեթոդների ընտրություն:

Կառավարչական աուդիտի արդյունավետության մակարդակը մեծապես կախված է այն իրականացնող մասնագետների խորը և բարձր մասնագիտական ունակություններից ու արհեստավարժությունից:

Աուդիտորական ընկերության կողմից պարտադիր հաշվի առնվող որակի վերահսկողության պահպանման չափորոշիչներն իրենց մեջ ներառում են՝

1. մասնագիտական պահանջներ, ըստ որի աուդիտորներն իրենց կողմից մատուցվող ծառայությունների ընթացքում պետք է պահպանեն անկախության, ազնվության, օբյեկտիվության, գաղտնիության և մասնագիտական ունակությունների սկզբունքները,
2. աշխատանքային փորձ ու բանիմացություն, ըստ որի աուդիտորական ընկերության աշխատակազմը պետք է կազմված լինի փորձառու և բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող աուդիտորների խմբից,
3. առաջադրանքների հանձնարարում, ըստ որի յուրաքանչյուր աուդիտորական ծառայության մատուցում պետք է հանձնարարվի ընկերության այն աուդիտորին, որն ունի խորը մասնագիտական գիտելիքներ և հատուկ պատրաստվածություն տվյալ առաջադրանքն ամբողջական, մանրագնին և անթերի կատարելու համար,
4. խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում աուդիտորները կարող են դիմել այլ մասնագետների, փորձագետների խորհրդատվության օգնությանը:

Կազմակերպության կառավարման համակարգի կատարելագործմանը նպատակաուղղված քայլերը կարելի է առանձնացնել հետևյալ հաջորդականությամբ՝

- կազմակերպության կառավարման ընթացիկ դրության արդյունավետության գնահատում,
- կազմակերպության մոտ և ապագա ժամանակահատվածներում կառավարման գծով գործունեության ուսումնասիրում ու վերլուծություն՝ կառավարման համակարգի արդյունավետության մակարդակի որոշման նորմատիվների հիման վրա:

¹ Козлова Г.И. Оценка эффективности системы бухгалтерского учета на предприятии // Бухгалтерский учет. - 2009 г. - № 1. - с.79 - 80.

Նշված երկու հաջորդական քայլերի հիման վրա մշակվում է կառավարման կատարելագործմանն ուղղված մանրակրկիտ ռազմավարություն և հետագայում կատարվում է վերջինիս գործնական կիրառում:

Կառավարչական աուդիտը նպատակահարմար է անցկացնել հետևյալ դեպքերում՝

1. նախքան կազմակերպությունում ցանկացած լուրջ կազմակերպչական փոփոխություններ կատարելը,
2. նախքան կազմակերպություն ձեռք բերելը կամ նրա ընդհանուր ֆինանսավորում կատարելը,
3. կազմակերպության վերակազմավորման դեպքում,
4. կազմակերպության մասնաճյուղերի կամ ստորաբաժանումների կառավարման մակարդակի բարձրացման անհրաժեշտության դեպքում և այլն:

Կառավարչական աուդիտի արդյունքները պետք է օգնեն կազմակերպության գործունեությանը և նպաստեն շահութաբերության մակարդակի բարձրացմանը:

Կազմակերպության կառավարման համակարգում փոփոխությունների կատարման պահանջը կարող է կրել սկզբունքային և ոչ սկզբունքային բնույթ: Սկզբունքային փոփոխություններ խորհուրդ է տրվում այն դեպքերում, երբ կառավարման համակարգում բացակայում է իրականացվող գործառույթների նպատակաուղղվածությունը: Ոչ սկզբունքային փոփոխությունների նպատակն է առանձին գործառույթների օպտիմալացումը: Եթե կառավարման համակարգում անհրաժեշտ է կատարել սկզբունքային փոփոխություններ, օրինակ՝ ստեղծել շուկայի վերլուծության բաժին, ապա հնարավոր է անցկացնել վերակազմավորվող ստորաբաժանումների աշխատակիցների մասնագիտական ներուժի մանրակրկիտ գնահատում, որպեսզի վերակազմավորման ժամանակ հնարավորինս արդյունավետ օգտագործվի առկա մասնագիտական ներուժը և նվազեցվի կազմակերպության աշխատակիցների կողմից դիմադրությունը կատարվող փոփոխություններին:

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱՌԻԴԻՏԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ԱՆՆԱ ԱՇՈՏԻ ԲԱՅԱԴՅԱՆ, տ.գ.թ., դոցենտ
ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտ ամբիոն

Համառոտագիր

Կառավարման համակարգում իր ուրույն տեղն ունի կառավարչական աուդիտը, որը հանդես է գալիս որպես կառավարչական գործունեության անկախ հետազոտման և գնահատման ձև:

Ուստի սույն հետազոտությունում անդրադարձ ենք կատարել կառավարչական աուդիտին, որի ստեղծումը կազմակերպության ներսում ոչ միայն դրա արդյունավետ կառավարման խնդիրն է, այլ նաև շուկայական պայմաններում նրա դիրքի ամրապնդման ու մրցակցային պայմաններին դիմակայման խնդիրը, քանի որ կառավարչական աուդիտը հնարավորություն է դիմակայել այժմյան շուկայական հարաբերություններում անընդհատ փոփոխվող մրցակցային դաշտին:

Բանալի բառեր. *կառավարչական աուդիտի պահանջարկ, կառավարչական աուդիտի թերություններ, կառավարչական աուդիտի առավելություններ, արդյունավետ կառավարման ցուցանիշների համակարգ, կառավարչական աուդիտի անցկացման արդյունքներ*

УПРАВЛЕНЧЕСКИЙ АУДИТ КАК ОЦЕНКА СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ ХОЗЯЙСТВУЮЩЕГО СУБЪЕКТА

АННА АШОТОВНА БАЯДЯН, к.э.н., доцент
*кафедры управленческого учета и аудита
Армянского государственного экономического университета*

Аннотация

В системе управления особое место занимает управленческий аудит, выступающий в качестве независимого исследования и оценки управленческой деятельности.

В этой связи в настоящем исследовании авторами рассмотрены вопросы управленческого аудита, создание системы которого внутри организации не только задача эффективного управления, но и задача укрепления позиций организации и ее противостояния конкурентам в рыночных условиях, поскольку управленческий аудит позволяет противостоять постоянно меняющейся конкурентной среде в современных рыночных отношениях.

Ключевые слова: *спрос на управленческий аудит, недостатки управленческого аудита, преимущества управленческого аудита, система показателей эффективного управления, результаты выполненного управленческого аудита.*

MANAGEMENT AUDIT AS THE ASSESSMENT OF THE MANAGEMENT OF THE ENTITY

ANNA ASHOT BAYADYAN, Ph.D. in Economics, Associate Professor
*Chair of Managerial Accounting and Auditing
Armenian State University of Economics*

Abstract

In the system of management a special role is played by management audit, as an independent research and evaluation of management activities. In this regard, in this study of this discipline, the author considers the issues of management audit, since building such a systems within the organization is not only the objective of the effective management of the organization but also the objective of strengthening the organization's competitive position vis-à-vis its rivals in the market, as management audit allows the company to face the ever-changing competitive environment in the modern market relations.

Keywords: *Demand on management audit, shortcomings of the management audit, advantages of management audit, system effective management indicators, results of the carried out management audit*

ՀՀ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Անցումային երկրների տնտեսությունների վերականգնումն առկա կառուցվածքային անհամահասնությունների հաղթահարումն ու սոցիալական համակարգերի արդյունավետ զարգացումը հիմնականում պայմանավորված է վճարային հաշվեկշռի բարելավմամբ, արտադրական ներուժի ընդլայնմամբ և տնտեսական կայուն ու տևական աճի ապահովմամբ: Տնտեսության իրական հատվածը և ֆինանսական հոսքերը նկարագրող մակրոցուցանիշները փոխազդում են մեկը մյուսի հետ և, ըստ էության, ներկայացնում մեկ միասնական համակարգ: Այս համակարգում կարևոր նշանակություն ունի դրամավարկային քաղաքականության արդյունավետ մեխանիզմների ձևավորումը և իրագործումը: ՀՀ-ում հատկապես անցումային շրջանի վերջին տարիների ընթացքում դրամավարկային քաղաքականության կարգավորման միջոցով հնարավոր դարձավ նվազեցնել ինֆլյացիան, ընդլայնել վարկային ներդրումներն ու խնայողությունները, որոնք ներդրումների արդյունավետության բարձրացման և տնտեսական աճի համար դարձան հիմնական գործոններ:

Դրամավարկային քաղաքականությունը, որն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը (ԿԲ), իրենից ներկայացնում է փոխկապակցված միջոցառումների մի ամբողջություն, որը կարգավորում է գործարար ակտիվությունը՝ վարկի վիճակի և փողի շրջանառության վրա ազդելու միջոցով: Այն, ինչպես ֆինկալ քաղաքականությունը, պետության տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և ուղղված է ինֆլյացիայի դեմ միջոցառումների մշակման, ազգային արժույթի կայուն փոխարժեքի պահպանման և շուկայական տնտեսության սահուն գործունակության համար բարենպաստ ֆինանսական պայմանների ստեղծմանը: Կարելի է ասել, որ դրամավարկային քաղաքականությունը տնտեսության պետական կարգավորման կարևորագույն բաղադրատարրերից է, և դրա արդյունավետությունը որոշիչ է տնտեսության կայուն զարգացման գործում: Այսպես, 2004թ.-ից սկսած ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում պահպանում է կարևոր նշանակություն ունեցող փոխարժեքի ազատ լողացող ռեժիմը և գների ապահովմանն ուղղված ռազմավարությունը¹:

Բացի վերոգրյալից սահմանվեց նաև ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակը, այն է՝ գների կայունության ապահովումը, որը 2005 թ. տեղի ունեցած համապատասխան փոփոխություններով բարձրացվեց մինչև սահմանադրական մակարդակ²: Այնուհետ 2006թ.-ից մինչ օրս դրամավարկային քաղաքականության զարգացման առումով այլընտրանք կարող էին ծառայել կա՛մ փոխարժեքի, կա՛մ գնաճի նպատակադրման ռազմավարությունները: Մակայն հետագա գործընթացները վկայեցին այն մասին, որ անցումը փոխարժեքի նպատակադրման ռազմավարությանը Հայաստանում աննպատակահարմար էր՝ պայմանավորված հետևյալ գործոններով³:

1. Անկախ դրամավարկային քաղաքականության իրականացումը կդառնար անհնար, ինչը ՀՀ տնտեսությունը խոցելի կդարձներ արտաքին ցնցումների նկատմամբ:
2. Այս ռազմավարության կարևոր առավելությունը գնաճային սպասումների չեզոքացումն է, ինչը ՀՀ պարագայում նշանակալի խնդիր չէ:
3. Առկա չէ արդյունավետ ամրագրված արժույթ, և որպես այդպիսին չի կարող ծառայել ԱՄՆ դոլարը, քանի որ ՀՀ հիմնական տնտեսական գործընկերներն են Ռուսաստանը և

¹ «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք (կատարված փոփոխություններով), 2006թ.:

² ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.3, կետ 1:

³ «ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում».
<https://www.cba.am/Storage/AM/downloads/DVQ/npatakadrum%20hajeren.pdf>:

Եվրոպական Միությունը, իսկ եթե դուրսն սկսի արժևորվել ռուբլու կամ եվրոյի նկատմամբ, ապա Հայաստանը կհայտնվի լուրջ սնտեսական դժվարությունների մեջ՝ չկարողանալով տալ համարժեք պատասխան:

4. Քանի որ դրամավարկային քաղաքականության մշակումն ու իրականացումը որոշվում է «անհնարին երրորդությամբ», որի համաձայն երկիրը կարող է ապահովել կապիտալի ազատ հոսքերից, գների և փոխարժեքի կայունությունից երկուսի համակցությունը միայն, ապա ՀՀ պարագայում ընտրությունը հանգում է գնաճ-փոխարժեք երկրնորանքին:

Այսպիսով, այնուհանդերձ դրամավարկային քաղաքականության զարգացման առումով միակ արդյունավետ լուծումը հանգում էր գնաճի նպատակադրման ռազմավարության անցմանը: Ստեղծված պայմաններում ՀՀ Կենտրոնական Բանկը հայտարարեց 2006 թ. հունվարի 1-ից գնաճի նպատակադրման անցումային ռեժիմ ընդունելու մասին, որի վերջնարդյունքը պետք է լինի անցումը գնաճի լիարժեք նպատակադրման քաղաքականությանը: Որպես դրամավարկային քաղաքականության հիմնական գործիք՝ սահմանվեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը, իսկ գնաճի ծրագրային մակարդակ՝ $4 \pm 1,5$ % միջակայքը:

Ընդհանրապես դրամավարկային քաղաքականության ռազմավարության մշակման և իրագործման համար հաշվարկվում են՝ գների մակարդակի, արտադրության իրական ծավալի, զբաղվածության մակարդակի և փողի քանակի միջև գոյություն ունեցող կապը: Վերջինիս վերլուծության նպատակով անհրաժեշտ է սահմանել փողի քանակի և տնտեսական այլ փոփոխականների միջև գոյություն ունեցող կապերը, որոնք արտահայտվում են փողի քանակական տեսության հավասարման միջոցով, որն ունի հետևյալ տեսքը¹.

$$M * V = P * T \quad (1)$$

որտեղ՝

M - ը՝ փողի քանակն է,

V - ն՝ փողի պտույտի արագությունը,

P - ն՝ գործարքի միավորի գինը,

T - ն՝ գործարքների թիվը որոշակի հատվածներում:

Այստեղ (P * T)-ն 1 տարվա ընթացքում շրջանառվող փողի քանակն է կամ բոլոր գործարքների գումարը դրամական արտահայտությամբ: M * V փողի այն քանակն է, որն օգտագործվել է գործարքների իրականացման ժամանակ: Քանի որ գործարքների T թիվը որոշելը դժվար է, ապա օգտագործվում է փողի քանակական հավասարումն այլ տեսքով²

$$M * V = P * Y \quad (2)$$

որտեղ՝

Y - ը՝ արտադրության ընդհանուր ծավալն է,

P * Y - ն՝ թողարկված արտադրանքի արժեքն է դրամական արտահայտությամբ:

Տնտեսության վրա փողի ազդեցության վերլուծության ժամանակ հաճախ պահանջվում է փողի քանակությունն արտահայտել այդ փողով ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների քանակության միջոցով: Դա արտահայտվում է M / P արտահայտությամբ, որն ստացել է փողի իրական պաշար անվանումը և չափում է փողի գնողունակությունը: Փողի պահանջարկի ֆունկցիան ներկայացված է մի հավասարումով, որը ժամանակի տվյալ պահին բացահայտում է փողի իրական պաշարի վերաբերյալ բնակչության որոշումների վրա ազդող գործոնները: Փողի պահանջարկի պարզ ֆունկցիան հետևյալն է³.

$$(M / P) = KY \quad (3)$$

որտեղ՝

K-ն հաստատուն է:


(3) բանաձևը ցույց է տալիս, որ, փողի պաշարի պահանջարկը ուղիղ համեմատական է եկամտին:

¹ Ղուշյան Հ. Բ., Մակրոէկոնոմիկա (ուս. ձեռնարկ), Երևան, 2002թ., էջ 32:

² Նուն տեղում, էջ 34-35:

³ Նուն տեղում, էջ 36-37:

Վերլուծելով ՀՀ-ում փողի ագրեգատները 2009-2016թթ. , հարկ ենք համարում ընդգծել, որ շրջանառությունում կանխիկ դրամը գնալով ավելացել է, մասնավորապես 2011թ. 2009-ի համեմատ ավելացել է 23,22 տոկոսով, իսկ 2010թ. 2009 թվականի հետ համեմատած՝ 43,01 տոկոս, իսկ 2016 թվականի համեմատ 2009 թվականը՝ 34,49 տոկոս (տե՛ս գծապատկեր 1-ը):



Գծապատկեր 1. Փողի ագրեգատների համեմատական աճն ըստ 2009-2016թթ.¹

Միաժամանակ իրենց հերթին ցպահանջ ավանդները ՀՀ դրամով ի համեմատ արտարժույթով ավանդների ավելացել են ավելի փոքր ծավալներով: Օրինակ, ցպահանջ ավանդները ՀՀ դրամով 2011թ.-ին ի համեմատ 2009թ.-ի ավելացել են 45,82 տոկոսով, նույն ժամանակահատվածում արտարժույթով ավանդները՝ 44,93 տոկոսով, 2013թ.-ին 2009թ.-ի համեմատ ցպահանջն ավանդներն ավելացել են 83,76 տոկոսով, արտարժույթով ավանդները՝ 124,999 տոկոսով, 2016թ.-ին 2009թ.-ի նկատմամբ աճը կազմել է 132,91 տոկոս, իսկ արտարժույթով ավանդներինը՝ 248,70 տոկոս: Կարելի է ասել, որ 2009-2016թթ. արտարժույթով ավանդների աճը ցպահանջ ավանդների հետ համեմատած տեղի է ունեցել ի հաշիվ ՀՀ-ում դոլարայնացման բարձր մակարդակի: Վերջնական արդյունքում տնտեսությունը դառնում է ավելի խոցելի, իսկ դրամավարկային քաղաքականության արդյունավետությունն էլ նվազում է:

Փողի ագրեգատների (M1, M2, M2X) վերաբերյալ ավելի հստակ պատկերացում ունենալու համար, ըստ 2009-2016թթ. վիճակագրական տվյալների, ներկայացնենք հետևյալ աղյուսակը:

Աղյուսակ

Փողի ագրեգատների դինամիկան 2009-2016թթ.(մլն ՀՀ դրամ)²

Տարիները	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 ³	Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2	Արտարժույթով ավանդներ	M2X ⁴
2009	248,520	93,186	341,706	67,412	409,119	294,913	704,031
2010	267,592	106,053	373,645	68,793	442,438	370,125	812,563
2011	306,226	135,883	442,109	116,585	558,694	427,403	986,097
2012	345,025	155,387	500,413	172,406	672,819	537,429	1,210,247
2013	355,407	171,239	526,647	221,900	748,547	663,532	1,412,079
2014	347,089	194,114	541,204	289,745	830,948	753,957	1,584,906
2015	319,835	186,354	506,189	289,769	795,958	906,394	1,702,351
2016	334,228	217,037	551,265	372,969	924,234	1,028,349	1,952,583

¹ Կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm կայքի տվյալների:

² https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm

³ M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


⁴ M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:

Աղյուսակի տվյալներից պետք է նկատել, որ ներկայացված փողի ազդեցատները 2016 թվականին 2009 թվականի համեմատ աճել են համապատասխանաբար՝ 1,61, 2,25, 2,77 անգամ: Վերջինիս (M2X) աճը կարելի է բացատրել նաև ՀՀ տնտեսության դոլարայնացման բարձր մակարդակի հետ:

Դրամավարկային քաղաքականության գործիքներից են նաև փոխարժեքային կուրսերը և գների աճի կառավարումը: Այսպես, ազգային արժույթի արժևորումը կամ արժեզրկումը խոսում է տվյալ երկրի տնտեսության մեջ տեղի ունեցող երևույթների մասին: Սակայն, տնտեսության կացության ցուցիչներից մեկի համաձայն տվյալ երկրի մոնետար իշխանությունները (կենտրոնական բանկերը) իրենց միջամտությամբ կարող են խթանել ազգային արժույթի արժեզրկումը կամ արժևորումը՝ կախված նրանից, թե տվյալ պահին տնտեսական ո՞ր խնդիրն է առավել կարևոր՝ գնաճի զսպումը, թե՞ տնտեսական աճին խթանելը, դոլարայնացման սահմանափակումը, թե՞ արտահանման խրախուսումը:

Ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոններն իրենց ազդեցությունն են թողնում փոխարժեքների վրա: Այսպես, օրինակ, ո՛չ աշխարհի ամենահզոր տնտեսություն և միջազգայնորեն փոխարկելի արժույթներ ունեցող ԱՄՆ-ը, ո՛չ Եվրամիությունը, ո՛չ Չինաստանը կամ Ճապոնիան, ո՛չ նավթային հարուստ պաշարներ ունեցող Ռուսաստանը կամ Սաուդյան Արաբիան, ո՛չ էլ առավել ևս նման ավելի փոքր երկրների տնտեսությունները չեն կարող գերծ մնալ փոխարժեքային տատանումներից կամ ցնցումներից:

Մյուս կողմից, փոխարժեքի տատանումն այն երևույթներից է, որը, բացի տնտեսության վրա ազդելուց և տնտեսության կացությունը բնութագրելուց, անմիջապես և առավել զգայուն ազդեցություն է ունենում բնակչության թե՛ վարքագծի ու սպասումների, թե՛ եկամուտների ու ծախսերի, թե՛ սոցիալական կացության վրա: Այս առումով հետաքրքրական է, թե ինչպես է փոփոխվել մեր ազգային արժույթը վերջին 5 տարիներին:



Գծապատկեր 2. Մեկ ԱՄՆ դոլարի դիմաց հայկական դրամի միջին փոխարժեքի ցուցանիշն՝ ըստ 2011-2015թթ.¹

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, չհաշված 2014թ.-ի դեկտեմբերին արձանագրված կտրուկ տատանումը, հայկական դրամը բավականին սահուն և անցնցում վարքագիծ է դրսևորել:

Ինչ վերաբերում է 2015 թվականին, ապա դրամի արժեզրկումը 1 տարվա կտրվածքով 5 տոկոսից էլ ցածր է եղել:

Դրամի փոխարժեքին առնչվող մյուս գործոնը գնաճն է, որի հանդեպ բնակչությունն առավել զգայուն է և առանձնահատուկ հետաքրքրություն է ցուցաբերում: Շատերը արդեն հասկանում են, որ ազգային արժույթի արժեզրկումը բերում է գնաճի, և դա այս գործընթացի ամենա-

¹ <http://www.edrc.am/hy>


բացասական հետևանքն են համարում: Հատկապես բարձրանում են ներմուծվող ապրանքների գները, սակայն, քչերն են տեղյակ, որ գնաճն ու ազգային արժույթի արժեզրկումը նույն չափով չեն լինում: Այսպես, 2015թ. դեկտեմբերին արձանագրված 12-ամսյա գնաճի ցուցանիշը ոչ միայն դրա ապացույցն է, այլև այն բանի հանգամանքը, որ դրամի արժեզրկման պարագայում գնանկում էլ է հնարավոր:

Օրինակ, եթե 2015թ.-ի դեկտեմբերին 2014թ.-ի դեկտեմբերի համեմատ հայկական դրամը արժեզրկվել է մոտ 5 տոկոսով, ապա նույն՝ 2015թ.-ի դեկտեմբերին 2014թ.-ի դեկտեմբերի համեմատ գնաճի ցուցանիշը բացասական է եղել, այսինքն՝ արձանագրվել է գնանկում՝ 0,1 տոկոսով: Ընդ որում, պարենային ապրանքների գները 2015թ.-ի դեկտեմբերին 2014թ.-ի դեկտեմբերի համեմատ նվազել են 4,1 տոկոսով, ոչ պարենային ապրանքներինը աճել է 3,4 տոկոսով, իսկ ծառայությունների սակագները՝ 3,2 տոկոսով:

Հարց է ծագում. ինչպիսի՞ն կլինի դրամի վարքագիծը կամ գնաճը 2016 թվականին: Կանխատեսում անելն այս պահին գործնականում անհնար է, քանի որ դրանց վրա ազդում են բազմաթիվ ներքին և արտաքին գործոններ: Միջազգային բարդ իրավիճակները և դրա տնտեսական հետևանքներն ամբողջ աշխարհում բնականաբար իրենց ազդեցությունը կարող են թողնել նաև Հայաստանի տնտեսության, այդ թվում նաև ազգային արժույթի փոխարժեքի և գների մակարդակի վրա: Սակայն, 2015թ.-ին նմանատիպ լարվածության պայմաններում մեզ հաջողվեց խուսափել դրամի փոխարժեքի կամ գնաճի ցնցումներից: Հետևաբար, 2016թ.-ին նույնպես թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ ՀՀ կենտրոնական բանկը պետք է լուրջ ջանքեր ներդնեն արտերկրից եկող տնտեսական սպառնալիքների ազդեցությունը մեր երկրի տնտեսության վրա նվազագույնի հասցնելու համար:

Կատարված հետազոտությունները վկայում են, որ 2000-2003 թթ. չնայած դրամ/դոլար փոխարժեքը դրսևորել է անկանոն վարքագիծ, սակայն հիմնական միտումը եղել է դեպի արժեզրկում: Դրամի փոխարժեքը դոլարի նկատմամբ իր պիկը գրանցեց 2003թ. մարտի 17-ին՝ 591,76 դրամ, իսկ ամենացածր արժեքը՝ 2008թ. օգոստոսի 4-ին՝ 300,73 (տե՛ս գծապատկեր 3-ը):

2000թ. ՀՀ արժույթային քաղաքականության հիմնական խնդիրներն էին ազատ լողացող փոխարժեքի քաղաքականության սկզբունքների և դրամավարկային քաղաքականության ծրագրային մակարդակների ապահովումը. դրամն այդ տարի միջինը արժեզրկվեց 0,83%-ով: 2001 թ. փոխարժեքի միջին տարեկան արժեզրկումը կազմեց 2,9%:



Գծապատկեր 3. Փոխարժեքային կուրսը ՀՀ-ում՝ ըստ 1993-2016թթ.

2003թ. մարտին, ըստ ՀՀ ԿԲ-ի տվյալների, դրամ/դոլար փոխարժեքը հասավ պիկին՝ 591.76 դրամ 1 դոլարի դիմաց: 2004-2007 թթ. դրամի արժևորումը պայմանավորված էր արտաքին առևտրաշրջանառության, ներգնա և արտագնա զբոսաշրջության, մասնավոր տրանսֆերտների և ներդրումների զգալի աճով: 2006 թ. հունվարի 1-ից ՀՀ ԿԲ-ն անցավ գնաճի նպատակադրման քաղաքականության, իսկ 2007թ. օրենսդրորեն ամրագրվեց, որ ԿԲ-ը ոչ թե սահմանում, այլ հրապարակում է արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Տնտեսական

բարենպաստ պայմաններում 2007թ. դեկտեմբերին՝ 2003թ. դեկտեմբերի համեմատ, դրամը դոլարի նկատմամբ արժևորվեց 46,2%-ով:

2008թ.-ի վերջերին տեղի ունեցած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը զգալի ճնշումներ առաջացրեց Հայաստանի արտարժույթային շուկայում որի արդյունքում 2009թ.-ի մարտի 3-ին ՀՀ ԿԲ-ը ստիպված վերադարձավ լողացող փոխարժեքի քաղաքականությանը, և դրամը արժեզրկվեց 21,7%-ով:

2011 թվականին 2008 թվականի համեմատ դրամն արժեզրկվել է և այդ նույն տարվա դեկտեմբերին միջին փոխարժեքը կազմել է 383,22: 2012-2013 թթ.դրամը հիմնականում արժեզրկման միտումներ է ցուցաբերել՝ ամսական 0,1-2,6%-ի սահմաններում: Իրավիճակը փոխվեց 2014թ. դեկտեմբերին և արդյունքում միջազգային տնտեսական փոփոխությունները՝ նավթի գների անկումը, դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու արժեզրկման, Ռուսաստանի դեմ արևմտյան պատժամիջոցներով պայմանավորված դրամը դոլարի նկատմամբ նախորդ ամսվա համեմատությամբ արժեզրկվեց 10,3%-ով՝ հասնելով 490 դրամի:

2015թ. հիմնականում շարունակվեց դրամի արժեզրկումը, և մարտին դրամ/դոլար փոխարժեքը կազմեց միջինը 478,39՝ նախորդ տարվա նույն ամսվա 414,31-ի փոխարեն: Մյուս ամիսներին հիմնականում դիտվում էր կայուն իրավիճակ: 2016թ. հունվար-փետրվար ամիսները միջազգային տնտեսության համար ոչ բարենպաստ էին: Փետրվարին դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվեց ևս 3%-ով, և միջին փոխարժեքը կազմեց 493,6 դրամ՝ նախորդ ամսվա 486 դրամի փոխարեն:

Հետևաբար, ամփոփելով վերոշարադրյալը կարելի է եզրակացնել, որ Հայաստանում դրամավարկային քաղաքականության հետագա զարգացումը շարունակական գործընթաց պետք է լինի: Այն հատկապես պետք է ուղղված լինի գնաճի նպատակադրման ռազմավարությանն առնչվող հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև գնաճի վրա ոչ մոնետար գործոնների ազդեցության մակարդակի կրճատմանը: Վերջինիս իրականացումը շատ դեպքերում դուրս է ՀՀ ԿԲ-ի լիազորությունների շրջանակից, ինչը նշանակում է, որ գնաճի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է նաև պետական այլ մարմինների գործունե մասնակցությունն այդ գործընթացին:

ՀՀ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՇԱԿ ԱՇՈՏԻ ԲԱՅԱԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Համառոտագիր

Դրամավարկային քաղաքականության հետագա զարգացումը շարունակական գործընթաց է: Այն հատկապես պետք է ուղղված լինի գնաճի նպատակադրման ռազմավարությանն առնչվող հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև գնաճի վրա ոչ մոնետար գործոնների ազդեցության մակարդակի կրճատմանը: Վերջինիս իրականացումը շատ դեպքերում դուրս է ԿԲ լիազորությունների շրջանակից, ինչը նշանակում է, որ գնաճի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է նաև պետական այլ մարմինների գործուն մասնակցությունն այդ գործընթացին:

Բանալի բառեր. սոցիալական համակարգ, վճարային հաշվեկշիռ, փոխարժեք, դրամավարկային քաղաքականություն, ֆինանսական հոսքեր, իրական հատված, տնտեսական աճ:

ДЕНЕЖНО-КРЕДИТНАЯ ПОЛИТИКА РА И АНАЛИЗ ПОВЕДЕНИЯ ОБМЕННОГО КУРСА

АРШАК АШОТОВИЧ БАЯДЯН

соискатель Института экономики им. М. Котаяна НАН РА

Аннотация

Дальнейшее развитие денежно-кредитной политики является непрерывным процессом, который должен быть направлен на решение проблем, особенно касающихся стратегии таргетирования инфляции, а также снижения степени влияния немонетарных факторов на инфляцию. Реализация последнего во многих случаях выходит за рамки полномочий Центрального банка, что означает, для эффективного управления инфляцией необходимо также активное участие других государственных органов в этом процессе.

Ключевые слова: социальная система, платежный баланс, обменный курс, денежно-кредитная политика, финансовые потоки, реальный сектор, экономический рост.

THE ANALYSIS OF THE MONETARY POLICY AND EXCHANGE BEHAVIOR IN THE REPUBLIC OF ARMENIA

ARSHAK ASHOT BAYADYAN

Ph.D. student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The development of the monetary policy is an ongoing process. In particular, this development needs to be aimed at addressing the issues related with the inflation targeting strategy, as well as reducing the impact of non-monetary factors on inflation. The implementation of the latter in many cases goes beyond the powers of the Central Bank, which means that effective management of inflation also requires active participation of other governmental bodies in this process.

Keywords: Social system, balance of payment, exchange rate, monetary policy, financial flows, real economy, economic growth

ՎԱՅԵ ԳԱԳԻԿԻ ԲՈՅԱԽՉՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎԱՄԱՆ ՅԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ժամանակակից ազգային տնտեսության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ՀՀ-ն աստիճանաբար հաղթահարում է Երրորդ հանրապետության դուրս է եկել սոցիալ-տնտեսական զարգացման ծանր փուլի՝ 2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները, սակայն սկսած 2009թ. վերջերից նկատվում է տնտեսական աճի տեմպերի, գործարար ակտիվության բարձրացում և ձեռնարկատիրական միջավայրի վերականգնում և առողջացում:

Թվում է, թե հանրապետության բանկային ոլորտի (այն, մեծ հաշվով, չտուժեց համաշխարհային ճգնաժամից և ի տարբերություն բազմաթիվ երկրների, որտեղ մեծ թվով բանկեր ու այլ ֆինանսավարկային կազմակերպություններ սնանկացան և լուծարվեցին, մեզանում այդպիսի երևույթներ չնկատվեցին) կայունության ապահովման հիմնախնդիրը լուծված է և դրան արդեն պետք չէ շատ ուշադրություն հատկացնել: Սակայն համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող իրադարձությունները վկայում են, որ տնտեսական աճի տեմպերն ու սոցիալական ձեռքբերումները, անկայուն են և ցածր: Կատարված վերլուծությունների արդյունքում 2017թ.-ին Եվրոգոտում տնտեսական աճի ցուցանիշները շարունակելու են մնալ ցածր: Գոհացուցիչ չեն նաև ՀՀ ցուցանիշները և բավական է նշել, որ ՀՀ-ում 2016թ.-ին տնտեսական հավելվածի տեմպը կազմել է ընդամենը 0.2%, ինչը 2009թ. -14.1% անկումից հետո ամենացածր ցուցանիշն է:

Այս իրավիճակում ամենևին էլ պատահական չէ, որ աշխարհի առաջատար երկրների ղեկավարները հայտարարել են իրենց մտադրությունները փոխելու գործող աշխարհակարգը, կառուցելու նոր ֆինանսական կառույցներ, և կիրառել կառավարման այնպիսի մեթոդներ, որոնք կնվազեցնեն նոր ճգնաժամային երևույթների կամ ճգնաժամերի առաջացման հնարավորություններ ու հավանականությունները: Դժբախտաբար, մինչև օրս պատկերացումներն այն մասին թե ինչպիսին պետք է լինի ստեղծվող մոդելը և նոր աշխարհակարգը դեռևս չի ձևավորվել (և այն հազիվ թե առաջիկա տարիներին ձևավորվի համաշխարհային քաղաքականության և տնտեսության մեջ գոյություն ունեցող տարաձայնությունների և հակասությունների, ահազանցող համաշխարհային բնույթի հիմնախնդիրների կուտակման ու դրանք չլուծելու պատճառով), չկա նաև ընդհանուր ըմբռնում նաև այն բանի, թե ինչպիսի փոփոխություններ է անհրաժեշտ իրականացնել նաև բանկային գործունեությանը բնորոշ քաղաքականությունում, որպես ցանկացած երկրի տնտեսական քաղաքականության կարևոր և անբաժանելի մասի: Վերջիններիս համատեղ բարձրացված հիմնահարցերն ամբողջական տեսքով բնորոշ են անցումային տնտեսություններին, այդ թվում նաև ՀՀ-ի, զարգացմանը նպաստող ծրագրերին:

Արևմտյան երկրների բանկային համակարգի ներկայացուցիչները համառորեն պնդում են, որ «ֆինանսական կայունության հարցերը հայտնվել են առաջին պլանում, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային քաղաքական բանավեճերում»: «Համաշխարհային ֆինանսական համակարգը, առանց միջազգային հաշվարկների, ապրում է այնպիսի ժամանակահատված, երբ պետք

¹ Материалы международного банковского конгресса, Деньги и кредит, N8, 2012, էջ 11:

է ընդունվեն այնպիսի որոշումներ, որոնք ուղղված կլինեն ֆինանսական բարեփոխումների ոչ ճիշտ ձևավորմանը»¹:

Կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ համաշխարհային տնտեսությունում գոյություն ունեցող լարվածությունը և գործարար ակտիվության անկման վտանգը դեռևս պահպանվում է: ԱՄՆ-ի և ՀԲ-ի կանխատեսումների համաձայն համաշխարհային տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպերը 2017 և 2018թթ.-ին, 2008թ.-ի համեմատ դեռևս շարունակելու են մնալ ցածր²:

Հասկանալի է, որ ՀՀ տնտեսությունը, որպես փոքր և բաց տնտեսություն սերտորեն, տեսանելի և անտեսանելի, ուղղակի և անուղղակի կապերով կապված է համաշխարհային տնտեսության վիճակի հետ, և նշել, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները հաղթահարվել են, առնվազն վաղաժամկետ է, առավել ևս, որ 2016թ. ՀՀ ՀՆԱ մեծությունը (դոլարային արտահայտությամբ ավելի փոքր է նախաճգնաժամային 2008թ. ՀՆԱ-ի մեծությունից):

Տնտեսական ցածր ակտիվության համայնապատկերին նվազում են առանձնապես մետաղների և դրանց հանքաքարի համաշխարհային գները: Օրինակ, 2017թ. մայիսի սկզբին 1տ պղնձի գները կազմել են 5495 ԱՄՆ դոլար³, որը զգալիորեն ցածր է (շուրջ 40%-ով) 2008թ. գներից: Հաշվի առնելով ՀՀ ազգային տնտեսության թույլ դիվերսիֆիկացման աստիճանը և դրանում մի շարք սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների առկայությունը, բանկային ոլորտի արդյունավետության բարձրացմանն ուղղված կատարելագործման քաղաքականության մասին հարցը ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն:

Հայտնի է, որ ՀՀ բանկային ոլորտի ակտիվները 2016թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 19,8%-ով (2015թ.-ին 3456,695 մլն դրամից 2016թ.-ին հասել են 4,140,548 մլն դրամի, իսկ պարտավորությունները ավելացել են 19.0%-ով (2015թ. 2917.677 մլն դրամից 2016թ.-ին հասել են 3,471,135 մլն դրամի)⁴: Այստեղից հարց է ծագում, թե ինչպիսին կլինի մոտակա տարիներին ՀՀ տնտեսությունը և նրա դրամա-վարկային քաղաքականությունը շարունակում է մնալ բարդ: Արտարժույթի փոխարժեքների տատանողականությունը, արտարժույթային ռիսկերը, հանքահումքային ապրանքների գների արագ փոփոխությունները համաշխարհային շուկայում, կարող են նոր դժվարությունների և հիմնախնդիրների առջև կանգնեցնել ազգային տնտեսության զարգացումը: Տնտեսությունում պահպանվող հակասությունները, ներդրումների ներհոսքի ցածր ցուցանիշը, դրանց արտահոսքը և լարվածության մյուս օջախները մնում են, իսկ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման կայունության ապահովման հիմնախնդիրները նախկինի նման մնում են, չլուծված որոնք սակայն պահանջում են զգալի ուշադրություն՝ ինչպես ՀՀ տնտեսության իրական հատվածի, այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից:

Հայաստանի առևտրային բանկերի բաժնետիրական կապիտալի կառուցվածքները իրարից շատ տարբեր են: Կան ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բաժնետերեր և միևնույն ժամանակ, գրեթե բոլոր հայկական բանկերում կան ոչ ռեզիդենտ բաժնետերեր: Ոչ ռեզիդենտ մասնակիցները՝ իրավաբանական և ֆիզիկական անձինք, հիմնականում Ռուսաստանից են, Շվեյցարիայից, Իրանից, Լիբանանից, Լիխտենշտեյնից, Կիպրոսից, Ֆրանսիայից, Միացյալ Թագավորությունից և ԱՄՆ-ից: Կան մի քանի միջազգային կազմակերպություններ, որոնք ունեն բաժնեմասեր մի քանի հայկական բանկերում (օրինակ՝ Միջազգային ֆինանսական կորպորացիա, Գերմանական ներդրումների և զարգացման ընկերություն (DEG), Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ և ՕՊԵԿ Միջազգային Զարգացման Հիմնադրամ) (տե՛ս աղյուսակը):

¹ Նույն տեղը, էջ 4:

² World Development indicators, WB, 2017, p. 5-6.

³ www.armtimes.com. Միջազգային գներ և փոխարժեքներ:

⁴ Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրությունը, 2016թ. 4-րդ եռամսյակի արդյունքներ, Եր., KPMG, փետրվար, 2017, էջ 4:

**ՀՀ բանկային ոլորտի և առանձին բանկերի բաժնետիրական կառուցվածքը (բաժնետերերը > 5%),
մասնաճյուղերը և աշխատակիցների թվաքանակը ըստ 31.12.2016թ.**

Հ/հ	Բանկերը	Կանոնադրական կապիտալը, մլն դրամ	Բաժնետերերը	Բաժնետերերի կանոնադրական կապիտալում ունեցած բաժինը, %	Մասնաճյուղեր ընդամենը, այդ թվում Երևանում	Անձնակազմի թվաքանակը, աշխատակից
1	2	3	4	5	6	7
1	ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ	30,000	CREDIT AGRICOLE S.A.	15.6	57 (16)	1316
			Սակամ Ինտերնասիոնալ ՊԲԸ	12.4		
			«Գյուղացիական փոխօգնության Մարզային Միավորում» ՀԿ-ներ	71		
2	Ամերիաբանկ	32,087	«Ամերիա գրուպ (Սիոուայ) Լիմիթեդ»	65.8	12 (8)	621
			EBRD	20.7		
			ԻԷՍՊԻԷՍ ՀՈԼԴԻՆԳ ԼԻՄԻԹԵԴ	13.5		
3	Անելիք Բանկ	33,972	ՖԻՍԹՈՔՈ Էլ Թի Դի	59.68	13 (7)	374
			Credit Bank S.A.L.	40.32		
4	Արարատբանկ	8,804	«Ֆլեշ» ՍՊԸ	64.2	65 (32)	913
			Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (ՎՋԵԲ)	25		
			Ս. Ա. ՄԻԿԱՎ-ՄԻՖ	10		
5	Արդշինբանկ	17,925	«Բիզնես ներդրումների կենտրոն» ՍՊԸ	70.1	55 (22)	1080
			«Ռեզին» ֆինանսական արդյունաբերական կորպորացիա ՓԲԸ	28.1		
6	ԱրմՍվիսԲանկ	8,753	«Էլչ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ	80	-	110
			«Բելեգինգամաչեփիջ Ջոնզո» ՍՊԸ	20		
7	Արցախբանկ	23,261	«Հայաստանի Բիզնեսի Հիմնադրամ» ՓԲԸ	51.72	22 (7)	508
			«Արցախի ներդրումային հիմնադրամ»	32.24		
			Հրաչ Կապրիելյան	11.02		
8	Բիբլոս Բանկ	23,826	Byblos Bank S.A.L.	100	2 (2)	75
9	Էլչ-Էս-Բի-Մի Բանկ Հայաստան	18,434	Էլչ-Էս-Բի-Մի Յուրի Բ. Վ.	70	9 (9)	415
			Ուինգս Իսթերլիշմենթ	30		
10	Ինելոբանկ	14,546	Ավետիս Բալոյան	27,4	23 (13)	800
			Կարեն Սաֆարյան	23.7		
			EBRD	22.7		
			DEG	9.6		
			IFC	7.1		
11	Կոնվերսբանկ	16,417	«Ըղվանսոլ Գլոբալ Ինվեսթմենթս» ՍՊԸ	80.94	33 (14)	780
			ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ	14.06		

Հ/հ	Բանկերը	Կանոնադրական կապիտալը, մլն դրամ	Բաժնետերերը	Բաժնետերերի կանոնադրական կապիտալում ունեցած բաժինը, %	Մասնաճյուղեր ընդամենը, այդ թվում Երևանում	Անձնակազմի թվաքանակը, աշխատակից
			Հայաստանյազ Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	5		
12	Հայքիզնեսթանկ	31,375	Վիտալի Սարգսի Գրիգորյանց	100	50 (21)	848
13	Հայէկոնոմբանկ	4,631	Մարիբեկ Սուքիասյան	31.32	46 (24)	942
			Խաչատուր Սուքիասյան	13.77		
			Ռոբերտ Սուքիասյան	11.59		
			Էդուարտ Սուքիասյան	10.64		
			Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (ՎԶԵԲ)	7.56		
14	Մեյլաթ Բանկ	32,100	Իրանի Իսլամական Հանրապետության բանկ «Մեյլաթ»	100	-	50
15	Յունիբանկ	19,093	Ռիպատոնատ Հոլդինգ Լիմիթեդ	88.1	45 (23)	767
16	Պրոմեթեյ Բանկ	17,950	«Պրոմեթեյ-Սիթի» ՍՊԸ	59.9	11 (8)	238
			«ԶՆԳՍ Պրոմեթեյ» ԲԲԸ	37		
17	ՎՏԲ Հայաստան Բանկ	37,776	«ՎՏԲ» ԲԲԸ	100	67 (24)	1169

Աղբյուրը. կազմվել է հաշվարկվել է՝ Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրությունը 2016թ. 4-րդ եռամսյակի արդյունքներ, Եր., KPMG, փետրվար, 2017, էջ 6-24:

Դրա հետ մեկտեղ չպետք է նաև մոռանալ, որ բանկային համակարգի կայունության ապահովումը ոչ թե ինչ-որ պատմական կարճատև ժամանակահատվածի անցողիկ հիմնախնդիր է, այլ տեղական նշանակության առանձնակի փուլ կամ տնտեսական պարբերաշրջանի իրավիճակ, որոնց համահունչ պետք է լուծել տնտեսական գործընթացների կտրուկ վատթարացման ժամանակահատվածում: Զարգացման կայունության ապահովումը ոչ միայն հիմնախնդիր է, որը կանգնած է արդի համաշխարհային և ազգային տնտեսությունների առջև, այլ այն միշտ էլ եղել է և կմնա հասարակական հարաբերությունների զարգացման կենտրոնական հիմնախնդիրներից մեկը: Դրա լուծումը կարևոր է ինչպես տնտեսական վերելքի, այնպես էլ տնտեսական անկման և սոցիալ-տնտեսական և քաղաքական ռիսկերի ավելացման ժամանակահատվածում: Ուսումնասիրությունները վկայում են, որ բանկային ոլորտի կայունությունը.

- արտացոլում է իրականացվող գործընթացի բնութագիրը, որը դիտարկվում է ինչպես նրա իրավիճակային դիրքերից, այնպես էլ նրա զարգացման տեսանկյունից,
- շարժման, գործունեության, գործընթացի, վիճակի որակն է: Ըստ որում կայունությունն առարկայի (օրինակ, բանկի) բուն որակը չէ, այլ այն իրողության արտահայտությունը, թե այն ինչպես է գործում,
- առաջընթացի շարժման համալիր բնութագիրն է, որն արտահայտում է նրա ներսում իր տարրերի և արտաքին միջավայրի փոխգործողությունները, արագությունը, կառուցվածքն ու փոփոխությունները ժամանակի ընթացքում,
- ավելի հաճախ ուղղված է գործունեության ընդլայնված վերարտադրությանը:

Բանկային ոլորտի կայունության ապահովման հիմնախնդրի և դրա լուծումների որոնման արդիականությունը հիմնավորվում է ոչ միայն դրա գործնական, այլև գիտատեսական տեսանկյունից: Հայտնի է, որ հատկապես վերջին տարիներին (2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ընկած ժամանակահատվածում) ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հեղինակների կողմից տվյալ թեմային համահունչ կան բազմաթիվ գրեքեր,

հողվածներ, թեզիսներ: Միաժամանակ իրականացվել են բազմաթիվ գիտական հետազոտություններ և ուսումնասիրություններ, հրավիրվել և անցկացվել են ամենաբարձր մակարդակի միջազգային գիտաժողովներ, ֆորումներ և այլ միջոցառումներ: Չնայած այս ամենին, դեռևս լուծված չի կարելի համարել ոլորտում տեղ գտած ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակության հիմնախնդիրների մեծ մասը: Փորձելով հստակություն և որոշակիություն մտցնել կայունություն հասկացության և բովանդակության վերաբերյալ՝ դրանց հեղինակներն ավելի են խճճել հիմնախնդիրը, նույնացնելով կայունությունը և արդյունավետությունը, կայունությունն ու հուսալիությունը և այլն: Նախկինի նման դեռ պարզեցված չեն կայունության հատկանիշները, քանի որ ժամանակի և պրակտիկ գործընթացների քննությունը չբռնեցին դրամավարկային ինստիտուտների ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակում կայունության գնահատման համար առաջարկված կասկածելի չափանիշները և ցուցանիշները: Կայունության գնահատման հեղինակները փորձելով ստեղծել ցուցանիշների համակարգ, գործնականում միայն հայտարարեցին դրա անհրաժեշտությունը, իսկ իրականում չկարողացան ստեղծել ամբողջական կառուցվածք, որը կհավակներ կայունության համակարգվածության արտահայտմանը, քանի որ վերջինս, կտրված է արտաքին միջավայրից, տնտեսության իրական հատվածից:

Կայունության վերաբերյալ հետազոտությունները պետք է հասցեագրվեն ոչ միայն բանկային համակարգին, որպես ամբողջություն, այլ նաև առանձին դրամավարկային ինստիտուտներին: Դրա հետ մեկտեղ հուսով ենք, որ ինչպես կայունության ցուցանիշները, այնպես էլ բանկային գործունեությունը կարգավորող միջոցառումները, անկասկած, պետք է ունենան բանկային «երանգ», քանի որ ուսումնասիրության առարկան ուղղված և հասցեագրված է ոչ թե վերացական տնտեսավարող սուբյեկտի, այլ բանկի, որն ունի իր գործունեության առանձնահատուկ և բնորոշ գծերը՝ դրամաշրջանառության ոլորտում և տնտեսության իրական հատվածում, որոնք ազդում են տնտեսական կարգավորման միջոցառումների վրա:

Բացի այդ, համաշխարհային տնտեսության վերջին տարիներին գոյություն ունեցող իրավիճակը և զարգացումը ու հեռացող համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի և նրա հետևանքների հաղթահարման դասերը, ակնհայտ ցույց տվեցին պետության ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը բանկային ոլորտի կառավարմանը: Ներկայումս գործող շուկայական գործիքակազմի կարևորության հետ մեկտեղ դրամավարկային ոլորտի պետական կարգավորման և կառավարման դերը, ինչպես նաև պետական քաղաքականության նշանակությունը դրա կառավարման գործում էականորեն աճում է:

Պետական քաղաքականության արդիականությունը բանկային ոլորտում դրսևորվում է ոչ միայն գործնական, այլև, առաջին հերթին, տեսական տեսանկյուններից: Բանկային քաղաքականության վերլուծությունը դեռ չի դարձել ինքնուրույն հետազոտությունների առանձին առարկա, քանի որ այն հաճախ նույնացնում են դրամավարկային քաղաքականության, բանկային ոլորտի զարգացման ռազմավարության հետ: Իհարկե, բոլոր այդ գործողությունները և երևույթները սերտորեն կապված են միմյանց հետ, սակայն դրանցից յուրաքանչյուրը, դրա հետ մեկտեղ, ունի իր կառավարման առարկան: Որքան էլ, որ դա զարմանալի թվա, բանկային քաղաքականության բովանդակության, նպատակների և կառուցվածքի բացահայտումը, նույնիսկ մեր օրերում շարունակում է մնալ քննարկման առարկան: Իհարկե, նման մոտեցումը, որոշ իմաստով վնաս է հասցնում ոչ միայն ընթացիկ խնդիրների լուծմանը, այլ նաև զարգացման ռազմավարական նոր պարամետրերի ձեռքբերմանը:

Մենք կարծում ենք, որ բանկային քաղաքականությունը մեծ չափով պետք է ուսումնասիրի այդ ոլորտի ինստիտուցիոնալ լինելը, բացահայտելով բանկերի գործունեության նպատակային կողմնորոշիչները (կախված սեփականության բնույթից), որոշել բանկային ոլորտի արդիականացման ուղղությունները. ունիվերսալությունը և մասնագիտացումը, դրամավարկային ինստիտուտների տարածքային տեղաբաշխումը, նրանց կապիտալների հավաքական տեսքի բերումը (կոնսոլիդացիան), ինչպես նաև բանկային ենթակառուցվածքները: Ավելին, ազգային բանկային քաղաքականությունում տնտեսության գլոբալացման պայմաններում պետք է մեծանա պետական կառավարման դերը՝ ուղղված բանկային քաղաքականությանը, ավելի մեծ չափերով կապելով արդյունաբերական քաղաքականության, իրական հատվածի և նրա առանձին ոլորտ-

ների, ինչպես նաև տարածքային զարգացման հետ: Ակնհայտ է, որ ավելի մեծ չափով պետք է դրսևորվի բանկային ոլորտի դերը ներդրումների ավելացման, հիմնական միջոցների և կապիտալի արդիականացման, ՓՄՁ-ի զարգացման ու բազմաթիվ այլ սոցիալ-տնտեսական բնույթի հիմնախնդիրների լուծման գործում:

Եթե դրամա-վարկային քաղաքականությունը բանկային ոլորտի ուշադրությունը բևեռում է դրամավարկային ոլորտում (այդ թվում դրամական զանգվածի, գնաճի, դրամական միավորի գնողունակության, արտարժույթային կուրսի) գործառության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, ապա բանկային քաղաքականությունը պետք է որոշի ոչ միայն մոնետար ոլորտի խնդիրների լուծումը, այլ նաև բանկերի գործունեությունն ուղղելու տնտեսական աճի, ինչպես նաև իր սեփական կապիտալի ավելացմանն ու տնտեսության կայուն զարգացմանը:

Պետական բանկային քաղաքականությունը ելնելով իր բովանդակությունից շոշափում է ոչ միայն առևտրային բանկերի, այլև դրամի թողարկման կենտրոնի, ոչ միայն ներքին, այլև արտաքին բանկային քաղաքականությունը: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի բանկային վարկավորման դերին, այդ թվում պետական նպատակային ծրագրերի իրականացմանը բանկերի մասնակցության արդյունավետությանը և վարկերի օգտագործումը հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման շահերի համար:

Վերոնշյալների առումով կարևոր է դառնում բանկային ոլորտի կայունության ապահովման համար այնպիսի հանձնարարականների մշակումը և առաջարկությունների ներկայացումը, ինչպիսիք են՝ բանկային համակարգի գործունեության ավելի հասցեական զարգացումը, տնտեսությունում դրա դերի և գործունեության արդյունավետության բարձրացումը, հատուկ պետական փաստաթղթի (օրենքի տեսքով՝ «ՀՀ տնտեսությունում պետական բանկային քաղաքականությունը») մշակումն ու ընդունումը, որը հնարավորություն կտա ավելի լիարժեք ներկայացնել հետձգնաժամային հատվածում բանկային ոլորտի զարգացման նախապատվությունները և վեկտորը:

Բանկային ոլորտի կայունության արդիականացման վերաբերյալ առաջարկությունները մեր կարծիքով պետք է հիմնված լինեն ՀՀ բանկային ոլորտի պրակտիկայի նյութերի ամփոփման և արտասահմանյան առաջավոր փորձի ուսումնասիրության վրա:

Նկատենք նաև, որ ցանկացած երկրում սոցիալ-տնտեսական զարգացման կայունության ապահովումը հասարակության և պետության զարգացման կենտրոնական հիմնախնդիրն է, որի ճիշտ լուծումից է կախված տնտեսական աճի տեմպը, հանրության մեջ սոցիալական համագործակցության արդյունավետությունը, բնակչության կենսամակարդակը և կյանքի որակը, առաջընթացի հաստատունությունը: Ըստ որում դրա լուծումը կարևոր է վերարտադրության առանց բացառության բոլոր փուլերում անխտիր, քանի որ առանց «դրամական ապահովման» չի կարող իրականացվել ինչպես ամբողջ վերարտադրական գործընթացը, այնպես էլ նրա յուրաքանչյուր փուլի զարգացումը: Այսինքն, տնտեսության և նրա անբաժանելի մասն համարվող բանկային ոլորտի կայունությունը անհրաժեշտ և բավարար պայման է ինչպես տնտեսական վերելքի, այնպես էլ տնտեսական անկման և, հատկապես, լճացման փուլում, և ընդհանրապես այն ժամանակահատվածներում, երբ երկրում մեծանում են տնտեսական, սոցիալական և քաղաքական ռիսկերը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՎԱՅԵ ԳԱԳԻԿԻ ԲՈՅԱԽՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Յամառոտագիր

Ցանկացած երկրի տնտեսության և նրա բաղկացուցիչների կայունությունը այն հիմքն է, որի վրա կայանում և իրականություն է դառնում հասարակության առաջընթացը և բնակչության բարեկեցության բարձրացումը: Տնտեսության իրական հատվածի աճի հնարավորությունները մեծապես պայմանավորված են դրամավարկային քաղաքականությամբ, որի «պատասխանատուն» բանկային ոլորտն է և կենտրոնական բանկը:

Հեղինակն ուսումնասիրել է բանկային ոլորտի կայունության ապահովման հիմնախնդիրները, և ներկայացրել այն լուծումները, որոնք կնպաստեն ոլորտի կայունության ապահովմանը ՀՀ-ում՝ հետճգնաժամային դասերը հաշվի առնելով:

Բանալի բառեր. բանկային ոլորտ, կայունություն, դրամավարկային քաղաքականություն, ֆինանսատնտեսական ճգնաժամ, պետական քաղաքականություն, բանկային վարկավորում

ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ СТАБИЛЬНОСТИ БАНКОВСКОГО СЕКТОРА

ВАГЕ ГАГИКОВИЧ БОЯХЧЯН

соискатель Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Стабильность экономики любой страны и её составляющих является основой, на которой строится и становится реальностью общественный прогресс и повышение благосостояния населения. Возможности роста реального сектора экономики в значительной степени обусловлены денежно-кредитной политикой, ответственными за проведение которой являются банковская сфера и Центральный банк.

Автором статьи исследованы проблемы обеспечения стабильности банковского сектора и представлены решения, содействующие обеспечению ее устойчивости в РА с учетом извлеченных уроков в посткризисный период.

Ключевые слова: банковский сектор, стабильность, денежно-кредитная политика, финансово-экономический кризис, государственная политика, банковское кредитование.

THE ISSUES OF SECURING THE STABILITY OF THE BANKING SECTOR

VAHE GAGIK BOYAKHCHYAN

Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The stability of economy of any country and its structures and/or subjects is the basis on which social progress and the welfare of the population are built and become a reality. The perspectives for the economic growth in the real sector of the economy are largely due to the monetary policy and the banking sector and the Central Bank are in charge of the latter. The author studies the issues of ensuring the stability of the banking sector and illustrates solutions that contribute to ensuring its sustainability in the Republic of Armenia, taking into account the lessons learned in the post-crisis period.

Keywords: Banking sector, stability, monetary policy, financial and economic crisis, state policy, bank lending

ԳՆԱՃԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Տնտեսական աճի և բյուջեի կատարման համար չափազանց կարևոր է համակարգային մոտեցումը, տնտեսական ցուցանիշների փոխկապվածությունների հստակ գնահատումը: Մակայն առկա են բազմաթիվ օրինակներ, երբ այդ փոխկապվածությունները հաշվի չեն առնվում: Գների կայունության կարևորագույն սկզբունքի կատարումը հաճախ վեր է ածվում չափազանց կոշտ, ոչ ճկուն դրամավարկային քաղաքականության: Մինչև հիմա բավարար ուշադրություն չի դարձվում հակադարձ կապի վրա՝ թե ինչպե՞ս է գների կայունությունը կոնկրետ անդրադառնում տնտեսության աճի, արտահանման մեծացման և բյուջեի կատարման վրա:

1967 թվականին Գերմանիայում ընդունվեց օրենք տնտեսության կայունության և աճին նպաստելու մասին, որտեղ սուբյեկտիվ մոտեցումից խուսափելու համար ձևակերպված են տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքները, այսպես կոչված, «մոզական քառակուսին»¹: Դրանք այն սկզբունքներն են, որոնք պահանջվում է առաջին հերթին հաշվի առնել բյուջեի, պետական ծրագրերի նախապատրաստման ժամանակ: Այդ սկզբունքները հետևյալն են՝ կայուն տնտեսական աճ, հավասարակշռված արտաքին առևտուր, զբաղվածության բարձր մակարդակ, գների կայունություն: Այդ սկզբունքները դիտվում են որպես միասնական համակարգ: Մի սկզբունքի առանձնացման փորձը, առանց հաշվի առնելու նրա փոխկապվածությունը այլ առանցքային սկզբունքների հետ, չի տալիս դրական արդյունք, հատկապես երկարաժամկետ ժամանակաշրջանում:

Հետազոտենք, օրինակ, գների կայունության սկզբունքը: Իհարկե, դա չափազանց կարևոր սկզբունք է, դա անվիճելի է: Մակայն դա ինչպես ապահովել տնտեսական համակարգից դուրս, թե օպտիմալ ձևով համաձայնեցնելով առանցքային տնտեսական ցուցանիշների: Չափազանց կարևոր է գնահատել գնաճի փոխազդեցությունը տնտեսության այլ առանցքային ցուցանիշների հետ, ասենք, եթե առևտրային հաշվեկշիռը էապես խախտված է, ներմուծումը զգալի գերազանցում է արտահանումը դրամավարկային քաղաքականության գործիքները լիարժեք չեն կարող աշխատել: Երբ ներմուծումը էապես գերազանցում է արտահանումը կենտրոնական բանկը չի կարող արդյունավետ կարգավորել գնաճը, քանզի այն փաստացի մեծագույն չափով կախված է ներմուծվող ապրանքների գնագոյացումից: Մինչև լուծված չէ վճարային և առևտրային հաշվեկշռի խախտման լրջագույն հիմնախնդիրը, գների աճը հիմնականում կախված կլինի ներմուծվող գների տատանումներից, որոնց ազդեցությունը ուժեղանում է կախված տնտեսության մենաշնորհայնության մակարդակից:

Պետք չէ ամեն գնով ձգտել պահել գնաճը նվազագույն սահմաններում, հաշվի չառնելով նրա փոխկապվածությունը փոխարժեքի, վերաֆինանսավորման տոկոսադրույքի, փողայնացման մակարդակի, առևտրային և վճարային հաշվեկշռի, ՀՆԱ-ի հետ: Արդյունքում փաստացի զոհաբերելով այդ փոխկապվածությունները և ձեռք բերելով բարձր հավանականություն գների սեզոնային և կառուցվածքային աճի: Հենց այստեղ էլ ստեղծվում է ակնհայտ ոչ բարենպաստ պատճառահետևանքային շղթան: Որպեսզի հակազդվի ներմուծվող ապրանքների գների աճին, առաջին հայացքից կարծես թե աննպատակահարմար է ազգային արժույթի փոխարժեքի նվազումը, նույնիսկ սահուն ձևով: Մակայն դա իհարկե չի նպաստում արտահանմանը, արտադրության աճին ուղղված ներքին պահանջարկի բավարարմանը և առևտրային հաշվեկշռի իրավիճակի

¹ Facts about Germany, Chief editor: Dr. Arno Kappler, German Federal Press and Information Bureau, 2000, ISBN 3-7973-0752-7, p. 184.

լավարկմանը: Վերջ ի վերջո գնաճի կախվածությունը ներմուծվող ապրանքների գների ազդակից մնում է առանցքային գործոն, և գնաճի անկանխատեսելիության աստիճանը չի նվազում:

Ակնհայտ է ընտրությունը երկու տարբերակների միջև՝ կամ առաջին հայացքից նվազագույն գների աճ ուղղակի կախված արտահանումից և ունեցող սեզոնային և կառուցվածքային տատանումների մեծ հավանականություն ու չփոխկապակցված այլ առանցքային ցուցանիշների հետ, կամ գնաճ նվազագույն տատանումներով, փոխկապակցված այլ առանցքային ցուցանիշների հետ: Արդյունքում երկարաժամկետ առումով կապահովի չգերազանցող որոշակի ընդունելի սահմանը կայուն գնաճ:

Դրամավարկային քաղաքականությունը ուղղակի անհրաժեշտ է իրականացնել համակարգված: Ցածր իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը, այսինքն վերաֆինանսավորման տոկոսադրույք հանած գնաճ կնպաստի դրամավարկային քաղաքականության ճշգրտմանը, այդ թվում փողայնացման մակարդակի փուլային առումով մեծացմանը մոտ զարգացող երկրների օպտիմալ մակարդակին: Այս դեպքում հիմնախնդիրը նրանում չէ որ բոլոր միջոցներով ապահովել հնարավորինս նվազագույն գնաճ, այլ նրանում է, որ ունենալ իրականությունը համապատասխանող գնաճ, որը առավելագույնս նպաստավոր է տնտեսության, արտահանման աճին և դրա հետ մեկտեղ դրական է անդրադառնում փողայնացման մակարդակի վրա՝ մոտեցնելով նրան իր զգայունության շեմին¹: Դա թույլ կտա որոշակի փուլերով անցում կատարել ավելի ցածր և, ընդգծեմ, կայուն գնաճի: Միայն այն ռազմավարությունը, որը հաշվի է առնում իրական փոխկապակցվածությունները, նպաստավոր է տնտեսության դրական փոփոխությունների համար:

Նշենք, որ փողայնացման մակարդակի աճը ինքնանպատակ չէ, և այս դեպքում նույնպես պետք է հաշվի առնել նրա փոխկապակցվածությունները, և դա կարող է լինել որպես հետևանք տնտեսական աճի ու արտահանման համար նպաստավոր կայուն գնաճի դեպքում:

Մուրրություն է կարծել, որ բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքը միշտ զսպում է գնաճը, իսկ ցածրը հակառակը: Բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքի դեպքում, հատկապես շատ ցածր փողայնացման մակարդակի պայմաններում ձևավորվում է հետևյալ պատճառահետևանքային կապը՝ բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույք - ավելի բարձր բանկային տոկոսադրույքներ - սեփական միջոցների սուղ պակասուրդի պայմաններում ծախսերի աճ - ծախսերի գնաճ, ինչը ակնհայտ նպաստավոր չէ ներքին սպառումը ապահովող արտադրության և արտահանման համար:

Հատկապես տնտեսական աճի տեմպի մեծացման ծայրահեղ անհրաժեշտության դեպքում է նպատակահարմար իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Հաշվի առնելով գնաճը, պետք է գնահատել թե ինչպես է վերաֆինանսավորման տոկոսադրույքը անդրադառնում ՀՆԱ-ի, նրա կառուցվածքի, վճարային և առևտրային հաշվեկշռի վրա: Գրեթե անհնար է արդիականացնել արտադրությունը, երբ տնտեսավարող սուբյեկտների եկամուտները էապես իջնում են, գնաճի և փոխարժեքի տատանումները բարձր են, դրա հետ մեկտեղ բանկային տոկոսադրույքները փաստացի դարձնում են վարկերը անհասանելի: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը ունի իր միջակայքը, որի վերին սահմանի համար առանցքային նշանակություն ունի շահութաբերությունը հանած բանկային մարժանայն ոլորտներում, որոնք ապահովում են գիտատեխնիկական առաջընթացը: Այդ սահմանի գերազանցումը, հատկապես ցածր փողայնացման մակարդակի պայմաններում, արդարացի է միայն կրիտիկական վիճակներում, ընդ որում նվազագույն կարճաժամկետում, քանզի հակառակ դեպքում կարելի է հասցնել մեծ վնաս երկրի գիտատեխնիկական ներուժին:

Ընդհանուր առմամբ տրանսֆորմացվող տնտեսություն ունեցող երկրի համար օպտիմալ դրամավարկային քաղաքականությունը, որը փոխկապակցված է հարկաբյուջետային քաղաքականության հետ, կարելի է ներկայացնել հետևյալ ձևով: Անցում կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերության ոչ ավել, քան երկուտոկոսային կետի, որը առաջին հերթին հնարավորինս համապատասխանում է ՀՆԱ-ին և արտահանման, հատկապես պատրաստի արտադրանքի արտահանման աճին և համապատասխանում է ազգային

¹ Ашот Тавадян, Пороги чувствительности постсоветской экономики // Мир перемен. 2013. № 2.

արժույթի փոխարժեքի դինամիկայի փոփոխությանը գնաճին ու որպես հետևանք նպաստավոր է նաև արտահանման մեծացմանը: Այդ պայմաններում անհրաժեշտ է ապահովել գնաճի մակարդակը ոչ ավել, քան 5,5%-ը: Ինչը, ի դեպ, պետական բյուջեի մասին օրենքի պահանջ է: Եթե վերը նշված պահանջների դեպքում չի ապահովվում գնաճը ոչ ավել քան 5,5%, ապա առանցքային տնտեսական ցուցանիշների օպտիմալ արժեքներին հասնելու տեմպը նպատակահարմար է ճշգրտել: Ընդգծենք այս կարևորագույն առանցքային հիմնախնդիրը պահանջում է կոմպլեքս լուծում:

Հայաստանի զարգացման համար անհրաժեշտ է վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերության էական կրճատում, տարբերությունը ոչ ավելի, քան 2-3 տոկոսային կետ: Զարգացած կամ զարգացման էական աճի տեմպ ունեցող ոչ մի երկիր չունի նշված ցուցանիշների ավելի մեծ տարբերություն: Իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքն այդ երկրներում չի գերազանցում 2- 3%-ը: Բարձր իրական տոկոսադրույքը շահույթ հետապնդող կազմակերպության վարքագիծ է, իսկ երկիրը չի ունենում զարգացման բարձր տեմպ, եթե վճարում է ավելի մեծ գին նվազագույն գնաճի համար: Ինչպես ցույց է տալիս փորձը, այլապես ստիպված են լինում ունենալ ներդրումների, արտահանման, միջազգային պահուստների տեսանկյունից զարգացման համար ոչ նպաստավոր իրավիճակ:

Հակառակ դեպքում կրնկենք նույն ծուղակը՝ գնաճը նվազագույն ցածր մակարդակին պահելու համար անհրաժեշտ կլինի ունենալ չարդարացված բարձր իրական վերաֆինանսավորման տոկոսադրույք, փոխարժեքը պահել հնարավորինս անփոփոխ՝ վճարելով դրա համար միջազգային պահուստների նվազմամբ, վճարային և առևտրային հաշվեկշռի վատթարացմամբ: Իսկ իրական փոխարժեքն այն է, որի դեպքում այդ բացասական գործոնները տեղի չեն ունենում: Իջեցնելով իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը և էապես մեծացնելով արտահանումը մենք կարող ենք հետագայում ապահովել փոխարժեքի ոչ էական տատանում ու ոչ բարձր գնաճ:

Իհարկե, այժմ վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերության նվազման, ինչպես նաև պահուստավորման նորմի իջեցման քաղաքականությունը կարող է բերել դրամի փոխարժեքի որոշակի արժեզրկման և, համապատասխանաբար, ներմուծվող ապրանքների գնաճի, բայց միայն այս ձևով մենք կարող ենք դրամավարկային քաղաքականությամբ դրական ազդեցություն ունենալ վճարային և առևտրային հաշվեկշռի, տնտեսության զարգացման վրա: Պետք է նաև հաշվի առնել, որ գնաճը էապես կախված է ներմուծվող ապրանքների միջազգային շուկայում ձևավորվող գներից և ոչ միայն վարվող դրամավարկային քաղաքականությունից:

Ուղեցույցն այստեղ հետևյալն է՝ անհրաժեշտ է վերաֆինանսավորման տոկոսադրույքը ու պահուստավորման նորմը նվազեցնել այնպես, որ դրամավարկային քաղաքականությունը, նպաստելով տնտեսության զարգացմանը, դրա հետ մեկտեղ թույլ չտա, որ գնաճը գերազանցի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով սահմանված 5,5%-ը: Մա է դրամավարկային քաղաքականության իրականացման առանցքային արվեստը:

Հայաստանը, դառնալով ԵԱՏՄ անդամ, համաձայն ԵԱՏՄ պայմանագրի պարտավոր է կատարել նաև որոշակի պայմաններ դրամավարկային քաղաքականության վերաբերյալ, որոնք սահմանված են ԵԱՏՄ պայմանագրի 63 և 64 հոդվածներում¹: Եվրասիական տնտեսական միության պայմանագրում որոշ բաժիններ ունեն առանցքային նշանակություն, դա է ցույց տալիս նաև Եվրամիության Մասսորիիության պայմանագրով սահմանված առանքային ցուցանիշների վերաբերյալ պայմանները:

Մասնավորապես ԵԱՏՄ պայմանագրի «Մակրոտնտեսական քաղաքականություն» XIII և «Արժույթային քաղաքականություն» XIV բաժինները, ինչպես նաև «Համաձայնեցված արժույթային քաղաքականության վարման վերաբերյալ ուղղված միջոցների մասին» հավելված 15-ը ունեն առանցքային նշանակություն: Տվյալ բաժինների կոնկրետացումը չափազանց կարևոր է և առաջնային խնդիր է: Նշենք, որ 13-րդ բաժնի 63 հոդվածում «Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք որոշում են տնտեսական զարգացումը» նշված է, որ գնաճի մակարդակը

¹ "Договор о Евразийском экономическом союзе".

չի կարող գերազանցել ավելի քան 5 տոկոսային կետով գնաճի մակարդակը այն ԵԱՏՄ երկրում, որտեղ գնաճի ցուցանիշը նվազագույնն է: Սակայն տվյալ պայմանը չի կատարվում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ԵԱՏՄ երկրների գնաճը, ԿԲ տոկոսադրույքը, փոխարժեքի փոփոխությունը ԱՄՆ դոլարի նկատմամբ

Երկիր	Տարի	Գնաճ	ԿԲ տոկոսադրույք	Փոխարժեքի փոփոխությունը ԱՄՆ դոլարի նկատմամբ
Ռուսաստան	2014	11.4 %	10.5 %	- 95.6 %
	2015	12.9 %	11.0 %	- 9.1 %
	2016	5.4 %	10.0 %	+ 22.5 %
Ղազախստան	2014	7.4 %	5.5 %	- 18.6 %
	2015	13.6 %	5.5 %	- 96.9 %
	2016	16 %	12.0 %	+ 7.2 %
Բելառուս	2014	17.1 %	20 %	- 62.3 %
	2015	11.4 %	25 %	- 33.2 %
	2016	10.6 %	18 %	+ 6.7 %
Հայաստան	2014	3.0 %	8.50 %	- 16.5 %
	2015	-0.1 %	8.75 %	- 2.7 %
	2016	-1.1 %	6.25 %	- 0.0 %
Ղրղզստան	2014	10.5 %	10.5 %	- 17.8 %
	2015	3.4 %	10.0 %	- 26.9 %
	2016	-0.5 %	5.0 %	+ 8.9 %

ԵԱՏՄ պայմանագրի առանցքային հոդվածների հստակ կատարման դեպքում ակնհայտ նպատակահարմար է ԵԱՏՄ երկրներում հաշվարկները, հատկապես ռազմավարական ապրանքների մասով, կատարել ազգային արժույթով և հրաժարվել այդ հաշվարկներում դոլարից, ինչը հնարավորություն կտա ավելի արդյունավետ իրականացնել փոխհաշվարկները և կրճատել դրանցում դոլարիզացիայի մակարդակը: Տվյալ առաջարկը ուղղակի հետևում է ԵԱՏՄ պայմանագրից: Այդ տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն է ստանում 64-րդ հոդվածը, որտեղ ներկայացված են ԵԱՏՄ երկրների համաձայնեցված արժույթային քաղաքականության նպատակները և խնդիրները: Ինտեգրացիայի էֆեկտները մեծացնելու տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շահերից է բխում համագործակցության զարգացումը արժույթաֆինանսական ասպարեզում, ազգային արժույթի դերի բարձրացումը առևտրային ու ներդրումային գործընթացներում և, իհարկե, ազգային արժույթների փոխարկելիության գործում: Դրա համար համաձայն ԵԱՏՄ պայմանագրի անդամ երկրները պետք է իրականացնեն համաձայնեցված արժույթային քաղաքականություն: Տվյալ հոդվածի հավելվածում ուղղակի նշված է ազգային արժույթների փոխարժեքի կոորդինացման անհրաժեշտության մասին, ինչը կապահովի ԵԱՏՄ-ում փոխհաշվարկների իրականացումը ազգային արժույթով:

Անհրաժեշտ է նշել հետևյալ գործոնը, եթե գործնականում չեն իրականացվում գործարքներ ազգային արժույթով, զոնե ռազմավարական ապրանքների գծով, ապա ԵԱՏՄ երկրների կենտրոնական բանկերի մոտ չի լինի հստակ ազդակ ԵԱՏՄ պայմանագրի պահանջները կատարելու համար, նաև համապատասխան նորմատիվների և փաստաթղթերի համաձայնեցման ու ընդունման համար: Նշենք, որ փոխհաշվարկները ազգային արժույթով ուղղակի նպաստում են լողացող փոխարժեքի քաղաքականության համաձայնեցված և ավելի ռացիոնալ իրականացմանը: ԵԱՏՄ բոլոր երկրների համար նպատակահարմար է իջեցնել դոլարիզացիայի մակարդակը: Նվազում է ոչ միայն պահանջարկը դոլարի նկատմամբ, այլ նաև ծախսերը փաստացի կրկնակի կոնվերտացիայի վրա: Գազի համար Հայաստանը վճարում է Գազպրոմ ռուսական

կազմակերպությանը տարեկան մոտ 270 մլն. դոլար, իսկ գազը վաճառվում է Հայաստանում դրամով:2016թ. ընթացքում Ռուսաստանից Հայաստան ստացված տրանսֆերտները կազմել են մոտ 960 մլն դոլար, որը ընդհանուր տրանսֆերտների՝ 1.5 մլրդի 60%-ն է¹: Տրանսֆերտները փոխանցվում են հիմնականում ռուսական ռուբլով: Տվյալ փոխհաշվարկների մեխանիզմի դեպքում գումարի հիմնական մասը բանկերի միջոցով ուղարկվում է Ռուսաստան և Ռուսաստանի բորսաներում կոնվերտացվում է ԱՄՆ դոլարով: Այս դեպքում գազի համար վճարելու համար փաստացի անհրաժեշտ է լինում երկու անգամ կոնվերտացնել արժույթը, կատարելով համապատասխան ծախսեր: Ռուսաստանի համար անցումը փոխհաշվարկներում ռուսական ռուբլու ռազմավարական ապրանքների գծով, մասնավորապես էներգակիրների մասով, համապատասխան ձևով կնվազեցնի ռուսական բորսաներում պահանջարկը դոլարի նկատմամբ և, իհարկե, էապես կմեծացնի պահանջարկը ռուսական ռուբլու նկատմամբ ԵԱՏՄ երկրներում: Փոխհաշվարկները ազգային արժույթով ոչ միայն նպաստավոր են ազգային արժույթների կայունության համար, այլ նաև համապատասխանում է ԵԱՏՄ պայմանագրի պահանջների կատարմանը: Հետագայում դա հիմք է ստեղծում անցում կատարել ազգային արժույթով փոխհաշվարկների ռազմավարական ապրանքներից ապրանքաշրջանառության ամբողջ դաշտին:

Դա անհրաժեշտ է առաջին հերթին տնտեսությունը ապահովագրելու համար դոլարի նկատմամբ ազգային արժույթի տատանումից, նվազեցնել դոլարի գացիայի մակարդակը ԵԱՏՄ երկրներում, ինչպես նաև ծախսերը կոնվերտացիայի վրա: Որպեսզի որևէ ԵԱՏՄ անդամ երկիր չստանա առավելություն ազգային արժույթների տարբեր մակարդակի տատանումներից, ուղղակի անհրաժեշտ է կատարել ԵԱՏՄ պայմանագրի պայմանները արժույթային քաղաքականության վերաբերյալ և առաջին հերթին հստակեցնել և կոնկրետացնել դրանք: ԵԱՏՄ երկրները այդ քայլով կնպաստեն նաև պայմանագրի չորրորդ «Միության նպատակները» հոդվածում սահմանված ԵԱՏՄ նպատակների կատարմանը՝ ազգային տնտեսությունների արդիականացմանը, կոռպերացմանը և մրցունակության բարձրացմանը: Ակնհայտ է, որ առանց համաձայնեցված դրամավարկային և հատկապես արժույթային քաղաքականության կոորդինացմանը, սահմանված նպատակներին հասնել հնարավոր չէ:

Անհրաժեշտ է նշել, որ տվյալ քայլը նպաստում է նաև ԵԱՏՄ երկրների տնտեսական անվտանգության ամրացմանը: ԵԱՏՄ երկրների ազգային արժույթների համաձայնեցման համար նրանց փոխարժեքը փոխարկելի արժույթների նկատմամբ նպատակահարմար է, որ սահուն, քայլ առ քայլ նվազի և դա պետք է կատարվի համաձայնեցված: Հակառակ դեպքում, եթե փոխարժեքը մնում է փաստացի անփոփոխ, հատկապես էապես ավելի բարձր գնաճի դեպքում, դա նշանակում է, որ երկրում խթանվում է ներմուծումը, փաստացի նրան ցուցաբերվում է աջակցություն: Նույն ժամանակ տրամաբանական է նպաստել հակառակ գործընթացին, քանզի ազգային արժույթի գերազնահատված փոխարժեքը փաստացի կարող է արհեստականորեն նվազեցնել երկրի մրցունակությունը, բացասական ազդելով վճարային ու առևտրային հաշվեկշռի և բյուջեի կատարման վրա:

Գնաճին համապատասխանող փոխարժեքի սահուն նվազումը նպաստավոր է տնտեսության հատկապես արտահանման համար: Իհարկե ԵԱՏՄ երկրներում դա պետք է տեղի ունենա սահուն և համաձայնեցված, քանզի կամայական տատանումները վնասում են տնտեսությանը: Եթե տրանսֆորմացվող երկրում նպաստավոր գնաճը 4-5% է, իսկ ԱՄՆ-ում և Եվրամիությունում գնաճը կազմում է մոտ 1%, ապա աննպատակահարմար է ազգային արժույթի կարծր կայունությունը: Անհրաժեշտ է նպաստել փոխարժեքի ձևավորմանը 3-4 տոկոսային կետով ավելի ցածր, հաշվի առնելով այն ապրանքների գների փոփոխությունը, որոնք ներկայացված են առևտրային հաշվեկշռում: Գերազնահատված ազգային արժույթը տրանսֆորմացվող երկրում հիմք է ստեղծում փոխարժեքի կտրուկ փոփոխման համար, հատկապես ճգնաժամային պայմաններում:

Տվյալ դեպքում ազգային արժույթի փոխարժեքի «սեղմված զսպանակը» կարող է կտրուկ բացվել: Բացի դրանից, եթե տվյալ փոխարժեքի դեպքում էապես նվազում են երկրի միջազգային պահուստները, ապա դա առանցքային ազդակ է նրա մասին, որ ազգային արժույթը գերազնա-

¹ <http://www.armbanks.am/en/2017/02/09/105652/>

հատված է: Փոխարժեքի և միջազգային պահուստների կտրուկ նվազումը վտանգ է ներկայացնում երկրի տնտեսական անվտանգության համար:

Հայաստանում փողայնացման մակարդակը չի գերազանցում 40%-ը, Ռուսաստանում գտնվում է 50%-ի շրջանակներում, իսկ ԵԱՏՄ այլ երկրներում ավելի ցածր է: Այն դեպքում, երբ որ Եվրամիության զարգացած երկրներում փողայնացման մակարդակը 100%-ի շրջանակներում է, իսկ Չինաստանում և Ասիայի արագ զարգացող երկրներում փողայնացման մակարդակը էապես բարձր է 100%-ից:

Ցածր փողայնացման մակարդակի դեպքում պարբերաբար առաջանում են դժվարություններ տնտեսության կայուն աճի և նրա դիվերսիֆիկացիայի համար, ինչպես նաև կարող են առաջանալ հիմնախնդիրներ ազգային արժույթով փոխհաշվարկների դեպքում: Նշենք, որ փողայնացման մակարդակի աճի համար նպաստավոր է ԵԱՏՄ երկրների ազգային արժույթների փոխարկելիությունը և փոխհաշվարկներում անցումը ազգային արժույթներին:

ԵԱՏՄ երկրներում դրամավարկային քաղաքականության համաձայնեցման համար անհրաժեշտ է, հաշվի առնելով գնաճի փոխկապվածությունները դրամավարկային քաղաքականության այլ առանցքային ցուցանիշների հետ, հասնել նրան, որ ԵԱՏՄ երկրներում գնաճը չգերազանցի 4-5%-ը: Այդ պարագայում ազգային արժույթի փոխարժեքի նվազումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ պետք է համապատասխանի գնաճին, դրա հետ մեկտեղ պետք է ունենալ համաձայնեցված վերաֆինանսավորման տոկոսադրույք և որպես հետևանք փողայնացման մակարդակի համապատասխանեցում երկրի զարգացման տեմպին: Չափազանց կարևոր է նաև պայմանագրային պարտավորությունների հստակ կատարումը, հատկապես գնաճի և արժույթային քաղաքականության մասով: Եթե հնարավոր չէ օբյեկտիվ պատճառներից ելնելով այս կամ այն հոդվածը կատարել, ապա դա անհրաժեշտ է ճշգրտել:

ՀՀ տնտեսական քաղաքականության առանցքային կետերի իրականացման համար, որոնք վճռական նշանակություն ունեն ՀՀ տնտեսության կայուն աճի համար, պետք է իրականացնել համակարգված և համաձայնեցված քայլեր: Հատկապես անհրաժեշտ է համաձայնեցված հարկաբյուջետային և դրամավարկային, մասնավորապես արժույթային քաղաքականության իրականացում: Միայն համաձայնեցված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունն է նպաստում ՀՀ տնտեսության զարգացման սցենարի լավարկմանը: Այստեղ մեծ դեր ունի նաև տվյալ քաղաքականությունների կոորդինացումը սոցիալ քաղաքականության հետ և, իհարկե, ՀՀ տնտեսական քաղաքականության կոորդինացումը ԵԱՏՄ այլ երկրների հետ, համաձայն ԵԱՏՄ պայմանագրի:

ԳՆԱԾԻ ԵՎ ԱՉԳԱՅԻՆ ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ԹԱՎԱԴՅԱՆ, տ.գ.դ., պրոֆեսոր,

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ,

ՀՀ ԳԱԱ Մ.Բոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածում նշվում է դրամավարկային քաղաքականության առանցքային ցուցանիշների առաջնահերթ դերը: Գնահատվում է ազգային արժույթի փոխարժեքի և գնաճի փոխկապվածությունը, վերաֆինանսավորման տոկոսադրույքի, պահուստավորման նորմայի, փողայնացման մակարդակի, վճարային և առևտրային հաշվեկշռի հետ: Երկրի տնտեսության զարգացման համար լավագույն սցենարի ձևավորման համար անհրաժեշտ է դրամավարկային ցուցանիշների վերաբերյալ վարել համակարգված դրամավարկային քաղաքականություն:

Բանալի բառեր. գնաճ, ազգային արժույթի փոխարժեք, վերաֆինանսավորման տոկոսադրույք, փողայնացման մակարդակ, առևտրային հաշվեկշիռ:

ВЗАМОДЕЙСТВИЕ ИНФЛЯЦИИ И КУРСА НАЦИОНАЛЬНОЙ ВАЛЮТЫ В РА

АШОТ АГАСИЕВИЧ ТАВАДЯН, д.э.н., профессор,

заведующий кафедрой экономико-математических методов АГЭУ,

ведущий научный сотрудник Института экономики имени М.Котаняна НАН РА

Аннотация

В статье отмечается ведущая роль ключевых индикаторов денежно-кредитной политики. Оценивается взаимосвязь курса национальной валюты и инфляции со ставкой рефинансирования, нормой резервирования, уровнем монетизации, платежным и торговым балансами. Для формирования лучшего сценария развития экономики страны необходимо относительно денежно-кредитных индикаторов вести согласованную денежно-кредитную политику.

Ключевые слова: инфляция, курс национальной валюты, ставка рефинансирования, уровень монетизации, торговый баланс.

THE INTERACTION OF INFLATION AND THE EXCHANGE RATE IN THE REPUBLIC OF ARMENIA

ASHOT AGHASI TAVADYAN, Doctor of Sciences (Economics), Professor

Head, Chair of Mathematical Methods in Economics

Armenian State University of Economics

Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article highlights the leading role of key indicators of the monetary policy. The relationship between the exchange rate of the national currency and inflation with the refinancing rate, the reserve ratio, the level of monetization, payment and trade balances is estimated. For the formation of a better scenario for the development of the country's economy, it is necessary to pursue a coordinated monetary policy with respect to the monetary indicators.

Keywords: Inflation, national currency rate, refinancing rate, monetization level, trade balance

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Վերջին տարիներին Հայաստանում ներդրումները, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ), դրսևորել են տատանողական դինամիկա: Միաժամանակ, չնայած իրականացվող «բաց դռների» քաղաքականությանը, ներդրումային քաղաքականությանն առնչվող գրեթե ոչ մի փաստաթուղթ չի ընդունվել, բացառությամբ 1994-ի՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի¹, որն էլ որոշակի վերանայման կարիք ունի, քանի որ գործարար և ներդրումային միջավայր հասկացությունները զգալի ընդլայնվել են ու կրել բովանդակային փոփոխություններ: Բացի այդ, ռազմավարական տարբեր փաստաթղթերում գործնականում գրեթե անդրադարձ չի կատարվել ներդրումային քաղաքականությանը և ներդրումային միջավայրին: Իսկ ՕՈՒՆ-ների վերաբերյալ ռազմավարություն ընդհանրապես գոյություն չունի, ոլորտային մակարդակում էլ մրցունակության համակարգային ուսումնասիրություններ չեն կատարվել:

Թեև Հայաստանում իրականացվում է ներդրումների խրախուսման հետևողական քաղաքականություն՝ հիմնված «բաց դռների» քաղաքականության վրա, այնուամենայնիվ՝ ներկայում ՀՀ կառավարության տրամադրության տակ առկա խրախուսման գործիքները, ինչպես նաև դրանց կիրառման հնարավորությունները դեռևս սահմանափակ են և վերանայման կարիք ունեն: Այդ ուղղությամբ արդեն իսկ իրականացվել են աշխատանքներ, մասնավորապես՝ ստորագրվել է խորհրդատվական համաձայնագիր, որի միջոցով մշակվել և ներկայացվել է ներդրումային բարեփոխումների ճանապարհային քարտեզ:

Այս հայեցակարգն ուղղված է ոլորտի հիմնական խնդիրների լուծմանը՝ ներդրումային միջավայրի բարելավում, օրենսդրական դաշտի կատարելագործում, ՀՀ տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների խրախուսում, արդյունքում՝ աշխատատեղերի ստեղծում, երկրի մրցակցային առավելությունների ամրապնդում և դրա հիման վրա՝ տնտեսական զարգացման ապահովում:

Պետք է ասել, որ ներկայացված հայեցակարգի նպատակն է՝ բնութագրել ՀՀ ներդրումային միջավայրը, սահմանել ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները և նախանշել դրանց իրականացման համար անհրաժեշտ սկզբունքները, ուղղություններն ու միջոցառումները:

Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական խնդիրներն են՝ ներդրումային միջավայրի բարելավումը, օրենսդրական դաշտի կատարելագործումը և ՀՀ տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ ՕՈՒՆ խթանումը, հիմնական նպատակը՝ ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորումը, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացումը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտումը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացումը, շուկայական ենթակառուցվածքի զարգացումը, որակյալ և բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծումը, մարդկային կապիտալի զարգացումը և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական կայուն աճի և բնակչության բարեկեցության ապահովումը, ինչը համահունչ է ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի գերակայություններին²: Այս նպատակների իրականացմանն է ուղղված Հայեցակարգով նախատեսված հիմնական խնդիրների լուծումը:

ՀՀ կառավարությունը ներդրումային ոլորտում առաջնորդվում է «բաց դռների» քաղաքականության, ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների

¹ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1552>

² ՀՀ 2014-2025թթ. ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր: ՀՀՊՏ 2014.05.07/23(1036).1: N 442-Ն:

ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և միջազգային առաջադեմ պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով:

Որպես խնդիրների լուծման և սահմանված նպատակներին հասնելու հիմնական գրավական՝ կառավարությունը կարևորում է ՀՀ մասնավոր հատվածում ներդրումների խրախուսումը: Հստակ գիտակցելով, որ միայն տեղական մասնավոր հատվածի ջանքերը բավարար չեն՝ լուծելու այդ խնդիրը, կառավարությունը ակտիվորեն փորձում է օտարերկրյա ներդրումներ ներգրավել՝ տնտեսական և սոցիալական ոլորտների գերակա նպատակների իրագործման համար, միաժամանակ ընդունելով, որ օտարերկրյա ներդրումները կարող են նպաստել տեղական տնտեսության զարգացմանը՝ գիտելիքի և կապիտալի փոխանցման, բարձր հմտություններ պահանջող աշխատատեղերի ստեղծման, միջազգային ներդրողների դիստրիբյուտորական ցանցերի հասանելիության ապահովման միջոցով: Ուստի՝ կառավարությունը, ներդրումային միջավայրի բարելավումը համարելով երկրի տնտեսական առաջընթացի հիմնական գերակայություններից մեկը, հետևողականորեն իրականացնելու է հատուկ քաղաքականության միջոցառումներ, որոնք աջակցելու են ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորմանը՝ օտարերկրյա և տեղական ներդրումների լրացուցիչ խթաններ ստեղծելու միջոցով:

Այս համատեքստում խիստ կարևորվում է այն հանգամանքը, որ վերոնշյալ միջոցառումները համահունչ լինեն այլ ոլորտներում իրականացվող քաղաքականությունների հետ, քանզի ներդրումային քաղաքականությունը խիստ զգայուն է և կրում է մի շարք ազդեցություններ:

- առևտրային քաղաքականություն. առևտրի պարզեցումը, առևտրային արգելքների վերացումը, միջազգային առևտրային համաձայնագրերի կնքումը, առևտրային նպատակային քաղաքականությունների իրականացումը մեծապես կարող են նպաստել ներդրումային գրավիչ միջավայր ձևավորելուն,
- մրցակցություն. մրցունակ միջավայր ստեղծելն ու պահպանելը, մրցակցության սկզբունքները հարգելը, անտեղի սահմանափակումներից խուսափելը պահանջում է համապատասխան օրենքի առկայություն և ճիշտ կիրարկում, ինչը ևս կապահովի իրականացվող ներդրումային քաղաքականության բարձր արդյունավետություն,
- հարկային քաղաքականություն. այն երկրները, որոնք հաջողությամբ են մշակել ներդրումներին նպաստող հարկային քաղաքականություն, կարողացել են համապատասխանություն հաստատել երկրի հարկային քաղաքականության, համազգային ու տեղական զարգացման նպատակների և ներդրումների ներգրավման ռազմավարության միջև,
- «կանաչ զարգացում». Էկոլոգիապես անվտանգ զարգացումն ինքնին խթան է ներդրումների ու ինովացիաների համար, ինչն էլ նպաստում է կայուն աճին և ընձեռում աղքատության կրճատման ու սոցիալ-տնտեսական զարգացման տնտեսական նոր հնարավորություններ:

Այսպիսով ներդրումային քաղաքականության բարեփոխումների ուղղությամբ կտարվի նպատակաուղղված և հետևողական աշխատանք՝ ներդրումների իրականացմանը նպաստող գործուն, արդյունավետ և թափանցիկ համակարգի ապահովման, ներդրումների իրավական կարգավորման շրջանակի բարելավման և արդիականացման, ներդրումային գործունեությանն առնչվող միջազգային լավագույն չափանիշների ու փորձի կիրառման ուղղությամբ:

Ներկայացնենք ներդրումային քաղաքականության սկզբունքները:

Հայաստանի ներդրումային օրենսդրությամբ («Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենք և դրա հետ կապված ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 15-ի նիստի թիվ 46 արձանագրային որոշում, ինչպես նաև տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի՝ ներդրումներին վերաբերող դրույթները) օտարերկրյա ներդրողների նկատմամբ ամրագրված են ազգային և առավել բարենպաստության ռեժիմները, ինչպես նաև օտարերկրյա ներդրումներին վերաբերող առանցքային իրավունքներն ու արտոնությունները:

Նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի ներդրումային դաշտի գրավչությունը և խրախուսել ներդրումները՝ ՀՀ ներդրումային քաղաքականության սկզբունքները հետևյալն են.

- Թափանցիկություն. Հայաստանում ներդրումներին առնչվող օրենսդրական ակտերը և ներդրումային քաղաքականությանը վերաբերող դրույթներ պարունակող փաստաթղթերը մշակման փուլից սկսած թափանցիկ ու մատչելի ձևով հասանելի կլինեն հանրությանը: Իրավական ակտերի և քաղաքականության մշակման գործընթացում կներառվի մասնավոր հատվածը:
- Առավել բարենպաստության ռեժիմ. որևէ երկիր ներկայացնող ներդրողների կողմից ներդրումների իրականացման և ընդլայնման նկատմամբ ցուցաբերել նույն վերաբերմունքը, ինչ համանման իրավիճակում կցուցաբերվեր այլ երկրներ ներկայացնող ներդրողների պարագայում:
- Ազգային ռեժիմ. բացի ազգային օրենսդրությամբ սահմանված բացառություններից, ներդրումների գործարկման, ընդլայնման, իրականացման և պաշտպանության հարցում օտարերկրյա ներդրողների նկատմամբ կիրառել ոչ պակաս նպաստավոր վերաբերմունք, քան նույնանման իրավիճակներում գտնվող տեղացի ներդրողների հանդեպ:
- Ներդրումային արտոնություններ. սահմանվող արտոնությունների համակարգը համահունչ կլինի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին՝ ապահովելով թափանցիկություն, արդյունավետ կառավարում և կանոնավոր մոնիթորինգ:
- Գործունեությանը ներկայացվող պահանջներ. չեն սահմանվի այնպիսի պահանջներ, որոնք խոչընդոտում կամ սահմանափակում են առևտրի և ներդրումների ընդլայնումը:
- Օտարում և փոխհատուցում. ներդրումներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն օտարվի, ազգայնացվի կամ օտարմանն ու ազգայնացմանը հավասարազոր հետևանքներ ունեցող այլ գործողությունների չեն ենթարկվի, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է հանրային նպատակներով: Օտարումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ոչ խտրական հիմքերի վրա:
- Հայրենադարձություն (ռեպատրիացիա) և փոխարկելիություն. ապահովել օտարերկրյա ներդրումների հետ կապված միջոցների՝ շահույթների, դիվիդենդների, ռոյալթիների, վարկային վճարումների ու մարումների ազատ և անհապաղ փոխանցումը՝ ազատ փոխարկելի արտարժույթով:
- Վեճերի լուծում. պետության և ներդրողի կամ մասնավոր երկու ներդրողների միջև օտարերկրյա ներդրումների կապակցությամբ ծագող վեճերը լուծել խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ միջազգային պարտավորություններից բխող կամ երկու կողմերի համար ընդունելի արբիտրաժային երկու ընթացակարգերի միջոցով:
- Անձնակազմի մուտքը և կեցությունը. համապատասխան օրենքների և կանոնակարգերի շրջանակներում թույլատրել օտարերկրյա տեխնիկական և ղեկավար անձնակազմի ժամանակավոր մուտքն ու կեցությունը՝ օտարերկրյա ներդրումների հետ կապված աշխատանքներում ներգրավելու նպատակով:
- Կրկնակի հարկման բացառում. օտարերկրյա ներդրումների մասով կբացառվի կրկնակի հարկումը:
Պետք է ասել, որ ներդրումային քաղաքականության շրջանակում իրականացվել են համապարփակ բարեփոխումներ՝ երկրում օտարերկրյա ներդրումները և տեղական մասնավոր հատվածի համար դրանից բխող օգուտները խթանելու նպատակով: Այդպիսով՝ հաշվի կառնվեն ազգային տնտեսական և սոցիալական զարգացման նպատակները, ինչպես նաև կվերացվեն ներդրումների հետ կապված հիմնական խոչընդոտները: Ներդրումային քաղաքականության բարեփոխումներն ուղղված կլինեն հետևյալին.
 - կատարելագործել ներդրումային քաղաքականության բոլոր կարևոր տարրերը՝ ներդրումային տեսլականը/ռազմավարությունը, միջոցառումները/գործողությունները, և համագործակցելով այլ մարմինների հետ՝ ապահովել դրանց պատշաճ իրականացումը,
 - ապահովել առավելագույն արդյունավետություն՝ ներդրումների կենսացիկլի տարբեր փուլերում հնարավոր խոչընդոտները մեղմելու միջոցով՝ ներդրումների ներգրավումից և պաշտպանությունից մինչև տեղական տնտեսության հետ կապեր հաստատելը,


- համապատասխան միջավայր ստեղծել արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների համար, ինչը բնույթով արտահանմանն ուղղվածություն ունի և, համարվելով ներդրումների ամենադյուրաշարժ տեսակը, պահանջում է արտահանման-ներմուծման արդյունավետ գործառնություններ, ինչպես նաև ներդրողների պաշտպանության չափորոշիչների հաստատում:

Բարեփոխումների միջոցով կվերացվեն օտարերկրյա ներդրումների ներգրավմանն ու պահպանմանն հիմնական արգելքները, որոնք ի հայտ են բերվել ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի՝ ներդրողների պատկերացումների մասին համատեղ իրականացրած հետազոտության և մասնավոր հատվածի հետ հարցազրույցների միջոցով: Դրանց թվին են դասվում.

- Օտարերկրյա ներդրումների վերաբերյալ համապարփակ ներդրումային ռազմավարության բացակայությունը, որը թույլ կտար ի հայտ բերել ազգային համեմատական առավելությունները, պարզել ներդրումների առաջնահերթ ոլորտները և առավելագույնի հասցնել և՛ ներդրումային քաղաքականության, և՛ ՕՈՒՆ լայն շրջանակներում ներգրավված տարբեր դերակատարների միջև փոխգործակցությունը:
- «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի մասով. դրանում արտացոլված չեն միջազգային տնտեսության նոր իրողությունները, մասնավորապես՝ կապված ներդրողների պաշտպանության երաշխիքների հետ:
- Տնտեսական գործունեությանն առնչվող օրենսդրության թափանցիկության անբավարարությունը և համապատասխան իրավական ակտերի հաճախակի փոփոխությունները, ինչպես նաև դրանց ոչ պատշաճ կիրարկումը պետական տարբեր գերատեսչությունների կողմից:
- Ներդրումային միջավայրի հետ կապված այլ արգելքներ, որոնք խոչընդոտում են ներդրողների վստահության ձևավորմանը, մասնավորապես՝ անհարկի և ծախսատար ստուգումներ, պայմանագրերի կատարման տևական գործընթացներ և այլն:

Բարեփոխումների մշակման գործընթացում հաշվի են առնվել նաև միջազգային ճանաչված մի շարք հաշվետվություններում տեղ գտած եզրահանգումները:

Մեր կողմից առաջարկվել է մեխանիզմ, որի կիրակման միջոցով հնարավոր է որոշել ներդրումային ռիսկերն ու դրանց հիման վրա իրականացնել բարեփոխումներ, որոնք ուղղված կլինեն ներդրումային միջավայրի բարելավմանը (տե՛ս գծապատկեր 1-ը): Պետք է ասել, որ ՀՀ-ում ներդրումային միջավայրի և դրանում գոյություն ունեցող ներդրումային ակտիվության միջև անհամապատասխանության խնդիրը, որն ապացուցում է ներդրումային միջավայրի և ներդրումային գրավչության չհամընկման հարցը:



Գծապատկեր 1. Ներդրումային միջավայրի հայեցակարգի մեխանիզմը

Գտնում ենք, որ կայուն, պարզ և թափանցիկ իրավական դաշտը արագ զարգացող ներդրումային միջավայրի կարևոր նախապայման է: Իրավական դաշտի կայունության ապահովման համար անհրաժեշտ է հստակեցնել օրենքների բովանդակությունը, բարձրացնել օրենքների մշակման և ընդունման գործընթացների թափանցիկության և կանխատեսելիության մակարդակը: Այդ առումով կարևորվում է ՀՀ ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի կատարելագործումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության զարգացման ներկա փուլում հույժ կարևոր է օրենսդրորեն ամրագրել հավասար, ոչ խտրական և կանխատեսելի պայմաններ թե՛ օտարերկրյա և թե՛ տեղական ներդրողների համար:

Ներդրումային ոլորտին առնչվող օրենքներում առկա բացերը նվազագույնի հասցնելու և միջազգային լավագույն փորձին մոտեցնելու նպատակով պետք է իրականացվեն մի շարք միջոցառումներ, մասնավորապես.

- «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող իրավական այլ ակտերի վերանայում

Թեև գործող օրենքը վկայում է օտարերկրյա ներդրումների և ներդրողների նկատմամբ կառավարության «բաց դռների» քաղաքականության վարման մասին, այնուամենայնիվ՝ որոշակի ոլորտներում, առավելապես ներդրողների պաշտպանության հետ կապված հարցերում, բարելավման լուրջ կարիք ունի: Ուստի՝ անհրաժեշտություն է առաջանում օրենքում ներառել արդարացի և հավասար վերաբերմունքի չափանիշներ, ուժեղացնել օտարումից պաշտպանությանը, ինչպես նաև արտարժույթի փոխարկելիությանն ու փոխանցումներին առնչվող դրույթները, հստակեցնել վեճերի լուծման վերաբերյալ դրույթները՝ ներդրող-պետություն վեճերի պարագայում միջազգային արբիտրաժ դիմելու հստակ ու միանշանակ իրավունք տրամադրելու միջոցով, հստակեցնել նաև սահմանափակումների բացակայությանն առնչվող դրույթները՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով «բացասական ցանկի» սկզբունքը՝ սահմանափակումները միանգամայն հստակ նշելու համար:

- «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող իրավական այլ ակտերի վերանայում

Հայաստանում ԱՏԳ-ների ստեղծման հիմնական նպատակը օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման և դրա արդյունքում՝ առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման միջոցով արտահանման ծավալների աճին, նոր աշխատատեղերի ստեղծմանն ու կայուն տնտեսական զարգացմանը նպաստելն է: ԱՏԳ-ների գործունեությունն ապահովելու համար ստեղծվել է համապատասխան իրավական դաշտ: Այսպես, ոլորտի հիմնական կարգավորող փաստաթուղթ է 2011թ. մայիսի 25-ին ընդունված՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսված են հարկային և մաքսային մի շարք արտոնություններ: Այնուամենայնիվ՝ ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցելուց հետո լրացուցիչ անհրաժեշտություն է առաջացել վերանայել գործող օրենսդրությունը՝ այն համապատասխանեցնելով ԵԱՏՄ օրենսդրությանը:

- Պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացում

ՀՀ կառավարությունը կարևորում է պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացումը՝ այն դիտարկելով որպես իր գործունեության կարևոր ուղղություններից մեկը, որը հնարավորություն կտա բարձրացնել հանրային ծառայությունների որակը, զարգացնել ենթակառուցվածքը և նպաստել ազգային ու տեղական կարևորագույն ծրագրերի արդյունավետ իրականացմանը: Այսօր Հայաստանում կան նման համագործակցության հաջողված մի շարք օրինակներ:

ՀՀ-ում կարևորում է սփյուռքահայ ներդրողների հետ համագործակցության խորացումը: Այդ նպատակով ստեղծվելու է Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի առավելագույնս ներգրավման և ներդրումների խրախուսման նպատակով միջավայր, որտեղ օժանդակություն կցուցաբերվի մրցունակ և զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի ավելացմանը: Այս առնչությամբ հիմնական ջանքերն ուղղվելու են Սփյուռքի ներդրումային ներուժի վերլուծությանն ու համագործակցության մեխանիզմի մշակմանը:

- Ներդրումների ներգրավում՝ գիտելիքահենք և նորարարական տնտեսության զարգացման համար: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում են «գիտություն-արտադրություն»

շղթայի ապահովմանը նպաստող ներդրումները, գիտահետազոտական ոլորտում օտարերկրյա ներդրումները, ներդրումները մարդկային կապիտալում և հանրային ենթակառուցվածքներում, հատկապես՝ մշակող արդյունաբերության ճյուղերում, տեղեկատվական տեխնոլոգիաների, էներգետիկայի և զբոսաշրջության ոլորտներում: Այս նպատակով նախատեսվում է «գիտություն-արտադրություն» կապն ապահովող ինստիտուցիոնալ կառույցների ստեղծում:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՎՎԱՅՐԻ ՀԱՅԵՑԱՎԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՐՋ

ԽԱՉԱՏՈՒՐ ԹԱԴԵՎՈՍԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի ասպիրանտ

Համառոտագիր

Հայաստանում իրականացվում է ներդրումների խրախուսման հետևողական քաղաքականություն՝ հիմնված «բաց դռների» քաղաքականության վրա, այնուամենայնիվ՝ ներկայում ՀՀ կառավարության տրամադրության տակ առկա խրախուսման գործիքները, ինչպես նաև դրանց կիրառման հնարավորությունները դեռևս սահմանափակ են և վերանայման կարիք ունեն: Ըստ այդմ, մեր կողմից առաջարկվել է մեխանիզմ, որի կիրակման միջոցով հնարավոր է որոշել ներդրումային ռիսկերն ու դրանց հիման վրա իրականացնել բարեփոխումներ, որոնք ուղղված կլինեն ներդրումային միջավայրի բարելավմանը:

Բանալի բառեր. ներդրումային միջավայր, հայեցակարգային մոտեցում, օտարերկրյա ներդրումներ, ենթակառուցվածքներ, բարեփոխումներ, գիտելիքահենք տնտեսություն, արդյունաբերություն, կապիտալ:

К ВОПРОСУ О КОНЦЕПТУАЛЬНЫХ ПОДХОДАХ К ИНВЕСТИЦИОННОЙ СРЕДЕ

ХАЧАТУР ТАДЕВОСОВИЧ ИГИТЯН

очный аспирант кафедры финансов АГЭУ

Аннотация

В Армении осуществляется последовательная политика стимулирования инвестиций путем реализации политики «открытых дверей». Тем не менее, имеющиеся в настоящее время в распоряжении правительства РА инструменты стимулирования, а также возможности их применения пока еще ограничены и нуждаются в пересмотре. В этой связи нами предложен механизм, с помощью которого можно определить инвестиционные риски и на их основе провести реформы, направленные на улучшение инвестиционной среды.

Ключевые слова: инвестиционная среда, концептуальный подход, иностранные инвестиции, инфраструктура, реформы, экономика, основанная на знаниях, промышленность, капитал.

REGARDING THE ISSUE OF CONCEPTUAL APPROACHES TO THE INVESTMENT CLIMATE

KHACHATUR TADEVOS IGITYAN

Ph.D. Student, Chair of Finance

Armenian State University of Economics

Abstract

In Armenia, there is a consistent policy of stimulating investment through the implementation of the "open door" policy. However, incentive tools that are currently available at the disposal of the government of the Republic of Armenia, as well as the possibilities for their application, are still limited and need to be revised. In this regard, the author proposes a mechanism through which it is possible to identify investment risks and to carry out reforms aimed at the improving the investment environment based on them.

Keywords: Investment climate, conceptual approach, foreign investment, infrastructure, reforms, knowledge-based economy, industry, capital.

ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՐՍԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ճշմարիտ է ներկայանում այն տեսակետը, թե այսօր գոյություն չունի և ոչ մի տեսական կամ էմպիրիկ հետազոտություն, որտեղ հեղինակները կարողանային տնտեսական ցիկլերի կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ հանգեին միանշանակ դատողությունների: Այսինքն՝ տնտեսական բոլոր ճգնաժամերի համար չի կարելի գծել նույն նկարագիրը: Դրանք տարբեր բնույթի տնտեսական գործընթացներ են՝ ինչպես տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում ծագող պատճառների, այնպես էլ դրանց ընդգրկումների և ինտենսիվության առումներով:

Գրականության մեջ կարելի է հանդիպել ճգնաժամերի դասակարգման շատ տարբեր մոտեցումների՝ մի դեպքում հարցին մոտենալով ճգնաժամի պրոբլեմատիկայի տեսանկյունից, մյուս դեպքում՝ դրսևորման ծավալների, մեկ այլ դեպքում՝ սոցիալ-տնտեսական համակարգում առկա հարաբերությունների կառուցվածքի կամ ծագման անմիջական պատճառների, մի չորրորդ դեպքում էլ՝ դրսևորման բնույթի, ժամանակի և մի շարք այլ գործոնների տեսանկյունից: Տնտեսագիտական միտքը ամեն անգամ անդրադարձել է այս կամ այն ճգնաժամի առանձնահատկություններին, որոնցում ուրվագծվում են ոչ միայն դրանց պատճառները, այլև իրենց ամբողջության մեջ տրվում դրանց դասակարգումները: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում ճգնաժամերի տեսաբան Մենտոր Բունիայանի առաջադրած մորֆոլոգիան, ինչը, ըստ էության, ճգնաժամերի՝ դրսևորման ձևերի և առանձնահատկությունների դասակարգման առաջին փորձն էր: Ինչպես վկայում է հեղինակը. «Չնայած ճգնաժամերի տարբեր տեսակները մեծամասամբ մեկ ընդհանուր գործընթացի մասնակի դրսևորումներն են, մինևույն ֆենոմենի տարբեր կողմերը, բայց դրանց ծագման ձևերը և հետագա զարգացումներն այնքան տարբեր են մեկը մյուսից, որ ինքնին կարիք ունեն դիտարկման առանձին - առանձին, ինչը թույլ կտա տեսնելու տնտեսական կյանքի պարբերական խախտումների ընդհանուր գծերը և հիմնական պատճառները»¹:

Բունիայանի մորֆոլոգիան իր ընդգրկումների մեջ շատ ավելի լայն է: Մույն հոդվածում դիտարկվում են առևտրական և բորսային ճգնաժամերը:

«Առևտրական ճգնաժամ» հասկացությունը առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Միմոնդ դը Միսմոնդին 1819 թ.-ին: Մինչ այդ խոսվում էր «առևտրական աղետների» մասին:

Առևտրական ճգնաժամի ժամանակ ապրանքները այնքան են արժեզրկվում, որ առևտրականների մեծ մասը սնանկանում են կամ ընկնում են շատ բարդ կացության մեջ՝ կապված վճարային պարտականությունների կատարման հետ: Վճարային պարտականությունների լիկվիդացման հետևանքով առաջացած տնտեսական գործունեության խաթարումը կարող է պայմանավորված լինել տարբեր պատճառներով:

Ապրանքային ճգնաժամի մասին խոսելիս՝ Բունիայանը դրանք տարանջատում է ըստ ապրանքների արժեզրկման ազդեցության ոլորտների, առանձնացնելով ապրանքների որոշակի խմբի կամ մասնակի և ապրանքների մեծ մասն ընդգրկող ճգնաժամերը: Մի շարք ապրանքների գների անկման պատճառը նա փնտրում է տնտեսական կյանքի այն գործընթացներում, որոնք կարող են փոփոխություններ առաջացնել առաջարկի և պահանջարկի պայմաններում: Որպես վերջիններիս փոփոխության նախապայմաններ կարող են լինել առատ բերքատվությունը կամ անբերրիությունը, բնական աղետները, ռազմական արշավները կամ ժողովրդական խլրտումները, որոնց հետևում է գնողունակության անկումը, ինչպես նաև առանձին ապրանքների՝ պահանջարկի և պաշարներին անհամապատասխան գների բարձրացումը, ինչը մի կողմից խրա-

¹ M.Bouniatian, Les crises économiques, Paris, 1922, p.51.

խուսելով արտադրությունը, իսկ մյուս կողմից կրճատելով սպառումը, ավելի է սրում պահանջարկի պայմանների և գների անհամապատասխանությունը:

Պահանջարկի և առաջարկի խզվածության հարցում առաջնությունը հատկացնելով առաջարկին, Մ.Բունիայանը միաժամանակ ավելացնում է, թե արդի ազգային տնտեսության բարդ կազմակերպությունը անհնար է դարձնում նախապես ստույգ պարզել առաջարկի պայմանները և դրանք համապատասխանության բերել պահանջարկի հետ: Այստեղից էլ դրանց միջև շեղումների և հավասարակշռվածության խախտվելու հավանականությունը: «Առևտրական ճգնաժամերի իրական պատճառը, - գրում է Բունիայանը, - ընկած է առաջարկի և պահանջարկի պայմանների հենց այդ նախնական խզվածության մեջ»¹, այսինքն ապրանքների քանակի ու գների, և սպառողների գնողունակության ու ցանկությունների անհամապատասխանության մեջ:

Մ.Բունիայանը առևտրական ճգնաժամերը հատկապես կապում է մեծածախ առևտրի հետ: Ի տարբերություն մանրածախ առևտրի, որտեղ գների տատնումները էական չեն, իսկ ապրանքային պաշարները հարմարեցվում են գնորդների ընթացիկ պահանջներին, մեծածախ առևտրում՝ կապված կոնյունկտուրայի փոփոխության հետ, առկա են գների մշտական տատնումներ և ապրանքների հսկայական պաշարներ, ինչը նպաստում է սպեկուլյատիվ գործունեությանը՝ ձեռք բերելով մեծ ազդեցություն թե՛ գների, և թե՛ առևտրական գործունեության վրա ընդհանրապես՝ խորացնելով անհամապատասխանությունը գների և իրական պայմանների միջև և կործանարար հետևանքներ թողնելով առևտրի վրա:

Ընդհանրապես սպեկուլյատիվ գործունեությանը նպաստող նախադրյալները բազմաթիվ են²: Չանդրադառնալով դրանցից յուրաքանչյուրին, Բունիայանը ուշադրությունը սևեռում է վերելքի և դրան նախորդող դեպրեսիայի փուլի վրա, երբ մարդիկ, հայտնվելով անելանելի վիճակում, ձեռնարկում են ցանկացած շահավետ թվացող գործարք, դյուրահավատորեն տրվելով ապագայում սպասվող «փայլուն կոնյունկտուրայի» ակնկալիքին: Տնտեսական ակտիվության այս փուլում նոր շուկայի ստեղծումը շատ հաճախ «գերվաճառքի» առիթ է տալիս: Գերազանհատվում է ոչ միայն սպառողների գնողունակությունը, այլև անտեսվում է ընդհանուր առաջարկը, տեղական ճաշակն ու ապրանքների պիտանիությունը: Այսպիսի անշրջահայացությունը դառնում է շուկայի գերլցման պատճառ՝ գներն իջեցնելով անչափ ցածր մակարդակի*։ Բունիայանը այս առնչությամբ բերում է մի հետաքրքրական օրինակ. թե ինչպես շուկայից օգտվելու շտապողականությունը հանգեցրել էր նրան, որ բրազիլական շուկայի բացման ժամանակ (1808թ.-ին) մի սպեկուլյանտ հաջողացրել է այդ արևադարձային երկիր ուղարկել մեծ քանակով չմուշկներ:

Նշելով տնտեսական գործունեության շարժման ցիկլային բնույթը, մասնավորապես դեպրեսիայից վերելքի փուլին անցման շրջանը, Բունիայանը ընդգծում է սպեկուլյացիոն մթնոլորտի տարածման հնարավորությունը տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում, բայց և այնպես որպես սպեկուլյացիայի համար «բարենպաստ հող» դիտում է առևտրի ոլորտը: Սովորաբար այստեղ արդյունաբերության աշխուժացման հետ մեկտեղ չափազանց բարձրանում են գները: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն այն ապրանքներին, որոնց վրա սկզբնապես ուղղված է եղել բարձրացումը: Ապրանքային գների փոխկապակցվածության և սպեկուլյանտների ջանքերի շնորհիվ, այն տարածվում է գրեթե բոլոր ապրանքների վրա: Սովորաբար նման իրավիճակում՝ կապված արտադրության ընդլայնման ձգտման հետ, վարկային լարվածությունից խուսափելը դառնում է գրեթե անհնար: Առաջարկը սկսում է գերազանցել պահանջարկին: Ապրանքային պաշարները գնալով մեծանում են: Նոր գործարքներից սկսում են խուսափել: Վարկը ի վիճակի չի լինում երկար ժամանակ դիմադրելու գների անկմանը: Ազատ կապիտալները սպառվում են: Փոխատվական դրույթը բարձրանում է: Աշխուժացման կարճ ժամանակաշրջանից հետո ազգային տնտեսության բոլոր ոլորտներում ի հայտ են գալիս խանգարումներ: Գների

¹ M.Bouniatian, Les crises économiques, Essai de morphologie et théorie des crises économiques périodiques, Paris, 1930, p.80.

² Նկատենք, որ սպեկուլյացիային նպաստող Բունիայանի նշված պայմաններից Դ.Բեսոմին առանձնացնում է կապիտալի կուտակումը (այդ մասին տե՛ս Daniele Besomi, Mentor Bouniatian on cycles and equilibrium, Structural Change and Economic Dynamics, March 2007, p.20):

* Նման օրինակների մասին (ԱՄՆ-ում և Եվրոպական մայրցամաքում) տե՛ս M.Bouniatian, Handelskrisen in England, 1908, էջ 200-245.

անկումը, կործանելով վատահույությունը վճարային պարտականությունների կատարման հանդեպ, առաջ է բերում վարկային ճգնաժամ, էլ ավելի իջեցնելով գները: Վարկային ճգնաժամը, - նկատում է Բունիայանը, - տվյալ դեպքում տնտեսական դրության անկայունության արտահայտումն է: Այն ցույց է տալիս «տնտեսական գործունեության նոր և առողջ նորմերի ստեղծման» անհրաժեշտությունը: Այսպիսով, ապրանքային ճգնաժամերի ժամանակ գների անկումը եթե մի կողմից պայմանավորված է ապրանքային չափազանց մեծ պաշարներով և սպեկուլյացիայի հետևանքով ուռճացված գներով, ապա մյուս կողմից՝ արդյունք է վարկային և դրամական ճգնաժամերի: Բերելով տարբեր երկրների և տարբեր ժամանակների ճգնաժամերի ժամանակ տնտեսական ցուցանիշների վիճակագրական տվյալներ, Բունիայանը նկատում է, որ սնանկացումների թիվը՝ սովորականի համեմատ ավելանում է 2-ից 3 անգամ, իսկ առևտրի կարևորագույն առարկաների գները ճգնաժամերի ժամանակ սովորաբար իջնում են 30 – 40% և ավելի¹ :

Որպես գների չափազանց իջեցման հետևանքները (ունեցվածքի բաշխման մեջ մեծ փոփոխությունների և ձեռներեցության նվազման հետևանքով ստեղծված տնտեսական կյանքի անառողջ պայմանները) մեղմելու և ճգնաժամի սրմանը խոչընդոտելու միջոց, Բունիայանը առաջարկում է կենտրոնական բանկերի կամ կառավարության կողմից ապրանքների կամ այլ վստահելի միջոցների դիմաց փոխատվությունների տրամադրումը, ինչպես նաև հեղինակավոր ֆիրմաների ինտենսիվ վարկավորումը: Մ.Բունիայանը չանտեսելով այն հանգամանքը, որ նման օգնությունը կարող է թուլացնել առևտրականի մոտ պատասխանատվության զգացումը ու խրախուսել սպեկուլյացիան, ինչպես նաև չհամաձայնելով այն մտքի հետ, թե ձեռնարկատերերն իրենք են իրենց կորուստների և դժվարությունների միակ մեղավորները, նկատում է թե, կապված այն փաստի հետ, որ յուրաքանչյուր առանձին տնտեսություն սերտորեն կապված է կոնյունկտուրայի հետ, անհատական սխալները անդրադառնում են ամբողջ հասարակության վրա, և ճգնաժամերից տուժում են ոչ միայն սպեկուլյանտները, այլև ամենագույշ պահպանողական ձեռնարկատերերը: Այդ պատճառով, նա ընդհանրացնում է, թե անցյալ կորուստների դառը փորձի վրա հույսեր դնելն անիմաստ է, և մեկ ճգնաժամի «դասերը» ետ չեն պահում հաջորդի գրեթե կանոնավոր վերադարձից²:

Չնայած որ առևտրական ճգնաժամը, լինելով ընդհանուր տնտեսական ճգնաժամի մասնակի դրսևորում, վերջինիս բնորոշ ֆենոմենն է և բավականին նպաստում է դրա սրությանն, այնուհանդերձ, կապված տեղեկատվական միջոցների հսկայական հեղաշրջման, ապրանքների տեղափոխման արագացման ու էժանացման հետ՝ այն պահպանել է իր նշանակությունը միայն թույլ զարգացած երկրներում: Առաջավոր երկրներում գների փոփոխությունը չվերաճելով ճգնաժամի, մնում է լոկ որպես «տնտեսական կյանքի ինտենսիվության պարբերական տատանումների ցուցանիշ»: Նման երկրներում հաղորդակցության միջոցների հեղաշրջումը, ապրանքների տեղափոխման արագացումն ու էժանացումը շուկան դարձնում են առավել տեսանելի, շնորհիվ որի գների տեղական տարբերությունները հավասարվում են համաշխարհային շուկայի գներին համապատասխան, կրճատվում են գների տատանումների չափերը, իսկ տեղերում ապրանքների պաշարները հեշտությամբ համապատասխանության են բերվում պահանջմունքների հետ:

Ակներև է, ապրանքային ճգնաժամերը Մ.Բունիայանին ներկայանում են որպես գների ճգնաժամեր, որոնց անմիջական ազդեցությունը տնտեսության վրա ամենից առաջ արտահայտվում է ունեցվածքի և եկամուտների վերաբաշխման մեջ, ի վերջո իրենց բացասական ազդեցությունը թողնելով արտադրության վրա:

Հաշվի առնելով ճգնաժամի վտանգի մշտական առկայությունը, կարևոր է իմանալ ճգնաժամային իրավիճակների առաջացման նախանշանները, ինչպես նաև գնահատել վերջիններիս հաղթահարման հնարավորությունները: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում բորսային և սպեկուլյատիվ ճգնաժամերը:

Բորսային ճգնաժամերը՝ ֆիկտիվ կապիտալի չափազանց ուռճացմանն ուղղված արժեթղթերի շուկայի յուրօրինակ պատասխանն է:

¹ Այդ մասին տե՛ս M.Bouniatian, *Geschichte der Handelskrisen in England*”, München, 1908, p.308-312.

² M.Bouniatian, *Les crises économiques*, Paris, 1922, p.84.

Ֆոնդային բորսաների շնորհիվ, արժեթղթերը ձեռք են բերում յուրահատուկ շարժունակություն՝ որպես մասնավոր տնտեսական կապիտալի շրջանառության դյուրին միջոցի: Բաժնետոմսերի և փոխառությունների կուրսերի տատանումները՝ կապված բաժնետիրական ընկերությունների եկամտաբերության փոփոխությունների հետ, հանգեցնում են հասարակության գնողունակության ծավալների և բաշխման փոփոխությունների, հաճախ պատճառ դառնալով արտադրության ընթացքի և տնտեսական բարիքների շրջանառության խանգարումների: Բաժնետոմսերի և փոխառությունների կուրսերի անկումը կապիտալի կորուստ են ենթադրում ոչ միայն արժեթղթերի տերերի, այլև ամբողջ հասարակության համար, թեև «դա դեռ չի նշանակում տնտեսական ճգնաժամ այդ բառի տեխնիկական իմաստով»: Հանրային կապիտալի զգալի մասի կորուստը կամ հարստության և եկամուտների բաշխման տեղաշարժերը՝ որպես ֆինանսական և սոցիալական աղետներ, իրենց հետևանքների մեջ ավելի շատ բնորոշ են հանկարծահաս փոփոխություններին:

Տնտեսական կյանքի խափանումներն ամենից առաջ երևան են գալիս արժեթղթերի շրջանառության ոլորտում: Բացի բանկիրներից, արժեթղթերի առք ու վաճառքով զբաղվող պրոֆեսիոնալ անհատներից, վարկային հաստատություններից, արժեթղթերի կուրսերի տատանումներից շահելու ակնկալիքը այս գործընթացի մեջ է ներգրավում նաև բազմաթիվ պատահական սպեկուլյանտներին: Եվ քանի որ շատերը արժեթղթերի են վերածում ոչ միայն իրենց ունեցվածքի զգալի մասը, այլև պարտք վերցրած կապիտալը, որը հաճախ մի քանի անգամ գերազանցում է իրենց սեփական միջոցներին, կուրսերի նույնիսկ փոքր տատանումները՝ մեծապես փոփոխելով շահագրգիռ անձանց գույքային վիճակը, այս ոլորտում կարող են առաջ բերել ազգային տնտեսության սուր խանգարումներ, որոնց էլ հենց Բունիաթյանը անվանում է բորսային ճգնաժամեր¹: Ըստ որում, նա մեծ տեղ է հատկացնում ոչ թե այն ճգնաժամերին, որոնց պատճառը բորսայից դուրս է՝ կապված օրինակ՝ պետության կողմից վճարումների դադարեցման կամ բաժնետիրական կապիտալի վրա հիմնված արդյունաբերական հիմնարկների փլուզման հետ, այլ այն ճգնաժամերին, որոնք ծագում են արժեթղթերի շրջանառության հենց բուն գործընթացից: Խոսքը վերաբերում է սպեկուլյատիվ ճգնաժամերին, որոնց ժամանակ սպեկուլյատիվ չարաշահումները հանգեցնում են արժեթղթերի կուրսերի կտրուկ անկման, իսկ ինչ վերաբերում է ներդրված կապիտալի իրական արժեքի հնարավոր կրճատմանը, Բունիաթյանը վերջինիս տալիս է երկրորդային նշանակություն: Սպեկուլյացիան դիտելով որպես գնագոյացման գործոն, Բունիաթյանը նկատում է, որ եթե մի կողմից, այն ընդլայնում և աշխուժացնում է բորսային գործունեությունը, նվազեցնում է կուրսերի տատանման մեծությունը, ապա մյուս կողմից, կասկածելի արժեքներին տալիս է թվացող կայունություն՝ դրանց կուրսերը պահպանելով բավականին մեծ բարձրության վրա: Ակներև է, որ սպեկուլյացիոն ճգնաժամերի ուսումնասիրման հարցում ուշադրություն է սևեռվում բորսային սպեկուլյացիայի վնասակար դրսևորումների վրա՝ որպես սպեկուլյատիվ ճգնաժամերի հիմքի:

Անդրադառնալով սպեկուլյատիվ ճգնաժամերի ժամանակ ի հայտ եկող իրարանցմանը, Բունիաթյանը նկատում է, որ վերջինիս հետագա աշխուժացման զարգացման համար գոյություն ունի հատկապես բարենպաստ տնտեսական կյանքի որոշակի ժամանակաշրջան: Խոսքը վերաբերում է տնտեսական ցիկլի դեպրեսիայի փուլին հետևող աշխուժացմանը: «Սպեկուլյատիվ տենդի» աշխուժացման հարցում հեղինակը առանձնացնում է դրան նպաստող երկու պայմաններ. առաջինը՝ կուրսերի հաճախակի և կտրուկ տատանումներն են, երկրորդը՝ մեծ քանակության ազատ կապիտալի առկայությունը, որի մի մասը տեղ է գտնում արդյունաբերությունում և առևտրում, իսկ մյուսը, կուտակվելով բանկերում, բավականին ցածր գներով առաջարկվում է ձեռնարկատերերին:

Քանի որ սպեկուլյատիվ ժամանակաշրջաններին սովորաբար նախորդում են բավականին ցածր փոխառվական դրույքները (ինչը Մ.Բունիաթյանը հիմնավորում է մի շարք փաստական տվյալներով)², նման իրավիճակում արժեթղթերի աճող պահանջարկը բարձրացնում է դրանց

¹ M.Bouniatian, Les crises économiques, Essai de morphologie et théorie des crises économiques périodiques, Paris, 1930, p.94.

² Ст' у М.А.Бунятян, Экономические кризисы, М., 1915, с. 51.

կուրսը, վերջինս դարձնելով սպեկուլյացիայի հարմար առարկա: Աճող իրարանցումը պետությանը և համայնքներին նոր փոխառությունների թողարկման առիթ է տալիս, ինչը սակայն պետությանը դրդում է օգտվելու կասկածելի վարկերից և պատճառ դառնում մի շարք սնանկացումների: Բունիաթյանը նկատում է, որ միջին և հարավ-ամերիկյան, ինչպես նաև հարավային և արևմտյան եվրոպական պետությունների սնանկացումների երկար շարքի ելակետը հենց սպեկուլյատիվ տենդով տարված եվրոպական բորսաների կողմից թողարկված փոխառություններն են:

Ի տարբերություն պետական փոխառությունների, բաժնետոմսերի թողարկումը կախված չէ արտաքին գործոններից և այն հանգամանքը, որ այս դեպքում թողարկումը ելնում է հասարակության պահանջներից, որը բաժնետոմսերում տեսնում է ազատ կապիտալի շահավետ ներդրման տարբերակ, հանգեցնում է սպեկուլյացիայի առավել մեծ չափերի: Բաժնետոմսերի կուրսը բարձրանում է 10-30 անգամ, սկզբնական կապիտալի արժեքը գերազանցելով նույնիսկ մինչև 60-90 անգամ: Ընդ որում, բաժնետոմսերի շուկայական արժեքը ձևավորվում է՝ ելնելով ոչ այնքան բաժնետոմսերի իրական, որքան սպեկուլյատիվ արժեքից, քանի որ վերջիններս կարող են այլ սպեկուլյանտների կողմից իրացվել առավել բարձր կուրսով: Որպես մատչելի և հեշտ վաստակի միջոց, սպեկուլյացիան բորսային իրարանցման մեջ է ներգրավում տնտեսական հարցերում անփորձ նորանոր մարդկանց: Բունիաթյանը զուգահեռներ գծելով ապրանքային և բորսային սպեկուլյացիաների միջև և նշելով երկուսում առկա նման երևույթները, այնուհանդերձ շեշտում է վերջինիս առավել ինտենսիվ բնույթը՝ կապված բորսայում թղթերի վաճառքի կենտրոնացման, բորսայական գործարքների տեխնիկական պարզունակության և հանրամատչելիության, բանկերի աջակցության և մի շարք այլ երևույթների հետ: Ապրանքային սպեկուլյացիան, ի տարբերություն բորսայինի, հիմնականում ներգրավում է միայն տվյալ ոլորտի անձանց: Սակայն տնտեսական կյանքը ցուցադրում է երկակի դրսևորումներ: Սպեկուլյատիվ ժամանակահատվածները բարենպաստ պահեր են բազմաթիվ նոր բաժնետիրական ձեռնարկությունների հիմնման համար: Սակայն, եթե մի կողմից, ստեղծվում են մեծ բաժնետիրական կապիտալ պահանջող նոր օգտակար հաստատություններ, ապա մյուս կողմից՝ բաժնետիրական տենդը բազմաթիվ անհիմն բաժնետիրական ընկերությունների ստեղծման առիթ է տալիս, որոնց միակ նպատակը բորսային խաղերի միջոցով հարստացումն է¹: Նման ձեռնարկությունները (այսպես կոչված «Bubbles» օձառի պղպջակներ ձեռնարկությունները) հաճախ կասեցնում են մյուս, առավել լուրջ հիմնարկների ստեղծումը, խանգարում նրանց զարգացմանը:

Բաժնետիրական տենդի հետևանքով կուրսային արժեքների հսկայական բարձրացումները, սպեկուլյացիոն ժամանակաշրջանի ամենաբնորոշ երևույթներից են: Անգլիայի տնտեսական պատմությունը հայտնի է այդպիսի ցայտուն օրինակներով, մասնավորապես նշելով 1720, 1824-1825, 1895 թվերի սպեկուլյացիաները, երբ բաժնետոմսերի շուկայական արժեքը մոտ 4-7 անգամ գերազանցում էր անվանական արժեքին²: Նման սպեկուլյացիաները սովորաբար տևում են մի քանի ամիս: Սպեկուլյացիան, գրում է Բունիաթյանը, իր մեջ կրում է սեփական կործանման պատճառները: Բաժնետիրական ընկերությունների կողմից կապիտալային և դրամական շուկաներին ներկայացվող պահանջները բարձրացնում են փոխատվական դրույքը: Փողի թանկացումը խաթարում է բորսային սպեկուլյացիան, լիկվիդացվում են բազմաթիվ վարկային գործարքները: Սպեկուլյացիոն մոլուցքի թուլացումը և արժեթղթերի առաջարկի մեծացումը նպաստում են վերջիններիս կուրսերի անկմանը: Կարծես տեղի է ունենում «համընդհանուր սթափություն»: Լավատեսությունը փոխարինվում է չափազանց մեծ հոռետեսությամբ, նույնիսկ վստահելի արժեքների կուրսերը ընկնում են իրենց եկամտաբերության մակարդակից ցածր: Առևտրական տների վճարունակության հանդեպ անվստահությունը պատճառ է դառնում վարկային ճգնաժամի, որը սահմանափակվում է սպեկուլյանտների և նրանց հովանավորող

¹ M.Bouniatian, Les crises économiques, Paris, 1922, p.95.

² M.Bouniatian, Geschichte der Handelskrisen in England, München, 1908, pp.104, 252.

բանկերի և կապիտալիստների նեղ շրջանով: Այս ամենը հանգեցնում է արժեթղթերի կուրսերի անկանոն տատանումներին և վերջիններիս շրջանառության կազմալուծմանը¹:

Հարկ է նկատել, որ սպեկուլյատիվ ճգնաժամերի ազդեցությունը միանշանակ չէ: Եթե սպեկուլյանտների մի մասը, գլխավորապես բորսայական խաղի մեջ ներքաշված կողմնակի անձինք սնանկանում են, ապա ոմանք էլ, ժամանակին նկատելով վրա հասնող վտանգը, օգուտ են քաղում ստեղծված կոնյունկտուրայից:

Դիտարկելով բորսային ճգնաժամերի ազդեցությունն արտադրության վրա, Բունիայանը կարևորում է այն հանգամանքը, որ «չպետք է շփոթել նրանց ուղղակի հետևանքները ֆինանսական ճգնաժամի արդյունքների կամ հասարակական կապիտալի կորստի հետ, քանի որ դրանք բորսային ճգնաժամի առաջնային պատճառներն են»²: Ի տարբերություն ֆինանսական ճգնաժամի, որը բավականին ուժեղ է ազդում արտադրության վրա, բորսային ճգնաժամերը փոփոխություններ առաջացնելով միայն ունեցվածքի բաշխման մեջ և ժամանակավորապես խաթարելով բորսային շրջանառությունը, չեն փոխում հասարակական սպառման առարկաների կազմը և չափը, իսկ հետևաբար նաև նկատելի ազդեցություն չեն թողնում արտադրության վրա: Ըստ էության, նույնը կարելի է ասել սպեկուլյատիվ ճգնաժամերի համար: Եվ հենց այդ իմաստով էլ Բունիայանը ընդգծում է այն, որ չնայած սպեկուլյացիոն ոգին տարածվելով առևտրի և արդյունաբերության վրա ու միակողմանի ազդելով ազատ կապիտալի ներդրման վրա, այն ուղղում է դեպի սպեկուլյացիային ձեռնտու արտադրության ճյուղերը և նպաստում արտադրության և սպառման հավասարակշռման խախտմանը, բայց և այնպես կարճատև սպեկուլյատիվ տենդի պայմաններում արտադրության վրա վերջինիս ազդեցությունը սահմանափակ է: Այսպիսով, բորսային ճգնաժամերը քիչ են փոփոխում մինչ սպեկուլյատիվ ժամանակաշրջանը առկա արտադրության պայմանները և միանգամայն որոշակի է, որ ճգնաժամերի բոլոր տեսակներից որպես բաշխման ֆենոմենի առավել մաքուր ձև, Բունիայանը առանձնացնում է հենց բորսայինը, որը բոլորից քիչն է անդրադառնում արտադրության վրա:

Որպես տնտեսական ֆենոմենի մասնակի դրսևորում՝ սովորաբար բորսային սպեկուլյացիան տնտեսական կյանքի այլ ոլորտների սպեկուլյացիաների հետ միասին հանդես է գալիս որպես «էքստենսիվ տնտեսական գործունեություն»: Մակայն Բունիայանը, դիմելով տնտեսական պատմությանը, բերում է մի շարք օրինակներ, երբ բորսային սպեկուլյացիան հանդես է գալիս ինքնուրույն, որպես տնտեսական կյանքի միակ և գերիշխող անոմալիա³: Լինելով ամենաշարժունը և զգայունը՝ բորսային ճգնաժամերը առաջինն են զգում կոնյունկտուրայի փոփոխությունը և հանդես գալիս արտադրական գործընթացի խափանման թե գուշակը, և թե պատճառներից մեկը:

Հաշվի առնելով բորսային սպեկուլյացիայի տարածման լայն չափերը, Բունիայանը վերջինիս սահմանափակման համար առաջարկում է բնակչության լայն շերտերի տնտեսական ուսուցում և բորսայական շրջանառության, բաժնետիրական և հիմնադրական գործի օրենսդրական կարգավորում, ինչպես օրինակ՝ մինչև բաժնետոմսի լրիվ արժեքի վճարումը ժամանակավոր վկայականներով բորսային սպեկուլյացիաների սահմանափակում, բաժնետեղումների նվազագույն արժեքի բարձրացում, ինչը ոչ միայն կնեղացնի սպեկուլյացիայի շրջանակները, այլև անապահով խավին կպաշտպանի կորուստներից:

Եվ ի վերջո, ամբողջ հասարակության տեսանկյունից վերցրած, բորսային ճգնաժամը դա տնտեսության գործունեության վերադարձն է իրական դրությունն արտացոլող մակարդակին, ինչն էլ դառնում է նախապայման տնտեսության հետագա առողջացման համար: Այս իմաստով, Բունիայանի հայեցության մեջ ճգնաժամերի առանձին ձևերը բնութագրվում են որպես հասարակական տնտեսության մեկ ամբողջական օրգանիզմի խափանումների արտահայտություններ:

¹ М.Бунытян, ևշվ. աշխ., էջ 55-56.

² M.Bouniatian, Wirtschaftskrisen und Ueberkapitalisation, München, 1908, p.45.

³ M.Bouniatian, Geschichte der Handelskrisen in England, München, 1908, p.86-125.

Տե՛ս նաև՝ М.Вирт, История торговых кризисов в Европе и Америке, 1877, СПб., с. 4-7.

ՃԳՆԱԺԱՍԵՐԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՐՍԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ԼԻԱՆԱ ԿԱՐԼԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Տնտեսական ճգնաժամերի ֆենոմենը վաղուց դարձել է տնտեսագիտական մտքի քննության առարկան: Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում դրանց դրսևորման ձևերի սահմանազատման խնդիրը: Հոդվածում դիտարկվում են Մ.Բունիայանի ճգնաժամերի մորֆոլոգիայի առևտրային և բորսային ու սպեկուլյացիոն ձևերը՝ որպես հասարակական տնտեսության մեկ ամբողջական օրգանիզմի խափանումների արտահայտություններ, որոնց պատճառների վաղ ճանաչումը թույլ կտա ընդլայնել վերջիններիս, իսկ հետևապես նաև արտադրության ընթացքի և տնտեսական բարիքների շրջանառության խանգարումները ծնող պատկերացումների շրջանակները:

Բանալի բառեր. *կոնյունկտուրա, ճգնաժամ, գնդունակության անկում, տնտեսական ակտիվություն, սպեկուլյացիա, վճարային պարտականություններ, եկամուտների վերաբաշխում, վարկային լարվածություն, արժեթղթերի շուկա, փոխառական դրույք, բորսային գործունեություն:*

ТОРГОВАЯ И БИРЖЕВАЯ ФОРМЫ ПРОЯВЛЕНИЯ КРИЗИСОВ

ЛИАНА КАРЛЕНОВНА АРУТЮНЯН, *к.э.н., доцент*

научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Феномен экономических кризисов давно уже является предметом изучения экономической мысли. В связи с этим определенный интерес представляет проблема разграничение форм их проявления. В статье рассматриваются как торговая, биржевая, так и спекулятивная формы кризисов, которые с точки зрения М.Бунятяна являются выражением органического расстройтва хозяйственной системы, раннее распознавание которых позволит расширить рамки представлений о них, а, следовательно, также и причинах, поражающих нарушение процесса производства и обращения хозяйственных благ.

Ключевые слова: *конъюнктура, кризис, спад платежеспособности, экономическая активность, спекуляция, платежные обязательства, распределение доходов, кредитная напряженность, рынок ценных бумаг, ссудный процент, биржевая деятельность.*

FORMS OF MANAGING TRADE AND EXCHANGE CRISES

LIANA KARLEN HARUTYUNYAN, *Candidate of Sciences (Economics), Associate Professor*

Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

For a long time the phenomenon of economic crises has been a subject of study of the economic thought. In this regard, the distinction between the forms of their manifestations is of a certain interest. The article examines trade, as well as stock and speculative forms of the morphology of M. Buniatian's crises, as expressions of the disorders of a single general economic organization, the knowledge of which will expand the scope of representation that affects both the causes and the process of production and circulation disorders of economic goods in general.

Keywords: *Conjuncture, crisis, the decline in the solvency, economic activity, speculation, payment obligations, distribution of income, credit tension, securities market, lending interest rate, stock exchange activity*

ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տ.գ. դ.

*ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

**ՀԱՐԿԱՅԻՆ ԼԾԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱԶԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հարկային համակարգի և հարկային քաղաքականության արդյունավետությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, և հատկապես տվյալ երկրի տնտեսության զարգացման մակարդակով: Այդ առումով, Հայաստանի Հանրապետությունը կենտրոնացված կառավարման մոդելից ազատական տնտեսական հարաբերություններին անցման պայմաններում հայտնվեց մի իրավիճակում, երբ ի հայտ եկան մի շարք նոր հանգամանքներ, որոնք հանրապետությանը կանգնեցրին որոշակի դժվարությունների առաջ: Դրանց հաղթահարումը մինչև օրս ստեղծում է տարբեր խնդիրներ ինչպես հանրապետության տնտեսության զարգացման, այնպես էլ դրա կարգավորման լծակների ձևավորման գործընթացներում: Այդ առումով, հատկապես պետք է կարևորել հարկային համակարգի ձևավորմանը և հարկային քաղաքականության իրականացմանն առնչվող խնդիրների լուծումը, քանի որ դրանց հիմնական նպատակն է պետական գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների կենտրոնացումը և գործարար միջավայրի բարելավման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական առանձնահատկություններից անհրաժեշտ է նշել ռեսուրսային թերապահովվածությունը, երկրի ներդրումային գրավչության ցածր մակարդակը, ֆինանսական սուղ հնարավորությունները, շուկայական արդյունավետ կառուցակարգերի բացակայությունը, հաղորդակցության ուղիների սահմանափակությունը, արտաքին տնտեսական համագործակցության ցածր մակարդակը, մասնավոր տրանսֆերտներից մեծ կախվածությունը, արտաքին պարտքի զգալի ծավալը, կառավարման կորպորատիվ մշակույթի բացակայությունը, ինչպես նաև տարածաշրջանային չլուծված հիմնախնդիրը և այլն: Այսպիսի վիճակը, բնականաբար, թողնում է իր բացասական ազդեցությունը նաև հարկային համակարգի ձևավորման և հարկային քաղաքականության իրականացման հետ կապված գործընթացների վրա:

Նշված հիմնախնդիրներով հանդերձ, ցանկացած երկրում, այդ թվում ՀՀ-ում վարվող հարկային քաղաքականության և ձևավորված հարկային համակարգի գնահատման հիմնական բնութագրիչը՝ հարկային մուտքերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշն է, որը հանրապետությունում դեռևս բավականին ցածր է: Այս հանգամանքն, անշուշտ, պահանջում է հարկային վարչարարության կատարելագործմանն ուղղված համալիր քայլեր: Ընդ որում, դրանք պետք է լինեն փոխկապակցված և կրեն համակարգային բնույթ, քանի որ նույնիսկ արդյունավետ դրույքաչափերի կիրառման պարագայում հիմնականում հավասարակշռված և հիմնավորված վարչարարությամբ կարելի է հասնել հարկային համակարգի և հարկային քաղաքականության արդյունավետության:

Տնտեսության կարգավորման լծակների ոչ արդյունավետ լինելու հանգամանքը բնորոշ է հետխորհրդային գրեթե բոլոր հանրապետություններին, այդ թվում նաև Հայաստանին: Ակնհայտ է, որ հարկային համակարգի և հարկային քաղաքականության արդյունավետությունն էականորեն կախված է կոնկրետ երկրի գործարար միջավայրից: Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ երկրների համեմատությամբ իր գործարար միջավայրով որոշակի առումով գտնվում է ավելի բարենպաստ դիրքերում (աղյուսակ 1):

Գործարարության վարկանիշը ԵԱՏՄ երկրներում (2014-2015թթ.)¹

	Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ռուսաստան	Ղրղրզստան
2014թ.	45	57	77	62	102
2015թ.	35	44	41	51	67

Գործարար միջավայրի բարելավման առումով չափազանց մեծ է հարկային վարչարարության դերը: Այն, ըստ էության, կարող է ունենալ ինչպես խթանիչ, այնպես էլ արգելակող ազդեցություն գործարար միջավայրի զարգացման և տնտեսավարող սուբյեկտների ու պետության միջև գործընկերային հարաբերությունների հաստատման վրա: Այդ առումով, ներկայումս ՀՀ-ում հարկային քաղաքականությունն ուղղված է վարչարարության կատարելագործմանը և պետական եկամուտների կենտրոնացմանը: Այդ նպատակին հասնելու համար ՀՀ կառավարության կողմից մշակվել է համապատասխան ռազմավարություն, որով նախատեսվում է հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում, հարկային մարմինների գործունեության վերակազմակերպում, հարկային հսկողության ժամանակակից կառուցակարգերի ներդրում և այլն²:

ՀՀ-ում հարկային վարչարարության կատարելագործման նպատակով հարկային իրավախախտումների բացահայտման և քննության ուղղությամբ պետք է ապահովել հարկային մարմինների լիազորությունների հիմնավորվածության բարձր աստիճան: Մասնավորապես, արդյունավետ վարչարարությունը պետք է ենթադրի.

- հարկային իրավախախտումների համար համարժեք պատասխանատվության սահմանում,
- հիմնավորված ստուգումների անցկացում,
- գործուն լծակներով ստվերային տնտեսության ծավալների կրճատում,
- հարկային և իրավասու այլ պետական մարմինների միջև կոորդինացված փոխգործակցության կազմակերպում և այլն:

Հարկային վարչարարության լիազորությունների ծավալի և դրանց շրջանակի սահմանման ժամանակ պետք է որպես ելակետ ընդունել այնպիսի մոտեցում, որպեսզի հարկային մարմինների լիազորությունները լինեն բավարար անհրաժեշտ հսկողությունն իրականացնելու համար, միաժամանակ, չհանգեցնելով տնտեսավարող սուբյեկտների գործունեության անհարկի միջամտության: Ընդ որում, տեխնիկական առաջընթացին զուգընթաց վարչարարության լծակներով պետությունը տնտեսավարող սուբյեկտների հետ փոխհարաբերություններում չպետք է խոչընդոտի տնտեսության զարգացմանն, այլ պետք է նպաստի գործարար ակտիվության և տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հարկ է, սակայն նշել, որ տնտեսության կարգավորման հարկային լծակների կիրառման առումով դեռևս կան բազմաթիվ խնդիրներ, որոնց չլուծված լինելու հանգամանքն էականորեն սահմանափակում է արդյունավետության հասնելու հնարավորությունները: Չնայած ՀՀ կառավարության կողմից իրականացված մի շարք բարեփոխումների, այդուհանդերձ, տնտեսական զարգացման առանձին խնդիրներ մնում են դեռևս չլուծված: Դրանցից առավել հատկանշականներն են.

- հարկերի հավաքագրման ցածր մակարդակը,
- ստվերային տնտեսության մեծ չափերը,
- մաքսային սահմանի վրա առաջացող ԱԱՀ գերավճարները,
- օրենսդրության հաճախակի փոփոխությունները,
- արտոնությունների տրամադրման խնդիրները և այլն:

Նշված խնդիրները հիմնականում արդյունք են ստվերային տնտեսության: Բնականաբար,

¹ Doing Business 2015. Going Beyond Efficiency, p. 197, Doing Business 2016. Measuring Regulatory Quality and Efficiency, World Bank Group, p. 5.

² Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային վարչարարության 2012-2014 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին, 23.02.2012թ. N195-Ն որոշում:

որքան մեծ է հարկային բեռի ծանրությունը տնտեսությունում, այնքան մեծ կլինի նաև ստվերային տնտեսության շրջանակը: Հարկային բեռի և ստվերային տնտեսության միջև կապի ռեգրեսիայի հավասարումը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$\text{Ստնտ} = f(\text{ՀարկԲ, Այլ}) \quad (2)$$

որտեղ՝

Ստնտ-ը՝ ստվերային տնտեսության ծավալն է,

ՀարկԲ-ը՝ հարկային բեռի ծանրությունն է,

Այլ-ը՝ այլ գործոններ:

Ընդ որում, հաշվի առնելով նաև այն, որ ՀՀ-ում դեռևս առկա են ոչ համակարգված վարչարարություն, պետական ծախսերի անարդյունավետ կառավարում և բարձր հարկադրույքներ չի կարելի ենթադրել ստվերային տնտեսության կտրուկ փոքրացում: Դրա վկայություն կարելի է համարել նաև դիտարկված մոդելի փորձարկմամբ ստացված գնահատականները, քանի որ նշված հանգամանքներն իրենց արտացոլումն են ստացել ռեգրեսիոն հավասարման պարամետրերում և գործակիցներում: Ավելին, այդ գնահատականները ցույց են տալիս, որ հանրապետությունում իրականացված հարկային բարեփոխումներից գործնականում կարելի է սպասել միայն ստվերային տնտեսության ընդլայնման միտումների թեթևակի զսպում կամ էլ, լավագույն դեպքում, տնտեսական շրջանառության թափանցիկության աստիճանի որոշակի բարձրացում: Այլ խոսքով հարկային անբավարար վարչարարությունը և պետական ծախսերի անարդյունավետ կառավարումը կարող են դառնալ ստվերային տնտեսության ընդլայնման գործոն, ինչը բացառելու համար բարեփոխումները միաժամանակ պետք է ուղղված լինեն տնտեսական գործունեության թափանցիկության ապահովմանը և խախտումների համար պատասխանատվության խիստ միջոցների կիրառմանը: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ այստեղ գործում է նաև սովորույթի ուժը, համաձայն որի մարդիկ, ովքեր երկար տարիներ գործել են ստվերային դաշտում, դժվարությամբ կփոխեն իրենց գործելաոճը: Այդ առումով, կարևոր նշանակություն կունենա նաև հարկային մարմինների կողմից հարկային ռեգիստրի ստեղծումը, որն իրականացնելով անհրաժեշտ մոնիթորինգ, հասարակության համար պարբերաբար կհրապարակի համապատասխան տեղեկություններ հարկատուների գործունեության վերաբերյալ:

Հարկ է նշել, որ թափանցիկ գործունեությամբ առանձնացող հարկ վճարողների հարաբերական առավելությունը ստվերային հատվածում աշխատողի նկատմամբ կայանում է նրանում, որ այդպիսի տնտեսավարող սուբյեկտներն ավելի են հակված ներդրումային գործունեության իրականացմանը: Այդ իսկ պատճառով, չափազանց կարևոր է բարելավել հարկատուի համար ֆինանսական միջոցների հասանելիության ապահովումը: Այս առումով, կենտրոնական բանկը կարող է երաշխավորել առևտրային բանկերին, որպեսզի նրանք վարկավորման հարցում հիմնականում առավելությունը տան թափանցիկ գործունեություն վարող և պարտաճանաչ հարկ վճարողներ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտներին:

Ստվերային տնտեսության վրա հարկային համակարգի թույլ ներգործությունը շատ դեպքերում պայմանավորված է լինում ոչ թե վատ օրենսդրությամբ, այլ հարկատուների և հարկային մարմինների աշխատողների մտածելակերպով և կառավարման մարմինների նկատմամբ ձևավորված վերաբերմունքով: Այս ուղղությամբ դրական փոփոխությունները ևս կնպաստեն տնտեսության արդյունավետ գործունեության ապահովմանն ու զարգացմանը:

Հարկային կարգապահության և տնտեսության ստվերայնության վրա էական բացասական ազդեցություն ունեն գերավճարները: Հայտնի է, որ տնտեսավարող սուբյեկտներն ընդհանուր հիմունքներով հարկվող տարատեսակ ապրանքների ներմուծման պարագայում ստիպված են ՀՀ մաքսային սահմանում վճարել ԱԱՀ, ինչը ստեղծում է մի շարք խնդիրներ, հատկապես՝ նոր ստեղծված ձեռնարկությունների համար: Մի շարք երկրներում տնտեսության իրական հատվածում ներդրումներ կատարող սուբյեկտներին կառավարությունը տրամադրում է սուբսիդիաներ կամ համապատասխան արտոնություններ: ՀՀ-ում ֆինանսական սահմանափակ միջոցների պայմաններում կառավարությունը չկարողանալով իրականացնել նման ծրագրեր, փաստորեն, ստիպում է գործարարներին ԱԱՀ-ն վճարել մաքսային սահմանում: Ակնհայտ է, որ նրանց

համար ստեղծվում են լրացուցիչ, իսկ, երբեմն, նաև անհաղթահարելի դժվարություններ, որոնք էլ իրենց հերթին կտրուկ նվազեցնում են գործարար ակտիվությունը: Դա ավելի նկատելի է դառնում հատկապես այն դեպքերում, երբ ԱԱՀ-ի հարկումն իրականացվում է ըստ հայտարարագրված արժեքի: Այդպիսի դեպքերում կարող են ծագել կոռուպցիոն մեծ ռիսկեր, քանի որ ներկայացնելով ակնհայտ ցածր գներով ձևակերպված հայտարարագիր և մտնելով ոչ օրինական գործարքի մեջ, ձեռներեցը վճարում է էականորեն ցածր հարկ: Տվյալ երևույթն առկա է ոչ միայն առանձին գործարքի ժամանակ, այլև ստեղծում է սովերային շղթա մնացած բոլոր հարաբերություններում, ընդհուպ մինչև սպառումը: Այլ խոսքով, տնտեսավարող սուբյեկտը, խուսափելով ԱԱՀ-ի արդարացի վճարումից մաքսային սահմանում, իրացման ժամանակ նույնպես կխուսափի իրական վաճառքի գինն արտացոլելուց, ինչը կհանգեցնի կանխիկ ապօրինի դրամաշրջանառության, հետևաբար, նաև սովերային գործունեության: Ընդ որում, սովերային տնտեսությունն, իր հերթին, խաթարում է շուկայական գնագոյացման, տնտեսական մրցակցության հավասար պայմանների ապահովման, տնտեսության կարգավորման սկզբունքներն ու օրինաչափությունները և մեծապես նպաստում կառավարման համակարգի արդյունավետության անկմանը:

Ամփոփելով, պետք է նշել, որ պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման համար բազմաթիվ խնդիրների հետ միասին անհրաժեշտ է, առաջին հերթին, լուծել հարկային հարաբերությունների կատարելագործման և հարկային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները, որոնք, ըստ էության, կայանում են ՀՆԱ-ի նկատմամբ հարկային մուտքերի տեսակարար կշռի բարձրացման, ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության հաստատման, հարկային վարչարարության կատարելագործման և, որ ամենակարևորն է, հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման մեջ:

ՀԱՐԿԱՅԻՆ ԼԾԱԿՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ. դ.*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

Համառոտագիր

ՀՀ-ում հարկային լծակների ձևավորման առանձնահատկություններն ուսումնասիրելիս կարելի է եզրակացնել, որ պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման համար բազմաթիվ խնդիրների հետ միասին անհրաժեշտ է, առաջին հերթին, լուծել հարկային հարաբերությունների կատարելագործման և հարկային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները, որոնք, ըստ էության, կայանում են ՀՆԱ-ի նկատմամբ հարկային մուտքերի տեսակարար կշռի բարձրացման, ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության հաստատման, հարկային վարչարարության կատարելագործման և, որ ամենակարևորն է, հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման մեջ:

Բանալի բառեր. Հարկային համակարգ, սուվերային տնտեսություն, ձեռներեց, տնտեսական հարաբերություններ, մասնավոր տրանսֆերտներ, ՀՆԱ, հարկային վարչարարություն:

ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ НАЛОГОВЫХ РЫЧАГОВ В РА

ТИГРАН ВЛАДИМИРОВИЧ АРУТЮНЯН, *д.э.н*

ведущий научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

При исследовании особенностей формирования налоговых рычагов в РА можно заключить, что для повышения эффективности системы государственного управления наряду со многими проблемами необходимо в первую очередь решить проблемы совершенствования налоговых отношений и реализации налоговой политики, суть которых заключается в повышении удельного веса налоговых поступлений в ВВП, определении оптимального соотношения между прямыми и косвенными налогами, совершенствовании налогового администрирования и, что самое важное, повышении эффективности налоговой политики.

Ключевые слова: налоговая система, теневая экономика, предпринимательство, экономические отношения, частные трансферты, ВВП, налоговое администрирование.

THE PECULIARITIES OF FORMATION OF TAX LEVERAGES IN THE RA

TIGRAN VLADIMIR HARUTYUNYAN, *Doctor of Sciences (Economics)*

Leading Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

While studying the peculiarities of formation of tax leverages in the Republic of Armenia, it could be concluded that to improve the effectiveness of the public administration system among other issues, first of all, it is required to tackle the issues of improvement of tax relations and implementation of the tax policy, the essence of which is to increase the share of tax revenues in GDP, determine the optimal direct tax-to-indirect tax ratio, improve tax administration and, most importantly, increase the efficacy of the tax policy.

Keywords: Tax system, shadow economy, entrepreneurship, economic relations, private transfers, GDP, tax administration

ԱՆԻ ԵԳՈՐԻ ԳՈՍԵՓՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Յուրաքանչյուր պետության հարկային համակարգ արտահայտում է տնտեսության զարգացման առանձնահատկությունները: Աշխարհում չկան պետություններ, որտեղ հարկային համակարգերը լինեն նույնը, իսկ դա չի նշանակում, որ հարկային համակարգերն ու հարկային քաղաքականություններն իրականացվում են «կամայական» կամ էլ «այնպես, ինչպես ցանկանում են»¹:

Հարկային քաղաքականության իրականացման հիմնական լծակը հարկային վարչարարությունն է, որը շուկայական տնտեսության պայմաններում հարկային հարաբերությունները կառավարող, կարգավորող և դինամիկ զարգացող համակարգ է՝ հարկային մարմինների աշխատանքը կոորդինացնելու համար²:

Վերոնյայների համահունչ Ա.Բ.Աթքինսոնին նշում է, որ հարկային վարչարարության էությունը կարելի է ներկայացնել նաև ավելի լայն իմաստով: Իրականում բոլոր հարկերը, պարտադիր վճարները, տուրքերը մտնելով պետական գանձարան, ձևավորում են ֆինանսական այն գանգվածը, որը վերջին հաշվով, ըստ առաջնահերթությունների՝ տարբեր իմաստավորում է ձևավորում³: Այսպես, դա պետության անվտանգությունն է, որը որքան էլ աներևույթ, ոչ շոշափելի, նույնքան էլ հասարակության և երկրի զարգացման համար որոշիչ, կարևոր նախապայման է: Մեկ այլ դեպքում, դա գյուղատնտեսության ոլորտում սուբսիդիաներն են՝ միտված տեղական արտադրության զարգացմանը, դրա մրցունակության բարձրացմանը և գյուղացիական տնտեսությունների աջակցությանը, գյուղմթերքների գների իջեցմանը և այլն: Վերջապես, դրանք թոշակներն ու նպաստներն են, գիտության և մշակույթի, այլ ոչ նյութական արժեքների զարգացմանն ուղղված ծախսերը: Որքան հիմնավոր են նշված ծախսերը, որքան համարժեք են դրանք հարկատուների սպասումներին, այնքան բարձր է վստահությունը պետության հանդեպ, հետևաբար, ավելի արդյունավետ կարելի է գնահատել բուն հարկային վարչարարությունը սլյալ երկրում:

Համաձայն Օ. Ա. Միրոնովայի, Ֆ.Ֆ. Խանաֆևի՝ հարկային վարչարարությունը հաղես է գալիս որպես պետական կառավարման համակարգում հարկային մարմինների կողմից հարկերի հավաքագրման և դրանց տեղաբաշխման գործընթաց⁴: Ավելին՝ հարկային վարչարարության հիմնական նպատակը հարկային ծառայողների կողմից պետական բյուջեում առավելագույն հարկային եկամուտների հավաքագրումն է:

Վ.Ա.Կրասնիկցկու բնորոշմամբ՝ հարկային վարչարարությունը հարկային հարաբերությունների կառավարման համակարգ է, որի հիմնական նպատակը հարկային հարաբերություններում հարկային հաշվառման և վերահսկողության նոր ձևերի մշակումն է⁵:

Իր հերթին Դ.Գ. Բուրցևը հարկային վարչարարությունը դիտարկում է որպես պետական քաղաքականության կառավարման համակարգ, որը ներառում է հարկային եկամուտների կանխատեսման, հարկային դրույքաչափերի օպտիմալացման, հարկային ներուժի բացահայտման սկզբունքները⁶:

Դեռևս 2002թ. ստեղծվել է հարկային վարչարարության ֆորում (Forum on Tax Administration, FTA), որտեղ տարբեր երկրներ համատեղ քննարկում են և առաջարկում հարկային վարչարարու-

¹ Буздалина О. Б. Усиление налогового администрирования // Все о налогах. 2004. № 5.

² Арутюнов А. А. Налоговое администрирование обеспечения своевременности поступления налоговых платежей М., 2006.

³ Atkinson, A. B., Thomas Piketty, and Emmanuel Saez. “Top Incomes in the Long Run of History”. In Top Incomes: A Global Perspective. Edited by A. B. Atkinson and Thomas Piketty. Oxford: Oxford University Press, 2010, p.64–75.

⁴ О.А.Миронова, Ф.Ф.Ханафеев, “Налоговое администрирование” Учебник, М.:2008, С.17.

⁵ В.А. Красницкий “Организация налогового администрирования”. Краснадар, 2010, С. 72.

⁶ Д.Г. Бурцев, “Основы налогового администрорования: базовый курс, СПб, 2008, С.26.

թյան նոր և առավել արդյունավետ լուծումներ¹ : Սա հնարավորություն է տալիս 45 ՏՀԶԿ անդամ և ոչ անդամ երկրներին փոխանակել տեղեկատվությունն ու փորձը, ինչպես նաև աղբյուր հանդիսացավ հարկային վարչարարական որոշակի հարցերի լուծման համար միջազգային լավագույն փորձի բացահայտման գործում: Արտերկրյա փորձը երկրներին հասանելի դարձնելու համար FTA-ն հրապարակում է հաշվետվություններ, որտեղ ամփոփվում են տվյալ ժամանակահատվածում քննարկումների և ուսումնասիրությունների արդյունքները:

Պարզաբանման համար ներկայացնենք ՏՀԶԿ անդամ երկրների կողմից հարկային վարչարարության վրա կատարվող ծախսերը տարեկան կտրվածքով²:

Աղյուսակ 1

Հարկային վարչարարության վրա կատարած ծախսերը ՏՀԶԿ անդամ երկրներում և Հայաստանում³

Երկիր	Իրականացված բոլոր միջոցառումների արժեքը (մլն. ԱՄՆ դոլար)
Դանիա	2748
Շվեդիա	653
Ֆրանսիա	22478
Բելգիա	10337
Իտալիա	87132
Ավստրիա	2941
Գերմանիա	25240
Մեծ Բրիտանիա	23383
Էստոնիա	69
Կանադա	8941
Ճապոնիա	5747
Շվեյցարիա	92
Թուրքիա	6580
ԱՄՆ	61405
ՌԴ	11940
Հայաստան	160

Այսպես, ՀՀ-ում 2013թ.-ին հարկային վարչարարության վրա կատարվող ծախսերը կազմել են մոտ 64 մլրդ դրամ, որը մոտ 160 մլն ԱՄՆ դոլարին համարժեք է: Եթե այս ցուցանիշը համեմատենք այլ զարգացած երկրների հետ, ապա այն բավական փոքր է, սակայն հարկ է նշել, որ Էստոնիայում այս ցուցանիշը 69 մլն է, իսկ Շվեյցարիայում՝ 92 մլն: Այս երկրներում հարկային մուտքերը կազմում են համապատասխանաբար 7988 մլն և 180518 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ-ում 2500 մլն ԱՄՆ դոլար՝ ներառյալ սոց. վճարները: Բացի այդ, հարկային վարչարարության կատարելագործման համար Համաշխարհային բանկը 2012թ. տրամադրել է 12 մլն. ԱՄՆ դոլար վարկ ՀՀ հարկային վարչարարության կատարելագործման նախագծի շրջանակներում, որի հիմնական նպատակն է ՀՀ հարկային վարչարարության ժամանակակից համակարգերով ապահովումը, էլեկտրոնային հաշվետվությունների համակարգի ներդրումը, ինչը կնպաստի մրցակցային և արդյունավետ բիզնես միջավայրի ձևավորմանը:

Հարկային վարչարարությունն իրականացվում է հետևյալ գործառույթների միջոցով: Դրանք են՝

1. նորմատիվային,
2. օպերատիվ,
3. հիմնական,
4. օժանդակ:

¹ <http://www.oecd.org/tax/administration/>.

² Tax Administration 2013”, Comparative Information on OECD and Other Advanced and Emerging Economies, OECD publishing.

³ <http://www.pwc.com/gx/en/paying-taxes/assets/pwc-paying-taxes-2014.pdf>.

Հարկային վարչարարության նորմատիվային գործառույթը հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով, չափով և ժամկետում հարկային հաշվառման վարում և հարկերի համապարտադիր գանձումն է:

Օպերատիվ գործառույթի ժամանակ իրականացվում է հարկերի փաստացի հավաքագրում, որտեղ միաժամանակ հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև առաջանում են ֆինանսատնտեսական հարաբերություններ՝ հարկերի հաշվառման և գործարարության կարգավորման միջոցով: Այսինքն՝ հարկային վարչարարության օպերատիվ գործառույթի ժամանակ իրականացվում է հարկային եկամուտների կառավարումը՝ սույն ոլորտը բնութագրող օրենսդրա-իրավական բազայի մշակման և հարկային վերահսկողության միջոցով:

Ինչ վերաբերում է հարկային վարչարարության հիմնական և օժանդակ գործառույթներին, ապա առաջին դեպքում, իրականացվում է հարկ վճարողների գրանցում ու հաշվառում, ընթացիկ հարկային վերահսկողություն և հարկային ստուգումներ: Երկրորդի դեպքում՝ իրականացվում են հետևյալ գործողությունները՝

- հարկային վարչարարության իրավական կարգավորում՝ հիմք ընդունելով հարկային օրենսդրությունն ու օրենքները, որոնք կարգավորում են հարկային հարաբերությունները,
- հարկային քաղաքականության իրականացման գործում կադրային քաղաքականության արդյունավետության բարձրացում, որը ներառում է հարկային ծառայողների համալրումն ու վերապատրաստումը, ինչպես նաև մասնագիտական որակավորման բարձրացումը՝ շարունակական աստեսավորման միջոցով,
- հարկային օրենսդրության փոփոխությունների դեպքում հարկ վճարողների իրազեկումը,
- հարկային վարչարարության կազմակերպչական ու վարչարարական գործառույթի իրականացումը, որն իր մեջ ամփոփում է հարկային ծառայողների ներքին վերահսկողությունը, պետական եկամուտների կոմիտեում և հարկային տեսչություններում նյութատեխնիկական բազայի վերազինումն ու դրանց բարելավումը՝ նոր ծրագրերի ներդրման միջոցով: Օրինակ՝ տարբեր երկրներում հարկային վարչարարության առջև դրված են տարբեր խնդիրներ, որոնք պայմանավորված են նաև սույն ոլորտի առանձնահատկություններով: Այսպես, առանձնացվում են երկրներ, որոնք հարկային վարչարարության տեսանկյունից ունեն կազմակերպարարական բարդ կառուցվածք, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Ֆրանսիան, Իտալիան: Այդ երկրներում տարեկան հարկային եկամուտները կազմում են շուրջ 1 տրիլիոն ԱՄՆ դոլար, տարեկան ներկայացվում են ավելի քան 200 հարկային հաշվետվություններ, իսկ հարկային մարմնի ինստիտուտում աշխատում են շուրջ 17.000-100.000 հարկային ծառայողներ¹:


Համեմատաբար առավել ընդգրկուն հարկային համակարգ և հարկային վարչարարություն ունեն զարգացած երկրները՝ Ավստրալիան, Բելգիան, Դանիան, Պորտուգալիան, Ֆինլանդիան, Շվեդիան և Շվեյցարիան:

Այլ երկրներում հարկային համակարգն ու հարկային վարչարարությունը համատեղվում են կոռուպցիոն ռիսկերով, որտեղ գրանցված հարկ վճարողների թիվը փոքր է, փաստացի հավաքագրված հարկային եկամուտները պետական բյուջեում ունեն ցածր տեսակարար կշիռ, հարկային ծառայողները չեն գերազանցում 2000 մարդ: Այդ երկրներից են Կիպրոսը, Մալթան և հետանցումային երկրները²:

Ընդհանրացնելով հարկային վարչարարության սահմանումներն ու սկզբունքները, նպատակներն ու գործառույթները, նշենք, որ դրանք իրականացվում են հետևյալ կառուցակարգի միջոցով (զծապատկեր 1):

¹ Шарапова О.А. Понятие налогового администрирования: признаки, цели, принципы осуществления / О.А. Шарапова // Налоги и налогообложение, 2011, № 4.

² Шарапова О.А. Понятие налогового администрирования: признаки, цели, принципы осуществления / О.А. Шарапова // Налоги и налогообложение, 2011, № 4.



Գծապատկեր 1. Հարկային վարչարարությունը բնութագրող կառուցակարգը¹

Այսպես, հարկային համակարգի կառավարումն ու հարկային վարչարարություն հասկացությունները միմյանց փոխլրացնում են և մեկը մյուսից անկախ չեն կարող գոյություն ունենալ: Այսինքն՝ հարկային համակարգի կառավարումը պայմանավորում է հարկային վարչարարության արդյունավետությունը, և որքան այն բարձր է, այնքան հարկային մուտքերը կանխատեսելի և հավաքագրվող են, տնտեսվարող սուբյեկտները գրանցվում և հաշվառվում են հարկային մարմինների կողմից, հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև չեն առաջանում կոռուպցիոն հարաբերություններ: Ստացվում է, որ մեր կողմից մշակված հարկային վարչարարության որակական գնահատման մեխանիզմի կառուցվածքում յուրաքանչյուր տարր «շղթայական ռեակցիայով» ազդում է մեկը մյուսի վրա: Բացի այդ, գտնում ենք, որ այդ կառուցակարգի ներդրումը հանրապետությունում կնպաստի հարկային համակարգի կառավարման մակարդակի բարձրացմանն ու հարկային վարչարարության բարելավմանը: Այդ առումով, առաջարկում ենք կիրառել հետևյալ սկզբունքները՝

- հարկ վճարողների կողմից հարկային օրենսդրության պահպանում և հարկերի պարտավորությունների կատարում,
- հարկային մարմինների կողմից հարկային օրենսդրության իրականացում և վերահսկողություն,
- հարկային վերահսկողության և հարկային ստուգումների համակարգի շարունակական կատարելագործում՝ հարկ վճարողների և հարկային ծառայողների միջև փոխշահավետ մթնոլորտ ստեղծելու, հարկային եկամուտներ հավաքագրելու և գործարար ակտիվության աստիճանը բարձրացնելու համար:

Եթե վերոգրյալ որևէ սկզբունք շեղվում է իր նշանակությունից, առաջանում են ոչ ֆորմալ հարաբերություններ, սովերային տնտեսություն և բյուրոկրատական ռիսկեր, որոնք նպաստում են հարկային վարչարարության արդյունավետության նվազեցմանն ու հարկային համակարգի կառավարման «խեղաթյուրմանը»:

ՀՀ-ում տնտեսության զարգացման կարևոր նախապայմաններից է հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացումը: Ներկայումս պետության կողմից իրականացվող երկրորդ սերնդի բարեփոխումների առանցքը կառավարություն - մասնավոր հատված գործընկերության կայացումն է, ինչը պայմանավորված է նաև հարկային համակարգի բարելավմամբ: Ընդհանուր առմամբ, դասեր քաղելով անցյալից և հաշվի առնելով այս ասպարեզում առաջավոր երկրների ուսանելի փորձը, երկրի հարկային վարչարարությունը կատարելագործվում է:

¹ Գծապատկեր 1-ը կազմված է հեղինակի կողմից:

Ակնհայտ է, որ հարկային վարչարարության ոլորտում կայացվող որոշումներն ուղղված են պետության կողմից ընտրված տնտեսության գերակա ուղղությունների զարգացմանն ու գործարարության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: Ընդամին, հարկային քաղաքականության մեջ գերակշռում է որոշումների ընդունման գաղափարական կողմը, իսկ վարչարարության մեջ՝ կազմակերպական և իրականացման կողմը: Վերը նշված հիմնախնդիրները բազմիցս արծարծվել են ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյա առաջատար փորձագետների կողմից: Ինչպես Հայաստանի, այնպես էլ շուկայական տնտեսություն ձևավորող հետխորհրդային բազմաթիվ երկրների առանձնահատկությունները, ինչպես նաև գլոբալ ֆինանսական ճգնաժամից հետո տնտեսության զարգացման առջև կանգնած նոր մարտահրավերները պահանջում են նոր լուծումներ գտնել հարկային վարչարարության բնագավառում: Ներկայումս տնտեսագիտական գրականությունում չկա միասնական տեսակետ հարկային վարչարարության հասկացության հարցում:

Հարկային վարչարարության արդյունավետությունը պայմանավորված է տվյալ հասարակարգում գոյություն ունեցող ինստիտուցիոնալ միջավայրով, դրա կայացվածության մակարդակով: Իր հերթին, տնտեսվարման նոր պայմաններում ձևավորված ինստիտուցիոնալ միջավայրի կարևորագույն բաղկացուցիչներից է օրենսդրությունը, տվյալ դեպքում՝ հարկային վարչարարությանն առնչվող և այն կանոնակարգող օրենքները: Այս առումով, հարկային գործող օրենսդրությունն, ընդհանուր առմամբ, տեսականորեն նպաստավոր դրույթներ է պարունակում իր մեջ, որոնք կարող են միտված լինել տնտեսության զարգացմանը¹: Միաժամանակ, կան հանգամանքներ, որոնք ավելի բացասական ազդեցություն են թողնում տնտեսության վրա: Նախ՝ հարկերն առայժմ հավասարապես պարտադիր բնույթ չեն կրում բոլոր տնտեսվարողների համար: Կան, այսպես կոչված, արտոնյալներ, որոնք դրանցից խուսափում են և մյուսների համեմատ ավելի «մրցունակ» են դառնում²: Երկրորդ՝ այդ օրենքների հաճախակի փոփոխությունները երբեմն հանգեցնում են շփոթի՝ հասարակ տնտեսվարողի և արտասահմանյան ներդրողի մոտ: Ինչպես հարկերը, այնպես էլ մաքսերը պետք է լինեն տարբերակված /դիվերսիֆիկացված/: Կարծում եմ, այնքան էլ արդարացի չէ բոլոր ապրանքներից գանձել միևնույն չափի հարկեր: Խոսքն, առաջին հերթին ներմուծվող ժամանակակից սարքավորումների համար գանձվող բարձր հարկերն են, որոնք ուղղակի չեն խթանում արտադրության հիմնումն ու դրա հետագա արդիականացումը: Այս իմաստով, նպատակահարմար չէ նաև Հայաստանի մայրաքաղաքում և մարզերում նույն հարկային դրույքաչափերի կիրառումը, քանի որ գործ ունենք տարբեր առևտրաշրջանառության և տնտեսական աշխուժության հետ:

Ամփոփելով «Հարկային վարչարարության ձևավորման ուղղությունները» թեմայով հոդվածի վերլուծության արդյունքները, կարելի է եզրակացնել, որ տնտեսության զարգացման նախապայմաններից մեկը հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումն է՝ հարկային վարչարարության իրավական կարգավորման հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում: Քանի դեռ ՀՀ-ի հարկային համակարգում գոյություն ունեն կոռուպցիոն ռիսկեր, օրենքների տարրնթերցումներ և բացթողումներ ուստի հարկային քաղաքականության արդյունավետության մակարդակը նվազելու է: Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման համար առաջարկվել է ստեղծել փոխշահավետ համագործակցություն ուղղված հարկային համակարգի կառավարմանը, հարկ վճարողների գրանցմանը և հաշվառմանը, տնտեսվարող սուբյեկտների արհեստական սնանկության կանխարգելմանը, հարկային մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

¹ Оканова, Т.Н. Региональные и местные налоги: учебное пособие для вузов. Москва: ЮНИТИ: Закон и право, 2010, с. 97.

² Arena, Peter, O'Hare, John F. and Stavrianos, Michael P., "Measuring taxpayer compliance burden: A microsimulation approach", Proceedings of the 95th Conference on Taxation, 2003, National Tax Journal, pp. 333-341/.

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

ԱՆԻ ԵԳՈՐԻ ՀՈՍԵՓՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ-ում հարկային վարչարարության ձևավորման նախադրյալներին, որտեղ ուսումնասիրվել են հարկային վարչարարության էությունը, հարկային հարաբերությունների կառավարման գործընթացի առանձնահատկությունները: Ներկայացվել են հարկային վարչարարության սկզբունքներն ու գործառնությունները, ինչպես նաև տրվել է հարկային վարչարարության կառավարման գործընթացը: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ հարկ վճարողների և հարկային ծառայողների միջև հարկային եկամուտների հավաքագրման արդյունավետությունը պայմանավորված է հարկային վերահսկողության և հարկային ստուգումների իրականացման գործընթացներով:

Բանալի բառեր. Հարկային վարչարարություն, հարկային օրենսդրություն, ֆինանսատնտեսական հարաբերություններ, հարկային մարմին, հարկային եկամուտներ, պետական բյուջե, հարկային քաղաքականություն, հարկային ծառայող:

ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ

АНИ ЕГОРОВНА ОСЕПЯН

экономист I категории Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Статья посвящена направлениям формирования налогового администрирования в РА. В ней исследованы сущность налогового администрирования, особенности процесса управления налоговыми отношениями. Представлены принципы и функции налогового администрирования, а также процесс управления налоговым администрированием. В результате анализа выяснилось, что эффективность сбора налоговых доходов в рамках отношений между налогоплательщиками и налоговыми служащими обусловлена процессами налогового контроля и налоговых проверок.

Ключевые слова: налоговое администрирование, налоговое законодательство, финансово-экономические отношения, налоговый орган, налоговые доходы, государственный бюджет, налоговая политика, налоговый служащий.

THE PREREQUISITES SHAPING THE TAX ADMINISTRATION

ANI EGOR HOSEPYAN

*First Level Economist, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article describes the directions that the tax administration in the Republic of Armenia. The article studies the meaning of the tax administration, and characteristics of the process of managing tax relations. The author presents principles and functions of the tax administration, as well as the process of managing the tax administration. Based on the results of the analysis, the author figures out that the efficiency and effectiveness of the processes of collecting tax revenues, in the framework of relations between taxpayers and tax officers, are explained by the processes of tax control and tax inspections.

Keywords: Tax administration, tax law, economic and financial relations, tax authority, tax revenue, state budget, tax policy, tax officer

ՎՃԱՐԱԳԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Վերջին տարիներին տեղ գտած ճգնաժամային երևույթները դեռևս շարունակում են պահպանել համաշխարհային տնտեսությունում անկայունություն ստեղծող գործոնները, իսկ կիրառված տնտեսական քաղաքականության գործիքները սպասված արդյունքներ չեն ապահովում: Մասնավորապես՝ ներկայումս միջազգային շուկաներում տեղ գտնող ֆինանսական ակտիվների գների անկանոն տատանումները, երկրների կենտրոնական բանկերի կողմից կիրառվող կարգավորման հայեցողական մոտեցումները (բանկային հաշիվների սառեցում, արգելանքների կիրառում) խորացնում են անվստահությունը երկրում շրջանառվող վճարային գործիքների նկատմամբ: Մինչդեռ բանկային համակարգի ձևավորման գործում էական և վճռորոշ նշանակություն է ունեցել հենց վճարային գործիքների զարգացման ընթացքը:

Շատ մասնագետների դիտարկմամբ բանկերը ծագել են հենց առևտրական հարաբերություններում մասնավոր վճարային գործիքների զարգացման արդյունքում: Այսինքն, բանկերի նախատիպերը հենց այն անձանց գործունեության տեսակն է, որոնք մասնագիտացած էին մասնավոր վճարային գործիքների շրջանառության կազմակերպմամբ: Արդյունքում XVI-XVII դարերում, առևտրական գիլդաները մի շարք քաղաքներում (Վենետիկ, Հենույի, Միլան, Ամստերդամ, Համբուրգ, Նյուրնբերգ) ստեղծեցին մասնագիտացված Ժիրոբանկեր, հաճախորդ-վաճառող առևտրական հարաբերություններում անկանխիկ հաշվարկներ իրականացնելու նպատակով: Ուշագրավ է այն փաստը, որ այդ հաշվարկներն իրականացվում էին հատուկ դրամական միավորներով, որոնք արտահայտվում էին դրանցում պարունակող թանկարժեք մետաղների որոշակի կշիռներով, իսկ ազատ դրամական միջոցները տրամադրում էին պետությանը, քաղաքներին և արտոնություններ ունեցող արտաքին առևտրով զբաղվող խոշոր ընկերություններին¹:

Անգլիայում, օրինակ՝ բանկային համակարգը ձևավորվել է տասնվեցերորդ դարի կեսերին, ընդ որում առաջին բանկիրները կամ ոսկերիչներ էին կամ առևտրականներ: Առաջին բաժնետիրական բանկն Անգլիայում հիմնադրվեց 1694 թվականին և ստացավ «Չայլդ» անվանումը: Այս բանկը վարկավորում էր նաև Անգլիայի կառավարությանը, երբ պետությունը ֆինանսական միջոցների համալրման խիստ կարիք էր ունենում, սրանով էլ պայմանավորված այս բանկը կառավարության կողմից ստացավ փողի էմիսիա կատարելու մենաշնորհ, որոնք պարտադիր ընդունվում էին բոլոր վճարումների ժամանակ: Բացի դրանից, այն վերանվանվեց որպես Անգլիայի բանկ և ստացավ պետական փոխառությունների տեղաբաշխման իրավունք, ինչի արդյունքում էլ, առաջին անգամ աշխարհում ձևավորվեց բանկերի կողմից պետական պարտքի կառավարման համակարգը: 1844 թվականին Ռ.Պիլի ակտով, արդեն օրենսդրությամբ հաստատվեց Անգլիայի բանկի փողի էմիսիայի մենաշնորհը: Դրանով իսկ նախկինում շրջանառվող մասնավոր փողերը փոխվեցին նոր փողերով, որոնք 100 տոկոսով ապահովված էին ոսկով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1946թ.-ին Անգլիայի բանկը ազգայնացվեց և բացի փողի էմիսիայից, օրենսդրորեն նրան վերապահվեց նաև բանկերի նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունք: Այսպիսով, առաջին անգամ աշխարհում ձևավորվեց կենտրոնական բանկ և առևտրային բանկեր երկմակարդակ բանկային համակարգը:

Ավելին, ԱՄՆ-ում 1836-1866 թթ. բնորոշվում է որպես «Ազատ բանկային դարաշրջան» (Free Banking Era), իսկ փող թողարկող կազմակերպությունները ստացան «ոիսկային բանկեր» (wildcat banks) անվանումը²: Հատկանշական է, որ այդ ժամանակաշրջանում ԱՄՆ-ում շրջանառության մեջ էր դրված տարբեր մասնավոր էմիտենտների՝ նահանգների, մունիցիպալիտետների, մասնավոր բանկերի, խանութների, ռեստորանների, եկեղեցիների, երկաթուղիների և նույնիսկ առանձին անհատների կողմից թողարկված շուրջ 8000 տարբեր մասնավոր փողեր:

Սակայն նախորդ դարի կեսերից սրվեցին շուկայական գների անկայունության երևույթ-

¹ Под редакций проф. чл.-корр. РАЕН Е.Ф. Жукова, Банки и банковские операции, М.,Банки и биржи. ЮНИТИ, 1997. Ст. 6.

² http://www.mirprognozov.ru/prognosis/economics/bitcoin-russia/09_февраля_2016, 18:16

ները, որն արդյունք էր տնտեսությունում տեղ գտնող այնպիսի գործընթացների, ինչպիսիք էին՝

- ահագնացող գնաճային երևույթները, որոնք ցնցեցին ֆինանսական շուկաները,
- միջազգային պայմանագրերի և ավանդական ֆինանսական ինստիտուտների փլուզումը,
- շուկաների գլոբալիզացիան,
- մի շարք նոր զարգացող երկրների արագ ինդուստրացումը,
- տեղեկատվական հոսքերի արագ ստացումը, դրանց մշակումն ու կյանքի կոչումը:

Իրավիճակն ավելի սրվեց Բրետոն-Վուդսյան համաձայնագրի փլուզումից հետո: Ինֆլյացիոն վերը նշված գործընթացները շուկայում կարգավորելու նպատակով 1944 թվականի հուլիսին Բրետոն-Վուդս կղզում (ԱՄՆ), արժութային և ֆինանսական հարցերի կարգավորմանը նվիրված կոնֆերանսում, կնքվեց Բրետոն-Վուդսյան համաձայնագիրը, որին մասնակցում էին ՄԱԿԻ 44 անդամ երկրներ: Կոնֆերանսի առանցքային հարցերից էր «Միջազգային արժույթի հիմնադրումը» և «Միջազգային զարգացման բանկի ստեղծումը», ինչպես նաև միջազգային արժութային համակարգի ներդրումը: Համակարգի հիմքում դրված էր դոլարի, որպես առաջատար արժույթի ընդունման սկզբունքները, համաձայն որի դոլարի պարիտետը կազմում էր 35 դոլար մեկ ունցիա մաքուր ոսկու նկատմամբ, մնացած երկրների արժույթային պարիտետը ընդունվում էր դոլարով: Մտցվեց կոշտ արժույթային փոխարժեքների կիրառման և արժույթային շուկայի կարգավորման քաղաքականություն, այսինքն՝ սահմանվեց արժույթային փոխարժեքների տատանումների սահմանային թույլատրելի շեղումներ, երբ նկատվում էր սահմանային թույլատրելի չափերից ավելի շատ շեղումներ որևէ արժույթի համար, ապա տվյալ երկրի կենտրոնական բանկը, անմիջապես ինտերվենցիա էր անում շուկայում այդ արժույթից, մինչ այդ փոխարժեքի թույլատրելի սահմանների հասնելը: Համաձայնագիրն ուժի մեջ մտավ 1945թ.-ին: Համաձայնագրին միացան միայն 35 պետություններ, այսինքն՝ կոնֆերանսին մասնակցած երկրների 65 տոկոսը:

Սակայն 1971-73 թթ., վերը նշված հանգամանքների ճնշման տակ, ԱՄՆ-ը փոխեց իր քաղաքականությունը և անցավ լողացող փոխարժեքի կիրառմանը: Դրանով վերջ դրվեց Բրետոն-Վուդսյան համաձայնագրի գործունեությանը, որով էլ վերջ դրվեց ֆիքսված փոխարժեքների կիրառումը որպես միջազգային արժույթային շուկաների կարգավորող գործիքի, այսինքն՝ դրանով վերջ դրվեց նաև դոլարի շրջանառությանը որպես ոսկի: Այդ ժամանակվանից սկսած աշխարհի բոլոր փողերը դարձան ֆուդիցիկացված փողեր, այսպես կոչված «վստահության փողեր» կամ «ֆիատային փողեր»:

Այս պայմաններում փողի տեսությամբ զբաղվող աշխարհի առաջատար մասնագետները, մասնավորապես՝ Բ. Կլայմոնը 1974 թվականին¹ և Ֆ. Հայեկը 1975 թվականին², գրեթե միաժամանակ, բայց իրարից անկախ, նորից առաջ քաշեցին փողի ապագայնացման, այսինքն՝ պետությանը փողի էմիսիայի մենաշնորհից և բանկային համակարգի վերահսկողությունից զրկելու տեսակետը:

Հարկ է նշել, որ այդ մտտեցումը սկզբում միանշանակ չընդունվեց ոլորտի մասնագետների կողմից, սակայն այն առավել շրջադարձային զարգացում գտավ, երբ 1986 թվականին այս տեսակետին միացավ նաև փողի տեսությամբ զբաղվող աշխարհահռչակ տնտեսագետ, նոբելյան մրցանակակիր Միլտոն Ֆրիդմանը: Նա ոչ միայն փոխեց իր նախկին տեսակետը, այլև միացավ այն հեղինակների դիրքորոշմանը, ովքեր ոչ միայն ընդունում, այլ նաև հիմնավորում էին մասնավոր փողերի ներդրման արդյունավետությունը, դիտարկելով այն որպես արժույթի կայունություն ապահովող իրական հնարավորություն³:

Ըստ էության, հեղինակներն առաջ էին քաշում փողի շուկայի ձևավորման և դրա կայունության ապահովման սկզբունքորեն նոր համակարգ, համաձայն որի փողը դիտվում էր որպես սովորական ապրանք, որն արտադրվում է շուկայական եղանակով, հետևաբար դրա արտադրողներն էլ պետք է լինեն շուկայի մասնակիցները, իսկ դրա իրացումն էլ պետք է կազմակերպվի շուկայական մրցակցության կանոնների համապատասխան: Այսինքն՝ շուկայական մրցակցության արդյունքում պետք է ձևավորվի փողի գինը համապատասխան սպառողական արժեքի

¹ Klein B., 1974, The Competitive Supply of Money, Journal of Money, Credit, and Banking 6,423-453.

² Denationalization of Money -- IEA, 1976 .First published by the Institute of Economic Affairs, London, October 1976

³ Milton Friedman, Anna J. Schwartz, Has Government Any Role in Money? Chapter in NBER book Money in Historical Perspective (1987), Anna J. Schwartz (p. 289 - 314) Published in 1987 by University of Chicago Press

© 1987 by the National Bureau of Economic Research www.nber.org/chapters/c7507

հատկանիշներով, մտնելով շուկայական մրցակցության մեջ անորակ փողերը դուրս կմնան շրջանառությունից և կմնան միայն այն փողերը, որոնք լավագույնն են բավարարում փողի ֆունկցիոնալ հատկանիշներին և պահանջներին, հետևաբար տնտեսությունն էլ կլինի համեմատաբար կանխատեսելի:

Բնականաբար, այս տեսակետը սկզբնական շրջանում լայն տարածում չգտավ, քանի որ արժույթային շուկայում շրջանառվում էր, արդեն իսկ, յուրաքանչյուր երկրի կենտրոնական բանկի կողմից թողարկված ազգային արժույթը, որի փոխարժեքը որոշվում էր սինդիկացված դոլարով: Սակայն վերջին ֆինանսական ճգնաժամից հետո ձևավորված ներկա մակրոտնտեսական անկայուն միջավայրը, աշխարհաքաղաքական անորոշ զարգացումները, ֆինանսական շուկաների կարգավորողների կողմից կիրառվող հայեցակարգային և խստացված վերահսկողական մեխանիզմների կիրառումը փոխեցին իրավիճակը: Հատկանշական է, որ նույն ԱՄՆ-ում 2009 թվականին մի շարք քաղաքներում արդեն իսկ սկսեցին տպել իրենց սեփական արժույթը, որը շրջանառվում էր անկախ Ֆեդերալ պահուստային բանկային համակարգից: Չնայած այն հանգամանքին, որ մասնավոր փողերի թողարկումը շատ երկրներում ընդհանրապես օրենքով արգելվում է, որոշներում էլ թույլատրվում է, բայց դրանց շրջանառության նկատմամբ, ի տարբերություն ազգային արժույթի, կիրառվում են տարբեր հարկման ռեժիմներ՝ հիմնականում ավելացված արժեքով հարկման: Սակայն, այդուհանդերձ դրանք ներկայումս բուռն զարգացում են գտնում ամբողջ աշխարհում, էլեկտրոնային կամ վիրտուալ փողերի տեսքով, ինչին մեծապես նպաստում է զարգացող հզոր ինտերնետային կապի առկայությունը: Արդեն իսկ համաշխարհային արժույթային շուկայում շրջանառվում են շուրջ հազարավոր այդպիսի տարբեր փողեր, և դրանց թիվը դեռևս նվազման միտում չի արձանագրում: Ըստ դրանց տիպերի և թողարկողների կարելի է առանձնացնել երեք հիմնական խմբեր՝

- առևտրային բանկերի կողմից թողարկվող մասնավոր փողեր,
- իրավաբանական անձ հանդիսացող առանձին կազմակերպությունների կողմից թողարկվող մասնավոր փողեր,
- կրեպատվայուտաներ:

Առաջին խմբում ընդգրկված են հիմնականում՝ ազատ բանկային մրցակցության ոլորտում գործող, առևտրային բանկերի կողմից թողարկվող փողերը: Այդպիսի թողարկումը, փաստորեն, բացառում է փողի թողարկման մենաշնորհը կենտրոնական բանկերի կողմից, իսկ փողի զանգվածը ենթադրում է կարգավորման շուկայական գործիքներ, փողի սահմանափակ ապահովվածություն ստեղծող պահուստներով: Ընդ որում, փողի ապահովվածություն ստեղծող պահուստները այս դեպքում ձևավորվում են ինչպես ապրանքներով, այնպես էլ ֆիատային փողերով (վստահության փողերով):

Երկրորդ խմբում ներառված են, անբարենպաստ պայմաններում հայտնված կազմակերպությունների կողմից թողարկվող փողերը, որոնք թողարկվում են կտրոնների, սերտիֆիկատների ձևով սեփական արտադրանքի ձեռքբերման պայմանով, դրանց միջոցով, օրինակ, կարելի է վճարել աշխատավարձ, որոնք կարող են շրջանառվել որոշակի սահմանափակ խմբի կողմից և կատարել լիարժեք վճարամիջոցի գործառնություններ, ինչպես փողը:

Երրորդ խմբում ներառված են ամենահեռանկարային զարգացման միտումներ դրսևորող փողերը, կրեպատվայուտաները կամ վերտուալ փողերը: Աշխարհում առաջին այդպիսի փողը շրջանառության մեջ մտավ Բիտքոինների (Bitcoin) ձևով, որի հիման վրա ներկայումս շրջանառվում են արդեն հազարավոր տարատեսակ այդպիսի փողեր: Ըստ էության սա ցանցային համակարգ է, որի միջոցով կարելի է կատարել ցանկացած գործարք, ոչ միայն ապրանքային շուկաներում, այլ նաև ֆինանսական շուկաներում և նույնիսկ ֆոնդային բորսաներում: Ի տարբերություն իրական փողերի, սրանցից յուրաքանչյուրը չեն կրկնում մյուսներին և ունեն իրենց ուրույն հատկանիշները, ինչը բարձրացնում է դրանց պաշտպանվածությունը և բացառում է դրանց կրկնօրինակումը կամ զեղծարարությունը:

Ներկայումս շատ մասնագետների և երկրների կողմից ընդունվում է, որ մասնավոր փողերի կիրառման հեռանկարային զարգացումները նույնքան կարևոր են, որքան շուկայական համակարգի հետագա զարգացման նպատակահարմարությունն ընդհանրապես:¹

¹ 2015 s://bits.media/chto-takoe-bitcoin/

ՎՃԱՐԱՅԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԹԱՄԱՐԱ ՍԻՐԱԿԱՆԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*,
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոն

Համառոտագիր

Վերջին տարիներին երկրների կենտրոնական բանկերի կողմից կիրառվող կարգավորման հայեցողական մոտեցումները (բանկային հաշիվների սառեցում, արգելանքների կիրառում) խորացնում են անվստահությունը երկրում շրջանառվող վճարային գործիքների նկատմամբ, ամուր հենք ստեղծելով այլընտրանքային վճարային գործիքների ստեղծման համար: Հողվածում քննարկված են միջազգային վճարահաշվարկային համակարգում տեղ գտնող ժամանակակից զարգացումները, ուսումնասիրված են, բուռն թափով զարգացող այլընտրանքային վճարային գործիքների առաջացման տնտեսական հիմքերը և դրանց կիրառման հեռանկարները աշխարհի տարբեր երկրներում:

Բանալի բառեր. *վճարային գործիքներ, մասնավոր վճարային գործիքներ, ազատ բանկային համակարգ, ռիսկային բանկեր, սինդիկացված դոլար, ֆիատային փող, էլեկտրոնային փող, վիրտուալ փող, կրեպտովայրուտա:*

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ПЛАТЕЖНО - РАСЧЕТНОЙ СИСТЕМЫ

ТАМАРА СИРАКАНОВНА ОВАКИМЯН, *к.э.н, доцент*
Ереванского государственного университета

Аннотация

В последние годы дискреционные регуляторные подходы, применяемые центральными банками стран (замораживание банковских счетов, запреты на счета), углубляют недоверие к обратимым в стране платежным инструментам, создавая прочную основу для внедрения альтернативных платежных инструментов. В статье рассматриваются современные тенденции развития международной платежно-расчетной системы, экономические основы возникновения бурно развивающихся альтернативных платежных инструментов и перспективы их применения в разных странах мира.

Ключевые слова. *платежные документы, частные платежные инструменты, свободная банковская система, рисковые банки, синдицированный доллар, декретные деньги, электронные деньги, виртуальные деньги, криптовалюта.*

MODERN TRENDS OF DEVELOPMENT OF THE PAYMENT AND SETTLEMENT SYSTEM

TAMARA SIRAKAN HOVAKIMYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*,
Associate Professor, Yerevan State University

Abstract

In recent years, discretionary regulatory approaches applied by central banks in countries (freezing of the bank accounts, bans on accounts), deepen distrust with respect to the reversible payment instruments of the country, creating a solid basis for the introduction of alternative payment instruments. The article examines the current trends in development of the international payment and settlement system, the economic foundations for the emergence of rapidly developing alternative payment instruments and the prospects for their application in different countries of the world.

Keywords: *Payment documents, private payment instruments, free banking system, risky banks, syndicated dollar, fiat money, electronic money, virtual money, crypto currency*

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎԱՆ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նախկին Խորհրդային Միության գրեթե բոլոր հանրապետություններում պլանային տնտեսությունից շուկայի անցումը բնորոշվեց քաղաքական, ժողովրդագրական և այլ բնույթի սոցիալ-տնտեսական խորը ցնցումներով: Հայաստանի Հանրապետությունում այդ անցումն իրականացվեց առաձևակի բարդություններով և դժվարություններով: Այսպես, 1998 թ.՝ 1990 թ. համեմատ, տեղի է ունեցել արդյունաբերական արտադրության նկատելի անկում: Այն հատկապես մեծ էր 1992 թ., երբ նախորդ տարվա համեմատ արտադրության ծավալները կրճատվեցին մոտ երկու անգամ, որն ուներ իր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառները, որոնցից հիմնականներն էին՝

- տրանսպորտային կապուղիների (հիմնականում Ադրբեջանի կողմից՝ երկաթուղու) շրջափակումը,
- ԽՍՀՄ կազմալուծման հետևանքով կազմակերպությունների միջև տնտեսական կապերի խզումը (Խորհրդային Հայաստանի արդյունաբերական կազմակերպությունների մեծ մասը թողարկում էր ոչ թե վերջնական, այլ միջանկյալ սպառման արտադրանք),
- Էներգետիկ ճգնաժամը, որի հետևանքով բազմաթիվ կազմակերպություններ հայտնվեցին հարկադիր պարապուրդի մեջ և այլն:


Սկսած 1994թ.-ից ՀՀ-ում արձանագրվեց արդյունաբերության որոշակի աշխուժացում: 1994-1997 թթ. նախորդ տարվա համեմատությամբ արդյունաբերության աճի տեմպերը կազմեցին համապատասխանաբար 105.3, 101.5, 101.4 և 101.1%: Սակայն 1998թ.-ին 1997թ.-ի համեմատ, տեղի ունեցավ արդյունաբերական արտադրության աճի տեմպերի նվազում 2.5 տոկոսային կետով, որի հիմնական պատճառներից էր Ռուսաստանի Դաշնությունում 1998 թ.-ի կեսերից սկիզբ առած ֆինանսական (հատկապես՝ վճարային) ճգնաժամը, և, որպես հետևանք, ՀՀ խոշոր կազմակերպությունների մի զգալի մասի համար պատվերների և պահանջարկի կրճատումը կամ լրիվ բացակայությունը, քանզի այդ կազմակերպությունների արտադրանքը հիմնականում ուղղված էր դեպի ռուսական շուկա: Այսպիսի իրավիճակում տնտեսության արագ վերականգնման համար պահանջվում էին հսկայական ծավալներով ներդրումներ: Սակայն ՀՀ-ում շուկային անցման տարիների ներքին խնայողությունների չափազանց ցածր մակարդակը և տնտեսության ներքին հատվածում ձևավորված եկամուտների սակավությունը, դժվարացնում էին տնտեսական աճի ներդրումային ֆինանսավորումը միայն ներքին ռեսուրսների հաշվին, և այստեղ առանցքային դեր ու կարևորություն ստացան արտաքին, այսինքն օտարերկրյա ներդրումները: Վերջիններս մեծապես պայմանավորում են ցանկացած տնտեսության զարգացման միտումները, տնտեսական աճի տեմպերը և համաշխարհային տնտեսության հետ ինտեգրման աստիճանը: Այդ պատճառով էլ ներդրումների խթանումը դարձավ ՀՀ տնտեսական քաղաքականության միջուկը: Այս գործում հիմնական նպատակը օտարերկրյա ներդրողների համար խթանների ապահովումն էր, որը կնպաստեր ներդրումների ծավալների մեծացմանը և բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացմանը: Կարևորելով «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի դերը տնտեսական զարգացման գործընթացում արտասահմանի մասնակցությունը ներգրավելու մեջ՝ ՀՀ Կառավարությունը շեշտել է ներդրումների վճարող դերը տնտեսական աճն արագացնելու գործում և դրանցից ստացված օգուտների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը ՀՀ տնտեսության համար: Որպես կանոն, օտարերկրյա ներդրողները շահագրգռված են ներդրումներ կատարել այն ոլորտներում, որոնք մրցակցային են և արտահանման մեծ ներուժ ունեն: ՀՀ տնտեսության զբաղիչ ոլորտներ են ադամանդագործությունը (հատկապես 2005-2008թթ.-ին) տեղեկատվական տեխնոլոգիաները (SS), սննդի, լեռնահանքային արդյունաբերությունը, զբոսաշրջությունը, հեռահաղորդակցությունը: Հայաս-

տանի Հանրապետությունը մեծապես կախման մեջ է գտնվում համաշխարհային առևտրից, և զգալի ջանք է պահանջվում գրավելու օտարերկրյա ներդրողների ուշադրությունը: ՀՀ կառավարությունը որդեգրել է «բաց դռների» քաղաքականություն նպատակ ունենալով խրախուսել օտարերկրյա ներդրումները: Ըստ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի՝ օտարերկրյա կապիտալը կարող է անսահմանափակ մասնակցություն ունենալ հայկական կազմակերպություններում և պաշտպանված է օրենքով: «Հայաստանի Հանրապետության 2012-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում» նշվում է, որ զբաղվածության աճին ուղղված պետական շրջանակային քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը կշարունակի հանդիսանալ գործարար և ներդրումային միջավայրի անընդհատ բարելավումը, որը տեղի կունենա ներդրումային գործընթացը դյուրին դարձնելու և անհարկի պետական միջամտությունները էականորեն կրճատելու ճանապարհով: Ներդրումային միջավայրում ռիսկային բարձր մակարդակը օտարերկրյա ներդրումների նվազման պատճառ է հանդիսանում: Հայաստանի Հանրապետության հիմնական առավելությունը որակյալ աշխատուժի առկայությունն է, որի օգտագործումը ներդրողներին հնարավորություն կտա, զարգացած երկրների համեմատ ցածր աշխատավարձ վճարելով, ապահովել ցածր ինքնարժեք և գնային մրցունակություն՝ հատկապես արտաքին շուկայում¹: Տնտեսության որևէ ոլորտում առաջընթացը կարող է «չեզոքացվել» մեկ այլ ոլորտում առաջընթացի բացակայությամբ: Հարկային, մաքսային անկայուն քաղաքականությունը կամ վարչարարությունը կարող են սահմանափակել գործարարության ձևավորման նպաստավոր պայմանները և գործ սկսելու ընթացակարգերի պարզությամբ պայմանավորված աճը: Ստեղծված անբարենպաստ միջավայրը կարող է հանգեցնել ապրանքային երկակի շուկաների ստեղծման, որտեղ գերիշխող դիրք ունեցող գործարարները կօգտվեն գույքային իրավունքի պաշտպանությունից, հարկային ու մաքսային կողմնապահ գործելաճից, իսկ շուկա մուտք գործել ցանկացողները կարող են հայտնվել ոչ շահեկան իրավիճակում: Շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեության ցանկացած գործարարություն իր մեջ ներառում է մի շարք ընթացակարգերի պարտադիր իրականացում: Երբ ձեռնարկատերը մշակում է գործարար ծրագիր և փորձում անցնել դրա կենսագործմանը, առաջին արգելքները, որոնք պետք է հաղթահարի, բյուրոկրատական և իրավական ընթացակարգերն են: Տարբեր երկրներում նոր ձեռնարկատիրական գործունեության մուտքի կանոնակարգման եղանակներ ունեն որոշակի առանձնահատկություններ՝ կախված տվյալ երկրի սոցիալ-տնտեսական և իրավական դաշտի կարգավորման և զարգացվածության աստիճանից: Որոշ տնտեսություններում այս գործընթացները պարզ և մատչելի են: Այլ կերպ ասած՝ գործարարության մեկնարկման ընթացակարգերն այնքան ծանրաբեռնող են, որ ձեռնարկատերերը, խուսափելով ընթացակարգերի վարչարարական և ժամանակի ավելորդ ծախսերից, ստիպված են լինում դիմել այլ մեթոդների՝ գործունեությունն իրականացնել ոչ ֆորմալ ձևերով: Բացի այդ, գործարարության արդյունավետությունն ավելի հաճախ կախված է օրենսդրական և կառավարչական բազմաթիվ, հաճախ խճճված և բարդ, ինչպես նաև հաճախակի փոփոխվող որոշումներից:

Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» (Doing business) դասակարգումը գնահատում է այն կարգավորումները, որոնք ուղղակիորեն ազդում են գործարար միջավայրի զարգացման աստիճանի և տնտեսական աճի վրա՝ հնարավորություն տալով համեմատություններ իրականացնել հետազոտված (184) երկրների միջև: Հենց այս դասակարգման չափանշներն էլ կարող են հիմք հանդիսանալ ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների մուտքի խթանման կամ խոչընդոտման համար: Փորձելով վերլուծել «Գործարարությամբ զբաղվելու» 2016թ. ցուցանիշները՝ կարող ենք եզրակացնել, թե որքանով է գրավիչ ՀՀ տնտեսությունը օտարերկրյա ներդրողների համար, և ինչպիսի միտում ունի ՀՀ տնտեսությունում ներդրումների աճը: Համեմատական վերլուծությունը կատարենք նախորդ տարվա ցուցանիշների հետ: ՀՀ տնտեսությունը բնութագրող 10 ցուցանիշները, բացառությամբ 3 ցուցանիշի՝ ընկերության հիմ-

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 442-Ն որոշում:

նադրում (6-րդ տեղ՝ 4 կետով բարձրացում), հարկերի վճարում (103-րդ տեղ՝ 9 կետով բարձրացում), պայմանագրերի կիրարկում (112-րդ տեղ՝ 5 կետով բարձրացում), մյուս ցուցանիշները անկում են գրանցել, ինչը դրականորեն չի կարող անդրադառնալ ներդրումների խթանման վրա¹: Օտարերկրյա ներդրողների համար կարևոր այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են ներդրողների պաշտպանվածությունը, շինարարության համար թույլտվության ստացումը, միջսահմանային առևտուրը, անկում են գրանցել: Փորձելով համեմատել հարևան Վրաստանի հետ՝ կարող ենք նշել, որ ՀՀ-ն բիզնես վարելու դյուրինության աստիճանով և ներդրողների պաշտպանվածության ցուցանիշով զիջում է Վրաստանին՝ համապատասխանաբար 37-րդ և 8-րդ, 4-րդ և 2-րդ տեղեր: Ուսումնասիրելով օտարերկրյա ներդրումների վերաբերյալ 2007-2016թթ. վիճակագրական տվյալները՝ կարող ենք ասել, որ դրանց ներհոսքը նախաձգնաժամային հատվածում աճի միտում է դրսևորել՝ գագաթնակետին հասնելով 2008 թ. (1.1 մլրդ դոլար), սակայն, պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, հետագա տարիներին գրանցվել է օտարերկրյա ներդրումների ծավալների զգալի անկում՝ 2016 թ.-ին կազմելով ընդամենը 130.4 մլն դոլար (գծանկար 1):



Գծանկար 1. Օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերը 2007-2016 թվականներին (մլն ԱՄՆ դոլար)

ՀՀ-ում ներդրումների համար շահավետ ոլորտներն են հանդիսանում՝ բարձր տեխնոլոգիաների էլեկտրոնիկայի նախագծումը, հանքարդյունաբերությունը և մետալուրգիան, էլեկտրական էներգիայի համակարգերը, քիմիական արտադրությունը, թեթև արդյունաբերությունը, բանկային ծառայությունները, համակարգչային ծրագրային ապահովման մշակումը, սննդի արտադրությունը և փաթեթավորումը, զբոսաշրջությունը:

Թեև օտարերկրյա ներդրումների ներգրավման համար ստեղծված բարենպաստ պայմաններին, ՀՀ-ում առկա են ներքին և արտաքին խնդիրներ, որոնք խոչընդոտում են ՀՀ-ում ներդրումների ծավալների մեծացմանը: Այդ իսկ պատճառով վերլուծենք ՀՀ ներդրումային միջավայրը և ներդրումների ներգրավմանն ուղղված տնտեսական քաղաքականությունը, փորձենք առաջադրել ներդրումային միջավայրի և քաղաքականության արդյունավետության բարելավման ուղիներ, որոնք կընդլայնեն ՀՀ ներդրումների ներգրավման հնարավորությունները:

¹ Doing Business. Measuring Regulatory Quality and Efficiency. 2016.

Այդ նպատակով, նախ անդրադառնանք ներդրումների ներգրավմանը խոչընդոտող հիմնախնդիրներին.

- Քաղաքական և ռազմաքաղաքական կայունությունը: Քաղաքական և ռազմաքաղաքական կայունությունը գրեթե բոլոր հարցումներում ու վերլուծություններում կարևորության առումով ներդրումային միջավայրի գործոնների թվում միշտ առաջին տեղում է: Պոտենցիալ ներդրողների ներգրավման տեսանկյունից քաղաքական անկայունությունն առնվազն խրախուսող երևույթ չէ: Այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունը գտնվում է բարձր ռիսկային երկրների խմբում: ՀՀ-ի պարագայում քաղաքական ռիսկը պայմանավորված է հիմնականում արտաքին քաղաքական անկայունությամբ, որը դրսևորվում է Ադրբեյջանի և Թուրքիայի շրջափակմամբ, Վրաստանում և Հյուսիսային Կովկասում գոյություն ունեցող ազգամիջյան առճակատումների հետևանքով տրանսպորտային հաղորդակցության միջոցների անգործությամբ (հաճախ նույնիսկ գործողների երկարաժամկետ անգործությամբ): ՀՀ ներդրումային ռիսկը մեծացնող գործոն է կոռուպցիայի մակարդակը: 176 երկրների շարքում ՀՀ-ն կոռուպցիայի մակարդակով գտնվում է 113-րդ տեղում¹: Նման ցուցանիշը չի կարող խթանել ներդրումների ծավալների հետագա ավելացումը: Ստվերային տնտեսությունը նույնպես բացասական ազդեցություն է թողնում երկրի ներդրումային միջավայրի գրավչության վրա: Ըստ էության, վերը նշված գործոնները միմյանց հետ փոխկապակցված են, ուստի կարևոր է մշակել դրանց դեմ պայքարի միասնական ծրագիր:

- Ներքին շուկայի ծավալը: ՀՀ ներքին փոքր շուկան՝ բնակչության փոքրաթվությունը, և 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի ցածր մակարդակը, խոչընդոտ են հանդիսանում իրացման շուկայական ուղղվածություն ունեցող ներդրումների ներգրավման համար:

- Ռեսուրսների առկայությունը: Հայաստանի Հանրապետությունն աչքի չի ընկնում բնական ռեսուրսների (հատկապես վառելիքա-հումքային) հարստությամբ: Ներդրումների իրականացման իրական հնարավորություն կա պղնձի, մոլիբդենի, ոսկու և որոշ հազվագյուտ մետաղների արդյունահանման և վերամշակման բնագավառում: Մակայն վառելիքային հումքի արդյունաբերական պաշարների բացակայությունը տնտեսությունը կախվածության մեջ է պահում այդ հումքի ներմուծումից:

- Ենթակառուցվածքային խնդիրներ: Հայաստանի Հանրապետությունը, լինելով մի կողմից հումքային ռեսուրսներով աղքատ, մյուս կողմից՝ փոքր ներքին շուկա ունեցող երկիր, զգալի կախվածություն ունի հումքի ներմուծումից և ապրանքների արտահանումից, հետևաբար բարձր տրանսպորտային ծախսերը, որոնց հիմքում ընկած են տարածաշրջանում ռազմաքաղաքական ընդհարումների պատճառով հաղորդակցման ուղիների շրջափակումը և դեպի ծով ելքի բացակայությունը, ազդում են ՀՀ-ում արտադրվող ապրանքների՝ համաշխարհային շուկաներում մրցունակության վրա: Խնդիրներ են հարուցում նաև փոխադրումների իրականացման ժամկետները: Կարևոր են նաև կենսաթոշակային հիմնադրամների, բրոքերային կազմակերպությունների, ներդրումային հիմնադրամների, լիզինգային, խորհրդատվական և աուդիտորական ընկերությունների առկայությունը և արդյունավետ գործունեությունը, քանի որ դրանք կարող են դառնալ երկարաժամկետ ներդրումներ կատարելու որոշումների ընդունման համար կարևոր պայման:

- Իրավական դաշտ: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում (ընդունվել է 1994թ.-ին) ամրագրված են հետևյալ դրույթները.

- խստորեն սահմանափակվում են պետության իրավասությունները սեփականության ազգայնացման և բռնագրավման հարցում,
- թույլատրում է օտարերկրյա ներդրումներ կատարել տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում և կամայական ձևերով,
- ապահովում է հայկական ու միջազգային դատարաններում վեճերի կարգավորման հնարավորություն,
- թույլատրում է շահույթի ու սեփականության լրիվ հայրենադարձում,
- նախատեսում է մաքսային արտոնություններ,

¹ Corruption Perceptions Index 2016. www.transparency.org

➤ պաշտպանում է մտավոր սեփականությունը:

Այդուհանդերձ, ՀՀ-ում իրավական դաշտի հիմնական թերությունը օրենսդրական դաշտի անկայունությունն է, ենթաօրենսդրական ակտերի և օրենքների հստակ կիրառումն ապահովող անհրաժեշտ որոշումների ու իրավական այլ ակտերի պակասը:

• Աշխատանքային ռեսուրսներ: ՀՀ աշխատանքային շուկային բնորոշ հատկանիշները՝ աշխատուժի արժեքը, աշխատուժի կրթվածության և մասնագիտական պատրաստվածության աստիճանը, օտարերկրյա ներդրողների համար ամենագրավիչ գործոններն են: Մակայն ՀՀ սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով զգալի չափերի է հասել բնակչության, հատկապես՝ տնտեսապես ակտիվ ու որակյալ մասնագետների արտագաղթը: Վերջինիս նման տեմպերի պահպանման դեպքում կարող է էապես նվազել աշխատանքային ռեսուրսների զծով ներդրումային միջավայրի առավելությունը, և շատ կարևոր է պետության կողմից համապատասխան կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

• Կոռուպցիա և տնտեսության մենաշնորհացում: Կոռուպցիայի և տնտեսության մենաշնորհացման բարձր մակարդակը, ներդրումների ներգրավմանը խոչընդոտող գլխավոր պատճառներից մեկն է: Տնտեսության մենաշնորհացման բարձր մակարդակը հանգեցնում է մի շարք բացասական հետևանքների, որոնք խոչընդոտում են ՀՀ տնտեսական աճի ավելի բարձր տեմպերով զարգացմանը: Դրանցից կարող ենք առանձնացնել ապրանքների և ծառայությունների գների աճը, ինֆլյացիայի բարձր մակարդակը, կապիտալի և արժեթղթերի շուկայի թերզարգացածությունը, ՓՄՁ-ի թույլ զարգացածությունը, արտաքին շուկայում ցածր մրցունակությունը: Ներքին արտադրողները, չունենալով մրցակիցներ ներքին տնտեսությունում, շահագրգռված չեն կատարելագործել արտադրատեխնիկական զարգացումը, որն էլ հանգեցնում է արտաքին շուկայում նրանց մրցունակության անկման: Սա իր ազդեցությունն է թողնում համաշխարհային շուկայում ՀՀ տնտեսության մրցունակության վրա: Եթե այս գործընթացը երկար շարունակվի, ապա ՀՀ-ի արտադրանքի նկատմամբ հետաքրքրությունն արտաքին շուկայում աստիճանաբար կնվազի, և չի բացառվում, որ ժամանակի ընթացքում այն դուրս կմղվի արտաքին շուկաներից: Այս ամենի արդյունքում հանրապետությունը կարող է կորցնել իր նկատմամբ օտարերկրյա ներդրողների հետաքրքրվածությունը:

Այսպիսով, տնտեսության (և, հատկապես, բարձր շահութաբերություն ունեցող ոլորտները) մենաշնորհացման բարձր մակարդակը, սեփականության խիստ բարձր կենտրոնացվածությունը հանգեցնում են գործարարության ֆինանսավորման և ներդրումների ծավալների կրճատման:

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ներհոսքի ավելացման նախադրյալներ կարող են հանդիսանալ՝

- Հայաստանի Հանրապետության ներդրումային վարկանիշի բարձրացումը,
- օրենսդրական միջավայրի բարելավումը,
- ներդրումային ենթակառուցվածքների ստեղծումը և դրանց շարունակական կատարելագործումը:

ՀՀ-ում ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման առաջնահերթ միջոցառումներն են.

- առաձևացնել ներդրողների խմբերը և առավելագույնս հաշվի առնել յուրաքանչյուր խմբի առաձևահատկություններն ու նրանց նկատմամբ խրախուսման միջոցները,
- առաջավոր տեխնոլոգիաների ներդրման խրախուսումը դարձնել ներդրումների ներգրավման քաղաքականության մասը, հատկապես՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնավորեցման և օտարման դեպքերում,
- գործող ներդրողների համար բարձրակարգ հետններդրումային ծառայություններ մատուցել, քանի որ վերջիններիս դրական կարծիքը ՀՀ ներդրումային միջավայրի նկատմամբ նպաստում է ստացված եկամուտների վերներդրման ծավալների աճին ու կարևոր գործոն է պոտենցիալ ներդրողների ներգրավման համար,
- քաղաքական ռիսկերի հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու համար ձեռնարկել գործողություններ՝ ուղղված ներքին և միջպետական մակարդակով օտարերկրյա ներդրողների շահերի պաշտպանության համար իրավական դաշտի ստեղծմանը,

- ներկայացնել ՀՀ ներդրումային միջավայրի մասին ամբողջական տեղեկատվություն (անգլերենով և այլ լեզուներով (օրինակ չիներենով) օրենքների, շուկայական և այլ նյութերի վերլուծություն) գործող ու պոտենցիալ ներդրողներին,
- պետական մակարդակով առավել արդյունավետ ձևերով պայքարել մենաշնորհների գերիշխող դիրքի չարաշահումների դեմ,
- քայլեր մշակել՝ երկրում կոռուպցիայի մակարդակի նվազեցման ուղղությամբ: Կարծում ենք, որ այս խնդիրների իրագործումը հնարավորություն կտա ոչ միայն մեծացնել ներդրումների ծավալը, այլև բարձրացնել վերջիններիս արդյունավետությունը, որը կարևոր նախապայման է հանրապետության տնտեսական աճի տեմպերի ավելացման համար:

Վերջին տարիներին ՀՀ-ում օտարերկրյա ներդրումները դրսևորում են կրճատման միտումներ:

Օտարերկրյա ներդրումները կարևոր նշանակություն ունեն նաև ազգային արժույթի համախառն պահանջարկի ձևավորման, աշխատատեղերի ստեղծման կամ պահպանման, հանրապետությունը գիտելիքներով, փորձով, ղեկավարման հմտություններով հարստացման, արտադրական մշակույթի և նոու-հաուսների ներդրման համար: Նկատենք նաև, որ ներդրումները իրենցից ներկայացնում են միջազգային ընկերությունների կողմից ուղղակի կապիտալ ներդրումներ ազգային տնտեսության ոլորտներում: Հենց այդ պատճառով էլ կառուցվածքային քաղաքականության շրջանակներում և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ներդրումների նպատակահարմարությունը պետք է քննարկվի առանձին: Ներդրումների նկատմամբ այդպիսի մոտեցումը հիմնված է դրանց առանձնահատկությունների և մի շարք իրական ռիսկերի (վտանգների) վրա:

Նախ և առաջ, ներդրումները հաճախ ունենալով աշխարհաքաղաքական նպատակներ, ձգտում են վերահսկել երկրի ենթակառուցվածքները՝ որոշելով դրանց զարգացման ռազմավարությունը, ստացված շահույթի օգտագործման ուղղությունները, տարածաշրջանային միություններում երկրների ինտեգրման քաղաքականությունը: Հետևաբար, երկարատև հեռանկարում պետական տնտեսական քաղաքականության առումով կարող են առաջանալ լուրջ հիմնախնդիրներ: 2016 թվականի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների մաքուր պաշարներից 1.6 մլրդ դոլարը կամ մոտ 40%-ը բաժին է ընկել Ռուսաստանի Դաշնությունը: Այդ ներդրումների հիմնական մասը կատարվել է ՀՀ-ի ենթակառուցվածքներում՝ էլեկտրաէներգետիկա, բնական գազի փոխադրում և բաշխում, երկաթուղային տրանսպորտ, բջջային կապ և բանկային հատված: Ենթակառուցվածքների վերահսկման միջոցով ՌԴ-ը փորձում է ՀՀ-ն պահել իր շահերի ազդեցության գոտում: Այս տեսանկյունից ՀՀ-ն լուրջ հիմնախնդիրներ ունի Եվրամիության հետ հարաբերությունների զարգացման հարցում: Միաժամանակ, նկատելի է նշված ոլորտներում Ռուսաստանի Դաշնության ազդեցության նվազում, ինչը պայմանավորված է տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նոր իրողություններով և Արևմուտքի կողմից Ռուսաստանի Դաշնության մեկուսացման քաղաքականությամբ:

Երկրորդ, օտարերկրյա ներդրողները ձգտում են վերահսկել ընդունող երկրի բնական ռեսուրսների արդյունահանումը և դրանց տեղափոխումը համաշխարհային շուկաներ: Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հայտնի է, բնական ռեսուրսներով հարուստ երկիր չէ: Սակայն ՀՀ-ն համեմատաբար հարուստ է գունավոր մետաղներով՝ պղնձով, մոլիբդենով, ոսկով, ցինկով և այլ բնական պաշարներով: 2016 թվականին իրական հատվածում կատարված ուղղակի ներդրումների մոտ 1/3-ը բաժին է ընկել հենց հանքագործությանը: Այս ոլորտում հիմնական ներդրողներն են Մեծ Բրիտանիան, Լյուքսեմբուրգը, Կիպրոսը և մի շարք այլ երկրներ:

2016թ.-ին Հայաստանում իրականացրած օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերով առաջին տեղում է գտնվում Կիպրոսը՝ մոտ 80 մլն դոլար, երկրորդը Միացյալ թագավորություններն են մոտ 70 մլն դոլար, իսկ երրորդ տեղում գտնվում է Լյուքսեմբուրգը, որտեղից օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերը 2016թ.-ին կազմել են մոտ 65 մլն դոլար¹:

¹ Ազգային վիճակագրական ծառայության կայք. www.armstat.am

Երրորդ, ներդրումները ձգտում են մեծ ներքին շուկա ունեցող երկրներ, այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունը ներդրումների համար գրավիչ չէ: Սակայն, որոշ ոլորտներում երկրի բնակչիմայական և մարդկային առանձնահատկությունները կարող են գրավիչ դարձնել ներդրումների համար: Օրինակ, կոնյակի արտադրությունը ՀՀ-ում և դրա իրացումը ավանդական շուկաներում կամ ծրագրային ապահովման ոլորտը:

Գոյություն ունեն նաև ներդրումների հետ կապված այլ առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն երկրի ներդրումային քաղաքականության իրականացման ժամանակ: Այսպես, առանձին դեպքերում ներդրումները կատարվում են պարզապես շուկաներ գրավելու համար: Այս դեպքում ներդրման օբյեկտ ճանաչվածակտիվը կարող է ձեռք բերվել բայց հետո դրա գործունեությունը դադարեցվել: Որոշ դեպքերում էլ, նույնիսկ եթե ազգային ակտիվը գնած օտարերկրյա կազմակերպությունը լավ է աշխատում, երկիրը, միևնույն է, երկարաժամկետ հատվածում աղքատանում է, եթե կարճաժամկետ հատվածում ներդրումները օգնում են բարելավել, վճարային հաշվեկշռի հավասարակշռությունը, ապա երկարաժամկետում, շահույթի արտահանմամբ պայմանավորված, դրանք կարող են դառնալ հավասարակշռության խախտման գործոլ և վճարային հաշվեկշռի ակտիվի տարրից վերածվել պասիվի: Այդպիսով, անհրաժեշտ է գնահատել մի կողմից կապիտալի ներկա հոսքը, մյուս կողմից միջոցների ապագա արտահոսքի հնարավոր մեծությունը: Կարևոր է նաև պարզել այն քաղաքական մեթոդները և միջոցներ ձեռնարկել կանխելու այնպիսի ձևերը, որոնք խթանում են շահույթի արտահանումը:

Ինչպես տեսնում ենք, ներդրումների հոսքը կանխորոշող վերը նշված առանձնահատկությունները ՀՀ-ին սահմանափակ հնարավորություններ են ընձեռում: Մյուս կողմից՝ ներդրումները շատ կարևոր են ՀՀ-ի համար՝ տնտեսական աճի ապահովման տեսանկյունից: Հայաստանը, ինչպես նշեցինք, դեպի ծով էլք չունեցող երկիր է: Իսկ այսպիսի երկրների տնտեսական աճի համար ներդրումները էական գործոն են դառնում և ունեն ավելի կարևոր նշանակություն, քան զարգացող երկրների մյուս խմբի համար:

Մասնագիտական քննադատության չի դիմանում նաև այն պնդումը, ըստ որի ՀՀ-ում պտտենցիալ օտարերկրյա ներդրողները և առևտրային գործընկերները կարող են շահագրգռված լինել ԵԱՏՄ շուկա դուրս գալու հեռանկարով: Նախ և առաջ, ԵԱՏՄ նկատմամբ ներդրողները զգուշավոր են, երկրորդ, ԵԱՏՄ միասնական տարածքը թույլ է տալիս ներդրողին ընտրել արտադրության տեղայնացման իր տեսանկյունից հարմար ռազմավարություն: Այսինքն, եթե նույնիսկ նրանց հետաքրքրում է ԵԱՏՄ շուկան, ապա ավելի նպատակահարմար է արտադրությունները կազմակերպել հենց, օրինակ, Ռուսաստանի Դաշնության տարածքում կամ սահմանակից Բելառուսում և Հյուսիսային Ղազախստանում, քանի որ արտադրանքի իրացման հիմնական շուկան մնում է Ռուսաստանը: Հայաստանի Հանրապետությունը նույնիսկ ընդհանուր սահման և երկաթուղային ուղղակի հաղորդակցություն չունի Ռուսաստանի Դաշնության հետ: Ի վերջո, ցանկացած երկիր ներդրումային միջավայրի գլխավոր սպառնալիքը կոռուպցիան է: Այն կարող է նպաստել ռիսկերի զարգացմանը և խոչընդոտել ներդրումների հոսքը: Այս իմաստով թե՛ Ռուսաստանի Դաշնությունը և թե՛ նրանից ռազմաքաղաքական և տնտեսական կախվածության մեծ ընկած Հայաստանի Հանրապետությունը ունեն կոռուպցիայի բարձր մակարդակ, հետևաբար չեն կարող գրավիչ լինել ներդրողների համար:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ն լուրջ խնդիրներ ունի ներդրումների ներգրավման գործում, ինչը ենթադրում է նոր մոտեցումների և տնտեսական քաղաքականության մշակում, դրանցից բխող կոնկրետ միջոցառումների և նախագծերի իրականացում: Մյուս կողմից, դառնալով ԵԱՏՄ անդամ, Հայաստանի Հանրապետությունը սահմանափակել է իր հնարավորությունները ներդրումների ներգրավմանն ուղղված տնտեսական քաղաքականության իրականացման հարցում:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում արտաքին ներդրումներին խոչընդոտող գործոնները կարելի է բաժանել երկու խմբի՝ պայմանավորված աշխարհագրական՝ բնական, աշխարհաքաղաքական եւ տնտեսական ներդրումային քաղաքականությամբ: Առաջինի մեջ են մտնում բնական պաշարների սահմանափակությունը, ներքին շուկայի փոքրությունը, չբազմազանեցված (չդիվերսիֆիկացված) արդյունաբերությունը, փակ սահմանները հարևան Թուրքիայի

և Ադրբեջանի հետ, Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտությունը: Մյուս կողմից, ներդրումների աճին խոչընդոտող երկրորդ խմբի գործոնները ներդրողների գործունեության համար անհավասար պայմաններն են՝ պետական մարմինների կոռուպացվածությունը և միջամտությունը, թույլ դատական համակարգերը, չափազանց երկարատև և ծախսատար գործընթացները, կոռուպցիան, օրենսդրության հաճախակի փոփոխությունները:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում Հայաստանի Հանրապետության իրական հնարավորություններից է Մփյուռքի առկայությունը, որի ներուժն ամբողջությամբ չի օգտագործվում: Մփյուռքահայ ներդրողները բախվում են նույն խնդիրներին, ինչ մյուս ներդրողները: Այնուհանդերձ, սփյուռքահայերը զգալի ներդրումներ են կատարում աղամանդագործության, ոսկերչության, տեղեկատվական տեխնոլոգիաների, տրանսպորտի, շինարարության, զբոսաշրջության եւ առևտրի ոլորտներում:

Ներդրումների խթանմանն է ուղղված նաև ազատ տնտեսական գոտիների (ԱՏԳ) ստեղծումը: ԱՏԳ-ում գործող կազմակերպություններին տրվում են շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի և մաքսատուրքի վճարման արտոնություններ: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում առկա են երկու ԱՏԳ՝ «Ալյանս» և «Մերիդիան», որոնք գործում են համապատասխանաբար 2013թ. և 2014թ.-ից: «Ալյանս» ունի բարձր և նորարարական տեխնոլոգիաների արտադրության եւ արտահանման ուղղվածություն: Իսկ «Մերիդիանի» ուղղվածությունը ոսկերչական, ակնագործական և ժամագործական ոլորտի միջազգային ընկերությունների ներգրավումը և այդ ոլորտներում ապրանքների արտադրությունն ու արտահանումն է:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵԼԻԶԱՎԵՏԱ ՍԱՐԳՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

Համառոտագիր

Ցանկացած երկրում կարող է ստեղծվել ինչպես ներդրումների ընդգրկման համար բարենպաստ, այնպես էլ անբարենպաստ միջավայր: Այդ պատճառով էլ երկրների մի մասի (հատկապես երկրորդ խմբի մեջ մտնողների) կառավարությունների ամենօրյա գործունեության ուղղություններից է ներդրումային և ձեռնարկատիրական միջավայրի բարելավումը, կամ այլ կերպ ասած ներդրումների ներգրավման արգելքների վերացումը և դրանով իսկ երկրի ներդրումային գրավչության բարձրացումը:

Ներդրումների ներգրավումը հատկապես արդիական է ՀՀ-ի համար, քանի որ վերջին տարիներին նկատվում է ներդրումների ներհոսքի նվազեցում, իսկ արտահոսքի ավելացում: Հեղինակը բացահայտել է այն խոչընդոտները, որոնք առկա են ՀՀ ներդրումային դաշտում և նշել ներդրումային կլիմայի բարելավման ուղիները:

Բանալի բառեր. *ներդրումներ, տնտեսական աճ, գրադրվածություն, ներդրումային միջավայր, ներդրումների խոչընդոտներ, ձեռնարկատիրական ռիսկ, տնտեսական քաղաքականություն:*

ПРОБЛЕМЫ ПРИВЛЕЧЕНИЯ ИНВЕСТИЦИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ЕЛИЗАВЕТА САРГИСОВНА МАРКАРЯН

соискатель Академии государственного управления РА

Аннотация

В любой стране в целях привлечения инвестиций может быть создана как благоприятная, так и неблагоприятная среда. Поэтому одним из направлений повседневной деятельности правительств ряда стран (особенно стран, входящих во вторую группу) является улучшение инвестиционной и предпринимательской среды или, иначе говоря, устранение барьеров привлечения инвестиций и тем самым повышение инвестиционной привлекательности страны. Привлечение инвестиций особенно актуально для РА, поскольку в последние годы наблюдается уменьшение притока инвестиций и увеличение их оттока. Автором статьи выявлены барьеры на пути инвестиционной деятельности в РА и отмечены пути улучшения инвестиционного климата страны.

Ключевые слова: *инвестиции, экономический рост, занятость, инвестиционный климат, барьеры для инвестиций, предпринимательский риск, экономическая политика.*

ISSUES ON ATTRACTING INVESTMENTS INTO THE REPUBLIC OF ARMENIA

ELIZAVETA SARGIS MARGARYAN

Ph.D. Student, Public Administration Academy, Republic of Armenia

Abstract

In any nation investment friendly or unfriendly environment could be created. Therefore, one of the directions of the activities of the governments of some nations (especially classified as a second group) is making investment and business climate more attractive, or in other words removing barriers to attracting investments. Attracting investments is very crucial; to the Republic of Armenia, since the decline in interments has been reported over the period of last couple of years. The author identifies those impediments and barriers that the investment environment in the Republic of Armenia faces and states approaches to making the investment climate more attractive.

Keywords: *Investments, economic growth, employment, investment climate, investment barriers, entrepreneurial risk, economic policy*

ՎՃԱՐԱՅԻՆ ՉԱՇՎԵԿՇՈՒԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾԸՐ ՀՀ-ՈՒՄ

Վճարային հաշվեկշիռը երկրի և մնացյալ աշխարհի միջև որոշ ժամանակաշրջանի ընթացքում կատարված տնտեսական գործարքների ամփոփ վիճակագրական ներկայացումն է: Գործարքները կարող են կապված լինել ապրանքների, գործոնային և ոչ-գործոնային ծառայությունների կամ ֆինանսական ակտիվների հետ: Վճարային հաշվեկշռի հիմքում ընկած է ռեզիդենտության սկզբունքը: Երբ որևէ հայկական ընկերություն մեկ այլ հայկական ընկերության վաճառում է ապրանք, ապա դա վճարային հաշվեկշռում չպետք է գրանցվի, քանի որ գործարքը տեղի է ունեցել միևնույն երկրի ռեզիդենտների միջև: Սակայն, երբ այդ նույն հայկական ընկերությունը նույն ապրանքը վաճառում է ոչ-ռեզիդենտի, օրինակ՝ վրացական ընկերության, ապա դա պետք է գրանցվի և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի վճարային հաշվեկշիռներում: Ռեզիդենտ: Վճարային հաշվեկշռի առումով տնտեսվարող սուբյեկտը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որում գտնվում է իր տնտեսական շահերի կենտրոնը: Մասնավորապես՝ ֆիզիկական անձիք համարվում են այն երկրի ռեզիդենտներ, որում սովորաբար բնակվում են: Երկրից ժամանակավորապես (նվազ քան մեկ տարով) բացակայողները շարունակում են համարվել ծագման երկրի ռեզիդենտ: Օրինակ՝ զբոսաշրջիկները, սեզոնային աշխատողները կամ հարևան երկրում աշխատողները համարվում են ծագման երկրի ռեզիդենտ. այսպես՝ բազմաթիվ ֆրանսիացիներ ամեն օր աշխատանքի են մեկնում Ժնև, իսկ երեկոյան վերադառնում են Ֆրանսիա: Իսկ այն անձիք, ովքեր արտասահմանում են գտնվում ավելի քան մեկ տարի, դադարում են համարվել ծագման երկրի ռեզիդենտներ և դառնում են հյուրընկալ երկրի ռեզիդենտներ: Սակայն, արտասահման ուսման կամ բուժման մեկնած անձիք, անկախ ուսման կամ բուժման տևողությունից, շարունակում են մնալ ծագման երկրի ռեզիդենտներ:

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում ձևավորված տնտեսական հոսքերը՝ դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ, արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Այն բաղկացած է երկու հիմնական բաժնից՝

1. ընթացիկ հաշիվ (հիմնականում ցույց է տալիս արտահանման և ներմուծման հետ կապված հոսքերը),
2. կապիտալի ու ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս կապիտալի ներհոսքն ու արտահոսքը):

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ: Հարկ է նշել, որ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է:

ՀՀ 2015-2017թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում¹ ընթացիկ հաշվի վերլուծությունը հիմնված է ՀՀ վճարային հաշվեկշռի նոր մեթոդաբանությամբ (ԱՄՀ, BPM-6 ձեռնարկ) վերանայված պաշտոնական տվյալների վրա: Արտահանման խթանմանն ուղղված՝ ՀՀ կառավարության քաղաքականությունը տվել է դրական արդյունքներ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից ՀՀ տնտեսության վերականգնմանը զուգընթաց, տնտեսության արտաքին հատվածը արագ վերականգնվել է և շարունակում է բարելավվել:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ի տվյալները, 2012-13թթ. ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է համախառն ներքին արդյունքի միջինը 11.3%-ը՝ բարելավվելով նախորդ երկու տարիների (2010-11թթ.) 12.8% միջին մակարդակը: Արտաքին պահանջարկի և արտահանման ծավալների աճի հետ մեկտեղ՝ ավելացել են Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործո-


¹ <http://www.gov.am/files/docs/2015.pdf>

նային եկամուտները՝ նպաստելով 2013թ. արդյունքներով ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը՝ մինչև ՀՆԱ-ի 10.5% (գծապատկեր 1):

Աղյուսակ 1

Վճարային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի նկատմամբ %)¹

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-14,2	-11,4	-12,0	-10,5	-9,8	-8,5	-7,9	-7,1
Ընթացիկ հաշիվ (առանց պտտնական տրանսֆերտների) /ՀՆԱ	-15,3	-13,1	-13,1	-11,7	-10,3	-9,1	-8,2	-7,3
Այդ թվում՝ եկամուտներ/ուղղակի ներդրումներից/ՀՆԱ	-3,9	-3,7	-3,4	-3,1	-3,1	-3,1	-3,1	-3,1
Ուղղակի ներդրումներից/ՀՆԱ	-5,6	-4,3	-4,7	-3,4	-3,4	-3,5	-3,6	-3,7



Գծապատկեր 1. Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ (%)

Պետք է ասել, Հայաստանը, լինելով փոքր և բաց տնտեսություն, արագ է արձագանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին. համաշխարհային տնտեսության և ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսական վերելքով պայմանավորված՝ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ժամանակահատվածում կրճատված արտարժույթի ներհոսքը հանրապետություն վերականգնվել է՝ նպաստելով նաև տնօրինվող եկամուտների և ՀՀ տնտեսական աճին:

Արտարժույթի ներհոսքը՝ արտահանման հաշվին, հետճգնաժամային տարիներին արտահանման սպասվածից բարձր աճով պայմանավորված, արագ վերականգնվել է: 2013թ. ՀՀ արտահանման 7.1% աճի շուրջ 10.5 տոկոսային կետն ապահովել են հետևյալ 5 երկրները. Ռուսաստան՝ 4, Չինաստան՝ 2.7, Բուլղարիա՝ 1.7, Իտալիա՝ 1.1 և Վրաստան՝ 1 տոկոսային կետ: Նշված երկրներ արտահանվող հիմնական ապրանքատեսակներն են պղնձի հանքաքարը, երկաթափափակվածքը, ոգելից խմիչքը (կոնյակ), ադամանդը, էլեկտրաէներգիան և այլն²:

ՀՀ ներհոսող մասնավոր տրանսֆերտների և աշխատողների վարձատրություն դրամական փոխանցումների ծավալը 2012-13թթ. կազմել է շուրջ 2 մլրդ 144 մլն ԱՄՆ դոլար՝ միջինն աճելով 10.8%-ով: Ընդ որում՝ մասնավոր տրանսֆերտները 2012-13թթ. միջինն աճել են շուրջ 11.2%-ով, իսկ աշխատողների վարձատրության հաշվին դրամական փոխանցումները՝ 10.4%-ով: 2013թ. դրամական փոխանցումներն, ընդհանուր առմամբ ավելացել են մոտ 13%-ով՝ նպաստելով բնակչության տնօրինվող եկամուտների աճի, տնտեսական ակտիվության և տնտեսական աճի

¹ <http://documents.worldbank.org/curated/en/802021467997559073/pdf/728800ESW0ARME0Synthesis0Report0arm.pdf>

² <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

հիմնական շարժիչ ճյուղերի աշխուժացմանը (մասնավոր տրանսֆերտներն աճել են շուրջ 11.4%-ով, իսկ աշխատողների վարձատրություն փոխանցումները՝ 14.7%-ով):¹

Մասնավոր տրանսֆերտների և աշխատողների դրամական փոխանցումների հիմնական աղբյուր է գործընկեր երկրների տնտեսական աճը. և՛ Ռուսաստանի և՛ ԱՄՆ միջին ար 2012-13թթ. կազմել է 2.4%: 2013թ. դրամական փոխանցումների կառուցվածքում այդ երկրների տեսակարար կշիռը կազմել է՝ համապատասխանաբար 85.9% և 4.4%, ինչը վկայում է հատկապես Ռուսաստանի տնտեսության զարգացումներից Հայաստանի մեծ կախվածություն: 2014թ. առաջին չորս ամիսներին դրամական փոխանցումների ներհոսքը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 6.3%-ով՝ կազմելով 464.3 մլն դոլլար, ընդ որում՝ Ռուսաստանից փոխանցումների մասնաբաժինը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ կրճատվել է՝ կազմելով 80.3%:

2012թ. ձևավորված՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման միտումները 2013թ. շարունակվել են: Այնուհանդերձ՝ արժեզրկումը տեղի է ունեցել ավելի դանդաղ տեմպերով, ինչի արդյունքում անցյալ տարեվերջին փոխարժեքը կազմել է 405.32 դրամ՝ 1 ԱՄՆ դոլարի դիմաց, որը 2012թ. դեկտեմբերին ձևավորված միջին փոխարժեքի (405.54) նկատմամբ արժևորվել է 0.06%-ով: Ինչ վերաբերում է տարեկան միջին փոխարժեքին, այն 2013թ. կազմել է 409.63 դրամ (2012-ին՝ 401.76). նախորդ տարվա միջինի նկատմամբ արձանագրվել է ԱՄՆ դոլարի համեմատ դրամի անվանական արժեքի 1.9% արժեզրկում՝ 2012թ. համապատասխան ցուցանիշի 7.3%-ի դիմաց²:

Դրամի արժեզրկման միտումը շարունակվել է նաև 2014թ. առաջին չորս ամիսներին. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 411.85 դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջինից բարձր է 0.2%-ով (2013թ. առաջին չորս ամիսներին՝ 411.17): Ընթացիկ տարվա չորս ամիսներին դրամի արժեզրկմանը նպաստել է տարեսկզբից դիտարկվող կապիտալի ներհոսքի (հիմնականում՝ տրանսֆերտների և գործոնային եկամուտների տեսքով) աճի որոշակի դանդաղումը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ՀՀ տնտեսության արտաքին հատվածում տեղի ունեցող դրական փոփոխությունները հիմնականում պայմանավորված է եղել Հայաստանի հիմնական գործընկեր երկրների տնտեսական ակտիվությամբ, համաշխարհային տնտեսության վերականգնմամբ և տնտեսության արտահանելի հատվածին կառավարության ցուցաբերած օժանդակությամբ: Բացի այդ, գտնում ենք, որ ՀՆԱ-ի նկատմամբ առանց պաշտոնական տրանսֆերտների ընթացիկ հաշվի պակասուրդի 10.3% մակարդակը և ընթացիկ հաշվի բարելավմանը էապես կնպաստի նաև կառավարության հարկաբյուջետային քաղաքականության աստիճանական խստացումը՝ ի դեմս պետական հատվածի պակասուրդի աստիճանական կրճատման:

¹ Նուն տեղում:

² <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

ՎՃԱՐԱՅԻՆ ԶԱՇՎԵԿՈՒ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ ԶՅ-ՈՒՄ

ՆԱՐԵԿ ՍԱՅԱԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

Յամառոտագիր

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ՀՀ տնտեսության արտաքին հատվածում տեղի ունեցող դրական փոփոխությունները հիմնականում պայմանավորված է եղել Հայաստանի հիմնական գործընկեր երկրների տնտեսական ակտիվությամբ, համաշխարհային տնտեսության վերականգնմամբ և տնտեսության արտահանելի հատվածին կառավարության ցուցաբերած օժանդակությամբ: Բացի այդ, գտնում ենք, որ ՀՆԱ-ի նկատմամբ առանց պաշտոնական տրանսֆերտների ընթացիկ հաշվի պակասուրդի 10.3% մակարդակին և ընթացիկ հաշվի բարելավմանը էապես կնպաստեն նաև կառավարության հարկաբյուջետային քաղաքականության աստիճանական խստացումը՝ ի դեմս պետական հատվածի պակասուրդի աստիճանական կրճատման:

Բանալի բառեր. *Վճարային հաշվեկշիռ, տնտեսական գործարքներ, արտաքին կայունություն, ընթացիկ հաշիվ, պակասուրդ, տնտեսական ակտիվություն, ռեզիդենտություն:*

СУЩНОСТЬ И СТРУКТУРА ПЛАТЕЖНОГО БАЛАНСА РА

НАРЕК СААКОВИЧ МКРТЧЯН

очный аспирант Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Таким образом, можно сделать вывод о том, что положительные изменения, происходящие во внешнем секторе экономики РА, обусловлены экономической активностью основных стран-партнеров Армении, восстановлением мировой экономики и поддержкой, оказываемой правительством экспортному сектору экономики. Кроме того, считаем, что 10%-ому уровню дефицита текущего счета (без учета официальных трансфертов) по отношению к ВВП и улучшению текущего счета в значительной мере способствует также постепенное ужесточение налогово-бюджетной политики правительства путем постепенного сокращения дефицита государственного сектора.

Ключевые слова: *платежный баланс, экономические операции, внешняя стабильность, текущий счет, дефицит, экономическая активность, резидентство.*

THE ESSENCE AND STRUCTURE OF BALANCE OF PAYMENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

NAREK SAHAK MKRTCHYAN

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

It can be concluded that the positive changes that take place in the external sector of the economy of Armenia are due to the economic activities of the main partner countries of Armenia, the recovery of the world economy and the support provided by the government to the exporting sector of the economy. In addition, we believe that the gradual tightening of the government's fiscal policy by gradually reducing the public sector deficit is also contributing significantly to the 10.3% level of the current account deficit (without taking into account official transfers) in relation to GDP and improving the current account.

Keywords: *Balance of payments, economic operations, external stability, current account, deficit, economic activity, residency*

ՏԱԹԵՎԻԿ ՎԱՉԳԵՆԻ ՇԱՐԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության

ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ՏԱԹԵՎԻԿ ԱՐԱՅԻ ՈԱՖԱԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի տնտեսագետ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անցումային տնտեսություն վարող յուրաքանչյուր երկրի համար, ինչպիսին նաև Հայաստանն է, կարևոր նշանակություն ունի հարկային համակարգը:

Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորվում են հետևյալ ուղղություններով¹

- ա) հարկային օրենսդրությամբ, որը բաղկացած է «Հարկերի մասին» ՀՀ օրենքից և առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքներից.
- բ) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով՝ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և սահմաններում.
- գ) հարկային մարմնի, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում պետական կառավարման այլ մարմինների կողմից ընդունված ակտերով՝ հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված դեպքերում և սահմաններում¹:

Հարկային մարմինների տեղն ու դերը երկրի ֆինանսական համակարգում որոշվում է նրանց առջև դրված խնդիրներից ու նպատակներից, ինչպես նաև օրենքով սահմանված իրավունքներից ու պարտականություններից: Հարկ է նշել, որ տարբեր երկրներում հարկային մարմինների գործառույթների թվին են պատկանում ոչ միայն որոշակի հարկերի և տուրքերի հավաքագրումը, այլ նաև, օրինակ, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումը, ՀՆՄ-ների կիրառման հսկողությունը, արժույթային օրենսդրության պահպանման վերահսկողությունը, ակոհոլային ապրանքների շրջանառությունը, վիճակախաղերի կազմակերպումը:

«Հարկային մարմիններ» հայեցակարգն ինքնին տարբեր երկրներում տարբեր կերպ է ընկալվում: Դա պայմանավորված է նրանով, որ բյուջետային եկամուտներն (հարկերն ու տուրքերը) ապահովելու պարտավորությունը կարող է վերապահված լինել տարբեր պետական մարմինների: Որպես կանոն վճարման ենթակա հարկերի և տուրքերի համար պատասխանատվություն են կրում երկու կամ ավել պետական մարմիններ, որոնք էլ ունեն «հարկային մարմիններ» իրավասությունները: Կառուցվածքներից մեկը սովորաբար պատասխանատու է սահմանի վրա հարկերի և տուրքերի հավաքագրման համար (այսպես կոչված մաքսային մարմինները), մյուսը՝ ներքին հարկային վճարումների հավաքագրման համար:

Երկրի չափից կախված հարկային մարմիններ ունեն, որպես կանոն, երկու-երեք մակարդակ (փոքր երկրներում միայն երկուսն են՝ կենտրոնական և տեղական, իսկ ավելի մեծ երկրներում երեք մակարդակ՝ կենտրոնական, տարածաշրջանային և տեղական):

Հարկային մարմինների տարբեր մակարդակների կազմակերպական կառուցվածքի սկզբունքները ոչ միշտ են միանման: Այսպիսով, ուսումնասիրված երկրների 38%-ում կենտրոնական համակարգը կազմակերպված է խառը սկզբունքի հիման վրա՝ այսինքն հարկային մարմնի կառուցվածքում առկա են գործառույթային հիմունքներով, ինչպես նաև հարկերի կամ հարկատուների առանձին խմբերի հետ աշխատելու համար ստեղծված ենթակառուցվածքներ: Երկրների 30%-ի մոտ հարկային մարմինների կենտրոնական համակարգի կազմակերպական կառուց-

¹ Հարկերի մասին ՀՀ օրենք, հոդված 12: ՇՕ-107: ՀՀՊՏ 1997.05.20/11:

վածքը հիմնված է գործառնության հիմունքների վրա, 27%-ի դեպքերում ըստ հարկատեսակների և միայն 5%-ի դեպքում՝ ըստ հարկատուների խմբերի:

Տարածաշրջանային և տեղական հարկային մարմիններն առավել հաճախ կառուցվում են գործառնության հիմունքներն երով. համապատասխանաբար ուսումնասիրված երկրների 36%-ի և 41% -ի մոտ:

Հարկային ենթակառուցվածքների գործունեության ամենակարևոր խնդիրներից մեկը կապված է մաքսային մարմինների հետ նրանց համագործակցության հետ: Երկրների միայն 22%-ի մոտ է, որ մաքսային մարմինները ներառված են հարկային վարչարարության մեջ¹:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգիրքի՝ հարկային մարմինը օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող միասնական պետական կառավարման հանրապետական մարմին է, որի հիմնական նպատակներն են.

- «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խնդիրների լուծումը,
- հարկային մարմնի կողմից վերահսկվող հարկային եկամուտների ապահովումը,
- Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությանը նպաստումը²:
Հարկային մարմնի համակարգը ներառում է՝
- վերադաս հարկային մարմինը, որի կառուցվածքը հաստատում է ՀՀ կառավարությունը,
- հարկային մարմնի հարկային տեսչությունները (այսուհետ՝ նաև հարկային մարմիններ)³՝ ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է ՀՀ կառավարությունը,
- հարկային մարմնի առանձնացված ստորաբաժանումները, որոնց ստեղծում է ՀՀ կառավարությունը³:

Հարկային բարեփոխումների ներկա փուլում ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը խիստ հրատապ և արդիական է: Միաժամանակ հարկային համակարգը ներկայումս բավական խոցելի է, սակայն, հաղթահարելով անցումային փուլի դժվարությունները, այն որպես ինքնուրույն համակարգ, ունի կայուն վարկանիշ, որը չափելու համար կարող ենք հիմք ընդունել մի շարք մտեցումներ ու չափանիշներ, ինչպիսիք են.

1. Օրինականությունը՝ հարկային մարմինը իր վարկանիշը բարձրացնելու համար պետք է լինի հետևողական և իր գործողությունների ժամանակ առաջնորդվի բացառապես գործող օրենսդրական նորմերով՝ խստագույնս պահպանելով հարկային ծառայողի էթիկայի կանոնները:
2. Օբյեկտիվությունը՝ հարկային մարմինը պետք է լինի անաչառ, արդար, վստահելի կառույց հարկ վճարողների տեսանկյունից՝ որդեգրելով օրենսդրության համահավասար կիրառման սկզբունքը բոլոր հարկ վճարողների համար:
3. Թափանցիկությունը՝ հարկային մարմինը պետք է լինի թափանցիկ իր գործողություններում, ապահովի հարկ վճարողներին ժամանակին իրազեկումը՝ ստեղծելով վստահության մթնոլորտ վերջիններիս շրջանում:
4. Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը:
5. Հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացների վերակազմակերպումը:
6. Հարկային հսկողության ժամանակակից մեխանիզմների ներդրումը:
7. Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, ներքին հսկողության մեխանիզմների կատարելագործումը:

Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնական միջոցներից է հարկային վարչարարության իրականացումը: ՀՀ հարկային վարչարարությունն ունի 20 տարվա պատմություն: Անկախության հռչակումից հետո, ՀՀ իրավահամակարգի ամրապնդման

¹ Коровкин В.В. Налогоплательщик и налоговые органы. - М.: Приор, 2005. с. 16.

² Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք:

³ ՀՀ օրենք «Հարկային ծառայության մասին»:


ու տնտեսության զարգացմանը զուգահեռ, զարգացում է ապրել նաև ՀՀ հարկային վարչարարությունը:

Համաձայն «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի հարկային վարչարարությունը հարկային մարմնի՝ օրենքի և իրավական այլ ակտերի հիման վրա իրականացվող գործողություններ են՝ ուղղված հարկային օրենսդրության համատարած և ճիշտ կիրառման ապահովմանը, հարկային մարմնի խնդիրների իրագործմանը:

ՀՀ անկախության հռչակումից ի վեր հարկային քաղաքականության և հարկային վարչարարության զարգացումը պատմականորեն կարելի է բաժանել հետևյալ շրջափուլերի՝ մինչև 1992-1997թթ., 1997-2000թթ., 2000-2007թթ., 2007-ից հետո:

Նշված բոլոր ժամանակահատվածներում հարկային մարմինների գործունեության արդյունավետության գնահատումը կրել է դրվագային բնույթ՝ այսինքն գնահատման հիմքում ներդրված չեն համապատասխան մաթեմատիկական ձևաչափեր:

Վերջին տարիներին հարկային վարչարարության համակարգը ենթարկվել է շատ լուրջ փոփոխությունների: Դրանց ազդեցության մասին պատկերացում կազմելու համար կարելի է ուսումնասիրել նախորդ տարիների հարկային հոսքերը պետական բյուջե:



Գծապատկեր 1. ՀՀ պետական բյուջեի հարկերն ու տուրքերը 2007-2016 թթ. (ընթացիկ գներով, մլն դրամ)¹

Գծապատկեր 1-ից կարելի է նկատել, որ ՀՀ պետական բյուջեի հերկերի և տուրքերի հոսքը 2007 թվականից ի վեր տարեցտարի աճել է՝ 2016 թ.-ին կազմելով 1079689.1 մլն դրամ: Այս հանգամանքը ցույց է տալիս հարկային վարչարարության բնագավառում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը: Կարևոր դեր է խաղացել հսկիչ դրամական համակարգերի ներդրումը, որն իրականացվել է սովետային տնտեսության ծավալները կրճատելու և հարկային հոսքերով պետական բյուջեն համարելու նպատակով: 2009թ. հունվարի 1-ից սկսած՝ ՀՀ քաղաքացիները դրամական կտրոնների օգնությամբ կարող են մասնակցել վիճակահանության: Դրա ներդրմամբ հարկային մարմինները նպատակ են հետապնդել ավելացնելու հարկահավաքը առևտրային կետերից:


Սակայն հարկ է նշել, որ հարկահավաքման գործընթացում առավել նախընտրելի է այնպիսի մոտեցումների կիրառումը, որոնցում առաջին պլան են մղվում հարկատուների կողմից հարկային պարտավորությունների կատարման կարևորության գիտակցումն ու դրանց կամովին կատարումը: Հակառակ դեպքում հարկային մարմինները ստիպված են ուժեղացնել հարկային վերահսկողությունը, անհրաժեշտության դեպքում դիմելով դատական մարմիններին՝ կիրառելու հարկադրանքի միջոցներ:

Հարկերի և տուրքերի՝ պետական բյուջեով նախատեսված մուտքերի կատարողականի ցուցանիշը թույլ է տալիս գնահատել հարկային մարմինների հիմնական գործառնության կատար-

¹ Տվյալները՝ <http://www.armstat.am>:

ման ունակությունը, սակայն չի արտացոլում հարկային մարմնի աշխատանքը, տնտեսական դժվարությունները, հարկատուների բավարարվածության մակարդակը և այլն:

Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը թույլ է տալիս առավել օբյեկտիվ գնահատել հարկային համակարգի արդյունավետությունը:



Գծապատկեր 2. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը 2007-2016 թթ.¹

Ցուցանիշը ցույց է տալիս, թե ՀՆԱ-ի որ մասնաբաժինն է վերաբաշխվում պետության կողմից: Գծապատկեր 2-ից պարզ է դառնում, որ ցուցանիշն առավել մեծ արժեք է ունեցել 2014 թվականին և կազմել է 23.5%: 2015 և 2016 թվականներին կազմել է համապատասխանաբար 21.2% և 20.6%:

Հայաստանի Հանրապետությունում հարկային վերահսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ մեծապես կարևորվում է նաև այդ ոլորտի արտերկրյա առավել գործուն և արդիական համակարգերի, դրանց կառուցվածքի և գործունեության ուսումնասիրությունը: Կարծում ենք, որ արտերկրյա առաջադեմ փորձի կիրառումը մեր հանրապետությունում գործնականում կարող է բարձրացնել հարկային մարմինների վերահսկողական գործառնությունների արդյունավետությունը: Հարկային վերահսկողության արտերկրյա փորձի վերլուծության համար անհրաժեշտ է առաջին հերթին առանձնակի ուշադրություն դարձնել ինչպես այդ ոլորտին առնչվող տեսական և գաղափարական խնդիրներին, այնպես էլ հարկային վերահսկողական կոնկրետ գործառնություններին ու հարկային կարգապահության միջոցառումներին:

Հարկ է նշել, որ հարկատուների և հարկային մարմինների փոխգործակցության ժամանակակից չափանիշների մշակման ուղղությամբ ակտիվորեն զբաղվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հարկային կոմիտեն: Այսպես, 2003 թ.-ին վերոհիշյալ մարմնի կողմից առաջարկվել են մի շարք մոտեցումներ՝ հարկային իրավահարաբերությունների կողմերի միջև իրավունքների և պարտականությունների սահմանման վերաբերյալ, որոնք հետագայում հիմք են հանդիսացել բազմաթիվ երկրների հարկային վերահսկողության սկզբունքների ձևավորման համար: Անդրադառնալով վերջիններս, հարկ է նշել, որ դրանք արտացոլում են ոչ միայն վերահսկողական բնույթի հարաբերությունները, այլև այդ համակարգի կազմակերպման և գործառնությունների իրականացման համար առանձնահատուկ նշանակություն ունեցող օրնաչափություններն ու փոխադարձ կապերը:

Հարկային վերահսկողության համակարգերի ձևավորման փորձը վկայում է, որ ցանկացած առաջադեմ և զարգացած հարկային համակարգի և հարկային օրենսդրության պահպանման նկատմամբ արդյունավետ վերահսկողության ապահովման համար անհրաժեշտ են՝


- Հարկային պետական վերահսկողական կառույցի ձևավորում, ինչպես նաև դրա կառուցվածքում հստակ և ուղղահայաց պատասխանատվության սահմանում:

- Հարկատուների հետ արդյունավետ փոխգործակցության ձևավորում ու զարգացում, ինչպես նաև հարկմանը վերաբերող փաստաթղթերի (հաշվետվությունների, հայտարարագրերի և այլն) լրացման և այլ հարցերի հետ կապված խորհրդատվության ցուցաբերում: Հարկային մարմիններն ապահովում են հարկատուների համար տեղեկատվության և կապի լրացուցիչ ծառայություններ, ինչպիսիք են՝ հեռախոսային թեժ գծերը կամ հարկային վերահսկողության մարմինների համապատասխան համացանցային կայքերը¹:
- Վերահսկիչ ստուգումների անցկացման համար հարկատուների ընտրության չափանիշների արդյունավետ համակարգի առկայություն, որը հնարավորություն է տալիս ընտրել առավել օպտիմալ տարբերակ՝ հարկային մարմինների մարդկային և նյութական սահմանափակ ռեսուրսների օգտագործման համար, ինչպես նաև հասնել հարկային ստուգումների առավելագույն արդյունավետության:
- Հարկային գերատեսչության կողմից հարկային ստուգումների արդյունավետ ձևերի, գործիքների և մեթոդների կիրառում՝ ինչպես միասնական համայնքի ստանդարտ ընթացակարգերով վերահսկիչ ստուգումների կազմակերպման, այնպես էլ անբարեխիղճ հարկատուների վրա ազդեցություն գործելու համար՝ օրենսդրությամբ հարկային մարմիններին վերապահված լայն լիազորությունների հիման վրա:
- Հարկային վերահսկողության ծառայողների աշխատանքի գնահատման արդյունավետ համակարգի ներդրում, որը թույլ է տալիս օբյեկտիվորեն գնահատել նրանցից յուրաքանչյուրի գործունեության արդյունքները և արդյունավետ բաշխել ծանրաբեռնվածությունը վերջիններիս աշխատանքները պլանավորելիս:

Պետք է փաստել, որ մինչ օրս արտերկրում գոյություն չունի հարկային մարմինների միասնական համակարգ, քանի որ գոյություն չունեն հարկային վերահսկողության իրականացման միասնական ձևեր և մեթոդներ: Արտերկրում կիրառվում են հարկային վերահսկողության տարբեր եղանակներ, և դրա արդյունքում տարբեր պետությունների կառավարման համակարգերում ձևավորվել և գործում են տարբեր լիազորված մարմիններ, որոնք կոչված են իրականացնելու հարկային վարչարարություն և վերահսկողություն²:


Հարկային մարմինների կառուցվածքը և գործառույթները կախված են պետության սահմանադրական կառուցվածքից, ինչպես նաև երկրի ֆինանսաբյուջետային համակարգում հարկային մարմինների համապատասխան դերակատարման սահմանումից: Մասնավորապես Ավստրալիայում³, Չինաստանում⁴ և Ճապոնիայում⁵ հարկային վերահսկողության մարմինները հանդես են գալիս որպես ինքնուրույն մարմիններ, իսկ, օրինակ, Իտալիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում⁶ և ԱՄՆ-ում⁷ վերջիններս հանդիսանում են պետական ֆինանսական կառավարման մարմինների կառուցվածքային ստորաբաժանումներ: Որոշ երկրներում էլ, օրինակ, Ղազախստանում, ինչպես և Հայաստանում՝ հարկային վերահսկողության մարմինները հանդիսանում են կառավարությանն առընթեր մարմիններ (Պետական եկամուտների կոմիտե)⁸: Վերոգրյալն առավել պատկերավոր ձևով արտացոլված է ստորև՝ գծապատկեր 1-ում.

¹ Braithwaite et al., 2007, Alm and Torgler, 2011, J. Alm, B. Torgler, Do ethics matter? Tax compliance and morality, J. Bus. Ethics., 101 (2011), pp. 635-651, and Gangl et al., 2013
² Перонко И. А., Красницкий В. А. Налоговое администрирование // Налоговый вестник. 2000. № 10. С. 18.
³ <https://www.ato.gov.au/About-ATO/About-us/>
⁴ <http://www.chinatax.gov.cn/2013/n2925/index.html>
⁵ <https://www.nta.go.jp/index.htm>
⁶ https://ec.europa.eu/taxation_customs/national-tax-websites_en
⁷ <https://www.irs.gov/uac/about-irs>
⁸ <http://kgd.gov.kz/en/content/information-about-committee>



Գծապատկեր 1. Հարկային վերահսկողության մարմինների կարգավիճակն արտերկրում


Հարկ է նշել, որ հարկատուների և վերջիններիս կողմից իրականացվող գործարքների վերաբերյալ տեղեկատվության ստացման համար մի շարք երկրների հարկային մարմիններ օժտված են լայն լիազորություններով, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում, Կանադայում, Իտալիայում և Նիդեռլանդներում: Այս երկրներում հարկային մարմիններն իրավունք ունեն առանց սահմանափակումների տեղեկություններ ստանալ ինչպես հենց հարկատուներից, այնպես էլ՝ երրորդ անձանցից: Իսկ որոշ երկրներում, օրինակ, Գերմանիայում և Մեծ Բրիտանիայում, այդ իրավունքը որոշակիորեն սահմանափակված է (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Հարկային վերահսկողության մարմինների տեղեկատվության ստացման իրավասության առանձնահատկություններն արտերկրում

Հատ ստուգումների իրականացման մասին իրազեկվածության՝ արտերկրում կիրառվում են հիմնականում երկու մոտեցումներ՝ առանց նախապես տեղեկացման և նախապես տեղեկացմամբ ստուգումների իրականացում: Վերջիններս իրականացվում են հարկատուների համար

հարկային մարմնի կողմից սահմանված համապատասխան տարբերակիչ հայտանիշների հիման վրա (զծապատկեր 3):



Գծապատկեր 3. Հարկային ստուգումների իրականացման առանձնահատկություններն արտերկրում

Ինչ վերաբերում է հարկային իրավախախտումների դեպքում նախատեսվող պատժամիջոցների սահմանմանը, այս այս ոլորտում արտերկրում գործում է հիմնականում երկու մոտեցում: Առաջինն, այսպես կոչված, «ամերիկյանն» է, որը բնութագրվում է հարկային իրավախախտումների համար խիստ պատժամիջոցների կիրառմամբ և զգալի քանակությամբ հարկային իրավախախտումների քրեականացմամբ: ԱՄՆ-ի գործող օրենսդրության համաձայն՝ հարկային հանցագործությունների համար կոշտ պատժամիջոցների շարքին, բացի ազատազրկումից, դասվում են նաև բավական բարձր տուգանքները, որոնք իրավախախտների համար կարող են զգալի նյութական հետևանքներ առաջացնել: Գործող պատժամիջոցների մնացած մասն ուղղված է դրանց արդյունավետության ապահովմանը և հարկատուների վրա տուգանքների անհամաչափ ազդեցությունների բացառմանը: ԱՄՆ-ում տուգանքների սահմանված չափերը կապակցված են հարկային չվճարված գումարների կապիտալացման արդյունքների հետ, ինչը թույլ է տալիս խուսափել այնպիսի իրավիճակներից, երբ հարկատուին ձեռնտու կլինի չվճարել հարկերը և ներդնել «խնայված» գումարները տնտեսական շրջանառության մեջ ու ստանալ օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական պատժամիջոցների չափը զգալիորեն գերազանցող եկամուտներ:

Արտերկրում գործող հարկային իրավախախտումների նկատմամբ պատժամիջոցների սահմանման ոլորտում կիրառվող եկրորդ մոտեցումն, այսպես կոչված, «եվրոպական» մոտեցումն է, որն ի տարբերություն «ամերիկյանի»՝ համեմատաբար ավելի մեղմ վերաբերմունք է նախատեսում հարկային իրավախախտների նկատմամբ: Ավելին, եվրոպական պետությունների հարկային օրենսդրության բարեփոխումների հիմնական ուղղություններից մեկը ներկայումս հանդիսանում է մի շարք հարկային իրավախախտումների ապաքրեականացումը: Այս մոտեցման շրջանակներում քրեական պատժամիջոցները հաճախ փոխարինվում են տարբեր հարկային վճարներով, որոնք սահմանվում են ոչ թե դատարանի, այլ հարկային մարմինների կողմից: Միաժամանակ պետք է նշել, որ միևնույն անձի կողմից հարկային իրավախախտումների հաճախակի կրկնումը հանգեցնում է նախատեսված տույժերի զգալի չափով ավելացմանը: Նշենք նաև, որ եվրոպական մոտեցման շրջանակներում հարկային հանցագործությունների դեմ հիմնական պատժամիջոցների հետ միասին կարող են կիրառվել նաև տարբեր լրացուցիչ պատժամիջոց-

ներ: Մասնավորապես, հարկ չվճարող անձանց դատարանը կարող է զրկել ինչպես առևտրային գործունեություն ծավալելու իրավունքից, այնպես էլ, օրինակ, վարորդական իրավունքից: Քրեական պատժամիջոցների արդյունավետության բարձրացման նպատակով հարկային օրենսդրությունը սահմանում է հատուկ կարգ՝ դատավճիռները հրապարակայնորեն ներկայացնելու և հարկ չվճարող անձանց նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ հարկային իրազեկման մասին¹:

Կարևոր ենք համարում նշել, որ բազմաթիվ երկրներում հարկային վերահսկողության արդյունավետության բարձրացումը տեղի է ունենում հարկատուների և հարկային մարմինների միջև փոխհարաբերությունների կատարելագործման հաշվին: Շատ երկրների հարկային վերահսկողության փորձի վերլուծությունը հանգեցրել է նրան, որ հենց այդ սկզբունքների հիման վրա կառուցված հարկային իրավահարաբերությունները դրական ազդեցություն են ունեցել հարկատուների օրինապահության բարձրացման վրա՝ ապահովելով վերջիններիս կողմից հարկերի և պարտադիր այլ վճարների կամավոր վճարումների իրականացումը: Բացի այդ, հարկային օրենսդրության պահպանման մակարդակն աճում է իրավական գրագիտության և հանրային իրազեկման ուղղությամբ տարվող ակտիվ միջոցառումների հաշիվին:

Հաշվի առնելով հարկային արդյունավետ վերահսկողության կազմակերպման ոլորտում արտերկրյա տարբեր երկրների առաջավոր փորձը, կարող ենք ներկայացնել այն հիմնական ուղղությունները, որոնց կիրառումը ՀՀ-ում կնպաստի այդ ոլորտի արդյունավետության բարձրացմանը: Դրանք հետևյալն են.

- հարկատուների և հարկային մարմինների միջև ակտիվ փոխգործակցության զարգացումը,
- ազգաբնակչության մոտ հարկերի ժամանակին և ճիշտ վճարման նկատմամբ քաղաքացիական պարտքի գիտակցության ամրապնդումը,
- բարեխիղճ հարկատուների նկատմամբ հարկերի վճարման պայմանների բարելավումը,
- հարկատուների համար խորհրդատվական ծառայությունների ցանցի զարգացումը,
- հարկային իրավախախտումների նկատմամբ պատժամիջոցների ապաքրեականացումը,
- հարկատուների հարկային պարտավորությունների և վերջիններիս կողմից կատարվող ծախսերի համադրման արդյունավետ մեխանիզմների ներդրումը,
- հարկերի հավաքագրման ոլորտում պետական գերատեսչությունների աշխատանքների միավորումը,
- հարկային հարաբերությունների ոլորտում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների շարունակական կատարելագործումը:

¹ Попова Л.В. Налоговые системы зарубежных стран: учебно-методическое пособие. И.А. Дрожжина, Б.Г. Маслов.- М.: Дело и Сервис, 2008 И.А. Дрожжина, Б.Г. Маслов.- М.: Дело и Сервис, 2008. - с.67-69.

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՐԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, ավագ գիտաշխատող

ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, առաջին կարգի տնտեսագետ

Համառոտագիր

Հայաստանի Հանրապետությունում հարկային վերահսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ մեծապես կարևորվում է նաև այդ ոլորտի արտերկրյա առավել գործուն և արդիական համակարգերի, դրանց կառուցվածքի և գործունեության ուսումնասիրությունը: Բազմաթիվ երկրներում հարկային վերահսկողության արդյունավետության բարձրացումը տեղի է ունենում հարկատուների և հարկային մարմինների միջև փոխհարաբերությունների կատարելագործման հաշվին: Կարծում ենք, որ արտերկրյա առաջադեմ փորձի կիրառումը մեր հանրապետությունում գործնականում կարող է բարձրացնել հարկային մարմինների վերահսկողական գործառույթների արդյունավետությունը:

Բանալի բառեր. *հարկային վերահսկողություն, արդյունավետություն, հարկատու, օրենսդրություն, իրավախախտում, պատասխանատվություն, ստուգում, արտերկրյա փորձ:*

СИСТЕМЫ НАЛОГОВОГО КОНТРОЛЯ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ И ИХ ОСОБЕННОСТИ

КАРЕН САМВЕЛОВИЧ САРГСЯН, *к. э. н., доцент*

старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

ЛИЛИТ МАНВЕЛОВНА ПЕТРОСЯН

экономист I категории Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

В целях повышения эффективности налогового контроля в Республике Армения весьма важно также изучение наиболее действенных и современных систем налогового контроля зарубежных стран, их структуры и деятельности. Во многих странах повышение эффективности народного контроля происходит за счет совершенствования взаимоотношений между налогоплательщиками и налоговыми органами. Считаем, что применение передового зарубежного опыта в нашей республике позволит на практике повысить эффективность контрольных функций налоговых органов.

Ключевые слова: *налоговый контроль, эффективность, налогоплательщик, законодательство, правонарушение, ответственность, проверка, зарубежный опыт.*

THE SYSTEMS OF TAX CONTROL IN ABROAD AND THEREOF CHARACTERISTICS

KAREN SAMVEL SARGSYAN, *Candidate of Sciences (Economics), Associate Professor*

Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

LILIT MANVEL PETROSYAN

First Level Economist, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

In order to improve the effectiveness of tax control in the Republic of Armenia, it is very important to study the most effective and modern tax control systems of foreign countries, their structure and activities. In many countries, improving the effectiveness of tax control is happening due to the improvement of the relationship between taxpayers and tax authorities. We believe that the application of advanced foreign experience in our republic will enable to practically improve the effectiveness of the control functions of tax authorities.

Keywords: *Tax control, efficiency, taxpayer, legislation, offense, responsibility, verification, foreign experience*

ՀԱՐԿԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ռազմավարություն հասկացությունն իմաստային առումով կարելի է ներկայացնել որպես պատերազմի մասին գիտություն, ռազմական գործողությունների ընդհանուր և երկարատև ժամանակահատված ընդգրկող պլան¹: Պատմականորեն ռազմավարության հասկացությունը «խաղաղ» բնագավառներում նախ մեծ տարածում է ստացել խաղերի տեսությունում, որի տեսանկյունից տրված և առավել հայտնի սահմանման համաձայն ռազմավարությունը ներկայացվում է որպես ամբողջական պլան, որը ցույց է տալիս թե ինչ ընտրություն կամ քայլեր կկատարի խաղընկերը յուրաքանչյուր հնարավոր իրադրության պարագայում²:

Տնտեսագիտական տեսանկյունից ռազմավարությունը հանդես է գալիս որպես ռազմավարական կառավարման հայեցակարգի բաղադրիչ, իրականացման եղանակ, որը նպատակ ունի առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ հասնել հիմնական նպատակին: Ռազմավարական կառավարման գիտական հիմքերի ձևավորումը կապվում է 1974թ. Ռ.Ռումելտի հեղինակությամբ «Ռազմավարությունը, կառուցվածքն ու տնտեսական արդյունավետությունը»³, ինչպես նաև 1980թ. Մ.Պորտերի հեղինակությամբ հրատարակված «Մրցակցային ռազմավարություն»⁴ գրքերի հրատարակման հետ: Ժամանակակից ընկալմամբ ռազմավարական կառավարման ընկալումն իր արտահայտումն է գտնում Յու.Սուվարյանի բնորոշման մեջ, ըստ որի վերջինս իր բովանդակությամբ կազմակերպության նպատակամետ գործունեության համար ռազմավարական որոշումների ընդունման գործընթաց է՝ ուղղված տնտեսական ռազմավարության ընտրությանն ու իրագործմանը, կազմակերպության գործունեության բնույթի ու արդյունքների և արտաքին միջավայրի միջև համապատասխանության ապահովմանը⁵: Այսպիսով, ռազմավարական կառավարման հայեցակարգը հանդես է գալիս որպես կառավարման տեսության զարգացման արգասիք, որպես տնտեսական անորոշության պայմաններում կառավարման արդյունավետության բարձրացման գործիք:

Կառավարման ոլորտում ռազմավարության գաղափարը կազմակերպությունների մակարդակով լայն կիրառության մեջ դրվեց 20-րդ դարի 50-ական թվականներին: Դա միանգամայն բնական է, քանի որ ռազմավարական կառավարման ընդգրկման դաշտում մակրոմակարդակի, այսինքն՝ պետության, տարածաշրջանի քննարկումը համեմատաբար նոր երևույթ է, որով պայմանավորված մակրոմակարդակի ընդգրկմամբ ռազմավարական կառավարման վերաբերյալ հրատարակումները համեմատաբար մեծ թիվ չեն կազմում⁶:

Վերջին տասնամյակներում պետական կառավարման համակարգում մասնավոր ձեռնարկատիրությանը հատուկ մեթոդների և մեխանիզմների ընդլայնված օգտագործումը լայն թափ է ստացել, իսկ պետական ծառայողների աշխատանքի արդյունավետության գնահատման մոտեցումները, պետական ձեռնարկությունների կառավարման ոլորտում կորպորատիվ կառավարման դրույթների ներդրումը, տարբեր պետական ինստիտուտների քաղաքական կախվածության նվազեցմանը միտված միջոցառումներն այս հայեցակարգի վառ օրինակներ են: Հետևաբար անսպասելի չէր, որ ռազմավարական կառավարման հիմնադրույթները, որոնք կազմակերպության մակարդակով բարձր արդյունավետությամբ էին բնութագրվում, սկսեցին կիրառվել նաև

¹ Константинов Г. Н. Стратегическое мышление / Г. Н. Константинов ; — М.: Синтегра СМ, 2015. стр. 12.

² Von Neumann J., Morgenstern O. The Theory of Games and Economic Behavior. - New York, Willy, 1944

³ Rumelt R.P., Strategy, Structure, and Economic Performance, Cambridge, MA: Harvard University, 1974.


⁴ Porter M., Competitive Strategy, New-York, Free Press, 1980.

⁵ Սուվարյան Յու., Շահնագարյան Ն., Ռազմավարական կառավարում (Ռուսումնական ձեռնարկ), Երևան, «Գիտություն» հրատ., 2015, էջ 16:

⁶ Սուվարյան Յու., Շահնագարյան Ն., Ռազմավարական կառավարում (Ռուսումնական ձեռնարկ), Երևան, «Գիտություն» հրատ., 2015, էջ 8:

պետական կառավարման համակարգում, բնականաբար, մակրոտնտեսական ընդգրկմանը բնորոշ յուրահատկություններով:

Տնտեսական տարբեր երևույթների և մակարդակների համար ռազմավարության գաղափարի կիրառությունը կարելի է ներկայացնել հիերարխիկ կառուցվածքով, որտեղ ամենաբարձր, կամ ամենաընդգրկուն մակարդակում ամբողջ տնտեսության մակարդակով իրականացվող համապետական ռազմավարությունն է, իսկ ստորին մակարդակում՝ կազմակերպությունների ռազմավարությունները (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Ռազմավարությունների հիերարխիկ կառուցվածքը¹

Ամբողջ պետության մակարդակով տնտեսական ռազմավարությունն ընդգրկում փաստաթուղթ է, որի գերագույն նպատակն ազգային տնտեսական անվտանգության հայեցակարգին համահունչ տնտեսական կացութաձևերի ձևավորումն է: Գործառնական բովանդակությամբ համապետական տնտեսական քաղաքականությունը հանդես է գալիս որպես իշխանության տարբեր մակարդակները ներկայացնող մարմինների կողմից իրականացվող միջոցառումների ծրագիր՝ ուղղված ազգաբնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը, ազգային անվտանգության սպառնալիքների տնտեսական և այլ բաղադրիչների վերացմանը, ինչպես նաև սահմանադրությամբ պետության ստանձնած այլ գործառնությունների կենսագործմանը: Շուկայական տնտեսության պայմաններում պետության մասնակցությունը ծառայությունների մատուցման և արտադրանքի թողարկման շրջափուլերում պետք է նվազագույնի հասցվի, սակայն վերջինիս հետ կապված պետությունը վերը նշված խնդիրները չի կարող լուծել անմիջականորեն: Ընդհակառակը, նշված բարիքների թողարկումն առավելապես իրականացվում է ձեռնարկատերերի կողմից, ովքեր այդ գործունեությունից ակնկալում են որոշակի շահույթի ստացում: Դա նշանակում է, որ պետական տնտեսական քաղաքականությունն իր առջև դրված խնդիրները լուծում է միջնորդավորված, իր բացառիկ իրավասության տակ գտնվող լծակներով և գործիքներով մասնավոր հատված վրա ներագդելու միջոցով:

Համապետական տնտեսական ռազմավարությունն իր արտացոլումն է գտնում պետական քաղաքականության այնպիսի բաղադրիչների մեջ, ինչպիսիք են դրամավարկային, հարկաբյուջետային, սոցիալական, արտաքին տնտեսական քաղաքականությունները և այլն: Բնական է ենթադրել, որ նշված յուրաքանչյուր բաղադրիչն առանձին վերցրած ունի իր առանձնահատկու-

¹ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից:

թյունները, որով էլ պայմանավորված ձևավորվում են նաև համապատասխան ոլորտային ռազմավարություններ և նպատակներ: Օրինակ՝ հարկային ռազմավարության շրջանակներում պետական ծախսերը ֆինանսավորելու համար անհրաժեշտ դրամական ռեսուրսներով պետական բյուջեն համալրելու, ձեռնարկատիրական գործունեության դաշտը կարգավորելու նպատակով սահմանվում են հարկատեսակները, ըստ առանձին հարկատեսակների դրույքաչափերը, հարկ վճարողների խմբերը, հարկային արտոնությունների շրջանակները, հարկային մարմինների լիազորությունները, դրանց կարգավիճակն ու կազմակերպատիրավական կառուցվածքը, հարկային պատասխանատվության ձևերը և այլն: Այսպիսով, հարկային ռազմավարությունն ունի համապետական նշանակություն, որից կախված են պետության սոցիալ տնտեսական բազմաթիվ գործառույթների իրականացման հնարավորությունը:

Ռազմավարությունների հիերարխիկ կառուցվածքում առանձնացվում են նաև տարածաշրջանային, ոլորտային և ճյուղային ռազմավարությունները: Դրանցից յուրաքանչյուրն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք իրենց էությունը տեղավորվում են ռազմավարության բովանդակության հայեցակարգային դրույթներում: Ճյուղային ռազմավարության բովանդակությունը բխում է տնտեսության ճյուղի ընկալումներից: Այսինքն, ճյուղը կարելի է ներկայացնել որպես համասեռ, միմյանց հետ փոխկապակցված արտադրանք թողարկող կազմակերպությունների ամբողջություն: Ճյուղային ռազմավարության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշակի առանձին ճյուղի կազմակերպություններին բնորոշ խնդիրներն այլ ճյուղերի համար կարող են և էական չլինել: Օրինակ, ակնհայտ է, որ տրանսպորտային հաղորդակցության խնդիրները շատ ավելի մեծ դերակատարում ունեն ծանր արդյունաբերության և մեքենաշինության համար, քան ծրագրային ապահովման կամ առողջապահության ոլորտների համար: Այս տեսանկյունից ճյուղային ռազմավարությունը ուղղված է որոշակի ճյուղի զարգացման օրինաչափությունների կարգավորմանը, բարեփոխումների իրականացմանը, առկա խնդիրների լուծմանը՝ որոնց նպատակը պետության տնտեսական ռազմավարությանը համահունչ ճյուղի կազմավորումն է: Նման հիմնահարցերից են ճյուղի իրացման շուկաների ձևավորման, հումքային ռեսուրսների անխափան մատակարարումների և էներգետիկ պահանջների ապահովման, պետական խթանող քաղաքականության գործիքների կիրառության մոտեցումները, որոնց շարքում կարևոր նշանակություն ունեն նաև հարկային մեխանիզմների կիրառման հնարավորությունները:

Այսպիսով, ճյուղային ռազմավարությունը կարելի է ներկայացնել որպես մի համապարփակ փաստաթուղթ, որը պարունակում է տվյալ ճյուղի հեռանկարային զարգացման ուղղությունների վերաբերյալ ռազմավարությունը կազմողի պատկերացումները՝ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ժամանակահատվածի կտրվածքով: Իր բնութագրական առանձնահատկություններով պայմանավորված՝ այն ընդգրկում է մակրոտնտեսական հիմնահարցեր, այլ ոչ թե կենտրոնանում է առանձին կազմակերպությանը բնորոշ խնդիրների վրա, ինչն էլ այն տարբերակվում է կազմակերպության ռազմավարության բովանդակությունից:

Ընդգրկման լայնության տեսանկյունից առանձնացվում է նաև ոլորտային ռազմավարությունը, որը ներառում է մի քանի ճյուղերի վերաբերյալ ընդհանրական բնույթ ունեցող, հասարակական սոցիալ-տնտեսական որոշակի հարթությանը բնորոշ հիմնախնդիրներ: Որպես առանձնացված ոլորտներ կարող են հանդես գալ սոցիալական ապահովությունը, կրթությունը, աղքատությունը, առողջապահությունը, մշակույթը, և այլ ոլորտներ, որոնց համահունչ էլ ձևավորվում և իրագործվում են համապատասխան ոլորտային ռազմավարություններ:

Ռազմավարության ընդգրկման շրջանակը կարող է պայմանավորված լինել նաև տարածքային ընդգրկմամբ, որի դեպքում արդեն առանձնացվում են տարածաշրջանային ռազմավարությունները: Անվանումից արդեն բխում է, որ վերջիններս նպատակ ունեն որոշակի տարածքային ընդգրկմամբ բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, ինտեգրացիոն, էկոլոգիական և նմանատիպ այլ նպատակների իրագործմանը: Որպես կանոն, տարածաշրջանային ռազմավարությունները մշակվում և իրագործվում են տարածքային կառավարման մարմինների կողմից, ազգային օրենսդրությամբ տրված լիազորությունների շրջանակներում, հաճախ նաև կենտրոնական իշխանության ֆինանսական օժանդա-

կությամբ: Հայաստանի պարագայում դա իր արտահայտությունը կարող է գտնել մարզերի և համայնքների մակարդակով, տնտեսության զարգացման համապատասխան ծրագրերի կյանքի կոչման միջոցով:

Քննարկման համատեքստում հարկային ռազմավարությունը կարելի է ներկայացնել որպես հարկային քաղաքականության իրականացման երկարաժամկետ սկզբունքների և մեխանիզմների ամբողջություն, որոնք ուղղված են պետական քաղաքականության երկարաժամկետ նպատակների իրագործմանը, սոցիալ տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ու հարկային քաղաքականության շրջանակներում լուծվող այլ ռազմավարական նպատակների իրականացմանը: Տնտեսության կարգավորման և մասնավոր հատվածի վրա պետական ներազդեցության կարևորագույն մեխանիզմը, դա իրավական դաշտի սահմանումն է, ինչը հանդես է գալիս որպես պետության մենաշնորհային գործառույթը: Կարևոր սկզբունքային խնդիրը, որ պետք է լուծի յուրաքանչյուր ազատական տնտեսությամբ պետություն, դա շուկայական տնտեսության հիմնադրույթներին համահունչ ազատության և բազմաձևության ապահովումն է, որն արտահայտվում է ազատ գնագոյացման, տնտեսական բնույթի որոշումների ազատության տեսքով: Այս առումով հարկային համակարգի կառուցումն ամենաբարդ հիմնախնդիրներից է, քանի որ այն, հանդես գալով որպես ծախս, իր ազդեցությունն է թողնում ցանկացած տնտեսական սուբյեկտի վարքի և որոշումների վրա: Ընդ որում, չկա հարկային ռազմավարության մեկ միասնական մոդել, որը կիրառելի լինի ցանկացած երկրում՝ պայմանավորված տարբեր երկրներում բնական ռեսուրսների անհամասեռ տեղաբաշխմամբ, աշխարհագրական և աշխարհաքաղաքական պայմաններով, ազգային մտածելակերպի առանձնահատկություններով, պատմական ժառանգությամբ և տնտեսավարման ավանդույթներով: Չնայած միասնական կազմակերպական կառուցվածքի բացակայությանը՝ այնուամենայնիվ գրեթե միասնական են այն սկզբունքներն ու լուծելի խնդիրների շրջանակը, որոնք դրվում են հարկային համակարգի առջև: Դրանցից կարևորագույնները միտված են ազգային եկամտի՝ պետության, սեփականատերերի, աշխատող դասի միջև արդարացի բաշխմանը, շուկայական տնտեսության սկզբունքներին համապատասխան ազատ մրցակցության ապահովմանն ու հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետ իրականացմանը և ըստ այդմ էլ համապատասխան հարկատեսակների ու հարկման սկզբունքների կիրառմանը:

Հարկային ռազմավարության քննարկման շրջանակներում իր տեղն ունի նաև հարկային մարտավարության քննարկումը, քանի որ այս երկու հասկացություններն անբաժանելի են: Հարկային ռազմավարության հայեցակարգում ռազմավարություն բառի օգտագործումն արդեն ենթադրում է, որ այն պետք է լինի որոշակի իմաստով կայուն և հարաբերականորեն հաստատուն: Այն պետք է ավելի շատ աստիճանական զարգացում ապրի և փոփոխվի երկարաժամկետ հատվածում: Ընդ որում այդ փոփոխությունները պետք է հիմնավորված լինեն առանցքային նշանակություն ունեցող իրադարձություններով, որոնց պայմաններում հարկային ռազմավարության ընթացիկ դրույթները կորցնում են իրենց արդիականությունը, իրագործելիությունը կամ նպատակահարմարությունը: Օրինակ՝ ՀՀ նոր Մահմանադրության ընդունումը, ԵԱՏՄ անդամակցությունը կամ ֆինանսատնտեսական ճգնաժամը լուրջ ազդակներ են տնտեսական բնույթի ռազմավարությունների վերանայման և անհրաժեշտության դեպքում համապատասխան շտկումների համար: Ի տարբերություն հարկային ռազմավարությանը՝ հարկային մարտավարությունն ուղղված է լուծելու պետության զարգացման կոնկրետ փուլում առաջ եկող խնդիրները՝ հիմնված ֆինանսական հարաբերությունների կարգավորման և կառավարման վրա: Այս առումով, հարկային ռազմավարությամբ որոշվում են այն սահմանները, որոնց շրջանակներում կարող է կիրառվել հարկային հարաբերությունների կարգավորման այս կամ այն գործիքակազմը:

Հարկային ռազմավարությունը և մարտավարությունն ըստ էության այս կամ այն կերպ իրենց դրսևորումն ունեն ցանկացած երկրում, սակայն եթե պետությունը ցանկանում է արդարացի խաղի կանոններ սահմանի տնտեսավարողների, բնակչության և միջազգային կառույցների հետ համագործակցության շրջանակներում, ապա հստակ սահմանված հարկային ռազմավարությունն ու դրան համահունչ մարտավարությունը պետք է հասկանալի լինեն տնտեսական գործընթացներում ներգրավված բոլոր կողմերի համար: Միայն հստակ կիրառվող հարկային

ռազմավարության պայմաններում է հնարավոր պահպանել երկարաժամկետ գործընկերային հարաբերություններ, ներդրումներ և հեռանկարային նախագծեր: Ի հեճուկս սրան, մասնավորապես անկայուն տնտեսական իրավիճակների և չկայացած պետականության պայմաններում առավել հաճախ կարելի է հանդիպել ժամանակավոր բնույթի մարտավարական այնպիսի քայլերի, որոնք ուղղված լինելով տվյալ պահին պետական որևէ մարտավարական խնդրի լուծմանը՝ խեղաթյուրում են հարկային ռազմավարության կայունության հայեցակարգը, և այս իմաստով էլ տնտեսապես հիմնավոր չեն: Նման պայմաններում տնտեսվարողները կխուսափեն ներգրավվել երկարաժամկետ նախագծերում՝ նախապատվությունը տալով կարճաժամկետ բնույթ կրող, արագ ետգնվող և իրացվելի ակտիվներ ենթադրող տնտեսական գործունեության տեսակներում: Ավելին, նման պայմաններում երկարաժամկետ և ռազմավարական տեսանկյունից կարևորագույն ոլորտներում ներդրումներ կիրականացնեն ոչ պաշտոնական երաշխիքներ ունեցող տնտեսվարողները, որի արդյունքում այդ ոլորտները կհայտնվեն մենաշնորհային կարգավիճակում:

Հետևաբար ներկայիս տնտեսական իրողությունների պարագայում, հաշվի առնելով ռազմավարական կառավարման ներդրմամբ լուրջ հաջողությունների հասած առևտրային կազմակերպությունների փորձը, արդիական է դառնում պետության կողմից հարկային ռազմավարության որդեգրումն ու անշեղորեն իրականացումը, ինչը նպատակ ունի կյանքի կոչելու նպատակների հետևյալ խմբերը.

1. Տնտեսական, որն արտահայտվում է դրա կարգավորման, աճի ապահովման, ներդրումների խթանման, սղաճի կարգավորման, և տնտեսական այլ գործընթացներում պետության ակտիվ միջամտության տեսքով:

2. Սոցիալական, որն իր արտահայտումն է գտնում բնակչության տարբեր սոցիալական խմբերի տնօրինելի եկամուտների համահարթեցման, առավել աղքատ և խոցելի շերտերի սոցիալական ապահովության, կրթության և մարդկային կապիտալի ձևավորման խրախուսման գործընթացները պետության կողմից կազմակերպելու տեսքով:

3. Ֆիսկալ, որն իր արտահայտումն է գտնում բյուջետային միջոցներով պետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման տեսքով:

4. Էկոլոգիական, որն արտահայտվում է շրջակա միջավայրի պաշտպանության, բնօգտագործման արդարացի վճարների սահմանման, բնական վերարտադրության խրախուսման և ռեսուրսափնայող տեխնոլոգիաների առաջնորդման տեսքով:

5. Միջազգային, որն արտահայտվում է կրկնակի հարկման բացառման, միջազգային տարբեր շահարկումների միջոցով հարկերից խուսափելու բացառման, տնտեսական միությունների անդամակցությամբ պայմանավորված պարտավորությունների իրագործման և հարկային բեռի ռացիոնալ բաշխման տեսքով¹:

Հարկային ռազմավարության հիմնադրույթներն ու տրամաբանությունը բխում են երկրի սահմանադրական իրավունքներից ու դրանցից բխող իրավական ակտերից: Հարկային ռազմավարությունը չի կարող ինքնանպատակ լինել, այն պետք է նպաստի նշված դրույթների և պետության գործառույթների իրագործմանը: Կառավարման տարբեր մարմինների գործողությունների ու հարկային ռազմավարության անհամապատասխանությունը հանգեցնում է բյուջեյի եկամուտների ապահովման գործընթացի բնականոն ընթացքի և շուկայի համակարգաստեղծ տնտեսական մեխանիզմների խեղաթյուրման ու սոցիալ-տնտեսական բնույթի ճգնաժամերի առաջացմանը: Արդյունքում ընթացիկ ֆինանսական պահանջների բավարարման նպատակով պետությունը ստիպված է լինում դիմելու հարկային ռազմավարությունից չբխող լրացուցիչ մարտավարական հնարքների, այդ թվում օրենսդրական փոփոխությունների և հարկատուների նկատմամբ ոչ պաշտոնական ճնշումների, որոնց արդյունքում առկա հակասություններն ավելի են խորանում՝ արգելակելով ճգնաժամի հաղթահարման բոլոր ջանքերի արդյունավետությունը: Նմանատիպ իրավիճակի կարելի է ականատես լինել նաև Հայաստանում, որտեղ վերջին

¹ Налоги и налогообложение: учебник для студентов вузов, обучающихся по специальностям "Финансы и кредит", "Бухгалтерский учет, анализ и аудит", "Мировая экономика" / [И.А. Майбуров и др.]; под ред. И.А. Майбурова. - 4-е изд., перераб. и доп. - М.: ЮНИТИ-ДАНА, 2010. с.75.

տարիներին, չնայած ձեռնարկվող լայնածավալ միջոցառումներին, տնտեսական ակտիվության լուրջ առաջընթաց այդպես էլ չի արձանագրվում:

Ասվածը ցույց է տալիս, թե ինչ ահռելի նշանակություն ունի հարկային ռազմավարության հստակությունն ու պետության կողմից ձեռնարկվող մարտավարական միջոցառումների համապատասխանությունը¹: Առաջիկա տարիների բյուջետային առաջադրանքները պետք է համապատասխանության մեջ լինեն հարկային ռազմավարության գերակայությունների հետ, որպեսզի պլանավորված ծավալով հարկային եկամուտների հավաքագրումը չհանգեցնի լրացուցիչ հարկային բեռի առաջացմանը: Վերջինս միկրոմակարդակում ծախս է, որը հաշվի է առնվում ներդրումային որոշումների կայացման ժամանակ: Ցանկացած ներդրող պետք է վստահ լինի, որ ներդրումային փաթեթի ֆինանսատնտեսական հիմնավորման ժամանակ ներառված հարկային ծախսերի մեծությունը կայուն բնութագրի ունի, հակառակ դեպքում ներդրումային որոշումը կկայացվի հոգուտ այլ, ավելի մեծ կայունությամբ բնութագրվող պետության: Ավելին, տրամաբանորեն կարելի է հիմնավորել, որ հարկային բեռի կանխատեսելիությունն ավելի մեծ նշանակություն ունի ներդրումային որոշումների կայացման ժամանակ, քան հարկային բեռի ընթացիկ մեծությունը, այլապես եվրոպական բարձր հարկային բեռով երկրներում ոչ մի օտարերկրյա ներդրող ներդրում չէր կատարի, ինչն իրականում այդպես չէ:

Ընդհանուր առմամբ ռազմավարությունների մշակման և ընտրության մեխանիզմները միկրոմակարդակում և մակրոմակարդակում սկզբունքորեն համարժեք են: Այստեղ հիմնական տարբերություններն ու շեշտադրումները վերաբերում են միկրո և մակրո ընդգրկմամբ ցուցանիշների և գործոնների բովանդակության, նպատակների ընդգրկման մակարդակի, արտաքին միջավայրի վերաբերյալ ընկալումների և համանման այլ խնդիրների հետ: Որպես կանոն մակրոմակարդակում ռազմավարական նպատակներն ավելի տարողունակ են և կարող են վերաբերվել տնտեսական աճին, գործազրկության մակարդակին, բնակչության եկամուտներին, սղաճի ցուցանիշներին և այլն: Պետք է հիշել նաև, որ շատ փոփոխականներ մակրո և միկրո ընկալումներում ունեն սկզբունքորեն տարբեր նշանակություն և մեկնաբանություն: Օրինակ՝ աշխատավարձի ֆոնդը միկրոմակարդակում հանդես է գալիս որպես ծախս, որի կրճատումը (արտադրության ավտոմատացման, կապիտալազինվածության մակարդակի բարձրացման, աշխատանքի բաժանման և ցածր որակավորմամբ աշխատուժի կիրառման և այլ եղանակներով) կազմակերպության արդյունավետության բարձրացման ուղիներից է: Դրան հակառակ՝ մակրոմակարդակում աշխատավարձի ֆոնդը հանդես է գալիս որպես բնակչության եկամուտ, որի անընդհատ ավելացումը տնտեսական քաղաքականության առանցքային նպատակներից է:

Ամփոփելով հարկային ռազմավարության ծագման և զարգացման տնտեսագիտական ու իրավական հենքը և հիմք ընդունելով կազմակերպությունների կողմից ռազմավարությունների մշակման ու իրականացման շրջափուլի տրամաբանությունը, կարելի է առանձնացնել այն խնդիրների և միջոցառումների շրջանակը, որոնց իրագործմամբ հնարավոր կլինի հասնել հարկային առավել օպտիմալ ու ռացիոնալ ռազմավարության որդեգրման: Ռազմավարական կառավարման հայեցակարգային 3 հարցադրումները հարկային ռազմավարության տեսանկյունից կարելի է ձևակերպել հետևյալ առումներով.

1. ինչպիսի՞ն է հարկային համակարգի ներկա վիճակը,
2. ո՞րն է հարկային համակարգի ապագա տեսլականը,
3. ինչպե՞ս է պետությունը պլանավորում հասնել ցանկալի վիճակին:

Ռազմավարության մշակման ելակետը ռազմավարական դիրքի վերլուծությունն ու ընտրությունն է՝ հիմնված արտաքին միջավայրի հնարավորությունների և սպառնալիքների ու առկա ռեսուրսների համադրման վրա²: Հետևաբար հարկային ռազմավարության մշակման ժամանակ անհրաժեշտ է վերլուծել հարկային համակարգում առկա իրողությունները, բացահայտել պետական եկամուտների ապահովման գործում հարկային համակարգի վրա առկա ճնշումները, ինչպես նաև միջազգային համագործակցության և տարբեր կառույցներին անդամակցությամբ պայմանավորված հարկային քաղաքականության ազատության սահմանափակումները, հար-

¹ Финансы. Под ред. В.М. Родионовой. Учебник. - М.: Финансы и статистика, 2006. с. 169.

² Парахина В.Н., Максименко Л.С., Панасенко С.В., Стратегический менеджмент, Учебник, М.: КНОРУС, 2008, էջ 13:

կային համակարգի առավել լուրջ և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների շրջանակը, հարկային համակարգի բավարար մակարդակում գտնվող և բարեփոխումներ չպահանջող ուղղությունները, և այլն: Հարկային ռազմավարության մշակման և իրականացման գործընթացում անհրաժեշտ է պատասխանել նաև այնպիսի հարցադրումների ինչպիսիք են միջոցառումների իրագործման համար պատասխանատու մարմինների սահմանումը, անհրաժեշտ ֆինանսական, նյութական ու մարդկային ռեսուրսների ապահովման աղբյուրները, պլանավորվող գործընթացների ժամանակային ընդգրկումը և ակնկալվող ցուցանիշները, պլանավորվող միջոցառումների հերթականությունն ու առաջնահերթությունը, ռազմավարության իրագործմանը նպաստող հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքի սահմանումը, և այլն:

ՀԱՐԿԱՅԻՆ ՈՎՉՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՍՈՒՐԻԿ ՆԱԻՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Համառոտագիր

Ռազմավարական կառավարման հայեցակարգը տնտեսագիտության մեջ լայնորեն տարածում է գտել անցած դարի 50-ական թվականներից, արևմտյան երկրների կորպորատիվ կառավարման ոլորտում: Վերջին տարիներին, իր ցուցաբերած բարձր արդյունավետությամբ պայմանավորված, ռազմավարական կառավարման սկզբունքները լայն տարածում են գտնում կառավարման բոլոր, այդ թվում նաև պետական մակարդակներում: Հարկային ռազմավարությունը պետական կառավարման համակարգում միտված է բացահայտելու, թե ինչպիսին է հարկային համակարգի ներկա վիճակը, որն է դրա ապագա տեսլականը և ինչպես է պետությունը պլանավորում հասնել այդ ցանկալի վիճակին:

Բանալի բառեր. հարկեր, ռազմավարություն, պետական կառավարում, արդյունավետություն, պլանավորում, տեսլական:

МЕСТО НАЛОГОВОЙ СТРАТЕГИИ В СИСТЕМЕ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ

СУРИК НАИРИОВИЧ САРГСЯН

аспирант Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Концепция стратегического управления получила широкое распространение в экономике с 50–х годов прошлого века в области корпоративного управления западных стран. В последние годы вследствие высокой эффективности принципы стратегического управления находят широкое применение на всех уровнях управления, в том числе государственном. Налоговая стратегия в системе государственного управления направлена на выявление текущего состояния налоговой системы, видение ее будущего и на то, каким образом государство планирует достичь желаемого состояния.

Ключевые слова: налоги, стратегия, государственное управление, эффективность, планирование, видение.

THE PLACE OF THE TAX STRATEGY IN THE SYSTEM OF THE PUBLIC ADMINISTRATION

SURIK NAIRI SARGSYAN

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The concept of strategic management has become widespread in the Economics since the 1950s of the last century in the field of corporate governance of the Western countries. In the recent years, due to the high effectiveness, the principles of strategic management are widely used at all levels of government, including the public administration system. Tax strategy in the public administration system is aimed at revealing the current state of affairs of the tax system, a vision of its future and how the state plans to achieve the desired state.

Keywords: Taxes, strategy, public administration, efficiency, planning, vision

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Պետության սոցիալ-տնտեսական և հարկային ոլորտի քաղաքականության արդյունավետության կարևորագույն պայման է ազատ շուկայական տնտեսության համակարգի հաստատումը, որում գործում են հարկման միասնական սկզբունքներ ու արդարացի կառուցակարգեր, օրենսդրական մակարդակով հստակ կարգավորված են հարկային քաղաքականության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները՝ միջազգային առաջադեմ փորձին համապատասխան: Այս հարցում առանձնակի կարևորություն ունի գործարարների շահերի պաշտպանության լիարժեք ապահովումը: Ընդ որում, անհրաժեշտ է ապահովել հարկային քաղաքականության ոլորտում հավասար մոտեցումների ներդրումը, գործարարության խթանման արդարացի պայմանների ապահովումը՝ նպատակ ունենալով երաշխավորել տնտեսության բոլոր ճյուղերի երկարաժամկետ և հավասարակշռված զարգացումը:

Նշված հարցերում հաջողություն արձանագրելու համար կարևորագույն նշանակություն ունի ճիշտ ու միասնական սկզբունքների վրա հիմնված հարկային քաղաքականության վարումը: Այս առումով ընդունելի չէ Հայաստանի Հանրապետությունում ներկայում առկա վիճակը, երբ հարկային իրավահարաբերություններ կարգավորող նորմերը զետեղված են տարաբնույթ իրավական ակտերում և դրանով պայմանավորված հարկ վճարողների իրավունքների պաշտպանության առումով չունեն անհրաժեշտ համակարգվածություն: Բացի այդ, հարկային գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ դրանում կատարված փոփոխությունները հաճախ կրել են իրավիճակային բնույթ կամ նպատակ են հետապնդել լուծել որոշակի դրվագային խնդիրներ՝ կտրված լինելով հարկային միասնական համակարգի զարգացման տրամաբանությունից: Հարկային հարաբերությունների կարգավորման ոլորտում իրավական քաղաքականության միասնականության առկա վիճակն իր հերթին վտանգում է հարկ վճարողների իրավունքների, գործարարների շահերի պաշտպանության կառուցակարգերը, դրանք իրականից վերածում անիրականի: Այս իրավիճակը վտանգավոր է նաև այն առումով, որ անիրական կամ զգալիորեն քիչ արդյունավետ է դարձնում գործարարության ոլորտում իրավական պաշտպանության հնարավորությունները: Խոսքը վերաբերում է իրավունքների պաշտպանության ինչպես վարչական, այնպես էլ դատական եղանակներին:

Հարկային վարչարարության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները տարբեր երկրներում իրականացվում են հարկային կոնկրետ գործիքակազմի կիրառման միջոցով, որը պայմանավորված է տվյալ երկրի տնտեսության իրավիճակը բնութագրող մի շարք մակրոտնտեսական ցուցանիշներից: Որպես հարկային վարչարարության բարելավման միջոց նպատակահարմար ենք գտնում վերլուծել «Հերթիթիջ» հիմնադրամի գնահատականների արդյունքները 2000-2016թթ. համար՝ նպատակ ունենալով բացահայտել, թե հատկապես հարկային վարչարարությունը և կոռուպցիոն ռիսկերն ինչպես են ազդում ՀՀ տնտեսական ազատության ինդեքսի վրա: Որպես հարկային վարչարարության բարելավման մոտեցում կարելի է դիտարկել «հարկաբյուջետային ազատության» ինդեքսը, որը չափում է գործարարության հարկային բեռը, որը ներառում է ինչպես ուղղակի հարկերի, այսինքն՝ եկամտահարկի և շահութահարկի բեռի, այնպես էլ ՀՆԱ-ում հարկային բեռի տեսակարար կշռի ցուցանիշը¹:

Պետության կողմից վարվող տնտեսական քաղաքականության կարևորագույն տարրերից մեկը հարկաբյուջետային քաղաքականությունն է: Հարկաբյուջետային քաղաքականությունը կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումներն են՝ կապված պետական ծախսերի,

¹ https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/For%20webpage_HF_2016.pdf.

հարկային քաղաքականության և պետական բյուջեի հաշվեկշռի փոփոխության հետ՝ նպատակ հետապնդելով տնտեսությունում ապահովել լրիվ զբաղվածություն և բարձր տնտեսական աճ¹:

Այդ իսկ պատճառով քննարկվենք ՀՀ տնտեսությունը բնութագրող հետևյալ մեծությունները՝ կոռուպցիայից ազատություն, ներդրումային ազատություն, հարկաբյուջետային ազատություն, գործարարության ազատություն:

Աղյուսակ 1

2000-2016 թթ. տնտեսական ազատության ինդեքսի դինամիկան²

	Կոռուպցիայից ազատություն	Հարկաբյուջետային ազատություն	Գործարարության ազատություն	Ներդրումների ազատություն
2000	30	79.3	55	50
2001	30	81.9	55	70
2002	25	88.3	55	70
2003	25	88.9	55	70
2004	25	90	55	70
2005	30	89.9	55	70
2006	31	90	77.6	70
2007	29	89.7	80.8	60
2008	29	89	81.3	70
2009	30	90	83.7	70
2010	29	89.3	83.4	75
2011	27	89.2	82.4	75
2012	26	89.3	87.8	75
2013	26	88	87.6	75
2014	26.7	86.5	83.1	70
2015	36	84.4	82.7	75
2016	37	83.8	77.5	80

Աղյուսակ 1-ից երևում է, որ «կոռուպցիայից ազատության» ինդեքսը գտնվում է ամենացածր մակարդակում և այն ավելի ակնհայտ երևում է գծապատկեր 1-ում: 2000-2016թթ. այն բարձրացել է 7 նիշով, սակայն համեմատելով այլ ինդեքսների հետ, մնում է ամենացածրը: 2000թ.-ին «կոռուպցիոն ազատության» ինդեքսը կազմել է 30, «գործարարության ազատության» ինդեքսը 55, 2012թ. այդ նույն գործոնների ինդեքսները համապատասխանաբար կազմել են՝ 26 և 87.8: Այսինքն, պետության կողմից կիրարկված քաղաքականության արդյունքում դյուրացել է գործարարությամբ զբաղվելը՝ բարձրանալով 32.8 նիշով, մինչև նույն ժամանակ «կոռուպցիայից ազատության» ինդեքսը ոչ միայն չի փոփոխվել, նույնիսկ նվազել է: «Կոռուպցիայից ազատության» ինդեքսի ամենամեծ աճը գրանցվել է 2014-2015թթ., կազմելով՝ 9.3 նիշ: Խնդիրը կայանում է մարդկային գործոնի և բնակչության բարոյահոգեբանական մտածելակերպի մեջ:

«Հարկաբյուջետային ազատության» ամենաբարձր ինդեքսը գրանցվել է 2006թ.՝ կազմելով 90: Նույն տարում «գործարարության ազատության» ինդեքսը կտրուկ բարձրացել է հասնելով 77.6-ի, այսինքն վարած հարկաբյուջետային քաղաքականությունը նպաստել է գործարարությամբ զբաղվելու դյուրինությանը, որն իր մեջ ներառում է՝ գործարարություն սկսելը, շինարարական թույլտվություն ստանալը, անվճարունակության պատճառով լուծարվելը, էլեկտրակա- նության հասանելիությունը:

«Գործարարության ազատության» ամենաբարձր ինդեքսը գրանցվել է 2012թ.՝ կազմելով 87.8, իսկ «հարկաբյուջետային ազատության» ինդեքսը էական փոփոխություն չի կրել՝ մնալով 90-ի սահմաններում: «Գործարարության ազատության» ինդեքսի բարձրացումը կապված է նոր

¹ http://media-economics.blogspot.am/2014/03/blog-post_16.html.

² <http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls>.

օրենքների՝ մասնավորապես «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ՝ «Եկամտա-հարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները անվավեր ճանաչվելով¹: 2012-2016թթ. նկատվել է «գործարարության ազատության» ինդեքսի նվազում, որը խոսում է երկրի հարկային վարչարարության խստացման մասին: Միննույն ժամանակ պետք է նշել, որ «Գործարարության ազատություն» ինդեքսների հաշվարկման համար հիմք են ընդունվել Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» զեկույցը²: Այն ներառում է 13 ցուցանիշ, որոնցից 9-ը նախորդ տարվա համեմատ մնացել են անփոփոխ, 3-ը՝ բարելավվել են, և մի փոքր վատացել է միայն 1-ը՝ սնանկության գործընթացի արդյունքում մարված պարտքերի (փոխհատուցման) չափի ցուցանիշը: Դա նշանակում է, որ «Հերիթիջի» զեկույցում Հայաստանի գնահատականի վատացումը կապված չէ Հայաստանում գործարարության իրավական դաշտի վատացմամբ: Բանն այն է, որ, ըստ մեթոդաբանության, «Գործարարության ազատություն» ինդեքսը գնահատելիս «Հերիթիջը» առանձին երկրների ցուցանիշները համեմատում է այդ ցուցանիշի գծով դիտարկվող բոլոր երկրների միջինի հետ: Փաստորեն, «Գործարարության ազատություն» ինդեքսի գծով համաշխարհային միջինն է բարելավվել, որի պատճառով էլ Հայաստանի գնահատականը չի բարելավվել³:

Ինչ վերաբերում է «հարկաբյուջետային ազատության» ինդեքսին, ապա այն նույնպես նվազման միտում է ունեցել, քանի որ, ուսումնասիրելով ՀՆԱ-ում հարկային բեռի տեսակարար կշիռը, պետք է նկատել, որ այն աճման միտում է ունեցել: Պետք է նշել, որ 2016թ.-ի զեկույցում ընդհանուր հարկային բեռի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում նախորդ տարվա համեմատ աճել է 1.4%-ով և կազմել 23.4%, որի պատճառով էլ Հայաստանի հարկաբյուջետային ազատության գնահատականը չի բարելավվել⁴:

«Ներդրումների ազատության» ինդեքսը վերջին 10 տարիների ընթացքում էական փոփոխության չի ենթարկվել, միայն 2016թ.-ին գրանցվել է ամենաբարձր դիրքը, որը կապված է օտարերկրյա ուղղակի ներդրումների խրախուսմամբ:

«Կոռուպցիայից ազատության» ինդեքսը 2016թ.-ին 2000թ.-ի համեմատ աճել է 7 նիշով: «Հարկաբյուջետային ազատության» ինդեքսը աճել է 4.5 նիշով: «Գործարարության ազատության» ինդեքսն աճել է՝ կազմելով 22.5 նիշ, իսկ «նեդրումների ազատության» ինդեքսը աճել է 30 նիշով:

Ինդեքսի ամենամեծ փոփոխությունը կատարվել է «նեդրումների ազատության» ինդեքսի գծով՝ հասնելով 30 նիշի: Դրան նպաստել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը, որն ազատում էր այն ընկերություններին շահութահարկ վճարելուց, որոնց կանոնադրական կապիտալում 500մլն և ավել օտարերկրյա ներդրում են կատարվել⁵:

Գծապատկեր 1-ից երևում է, որ դիտարկված չորս գործոններից «կոռուպցիայից ազատության» և «նեդրումների ազատության» ինդեքսները աճել են, իսկ «հարկաբյուջետային ազատության» և «գործարարության ազատության» ինդեքսները նվազել են: «Հարկաբյուջետային ազատության» և «գործարարության ազատության» ինդեքսների նվազումը և «կոռուպցիայից ազատության» ինդեքսի նվազումը բացատրվում է հարկային վարչարարության խստացմամբ:


¹ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք: ՀՕ-246-Ն: ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1:

² Այս գործոնի գնահատման համար Համաշխարհային բանկի «Գործարարության դյուրինություն 2016» զեկույցից վերցրել են՝ ա) գործարարություն սկսելու համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի, ծախսի և նվազագույն կապիտալի ցուցանիշները, բ) շինարարական թույլտվություններ ստանալու համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և ծախսի ցուցանիշները, գ) անվճարունակության պատճառով լուծարման դեպքում անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և փոխհատուցման չափի ցուցանիշները, դ) էլեկտրականության հասանելիության համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և ծախսի ցուցանիշները:

³ https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/For%20webpage_HF_2016.pdf.

⁴ Նույն տեղում:

⁵ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 39 (փոփ. 23.05.98 ՀՕ-216, լրաց. 27.12.01 ՀՕ-286):



Գծապատկեր 1. 2000-2016թթ. ՀՀ-ում «Տնտեսական ազատության ինդեքսի» դինամիկան¹

Գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ տնտեսական ազատության հիմնական ինդեքսներից՝ ներդրումային, հարկաբյուջետային և գործարարության ազատության ինդեքսները 2000-2016թթ. էականորեն փոխվել են, որին նպաստել են հանրապետությունում իրականացված և շարունակական ընթացք ունեցող ենթակառուցվածքային բարեփոխումները: Մասնավորապես, «հարկաբյուջետային ազատության» ինդեքսի բարելավումը դիտարկվող ժամանակահատվածում պայմանավորված է հարկային վարչարարության բարեփոխումներով, ինչպես նաև բյուջետային հարաբերությունների ոլորտում՝ ծրագրային բյուջետային ներդրամբ: Պետք է ասել, որ «հարկաբյուջետային ազատության» ինդեքսի բարելավմանը զուգահեռ 2000-2016թթ. էականորեն աճել է «գործարարության ազատության» ինդեքսը, ինչը պայմանավորված է ՀՀ գործարար միջավայրը բնութագրող գործոնների բարելավմամբ, ընթացակարգերի պարզեցմամբ, ինչպես նաև հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմամբ:

Ընդհանուր առմամբ, տնտեսության զարգացման համար գերակայություններից մեկը հանդիսանում է տնտեսական ազատության ինդեքսները բնորոշող գործոնների վերլուծությունը: Ընդ որում, վերլուծության արդյունքների ամփոփ գնահատականները ցույց են տալիս, որ քանի դեռ հանրապետությունում գոյություն ունեն գործարարության, ներդրումային, հարկաբյուջետային և կոռուպցիայի ոլորտում առկա ռիսկերը, բացթողումները և թերացումները, տնտեսությունը հնարավորություն չունի զարգանալ իր ամբողջական հնարավորություններով:

¹ Տվյալները վերցված են աղյուսակ 1-ից:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՍՏԵՔՏՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, տ.գ.թ.

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Համառոտագիր

ՀՀ տնտեսության զարգացման համար գերակայություններից մեկը հանդիսանում է տնտեսական ազատության ինդեքսները բնորոշող գործոնների վերլուծությունը: Միաժամանակ, վերլուծության արդյունքների ամփոփ գնահատականները ցույց են տալիս, որ քանի դեռ հանրապետությունում գոյություն ունեն գործարարության, ներդրումային, հարկաբյուջետային և կոռուպցիայի ոլորտում առկա ռիսկերը, թերացումները, տնտեսությունը հնարավորություն չունի զարգանալ իր ամբողջական ներուժով՝ եթե չկա տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական կամք և դիրքորոշում՝ ուղղված պետության, տնտեսության, բիզնեսի, հասարակության օրինաչափ զարգացմանը:

Բանալի բառեր. հարկային գործիքակազմ, հարկաբյուջետային ազատություն, օտարերկրյա ներդրողներ, հարկային վարչարարություն:

АНАЛИЗ ИНДЕКСА ЭКОНОМИЧЕСКОЙ СВОБОДЫ РА В КОНТЕКСТЕ КОРРУПЦИОННЫХ РИСКОВ

ТАТЕВИК СМБАТОВНА ПАРСАДАНЯН, к.э.н.

младший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Одним из приоритетов экономического развития РА является анализ факторов, характеризующих индексы экономической свободы. Одновременно, сводные оценки результатов анализа показывают, что до тех пор, пока в республике существуют инвестиционные, налогово-бюджетные, коррупционные риски и риски для ведения бизнеса, упущения, а также нет экономической, политической, морально-психологической воли и позиции, направленной на закономерное развитие государства, экономики, бизнеса и общества, не может быть полноценного развития экономического потенциала.

Ключевые слова: налоговый инструментарий, налогово-бюджетная свобода, иностранные инвесторы, налоговое администрирование.

ANALYSIS OF THE INDEX OF ECONOMIC FREEDOM OF ARMENIA IN THE CONTEXT OF CORRUPTION RISKS

TATEVIK SMBAT PARSADANYAN, Ph.D. in Economics

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

One of the priorities of economic development in the Republic of Armenia is the analysis of factors characterizing the index of economic freedom. Meanwhile, an overall assessment of the results of the analysis shows that as long as the investors could bear and/or be exposed to investment, fiscal and corruption risks and those risks that are associated with the doing business and face shortcomings and inactions; and the nation lacks economics, political moral-psychological will, and position and views on the natural course of development of the nation, economy, business and society the nation couldn't report development that is aimed at taping the full-potential growth.

Keywords: Fiscal tools, fiscal freedom, foreign investors and tax administration

ՀՀ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱԴՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Տնտեսության իրական ու ֆինանսական հատվածների փոխադարձ ներգործության հետազոտության հարցը կարևորվել է միջոց և ցանկացած հասարակարգի պայմաններում:

Տնտեսության իրական հատվածն արդյունաբերության, գյուղատնտեսության և նմանատիպ այլ ճյուղերն են, որտեղ ձևավորվում է վերջնական արդյունք՝ կապված պատրաստի արտադրանքի ստացման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման հետ: Տնտեսության իրական հատվածը կազմված է ձեռնարկություններից (ոչ ֆինանսական կազմակերպություններ), տնային տնտեսություններից և տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններից: Տնտեսության ֆինանսական հատվածն իր մեջ ընդգրկում է այն բոլոր ռեզիդենտ կազմակերպությունները, որոնք զբաղվում են ֆինանսական միջնորդությամբ կամ հարակից սպասարկող գործունեությամբ: Ֆինանսական միջնորդությունն այնպիսի գործունեություն է, որի դեպքում սուբյեկտն իր անունից պարտավորություններ է ներգրավում՝ ֆինանսական շուկայում գործառնությունների միջոցով համապատասխան ակտիվների ձեռքբերման նպատակով: Այլ կերպ ասած՝ ֆինանսական հատվածը բանկերն են, ֆինանսական, ներդրումային, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև՝ ֆոնդային բորսաները, որոնք ՀՀ տնտեսության անբաժան մասն են կազմում:

Դրամաշրջանառությունը դրամանիշերի անընդհատ շարժի մի գործընթաց է, որը պայմանավորված է աշխատանքների և ծառայությունների մատուցման դիմաց վճարման, ապրանքների գնման, տարբեր տեսակի վճարումների և հաշվարկների իրականացման, թոշակների տրամադրման, պարտքերի վերադարձման գործընթացներով՝ կանխիկ և անկանխիկ ձևերով:

Դիտարկենք տնտեսության իրական հատվածի, ինչպես նաև ՀՀ տնտեսական աճը բնութագրող հիմնական ցուցանիշի՝ ՀՆԱ-ի դինամիկան՝ ըստ 2008 և 2012-2015 թթ. (տե՛ս գծապատկերը)¹:


Գծապատկերից ակնհայտ է, որ տնտեսական աճ ապահովող հիմնական ոլորտներն են շինարարությունը, գյուղատնտեսությունը, առևտուրը և մշակող արդյունաբերությունը:

Գաղտնիք չէ, որ մինչև 2008 թ. ՀՀ-ում գրանցվում էր երկնիշ տնտեսական աճ և մակրոտնտեսական համեմատաբար կայուն վիճակ: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով ի հայտ եկան ՀՀ տնտեսությունում առկա մակրոտնտեսական շեղումներ և շուրջ 7 տարի տևած երկնիշ աճն ուներ ոչ կայուն շարժիչ ուժ: Միաժամանակ պարզաբանման առումով նշենք, որ 2001 թվականից տնտեսական աճ ապահովող հիմնական ճյուղը շինարարությունն էր, որը, որպես կանոն, չափազանց խոցելի է տնտեսական տատանումների նկատմամբ: Եվ զարմանալի չէ, որ 2009 թ. ՀՀ տնտեսության մեջ տեղի ունեցավ տնտեսական անկում 14,1 %-ի չափով:

Գծապատկերի տվյալներից ակնառու է նաև, որ նույնիսկ 7 տարի անց (2015 թ.) շինարարության ոլորտի նախաձգնաժամային մակարդակն ի համեմատ 2008 թ.-ի դեռևս վերականգնված չէ:

Այժմ ներկայացնենք ՀՀ տնտեսության իրական հատվածի և ՀՀ դրամաշրջանառության հիմնական ցուցանիշների դինամիկան՝ ըստ 2011-2015 թթ. (աղյուսակ 1):

¹ Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016 և 2008:



Գծապատկեր. ՀՀ ՀՆԱ-ի դինամիկան (միջին տարեկան գներով, մլրդ. ՀՀ դրամ), ըստ 2008 և 2012-2015 թթ.

Աղյուսակ 1

Տնտեսության իրական հատվածի և դրամաշրջանառության հիմնական ցուցանիշները ըստ 2011-2015 թթ.¹

(մլրդ. ՀՀ դրամ)

Անվանումները	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.
Փողի բազա	671.3	683.8	888.1	886.8	921.3
Փողի զանգված	1126.9	1346.4	1545.4	1674.1	1855.7
ՀՆԱ	3568.2	4266.5	4555.6	4828.6	5032.1
Փողի բազա / ՀՆԱ (%)	18.81	16.03	19.49	18.37	18.31
Փողի զանգված / ՀՆԱ (%)	31.58	31.56	33.92	34.67	36.88

Աղյուսակ 1-ի տվյալներից ակնհայտ է, որ երկրի դրամավարկային քաղաքականության հիմնական ցուցանիշները, այն է՝ փողի բազան և փողի զանգվածը, ներկայացված 5 տարիների ընթացքում ունեցել են շարունակական աճման միտում: Մասնավորապես, փողի բազայի ցուցանիշի աճի տեմպն ուսումնասիրվող ժամանակահատվածում 2015 թ. համեմատած 2011 թ. հետ կազմել է ավելի քան 137 %, իսկ փողի զանգվածինը՝ ավելի քան 164 %: Սակայն աղյուսակային տվյալները վկայում են նաև, որ վերոնշյալ ցուցանիշների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը ներկայացված 5 տարիների ընթացքում գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա:

Սակայն հայտնի է, որ դրամական զանգվածի և ՀՆԱ-ի մեջ կա օրգանական կապ՝ դրամական զանգվածի նվազումը բերում է ՀՆԱ-ի անկմանը, իսկ վերջինս էլ կախված է համախառն պահանջարկից, որն էլ իր հերթին կախվածության մեջ է գտնվում դրամական զանգվածից: Ուստի, երբ կրճատվում է դրամական զանգվածը, դրա արդյունքում ընկնում է համախառն պահանջարկը, որն էլ բերում է տնտեսական աճի դանդաղեցմանը կամ այլ խոսքով՝ ՀՆԱ-ի անկմանը:

Բացի ՀՀ դրամաշրջանառության հիմնական ցուցանիշներից, ներկայացնենք նաև ՀՀ դրամավարկային հիմնական ցուցանիշների դինամիկան՝ ըստ 2011-2015 թթ. (աղյուսակ 2):

¹ Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր, 2015 թ., 2014 թ., 2013 թ., 2012 թ., 2011 թ.:

ՀՀ դրամավարկային հիմնական ցուցանիշները՝ ըստ 2011-2015 թթ.¹

(մլրդ. ՀՀ դրամ)

	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.
Փողի բազա	671.3	683.8	888.1	886.8	921.3
Շրջանառությունում կանխիկ դրամ	349.4	384.1	384.5	348.4	345.5
Ցպահանջ ավանդներ դրամով	164.4	161.7	198.9	182.9	210.1
Դրամային նեղ զանգված (M1)	513.8	545.8	583.4	531.2	555.6
Ժամկետային ավանդներ դրամով	145.6	192.2	264.7	287	304.9
Դրամային լայն զանգված (M2)	659.4	737.9	848.1	818.3	860.5
Արտարժությալի ավանդներ	467.5	608.4	697.3	855.9	995.2
Փողի զանգված (M2X)	1126.9	1346.4	1545.4	1674.2	1855.7

Աղյուսակ 2-ի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշը, բերված 5 տարիների ընթացքում ունենալով տատանողական դինամիկ միտումներ, 2015 թ.-ին ի համեմատ 2011 թ.-ի արձանագրել է նվազում 3.9 միլիարդ դրամի կամ 1.12 % չափով: Այլ կերպ ասած՝ կանխիկ դրամը շրջանառությունում գտնվում է զսպված վիճակում:

Միաժամանակ, ինչպես դրամային նեղ զանգվածի, այնպես էլ դրամային լայն զանգվածի առումով նկատում ենք աճման միտում, համապատասխանաբար 8.14 % և 30.5 %-ի չափով: Այստեղ, սակայն աճը հիմնականում տեղի է ունեցել ցպահանջ և ժամկետային ավանդների ավելացման հաշվին:

Այնուհետ ակնառու է արտարժությալի ավանդների բավականին մեծ աճման տեմպը, որը ներկայացված 5 տարիների ընթացքում հետևողական աճման միտում է ունեցել 212.88 %-ի չափով: Ստացվում է, որ փողի զանգվածի աճը պայմանավորված է ավանդների ծավալների, հատկապես արտարժությալի և ժամկետային, շարունակական աճով, մինչդեռ շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի աճ չի արձանագրվել:

Ըստ էության, ցածր է դրամային զանգվածի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը, իսկ դրամային զանգվածի նվազումը բերում է ՀՆԱ-ի անկմանը: Վերջինս ըստ ծախսերի եղանակի հիմնականում աճում է ընթացիկ սպառման հաշվին: Սա էլ իր հերթին տեղի է ունենում արտերկրից դրամական փոխանցումների հաշվին, այսինքն՝ տնտեսական աճը պայմանավորված չէ մրցունակ իրական հատվածի զարգացմամբ:

Այս առումով առաջնային կարևորության հարց է դառնում մրցունակ իրական հատվածի զարգացումը և տնտեսական ակտիվության խրախուսումը:

Ելնելով վերոնշյալ վերլուծություններից՝ կարող ենք գալ այն հետևության, որ տնտեսական և ՀՆԱ-ի ծավալային աճերի կարող է հանգեցնել ՀՀ-ում դեռևս չգործարկվող արտադրական կազմակերպությունների աստիճանաբար վերագործարկումը՝ ի հաշիվ ներգրավվող երկարաժամկետ վարկային միջոցների և արտասահմանից ստացվող դրամական միջոցների՝ հսկողություն սահմանելով դրանց նպատակային օգտագործման նկատմամբ: Հատկապես վերջինս ունի տնտեսական կարևոր նշանակություն՝ պետական բյուջեի եկամուտների ավելացման առումով՝ ի հաշիվ հարկային մուտքագրումների, որոնք էլ ֆինանսական ռեսուրսների բաշխման և վերաբաշխման արդյունքում կուղղվեն տնտեսության իրական հատվածի սպասարկմանն ու բարելավմանը:

Հավելենք նաև, որ արտադրական կազմակերպությունների վերագործարկումն ունի նաև սոցիալական մեծ նշանակություն, քանի որ կրթվեն նոր աշխատատեղեր, ինչը կմեղմի գործազրկությունը և կնպաստի սոցալ հատկացումների ու եկամտային հարկի կարգավորմանը, ինչպես նաև ՀՀ բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

¹ Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր, 2015 թ., 2014 թ., 2013 թ., 2012 թ., 2011 թ.:

ՀՀ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱԳՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՐՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՈՌԲԵՐՏ ՍՈՍԻ ԶՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասպիրանտ

Համառոտագիր

Տնտեսության իրական հատվածն արդյունաբերության, գյուղատնտեսության և այլ ճյուղերն են, որտեղ ձևավորվում է վերջնական արդյունք: Դրամաշրջանառությունը դրամանիշերի շարժն է, որը պայմանավորված է աշխատանքների և ծառայությունների մատուցման դիմաց վճարման, ապրանքների գնման, տարբեր վճարումների և հաշվարկների իրականացման գործընթացներով: Դրամաշրջանառության հիմնական ցուցանիշների և իրական հատվածի ցուցանիշների մեջ կա օրգանական կապ, որը ներկայացված է տվյալ հոդվածում՝ ուսումնասիրության առնելով վիճակագրական տվյալները:

Բանալի բառեր. իրական հատված, ֆինանսական հատված, ՀՆԱ, տնտեսական աճ, տնտեսական ակտիվություն, փողի զանգված, փողի բազա, փողի ագրեգատներ, դրամավարկային քաղաքականություն:

ДИНАМИЧЕСКИЙ АНАЛИЗ ДЕНЕЖНОГО ОБОРОТА РА В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА

РОБЕРТ СОСОВИЧ КОЧАРЯН

аспирант Национального аграрного университета Армении

Аннотация

Реальный сектор экономики - это промышленность, сельское хозяйство и другие отрасли, где формируется конечный продукт. Денежный оборот – это процесс непрерывного движения денежных знаков, связанный с оплатой за предоставление работ и услуг, закупками товаров, выполнением различных видов платежей и расчетов. В настоящей статье с учетом статистических данных представлена органическая связь, существующая между основными показателями денежного оборота и реального сектора.

Ключевые слова: реальный сектор, финансовый сектор, ВВП, экономический рост, экономическая активность, денежная масса, денежная база, денежные агрегаты, денежно-кредитная политика.

DYNAMIC ANALYSIS OF THE MONETARY TURNOVER OF THE RA IN THE CONTEXT OF ECONOMIC GROWTH

ROBERT SOS KOCHARYAN

Ph.D. Student, Armenian National Agrarian University

Abstract

The real sector of the economy consists of industry, agriculture and other industries where the final product is formed. Money turnover is the movement of banknotes associated with payment for the provision of work and services, the procurement of goods, the processes of implementation of various payments and settlements. In this article, an organic relationship that exists between the main indicators of money turnover and the real sector is illustrated anchoring upon the statistical data.

Keywords: Real economy, financial sector, GDP, economic growth, economic activity, money supply, monetary base, monetary aggregates, monetary policy

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԿՈՐՅՈՒՆ ԼՈՒԿԱՇԻ ԱԹՈՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր,*

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր

ԱՐԾՐՈՒՆԻ ԷԴՎԱՐԴԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտ

ՓՄՁ ԵՆԹԱԿՎԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՈԼՈՐՏԻ ԴԵՐԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկատիրությունը տնտեսական հարաբերությունների համակարգի առանցքային օղակներից մեկն է, որի զարգացման աստիճանը բնութագրում է յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական բարեկեցության մակարդակը: Ձեռնարկատիրությունը մտածողության և ապրելակերպի դրսևորում է տնտեսական դաշտում գործունեություն ծավալել ցանկացող յուրաքանչյուր մարդու համար: Ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրական գործունեությունը բարդ և բազմաճյուղ համակարգ է, որի բաղկացուցիչ տարրից մեկը փոքր և միջին բիզնեսն է:

Ձեռնարկատիրական ենթակառուցվածքներում կարևորվում է փոքր ու միջին ձեռնարկատիրության ենթակառուցվածքներին բնորոշ առանձնահատկությունների տարանջատումն ու առանձնացված վերլուծությունը, քանի որ այդ ոլորտը յուրաքանչյուր երկրի տնտեսական աճի ապահովման գրավականն է:

Սկսած 1970-ական թթ. համաշխարհային մասշտաբով ՓՄՁ-ները դարձել են աշխատատեղերի հիմնական ստեղծողները, և միևնույն ժամանակ, խոշոր ձեռնարկությունները վերածվել են աշխատատեղերի հիմնական կրճատողների¹: Ավելին, այս երևույթն առավելապես արտահայտիչ է զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում այն առումով, որ ՓՄՁ-ները ապահովում են ավելի քան 60% զբաղվածություն²: Արևմտյան երկրներում փոքր բիզնեսը կազմում է տնտեսության խոշոր հատվածներից մեկը, որտեղ աշխատում են երկրի զբաղվածների կեսից ավելին:

Միջազգային կառույցների կողմից աղքատության կրճատման հիմնախնդիրները վերհանելու նպատակով աշխարհի ավելի քան 50 երկրների կտրվածքով կատարվել է հարցում (հարցվողների թիվը կազմել է 60 000): Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ աղքատությունից խուսափելու առավել արդյունավետ միջոց է հանդիսանում սեփական գործի նախաձեռնումը, ինչով էլ պայմանավորված, ևս մեկ անգամ շեշտադրվում է ՓՄՁ-ների կարևորությունը³:

Փոքր բիզնեսի դերն ու նշանակությունը ավելի է մեծանում շուկայական տնտեսության ձևավորման պայմաններում: Այն հնարավորություն է տալիս ստեղծել ու ամրապնդել շուկայական միջավայրը, տնտեսական շրջանառության մեջ ներգրավել բնակչության ֆինանսական և նյութական ռեսուրսները, մեղմացնել հասարակության մեջ նկատվող սոցիալական լարվածությունը: ՓՄՁ-ներն իրենց գործունեությամբ լրացնում, զբաղեցնում են երկրի տնտեսության այն դատարկ, ազատ բնագավառները, որտեղ խոշոր ֆիրմաների ներդրումներն անարդյունավետ են: Չնայած ցանկացած զարգացած պետության «դեմքը» դրանք խոշոր կորպորացիաներն են,

¹ Է. Ա. Բարայան, Բ. Վ. Կարապետյան, Փոքր բիզնես. Ե., 2003, էջ 6:

² «Руководство по наилучшей практике в области формирования позитивного делового и инвестиционного климата», стр. 139, ОБСЕ 2006:

³ Ващекин Н. П., Дзялиев. М. И. Урсул. А. Д. Безопасность предпринимательской деятельности. М. Экономика 2002, 97с.

իսկ շուկայական տնտեսավարման համակարգի իրական հիմքը ՓՄՁ-ն է՝ որպես գործարարության առավել զանգվածային, դինամիկ ու ճկուն ձև:

Փոքր ձեռնարկատիրությունը ինքնուրույն և հասարակության տնտեսական կյանքի կազմակերպման առավել տիպիկ ձև է, որին բնորոշ են հետևյալ հիմնական առավելությունները¹.

- ՓՄՁ-ներն առավել փոքր ներդրումների հաշվին և կարճ ժամանակահատվածում կարող են ապահովել զգալի թվով նոր աշխատատեղեր՝ էապես բարելավելով աշխատանքի շուկայում տիրող իրավիճակը, լուծելով մի շարք լուրջ սոցիալական խնդիրներ, այսինքն՝ զգալիորեն թուլացնում է գործազրկության սրությունը²,
- հաճախ նոր ՓՄՁ-ների ստեղծմամբ առավել արդյունավետ է ընթանում պարապուրդի մատնված և ոչ շահութաբեր խոշոր արտադրական կազմակերպությունների վերակառուցման և արդիականացման գործընթացը,
- ՓՄՁ-ներն առավել արդյունավետությամբ են օգտագործում տեղական հանքահումքային ռեսուրսները՝ դրանով իսկ նպաստելով ամբողջ տնտեսության մեջ ռեսուրսների խնայողաբար ու ռացիոնալ օգտագործմանը և նվազեցնում երկրի տնտեսության կախվածությունը ներմուծումից,
- ՓՄՁ-ներում համեմատաբար արագ և փոքր ծախսերով են ներդրվում նոր տեխնոլոգիաներն ու նորարարությունները՝ նպաստելով գիտատեխնիկական առաջընթացի արագացմանը,
- ՓՄՁ-ներում արտադրվող ապրանքատեսակները մրցակցության մեջ են մտնում ներմուծվող ապրանքատեսակների հետ՝ դրանք փոխարինելով տեղական արտադրատեսակներով,
- ՓՄՁ-ները, շնորհիվ իրենց ճկունության, շատ ավելի արագ են հարմարվում շուկայի պահանջներին՝ յուրացնելով նոր ապրանքատեսակների արտադրությունը և սպասարկման արդիական ձևերը,
- ՓՄՁ-ները նպաստում են մրցակցային միջավայրի ձևավորմանը՝ մեղմացնելով արտադրության մոնոպոլացման դրսևորումները,
- ՓՄՁ-ների զարգացումը տարածաշրջաններում էապես նպաստում է տվյալ երկրում նպատակային տարածաշրջանային քաղաքականության իրականացմանը,
- ՓՄՁ-ները ստեղծում են նոր ապրանքներ ու ծառայություններ՝ միաժամանակ հանդես գալով որպես մրցակցային և ինովացիոն գործունեության աղբյուրներ³,
- ՓՄՁ-ների զարգացումը ժամանակակից հասարակության հիմքը կազմող միջին խավի ձևավորման և կայացման գրավականն է:
- ՓՄՁ-ների կողմից իրականացվող գործընթացները հանդիսանում են դրա արժանիքները, որոնք բարձրացնում են կայունությունը ներքին շուկայում: Սակայն որոշակի պայմանների առկայության դեպքում դրանք դառնում են թերություններ՝ կասեցնելով ՓՄՁ-ների զարգացումը:

Մի կողմից գործունեության պայմանների փոփոխություններին ՓՄՁ-ների արագ արձագանքումը դարձնում է առավել շարժունակ և հարմարվող, իսկ մյուս կողմից՝ կախվածության մեջ դնում շուկայի կառուցվածքից, արտաքին սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններից: Հարաբերական ոչ մեծ կապիտալը նեղացնում է արտադրության սահմանները, սահմանափակում է լրացուցիչ ռեսուրսների ներգրավման հնարավորությունները և այլն: Արտադրության սահմանափակ մասշտաբները, զբաղվածների ոչ մեծ թվաքանակը պայմանավորում է ձեռնարկության կառավարման պարզությունն ու արդյունավետությունը: Սակայն ՓՄՁ-ների համար բնորոշ սեփականատիրոջ և մենեջերի գործառույթների համատեղումը, ձեռնարկության աշխատողների հետ անձնական կապերի հաստատումը, կառավարման ոչ ձևական ոճը, կառավարչական ծախսերի իջեցումը, միևնույն ժամանակ կարող են բերել ինքնաշահագործման և

¹ Մ. Մելքումյանի և Վ. Հակոբյանի ընդհ. ղեկավարությամբ և խմբագրությամբ «Ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում», Երևան, «Զանգակ-97», 2008, էջ 103:

² Ն. Հարությունյան, Կառավարման հմտության զարգացումը որպես ՀՀ ՓՄՁ-ների արդյունավետության բարձրացման գործոն, Ատենախոսություն, Երևան, 2005, էջ 8:

³ Васильева Л. Н., Муравьева Е. А., Методы управления инновационной деятельностью. Учеб. Пособие. М.: КНОРУС, 2005, 118с.

արտաժամյա աշխատանքի: Դա հատկապես վերաբերում է անցումային տնտեսություն ունեցող երկրներին, այդ թվում՝ ՀՀ-ին:

Փոքր և միջին ձեռնարկություններին բնորոշ հիմնական թերություններն են.

- բարձր է ռիսկի մակարդակը, որով էլ պայմանավորված է շուկայում զբաղեցրած դիրքի անկայունության բարձր աստիճանը,
- լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու դժվարությունները,
- խոշոր ընկերություններից կախվածությունը,
- սեփական բիզնեսի կառավարման գործում բարձր որակավորում ունեցող մասնագետի բացակայությունը,
- պայմանագրերի կնքման ժամանակ գործընկերների կողմից ցուցաբերվող անվստահությունն ու զգուշությունը,
- ինքնաշահագործումը և արտաժամյա աշխատանքը,
- որակյալ մասնագետներ ներգրավելու անընդունակությունը՝ կապված ՓՄՁ-ների կողմից անմրցունակ աշխատանքային պայմանների առաջարկության հետ,
- տնտեսական փոփոխությունների նկատմամբ բարձր զգայնությունը և այլն:

Ի վերջո, իրենց ռազմավարական կարևորությունից և հետագա զարգացման հնարավորություններից ու առանձնահատկություններից էլնելով՝ ՓՄՁ-ները նպաստում են տնտեսության բոլոր ճյուղերի և ոլորտների աշխուժացմանն ու վերակենդանացմանը, այդ թվում՝ խոշոր արտադրական կազմակերպությունների հնարավորությունների ընդլայնմանը, որոնք իրենց վրա վերցնելով մեծածավալ և կարևոր նշանակություն ունեցող պատվերների կատարումը՝ էլ առավել շահութաբեր են դարձնում դրանց գործունեությունը:

Ժամանակակից շուկայական մրցակցության պայմաններում, երբ խոշոր ընկերակցությունները, ֆիրմաները ձգտում են մենաշնորհել արտադրությունը և վերահսկողություն սահմանել շուկաների վրա, ապա պարզապես զարմանք է հարուցում այն իրողությունը, թե խոշոր ու հզոր արտադրական կազմակերպություններն ինչպես են իրենց կողքին «հանդուրժում» փոքր ձեռնարկությունների գոյությունը: Փոքր բիզնեսի կենսունակությունն ունի իր տնտեսական հիմքերը և պայմանավորված է հետևյալ հանգամանքներով¹.

• Խոշոր կորպորացիաներին պարզապես նպատակահարմար չէ քայքայել ու ոչնչացնել փոքր բիզնեսը, եթե այն ուղղակի վտանգ չի սպառնում իրենց գործունեության համար: Փոքր ֆիրմայի ներգրավումը, խոշոր ֆիրմայի կառուցվածքում պակաս շահավետ է, քան նրա հետ գործնական համագործակցությունը: Փոքր ձեռնարկությունների գերակշռող մասը ուղղակի կամ անուղղակի ձևով գտնվում են խոշոր կորպորացիաների գոտում («Ձեներալ Էլեկտրիկի» ազդեցության ոլորտում կան 60 հազ. փոքր ու միջին ձեռնարկություններ, իսկ «Ֆիատի» ոլորտում՝ 40 հազ.): Մնալով ինքնուրույն՝ նրանք փաստորեն մտնում են արտադրական համալիրի մեջ և արտադրում են առանձին դետալներ ու հանգույցներ և դառնում խոշոր կորպորացիաների արտադրական տեղամասեր: Այսպիսի համագործակցությունը ձեռնտու է նաև փոքր ձեռնարկություններին, քանի որ դրանք ձեռք են բերում կայուն իրացման շուկա և առանձին դեպքերում խոշոր կորպորացիաների կողմից ստանում են օժանդակություն և վարկեր: Այսպիսով, փոքր ձեռնարկությունները, պահպանելով իրենց ինքնուրույնությունը, իրականում դառնում են խոշոր ֆիրմաների օրգանական բաղկացուցիչ տարրերը:

• Խոշոր կորպորացիաների համագործակցությունը փոքր բիզնեսի հետ ներկայումս դրսևորվում է նաև Ֆրանչայզինգի ձևով: Վերջինս փոքր ֆիրմաների համակարգ է, որը խոշոր արտադրական կազմակերպության հետ պայմանագիր է կնքում նրա ֆիրմային ապրանքանիշից օգտվելու իրավունքի համար՝ դառնալով խոշոր ընկերության արտադրանքի մանրածախ վաճառողը: Դրանով փոքր ֆիրմաները խոշոր ընկերությունների կողմից ստանում են հովանավորություն, առևտրային ոլորտ, վարկեր և օգնություններ:

¹ Գ. Ե. Կիրակոսյանի և Ի. Ե. Խլղաթյանի խմբագրությամբ «Տնտեսագիտության տեսություն», Երևան, «Տնտեսագետ», 2009, էջ 437:

• Փոքր ձեռնարկությունները սովորաբար ընտրում են գործունեության այնպիսի ոլորտներ, որտեղ նպատակահարմար չէ զանգվածային արտադրության իրականացումը: Այդպիսին են լայն սպառման ապրանքների արտադրությունը, առևտուրը, հասարակական սնունդը, սպասարկման ու ծառայությունների ոլորտը և այլն: Այլ կերպ ասած՝ փոքր ֆիրմաները հիմնականում ունենում են գործունեության իրենց բնագավառը և ուղղակիորեն չեն կանգնում խոշոր բիզնեսի ճանապարհին:

• Փոքր բիզնեսի կենսունակությունը պայմանավորված է նաև նրա պարզությամբ ու գրավչությամբ: Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել ցանկացողներից շատերը ձգտում են իրենց ստուգել հենց բիզնեսի այս պարզագույն ձևում: Մյուս կողմից՝ փոքր բիզնեսի շնորհիվ մարդիկ ոչ միայն տնտեսական ինքնուրույնություն են ձեռք բերում, այլև պարզապես աշխատանքային բավարարվածություն են զգում այդ գործունեությունից:

• Փոքր բիզնեսի կենսունակության գործում կարևոր դեր է խաղում պետության կողմից ցույց տրվող աջակցությունը, քանի որ ավանդաբար այն դիտվում է որպես ազգային ձեռներեցության խորհրդանիշ: Փոքր բիզնեսի նկատմամբ ցուցաբերված օժանդակությունն արտահայտվում է հարկային արտոնություններով ու զեղչերով, արտոնյալ վարկեր տրամադրելով և պետության հակամենաշնորհային քաղաքականությամբ:

Կարևորելով ՓՄՁ-ների նշանակությունը՝ մի շարք երկրներում մշակվել և իրականացվում է ՓՄՁ-ների զարգացմանը նպատակաուղղված պետական քաղաքականություն: Այդ երկրներում ՓՄՁ-ների վերաբերյալ հատուկ օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են դրանց գործունեությունը և նպաստում դրանց զարգացմանը: Առանձին երկրներում ստեղծվել են ՓՄՁ-ների զարգացման և պետական աջակցման հարցերով զբաղվող հատուկ կառույցներ (Ռուսաստանում՝ «Փոքր ձեռնարկատիրության զարգացման պետական կոմիտե», Լեհաստանում՝ «ՓՄՁ-ների զարգացման և խթանման Լեհական հիմնադրամը», Հայաստանում՝ «ՓՄՁ ԶԱԿ-ը» և այլն):

Ելնելով վերոնշյալից՝ կարող ենք եզրակացնել, որ համաշխարհային տնտեսության վերջին տասնամյակում ձևավորված միտումները պայմանավորող կարևոր գործոն է հանդիսանում ՓՄՁ-ների բուռն զարգացումը: Դրանք իրենց որոշիչ տեղն են զբաղեցնում զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների տնտեսական և սոցիալական համակարգերում: Դա վերաբերում է նաև Հայաստանին, որն իր դրսևորումը գտավ նախ և առաջ նրանով, որ ՓՄՁ ոլորտը հռչակվեց որպես ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը: ՀՀ կառավարության կողմից շարունակական քայլեր են իրականացվում ոլորտի զարգացման, մասնավորապես ՓՄՁ պետական աջակցության համակարգի ձևավորման ուղղությամբ:

ՀՀ-ում ՓՄՁ-ների զարգացումը պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք գործոնների ազդեցությամբ, որոնք վերջին տարիներին ծավալված ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունք են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: ՓՄՁ-ների գործունեությունը խոչընդոտող այլ խնդիրների շարքին են դասվում նաև հետևյալ գործոնները.

- ֆինանսական և վարկային միջոցների դժվար հասանելիությունը՝ կապված դրանց կարճաժամկետ բնույթի և այլընտրանքային երկարաժամկետ վարկավորման միջոցների բացակայության հետ,
- բիզնեսի կազմակերպման և կառավարման որակական անբավարար մակարդակը, որն առանձնապես վառ է արտահայտված մարզերում գործող ՓՄՁ-ների գործունեության մեջ. դա պայմանավորված է անձնակազմի թույլ պատրաստվածությամբ ու վերջիններիս մասնագիտական հմտությունների ոչ կատարյալ լինելով,
- տեղեկատվական հոսքերի ու շուկայում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունների օպերատիվ ստացման համակարգերի և, առհասարակ, համացանցի հասանելիության ցածր մակարդակը,
- հումքի և այլ նյութերի ձեռքբերման, աշխատավարձերի վճարման համար անհրաժեշտ շրջանառու միջոցների բացակայությունը,
- հարկային ծանր բեռը և այլն:

Ստեղծված իրավիճակում առավել քան կարևորվում է պետության կողմից ՓՄՁ-ների աջակցմանն ուղղված գործունեությունը, ինչը ներառում է ոլորտի խթանմանն ու զարգացմանն ուղղված պետական քաղաքականության և ռազմավարության մշակումն ու իրագործումը:

ՓՄՁ-ների զարգացման քաղաքականությունն ուղղված է ՀՀ տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման գործում ՓՄՁ-ների ոլորտի ներուժի լիարժեք օգտագործմանն ու նրա դերի բարձրացմանը: Այս քաղաքականության հիմնարար փաստաթղթերից է հանդիսանում ՀՀ կառավարության կողմից 2000թ. օգոստոսին ընդունված Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության ու ռազմավարության հիմնադրույթները, որտեղ ներկայացված են ՓՄՁ-ների զարգացման պետական քաղաքականության տնտեսական, սոցիալական և քաղաքական նպատակներն ու նրանց իրագործման հիմնական ուղղությունները: Վերոհիշյալ փաստաթղթի ընդունումը նախապայմաններ ստեղծեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունման համար, որն առաջին անգամ սահմանեց Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ների սուբյեկտների չափորոշիչները և ՓՄՁ պետական աջակցության հիմնական ուղղությունները:

2001թ.-ից ի վեր երկրում մշակվում և իրականացվում են ՓՄՁ-ների պետական աջակցության տարեկան ծրագրեր, որոնք նպատակաուղղված են իրականացնելու «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված ՓՄՁ ոլորտի պետական աջակցության հիմնական ուղղությունները:

ՓՄՁ-ները պետական աջակցության 2002թ. ծրագրի շրջանակներում, որպես ծրագրային միջոցառում, հիմնադրվեց «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամը» (Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ), որը հանդիսանում է Հայաստանում ՓՄՁ-ների ոլորտի պետական քաղաքականություն և ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող հիմնական կառույցը¹: Ամրագրվեց, որ ՓՄՁ-ներին պետական աջակցությունը իրականացվում է տարեկան ծրագրով, որը մշակում և հաստատում է ՀՀ կառավարությունը: Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նշվում է պետական բյուջեում առանձին տողով:

ՓՄՁ-ների ոլորտի զարգացման ՀՀ պետական համակարգի արդյունավետության գնահատումը ցույց է տվել, որ այն բավականին բազմակողմ է, ընդգրկում է ձեռնարկատիրության հաջող իրականացման համար անհրաժեշտ բոլոր գործընթացները²: Այնուամենայնիվ, իրականացված և իրականացվող միջոցառումների շահառուների քանակի մասին թվային տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծավալային առումով դրանք բավարար համարվել չեն կարող: Ավելին, քանի որ ոչ բոլոր նախաձեռնություններն են հաջողությամբ պսակվում (ինչը միանգամայն բնական է), ենթադրվում է, որ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումները իրենց բնույթով համակարգաստեղծ չեն: Դա պայմանավորված չէ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կատարած աշխատանքների արդյունավետությունից: ՓՄՁ-ների ոլորտի զարգացման խոչընդոտները պայմանավորված են ինչպես ՀՀ մակրոտնտեսական իրավիճակով, այնպես էլ հարկային օրենսդրության անկատարությամբ պայմանավորված անհավասար հարկային բեռի առկայությամբ³:

ՓՄՁ-ների ոլորտի զարգացման և պետական աջակցության ծրագրային միջոցառումների համակարգն ընդգրկում է հետևյալ հիմնական ուղղությունները⁴.

1. ՓՄՁ-ների սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում:
2. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն:

¹ ՀՀ կառավարության 19.03.2002թ. N282 որոշում:

² Արաբյան Ն., Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված պետական աջակցությունը ՀՀ-ում: Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, №4 ապրիլ-մայիս, 2010, էջ 32-33:

³ Իսկանդարյան Ս., Ներդրումային միջավայրի բարելավման ուղիները Հայաստանում: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր): Եր., «Գիտություն», 2009, էջ 337-344:

⁴ «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին», 2012թ., ծրագիր:

3. ՓՄՁ-ների սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանման և շուկաներում առաջնորդմանն աջակցություն:
4. ՓՄՁ-ների սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական աջակցություն և Հաշվապահական կենտրոնի գործունեության ապահովում:
5. ՓՄՁ-ների սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն:
6. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ների զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում:

Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները, երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունն ու Եվրաինտեգրման գործընթացը նոր պահանջներ են ներկայացնում մասնավոր հատվածի և մասնավորապես փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղությամբ: Մասնավորապես անհրաժեշտություն է առաջացել վերանայել և հստակեցնել Հայաստանում ՓՄՁ-ների սուբյեկտների դասակարգման գործող չափորոշիչները, ինչը հնարավորություն կտա Հայաստանում դրանք պետական աջակցության առավել նպատակային իրականացման, ՓՄՁ-ների ոլորտին առնչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցման ու կատարելագործման, ինչպես նաև Եվրամիության չափանիշներին մոտեցման և այդ ոլորտը բնութագրող ցուցանիշների համադրելիության ապահովման համար: Եվրամիության չափորոշիչների համաձայն ՓՄՁ-ների սուբյեկտները դասակարգվում են երեք խմբի¹՝

- գերփոքր (միկրո)՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թիվը մինչև 10 մարդ է, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը,
- փոքր՝ համապատասխանաբար 50 մարդ և 500 մլն դրամ,
- միջին՝ 250 մարդ, նախորդ տարվա հասույթը չի գերազանցում 1.5 մլրդ դրամը, նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 1 մլրդ դրամը:

Դասակարգումը կատարվում է՝ հիմք ընդունելով ՓՄՁ-ների սուբյեկտներում ներգրավված աշխատողների թվաքանակը, տարեկան շրջանառությունը կամ ակտիվների հաշվեկշռային արժեքը: Դա թույլ է տալիս, որ Եվրամիության չափորոշիչներ կիրառող գրեթե բոլոր երկրները հնարավորություն ունենան իրականացնելու համեմատական վիճակագրական վերլուծություն, ինչն ակնհայտորեն ստեղծում է տարբեր երկրներում ՓՄՁ-ների ոլորտի զարգացման մակարդակի վերաբերյալ առավել հստակ պատկեր՝ երկրի տնտեսության մեջ ՓՄՁ-ների ոլորտի տեղի ու դերի գնահատման առումով: Նման չափորոշիչներ կիրառող երկրներում ՓՄՁ-ների սուբյեկտների առավել հստակ տարանջատման շնորհիվ հնարավորություն է ընձեռվում գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար կիրառել համեմատաբար մեղմ հարկման ռեժիմ, իրականացնել առավել հասցեական պետական աջակցության միջոցառումներ և այլն:

Եվրամիության և ՀՀ միջև ստորագրված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի հիմնական նպատակներից մեկը օրենսդրական և տնտեսական համագործակցության հաստատումն է: Հայտնի է, որ Եվրոպական տնտեսական ինտեգրացման հիմնական նախապայմաններից մեկը հավակնող երկրների օրենսդրությունների համապատասխանեցումն է Եվրամիության օրենսդրությանը: Այս առումով հատկապես կարևորվում է տնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող ՓՄՁ ոլորտը կարգավորող օրենսդրության բարեփոխումը, մասնավորապես ՓՄՁ-ների սուբյեկտների դասակարգման չափորոշիչների համապատասխանեցումը Եվրամիության կողմից ամրագրված դրույթներին:

Այսպիսով, կարելի է ասել, որ մեր պետությունը որոշակի քայլեր կատարում է ՓՄՁ-ների ոլորտի աշխուժացման, զարգացման, միջազգային շուկա դուրս գալու, բարենպաստ միջավայրի ձևավորման ուղղությամբ, սակայն այլ հարց է, թե ինչքանով է հաջողվում նրան հասնել իր առջև դրված նպատակներին և լուծել խնդիրներն այս ոլորտում:

¹ ՀՀ օրենքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին, 2010:

Չնայած նրան, որ վերջին տարիներին Հայաստանում հիմնականում լուծվել են ՓՄՁ-ների սուբյեկտների գործունեությանը և զարգացմանը խոչընդոտող բազմաթիվ հիմնախնդիրներ ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ ՓՄՁ-ների սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) և տեխնիկական աջակցության ուղղություններով, սակայն երկրում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ.

- ձեռնարկատիրական գործունեության խթանման համապատասխան ենթակառուցվածքների և մեխանիզմների անբավարարությունը,
- ՓՄՁ-ների սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությունը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ,
- սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների պակասը,
- գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունները,
- ՓՄՁ-ների սուբյեկտների գործունեության միջազգայնացման, վերջիններիս կողմից թողարկվող արտադրանքի արտահանման հնարավորությունների պակասը:

ՓՄՁ-ների միջազգայնացման հնարավորությունը կապված է համագործակցության և կլաստերների ձևավորման հետ: Բազմաթիվ ՓՄՁ-ների ձևական կամ ոչ ձևական համագործակցությունը հնարավորություն է տալիս փոխլրացնել միմյանց մրցակցային առավելությունները և հաջողությամբ մրցակցել մասշտաբից դրական ներքին արդյունք ապահովող խոշոր ընկերությունների հետ:

ՓՄՁ-ների միջազգայնացումը կապված է նույն ոլորտում երկար ժամանակ արտադրության շնորհիվ ձեռք բերված գիտելիքի և փորձի հետ:

Ազգային տնտեսությունում ՓՄՁ-ների ունեցած դերակատարումը գնահատելիս առավել հաճախ ներկայացվում են ազգային տնտեսությունում և առանձին ճյուղերում ՓՄՁ-ների սուբյեկտների ստեղծած համատեղ արդյունքը, դրանցում զբաղվածների տեսակարար կշիռը, պետական եկամուտների այն մասնաբաժինը, որը վճարվել է դրանց կողմից: Ներկայումս ՓՄՁ-ների ոլորտին դասվող կազմակերպությունների կողմից արտադրվում է ՀՆԱ-ի ավելի քան 44%-ը:

Հիմնվելով վիճակագրական հրապարակումների տվյալների հիման վրա՝ ստացվել է ՀՀ-ում ՓՄՁ-ների դաշտը բնութագրող հետևյալ պատկերը.

- ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական բազայի տվյալների համաձայն՝ հանրապետության ողջ տարածքում 2015թ. գործունեություն են ծավալել 74 365 ՓՄՁ սուբյեկտներ, որոնցից 68 117-ը՝ գերփոքր, 5109-ը՝ փոքր և 1139-ը՝ միջին: Այս տնտեսավարող սուբյեկտների շրջանառության ընդհանուր ծավալը կազմել է 1 մլրդ 565 մլն 934 հազ. դրամ, իսկ մուծած հարկերը՝ 237 մլն 710 հազ. դրամ¹:
- Հայաստանում զբաղված բնակչության 10.4%-ը աշխատում է ՓՄՁ-ներում:
- Արտադրության ոլորտում առավել արդյունավետ են միջին ձեռնարկությունները, որոնք ապահովում են համեմատաբար մեծ արտադրողականություն և տնտեսապես կայուն են. ՀՆԱ -ի աճի դեպքում այս կազմակերպությունները աճում են շատ ավելի արագ, իսկ ՀՆԱ-ի նվազման դեպքում նրանց արտադրողականությունը գրեթե չի կրճատվում:
- Շինարարության ոլորտում տնտեսական աշխուժացման դեպքում առաջին հերթին ակտիվանում են գերփոքր ձեռնարկությունները, որոնք իրենց աճի տեմպով կրկնակի գերազանցում են փոքր և միջին ձեռնարկություններին:
- Առևտրի ոլորտում գերփոքր և փոքր ձեռնարկությունների աճի տեմպը ուղիղ համեմատական է ՀՆԱ -ի աճի տեմպին: Միջին ձեռնարկությունները հետզհետե կրճատվում են՝ չդիմանալով խոշորների մրցակցությանը՝ չունենալով փոքրերի և գերփոքրերի ճկունությունը:
- Տնտեսական ակտիվացումը և ՀՆԱ-ի աճը հանգեցնում են մատուցվող ծառայությունների որակի բարձրացման նկատմամբ պահանջարկի ձևավորմանը, ինչը առավելագույնս բա-

¹ Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային ռազմավարություն 2016-2018:

վարարում են փոքր ձեռնարկությունները: Տնտեսական անկման պայմաններում նկատվում է ակտիվացում գերփոքր կազմակերպություններում, որոնք մատուցում են միջին և ցածր որակի էժան ծառայություններ:

- Տնտեսական անկումը տրանսպորտային ծառայությունների ոլորտում հանգեցնում է գերփոքր կազմակերպությունների ակտիվացմանը՝ հատկապես ուղևորափոխադրման ոլորտում: Տնտեսական աճի դեպքում կազմակերպությունները դանդաղ և կայուն աճում են:
- Կապի ոլորտում որակյալ և ուժեղ մրցակցությունը մեծ և ունիվերսալ կազմակերպությունների միջև նեղացրել է ՓՄՁ-ների հնարավորությունների դաշտը, և մեծաթիվ աճող կազմակերպությունները կիսում են նույն շուկայի փոքր բաժնեմասը:

Այնուամենայնիվ, այս ցուցանիշները դեռևս բավարար չեն և չեն համապատասխանում զարգացող այլ երկրների ցուցանիշներին:

ՓՄՁ ԵՆԹԱԿԱՈՒՑՎԱԾՔԻ ՈԼՈՐՏԻ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԿՈՐՅՈՒՆ ԼՈՒԿԱՇԻ ԱԹՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*,

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր

ԱՐՇՐՈՒՆԻ ԷԴՎԱՐԴԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտ

Համառոտագիր

Փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ) հանդիսանում են շուկայական տնտեսության հիմքը և տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժը: Փոքր և միջին ձեռնարկությունները յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն են: Նրանք խթանում են մասնավոր սեփականությունը և ձեռնարկատիրական հմտությունները, ճկուն են փոփոխվող շուկայական տնտեսության պայմաններում, օգնում են դիվերսիֆիկացնել տնտեսական գործունեությունը և կարող են նշանակալի ներդրում ունենալ միջազգային առևտրի, արտահանման խթանման, նոր աշխատատեղերի ստեղծման գործում:

Բանալի բառեր. Փոքր և միջին ձեռնարկություն (ՓՄՁ), ենթակառուցվածք, ազգային տնտեսություն, ՓՄՁ սուբյեկտ, գերփոքր (միկրո), փոքր, միջին, հիմնախնդիրներ, միջազգայնացում:

РОЛЬ ИНФРАСТРУКТУРЫ ПОДДЕРЖКИ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В НАЦИОНАЛЬНОЙ ЭКОНОМИКЕ

КОРЮН ЛУКАШЕВИЧ АТОЯН, *д.э.н., профессор*

ректор Армянского государственного экономического университета

АРЦРУНИ ЭДУАРДОВИЧ ВАРДАНЯН

аспирант Армянского государственного экономического университета

Аннотация

Малые и средние предприятия (МСП) являются основой рыночной экономики и движущей силой экономического развития. МСП являются главной гарантией экономической и социальной стабильности любой страны. Они стимулируют частную собственность и предпринимательские навыки, адаптируются к меняющимся условиям рыночной экономики, помогают диверсифицировать экономическую деятельность и могут внести весомый вклад в развитие международной торговли, стимулирование экспорта, создание новых рабочих мест.

Ключевые слова: малые и средние предприятия (МСП), инфраструктура, национальная экономика, субъекты МСП, микро, малый, средний, проблемы, интернационализация.

THE ROLE OF INFRASTRUCTURE SUPPORT FOR SMALL AND MEDIUM ENTREPRENEURSHIP IN THE NATIONAL ECONOMY

KORYUN LUKASH ATOYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*

Rector, Armenian State University of Economics

ARTSRUNI EDUARD VARDANYAN

Ph.D. Student, Armenian State University of Economics

Abstract

Small and medium-sized enterprises (SMEs) are the bases of the market economy and the driving force behind the economic development. SMEs are the main guarantee of economic and social stability of any country. They stimulate private property and entrepreneurial skills, adapt to the changing conditions of the market economy, contribute to the diversification of economic activity and are able to make a significant contribution to the development of international trade, promoting exports, and creating new jobs.

Keywords: Small and medium-sized enterprises (SMEs), infrastructure, national economy, SME entities, micro, small, medium, issues, internationalization

ՌՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԻ ԱԼՈՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԶՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Արդյունաբերությունը եղել և մնում է Հայաստանի տնտեսության հիմքը կազմող առաջատար ոլորտներից մեկը: Այդ մասին է վկայում նաև այն, որ արդյունաբերության ոլորտի զարգացման ակտիվ քաղաքականության իրականացումը կարևոր տեղ է զբաղեցնում ՀՀ կառավարության ծրագրերում: Արդյունաբերության ոլորտի կարևորությանն են անդրադարձել մի խումբ հեղինակներ, մասնավորապես Լ. Ի. Աբալկինը, ով նշում է, որ «Արդյունաբերական քաղաքականությունը իրենից ներկայացնում է ազգային նպատակների գերակայությունների համապատասխան միջոցառումների համակարգ՝ ուղղված արդյունաբերական արտադրության կառուցվածքում առաջադիմական փոփոխությանը»¹: Իր հերթին Գ. Ադամսը բնորոշում է, որ «Արդյունաբերական քաղաքականության տարրեր են համարվում այն բոլոր միջոցառումները, որոնք ուղղված են տնտեսության մեջ առաջարկի բարելավմանը, այսինքն այն ամենը, ինչը տանում է տնտեսական աճի, արտադրողականության և մրցունակության բարելավմանը»²: Միաժամանակ Ա. Գրադովը գրում է, որ «Արդյունաբերության ընդհանուր մրցունակության բարձրացումը կախված է դրա առանձին ճյուղերի ու ենթաճյուղերի և դրանց ներսում գործող ձեռնարկությունների, հարակից ու կապակցված այլ բաղադրիչների մրցունակության աստիճանի բարձրացումից»³:

Ուստի, հիմնվելով վերոնշյալների և այլ հեղինակների կարծիքների վրա, ՀՀ կառավարությունը, առաջնորդվելով երկրի տնտեսության մրցունակության բարձրացման և տնտեսական աճի շարունակական ապահովման հրամայականներով, ընդունել է գիտելիքահենք տնտեսություն կառուցելու անհրաժեշտությունը և նախաձեռնել արտահանման նպատակաուղղվածություն ունեցող արդյունաբերական քաղաքականության իրականացում:

Ուսումնասիրությունները վկայում են, որ արդյունաբերության ներկա իրավիճակին բնորոշ են մի շարք հիմնախնդիրներ, որոնք հիմնականում ընդհանուր են հանրապետության գրեթե բոլոր արդյունաբերական ճյուղերի համար, դրանք են⁴՝

- արդյունաբերության ոլորտում՝ միկրո մակարդակում հետազոտությունների և վերլուծությունների պակասը և տեղեկատվական բազայի բացակայությունը,
- ինչպես ընդհանուր արդյունաբերության, այնպես էլ ոլորտային զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրերի բացակայությունը,
- ցածր մրցունակությունը,
- ներքին շուկայի ոչ լիարժեք պաշտպանվածությունը,
- ներմուծված հումքի վրա արտադրական գործընթացների իրականացման հիմնվածությունը,
- Հայաստանում արտադրվող հումքային արտադրատեսակները՝ վերջնական արտադրանքի վերածման շղթայի բացակայությունը և այլն:

¹ Абалкин Л.И. Концептуальные вопросы разработки промышленной политики в условиях современной Российской экономики. Труды вольного экономического общества России. М. 1997, стр. 30

² Adams G. Criteria for US industrial policy strategies in industrial policies for Growth and Competitiveness, Lexington, MA Lexington books 1983 p.30

³ Градов А. П. Технический уровень производства машиностроительных предприятий: экономический анализ. Л. 1984, стр.112

⁴ <http://www.mineconomy.am/arm/35/gortsaruyt.html>

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի արդյունքում արձանագրված տնտեսական անկումն ընդգծեց տնտեսության դիվերսիֆիկացման խորացման անհրաժեշտությունը, որը «երկարաժամկետ, փուլային տնտեսական տրանսֆորմացիա է, պայմանավորված երկրի գործոնային հնարավորությունների լավագույն օգտագործմամբ»¹: Այս տեսանկյունից կարևորվում է արդյունաբերական ոլորտի համալիր զարգացում², առաջին հերթին որակյալ արտադրատեսակների արտահանման գծով³:

Հատկապես 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ՀՀ-ում արդյունաբերության ոլորտի աճի միտումն արագացավ, և այն դարձավ տնտեսության ամենաարագ վերականգնվող ոլորտը, իսկ այդ աճն էապես պայմանավորված էր համաշխարհային պահանջարկի վերականգնմամբ, ինչպես նաև արտահանմանն ուղղված արդյունաբերական նոր քաղաքականության իրականացմամբ⁴:

Հատկանշականը նաև այն է, որ արդյունաբերության աճին շարունակում է գլխավորապես նպաստել հանքարդյունաբերությունը և որպես օրինակ 2016 թվականին Հայաստանում ստեղծվեց ևս մեկ խոշոր հանքարդյունաբերական ընկերություն, որը պայմանավորված է Ամուլսարի ոսկու հանքի մոտ 370 մլն դոլար արժողությամբ ներդրումային ծրագրով: Անցնող տարվա ընթացքում սա Հայաստանում իրականացված թերևս ամենանշանակալի ներդրումային ծրագիրն էր⁵:

Այժմ ներկայացնենք արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ տնտեսական գործունեության տեսակների 2007-2015թթ. համար (տե՛ս աղյուսակ 1-ը և գծապատկերը):

Աղյուսակ 1

Արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների (2007-2015թթ.)⁵

(ընթացիկ գներով, մլն.դրամ)

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ընդհանուր արդյունաբերությունը, այդ թվում՝	716549.3	739291.9	669398.9	824430.0	998963.7	1121906.7	1242070.3	1291274.1	1351800.1
հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	113824.1	93265.7	88556.6	145536.8	170168.6	193326.4	196778.9	193142.5	290446.9
մշակող արդյունաբերություն	477973.8	509048.9	443572.0	544802.6	644775.4	699418.1	777016.9	847749.5	839473.5
էլեկտրականություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	124751.4	136977.3	121216.3	116156.5	165682.9	211724.1	250503.3	231756.4	261879.4
ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	-	-	16054.0	17934.1	18336.8	17438.1	17771.2	18625.7	20680.3

Աղյուսակ 1-ից երևում է, որ ՀՀ արդյունաբերության առանցքային ճյուղը վերջին 5 տարիներին շարունակում է մնալ մշակող արդյունաբերությունը, որի մասնաբաժինը արդյունաբերական արտադրանքի ծավալի մեջ 2015 թվականին կազմել է 62.1%, իսկ հանքարդյունաբերության մասնաբաժինը, (որը հանդիսանում է երկրորդը իր արտադրանքի ծավալով), նույն

¹ «Export Diversification, Market Access and Competitiveness», UNCTAD, TD/B/COM, 1/54, 26 Nov. 2002, Trade and Development Board, Commission on Trade in Goods and Services, and Commodities, United Nations Conference on Trade and Development, 10Apr. 2005

² <http://p166.unctad.org/mod/resource/view.php?id=105> էջ 4


³ <http://www.newsarmenia.am/economy/20120320/42629081.html>

⁴ www.mineconomy.am

⁵ <http://haydzayn.am>

⁶ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներ

թվականին կազմել է 21.5%: 2007թ.-ի համեմատ 2015թ.-ին մշակող արդյունաբերության հավել-
լաճի տեմպը կազմել է 75.6%, իսկ հանքագործական արդյունաբերությանը՝ 155.2%:



Գծապատկեր 1. Արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների (2007-2015թթ.)

Արդյունաբերական արտադրանքի ծավալի մասին ավելի ստույգ պատկերացում կազմելու համար խոսենք ոչ միայն ՀՀ ընդհանուր ցուցանիշներով, այլ ըստ Երևանի և մարզերի՝ հիմք ընդունելով 2007-2015թթ. ԱՎԾ-ի ցուցանիշները:

Աղյուսակ 2

Արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ մարզերի և ք. Երևանի (2007-2015թթ.)¹

(ընթացիկ գներով մլն.դր.)

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ք. Երևան	347399.6	362535.7	301187.2	354502.7	423435.9	450104.9	507541.4	543868.8	552818.1
Արագածոտն	9574.9	13040.7	12035.6	14469.8	21637.9	19554.4	25112.7	29939.0	25729.6
Արարատ	52450.6	59431.7	57474.7	72303.1	80864.9	104759.2	123721.3	131971.3	173151.2
Արմավիր	29826.6	33087.0	33530.2	37461.3	41841.8	44471.3	50452.2	54392.7	57598.9
Գեղարքունիք	9503.4	10348.7	12145.4	11949.9	17959.5	21657.7	23665.5	22573.2	29562.6
Լոռի	42646.5	42441.1	44064.9	60044.9	73496.8	80041.7	75275.0	69941.2	120.165.8
Կոտայք	75585.5	89110.5	80889.0	85084.3	104496.5	144948.9	166121.7	167399.6	138485.2
Ջերմուկ	16172.5	17829.7	17865.4	25159.2	42766.8	40723.4	42623.7	48897.0	40668.6
Սյունիք	123270.0	100034.5	93961.2	150606.1	178364.5	198723.7	204975.2	197631.1	178684.5
Վայոց Ձոր	5466.3	6252.3	6228.9	7238.4	7765.0	9099.9	12008.3	15420.2	15654.8
Տավուշ	4653.4	5180.0	5140.2	5610.3	6332.1	7821.6	10573.4	9240.0	10180.8
Ընդամենը ՀՀ-ում	716549.3	739291.9	664522.8	824430.0	998963.7	1121906.7	1242070.3	1291274.1	1342700.1

Աղյուսակ 2-ից երևում է, որ Երևանի և մարզերի(ինչպես նաև առանձին մարզերի) արդյու-
նաբերական զարգացման մակարդակների միջև առկա են խիստ տարբերություններ: Արդյու-
նաբերությունը Երևանում մինչև համաշխարհային տնտեսական ճգնաժամի խորացումը՝ 2009

¹ www.armstat.am

թվականը, թեև մեծ ծավալներ չի ունեցել, բայց աճել է: Ճգնաժամի պայմաններում անկում է գրանցվել: Իսկ հետագայում այն հաղթահարվել է և նորից աճ է գրանցվել, և Երևանում արդյունաբերության ամենամեծ ծավալն արձանագրվել է 2014-2015 թվականներին.:

2015 թվականին Հայաստանի ամբողջ արդյունաբերության մոտ 41%-ն ապահովել է Երևանը: Դա նշանակում է, որ երկրի արդյունաբերության ոլորտում Երևանի շուրջ կենտրոնացվածությունը մեծ է, քանի որ 10 մարզերը միասին ապահովել են ընդամենը 59%-ը: Դա նշանակում է, որ չի օգտագործվում մարզերի ամբողջ ներուժը: Երևանի շուրջ կենտրոնացվածությունն այս տարիների ընթացքում էապես չի փոխվել: Այս ամենի հիմնական բացասական հետևանքն այն է, որ մայրաքաղաքում աշխատատեղերն ու հետևաբար՝ բնակչության խտությունն ավելի մեծ է, քան մարզերում: Դա էլ իր հերթին հանգեցրել է այն բանին, որ կենսամակարդակը Երևանում և մարզերում անհամաչափ է:

Այսպիսով, չնայած արդյունաբերական արտադրանքի ծավալը վերջին տարիներին դեռևս բավարար մակարդակով աճում է, սակայն սոցիալական վիճակը մնում է լարված: Դա հնարավոր է միայն մարզային արդյունաբերական համալիրի ձևավորման, վերամշակող արդյունաբերության տարբեր ճյուղերի զարգացման, մարզի ներսում ներձյուղային ու միջձյուղային արտադրական կապերի ստեղծման դեպքում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԴՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

ՌՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԻ ԱԼՈՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Չամառոտագիր

Ըստ ներկայացված հետազոտության կարելի է հավաստել, որ արդյունաբերությունը ճգնաժամից հետո ամենաարագ վերականգնվող ոլորտն է, որի աճը էապես պայմանավորված է ճգնաժամից հետո համաշխարհային պահանջարկի վերականգնմամբ, ինչպես նաև արտահանմանն ուղղված արդյունաբերական նոր քաղաքականությամբ: Ընդ որում՝ կարևոր խնդիր է նաև արդյունաբերության ճյուղային կառուցվածքի բարեփոխումը՝ հնարավորին չափով այն համապատասխանեցնելով մարզի աշխարհագրական դիրքի, բնական ու աշխատանքային ռեսուրսների առանձնահատկություններին:

Բանալի բառեր. արդյունաբերություն, ոլորտ, ճյուղ, աճ, մարզ, ճգնաժամ, մշակող արդյունաբերություն, հանքարդյունաբերություն, ծավալ, արտադրանք

СФЕРА ПРОМЫШЛЕННОСТИ В ДЕЛЕ ОБЕСПЕЧЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА РА

РУЗАННА СТЕПАНОВНА АЛОЯН

младший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Согласно результатам исследования, можно утверждать, что промышленность является наиболее быстро восстанавливающейся сферой экономики после кризиса, рост которой значительно обусловлен посткризисным восстановлением глобального спроса, а также новой промышленной политикой, направленной на экспорт. При этом, важной проблемой является также реформа отраслевой структуры промышленности с приведением ее по мере возможности в соответствие с особенностями географического положения региона, природных и трудовых ресурсов.

Ключевые слова: промышленность, сфера, отрасль, рост, регион, кризис, обрабатывающая промышленность, горнодобывающая промышленность, объем, продукция.

THE ROLE OF THE INDUSTRY IN THE PROCESS OF ENSURING ECONOMIC GROWTH IN THE REPUBLIC OF ARMENIA

RUZANNA STEPAN ALOYAN

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The research carried out in and presented in the article assures that industry is the fastest recovering field after the economic crisis, the growth of which is mainly conditioned by the recovery of the global demand as well as new export-oriented industrial policy. Moreover, an important issue is the improvement of the structure of industry making it in line with the geographic peculiarities and natural and labor resources of the region as much as possible.

Keywords: Industry, field, sector, region, crisis, manufacturing, mining, volume, output

ՀՀ ՀԱՄԱԽԱՈՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն ՀՀ կառավարության ծրագրի (2016թ. հոկտեմբերի 18-ի N 1060-Ս որոշում) երկրում կայուն տնտեսական աճի ապահովման գործընթացում իր ուրույն տեղն ունի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ավելացումը՝ ի հաշիվ տնտեսության իրական հատվածում գործող արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և նմանատիպ այլ ոլորտների¹:

Հետազոտության նպատակն է ներկայացնել ՀՆԱ-ի և այն ձևավորող ոլորտների միջև փոխկապվածություններն ու դրանց գնահատումները՝ վերջին մի քանի տարիների վիճակագրական տվյալներին համահունչ:

Պետք է նշել, որ Հայաստանը ԽՍՀՄ-ի ժամանակաշրջանից սկսած, եղել է ոչ միայն արդյունաբերական, այլ նաև գյուղատնտեսական նշանակության երկիր: Սակայն պետք է նշել այն իրողությունը, որ 1992թ. սկսած և չհիմնավորված սեփականաշնորհման արդյունքում վերոնշյալ ոլորտները հիմնականում փլուզվեցին և երկար տարիներ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով մինչ օրս դեռևս լիարժեք չեն վերականգնվում:

Ուստի ստեղծված իրավիճակից դուրս գալու համար կարևորվեց ՀՀ կառավարության ծրագիրը², որում նախանշվեցին ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք հիմնական ուղղություններ, մասնավորապես կապված՝ ներդրումների խթանման և պաշտպանության, գործարարության (բիզնեսի) զարգացման ու խրախուսման, արտահանման խթանման, հարկային և մաքսային համակարգերի կատարելագործման, ինչպես նաև առանձին ոլորտների (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, զբոսաշրջություն, տրանսպորտ և կապ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, էներգետիկ ենթակառուցվածքներ, բնական պաշարներ և այլն) տնտեսական զարգացման հետ:

Այսօր խիստ կարևորվում է ՀՀ-ում ներդրումային միջավայրի ձևավորումը, որը կնպաստի ինչպես օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ), այնպես էլ տեղական ներդրումային գործընթացների նպատակային օգտագործմանը, իսկ վերջիններիս պաշտպանության նպատակով անհրաժեշտ է ձևավորել և ունենալ հուսալի ապահովագրական դաշտ: Քանի որ, ինչպես վկայում է միջազգային փորձը, առանց լիարժեք ապահովագրական դաշտի, չի կարող գործել միջազգային ներդրումային միջավայրը:

Անհրաժեշտ է նշել նաև այն իրողությունը, որ դեռևս անցումային տնտեսություն վարող Հայաստանում, աստիճանական զարգացման միտում է նկատվում միայն գործարարության ոլորտում, որին համահունչ արդեն ձևավորվել ու ձևավորման փուլում են գտնվում փոքր և միջին ձեռնարկություններ, որոնք իրենց գործունեությամբ բավականաչափ նպաստում են ՀՆԱ-ի արժեքի մեծացմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի վճարային հաշվեկշիռն ունի բացասական սաղրո (ներմուծումը գերազանցում է արտահանումը), ուստի այս իրավիճակից դուրս գալու համար, որպես կարևորագույն նախապայման պետք է աստիճանաբար միջազգային չափորոշիչներին (ստանդարտներին) համապատասխան արտադրել որակյալ արտադրանք, մատուցել ծառայություններ, որոնք իրենց հերթին կնպաստեն արտահանման ծավալների ավելացմանը: Իսկ որակյալ արտադրանքը պետք է արտադրվի ոչ միայն ՓՄՁ-ներում, այլ նաև արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և կապի տարաբնույթ արտադրական կազմա-

¹ ՀՀ կառավարության ծրագիր, 2016թ.:

² Նույն ծրագրում, էջ 7-15:

կերպություններում, որոնք իրենց էությանը և նշանակությանը կարևորվում են ՀՆԱ-ի ավելացման գործընթացում:

Այժմ ՀՆԱ-ի և առանձին ոլորտներում արտադրված վերջնական արդյունքների միջև փոխկապվածությունները բացահայտելու համար, 2000-2015թթ. վերաբերյալ ելակետային տվյալները ներկայացնենք աղյուսակ 1-ում, որտեղ ներկայացված են՝ y, x₁, x₂, x₃, x₄ և x₅ արտահայտությունների իմաստները: Դրանք հետևյալներն են՝

- Y-ը՝ համախառն ներքին արդյունքն է,
- x₁-ը՝ արդյունաբերության ոլորտի համախառն արտադրանքի իրացումից հասույթը,
- x₂ գյուղատնտեսության ոլորտի համախառն արտադրանքի իրացումից հասույթը,
- x₃ շինարարության ոլորտի համախառն արտադրանքի իրացումից հասույթը,
- x₄՝ տրանսպորտի և կապի ոլորտի գծով իրացումից հասույթը,
- x₅՝ առևտրի և ծառայությունների ոլորտի գծով իրացումից հասույթը:

Աղյուսակ 1

ՀՀ ՀՆԱ-ի և տնտեսության առանձին ոլորտների վերջնական արդյունքները՝ ըստ 2000-2015թթ.

(մլն.դրամ)


Տարիներ	x ₁	x ₂	x ₃	x ₄	x ₅	y
2000	259854,60	281173,40	100990,00	74505,90	314814,40	1031338,30
2001	272864,00	351015,90	110393,50	82458,40	359145,00	1175876,80
2002	307731,80	377654,40	166628,00	83639,60	426817,90	1362471,70
2003	365346,90	410138,40	237843,60	95738,80	515575,00	1624642,70
2004	422203,70	504078,00	276403,40	113784,70	591475,60	1907945,40
2005	488363,10	493017,90	435124,80	133920,30	692454,80	2242880,90
2006	456935,40	555922,30	643827,80	168171,50	831332,90	2656189,80
2007	471472,00	633877,40	671029,00	218332,60	1154572,40	3149283,40
2008	466206,10	628131,70	858680,10	242331,10	1372878,10	3568227,60
2009	425380,20	552098,60	579740,70	226047,70	1358383,80	3141651,00
2010	537725,70	636683,40	588807,70	223731,90	1473254,00	3460202,70
2011	647806,00	795062,20	504824,50	252724,70	1577528,20	3777945,60
2012	679515,40	841509,90	479415,60	276823,50	1723457,60	4000722,00
2013	740203,60	919089,40	453449,30	271132,90	2171763,00	4555638,20
2014	771447,00	993482,80	463858,00	306736,70	2756495,94	4828626,30
2015	817526,80	1001204,90	481496,90	288390,90	2443469,50	5032089,00

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են այն մասին, որ ըստ ուսումնասիրվող տարիների բոլոր ցուցանիշներն էլ ունեցել են աճման միտում (նվազման միտում է տեղի ունեցել միայն 2009 թվականին՝ կապված 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ):

Պարզաբանման համար նշենք, որ 2015 թվականին ի համեմատ 2000 թվականի

- ՀՆԱ-ն ավելացել է 4.0 տրիլիոն դրամի չափով կամ 387.9%-ով (3.88 անգամ),
- արդյունաբերության ոլորտի գծով ավելացել է 557.7 մլրդ. դրամի չափով, կամ 214,6%-ով (2.15 անգամ),
- գյուղատնտեսության ոլորտի գծով ավելացել է 720,0 մլրդ. դրամի չափով, կամ 256,1%-ով (2.56 անգամ),
- շինարարության ոլորտի գծով ավելացել է 380,5 մլրդ. դրամի չափով, կամ 376,1%-ով (3.77 անգամ),
- տրանսպորտի և կապի գծով ավելացել է 213.9 մլրդ. դրամի չափով, կամ 287.1%-ով (2.87 անգամ),
- առևտրի և ծառայությունների ոլորտի գծով ավելացել է 2,749 տրիլիոն դրամի չափով, կամ 408.4%-ով (4.08 անգամ):

Ավելի արտահայտիչ դարձնելու համար աղյուսակ 1-ի տվյալները ներկայացնենք գծապատկերի տեսքով:



Գծապատկեր. ՀՀ ՀՆԱ-ի և տնտեսության առանձին ոլորտների վերջնական արդյունքները՝ ըստ 2000-2015թթ.

Այսինքն, կատարված հաշվարկներից պարզվում է, որ ամենամեծ աճման միտումը տոկոսային արտահայտությամբ գրանցվել է առևտրի և ծառայությունների ոլորտում, որը կազմել է 48,4%: Նույնիսկ տեսակարար կշռով 2015 թվականի վերջի դրությամբ եղել է 48,6%, որը ի համեմատ մնացած ոլորտների բավականին բարձր մեծություն է, սակայն Հայաստանի տնտեսական աճի ապահովման գործում ոչ այնքան նպաստավոր: Քանի որ ցանկացած երկրի ՀՆԱ-ի և դրան համահունչ տնտեսական աճի ավելացման համար կարևորվում են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, շինարարությունը, կապն ու տրանսպորտը: Ըստ աղյուսակ 1-ի և գծապատկերի տվյալների՝ վերջիններս բոլորը միասին կազմում են 51,4 %, այդ թվում արդյունաբերությունը՝ 16,2%, գյուղատնտեսությունը՝ 19,9%, տրանսպորտն ու կապը՝ 9,6%, առևտուրը և ծառայությունների մատուցումը՝ 5,7%:

Այժմ քննարկենք և պարզաբանենք թե ըստ 2000-2015թթ. վիճակագրական տվյալների տնտեսության առանձին ոլորտների վերջնական արդյունքներն ինչպիսի ազդեցություն են ունենում ՀՆԱ-ի վրա:

Աղյուսակ 1-ի տվյալներով պայմանավորված հաշվարկվել են՝

- y -ի, X_i -երի ու վերջիններիս միջև գույգային կոռելյացիայի գործակիցները՝ ըստ հետևյալ բանաձևերի.

$$\text{ա) } r_{yx_i} = \frac{\overline{y \cdot x_i} - \bar{y} \cdot \bar{x}_i}{\sigma_y \cdot \sigma_{x_i}} \quad \text{բ) } r_{x_i x_j} = \frac{\overline{x_i \cdot x_j} - \bar{x}_i \cdot \bar{x}_j}{\sigma_{x_i} \cdot \sigma_{x_j}} \quad (1)$$

- y -ի, X_i –երի և վերջիններիս միջև գույգային դետերմինացիայի գործակիցները՝ ըստ հետևյալ բանաձևերի¹

$$\text{ա) } dy_{x_i} = (r_{yx_i})^2 \cdot 100\% \quad \text{բ) } dx_{j x_i} = (r_{x_j x_i})^2 \cdot 100\% \quad (2)$$

Հաշվարկները կատարված են համակարգչային ծրագրերով, իսկ արդյունքներն էլ ամփոփված են աղյուսակ 2-ում և 3-ում:

¹ Բայադյան Ա.Հ., Ֆինանսական վերլուծություն, Եր., 2013, էջ 132-133:

ՀՆԱ-ի (y) և ազդող գործոնների (xi) միջև կոռելյացիայի գործակիցները

	X ₁	X ₂	X ₃	X ₄	X ₅	y
X ₁	1					
X ₂	0.9848	1				
X ₃	0.4488	0.5010	1			
X ₄	0.8989	0.9401	0.6997	1		
X ₅	0.9497	0.9709	0.5838	0.980979601	1	
y	0.9505	0.975	0.6442	0.98294238	0.987979736	1

ՀՀ ՀՆԱ-ի և ազդող գործոնների(xi) միջև դետերմինացիայի գործակիցները

	X ₁	X ₂	X ₃	X ₄	X ₅	y
X ₁	1					
X ₂	0.9698	1				
X ₃	0.2014	0.2510	1			
X ₄	0.8080	0.8839	0.4896	1		
X ₅	0.9019	0.9426	0.3408	0.9624	1	
y	0.9035	0.8932	0.4151	0.9661	0.9759	1

Ըստ աղյուսակ 2-ի հաշվարկային տվյալների ՀՆԱ-ի և ազդող գործոնների միջև կոռելյացիայի գործակիցները բավականին բարձր են, բացի X₃-ից (շինարարության ոլորտ), որը կազմել է 0.6442, իսկ դրան համահունչ դետերմինացիայի ցուցանիշը 0.4151 կամ 41.5% (տե՛ս աղյուսակ 3-ը): Այսինքն՝ արդյունքում ՀՆԱ-ի ձևավորման վրա շինարարության ոլորտն ազդում է 41.5%-ով: Պետք է նշել, որ այդ ոլորտը բավարար փոխկապվածության մեջ է գտնվում նաև մնացած ոլորտների հետ: Այսպես՝ արդյունաբերության ոլորտի հետ՝ $r_{X_1X_3} = 0.4488$ կամ 20.14%, գյուղատնտեսության ոլորտի հետ, $r_{X_2X_3} = 0.5010$ կամ 25.1%, տրանսպորտի և կապի ոլորտի հետ՝ $r_{X_4X_3} = 0.6977$ կամ 48.96%, առևտրի և ծառայությունների մատուցման հետ՝ $r_{X_5X_3} = 0.5838$ կամ 34.08%:

Կատարված հաշվարկներից ակնհայտ է դառնում, որ ՀՆԱ-ի և ազդող գործոնների միջև ընդհանուր կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.9966, իսկ ընդհանուր դետերմինացիայի գործակիցը՝ 0.9931 կամ 99.3%: Այստեղից հետևություն, որ ՀՆԱ-ի ցուցանիշի մեծության վրա ներկայացված գործոնները ներազդում են 99.3%-ով, իսկ մնացած 0.7%-ը այլ գործոններն որոնք հետազոտությունում հաշվի չեն առնված:

Բացի վերոնշյալներից իրականացված է ՀՆԱ-ի և X₁, X₂, X₃, X₄, X₅ ցուցանիշների միջև գործոնային վերլուծություն՝ հիմնվելով հետևյալ ռեգրեսիոն հավասարման վրա.

$$Y_{X_1 X_2 X_3 X_4 X_5} = a_0 + a_1X_1 + a_2X_2 + a_3X_3 + a_4X_4 + a_5X_5 \quad (3)$$

որտեղ a₀, a₁, a₂, a₃, a₄, a₅ – երբ ռեգրեսիայի հավասարման գործակիցներն են, որոնք ենթակա են որոշման:

Վերջնական արդյունքում ստացվել է հաշվարկային ռեգրեսիայի հավասարումը՝

$$Y = -316496.8294 + 0.1739X_1 + 2.4181X_2 + 0.8261X_3 + 1.0946X_4 + 0.5385X_5 \quad (4)$$

Պարզաբանման համար նշենք, որ ըստ (4) հավասարման, եթե արդյունաբերության վերջնական արդյունքը (հասույթը) ավելանա 1 միավորով, ապա ՀՆԱ-ն կավելանա 0.1739 միավորով,

իսկ եթե գյուղատնտեսության գծով վերջնական արդյունքն ավելանա 1 միավորով, ապա ՀՆԱ-ն կավելանա 2.4181 միավորով, և այդպես շարունակ կարող ենք կատարել մեկնաբանություններ մնացած ոլորտների՝ X₃-ի X₄-ի, X₅-ի գծով:

Այսպիսով, ընդհանուր առմամբ նշենք, որ ցանկացած վերլուծության ընթացքում բացահայտվում են արդյունքային ցուցանիշի ու ազդող գործոնների միջև եղած փոխկախվածությունները և դրանցով պայմանավորված էլ կատարվում են համապատասխան տնտեսագիտական մեկնաբանություններ, իսկ բարելավման առումով էլ դրանց համահունչ ներկայացվում են առաջարկություններ: Ուստի հաշվի առնելով մեր կողմից իրականացված հետազոտությունում համախառն ներքին արդյունքի կարևորությունը, որպես տնտեսական աճի ապահովման հիմնական նախապայման անհրաժեշտություն ենք համարել հետևյալները.

- Դեռևս ոչ բավարար մակարդակով արդյունաբերություն ունենալուն համընթաց ձևավորել՝ ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ մարզերում վերամշակող արդյունաբերական կազմակերպություններ, պայմանավորված ներձյուղային և միջձյուղային արտադրական կապերի փոխհամաձայնության վրա:
- ստեղծել համապատասխան պայմաններ՝ ավանդական գյուղատնտեսությանը համահունչ, երկրի տնտեսության զարգացման հեռանկարային ուղղություններում ներառել նաև էկոլոգիական գյուղատնտեսություն, որը պայմաններ կնախանջի գյուղմթերք վերամշակող և էկոլոգիապես մաքուր արդյունաբերական փոքր ձեռնարկությունների ընդլայնմանը: Վերջիններս հնարավորություն կընձեռեն մարդկային ռեսուրսների արտահոսքի աստիճանաբար նվազմանը և դեպի Հայաստան դրանց ներհոսքի ավելացմանն ու զբաղվածության ապահովմանը,
- ՀՀ կառավարության ծրագրին (2016թ.) համահունչ 2017 թվականից սկսած իրականացնել հիմնական արդյունաբերական կազմակերպությունների ստեղծման ու եղածի ընդլայնման հետ կապված կապիտալ շինարարություններ, և դրանցով պայմանավորված էլ վերջնական արդյունքում կձևավորվեն աշխատատեղեր՝ դրանով իսկ նպաստելով ՀՆԱ-ի աստիճանաբար ավելացմանը,
- ՀՆԱ-ի ավելացման նպատակով բարելավել արտահանման ենթակառուցվածքները, հատկապես գյուղատնտեսության ոլորտում (հաշվի առնելով ՀՀ-ի տրանսպորտային դժվարությունները) և միաժամանակ արտահանման խթանումը նպատակաուղղել դեպի բարձրարակ և չփչացող ապրանքատեսակները,
- Իրականացնել բուսաբուծության և անասնաբուծության ոլորտում գյուղատնտեսական մթերք վերամշակող արդյունաբերության մեջ արդիական տեխնոլոգիաների ներդրում, որը հնարավոր է նպատակային ու մատչելի վարկերի տրամադրմամբ, լիզինգային մեխանիզմների կիրառմամբ և տեխնիկական միջոցներով վերազինմամբ:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա ծառայությունների մատուցման խրախուսումը և պետության աջակցությամբ առկա բարձրորակ կադրային ներուժի արդյունավետ օգտագործումը:

ՀՀ ՀԱՍՏԱՆԱԴՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՓՈՆԿԱԴՊՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՇՈՏ ՀԱԿՈԲԻ ԲԱՅԱԴՅԱՆ, տ.գ.դ., պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող

Համառոտագիր

Ցանկացած երկրում, այդ թվում նաև Հայաստանում տնտեսական աճի ապահովման գործընթացում իր էությունը և նշանակությամբ, կարևորվում է համախառն ներքին արդյունքի անընդհատ ավելացումը, որը ձևավորվում է տնտեսության իրական հատվածում: Ուստի վերոնշյալների պարզաբանման նպատակով կատարված է բազմագործոն վիճակագրական վերլուծություն՝ հիմնված համախառն ներքին և տնտեսության հիմնական ոլորտների (արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի և կապի, առևտրի և ծառայությունների մատուցում) գործունեությունից ստացված հասույթների մեծությունների վրա: Հետազոտությունն ամփոփված է տնտեսագիտական մեկնաբանություններով և առաջարկություններով:

Բանալի բառեր. *համախառն ներքին արդյունք, տնտեսության ոլորտներ, փոխկապվածություն, վիճակագրական վերլուծություն, կորելյացիա, դետերմինացիա:*

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ВЗАИМОСВЯЗИ ВНУТРЕННЕГО ВАЛОВОГО ПРОДУКТА И ОСНОВНЫХ СФЕР ЭКОНОМИКИ РА

АШОТ АКОПОВИЧ БАЯДЯН, д.э.н., профессор
зав.отделом, главный научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

В любой стране, в том числе и в Армении, в обеспечении экономического роста по своей сути и значимости важное значение имеет постоянное увеличение внутреннего валового продукта (ВВП), который формируется в реальном секторе экономики. В этой связи проведен многомерный статистический анализ ВВП и доходов, полученных от деятельности в основных сферах экономики (промышленности, сельского хозяйства, строительства, транспорта и связи, торговли и услуг). По результатам исследования даны разъяснения и практические рекомендации.

Ключевые слова: *внутренний валовой продукт, сферы экономики, взаимосвязь, статистический анализ, корреляция, детерминация.*

STATISTICAL ANALYSIS OF THE INTERDEPENDENCE OF THE GDP AND THE MAIN SECTORS OF THE ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA

ASHOT HAKOB BAYADYAN, Doctor of Sciences (Economics), Professor
Head of Department, Chief Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

In any country, including in Armenia, for ensuring the economic growth in its essence and significance, it is important to constantly increase the gross domestic product (GDP), which is formed in the real sector of the economy. In this regard, a multidimensional statistical analysis of GDP and income derived from activities in the main sectors of the economy (industry, agriculture, construction, transport and communications, trade and services) has been carried out. The research is summarized with economic interpretations and practical recommendations.

Keywords: *Gross domestic product, industries of economy, interrelation, statistical analysis, correlation, determination*

ԼԻԱՆԱ ՀԱՅԿԱԶԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ, տ.գ. դ.,


ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ

ԱՐՓԻՆԵ ՍԱՆԱՍԱՐԻ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

20-րդ դարի վերջին և 21-րդի սկզբին բիզնեսի տնտեսական միջավայրը զգալի փոփոխություններ կրեց, որոնց արդյունքում էլ սրվեց մրցակցությունը բոլոր շուկաներում: Կոշտ շուկայական մրցակցության պայմաններում ամուր մրցակցություն նվաճելու համար նոր մոտեցումներ պահանջվեցին նյութական, դրամական և աշխատանքային ռեսուրսների կառավարման նկատմամբ, որոնք կողմնորոշված են արտադրական կազմակերպությունների զարգացման ռազմավարական նպատակներին: Վերջիններիս հասնելու նպատակով էլ անհրաժեշտ է ունենալ հասանելի ու բավարար չափով տեղեկատվություն, որը կնպաստի կառավարչական հաշվառմանը, իրականացմանը: Պետք է նշել, որ ի հայտ եկած տեղեկատվական տեխնոլոգիաներն ավելի մեծ հնարավորություն են ստեղծում կառավարչական հաշվառման նոր մոտեցումների և մեթոդների կիրառման համար, որը հնարավոր չէր պատկերացնել տասը տարի առաջ (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Ռազմավարական կառավարման և կառավարչական հաշվառման միավորումը

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություններ են տալիս ավտոմատացնել ընթացիկ աշխատանքները, դրանով իսկ լուծելով ռազմավարական նշանակություն ունեցող հեռանկարային հիմնախնդիրներ: Ավելին, ժամանակակից տեղեկատվատեխնոլոգիական վիճակագրական ու սոցիոլոգիական նորովի մոտեցումների գծով մշակումները թույլ են տալիս ավելի լավ հաղթահարել այն անորոշությունները, որոնք հատուկ են կազմակերպության արտաքին միջավայրին: Ուստի այդ առումով էլ ավանդական կառավարչական հաշվառումը բազմիցս ենթարկվել է քննադատության այն բանի համար, որ այն հիմնականում կենտրոնացած է կազմակերպության գործունեության ներքին հայեցակարգերի վրա և բավարար ուշադրություն չի հատկացնում արտաքին միջավայրի վերլուծությանը, առանց որի հնարավոր չէ ընդունել բիզնեսի զարգացման երկարատև (ռազմավարական) որոշումներ:

Նշված գործոնները հանգեցրին այն իրողության ընկալմանը, որ երկարատև նպատակներին կողմնորոշվածությունը նպաստում է ընկերության գործունեության մեջ հետաքրքրված անձանց համար առավել կայուն եկամուտների ապահովմանը հեռանկարային առումով, հաշվի առնելով այն փոփոխությունների բնույթը, որոնք որոշում են նաև կարճաժամկետ առավելությունները:

Ռազմավարական որոշումների տեղեկատվավերլուծական ապահովման համար պա-

հանջվեցին կառավարչական հաշվառման նոր մեթոդներ, որոնց ամբողջությունն ընդունված է անվանել ժամանակակից կամ ռազմավարական կառավարչական հաշվառում: Նրա առանձնահատկությունը պայմանավորված է այնպիսի ոլորտների սկզբունքների և հասկացությունների լայն կիրառմամբ, ինչպիսիք են, օրինակ, ռազմավարական մենեջմենթը, մարքեթինգը, էկոնոմետրիկան և այլն:

Ռազմավարական կառավարչական հաշվառումը և վերլուծությունը ձևավորվել են ռազմավարական մենեջմենթի ու կառավարչական հաշվառման ինտեգրման արդյունքում, և որպես գործիք, իր էությունը ավելի է համապատասխանում բիզնեսի գործունեության բարձր մրցակցային միջավայրին:

Ռազմավարական կառավարչական հաշվառման և վերլուծության տեսական ու մեթոդաբանական հիմքերը ներկայումս դեռևս բավարար չափով մշակված չեն: Արդյունքում բավականին բազմազան է կառավարչական հաշվառման և վերլուծության համակարգի կազմակերպման գործընթացները տարբեր ոլորտների կազմակերպություններում: Չնայած այն հանգամանքին, որ ռազմավարական կառավարչական հաշվառումը որպես ինքնուրույն ուղղություն գոյություն ունի գրեթե քսան տարի (նրա առաջացումը վերագրում են 20-րդ դարի 80-ականներին), սակայն մինչև այժմ դեռևս գոյություն չունի դրա միանշանակ սահմանումը:

«Ռազմավարական կառավարչական հաշվառում» տերմինն առաջին անգամ առաջարկել է Միմմոնդսը: Նա այն դիտարկում է որպես սեփական և մրցակիցների բիզնեսների վերլուծության եղանակ, որը կիրառվում է սեփական բիզնեսի մշակման ու հսկողության դեպքում¹:

Բրոուսիչը, ով հանդիսանում է ռազմավարական կառավարչական հաշվառման ակտիվ կողմնակից, այդ ուղղությունը սահմանել է որպես. «ընկերությունների արտադրանքի շուկայի, մրցակիցների ծախսերի ու դրանց կառուցվածքի մասին ֆինանսական տեղեկատվության վերլուծության եղանակ, և ձեռնարկության, և մրցակիցների ռազմավարությունների հետևողականություն այդ շուկաներում մի քանի հաշվետու շրջանների ընթացքում»²:

Այդ ոլորտի մեկ այլ ականավոր գիտնական՝ Իննսը ռազմավարական կառավարչական հաշվառումը սահմանում է որպես տեղեկատվության տրամադրում, որն ապահովում է աջակցություն կազմակերպության մեջ ռազմավարական որոշումների ընդունման դեպքում: Այդ տեսակետը կիսում են նաև Կուպերը և Կապլանը, ովքեր հաստատում են, որ ռազմավարական կառավարչական հաշվառման մոտեցումները մշակվել են առաջին հերթին կազմակերպության ընդհանուր մրցակցության ռազմավարության պահպանման համար, գլխավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հաշվին՝ ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի առավել կատարյալ հաշվառման համար:

Ուորդի կարծիքով ռազմավարական կառավարչական հաշվառումը կոչված է լինելու կառավարչական որոշումների հիմնավորման համակարգ, այսինքն, այն պետք է տեղեկատվությամբ ապահովի ընկերությունների մենեջերներին, ովքեր պատասխանատու են ռազմավարական կառավարչական որոշումների ընդունման համար, որը կարևոր է որպեսզի համապատասխան տեղեկատվությունը տրամադրվի անհրաժեշտ մարդկանց տվյալ պահին³:

Տեղին է նշել նաև այն սահմանումը, որը տալիս է Մեծ Բրիտանիայի կառավարչական հաշվառման գծով հաշվապահների ինստիտուտը (համարվում է աշխարհում առաջատար կազմակերպությունը կառավարչական հաշվառման խնդիրների հարցով). «Ռազմավարական կառավարչական հաշվառումը կառավարչական հաշվառման այնպիսի ձև է, որի դեպքում հիմնական շեշտադրումը կատարվում է արտաքին գործոնների հետ կապված տեղեկատվության վրա, որոնք ազդում են ընկերության գործունեության վրա: Սակայն դրա հետ մեկտեղ պատշաճ ուշադրություն է դարձվում նաև ներքին տեղեկատվությանը (այդ թվում նաև ոչ ֆինանսական)» (CIMA, Managment accounting Official Terminology, 2000):

Ակնհայտ է, որ մինչև այսօր չկա կառավարչական հաշվառման զարգացման նոր ուղղության միանշանակ ընկալում (մեր երկրում դեռևս չեն դադարել վեճերը կառավարչական հաշվառման ընկալման վերաբերյալ), ինչպես նաև չկա բազմակողմանի հայեցակարգային հիմք,

¹ К. Друри. Управленческий учет. М. ИНФРА. М. 2002. С 861.

² К. Друри. Управленческий учет. М. ИНФРА. М. 2002.С 863.

³ Кит Уорд. Стратегический управленческий учет. М. Олимп-Бизнес 2002.С 15.

որի վրա հիմնվում է այդ նոր ուղղությունը: Բերենք հիմնական գործոնների դասակարգումը, որոնք բնութագրում են ռազմավարական կառավարչական հաշվառումը, որը կատարել է Լորդը, մասնագիտական գրականության ուսումնասիրման հիման վրա¹: Այդ գործոնները ներառում են.

1. ավանդական կառավարչական հաշվառման ներքին կողմնորոշվածության սահմաններից անցումը և մրցակիցների մասին տեղեկատվության ստացումը,
2. ընկերության կողմից ընտրված ռազմավարական դիրքորոշումների միջև կախվածության սահմանումը, որն ակնկալվում է կառավարչական հաշվառման կողմից (այսինքն, հաշվետվություն ռազմավարական դիրքորոշման տեսանկյունից),
3. մրցակցային առավելության ձեռքբերումը՝ ծախսերի կրճատման և/կամ ընկերության արտադրանքն ըստ տարատեսակների առանձնացման աստիճանի բարձրացման եղանակների վերլուծության հաշվին՝ արժեքների և ծախսերի գործոնների օպտիմալացման կիրառման օգնությամբ:

Այսպիսով, ռազմավարական կառավարչական հաշվառման տարբերակիչ գլխավոր առանձնահատկությունները հանդիսանում են կազմակերպության գործունեության արտաքին գործոնների վերլուծության նկատմամբ կողմնորոշումը և նրա ռազմավարական ուղղվածությունը (տեղեկատվության ապահովում՝ կառավարման ռազմավարական խնդիրների լուծման համար):

Ռազմավարական կառավարչական հաշվառման համակարգում պետք է կատարվի արտաքին պայմանների համեմատական վերլուծություն, որոնցում կազմակերպությունն իրականացնում է իր գործունեությունը, այսինքն՝ այդ կազմակերպության վիճակի վերլուծության գործընթացում պետք է պարտադիր կերպով իրականացվի վերլուծություն, որը կվերաբերվի մրցակիցներին, մատակարարներին, սպառողներին, արտաքին տնտեսական պայմաններին, կառավարության գործողություններին և այլն:

Հաշվառման և վերլուծության համակարգի ռազմավարական ուղղվածությունը կարող է առաջացնել՝ կազմակերպության հաշվարկների փոփոխության, տեղեկատվության մշակման և վերլուծության նկատմամբ մոտեցումների վերանայման, նոր կառավարչական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտություն, որոնք օգնում են իրականացնել այդ կազմակերպության ռազմավարությունը: Ռազմավարական կառավարչական հաշվառման համակարգում պետք է մշակված լինի ցանկացած ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները բնութագրող այն հիմնական ցուցանիշները, որոնք կօգտագործվեն ռազմավարության ներդրման մշտական հսկողության նպատակով: Նաև շատ կարևոր է ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունն ու հաշվառումը, որոնք բնութագրում են բոլոր գործընթացների իրական արդյունավետությունը, որ տեղի են ունենում կազմակերպության մեջ և ազդում են նրա զարգացման վրա:

Ռազմավարական կառավարչական հաշվառման էությունը սահմանելու համար որպես ռազմավարական որոշումների ընդունման տեղեկատվական հիմք անհրաժեշտ է դիտարկել ռազմավարական կառավարումը, նրա նպատակներն ու խնդիրները:

Ռազմավարական կառավարումը կարելի է սահմանել որպես կազմակերպության գործունեության կառավարում, որի համար մարդկային պոտենցիալը հանդիսանում է կազմակերպության հիմքը, կողմնորոշում է արտադրական գործընթացը սպառողների պահանջարկի նկատմամբ, ճկուն կերպով արձագանքում է և ժամանակին փոփոխություններ է կատարում կազմակերպության ներսում, որոնք համապատասխանում են շրջապատի պահանջին ու օգնում են կազմակերպությանը պահպանել գոյությունը և հասնել նպատակին երկարատև հեռանկարով²:

Մենեջերի հիմնական խնդիրները կազմակերպության ռազմավարության ստեղծման և իրականացման գործում հանդիսանում են հետևյալները.

1. Առևտրային տեսակի գործունեության սահմանում և նրա զարգացման ռազմավարական ուղղությունների ձևավորում, այսինքն անհրաժեշտ է նշանակել զարգացման նպատակներ և երկարատև հեռանկարներ:
2. Ընդհանուր նպատակներն ուղղել աշխատանքի կոնկրետ ուղղությունների մեջ:
3. Ընտրված պլանի հմուտ իրականացում ցանկալի ցուցանիշների հասանելիության համար:

¹ Друри К. . Управленческий учет. М. ИНФРА. М. 2002—С 861.

² Виханский О.С. Наумов А.И. Менеджмент. М. Гардарика 2001 С 183.

4. Ընտրված ռազմավարության արդյունավետ իրականացում:

5. Կատարված աշխատանքի գնահատում, շուկայում իրավիճակի վերլուծություն, գործունեության երկարատև հիմնական ուղղություններում, նպատակներում ու ռազմավարությունում շտկումների կատարում կամ դրա իրականացում, միաժամանակ առկա փորձի հիման վրա, և փոփոխվող պայմաններում, նոր գաղափարների կամ նոր հնարավորությունների իրականացում:

Այսպիսով, ելնելով ռազմավարական խնդիրներից, որոնք կանգնած են մենեջմենթի առջև, կարելի է առանձնացնել ռազմավարական կառավարչական տեղեկատվության նկատմամբ հիմնական պահանջները:

Ռազմավարական տեղեկատվության ներկայացման գաղափարը չորս հիմնական տեսակետներից, որոնք կիրառվում են ներկայումս հավասարակաշռված ցուցանիշների համակարգում՝ նորություն չեն: Այդ գաղափարն առաջին անգամ արտահայտել են Թոմփսոնը և Ստրիկլենդը¹ իրենց առաջին գրքում՝ 1980 թվականին: Նրանց կարծիքով, տեղեկատվական համակարգերը պետք է ընդգրկեն տեղեկատվություն՝

1. գնորդների մասին,
2. բիզնես-գործընթացների մասին,
3. անձնակազմի մասին,
4. գործունեության ֆինանսական արդյունքների մասին:

Գործունեության բոլոր հիմնական ռազմավարական ցուցանիշները պետք է չափվեն այնքան հաճախ, ինչպես և այն ցուցանիշները, որոնք բնութագրում են արտադրական գործընթացը: Տեղեկատվության ամբողջությունը, որն անհրաժեշտ է ռազմավարական կառավարման համար, պետք է տրամադրված լինի ռազմավարական հաշվետվության տեսքով:

Ռազմավարական կառավարչական հաշվետվությունը պետք է հնարավորություն տա հսկել և վերահսկել ռազմավարական ցուցանիշների նվաճման աստիճանը: Նրանում պետք է պարունակվի բազմակողմանի տեղեկատվություն կազմակերպության վիճակի մասին, ինչպես նաև կազմակերպության մակրոմիջավայրի, անմիջական միջավայրի և ներքին միջավայրի վերլուծության վերաբերյալ տվյալներ: Տեղեկատվությունը պետք է տրամադրվի ժամանակի իրական ռեժիմում և մշտապես թարմացվի:

Ռազմավարական կառավարչական հաշվառումը պետք է դիտարկել որպես կազմակերպության ռազմավարական կառավարման միասնական տեղեկատվական-վերլուծական համակարգ, որը ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները՝

1. ռազմավարական կառավարչական հաշվետվությունը, որի բովանդակությունը պետք է համապատասխանի վերը նշված պահանջներին,
2. ռազմավարական կառավարչական հաշվառման գործիքակազմը, որի թվին են դասված՝
 - հաշվեկշռված ցուցանիշների համակարգը (BSC-Balanced Scorecard),
 - ծախսերի և արժեքային շրթանների ռազմավարական վերլուծությունը,
 - ըստ գործունեության տեսակների ծախսերի հաշվառումը,
 - տնտեսական շահույթի արտադրման մոդելը,
 - բենչմարկինգը,
 - SWOT վերլուծությունը,
 - ուսուցման կորի վերլուծությունը,
 - կայզեն քոստինգը,
 - որակի ընդհանուր կառավարումը (Total Quality Management - TQM),
 - ճիշտ ժամանակին (Just In Time- JIT) առաքումների կառավարման համակարգը:

Նշենք, որ ցանկացած կառավարչական տեխնոլոգիա, որը կողմնորոշված է ռազմավարական խնդիրների լուծմանը, կարելի է համարել ռազմավարական կառավարչական հաշվառման և վերլուծության գործիքակազմ: Ընդ որում, չպետք է հրաժարվել ավանդական տեխնոլոգիաներից և մեթոդներից, որոնք նպաստում են տարբեր ռազմավարական որոշումների ընդունմանը, օրինակ՝ շեղումների բյուջետավորմանը և վերլուծությանը, ծախսերի նորմատիվ հաշվառմանը

¹ Томпсон А.А., Стрикленд А.Дж. Стратегический менеджмент. М. ЮНИ-ТИ 1998 С 357.

(«ստանդարտ-կոստ» համակարգեր):

Կազմակերպության ռազմավարական կառավարչական հաշվառման համակարգը ենթադրում է ոչ միայն միջավայրի վիճակի մշտական մոնիթորինգ, այլ նաև կառավարման որոշակի ռազմավարություններ, օրինակ, որակի և ծախսերի բազմակողմանի կառավարումը, ինչպես նաև ճիշտ ժամանակին մատակարարումը: Այդպիսի համակարգը թույլ է տալիս հեռանկարային առումով հասնել մրցակցային առավելության՝ կազմակերպության կառավարման մեջ ռազմավարական փոփոխությունների հաշվին:

Ռազմավարական կառավարչական հաշվառման և վերլուծության համակարգի ներմուծման և կիրառման դեպքում կարևոր պահանջներն են.

- անընդհատ վերլուծությունը,
- ղեկավարության կողմից ներմուծման անհրաժեշտության գիտակցումը և մշտական աջակցությունը,
- կազմակերպությունում ռազմավարական կառավարման միասնական համակարգի ստեղծումը:

Ռազմավարական կառավարչական հաշվառման և վերլուծության համակարգը զգալիորեն տարբերվում է ռազմավարական կառավարման մեջ միջավայրի վերլուծությունից, որը ենթադրում է որոշակի ռազմավարությունների մշակման համար տվյալների ստացում: Ռազմավարական կառավարչական հաշվառումը, մեր կարծիքով, պետք է լինի համակարգված և կազմակերպության ղեկավարությանը մշտապես ապահովի համապատասխան տեղեկատվությամբ: Այն հանդես է գալիս որպես ցուցիչների համակարգ, ըստ որոնց կարելի է ժամանակին շտկել ռազմավարությունը և, որ ամենակարևորն է, հսկել ռազմավարության կատարումը:

Ավանդական ռազմավարական կառավարման դեպքում, որպես կանոն, բավարար ուշադրություն չի դարձվում ռազմավարության կատարմանը, իսկ ահա այդ առումով ռազմավարական կառավարչական հաշվառումը լրացնում է այդ բացը: Կոնկրետ որակական և քանակական ցուցանիշները թույլ են տալիս մշտապես վերահսկել ռազմավարության նվաճման աստիճանը, և այդ ցուցանիշները թույլ են տալիս իրականացնել կազմակերպության առաքելությունն ու նպատակները:

Ռազմավարական կառավարչական հաշվառման էության վերաբերյալ ավելի հստակ պատկերացում ունենալու համար աղյուսակով ներկայացնենք այս նոր ուղղության և ավանդական կառավարչական հաշվառման համեմատական վերլուծությունն ավելի լայն շրջանակներով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ռազմավարական և ավանդական կառավարչական հաշվառումների տարբերությունները

Վերլուծվող հանգամանքներ	Ռազմավարական կառավարչական հաշվառում	Ավանդական կառավարչական հաշվառում
Ներքին գործոններ և գործընթացներ	Հաշվի է առնվում	Բնորոշ է ներքին գործոնների նկատմամբ խիստ կենտրոնացումը
Արտաքին գործոններ և գործընթացներ	Հաշվի է առնվում: Օրինակ, հատուկ ուշադրություն է դարձվում կազմակերպության գործունեության շուկաների մասին տեղեկատվության վերլուծությանը, մրցակիցների ծախսերի, ծախսերի կառուցվածքին և կազմակերպության ռազմավարության մոնիթորինգին և այդ շուկաներում մրցակիցների ռազմավարություններին մի շարք հաշվետու ժամանակաշրջանների կտրվածքով: Այս նպատակով կարող են օգտագործվել այնպիսի հնարքներ, ինչպիսիք են Պորտերի արժեքների շղթան, ռազմավարական դիրքավորումը և այլն	Հիմնականում հաշվի չի առնվում, արտաքին գործոնների վերլուծությունը կատարվում է առիթից առիթ և չի կրում կանոնավոր բնույթ
Ոչ ֆինանսական գործոններ	Կատարվում է ոչ ֆինանսական գործոնների սիտեմատիկ հաշվառում և գնահատում	Որպես կանոն ոչ ֆինանսական գործոնները չեն քննարկվում. ամեն դեպքում փորձ չի կատարվում կանոնակարգել այդ գործընթացը

Վերլուծվող հանգամանքներ	Ռազմավարական կառավարչական հաշվառում	Ավանդական կառավարչական հաշվառում
Ծախսերի վերլուծության հետ կապը	<ul style="list-style-type: none"> • ռազմավարական վերլուծության համար արտադրված արտադրանքի ծավալը չի համարվում ծախսերի վարքագիծը բացատրող առավել էական գործոն, • ռազմավարական ոչ բոլոր գործոններն ունեն նույն կարևորությունը, բայց դրանցից մի քանիսը շատ կարևոր են առանձին դեպքերում, • ծախսերի վրա ազդող յուրաքանչյուր գործոն ունի վերլուծության իր համակարգը, որը վերջնական արդյունքում կարևորված է շուկայում կազմակերպության դիրքավորման հարցում 	Համարվում է, որ միակ գործոնը, որը կարող է ազդել ծախսերի վարքագծի վրա, արտադրվող արտադրանքի քանակն է: Վերոնշյալը հիմք ընդունելով ծախսերը խմբավորվում են հաստատունի և փոփոխունի
Կապը և նշանակությունը ռազմավարական կառավարչական որոշումների ընդունման հետ	Ուղղված է ռազմավարական կառավարչական որոշումների ընդունման ներդրմանը, աջակցմանը և զարգացմանը: Ապահովում է, որ անհրաժեշտ տեղեկատվությունը ճիշտ ժամանակին ներկայացվի այն անձանց, ովքեր ունեն դրա կարիքը	Ուղղված չէ ռազմավարական կառավարչական որոշումների ներդրմանը, աջակցմանը և զարգացմանը: Հաճախ տրամադրում է ապակողմնորոշիչ տեղեկատվություն, որոնք օգտակար չեն կառավարչական որոշումների ընդունման ժամանակ
Դերը կազմակերպությունում	<p>Ունի էական նշանակություն, քանի որ ներկայացված է կոնկրետ կազմակերպության իրական գործունեության պահանջներին համապատասխան</p> <ul style="list-style-type: none"> • անհրաժեշտ է կազմակերպության ռազմավարական կառավարման գործունեության համար, • ստեղծում է տեղեկատվության ստացման առավել արդյունավետ պայմաններ, • նպաստում է մրցակցային և կորպորատիվ ռազմավարությունների ձևավորմանը, ինչպես նաև կազմակերպության զարգացման տարբեր փուլերում ռազմավարության փոփոխության վերլուծությանը: Ապահովում է ռազմավարության ենթակետերի, շահագրգռված անձանց հետաքրքրությունների և առանձին բիզնես միավորների միջև փոխհամաձայնությունը, • բացահայտում է կազմակերպության ռազմավարության փոփոխության անհրաժեշտությունը • վերահսկում է սահմանված ռազմավարական նպատակների իրագործման մակարդակը • ապահովում է կազմակերպության ռազմավարական և օպերատիվ գործունեության միջև կապ, ինչպես նաև կազմակերպության ռազմավարական պլանները և առաջադրանքներն արտացոլում է կոնկրետ ցուցիչների միջոցով 	Նշանակությունը սահմանափակվում է ավելի շատ գործառնական, քան ռազմավարական բնույթի խնդիրների լուծման պատճառով: Կազմակերպությունների մեծ մասում կառավարչական հաշվառումը դեռևս լուծում է ավանդական խնդիրներ. հաշվառման վարում, հիմնականում գործառնական բնույթի խնդիրների լուծում, կազմակերպություններում ծագած գործառնական բնույթի խնդիրների բացահայտում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԼԻԱՆԱ ՀԱՅԿԱԶԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ

ԱՐՓԻՆԵ ՍԱՆԱՍԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

Համառոտագիր

Ցանկացած գործունեության ռազմավարական կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հասանելի տեղեկատվություն: Ավանդական կառավարչական հաշվառումը, որի հիմնական սկզբունքներն արդեն մշակված էին արդյունաբերական հենք ունեցող տնտեսության համար, չեն տրամադրում համապատասխան տվյալներ, որոնք անհրաժեշտ են ժամանակակից պայմաններում ռազմավարական որոշումների ընդունման համար: Ռազմավարական որոշումների տեղեկատվական-վերլուծական ապահովման համար պահանջվեցին կառավարչական հաշվառման նոր մեթոդներ ու մոտեցումներ, որին էլ անդրադարձել ենք սույն հետազոտությունում:

Բանալի բառեր. ռազմավարական կառավարում, կառավարչական հաշվառում, տեղեկատվական համակարգեր, ռազմավարական կառավարչական հաշվառման գործիքակազմ

СУЩНОСТЬ, СОДЕРЖАНИЕ И ЗАДАЧИ СТРАТЕГИЧЕСКОГО УПРАВЛЕНЧЕСКОГО УЧЕТА И АНАЛИЗА

ЛИАНА АЙКАЗОВНА ГРИГОРЯН, д.э.н.

заведующий кафедрой управленческого учета и аудита АГЭУ

АРПИНЕ САНАСАРОВНА АКОПЯН

аспирант АГЭУ

Аннотация

В целях успешного стратегического управления любой деятельности необходима доступная информация. Традиционный управленческий учет, основные принципы которого были разработаны для индустриальной экономики, не предоставляет соответствующих данных, необходимых для принятия стратегических решений в современных условиях. Для информационно-аналитического обеспечения стратегических решений понадобились новые методы и подходы управленческого учета, которых коснулись авторы данного исследования.

Ключевые слова: стратегическое управление, управленческий учет, информационные системы, инструментарий стратегического управленческого учета.

THE ESSENCE, MEANING AND OBJECTIVES OF STRATEGIC MANAGERIAL ACCOUNTING AND ANALYSIS

LIANA HAYKAZ GRIGORYAN, Doctor of Sciences (Economics)

Head, Chair of Managerial Accounting and Auditing

Armenian State University of Economics

ARPINE SANASAR HAKOBYAN

Ph.D. Student, Armenian State University of Economics

Abstract

For strategic management of any active and/or business it is required to ensure availability of information in timely manner. Traditional managerial accounting, the principles of which were elaborated for the industrial economy, does not provide the relevant data necessary for strategic decision making in the contemporary world. In the article the authors discuss the new methods and approaches that have been required to ensure information flow and analytical processes in strategic decision making.

Keywords: Strategic management, managerial accounting, information systems, strategic managerial accounting toolkit

ՇՈՒԲԱՆԻԿ ՄԻՐՉԱԽԱՆԻ ԿՈՍԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող*

ԼԻԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԱՉԱՏՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող*

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՄԱԽԱՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

ՀՀ գյուղատնտեսության զարգացման կարևոր հիմնախնդիրներից է ժամանակակից գիտելիքների, տեխնոլոգիաների արդյունավետ ներդրումը գյուղատնտեսության ոլորտում: Հատկապես ուսումնասիրությունները վկայում են, որ համաշխարհային տնտեսության մեջ, վերջին տասնամյակում կատարվող տեղաշարժերը պայմանավորված են բարձր տեխնոլոգիաների առաջընթացով: Վերջինս իր էությունը այն կարևորագույն ռեսուրսն է, որն ի վիճակի է նպաստելու Հայաստանի շուկայական տնտեսության արդիականացմանը: Միաժամանակ գլոբալացման ներկա պայմաններում յուրաքանչյուր երկրում, այդ թվում՝ նաև ՀՀ-ում տեղի ունեցող առաջադեմ տնտեսական գործընթացները կրում են համաշխարհային տնտեսության ազդեցությունը: Այստեղ կարևորվում է նաև այն հանգամանքը, որ գիտատեխնիկական տեղեկատվության ճիշտ կիրառումն իր հերթին կհանգեցնի արտադրության ծախսերի կրճատմանը և արդյունավետության բարձրացմանը:

Շուկայական տնտեսության պայմաններում բոլոր տեսակի տնտեսական գործընթացների ապահովումը պայմանավորում է նյութական և ֆինանսական ռեսուրսների ավելացում: Ուստի այդ նպատակով որոշակի խումբ հեղինակներ արտահայտել են իրենց տեսակետները: Այսպես, այդ հեղինակներից որոշները գտնում են, որ գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետությունը բնորոշվում է ստացված արդյունքների և արտադրական ծախսումների (օգտագործած՝ հողի, աշխատուժի և այլ նյութական ռեսուրսների) հարաբերակցությամբ¹:

Երկրի գյուղատնտեսական ոլորտի զարգացումը պետք է ընթանա հաշվի առնելով առկա համեմատական առավելությունները, որոնցից են՝ բարձր որակյալ մթերքների և բանջարեղենի արտադրությունն ու վերամշակումը: Սակայն այդ ոլորտի զարգացման համար պահանջվում են լրացուցիչ ներդրումներ արտադրական գործընթացների ընդլայնման համար: Եվ դրանց հիմնավոր առումով կատարվել է համապատասխան մակրոտնտեսական վերլուծություն՝ բացահայտելով այն իրողությունը, որ արտադրության ծավալների ավելացումը կախված է ներդրումների մեծությունից²:

Գյուղատնտեսական կազմակերպությունների գործունեության ընթացքում անխուսափելի են այնպիսի բացթողումներ, որոնք կարող են հանգեցնել անցանկալի բացասական հետևանքների: Ուստի այդ բոլորից զերծ մնալու համար անհրաժեշտ է նպաստել փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը, քանի որ նրանք կարող են ավելի արագ ձևով յուրացնել գործունեության նոր ձևերը, նոր արտադրատեսակների արտադրությունը և ծառայությունների մատուցումը: Միաժամանակ առավել արդյունավետ գործընթաց կարող է ձևավորվել խոշոր և միջին արտադրական կազմակերպությունների հետ սերտ համագործակցության դեպքում:

Հայաստանի մրցունակության բարձրացման տեսակետից զարգացման ներկա փուլում, երբ առկա է մակրոտնտեսական ցուցանիշների աճ, ավելի կենսական նշանակություն են ստա-

¹ Экономика организаций и отраслей агропромышленного комплекса. Под редакц. академик В.Г. Гусакова. Минск, Белорусская наука, 2007г. , стр. 891.
² Թավադյան Ա, Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում: «Ամբերդ» մատենաշար, Երևան, «Տնտեսագետ» հրատ., 2014, էջ 18-20:

նում երկրի գործարար միջավայրի բարելավումն ու գործունեության կատարելագործումը: Գործարար միջավայրում առկա են մի շարք խնդիրներ, այդ թվում՝ տեղական շուկայի փոքր տարողությունը, ֆինանսական թույլ շուկան, վարչարարական բարդությունները, արտաքին շուկայում փոքր մասնաբաժինը և նորարարությունների ներդրման ցածր մակարդակը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճի նախադրյալներին ուշադրության են արժանացրել մի շարք հեղինակներ, որոնց աշխատություններում կարևոր տեղ է հատկացվել գյուղատնտեսության մեջ վարկերի նպատակային օգտագործմանը, գյուղացիական տնտեսությունների խոշորացմանը, կոոպերացմանը, մասնագիտացմանը, օրգանական գյուղատնտեսության զարգացմանը և նմանատիպ այլ հարցերին¹: Ասվածը վերաբերում է այն հանգամանքին, որ ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով գյուղացիական տնտեսությունները նյութատեխնիկական բազայի ոչ բավարար առկայության դեպքում, խախտում են ագրոտեխնիկական կանոններով նախատեսված աշխատանքների կատարման հաջորդականությունը, և արդյունքում ստացվում է բերքատվության անկում: Ուստի դրանից զերծ մնալու համար կարևորվում է վարկային միջոցների ներգրավումն ու դրանց նպատակային օգտագործումը: Եվ այս առումով «Բաց հասարակության հիմնադրամի» աջակցությամբ գյուղատնտեսության սուբսիդավորման և ֆինանսավորման սխեմաների ու գյուղատնտեսական արտադրանքի արտահանման խթանման վերաբերյալ կատարված հետազոտությունում նշվում է, որ գյուղատնտեսական վարկերի նկատմամբ միջտ պահանջարկն ավելի մեծ է քան առաջարկը²:

Վերջին տարիներին ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է հանրապետական բյուջետային հատկացումների մեծացման և կազմակերպման հետևողական իրականացմանը միջազգային կազմակերպությունների ներդրումների ընդհանուր ծավալի մեծացման, հողօգտագործողների պետական աջակցության նպաստավոր պայմանների իրականացումը: Հետևաբար նշված միջոցառումների հետագա զարգացման ուղին ունի կարևոր նշանակություն:

Գյուղատնտեսության զարգացման և արտադրության ինտենսիվացման հիմնական շարժիչ ուժերը հանդիսանում են գյուղմթերքների արտահանման առաջանցիկ աճը և պարենային ապահովման մակարդակի ավելացումը, որը կարելի է ապահովել գյուղատնտեսության կայուն զարգացման ծրագրերի իրականացման արդյունքում:

Պետք է նշել նաև այն իրողությունը, որ գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը ենթադրում է բարձրացնել ագրոպարենային համակարգի մրցունակությունը, ապահովել մակրոտնտեսական կայունությունը, տարածքային համաչափ զարգացումն ու բնական ռեսուրսների հավասարակշռված օգտագործումը, ինչպես նաև արտահանման խթանումը: Միաժամանակ ցանկացած երկիր, այդ թվում նաև Հայաստանը պետք է տեղյակ լինի համաշխարհային նորամուծությունների ստեղծմանը, իսկ իրենց հերթին էլ ներկա համաշխարհային զարգացումներին զուգընթաց բոլոր տեսակի գյուղատնտեսական բնույթի արտադրական կազմակերպությունները մրցունակ լինելու համար պետք է կարողանան տիրապետել նորագույն տեխնոլոգիական գործընթացներին:


Հիմնվելով վերոնշյալների կարևորության վրա պետք է նշել, որ յուրաքանչյուր երկրում տնտեսական կայունության ապահովման և դրա գնահատման իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսության զարգացման ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 1-ը և գծապատկեր 1-ը):

¹ Բայադյան Ա.Զ., Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 124-131:

² Ենգոյան Ա., Սուբսիդավորման և ֆինանսավորման սխեմաները գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական ապրանքների արտահանման խթանումը, էջ 18-22:

Գյուղատնտեսության զարգացման ցուցանիշներն ըստ 2007-2015թթ.¹

Անվանումները	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Գյուղ. համախառն արտադրանք մլրդ. դրամ, որից	633.9	328.1	552.1	636.7	795.0	841.5	919.1	993.5	1001.2
բուսաբուծությունում	429.9	405.9	346.7	392.7	465.1	516.0	572.8	605.7	605.8
անասնաբուծությունում	204.0	222.2	205.4	244.0	329.9	325.5	346.3	387.8	395.4
Զբաղվ. թիվը, հազ. մարդ	506.9	493.5	496.6	500.9	457.4	437.2	422.1	394.8	379.0
Աշխ. արտադրող., հազ. դրամ	1250.5	1272.7	1111.8	1271.1	1738.0	1924.8	2177.4	2516.0	2641.7
Գյուղ. վարկեր . մլրդ. դրամ	22.4	36.5	44.8	52.4	73.4	91.9	103.2	127.6	137.7
Գյուղ. վարկ. և համախառն արտադր. Հարաբերակցություն, %	3.6	5.8	8.0	8.9	9.2	9.2	12.3	28.4	37.5



Գծապատկեր 1. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ժամանակագրական փոփոխությունն ըստ ճյուղերի և զբաղվածների (2007-2015թթ.)

Աղյուսակ 1-ից և գծապատկեր 1-ից պարզ երևում է, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ տարիների կայուն աճ է ապահովել: Այսպես, օրինակ, 2015թ. համախառն արտադրանքը 2007թ.-ի համեմատությամբ աճել է 58%-ով, ընդ որում բուսաբուծությունում՝ 40.9%-ով, անասնաբուծությունում՝ 93.8%-ով: Բուսաբուծության համախառն արտադրանքի աճին նպաստել է ինտենսիվացումը, որը սերտորեն կապված է հողերի ոռոգման, պարարտանյութերի և զանազան քիմիկատների պատշաճ օգտագործման, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի ապահովվածության մակարդակի բարձրացման և այլ միջոցառումների իրականացման հետ: Անասնաբուծության համախառն արտադրանքի աճին նպաստել է անասունների գլխաքանակի աճը, տոհմային գործի, կենդանիների պահվածքի և կերակրման բարելավումը: Տարեցտարի գյուղատնտեսության մեջ զբաղվածների թիվը կրճատվել է մոտավորապես 25%-ով, սակայն աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է 2 անգամ:

Վերջիններով էլ պայմանավորված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ գյուղատնտեսությունը հանդիսանում է Հայաստանի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը և երկրի համախառն ներքին արդյունքի ձևավորման գործում այն ունի իր ուրույն տեղը:

¹ ԱՎԾ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը, 2010-2015թթ., ԱՎԾ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2010-2015թթ., ԱՎԾ Տարեգիրք, 2010-2015թթ.:


Համախառն ներքին արդյունքի, այդ թվում գյուղատնտեսության և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ 2007-2015թթ. ներկայացված է աղյուսակ 2-ում և գծապատկեր 2-ում:

Պարզվում է, որ գյուղատնտեսության համախառն ներքին արդյունքը, չնայած դժվարություններին 2007թ. նկատմամբ 2014թ.-ին աճել է 52.2%-ով, իսկ 2015թ. համապատասխանաբար 50.1%-ով: Գյուղատնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ 2007թ. աճել է 15.7%-ով, 2011թ.՝ 30.5%-ով և 2013թ.՝ 8.2%-ով, իսկ հետագա երկու տարիներից 2015թ.-ին նվազել է 1%-ով, կազմելով 99%: Անկման պատճառը հանդիսացել են համաշխարհային տնտեսական ճգնաժամերը, ինչպես նաև տարածաշրջանի, հատկապես Ռուսաստանի տնտեսական զարգացումների բացասական ազդակները:

Աղյուսակ 2

Մակրոտնտեսական ցուցանիշներն ըստ 2007-2015թթ.¹

Անվանումները	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) (մլն դրամ)	3149283.4	3568227.6	3141651.0	3460202.7	3777945.6	4000722.0	4272894.6	4828626.3	5032089.0
որից՝ գյուղատնտեսությունում	573210.4	574848.3	531309.6	588205.0	767880.6	763940.7	826291.8	872631.1	863975.7
Իրական ՀՆԱ (մլն դրամ)	3021394.7	3368084.7	3063323.8	3211242.0	3621128.5	4048644.9	4141221.3	4721560.7	4974223.0
ՀՆԱ աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ %	118.6	113.3	88.0	110.1	109.2	106.0	106.8	113.0	104.2
որից՝ գյուղատնտեսությունում	115.7	100.3	92.4	110.7	130.5	99.5	108.2	105.6	99.0
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (դրամ)	976068	1103348	966811	1060566	1252801	1322946	1413929	1602172	1674795
Համախառն ներքին արդյունքում գյուղատնտ. մասնաբաժինը, %	18.1	16.1	16.9	17.0	20.3	19.1	19.3	18.1	17.2



Գծապատկեր 2. Մակրոտնտեսական ցուցանիշների ժամանակագրական փոփոխություններն ըստ, 2007-2015թթ.

¹ ԱՎԾ պարենային ապահովություն և աղբատություն, 2010-2015թթ.:

Գյուղատնտեսությունը մեծ կարևորություն ունի նաև երկրում գյուղական տարածաշրջանների զարգացմանը, աղքատության հաղթահարմանը և գործազրկության ցածր մակարդակի պահպանմանը նպաստող գործընթացներում: Ուստի այդ նպատակով տարածքային համաչափ զարգացման հիմքում պետք է դնել որոշակի տարածքի ռեսուրսային ներուժը, որը դիտվում են մրցակցային առավելություն, ձևավորելով կլաստեր, որոնց հիմքում պետք է դնել գիտելիքը և նորարարությունը¹:

ՀՆԱ-ի ավելացման նպատակով անհրաժեշտ է բարելավել արտահանման ենթակառուցվածքները և խթանել կոռպերացիան²: Հատկապես ըստ գյուղատնտեսության ենթակառուցվածքների հաշվի առնելով Հայաստանի տրանսպորտային դժվարությունները, կարևորվում է արտահանման խթանման ջանքերի նպատակաուղղումը դեպի բարձրակարգ ու չփչացող ապրանքները³:

Միաժամանակ գյուղատնտեսության հետագա զարգացման կարևորագույն լծակներից մեկը ոլորտի ֆինանսավորումն է, որը կարող է երաշխավորել պետության կողմից նպատակային ծրագրերի իրականացումը, որն էլ իր հերթին կնպաստի համապատասխան ներքին արդյունքի մեծացմանը:

¹ Խաչիկյան Սոս, Տարածական զարգացման առանձնահատկությունները ՀՀ մարզերում: «Տնտեսագետ» ԵՊՏՀ-ի 23-րդ գիտաժողովի նյութեր, 2014թ., էջ 582-587:

² Ծպնեցյան Հ., Կոռպերացիա. Ագրոպարենային քաղաքականության կարևոր բաղադրիչ: 15.03.2013թ. /<http://asrc.am>:

³ Եղիազարյան Ա., Հայաստանի տնտեսության կառուցվածքային վերլուծությունը, «21-րդ դար» ամսագիր, թիվ 3(55) 2014թ., էջ 45, 54-55:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՒՍԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՇՈՒԷԱՆԻԿ ՄԻՐԶԱԽԱՆԻ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ԼԻԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԱԶԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Գյուղատնտեսությունը ապահովում է երկրի տնտեսության համախառն ներքին արդյունքի մինչև 20%-ը: Վերջին տարիներին զգալի աշխատանք է տարվել արտադրության ինտենսիվացման, արդիական տեխնոլոգիաների և կառավարման կատարելագործման ուղղությամբ: Գյուղատնտեսության զարգացման և արտադրության ինտենսիվացման հիմնական շարժիչ ուժը պարենային ինքնապահովման մակարդակի ավելացումն է: Մակրոտնտեսական ցուցանիշների կայուն աճ ապահովելու համար, անհրաժեշտ է զարգացնել ներքին շուկան, բարելավել ֆինանսավորման գործընթացը մատչելի վարկավորման և ներդրումային միջոցների ապահովմամբ:

Բանալի բառեր. գյուղատնտեսություն, ռազմավարություն, ՀՆԱ, արդյունավետություն, ինտենսիվացում, մրցունակություն, արտադրանքի աճ

ОТРАСЛЬ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА РА В ДЕЛЕ ОБЕСПЕЧЕНИЯ ВАЛОВОГО ВНУТРЕННЕГО ПРОДУКТА И АНАЛИЗ ИХ ВЗАИМОСВЯЗИ

ШУШАНИК МИРЗАХАНОВНА КОСТАНИЯ

научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

ЛИАНА САМВЕЛОВНА АЗАТЯН

научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Сельское хозяйство обеспечивает до 20% валового внутреннего продукта экономики страны. За последние годы сделано очень многое в направлении интенсификации производства, развития современной технологии и совершенствования управления. Основной движущей силой развития сельского хозяйства и интенсификации производства является повышение уровня продовольственной самообеспеченности. Для стабильного роста макроэкономических показателей необходимо развивать внутренний рынок, улучшить процесс финансирования путём предоставления доступных кредитных и инвестиционных ресурсов.

Ключевые слова: сельское хозяйство, стратегия, ВВП, эффективность, интенсификация, конкуренция, рост производства.

THE ROLE OF AGRICULTURE IN ENSURING THE GDP GROWTH IN THE REPUBLIC OF ARMENIA AND THE ANALYSIS OF THEIR INTERPLAY

SHUSHANIK MIRZAKHAN KOSTANYAN

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

LIANNA SAMVEL AZATYAN

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

Agriculture ensures up to 20% of the GDP of the country. In the last years, significant efforts were put forth for intensification of production, modern technology and management improvement. The main driving force for the development of agriculture and intensification of production is an increase in the level of food self-sufficiency. For the stable growth of macroeconomic indicators, it is required to develop the domestic market, improve the financing process by providing accessible credit and investment resources

Keywords: Agriculture, strategy, GDP, effectiveness, intensification, competition, production growth

ԳՐԻԳՈՐ ՄԱՐՏԻՆԻ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գերակշռող մասնավոր հատված ունեցող տնտեսության ստեղծման համար գոյություն ունի երկու ուղի. պետական գույքի ապապետականացում և նոր մասնավոր ընկերությունների ստեղծում: Երկու ուղիներն էլ հավասարապես կարևոր են: Նոր ստեղծվող մասնավոր առևտրային կազմակերպությունները կարող են կարճ ժամանակահատվածում շահույթ ստանալ և լուրջ ներդրում կատարել երկրի տնտեսական աճի գործում: Սակայն գերակշռող պետական հատված ունեցող երկրներում, որոնց թվին էր դասվում Հայաստանը նախկին ԽՍՀՄ կազմում, մասնավոր հատվածի զարգացումը առանց պետական գույքի ապապետականացման (մասնավորեցման ծրագրերի իրականացման) անհնար էր պատկերացնել:

Անցած դարի 90-ականներից պետական գույքի մասնավորեցումը դարձավ նախկին խորհրդային երկրներում բարեփոխումների հիմնական ուղղությունը: Այդ երկրներում մասնավորեցման փորձը տվել է իր առաջին արդյունքները, որոնց հիմնական մասը գնահատվում է խիստ դրական: Մասնավորեցման մի շարք գործարքների նկատմամբ, սակայն, հնչում են քննադատություններ, որոնց հիմնական իմաստը հանգում է նախկին պետական սեփականության (հարստության) կենտրոնացմանը փոքրաթիվ անձանց ձեռքերում:

Քննարկելով պետական գույքի մասնավորեցման գործընթացին առնչվող հիմնահարցերը հանրապետությունում՝ անհրաժեշտ է նշել, որ տնտեսական հարաբերությունների բնույթը վերափոխելու համար Հայաստանի Հանրապետությունը նպատակ է դրել, արտադրության միջոցների նկատմամբ սեփականության հարաբերությունները փոխակերպելով, հասնել սեփականության բազմաձևության և այդ հիմքի վրա անցում կատարել սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսության: Նման մոտեցումը թելադրված է ինչպես ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս գալու, այնպես էլ արդյունավետ սոցիալական և տնտեսական համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ, հանրապետության տնտեսությունը համաշխարհային տնտեսության բաղկացուցիչ մասը դարձնելու և «բաց» տնտեսություն ստեղծելու պահանջներով:

Հայաստանի Հանրապետությունը նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինն էր, որ անկախության հռչակագրից հետո ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում մասնավորեցման հիմունքները» որոշումը (ՀՀ Գերագույն խորհրդի 1991թ. փետրվարի 26-ին): Այդ որոշման մեջ նշվեց, որ ՀՀ-ում շուկայական հարաբերություններին անցումը պետք է իրականացվի պետական սեփականության մասնավորեցման միջոցով:

Հողի և գյուղատնտեսական տեխնիկայի սեփականաշնորհմամբ սկսվեց հանրապետության տնտեսական բարեփոխումների գործընթացը, որը համարվում է ՀՀ-ում մասնավորեցման առաջին ուղղությունը: Հայաստանը դարձավ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինը, որտեղ իրականացվեց այդ գործընթացը: 1993-1994 թվականների ընթացքում մասնավորեցվեց գյուղատնտեսական նշանակության հողերի մոտ 90%-ը: Մասնավորեցման արդյունքում մոտ 2 անգամ ավելացավ գյուղատնտեսությունում զբաղվածների քանակը, ինչը, հատկապես արդյունաբերական ձեռնարկությունների չաշխատելու պատճառով, դարձավ բարիքների արտադրության և բնակչության եկամուտների ապահովման հիմնական ոլորտը:

Մասնավորեցման երկրորդ ոլորտը առևտրի, սպասարկման և վճարովի ծառայությունների օբյեկտների մասնավորեցումն էր: Այդ բնագավառում բարենպաստ հող էր ստեղծվել մասնավորեցման համար, ինչը կապված էր ձեռնարկությունների փոքր չափերի, թեև իրավաբանորեն

չձևակերպված, սակայն փաստացի սեփականատերերի (տվյալ օբյեկտներում աշխատողների) առկայությամբ:

Դեռևս 1991թ. մարտին ընդունվեց առևտրի, հասարակական սննդի, վճարովի ծառայությունների և անավարտ շինարարության փոքր օբյեկտների մասնավորեցման մասին ՀՀ կառավարության որոշումը և 1991-1992թթ. մասնավորեցվեց վերոգրյալ ոլորտների 335 օբյեկտ, սակայն այն վճռական դեր չխաղաց ոչ պետական ոլորտի անհրաժեշտ կրիտիկական զանգվածի ստեղծման, գների նվազեցման և շուկայի աշխուժացման գործում:

1995-1997թթ. առավել արագ է ընթացել «փոքր» օբյեկտների (հիմնականում առևտրի և սպասարկման ոլորտի) մասնավորեցումը: Բավական է նշել, որ 01.11.1997թ. դրությամբ մասնավորեցվել է 5708 «փոքր» օբյեկտ:

Մասնավորեցման գործընթացի երրորդ ոլորտը պետական և հանրային բնակարանային ֆոնդի մասնավորեցումն էր (1997թ. հուլիսի 1-ի դրությամբ ավարտվեց այդ գործընթացը, որի արդյունքում մասնավորեցվեց այդ ֆոնդի 80 տոկոսը): Մա ոչ միայն կարևոր և խոշոր սոցիալական նշանակություն ունեցող միջոցառում էր, այլև մեծապես նպաստեց անշարժ գույքի շուկայի ձևավորմանը:

Մասնավորեցման հաջորդ կարևոր ոլորտը տնտեսության տարբեր ճյուղերի ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումն է: Մա թերևս մասնավորեցման ամենաբարդ և պատասխանատու փուլն է, որը իրականացման ձևերով և մեթոդներով զգալիորեն տարբերվում է ԱՊՀ-ի և Արևելյան Եվրոպայի երկրների համապատասխան գործընթացներին:

Տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում իրականացված պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերի արդյունքում (աղյուսակ 1) ձևավորվեց գերազանցապես սեփականության մասնավոր իրավունքի վրա հիմնված տնտեսություն, որտեղ ՀՆԱ-ի ավելի քան 80%-ը ստեղծվում է մասնավոր հատվածում: Պետական գույքի մասնավորեցումից ստացված մուտքերը 01.04.2017թ.-ի դրությամբ կազմել են ընդամենը 165,5 մլրդ ՀՀ դրամ և 108,5 մլն ԱՄՆ դոլար: Ըստ որում, 01.04.2017թ.-ի դրությամբ մասնավորեցվել (սեփականաշնորհվել) է 7309 «փոքր» օբյեկտ, 2043 միջին և խոշոր ձեռնարկություն և 101 անավարտ շինարարության օբյեկտ¹:

Ինչպես հողի և գյուղատնտեսական տեխնիկայի, այնպես էլ պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) հետևանքով տնտեսության բոլոր ոլորտներում գրեթե համատարած պետական սեփականության փոխարեն ձևավորվեց մասնավոր և մասնավոր-պետական (խառը) սեփականության վրա հիմնված առևտրային կազմակերպությունների ցանց և տնտեսություն²:

Հայաստանի Հանրապետությունում պետական գույքի մասնավորեցման միջոցով իրականացվող կառուցվածքային վերափոխումները կարող ենք բաժանել երեք փուլի:

Առաջին փուլը (կարճաժամկետ փուլ՝ 1991-1997թթ.) իրենից ներկայացնում է խիստ քաղաքականացված արտատնտեսական միջոցառում՝ տեխնիկական մասնավորեցում, որի հաջողությունը ամբողջովին կախված է սոցիալական խմբերի փոխզիջումների պայմաններից:

Երկրորդ փուլը (միջնաժամկետ փուլ՝ 1998-2001թթ.) հիմնականում բնութագրվում է սեփականաշնորհման սերտիֆիկատները շրջանառությունից հանելով և դրամական մասնավորեցմամբ: Տվյալ փուլի ավարտման չափանիշ է նոր սեփականատիրական իրավունքների համակարգի որոշակի կայունացումը, գույքային հարաբերությունների, ինչպես նաև տնտեսական մեխանիզմների և ինստիտուցիոնալ կառուցվածքների նոր համակարգի որակական և քանակական կայունացումը՝ որպես սեփականատիրական նոր իրավահարաբերությունների հետագա տնտեսական իրականացման համար նախապայման:

¹ ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչության տվյալներով:

² Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ա.Խ.Մարկոսյան, Ա.Գ.Սահակյան «Պետական գույքի կառավարում», ուսումնական ձեռնարկ, երկու մասով, Եր., «Տիգրան Մեծ», 2015թ.:

Հայաստանի Հանրապետությունում միջին և խոշոր ձեռնարկությունների մասնավորեցման արդյունքները 01.04.2017թ. դրությամբ

N	Ձեռնարկությունների (ընկերությունների) մասնավորեցման ձևը	Մասնավորեցվել է		Այդ թվում՝ ըստ պետական կառավարման մարմինների																	
		Ընդամենը	Այդ թվում՝ 2016 թ.-ին	Էկոնոմիկա		Գյուղատնտեսության		Քաղաքաշինության		Մշակույթի		Էներգետիկայի և բնական պաշարների		Տրանսպորտի և կապի		Պետական գույքի կառավարման վարչության		Առողջապահության		Մյուս պետական մարմինները	
				Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին	Ընդամենը	2016թ.-ին
1	Ուղղակի վաճառք	652	3	168	-	74	-	44	-	30	-	9	-	31	-	225	3	20	-	51	-
	Այդ թվում՝ վարձակալին	209	-	84	-	29	-	29	-	12	-	6	-	9	-	11	-	7	-	22	-
2	Մրցույթ	177	-	24	-	27	-	20	-	7	-	10	-	10	-	68	-	1	-	10	-
3	Աճուրդ	66	-	9	-	13	-	-	-	1	-	-	-	1	-	40	-	-	-	2	-
4	Լոտային աճուրդ	62	-	26	-	27	-	6	-	2	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
5	Պետական բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն	1085	-	394	-	337	-	186	-	59	-	15	-	46	-	27	-	1	-	20	-
6	Պետական բաժնետոմսերի վաճառք մասնագիտացված շուկաներում	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		2043	3	621	0	478	0	256	0	99	0	34	0	90	0	360	3	22	0	83	0

Աղբյուրը՝ ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

Երրորդ փուլը (երկարաժամկետ փուլ՝ 2001թ.-ից հետո) պետք է բնութագրվի սեփականատիրական իրավահարաբերությունների կայուն համակարգի առաջացմամբ¹:

Մասնավորեցման նպատակը ապագա շուկայական համակարգի նորմալ գործունեության համար անհրաժեշտ կայուն սեփականատիրական պայմանների ապահովումն է: Վերջին տարիներին պետական գույքի մասնավորեցմանը զուգահեռ զգալիորեն ավելացել են պետական գույքի օտարման գործարքները: Այս գործընթացն իրականացվում է այն պետական գույքի նկատմամբ, որը ընդգրկված չէ մասնավորեցման ծրագրերում, սակայն այդ գույքը պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գույք չի համարվում, իսկ առևտրային շրջանառության մեջ պահանջարկ ունի և կարող է օգտագործվել շատ ավելի արդյունավետ կերպով, քան պետական սեփականության ներքո: Օտարման ճանապարհով ձեռք բերված գույքի սեփականատերերը, բացի գույքի արժեքը վճարելուց, հաճախ ստանձնում են նաև ներդրումային պարտավորություններ՝ հետագա տարիների ընթացքում տվյալ գույքը վերանորոգելու, արդիականացնելու և ըստ իրենց հայեցողությամբ օգտագործելու համար:

Պետական գույքի և գույքային իրավունքների մասնավորեցման, օտարման, պետական գույքի օգտագործման տարբեր ձևերով մասնավոր հատվածին տրվող ակտիվները մեծացնում են մասնավոր հատվածի տնտեսական ներուժը:

2015-2016 թվականներին ընդունված ՀՀ կառավարության որոշումների համաձայն պետական գույքի օտարման նպատակով կազմակերպվել է 10 անվանում անշարժ գույքի մրցույթ, կազմակերպված 10 մրցույթներից 5-ը կայացել են, 5-ը չեն կայացել, 5 անվանում գույքի օտարման նպատակով կազմակերպվել են նոր մրցույթներ: ՀՀ կառավարության կողմից ընդունված 8 որոշման համաձայն գնորդների կողմից ստանձնված պարտավորությունների գումարը կազմում է 2 293 400 եվրո և 13 473.0 հազ. դրամ:

Պետական գույքի մասնավորեցումից, օտարումից, վարձակալությունից և օգտագործման տրամադրումից ստացված ընդհանուր դրամական մուտքերը 2012-2016 թվականներին ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Պետական գույքի մասնավորեցումից, օտարումից, վարձակալությունից և օգտագործման տրամադրումից ստացված դրամական մուտքերը 2012-2016 թվականներին, մլն ՀՀ դրամ

	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	Ընդամենը 2012թ.-2016թթ.
1. Մասնավորեցում	353.3	455.9	178.4	51.9	61.4	1100.9
2. Օտարում	807.4	1493	1665.6	2436.3	6868.6	13270.9
3. Վարձակալություն	241.3	303.4	277.5	265.7	227.8	1315.7
4. Կապի սարքավորումների տեղակայում	-	-	4.4	61.8	89.5	155.7
5. Հողերի կադաստրային արժեքի վճարում	-	-	57.5	59.4	38.6	155.5
Ընդամենը՝ 5 ուղղություններով	3414.0	4265.3	4197.4	4890.1	9301.9	15998.7

Աղբյուրը կազմվել է հեղինակի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 2012-2016 թվականների գործունեության տարեկան հաշվետվությունների տվյալներով:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ պետական գույքի մասնավորեցումից և օտարումից ստացված միջոցները բաշխվում են ՀՀ պետական բյուջեի և այն համայնքային բյուջեների միջև, որտեղ տեղաբաշխված է մասնավորեցված կամ օտարված անշարժ գույքը՝ օրենքով սահմանված համամասնություններով², իսկ բջջային կապի օպերատորների կողմից պետական շենքերի,

¹ Մ.Դավոյան, Պետական սեփականության կառավարում, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2003թ., էջ 88:

² Տե՛ս «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ը (համապատասխան փոփոխություններով և լրացումներով), «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

շինությունների տանիքներին կապի սարքավորումներ տեղադրելուց ստացված միջոցները բաշխվում են ՀՀ պետական բյուջեի, համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպությունների կամ կառավարչական հիմնարկների (որոնց տանիքներին տեղադրվում է կապի սարքավորումը) և «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի միջև¹:

2016 թվականի ընթացքում պետական գույքի կառավարման, այդ թվում՝ պետական գույքի մասնավորեցման և օտարման, նվիրատվության և նվիրաբերման, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության կարգավորման, շահութաբերության բարձրացման բնագավառներում իրականացվող քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով Վարչությունում աշխատանքներն իրականացվել և իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- պետություն-մասնավոր հատված գործընկերության ամրապնդումը,
- մասնավորեցման, օտարման և նվիրաբերության ենթակա պետական գույքի կազմի, նվիրաբերության սուբյեկտների, ինչպես նաև քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների հետ կնքվող գործարքների պայմանների հստակեցումը,
- 50-ից ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության բարելավումը, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման, կոնցեսիոն պայմանագրով կառավարման հանձնելու, կազմակերպությունների վերակազմակերպման կամ լուծարման մասին համապատասխան առաջարկությունների ներկայացումը,
- անշարժ գույքի օպտիմալացման մեխանիզմների ներդրումը:

Սոցիալական ոլորտում ներդրումներ ներգրավելու, սոցիալական խնդիրներ լուծելու, բարեգործական ծրագրեր իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-Ն որոշմամբ կանոնակարգվել է պետական գույքի նվիրաբերության գործընթացը: Մասնավորապես՝ սահմանվել է պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը, որի շնորհիվ հանրօգուտ ծրագրերի իրականացման ճանապարհով կխթանվի սոցիալական ոլորտում ներդրումների իրականացումը:

Սահմանվել են նաև՝ նվիրաբերության ենթակա պետական գույքին ներկայացվող պահանջները, նվիրաբերության սուբյեկտները և պետական գույքը նվիրաբերության սուբյեկտներին նվիրաբերելու պայմանները: Որոշմամբ նախատեսվում է, որ պետական գույքը նվիրաբերության սուբյեկտներին կարող է նվիրաբերվել, եթե վերջիններիս առաջարկվող հանրօգուտ ծրագրերը վերաբերում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելուն, դաստիարակչական հիմնարկների, սոցիալական պաշտպանության ու նույնանման այլ հաստատությունների, բարեգործական, գիտական և ուսումնական հաստատությունների գործունեության ոլորտներին և բավարարում են այդպիսի ծրագրերին ներկայացվող պահանջներին:

Որպես սոցիալական ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններին պետական աջակցության և գործունեության բարելավման նպաստավոր պայմաններ ստեղծելու գործիք, 2013 թվականի հուլիսի 10-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույք նվիրաբերելու կարգը հաստատելու մասին» N 805-Ն որոշումը: Որոշման ընդունման նպատակն է՝ աջակցել հանրակրթության ոլորտում նպատակային գործունեություն ծավալող կազմակերպություններին իրենց շենքային և ուսումնամեթոդական բազան բարելավելու, ուստի և մատուցվող կրթական ծառայությունների որակը բարձրացնելու գործում²:

¹ Տե՛ս ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու վերաբերյալ համաձայնություն տալու և պայմանագրերի կնքման կարգը հաստատելու մասին» N 1130-Ն որոշման 18-րդ կետը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

² Տե՛ս ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 10-ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող անշարժ

Վարչության կողմից շարունակվել է պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու վերաբերյալ համաձայնություն տալու և պայմանագրերի կնքման գործընթացը, որը սահմանում է պետական սեփականություն հանդիսացող գույքի (շենքերի և շինությունների) օգտագործման առանձնահատկությունները տնտեսավարող սուբյեկտների կողմից: Այս գործընթացի շահառուներ են հանդիսանում այն պետական կազմակերպությունները (ՊՈԱԿ-ները, պետական կառավարչական հիմնարկները), որոնք զբաղեցնում են տվյալ շենքերը:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1130-Ն որոշման նպատակներն են՝

- կանոնակարգել տնտեսավարող սուբյեկտների՝ բջջային կապի օպերատորների կողմից կապի սարքավորումների տեղակայումը պետական սեփականություն հանդիսացող շենքերի տանիքներին՝ սահմանելով պարզ և թափանցիկ ընթացակարգ «մեկ պատուհանի» սկզբունքով, որպես մեկ պատուհանի պատասխանատու ճանաչելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը,
- տեսանելի դարձնել կապի սարքավորումների տեղակայման մասով պետական շենքերի և շինությունների օգտագործումից ստացվող եկամուտները և սահմանել այդ եկամուտների բաշխման համամասնությունները,
- թույլ տալ պետական ոչ առևտրային կազմակերպություններին ստանալ հավելյալ եկամուտներ պետական սեփականություն հանդիսացող շենքերի օգտագործման արդյունքում:

Կատարված աշխատանքների շնորհիվ 2016 թվականին 2015 թվականի համեմատությամբ էականորեն ավելացել են պետական գույքի օտարումից, մասնավորեցումից, վարձակալությունից և օգտագործման տրամադրումից ինչպես ՀՀ պետական բյուջե, այնպես էլ համայնքային բյուջեներ ուղղվող միջոցները և այլ կազմակերպությունների դրամական մուտքերը (աղյուսակ 3):

Հայաստանի Հանրապետությունում պետության և մասնավոր հատվածի համագործակցության օրինակների շարքում հարկ ենք համարում նշել մի շարք գործարքների մասին, մասնավորապես՝ Հայկական երկաթուղին կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու, «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու, ինչպես նաև ՀՀ-ում ջրային համակարգերը վարձակալության հանձնելու մասին որոշումները:

Հայկական երկաթուղու համակարգը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու մրցույթում «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերությունը հաղթող է ճանաչվել և Հայկական երկաթուղու համակարգը կոնցեսիոն պայմանագրով փոխանցվել է «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը¹:

Նշված որոշմամբ հավանություն է տրվել Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագրին, որով Հայաստանի Հանրապետությունը ճանաչվել է կոնցեսիոն, «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերությունը՝ երաշխավոր:

գույք նվիրաբերելու կարգը հաստատելու մասին» N 805-Ն որոշումը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

¹ Տե՛ս ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագրի նախագծին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին լիազորություն վերապահելու մասին» N 83-Ս որոշումը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

Պետական գույքի մասնավորեցումից, օտարումից, վարձակալությունից և օգտագործման տրամադրումից ստացված դրամական մուտքերը 2015-2016 թվականներին

Գործունեության բնագավառը	2016թ.	2015թ.	Աճը, %-ով
1	2	3	4
1. Պետական գույքի օտարումից մուտքեր, հազ.դրամ, այդ թվում՝			
- պետական բյուջե	6 868 616,1	2 436 348,1	281,9
- համայնքային բյուջե	4 142 474,6	2 397 005,3	172,8
- համայնքային բյուջե	2 710 115,1	28 342,3	9 562,1
- Վարչության արտաբյուջե	16 026,4	11 000,5	145,7
2. Պետական գույքի մասնավորեցումից մուտքեր, հազ.դրամ, այդ թվում՝			
- պետական բյուջե	62 954,3	51 977,7	121,1
- համայնքային բյուջե	61 433,0	51 178,2	120,0
- համայնքային բյուջե	1 521,3	799,5	150,3
3. Տարածքների վարձակալությունից մուտքեր, հազ.դրամ.	227 790,4 ¹	265 773,6 ²	
4. Կապի սարքավորումների տեղակայումից և սպասարկումից մուտքեր, հազ.դրամ, այդ թվում՝			
- պետական բյուջե	89 494,1	61 871,4	144,6
- ՊՈԱԿ-ների բյուջեներ	18 575,2	13 689,6	135,7
- այլ կառավարչական հիմնարկներ	67 545,1	47 440,5	142,4
	3 373,8	741,2	455,2

¹ Պետական գույքի վարձակալությունից 2016թ.-ի ընթացքում ՀՀ պետական բյուջե փաստացի մուտքագրվել է 227 790,4 հազ. ՀՀ դրամ՝ նախատեսված 192 400,0 հազ. ՀՀ դրամի փոխարեն (նախատեսվածից 18,4%-ով ավելի):

² Պետական գույքի վարձակալությունից 2015թ.-ի ընթացքում ՀՀ պետական բյուջե փաստացի մուտքագրվել է 265 773,6 հազ. ՀՀ դրամ՝ նախատեսված 205 000,0 հազ. ՀՀ դրամի փոխարեն (նախատեսվածից 29,6%-ով ավելի):

Աղբյուրը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

Փոստային ծառայությունների պարագայում, հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, որոնցից են՝

- Հայաստանի Հանրապետության փոստային տարածքի առավել զարգացման և առաջընթացի համար անհրաժեշտ է «Հայփոստ» ՓԲԸ-ի, ինչպես փոստային կապի ազգային օպերատորի կառավարման երկարաժամկետ և կենսունակ ձևի ընտրություն,
- հավատարմագրային կառավարիչը նախորդ 10 տարիների ընթացքում իրականացրել է «Հայփոստ» ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարումը, և այդ ընթացքում կողմերի միջև ձևավորվել է համագործակցության ավանդույթ,
- հավատարմագրային կառավարիչը պատրաստակամ է մինչև «Հայփոստ» ՓԲԸ-ի կառավարման մոդելի ընտրությունը կնքելու «Հայփոստ» ՓԲԸ-ի բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագիր:

ՀՀ կառավարությունը 2016 թվականի նոյեմբերի 24-ին ընդունել է «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» N 1240-Ս որոշումը, որով «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնվել են «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության հավատարմագրային կառավարմանը: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության (կառավարման հիմնադիր) և «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության (հավատարմագրային կառավարիչ) միջև կնքվել է «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման մասին պայմանագիրը:

Տվյալ պայմանագրով նախատեսված է, որ հավատարմագրային կառավարիչն իրավունք ունի՝

- կառավարման հիմնադրից ընդունելու և պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան իրականացնելու ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարումը: Ցանկացած դեպքում, պայմանագիրը հավատարմագրային կառավարիչին չի տրամադրում բաժնետոմսերի օտարման, գրավադրման, պահման հանձնելու, վարձակալության հանձնելու կամ այլ ձևով երրորդ անձանց փոխանցելու լիազորություն,
- գույքի հավատարմագրային կառավարում իրականացնելիս, կնքված պայմանագրին համապատասխան և ի շահ ընկերության, կատարելու ցանկացած իրավաբանական և (կամ) այլ գործողություններ,
- գույքի նկատմամբ իր իրավունքների պաշտպանության համար՝ պահանջելու վերացնել հիշյալ իրավունքների ամբողջ ծավալով իրականացմանը խոչընդոտող ամեն տեսակի խախտումները կամ սահմանափակումները,
- հավատարմագրային կառավարման աշխատանքների համար՝ ստանալու վարձատրություն՝ ամսական 1,650,000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: Վճարումն իրականացվում է ընկերության միջոցների հաշվին՝ հավատարմագրային կառավարիչի բանկային հաշվին համապատասխան գումարի փոխանցմամբ, պայմանագրում նշված վավերապայմաններով:

Հավատարմագրային կառավարման պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը¹, որից հետո պետք է որոշում ընդունվի ընկերության հետագա կարգավիճակի մասին: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «Հայփոստ» ընկերությունը ընդգրկված է պետական գույքի մասնավորեցման ծրագրում, ներկայումս գործող՝ պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրում՝ համապատասխան լրացումը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2015 թվականի հունիսի 23-ին²:

ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N 271-Ն որոշմամբ հավանություն է տրվել «Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացի շրջանակում անցկացված նախաորակավորման ընթացակարգի արդյունքներին, և հաստատվել է նախաորակավորված մասնակիցների ցանկը:

Որոշման մյուս հավելվածով հաստատվել է նշված ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գնման ընթացակարգի մասնակցության «Հայտերի ներկայացման հրավերին», որը բաղկացած է «Հրահանգ մասնակիցներին» և գույքի «Վարձակալության պայմանագիր» մասերից:

Սահմանվել է նաև, որ գնման ընթացակարգի շրջանակում գույքի ապագա վարձակալի ընտրությունը կազմակերպվելու է հավանության արժանացած հրավերի «Հրահանգ մասնակիցներին» մասում սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն, որը ներկայումս ներառված է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կազմում, ճանաչվել է համակարգող մարմին, որը նախաորակավորման ընթացակարգի արդյունքում նախաորակավորված մասնակիցներին

¹ Տե՛ս «ՀՀ կառավարությունը 2016 թվականի նոյեմբերի 24-ի «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» N 1240-Ս որոշումը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

² Տե՛ս «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-84-Ն օրենքը, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից է 2015 թվականի հունիսի 23-ին, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

տրամադրում է անհրաժեշտ փաստաթղթերը և իրականացնում է գնման ընթացակարգը՝ ղեկավարվելով սահմանված կարգով¹:

«Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքների գույքը 15 տարի ժամկետով վարձակալության է հանձնվել մեկ միասնական վարձակալի: Վարձակալության պայմանագիր է կնքվել (այն գործում է 01.01.2017թ.-ից) միջազգային մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Վեոլիա» ընկերության հետ («Վեոլիան» ֆրանսիական ընկերություն է, որը հիմնադրել է «Երևան ջուրը»):

Այսպիսով, պետություն-մասնավոր հատված համագործակցության ձևերի կիրառումը Հայաստանի Հանրապետությունում ունի սահմանափակ բնույթ, ինչը բացատրվում է այդ հատվածների միջև նոր զարգացող հարաբերությունների կայացմամբ: Եվ, եթե 1990-2000 թվականները հիմնականում բնութագրվում էին զանգվածային մասնավորեցման և օտարման գործարքներով, ինչի արդյունքում ստեղծվեց ՀՆԱ-ի ավելի քան 80%-ն արտադրող տնտեսության հատվածը: Ձևավորվելով և կայանալով որպես առանձին, ինքնուրույն հատված, մասնավոր սեփականության իրավունքի վրա կառուցված հատվածը դարձել է ՀՀ տնտեսության գերակշռող ու տանող ուժը, որը ենթադրում է պետական մարմինների և պետական մասնակցությամբ կազմակերպությունների հետ համագործակցության նոր ձևերի բացահայտում, ինչպես նաև գոյություն ունեցող ձևերի կատարելագործում ու դրանց արդյունավետության բարձրացում:

¹ Տե՛ս, ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի «Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը վարձակալության հանձնելու գործընթացի շրջանակում անցկացված նախատրակավորման ընթացակարգի արդյունքներին և գնման ընթացակարգի մասնակցության հայտերի ներկայացման հրավերին հավանություն տալու, նախատրակավորված մասնակիցների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 883-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 271-Ն որոշումը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ www.arlis.am:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ՄԱՐՏԻՆԻ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Համառոտագիր

Հայաստանի երրորդ Հանրապետության անցած տարիների տնտեսական բարեփոխումների հիմնական արդյունքներից է մասնավոր հատվածի կայացումը, որը ներկայումս ապահովում է թողարկվող ՀՆԱ-ի ավելի քան 80%-ը: Ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածների կայուն զարգացման գրավականը դրանց միջև արդյունավետ և շարունակական համագործակցության ձևերի կիրառումն է:

Հեղինակը քննարկել և բնութագրել է այդ ձևերը (հավատարմագրային կառավարում, կոնցեսիա, վարձակալություն և այլն), գալով այն եզրակացության, որ դրանք պետք է բազմազանեցնել և դարձնել ավելի արդյունավետ:

Բանալի բառեր. պետություն-մասնավոր հատված, հավատարմագրային կառավարում, կոնցեսիա, վարձակալություն, մասնավորեցում, օտարում, պետական գույքի օգտագործում

ФОРМЫ СОТРУДНИЧЕСТВА ГОСУДАРСТВЕННОГО И ЧАСТНОГО СЕКТОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ГРИГОР МАРТИНОВИЧ КУРГИНЯН

соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Одним из основных результатов экономических реформ третьей Республики Армения за прошедшие годы является становление частного сектора, который в настоящее время обеспечивает более 80% ВВП. Залогом стабильного развития как государственного, так и частного сектора служит применение эффективных и постоянных форм сотрудничества между ними. Автор рассмотрел и охарактеризовал эти формы (доверительное управление, концессия, аренда и т. д.), придя к выводу о том, что их нужно разнообразить и сделать более плодотворным.

Ключевые слова: государственный и частный сектор, доверительное управление, концессия, аренда, приватизация, отчуждение, использование государственного имущества.

TYPES OF PUBLIC-PRIVATE-PARTNERSHIP IN THE REPUBLIC OF ARMENIA

GRIGOR MARTIN KURGHINYAN

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

One of the main results of the economic reforms carried out of the third Republic of Armenia for the period of the last several years is the emergence of the private sector, which currently contributes to more than 80% of the GDP of the nation. The key to sustainable development of the both public and private sectors is the use of effective and permanent forms of cooperation between them. The author discussed and described these forms (trust and/or asset management, concession, renting, and etc.) and concluded that they need to be diversified and become more effective.

Keywords: State and private sector, trust and/or asset management, concession, renting, privatization, alienation, use of state property

ՌԱԶՄԻԿ ԶԱՅԿԻ ԶԱԿՈՒՅԱԼ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասպիրանտ

ՊԵՏԱԿԱՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՉ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՎ ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդյունաբերությունը հանրապետությունում միշտ էլ կարևոր դեր է խաղացել, սակայն դրա զարգացումը գյուղատնտեսության գործունեության համահունչ արդիական է դարձել վերջին տարիներին: Ուստի արդյունաբերությունը Հայաստանում պետք է դառնա ողջ երկրի դինամիկ զարգացումն ապահովող տնտեսական ոլորտներից ամենակարևորը, որի գործունեությունը կախված կլինի այն տնտեսական քաղաքականությունից, որը կորդեգրի Հայաստանի կառավարության կողմից ընդունված ռազմավարական ծրագիրը (2017թ. համար): Վերջինիս հասնելու համար դրա հիմքերից մեկը պետք է դառնա գործընկերությունը պետության և մասնավոր սեկտորի միջև, երբ անհրաժեշտ է ակտիվ երկխոսություն պետության և բիզնեսի միջև:

Արդյունաբերական քաղաքականության մշակման (պլանավորման) և իրականացման (կառավարման) փուլերում որպես տարբեր գործում են պետական-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) և կարգավորիչ ազդեցության գնահատման (ԿԱԳ) մեխանիզմները: ՊՄԳ-ն կարող է որակվել որպես ցանկացած ձևի համագործակցություն պետական պատվիրատուի և մասնավոր հատվածի տնտեսվարող սուբյեկտների միջև, հաճախ ապահովելու համար ենթակառուցվածքների (աշխատանքների) և/կամ ծառայությունների մատուցման ֆինանսավորումը, կառուցումը, վերականգնումը, ղեկավարումը և պահպանումը: ՊՄԳ-ների գլխավոր հատկանիշը, որպես կանոն, ռիսկի կիսումն է կամ դրա փոխանցումը մասնավոր հատվածի գործընկերոջը, և ՊՄԳ-ները հաճախ, բայց ոչ միշտ, ունեն երկար տևողություն:

Չկա ՊՄԳ-ի մեկ կամ պարզ սահմանում, քանի որ այս հասկացությունն ընդգրկում է պայմանագրերի մի շարք տարբեր տեսակներ և այլ առաքման մոդելներ: ՊՄԳ-ն կարող է որակվել որպես ցանկացած ձևի համագործակցություն պետական պատվիրատուի և մասնավոր հատվածի տնտեսվարող սուբյեկտների միջև, հաճախ ապահովելու համար ենթակառուցվածքների (աշխատանքների) և/կամ ծառայությունների մատուցման ֆինանսավորումը, կառուցումը, վերականգնումը, ղեկավարումը և պահպանումը:

Տվյալ հարցում նորմատիվորեն սահմանված պետական դիրքորոշման բացակայության պատճառով հետազոտողները յուրովի են սահմանում ՊՄԳ սկզբունքները: ՊՄԳ սկզբունքների տարատեսակությունները շարադրված են «Պետական-մասնավոր գործընկերություն: Տեսություն և պրակտիկա» մենագրությունում¹: «Պետական-մասնավոր գործընկերություն մենագրությունում»² առաջարկվում է ելնել նրանից, որ հանրային իշխանության ցանկացած մարմնի գործունեության համար հիմք են հանդիսանում կազմակերպական և գործունեության սահմանադրական սկզբունքները, ինչի հետ կապված պետական-մասնավոր գործընկերության սկզբունքները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

- պետական քաղաքականությունն իրականացնելիս պետական-մասնավոր գործընկերության մասնակիցների շահերի ընդհանրությունը,
- պետական-մասնավոր գործընկերությանը մասնակցության կամավորությունը,
- ոչ պետական կառավարման սուբյեկտների շարքից գործընկերոջ ընտրության «թափանցիկությունը»,
- կողմնորոշումը չափելի արդյունքի (քանակական կամ որակական) ստացման ուղղությամբ,

¹ Государственно-частное партнерство. Теория и практика. / Коллектив авторов. М.: Издательский дом ГУ ВШЭ, 2010.

² Игнатюк Н.А. Государственно-частное партнерство. .: ЮстицИнформ, 2012.

- կոնկրետ տարածքներում պետական-մասնավոր գործընկերության պայմաններում նախագծերի կամ ծրագրերի իրականացման անհրաժեշտության վերաբերյալ հասարակական կարծիքը հաշվի առնելը և այլն:
ՊՄԳ սկզբունքների նշված թվարկման մեջ կարող են ընդգրկվել նաև հետևյալները.
- կողմերի միջև առկա հարաբերությունների գործընկերային բնույթը, որը հաշվի է առնում երկու կողմերի շահերը,
- հանրային և մասնավոր կողմերի միջև իրավաբանորեն ձևակերպված համաձայնության առկայությունը,
- իրավաբանական անձանց կողմից պետական կառույցների հետ կնքվող երկարաժամկետ պայմանագրերի ձևերի բազմազանությունը,
- ռիսկերի և ֆինանսական պատասխանատվության բաշխումը կողմերի միջև,
- նախագծերի հանրային և սոցիալական ուղղվածությունը,
- ծառայությունների ապահովման և տրամադրման երկարաժամկետ բնույթը,
- նախագծերի իրականացման ընթացքում կողմերի ջանքերի միավորումը,
- նախագծերի իրականացման գործընթացի «թափանցիկությունը» կողմերի համար,
- բիզնեսի կողմից հանրային իշխանության պատասխանատվության ոլորտում ավանդաբար իր վրա դրված գործառույթների կատարումը:

Կարելի է եզրակացնել, որ, պետական-մասնավոր գործընկերության սկզբունքները առաջարկված տեսքով կարելի է ու պետք է դիտարկել որպես արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման մեխանիզմի մոդելավորման սկզբունքների ածանցյալներ: ՊՄԳ սկզբունքները կարող են կիրառվել տարածաշրջանային արդյունաբերական քաղաքականության սկզբունքների հետ՝ նեղ իմաստով մեկնաբանվելով արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման նկատմամբ:

Ռազմավարական ու տարածքային պլանավորման, ծրագրավորման ու ՊՄԳ ոլորտներում ցանկացած որոշումների ընդունմանը նախորդում է կարգավորիչ ազդեցության գնահատումը: Կարգավորիչ ազդեցության գնահատումը (ԿԱԳ) հանդես է գալիս որպես ուղիղ և հետադարձ կապերի մեխանիզմ արդյունաբերական քաղաքականության մշակման ու իրականացման բոլոր փուլերում, ռազմավարական ու տարածքային պլանավորման, ծրագրավորման ու ՊՄԳ բոլոր մեխանիզմներում ԿԱԳ շրջանակներում իմի են բերվում գործունեության արդյունքները և ընդունվում են ճշգրտող որոշումներ հետագա գործողությունների համար:

ՀՀ-ում ԿԱԳ-ի իրավական հիմքը դրվել է 2008 թվականին «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելով՝ իրավական ակտերի նախագծերի ազդեցության գնահատման աշխատանքների իրականացման պարտադիր պահանջի սահմանմամբ, որի գործողությունը իրավական ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից: Չնայած ԿԱԳ-ը հանդիսանում է ՀՀ կարգավորիչ բարեփոխումների ռազմավարության ծրագրի հիմնական և բաղկացուցիչ մասերից մեկը, այնուամենայնիվ ԿԱԳ-ի իրավական շրջանակները ՀՀ-ում բավականին նեղ են և ներկայումս ՀՀ-ում ԿԱԳ իրականացվում է 7 ոլորտներում՝ 6 նախարարությունների՝ տնտեսական զարգացման և ներդրումների, ՀՀ ֆինանսների, ՀՀ արդարադատության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության և ՀՀ բնապահպանության նախարարությունների կողմից: Բացի այդ, չնայած ՀՀ-ում գործում է ԿԱԳ-ի իրականացման ապակենտրոնացված համակարգ, այնուամենայնիվ, համապարփակ ԿԱԳ-ի իրականացումը նույնիսկ ապակենտրոնացված եղանակով ենթադրում է ԿԱԳ-ի իրականացում իր ողջ բաղադրիչներով, իսկ ներկայումս երկրում գործող համակարգում վերոնշյալ նախարարությունների կողմից տրամադրվում է միայն իր ոլորտի վերաբերյալ եզրակացություն, որն ամփոփում է նախագիծը նախապատրաստողը և ուղարկում կառավարություն: Չկա ԿԱԳ-ի որակի վերահսկող մարմին, որը գնահատական կտա ԿԱԳ - ի իրականացման որակի վերաբերյալ, ինչպես նաև կհետևի ԿԱԳ-ի իրականացման ընթացակարգի պահանջների բավարարմանը ԿԱԳ իրականացնողի կողմից: ՀՀ-ում ԿԱԳ-ի իրավական կարգավորման ինը իրավական ակտերից, թերևս միայն ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 5-ի «Նորմատիվ իրա-

վական ակտերի նախագծերի տնտեսական, այդ թվում՝ նաև փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» N 1159-Ն որոշումն է առնչվում արդյունաբերական քաղաքականության հետ:

Մեթոդական գրականությունում¹ սահմանվել է, որ կարգավորիչ ազդեցության գնահատումը (ԿԱԳ) կարող է հիմնվել մի շարք սկզբունքների վրա, որոնք են՝

- թափանցիկությունը - ԿԱԳ ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը ԿԱԳ իրականացման բոլոր փուլերում,
- հրապարակայնությունը - ընդունվող որոշումների մշակման և ընդունված նորմատիվային իրավական ակտերի մոնիթորինգի գործընթացին շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովումը,
- հաշվեկշռվածությունը - ԿԱԳ ընթացակարգի անցկացման շրջանակներում բոլոր շահագրգիռ կողմերի շահերի հավասարակշռության ապահովումը,
- արդյունավետությունը - սոցիալական խմբերի, այդ թվում նաև՝ տնտեսվարող սուբյեկտների, քաղաքացիների (սպառողների), պետության և ամբողջ հասարակության համար օգուտների ու ծախսերի տեսանկյունից պետական կարգավորման օպտիմալ տարբերակի ընտրության ապահովումը,
- շահավետությունը - ԿԱԳ ընթացակարգի անցկացման պատշաճ որակի ապահովումը նրա անցկացման համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի պայմաններում:

«Տնտեսության բնագավառում պետության կարգավորիչ ազդեցության գնահատման նորարարական կառավարչական գործիքակազմը» վերնագրով ատենախոսական հետազոտությունում Դ. Օ. Դերմանն առաջարկում է ԿԱԳ սկզբունքների հետևյալ ցանկը².

- ընտրողական (սելեկտիվ) գնահատման սկզբունքը կայանում է տարածաշրջանի արդյունաբերության զարգացման գերակա ուղղություններին տրամադրվող պետական աջակցության, այդ թվում նաև՝ հասցեագրված աջակցության մեջ,
- նախագծերի, ծրագրերի, արդյունաբերական քաղաքականության նպատակային կողմնորոշման սկզբունքը դրսևորվում է վերջնական նպատակների ապահովման, այսինքն՝ շահագրգիռ կողմերի միջև փոխադարձ կապերի հաստատման ձևով,
- գնահատման լիարժեքությունը իրենից ներկայացնում է ԿԱԳ ամբողջ պարբերաշրջանի իրագործումը, որը ենթադրում է կարգավորող փաստաթղթի համակողմանի հետազոտություն,
- ԿԱԳ փուլայնության սկզբունքը նշանակում է նախագծի, ծրագրի, արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման յուրաքանչյուր փուլի ամբողջ պարբերաշրջանի գնահատում,
- բազմատարբերակության սկզբունքը այլընտրանքներն ընտրելիս թույլ է տալիս հաշվի առնել գործոնների ազդեցությունը անորոշ պայմաններում, ընդ որում անորոշությունն ավելի է մեծանում արդյունաբերական գործունեության սուբյեկտների և իշխանության մարմինների ակտիվության մեծացման պայմաններում,
- համակարգայնության սկզբունքը ենթադրում է ծրագրի, նախագծի, արդյունաբերական քաղաքականության գնահատում ինչպես համակարգի տարրերի միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերի, այնպես էլ ամբողջ երկրի ռազմավարական զարգացման հետ ունեցած կապերի վերլուծության հիման վրա,
- համալիրության սկզբունքը նշանակում է, որ նախագծի, ծրագրի, արդյունաբերական քաղաքականության բոլոր կառուցվածքային տարրերը պետք է լինեն փոխկապակցված և ապահովեն ենթանպատակների իրագործումը գլխավոր (ընդհանուր) նպատակին համապատասխան:

¹ Приказ Минэкономразвития России от 25.09.2012 №623 «Об утверждении Методических рекомендаций по внедрению процедуры и порядка проведения оценки регулирующего воздействия в субъектах Российской Федерации».

² Дерман Д.О. Инновационный управленческий инструмент оценки регулирующего воздействия государства в сфере экономики. Диссертация к.э.н. Казань, 2014.

Արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման մեխանիզմի շրջանակներում կարգավորիչ ազդեցության գնահատման համար կարևոր դեր է խաղում տարածաշրջանի արդյունաբերության սոցիալական, տնտեսական, էկոլոգիական ու ինստիտուցիոնալ զարգացման հաշվեկշռման մեխանիզմը (զարգացման տեմպերի առումով բնակչության պահանջմունքներին գերազանցող տեխնոլոգիական զարգացման դեպքում): Բազմաթիվ հետազոտությունների և կիրառման փորձի համաձայն որպես այդպիսի մեխանիզմ կարող է օգտագործվել հաշվեկշռված ցուցանիշների համակարգը, որն առաջարկվել է Ռ. Ս. Կապլանի ու Դ. Պ. Նորտոնի կողմից, և հետագայում տվյալ մեթոդի կողմնակիցները BSC (ցուցանիշների հաշվեկշռված համակարգ) տեխնոլոգիայի հիման վրա այդ համակարգը կիրառել են նաև պետական ու ոչ առևտրային կազմակերպություններում ¹:

Այսպիսով, ԿԱԳ սկզբունքները, ինչպես և տարածաշրջանային արդյունաբերական քաղաքականության ՊՄԳ սկզբունքները, կարող են և պետք է միմյանց հետ համաձայնեցված լինեն արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմի մոդելի շրջանակներում:

¹ Браун М.Г. Сбалансированная система показателей: на маршруте внедрения. М.: Альпина Бизнес Букс, 2005.
Каплан Р.С., Нортон Д.П. Сбалансированная система показателей. От стратегии к действию. М.: ЗАО «Олимп-Бизнес», 2003.
Нивен П. Сбалансированная система показателей для государственных и неприбыльных организаций. Днепропетровск: Баланс Бизнес Букс, 2005.

ՊԵՏԱԿԱՆ-ՄԱՍՆԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՉ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՄԱՆ ԴԵՐՄԱՆԿԱՐԵՐԸ ԵՎ ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՈԱԶՄԻԿ ԳԱՅԿԻ ԳԱԿՈՒԹՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասպիրանտ

Համառոտագիր

Արդյունաբերությունը Հայաստանում պետք է դառնա ողջ երկրի դինամիկ զարգացումն ապահովող տնտեսական ոլորտներից ամենակարևորը, որի գործունեությունը կախված է այն տնտեսական քաղաքականությունից, որը կորդեգրի Հայաստանի կառավարության կողմից ընդունված ռազմավարական ծրագիրը: Արդյունաբերական քաղաքականության մշակումը և իրագործումը չեն կարող իրականացվել առանց կարգավորիչ ազդեցության գնահատման: Հատկապես վերջինիս և պետական-մասնավոր գործընկերության սկզբունքները կարող են և պետք է միմյանց հետ համաձայնեցված լինեն արդյունաբերական քաղաքականության մշակման ու իրականացման տարածաշրջանային մեխանիզմի մոդելի շրջանակներում:

Բանալի բառեր. արդյունաբերություն, քաղաքականություն, սկզբունք, մեխանիզմ, պետական-մասնավոր գործընկերություն, կարգավորիչ ազդեցություն, գնահատում:

ПЕРСПЕКТИВЫ И ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ ГОСУДАРСТВЕННО-ЧАСТНОГО ПАРТНЕРСТВА И ОЦЕНКИ РЕГУЛИРУЮЩЕГО ВОЗДЕЙСТВИЯ

ՐԱԶՄԻԿ ԱՅԿՈՎԻՉ ԱԿՕՅԱՆ

ասպիրանտ кафедры микроэкономики и организации предпринимательской деятельности АГЭУ

Аннотация

Промышленность в Армении должна стать важнейшим из секторов экономики, обеспечивающих динамическое развитие страны. Многое зависит от экономической политики, которое возьмет на вооружение правительство Армении в плане возрождения промышленной политики. Разработка и реализация промышленной политики не могут быть осуществлены без оценки регулирующего воздействия. Оценка регулирующего воздействия и принципы государственно-частного партнерства могут и должны быть согласованы друг с другом в рамках модели механизма разработки и реализации промышленной политики региональной экономики.

Ключевые слова: промышленность, политика, принципы, механизм, государственно-частное партнерство, регулирующее воздействие, оценка.

PROSPECTS AND OPPORTUNITIES FOR THE DEVELOPMENT OF PUBLIC-PRIVATE PARTNERSHIPS AND THE REGULATORY IMPACT ASSESSMENT

ՐԱԶՄԻԿ ՀԱՅԿ ՈՒԿՕՅԱՆ

*Ph.D. Student, Chair of Microeconomics and Organization of Entrepreneurial Activities
Armenian State University of Economics*

Abstract

The Industry in Armenia needs to be one of the most important sectors of the economy that ensures the dynamic development of the country. Much depends on the economic policy that will be adopted by the Government of Armenia within the framework of regenerating the industrial policy. The elaboration and implementation of the industrial policy cannot be carried out without regulatory impact assessment. The regulatory impact assessment and the principles of public-private partnership can and need to be agreed upon in the framework of the model of the mechanism for elaborating and carrying out the industrial regional economy policy.

Keywords: Industry, policy, principles, mechanism, public-private partnerships, regulatory impact assessment

ԶԱՅԱՍԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ինտեգրացիոն գործընթացների հակասականությունը ժամանակակից գլոբալ աշխարհի ֆենոմենն է: Ինտեգրացիան, ըստ էության, ստանձնել է երկու տրամագծորեն հակադիր դերեր. մի դեպքում այն ներկայանում է որպես որևէ տարածաշրջանում ազգային տնտեսությունների միավորում՝ հավակնելով նշանակետերի, որոնք մասնակից երկրների համար անհասանելի կամ դժվար հասանելի կարող են լինել առանց ինտեգրացիայից ակնկալվող առավելությունների, մյուս դեպքում, ինտեգրացիան խորացնում է գլոբալ աշխարհի տնտեսական ու քաղաքական բևեռացումը՝ ուժի և ազդեցության նոր կենտրոնների ստեղծման կամ հների վերակազմավորման ու գաղափարական արդիականացման ճանապարհով: Այդ հակասականությունը դրսևորվում է նաև իրարամերժ երկու այլ գործընթացներում. *սուաջինը*, ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի շուկաների ազատականացումն է, *երկրորդն* ինտեգրացիոն միավորման անդամների տնտեսական ու քաղաքական որոշ ազատությունների կամավոր (թեև՝ ոչ միշտ) սահմանափակումն է՝ համագործակցող կողմերի ընդհանրական շահերի իրացմանը չհակադրվելու և չխոչընդոտելու նպատակով: Երկու դեպքերում էլ, ինտեգրացիոն հոսանքներից ընդհանրապես խուսափելու պատճառաբանությունները ժամանակավրեպ են, թեկուզ այն պատճառով, որ փոքր տնտեսությունների համար ինտեգրացիան առավել զարգացած այլ տնտեսությունների հետ համաաշխարհային շուկայում մրցունակ ներկայանալու կարևոր հնարավորություն է: Այս դիտակետից ժամանակակից ինտեգրացիոն գործընթացներին Հայաստանի ներգրավվածության խնդրի քննարկումը դատողությունների համար սահմանափակ դաշտ է ընձեռում, թեև խնդիրը պարտադրում է ինտեգրացիայի այլընտրանքային ուղղություններին անդրադառնալու անհրաժեշտությունը¹, ինչպես նաև՝ առավել լայն տեսադաշտով դիտարկելու եվրասիական ինտեգրացիան և պարզաբանելու, թե իսկապես, ինչպես նկատում է Ե. Վինոկուրովը, այն Հայաստանի համար «խաղ չէր գրոյական կամ բացասական միավորով»²:

Հոդվածը նպատակ ունի ներկայացնել Հայաստանի տնտեսական ինտեգրացիայի այլընտրանքներից ակնկալիքների ու հնարավոր խոչընդոտների պարագծերը: Այդ նպատակով համեմատական վերլուծության համար մշակվել է ինտեգրացիոն զարգացումների հինգ սցենար (որոնք հետագայում թույլ կտան նաև որոշակի տնտեսավիճակագրական վերլուծություններ իրականացնել): Դրանցից երկուսը վերաբերում են ԵՄ-ին, քանի որ վերջինս շարունակում է մնալ ինտեգրացիոն միավորման օրինակելի տարբերակ, որի հետ համեմատության մեջ գնահատվելու են բոլոր մյուս միավորումների հաջողությունները և ձախողումները, բացի այդ, լինելով արդեն ԵԱՏՄ անդամ, Հայաստանը փորձում է ԵՄ հետ տնտեսական կապերը զարգացնելու նոր ձևաչափ գտնել: Դիտարկել ենք նաև ինտեգրացիայից հրաժարվելու տարբերակը, թեև, ինչպես նկատել ենք, փոքր երկրների համար տնտեսական ինտեգրացիան զարգացման այլընտրանքային ուղղություն է, տնտեսության ներուժի իրացման լրացուցիչ հենարան: Այսպիսով, որպես հիմնական սցենարային իրավիճակներ դիտարկվել են՝

1) Ուղենիշային (բազային) սցենար է ընտրվել ընթացիկ իրավիճակը՝ ՀՀ տնտեսությունում զարգացումները ԵԱՏՄ անդամակցությունից հետո՝ ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում:

¹ Հեղինակը նման վերլուծություն իրականացրել է նաև 2013 թ., երբ Հայաստանը որոշում կայացրեց Մաքսային միությանն անդամակցելու վերաբերյալ: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս «Ասիմետրիկ զուգահեռներ Մաքսային միության և ԵՄ շրջանակներում ազատ առևտրի գոտու միջև», Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (Գիտական հոդվածների ժողովածու-2013, Գիրք 2), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 56:

² Աղբյուրը՝ "Интеграция - не игра с нулевой суммой". Деловой Экспресс. № 33 (1032), 27 сентября, 2013 г.

2) Բազմակողմ հիմքերով տնտեսական ինտեգրացիայից հրաժարում: Մա դիտարկվել է որպես այլընտրանքային իրավիճակ, որտեղ քննարկվելու են ՀՀ տնտեսության հնարավոր զարգացումները 2010 թվականից հետո, բացառելով այն փաստը, որ Հայաստանը մայիսին բանակցություններ սկսեց ԵՄ հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ, ինչպես նաև՝ համարելով, որ Հայաստանը ցանկություն չի հայտնել միանալու 2010 թ.-ի հունվարին Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի մաքսային միությանը: Նման սցենարի քննարկումը կարևոր է նրանով, որ, ըստ էության, մեղմացվում է (ընդհուպ մինչև՝ անտեսումը) աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունը ՀՀ տնտեսական իրողությունների վրա, քանի որ, ինչպես ցույց է տալիս փորձը, եվրոպական և եվրասիական աշխարհաքաղաքական ազդեցության փոխբացառող միտումները որևէ պետությունում կամ տարածաշրջանում ակտիվանում են գրեթե միաժամանակ:

3) Հայաստանը 2013 թվականին ստորագրում է ԵՄ հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի ստեղծելու համաձայնագիրը, ընդ որում, որպես ԱՊՀ անդամ, որի հետ ԵԱՏՄ երկրներն ունեն արտաքին առևտրային հարաբերությունները դյուրինացնելու երկկողմ պայմանագրեր¹, Հայաստանի հետ արտաքին առևտրում չեն կիրառվում կոշտ հովանավորչական միջոցառումներ եվրասիական տնտեսական տարածքում:

4) Հայաստանը 2013 թվականին ստորագրում է ԵՄ հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի ստեղծելու համաձայնագիրը, սակայն ԵԱՏՄ երկրների կողմից կիրառվում են համապատասխան առևտրատնտեսական սահմանափակումներ, վերանայվում են համագործակցության նախկին մեխանիզմները՝ ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմաքաղաքական ոլորտներում:

5) Իրան-Հայաստան-Վրաստան տնտեսական միություն: Նման սցենարի դիտարկման նպատակն է ցույց տալ, որ Հայաստանի համար տնտեսական ինտեգրացիայի ուղղությունները չեն սպառվում միայն ԵՄ-ԵԱՏՄ երկրներում, և ճիշտ մշակված արտաքին քաղաքականությունը երկրի համար տնտեսական ներուժի իրացման նոր հնարավորություններ կարող է բացահայտել: Ենթադրվում է, որ Հայաստանը բանակցություններ է սկսում դեպի ծով ելք ունեցող տարածաշրջանի հարևան երկրների (մասնավորապես՝ Վրաստանի և Իրանի) հետ հարաբերությունների ջերմացման և տնտեսական ինտեգրացիայի (թեկուզ՝ երկկողմանի հիմքերով) խորացման ուղղությամբ, հեռանկարում փոխշահավետ համագործակցության հիմունքներով եռակողմ տնտեսական միավորման ստեղծման հնարավորությամբ:

Կարելի էր դիտարկել նաև այլ սցենարներ, ինչպիսիք են, օրինակ, տնտեսական ինտեգրացիայի խորացումը և զարգացումը Սևծովյան տնտեսական համագործակցության, TRACECA (Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցք) բազմակողմ համագործակցության ծրագրի կամ վերջերս ակտիվ քննարկվող Չինաստանի նախաձեռնած «Մեկ գոտի և մեկ ուղի» նախագծով «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» շրջանակներում: Սակայն սցենարների ընտրությունն իրականացվել է իրատեսականության որոշակի սկզբունքներից ելնելով, ինչպես նաև՝ հաշվի առնելով համագործակցության գաղափարական հիմքի առկայությունը և ընդհանրությունները: Վերջինս խորը քննարկման ու վերլուծության անհրաժեշտություն ունի, քանի որ առանց գաղափարական հիմքի, տնտեսական ու քաղաքական գործոնների գերակայությամբ ինտեգրացիոն միավորումները նպատակների ձախողման մեծ հավանականություն ունեն: Խնդրահարույց է հատկապես այն, թե ինչ հանգույցներում որոնել գաղափարական ընդհանրությունները. Հայաստանն Արևելյան Եվրոպա է, թե՞ Եվրոպական Ասիա: Նման հարցադրումն առավել բարդանում է, երբ հաշվի ենք առնում, որ Հայաստանն Անդրկովկասյան փոքր տարածաշրջանի առավել փոքր պետությունն է, մինչդեռ համաաշխարհային հանրությունն, ըստ էության, Հայաստանի հետ հարաբերությունների կառուցման ժամանակ կողմնորոշվում է տարածաշրջանային ընդհանուր շահերով և երկիրն իր բնակչությամբ դիտարկում անդրկովկասյան «մշակութային ու գաղափարական» ընդհանուր դաշտում: Մյուս կողմից, ԵԱՏՄ

¹ Համաձայնագրեր ՀՀ կառավարության և ԲՀ կառավարության միջև ազատ առևտրի մասին՝ 2003 թվականին, ՀՀ կառավարության և Ղազախստանի կառավարության միջև ազատ առևտրի մասին՝ 1999 թվականին, ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև երկարաժամկետ տնտեսական համագործակցության մասին, 2001 թվականին:

տնտեսական կառույցի ճարտարապետները համագործակցության գաղափարական հիմք են համարում «եվրասիականությունը»¹, որը միշտ չէ, միանշանակ ընկալվում որպես ԵԱՏՄ երկրներին միավորող հիմնասյուն: Միաժամանակ պետք է նկատել, որ ԵՄ հայտարարած գաղափարական սկզբունքներն ու արժեքները (մարդկային արժանապատվության, ազատության, նկատմամբ հարգանք, ժողովրդավարություն, հավասարություն, իրավական պետություն և մարդու իրավունքների պաշտպանություն, բազմակարծություն, հանդուրժողականություն, խտրականության բացակայություն և այլն) էապես չեն տարբերվում ԵԱՏՄ արժեքներից ու սկզբունքներից:

Գաղափարական ընդհանրությունների որոնումն առավել դժվար է Իրան-Հայաստան-Վրաստան միության դեպքում: Մոտեցումը, որ այն կարող է կառուցվել տնտեսական պրագմատիզմի սկզբունքների գերակայությամբ, պարզունակ է թվում, և որպես այլընտրանքային ինտեգրացիոն քաղաքականության հենարան, թույլ հիմնասյուններ է առաջարկում: Այստեղ որոշիչ կարող է հանդիսանալ Իրանի կողմից տարածաշրջանում նոր քաղաքական դերակատարման ստանձնումը, որպես այլընտրանք թուրքական նկրտումների: Հայաստանի տեսանկյունից՝ Իրանի հետ դաշնակցային հարաբերությունների խորացումը կարող է անվտանգության լրացուցիչ երաշխիքներ ստեղծել՝ թուլացնելով տարածաշրջանում ռազմական լարվածությունը: Մյուս կողմից, Վրաստանի ներառումը հնարավոր դաշինքում կարող է հանգեցնել այդ երկրի վրա արևմտյան խոշոր պետությունների ազդեցության որոշակի մեղմման և Ռուսաստանի հետ հարաբերությունների աստիճանական կարգավորման, ինչը նպատակահարմար է տարածաշրջանի երեք երկրների համար էլ:

Առաջարկված սցենարային իրավիճակների համեմատության համար ներկայացրել ենք ինտեգրացիոն ուղղություններից յուրաքանչյուրի դեպքում Հայաստանի նպատակները, ակնկալիքները, դրանց հասնելու առկա և ներուժային հնարավորությունները, ներքին ու արտաքին խոչընդոտները, ապա նաև՝ հարաբերությունների զարգացման հետագա հեռանկարները:

Հայաստանի հիմնական նպատակները և ակնկալիքները: Նախքան առանձին դեպքերում Հայաստանի հստակ ակնկալիքները թվարկելը, անդրադարձել ենք այն հիմնական նպատակներին, որոնք առաջնահերթ են Հայաստանի նման փոքր, բաց տնտեսությամբ երկրի համար, աշխարհաքաղաքական ստեղծված իրավիճակում.

- Տնտեսական աճ՝ համաշխարհային տնտեսությունում երկրի մրցունակության բարձրացման և գործարարության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման ճանապարհով:
- Զբաղվածության և արտագաղթի հիմնախնդիրների լուծում, բնակչության կենսամակարդակի բարձրացում, աղքատության նվազեցում:
- Ներդաշնակ՝ տնտեսության պահանջներին համահունչ ֆինանսական համակարգի ապահովում՝ ցածր գնաճային միտումներով, կայուն արժույթային փոխարժեքով և գործուն դրամավարկային քաղաքականության մեխանիզմով:
- Տեխնոլոգիական խզվածքի կրճատում, տնտեսության արդիականացում, ագրարահումքային տնտեսությունից անցում ինովացիոն գիտելիքահենք տնտեսության,
- Պետական ինքնիշխանության, ինչպես նաև ազգային (ներառյալ՝ տնտեսական) անվտանգության և պաշտպանության առավելագույն ապահովում:

Բազային սցենարում ինտեգրացիայից ակնկալիքները թվարկել ենք հիմնվելով ԵԱՏՄ պայմանագրի վրա², ըստ որի «պետությունների ինքնիշխան հավասարության» սկզբունքով հիմնված միության հիմնական նպատակներն են. անդամ-պետության կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը՝ բնակչության կենսամակարդակի բարձրացման նկատառումներով, ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի միասնական շուկայի ստեղծումը, ազգային տնտեսությունների արդիականացումը, մրցունակության բարձրացումը և փոխշահավետ համագործակցությունը: Նշված նպատակներն համահունչ են ՀՀ տնտեսական

¹ О. В. Буторина, А. В. Захаров, О научной основе евразийского экономического союза. ЕЭИ, № 2(27) май, 2015.

² Договор о ЕАЭС, Раздел II, Статья 4.

նպատակներին, ինչ վերաբերում է ազգային անվտանգության ապահովմանը, ապա պետք է նկատել, որ ԵԱՏՄ պայմանագրում կարելի է հանդիպել վերապահումների¹, որոնք պայմանագրային պահանջները չեն տարածում այն դեպքերի վրա, երբ անհրաժեշտություն կա ապահովել անդամ-պետության ազգային անվտանգությունը: Այս առումով, նպատակների «կոնֆլիկտը» կարելի է բացատրել:

Ինտեգրացիայից հրաժարման սցենարում ակնկալիքներում առավել կարևորվում է երկրում տնտեսվարման ինքնիշխանության պահպանումը (ինքնուրույն մակրոտնտեսական, արտաքին առևտրային, արժույթաֆինանսական քաղաքականությունների իրականացում), ինչը հնարավորություն կտա խուսափել ինտեգրացիոն միավորումներում վերազգային կառավարման մարմինների կամ առաջատար պետությունների ուղղակի ու անուղղակի ճնշմամբ այնպիսի որոշումների կայացումից, որոնք կհակասեն ազգային տնտեսության շահերին: Առաջադրված նպատակներին այս պարագայում երկիրը ձգտում է հասնել երկկողմանի պայմանագրերի միջոցով: Հիմնական ակնկալիքներն են տնտեսության ներուժի կրիտիկական գերլարման շնորհիվ տնտեսական շոշափելի աճի ապահովումը, արտադրական ոլորտի, ինչպես նաև՝ արտաքին առևտրի կառուցվածքի դիվերսիֆիկացիան, գլոբալ տնտեսական ցնցումների փոխանցումային մեխանիզմի որոշակի վերահսկելիությունը, ֆինանսական համակարգի կայունությունը, տարածաշրջանի աշխարհաքաղաքական շահերին հավասարակշիռ արձագանքման հնարավորությունը:

ԵՄ հետ ԽՀԱԱԳ ստեղծումը Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում համագործակցության ոլորտներից միայն մեկն է: ԵՄ համար արևելյան մի շարք հարևանների հետ համագործակցության առավել կարևոր ոլորտներ են դիտվում մարդու իրավունքների գերակայությամբ ժողովրդավարական հասարակության ձևավորումը, շրջակա միջավայրի պահպանման, կլիմայական փոփոխություններով պայմանավորված և էներգետիկ անվտանգության խնդիրների լուծումը, սոցիալական-միգրացիոն քաղաքականությունը, որոնք ընդհանրության մեջ կոչված են ԵՄ հետ քաղաքական մերձեցմանը նպաստելուն: Այնուամենայնիվ, տնտեսական ակնկալիքներն ինտեգրացիոն այս ուղղությունից նույնպես նշանակալի են.

- ԵՄ հետ արտաքին առևտրի մաքսային բացարձակ ազատականացում, ոչ տարիֆային սահմանափակումների զգալի մեղմացում, սանիտարական և ֆիտոսանիտարական միջոցառումների, արտաքին առևտրի տեխնիկական խոչընդոտների կարգավորում, հայկական ապրանքների՝ երրորդ երկրների շուկաներում իրացմանն աջակցում:
- Միգրացիոն խնդիրների կարգավորում, մուտքի արտոնագրերի տրամադրման դյուրինացում, վիզային ռեժիմի աստիճանական ազատականացում:
- Հայաստանին տրամադրվող ֆինանսական օգնության մեծացում, ինչպես նաև՝ ԵՄ երկրներից իրականացվող ներդրումների հավանական աճ:
- Տեխնոլոգիապես առավել զարգացած այլ տնտեսությունների հետ վերարտադրության ցիկլի ցանկացած փուլում համագործակցության շնորհիվ տեխնոլոգիական խզման նվազեցում, արտադրողականության բարձրացում:

Թվարկված ակնկալիքները միանշանակ ընդհանրական են *երրորդ և չորրորդ սցենարների համար*, թեև պետք է նկատել, որ երրորդ սցենարում Հայաստանն ակնկալում է նաև դիրքերի պահպանում ռուսական տարողունակ շուկայում, ինչպես նաև՝ էներգետիկ անվտանգության հարցերի առավել սահուն կարգավորում, մինչդեռ չորրորդ սցենարի զարգացման դեպքում ազատ արտահանման շուկաները զգալիորեն կրճատվում են, միաժամանակ, փոխվում են նաև ակնկալիքները՝ կապված Ռուսաստանից ներկրվող էներգառեսուրսների գների ու ծավալների հետ:

Իրան-Հայաստան-Վրաստան տնտեսական համագործակցության դեպքում Հայաստանի համար կլուծվի ամենակարևոր խնդիրներից մեկը՝ դեպի ծով ելքն արտոնյալ պայմաններով:

¹ Օրինակ, «Ոչինչ այս բաժնում չի կարող մեկնաբանվել որպես խոչընդոտ ցանկացած անդամ-պետության համար՝ ձեռնարկելու միջոցառումներ, որոնք նա անհրաժեշտ է համարում երկրի պաշտպանության և անվտանգության կարևորագույն շահերի ապահովման համար» արտահայտությանը կարելի է հանդիպել բաժին VI-ում՝ «Մաքսային միության գործունեությունը», բաժին XV-ում՝ «Օտարալությունների առևտուր, հաստատություններ, ներդրումների իրականացում» և բաժին XVIII-ում՝ «Մրցակցության ընդհանուր սկզբունքներ և կանոններ»:

Վերջինս էլ իր հերթին հնարավորություն կտա հաղթահարել ավելի քան քառորդ դար տևող երկկողմանի շրջափակման բացասական հետևանքները, տնտեսական կյանքի աշխուժացման նոր խթաններ կստեղծի՝ երկրի առաջ բացելով նոր տարողունակ շուկաներ (միայն Իրանի բնակչությունը մոտ 80 մլն է)՝ Իրանով դեպի Մերձավոր Արևելքի երկրներ, և Վրաստանով դեպի ԵՄ երկրներ: Նման համագործակցության իրատեսականության հիմքը վերջին շրջանում Հայաստանի տարածքով Իրանից Վրաստան գազի արտահանման փաստն է¹, ինչը տնտեսական փոխներթափանցման կարևոր հարթակ կարող է հանդիսանալ այս երկրների համար: Բացի այդ, նախատեսվում են ծրագրեր՝ իրանական գազը Հայաստանի տարածքով Ուկրաինա և ԵՄ երկրներ արտահանելու համար: Նկատենք, որ Իրանի հետ դաշնակցային հարաբերությունների խորացումը կարող է վերածվել Հայաստանի էներգետիկ անվտանգության կարևոր խարիսխի, քանի որ էներգառեսուրսների ներկրման լավագույն այլընտրանքն է:

Ներքին և արտաքին խոչընդոտները: Բոլոր ներկայացված իրավիճակներում Հայաստանը կարող է որոշակի առավելություններ ձեռք բերել ճիշտ ինտեգրացիոն քաղաքականության իրականացման դեպքում, սակայն եթե հնարավորությունները չզուգակցվեն խոչընդոտներով ու կորուստների որոշակի հավանականությամբ, որոնք բավական մեծ են բոլոր սցենարային իրավիճակներում:

Բազային սցենարում ինտեգրացիոն ներուժի իրացման հիմնական խոչընդոտներին բազմիցս անդրադարձել են ամենատարբեր վերլուծություններում: Դրանք են.

- Հայաստանի և ԵԱՏՄ այլ անդամ-պետությունների միջև ընդհանուր սահմանի բացակայությունը, առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար տրանսպորտային ենթակառուցվածքների բացակայությունը:
- Տարանցիկ երկիր հանդիսացող Վրաստանի և ինտեգրացիոն միավորման առաջատար պետության՝ Ռուսաստանի միջև լարված քաղաքական հարաբերությունները, ինչը խոչընդոտում է պայմանների բարելավման շուրջ բանակցություններին:
- Արևմտյան պետությունների կողմից Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները,
- ԵԱՏՄ միակենտրոն (հելեոցենտրիկ²) կառուցվածքը, որտեղ երկկողմ տնտեսահարաբերությունները ինտեգրացիոն կենտրոնի հետ գերակշռում են բազմակողմանի տնտեսական կապերին, ընդ որում, տնտեսությունների միջև կախվածությունը հաճախ միակողմանի է: Օրինակ, մակրոտնտեսական փոփոխությունների փոխանցման մեխանիզմն անխափան գործում է ՌԴ-ից այլ անդամ-պետություններ սխեմայով, մինչդեռ հակառակը տեղի չի ունենում:
- Միության երկրներում տեխնոլոգիական զարգացման ոչ բավարար մակարդակը, ինչը սահմանափակում է ինովացիոն տնտեսություն կառուցելու Հայաստանի և այլ անդամ-պետությունների (որոնք բոլորն էլ տնտեսության զարգացման հումքային ուղղվածություն ունեն) ձգտումները:

Ներքին ու արտաքին խոչընդոտները շատ են *ինտեգրացիոն միավորումներին անդամակցելուց հրաժարման* դեպքում՝ պայմանավորված պատմաաշխարհագրական իրողություններով.

- Փոքր տնտեսություն, սակավ բնական ռեսուրսներով, որը գտնվում է տնտեսական շրջափակման մեջ, գրավիչ չի ներկայանում երկկողմ առևտրատնտեսական պայմանագրերի կնքման համար:
- Շուկայական տնտեսությանը բնորոշ ենթակառուցվածքների ու ինստիտուտների սաղմնային, ինչ-որ իմաստով՝ հիբրիդային (շուկայական, բայց նախկին վարչաիրավաբանական համակարգին բնորոշ տարրերի պահպանմամբ) վիճակը մի կողմից խոչընդոտում է ներքին զարգացման հնարավորությունների իրացմանը, մյուս կողմից սահմանափակում գործարարության ոլորտում այլ երկրների հետ համագործակցության հեռանկարները:
- Տեխնոլոգիական թռիչքաձև զարգացման համար անհրաժեշտ գիտատեխնիկական ներուժի զենեքացման թույլ խթանները:

¹ Աղբյուրը՝ www.panarmenian.net/arm/news/220067/ ՀՀ-ն սկսել է գազ արտահանել Վրաստան:

² Տերմինը բավական դիպուկ է նկարագրում ԵԱՏՄ-ում տնտեսաքաղաքական կապերի բովանդակությունը, հելեոցենտրիկ ինտեգրացիոն համակարգին բնորոշ հատկանիշների մասին մանրամասն տե՛ս Օ. Վ. Буторина, А. В. Захаров, О научной основе евразийского экономического союза. ЕЭИ, № 2(27) май, 2015:

- Աշխարհաքաղաքական ներկա պայմաններում ինքնուրույն որոշումների կայացման անհնարինությունը, իսկ նման հնարավորության դեպքում էլ՝ անվտանգության արտաքին երաշխիքների կորստի մեծ հավանականությունը:

Նախորդ սցենարի զարգացման համար նշված վերջին խոչընդոտն ընդհանրական է հաջորդող բոլոր սցենարների համար, և բնականաբար այն հիմնական հանգամանքն է, որը պայմանավորել է ինտեգրացիոն զարգացումների ներկա ընթացքը: Այնուամենայնիվ, հաջորդիվ դիտարկվող սցենարներում այլ բարդություններ նույնպես առկա են: Այսպիսով, *ԵՄ հետ արդյունավետ ասոցացման* ծրագրերում Հայաստանի համար արգելակող գործոն կարող են հանդիսանալ.

- «Հումքային թակարդում» հայտնվելու հավանականությունը, երբ զարգացած երկրների՝ զարգացող երկրների հետ ինտեգրման հիմնական նպատակը նրանց էժան հումքային ռեսուրսների և աշխատուժի օգտագործումն է՝ շարունակելով երկրներին պահել ցածր տեխնոլոգիական մակարդակում:
- ԵՄ տեխնոլոգիապես առավել զարգացած շուկաներում պատրաստի արտադրանքի սեզմենտներ ներթափանցելու բարդություններ:
- *Չորրորդ սցենարի դեպքում՝* ԵԱՏՄ (ավելի շուտ ռուսական) շուկաների կորուստ, էներգակիրների ներկա աղբյուրների թանկացում, ներդրումների զգալի կրճատում, Հայաստան-Ռուսաստան միգրացիոն քաղաքականության վերանայում, ինչը կհանգեցնի դրամական փոխանցումների զգալի կրճատման:
- Որպես համագործակցության նախնական հարթակ քաղաքական ու մշակութային որոշ ինստիտուտների ու ենթակառուցվածքների վերափոխում «եվրոպական ոգով», ինչը հաճախ անհամապատասխանություն է բացահայտում հայկական ավանդական ու եվրոպական արժեքներում և սպառնում ազգային ինքնության տարալուծմանը:

Քաղաքական ու տնտեսական բնույթի խոչընդոտները բավական շատ են *Իրան-Հայաստան-Վրաստան տնտեսական միության դեպքում*: Այստեղ, առանցքային հիմնախնդիրն արդեն ձևավորված առևտրատնտեսական ու դաշնակցային կապերն են Վրաստանի, Ադրբեյջանի և Թուրքիայի միջև, համատեղ տարածաշրջանային ծրագրերը, ինչպես նաև՝ Իրանի պահպանողական արտաքին տնտեսական քաղաքականությունը, արտաքին առևտրի պետական խիստ վերահսկողությունը: Այսինքն՝ փոքր է հավանականությունը, որ հարևան պետությունների իշխանությունները համագործակցության պատրաստակամություն կցուցաբերեն: Բացի այդ, Վրաստանի հետ հարաբերությունների ջերմացումը գործնականում խոչընդոտվում է հայաբնակ Ջավախքի շուրջ ծավալված անհամաձայնություններով, ինչի պատճառով վրացական կողմը դրական տրամադրվածություն չունի ՀՀ տնտեսական զարգացման նկատմամբ, մտավախություն ունենալով, որ հեռանկարում Հայաստանը կարող է տարածքային հավակնություններ ներկայացնել Ջավախքի նկատմամբ:

Թեև ինտեգրացիոն համագործակցության բոլոր ուղղությունների դեպքում էլ խոչընդոտներն ու դժվարությունները զգալի են, այնուհանդերձ, բոլոր տարբերակներն էլ պոտենցիալ հնարավոր են փոխզիջումային ռազմավարության և հեռանկարային դրական զարգացումների կանխատեսման դեպքում: Համագործակցության հեռանկարների ներկայացումը և սցենարային համեմատությունը պահանջում են տնտեսաչափական բազմագործոն վերլուծություններ, մակրոտնտեսական ցուցանիշների և համաշխարհային շուկայում կոնյունկտուրային փոփոխությունների կանխատեսումներ, ֆունկցիոնալ հստակ կախվածություններով մոդելների գնահատման ծավալային աշխատանքներ, որոնք ամեն դեպքում պարունակելու են տեղի չունենալու մեծ հավանականություն՝ աշխարհատնտեսական կարգում դերաբաշխումների անկանխատեսելի փոփոխությունների, գիտատեխնիկական առաջընթացի համաշխարհային նոր կենտրոնի (Արևելյան և Հարավարևելյան Ասիայում) ձևավորման միտումների և տնտեսական ցուցանիշների վրա ազդող գործոնների խիստ դիվերսիֆիկացման պայմաններում: Սակայն սցենարային նման վերլուծությունը հնարավորություն կտա հանրապետության համար ուրվագծել արտաքին աշխարհի հետ համագործակցության պլյուրալիստական մոդել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՈՐԴԻՆԵՐԸ

ԳԱՅԱՆԵ ԵՐՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված են Հայաստանի տնտեսական ինտեգրացիայի այլընտրանքային ուղիները, դրանցից երկրի ակնկալիքների և հնարավոր խոչընդոտների պարագծերը: Դատողությունների համար մշակվել է ինտեգրացիոն զարգացումների հինգ սցենար, որոնց համեմատական վերլուծությամբ գնահատվել են ինտեգրացիոն համագործակցության հիմնական ուղղությունների բնորոշիչները, նպատակ ունենալով հեռանկարում ուրվագծել Հայաստանի տնտեսական ինտեգրացիայի պյուրալիստական մոդել:

Բանալի բառեր. *ինտեգրացիա, Եվրասիական տնտեսական միություն, Եվրոպական Միություն, սցենարային վերլուծություն, մաքսային միություն, մրցունակություն*

АЛЬТЕРНАТИВНЫЕ ПУТИ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ АРМЕНИИ

ГАЯНЕ ЭРНИКОВНА АРУТЮНЯН, *к.э.н., доцент*

старший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

В статье представлены альтернативные пути экономической интеграции Армении, а также векторы ожиданий и возможных препятствий страны от их реализации. Для научных рассуждений автором разработаны пять сценариев развития интеграционных процессов, посредством сравнительного анализа которых дана оценка характеристик основных направлений интеграционного сотрудничества с целью построения в перспективе плюралистической модели экономической интеграции Армении.

Ключевые слова: *интеграция, Евразийский экономический союз, Европейский союз, сценарный анализ, таможенный союз, конкурентоспособность.*

ALTERNATIVE DIRECTIONS OF ECONOMIC INTEGRATION OF ARMENIA

GAYANE ERNIK HARUTYUNYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article presents the alternative directions of the economic integration of Armenia and the vectors of expectations and possible obstacles the nation would face while implementing them as well. For the purpose of academic reasoning, the author builds five development scenarios with respect to integration processes, and by carrying out a comparative analysis of the proposed scenarios the author provides an assessment of the characteristics of the main directions of economic cooperation with the aim of building a pluralistic model of economic integration of Armenia in the future.

Keywords: *Integration, Eurasian Economic Union, European Union, scenario analysis, Customs Union, competitiveness*

ՈԱՉՄԱԿՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Պետության կողմից երկրի պաշտպանության ապահովումն առաջնային, ոչնչով չփոխարինվող հասարակական բարիք է, իսկ պաշտպանության գործունեությունը՝ տնտեսական գործունեության տարատեսակ¹, որի թողարկած արդյունքը ոչ նյութական բնույթ ունի և բավարարում է երկրի արտաքին անվտանգության նկատմամբ բնակչության պահանջմունքը: Միաժամանակ, պաշտպանության արդյունավետ գործունեությունը բավարարում է նաև ազգի ինքնահարգանքի և համաշխարհային հանրության կողմից հարգանքի ու ճանաչման նկատմամբ պահանջմունքները: Պաշտպանական համակարգի քաղաքական նման գործառույթների գերակշռումն էլ պայմանավորել է տնտեսական տեսանկյունից պաշտպանական ոլորտի հիմնախնդիրների թույլ ուսումնասիրվածության աստիճանը: Մինչդեռ երկրի պաշտպանունակության հիմնասյուները՝ երկրի ռազմաարդյունաբերությունը և ռազմական ծախսերի համակարգը, տնտեսական բովանդակություն ունեն:

Հետխորհրդային հասարակություններում բավական երկար ժամանակ մտակաղապարված է եղել այն համոզմունքը, որ երկրում ռազմաարդյունաբերության զարգացման շեշտադրումները բացասաբար են ազդում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Դա մասամբ պայմանավորված էր նրանով, որ արևմտյան տնտեսագիտական միտքը ԽՍՀՄ փլուզման հիմնական պատճառներից մեկը համարում էր տնտեսության չափազանց ռազմականացումը սառը պատերազմի տարիներին, թեև պետք է նկատել, որ այդ նույն «սպառազինությունների մրցապայքարը» ԱՄՆ-ին և ԵՄ երկրներին հնարավորություն տվեց կարճ ժամանակահատվածում առաջնակարգ նիշեր զբաղեցնել տնտեսական զարգացման ցուցանիշներով: Բացի այդ, ռազմաարդյունաբերության խնդիրներին անդրադարձն իրականացվել է առավելապես աշխարհաքաղաքական տեսանկյունից և քաղաքական գիտությունների շրջանակներում, իսկ ռազմաարդյունաբերությունը չի դիտարկվել որպես առանձին տնտեսական գործունեության ոլորտ, այն իմաստով, որ ռազմական նշանակության արտադրանքը չի արտադրվում միայն մի գործունեության ձևի շրջանակներում, այլ տարբեր համամասնություններով առնչվում է գրեթե բոլոր արտադրական ոլորտներին (մեքենաշինություն, տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրություն, քիմիական արդյունաբերություն, թեթև արդյունաբերություն, սննդարդյունաբերություն), ինչն էլ թերևս, հիմք է հանդիսացել «ռազմաարդյունաբերության ոլորտ»-ի փոխարեն առավելապես օգտագործելու «ռազմաարդյունաբերական համալիր» տերմինը: Ուստի, տնտեսական աճի վրա ազդեցությունների գնահատման ժամանակ առաջանում են որոշ բարդություններ՝ ինչպես կիրառվող հասկացությունների սահմանման, այնպես էլ ոլորտի ընդգրկումների և բաղադրիչների հստակեցման, գնահատումների մեթոդոլոգիական մոտեցումների ճշգրտման առումներով:

Ռազմաարդյունաբերական համալիր (ՌԱՀ) հասկացության առաջին կիրառումը վերագրվում է ԱՄՆ-ի նախագահ Դ.Էյզենհաուերին: Նա 1961 թվականի հունվարին, իր հրաժեշտի ելույթում զգուշացնում է «խուսափել ռազմաարդյունաբերական համալիրի անցանկալի բացասական ազդեցություններից», որոնք կարող են «կազմալուծել ամերիկյան դեմոկրատիան», հիմնավորելով, որ «ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը միտված է քաղաքական նպատակների իրագործմանը և հաճախ չի բխում երկրի իրական շահերից»²: Հետագայում, հղում

¹ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի համապատասխան «պաշտպանության գործունեությունը» (Օ84.22 կոդով) ներառվում է պետության կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունների մեջ:

² Էյզենհաուերի ելույթը կարելի լսել հետևյալ հղմամբ. <https://www.britannica.com/topic/military-industrial-complex>

կատարելով Էյզենհաուերի այս ելույթին, խորհրդային գիտական միտքը ՌԱՀ-ը սահմանեց որպես ռազմական արտադրանք թողարկող մոնոպոլիաների, զինված ուժերի ներկայացուցիչների, պետական վարչական ապարատի մի մասի, մտավորականության, արհմիությունների ղեկավարների, ինֆորմացիայի բնագավառի աշխատողների՝ իմպերիալիզմին ծառայող վերնախավի յուրատեսակ դաշինք կապիտալիստական երկրներում¹, դրան հակադրելով ԽՍՀՄ-ում կիրառվող «ռազմապաշտպանական արդյունաբերություն» հասկացությունը: Նման սահմանումը, կառուցված լինելով երկու հակամարտ համակարգերի տարբերություններն ակնկալող նկատառումների վրա, այնուամենայնիվ, արտահայտում է նաև զարգացած երկրների ռազմաարդյունաբերության որոշ առանձնահատկություններ (օրինակ, զինամթերքի արտադրության և շուկաների մենաշնորհացում, բարձր տեխնոլոգիականություն, բարձրորակ կադրային ապահովություն, կենտրոնական կառավարման մարմինների կողմից խիստ վերահսկողություն և աջակցություն):

Համաձայն «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի (ընդունված 2015 թվականի մարտի 25-ին) ՌԱՀ-ը սահմանվում է որպես գիտական, գիտաարտադրական, արտադրական և այլ բնույթի կազմակերպությունների ու պետական մարմինների համակարգ, որի գործունեությունն ուղղված է պետության ռազմատեխնիկական քաղաքականության կենսագործմանը: Սահմանման մեջ շեշտադրվում է գիտական բաղադրիչի կարևորությունը, ինչը համալիրի ձևավորման ու կայացման փուլի համար (իսկ մեր կարծիքով, ՀՀ ՌԱՀ-ը ներկայում դեռ այդ փուլում է) կարևոր մեկնակետ է, սակայն միաժամանակ, այն չի բացահայտում ռազմատեխնիկական գործունեության էությունը, ինչն էլ որոշակի անհստակություն է ենթադրում համալիրում ներառվող կազմակերպությունների գործունեության ձևերի և ռազմական ոլորտին դրանց առնչության տեսանկյունից: Համեմատության համար նկատենք, որ ՌԴ-ում պաշտոնական շրջանառությունում առավել հաճախ կիրառվում է «պաշտպանական արդյունաբերության համալիր» հասկացությունը, որին հստակ սահմանում չի տրվել օրենսդրաիրավական փաստաթղթերում, իսկ տնտեսագիտական գրականությունում այն ներկայացվում է որպես ուժային կառույցների սպառազինման, ինչպես նաև՝ արտահանման նպատակներով ռազմական և հատուկ տեխնիկայի, զենք-զինամթերքի նախագծում, արտադրություն, պահպանում և մատակարարում իրականացնող գիտահետազոտական, փորձարարական կազմակերպությունների և արտադրական ձեռնարկությունների ամբողջություն: Այս դեպքում առավել կարևորվում է համալիրի մեջ ներառված ձեռնարկությունների և կազմակերպությունների թողարկած արտադրանքի, մատուցած ծառայությունների, կատարած աշխատանքի ռազմավարական նշանակությունը երկրի պաշտպանունակության և անվտանգության ապահովման տեսանկյունից:

Ներկայացված բնորոշումները հնարավորություն են տալիս հստակեցնել ռազմաարդյունաբերության տնտեսական դերն ու նշանակությունը: Այդ նպատակով, ռազմաարդյունաբերության ոլորտը սահմանենք որպես ազգային տնտեսության ենթահամակարգ հանդիսացող *ռազմական (պաշտպանական) տնտեսության*² բաղադրիչ, որը ներառում է երեք արտադրական ուղղություններ.

- Ձենք-զինամթերքի, ռազմական հատուկ տեխնիկայի, սարքավորումների, բացառապես ռազմական նշանակության այլ արտադրանքի թողարկում³,

¹ Հայկական սովետական հանրագիտական:

² Ռազմական տնտեսություն և պաշտպանական տնտեսություն հասկացությունների միջև, ըստ էության, սկզբունքային տարբերություններ գոյություն չունեն, թեև որոշ տեսաբաններ փորձում են այդպիսիք բացահայտել, խնդիրն ավելի շուտ կայանում է նրանում, թե արդյո՞ք երկիրը գտնվում է պատերազմական իրավիճակում, թե՛ ոչ: Ուստի, մեր կողմից նույնպես (ինչպես վերլուծաբաններից շատերի մոտ) հասկացությունները կիրառվելու են որպես նույնիմաստ:

³ Ռազմական նշանակության արտադրանք համարվող ապրանքների, ծառայությունների, աշխատանքների և մտավոր գործունեության արդյունքների ցանկը բերված է ՀՀ Կառավարության 2009 թվականի նոյեմբերի 12-ի №1308-Ն որոշման հավելված 1-ում:

• Երկակի նշանակության արտադրանքի, տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների թողարկում¹,

• Կոնվերսիոն արտադրանքի թողարկում, երբ ռազմական նշանակության արտադրանք թողարկող ձեռնարկություններն իրենց նախաձեռնությամբ (շահույթը մեծացնելու նկատառումներով) կամ շուկայական կոնյունկտուրայի փոփոխություններին հարմարվելու հարկադրանքով սկսում են արտադրել (կամ արտադրում են նաև) խաղաղ պայմաններում քաղաքացիական պահանջմունքների բավարարման համար նախատեսված արտադրանք՝ օգտագործելով ռազմական նպատակներով իրականացված գիտատեխնիկական մշակումների արդյունքները:

Հստակեցնենք, որ բացի ռազմաարդյունաբերությունից, ռազմական տնտեսությունը ներառում է նաև զինված ուժերի տնտեսությունը, որն էլ իր հերթին ունի երկու բաղադրիչ՝ զինված ուժերի թիկունքի տնտեսություն և զինված ուժերի գորամասային տնտեսություն: Զինված ուժերի տնտեսությունը ձևավորվում է պետության ռազմական ծախսերի միջոցով: Պետական ռազմական ծախսերը ներառում են սպառազինության գնման և ԳՀՓԿ աշխատանքների համար նախատեսված, նյութատեխնիկական ապահովման, անձնակազմի պահպանման և կապիտալ շինարարության ծախսերը: Թեև մարտունակ բանակ ու պաշտպանված պետություն ունենալու համար չափազանց կարևոր է նաև ճիշտ կազմակերպված զինված ուժերի տնտեսության լոգիստիկ արդյունավետ համակարգի առկայությունը, այնուամենայնիվ, ներկայացված հետազոտության շրջանակներում զինված ուժերի թիկունքում լոգիստիկ համակարգի կատարելագործման խնդիր չի առաջադրվել, հետևաբար դրան չենք անդրադառնա, այլ մակրոտնտեսական վերլուծության հարթությունում կոդիտարկենք պետության ռազմական ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա: Ակնհայտ է, որ պետության կողմից իրականացված ռազմական ծախսերի մի զգալի մասը վերադառնում է տնտեսություն՝ ռազմաարդյունաբերության և արտադրական այլ ոլորտներում պետական պատվերով արտադրության կազմակերպման համար:


Ներկայացնենք ռազմաարդյունաբերության և ազգային տնտեսության փոխառնչությունները գծապատկերի տեսքով (տե՛ս գծապատկեր 1): Գծապատկերում, ըստ էության, արտացոլված է ռազմաարդյունաբերության ոլորտի ներուժային համակարգաստեղծ նշանակությունն ամբողջ տնտեսության համար՝ պայմանավորված տնտեսության այլ ճյուղերի հետ համագործակցության լայն հնարավորություններով:

Ռազմական նշանակության արտադրանք կարող են թողարկել մեքենաշինության այնպիսի ենթաճյուղեր, ինչպիսիք են ռադիոէլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, օպտիկամեխանիկական, սարքաշինական արտադրությունները, որոնք իրենց հերթին հիմնվում են մետաղամշակման և քիմիական արտադրությունների վրա, միաժամանակ քիմիական արդյունաբերության որոշ ենթաճյուղեր ինքնին կարող են հանդես գալ որպես ռազմական արտադրանքի թողարկման առանձին ոլորտ, իսկ ժամանակակից սպառազինությունների գերակշիռ մասը հիմնվում է տեղեկատվական տեխնոլոգիաների վրա:

Ինչ վերաբերում է սննդի և թեթև արդյունաբերությանը, ապա դրանց առանձնացումն արտադրական այլ ոլորտներից պայմանավորված է փոխազդեցությունների առավել թույլ դրսևորմամբ, քանի որ նշված ոլորտները ռազմական տնտեսությանը առնչվում են միայն զինված ուժերի համար պետական գնումների շրջանակներում, որոնք արժեքային ցուցանիշներով նկատելիորեն զիջում են ռազմական ծախսերի այլ բաղադրիչներին: Այնուամենայնիվ, պատերազմական իրավիճակում գտնվող փոքր բաց տնտեսության համար, որտեղ արդյունաբերական

¹ «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքով (ընդունված 2010թ ապրիլին) երկակի նշանակության ապրանք է համարվում յուրաքանչյուր տեսակի գույք, որ կիրառվում է քաղաքացիական նպատակների համար և իր բնույթին ու հատկություններին համապատասխան՝ կարող է օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար, իսկ երկակի նշանակության տեղեկատվություն և մտավոր գործունեության արդյունքներ են համարվում ցանկացած բնույթի տեղեկատվություն, մտավոր գործունեության արդյունք, համակարգչային ծրագրեր, որոնք կիրառվում են քաղաքացիական նպատակների համար և իրենց բնույթին համապատասխան՝ կարող են օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար:

արտադրանքի ծավալները չեն գերազանցում ՀՆԱ 20%-ը բանակի համար պետական պատվերների իրականացումը կարող է հաջող արտադրական գործունեության մեկնակետ ծառայել, հատկապես եթե հաշվի առնենք, որ նշված երկու ոլորտներում առավել նպատակահարմար է փոքր ձեռնարկատիրության զարգացումը:



Գծապատկեր 1. Ազգային տնտեսության և ռազմաարդյունաբերության փոխկապվածությունները

Փաստորեն, տնտեսական ընդհանուր համակարգի վրա ռազմական տնտեսության ազդեցությունը կարող է դրսևորվել երկու ուղղությամբ, մի դեպքում՝ ռազմաարդյունաբերության ոլորտում զարգացումների արդյունքում, մյուս դեպքում՝ պետության կողմից իրականացվող ռազմական ծախսերի փոխանցման մեխանիզմով: Ազդեցության ուղղությունների նման տարբերակումն էական է, քանի որ հնարավորություն է տալիս նաև տարբերակված ուսումնասիրել *տնտեսական աճի* և *տնտեսական զարգացման* վրա հնարավոր ազդեցությունները: Տնտեսագիտական հետազոտությունները հիմնականում շեշտադրում են տնտեսական աճի վրա ռազմական ծախսերի ազդեցության ուսումնասիրությունը, մինչդեռ շատ ավելի կարևոր է տնտեսական զարգացման տեսանկյունից երևույթների քննությունը, քանի որ եթե տնտեսական աճի հիմքում երկրի տնտեսական զարգացումը չէ, ապա այն ունի ժամանակավոր ու պատահական բնույթ, և հաճախ չի ապահովում երկրի կենսամակարդակի և բարեկեցության համապատասխան աճ: Հայտնի է, որ ռազմական ծախսերի և տնտեսական աճի միջև գոյություն ունի հստակ ուղիղ կախվածություն՝ պայմանավորված ՀՆԱ ցուցանիշի հաշվարկման մաթեմատիկական առանձնահատկությամբ, այսինքն՝ միջազգային վիճակագրական ստանդարտների համաձայն ռազմական ծախսերը համարվում են պետության կողմից երկրի պաշտպանության ծառայության (որը հանդես է գալիս որպես հասարակական բարիք) ձեռքբերման արժեք, որը ձևավորվում է երեք բաղադրիչներից՝ ռազմամթերքի գնում, հիմնական կապիտալի (գորանոցների, այլ ռազմական նշանակության շինությունների) ամրոտիզացիա և ընթացիկ նյութական ծախսեր¹, և ներառվում է ՀՆԱ կառուցվածքում որպես պետական գնումների բաղադրիչ: Բացի այդ, դրանց աճը հարուցում է համախառն պահանջարկի մուլտիպլիկատիվ աճ և հանգեցնում գործազրկության կրճատմանը: Սակայն, ՀՆԱ-ի որակական աճի (տնտեսական զարգացման) տեսանկյունից խնդրի դիտարկումը ենթադրում է ավելի շուտ ռազմաարդյունաբերության ոլորտի տնտեսական ցուցանիշների

¹ Лавринов Г. А. “О влиянии военных расходов на развитие экономики стран”. Военная мысль, 2007, №12, стр 19-24.

բարելավման նպատակադրում, ինչը երկարաժամկետում կարող է նկատելի աճ ապահովել ՀՆԱ-ն ձևավորող բոլոր մյուս բաղադրիչների գծով (սպառողական ծախսերի, ներդրումների և արտահանման ծավալների աճ), առաջ բերելով ՀՆԱ-ի ավելի արագ և արդյունավետ աճ:

Ինչպես ռազմական ծախսերի աճի, այնպես էլ ռազմաարդյունաբերության զարգացման դրական տնտեսական հետևանքների վերաբերյալ առկա են իրարամերժ տեսակետներ: Մասնավորապես, որոշ վերլուծաբաններ գտնում են, որ ռազմական ծախսերի աճը հանգեցնում է պետության կողմից կարևոր սոցիալ-տնտեսական խնդիրների (սոցիալական ապահովություն, կրթություն և առողջապահություն) լուծմանը հատկացվող ֆինանսական միջոցների կրճատման, նման բացասական ազդեցությունն առավել սուր է ներկայանում, երբ հաշվի ենք առնում, որ ռազմական ծախսերի մի զգալի մասը հատկացվում է ռազմական նշանակության արտադրանքի ներկրման դիմաց վճարման համար: Մյուս կողմից, ռազմաարդյունաբերության ոլորտում ներդրումները հանդիսանալով այլ՝ քաղաքացիական նշանակության արտադրություններում ներդրումների այլընտրանք, կարող են հանգեցնել այլ ոլորտներում արտադրության ծավալների կրճատմանը և տնտեսությունում կառուցվածքային անհամամասնությունների դրսևորմանը, ինչպես շահույթի նորմի և աշխատավարձի մակարդակի էական տարբերությունների, այնպես էլ՝ աշխատուժի միջճյուղային տեղաշարժերի և սոցիալական շերտավորման առումներով: Բացի այդ, հաճախ քաղաքացիական նշանակության արտադրությունները կարող են ավելի արդյունավետ նպաստել տնտեսական աճին, օրինակ՝ նոր տեխնոլոգիական արտադրությունները: Ի դեպ, հակասություններն ավելի մեղմ են, երբ խոսքը գնում է ռազմական ծախսերը ԳՀՓԿ աշխատանքներին ուղղորդելուն, քանի որ դրանք նպաստում են երկրի ընդհանուր տեխնոլոգիական զարգացմանը, իսկ ռազմական ոլորտում կատարված տեխնոլոգիական մշակումները շատ հաճախ արդյունավետ կիրառում են գտնում նաև արտադրության այլ ոլորտներում: Իհարկե, այս հանգամանքը նույնպես միանշանակ չի ընդունվում. որպես հակափաստարկ հիմնավորվում է, որ մասնավոր ձեռնարկատիրության շրջանակներում իրականացվող տեխնոլոգիական հետազոտությունները և մշակումներն ավելի մեծ տնտեսական արդյունք են պարունակում և տեխնոլոգիական առաջընթացում ավելի մեծ ներդրում ունեն, քանի որ մասնավոր առևտրային շահ են հետապնդում: Սակայն, որպես կանոն, տնտեսագետները համակարծիք են, որ եթե ազգային անվտանգության խնդիրն առաջնահերթ է, ապա ռազմական նպատակներով բոլոր ծախսերը արդարացված են:

Ինչ խոսք, ռազմական ծախսերի ազդեցության վերաբերյալ էմպիրիկ տվյալների հետազոտությունը կարող է զգալիորեն տարբեր իրավիճակներ բացահայտել՝ կախված երկրների առանձնահատկություններից, ուստի, հնարավոր չէ միանշանակ ու սպառիչ պատասխան տալ այն հարցին, թե ի վերջո ռազմական ծախսերի ազդեցությունը տնտեսության վրա դրական է, թե՛ բացասական, սակայն կարելի է որոշակի համոզմունք հայտնել, որ գոյություն ունի ռազմական ծախսերի որոշակի օպտիմալ մակարդակ (որը յուրաքանչյուր երկրի համար որոշվում է առանձին), որը համապատասխանում է երկրի պաշտպանական պահանջումներին, խթանում է տնտեսական աճը և չի գերազանցում այն մակարդակը, որից հետո արձանագրվում է մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացում՝ ՀՆԱ-ի անկում, գնաճի տեմպի ավելացում և այլն: Միաժամանակ, կարևորվում է նաև ռազմական ծախսերի խելամիտ բաշխումը: Դրանց ուղղորդումը սպառազինության, ռազմական ու երկակի նշանակության այլ արտադրանքի արտադրության բարձր տեխնոլոգիական համակարգերի ձևավորմանը և պահպանմանը կարող է ստեղծել նոր աշխատատեղեր, ընդլայնել արտահանման հնարավորությունները, բարելավել արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը, բարձրացնել երկրի տեխնոլոգիական զարգացման մակարդակը վերջնաարդյունքում ապահովելով տնտեսական զարգացման վրա հիմնված արդյունավետ տնտեսական աճ և երկրի պաշտպանունակության բարձրացում:

ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ԵՐՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Պետության կողմից երկրի պաշտպանության ապահովումը առաջնային, ոչնչով չփոխարինվող հասարակական բարիք է, իսկ պաշտպանության գործունեությունը տնտեսական գործունեության տարատեսակ, ուստի, երկրի պաշտպանունակության հիմնասյունները՝ ռազմաարդյունաբերությունը և ռազմական ծախսերի համակարգը, տնտեսագիտական բովանդակություն ունեն և պահանջում են տնտեսության զարգացման ընդհանուր համակարգում ունեցած դերի ու նշանակության գնահատում: Հոդվածում հստակեցվել են ռազմաարդյունաբերության ոլորտի ընդգրկումներն ու բաղադրիչները, վերլուծվել և ներկայացվել են ազգային տնտեսության հետ փոխկապվածությունների մեխանիզմները, տրվել է գծապատկերային մեկնաբանություն:

Բանալի բառեր. *ռազմաարդյունաբերություն, ռազմական ծախսեր, տնտեսական աճ, տնտեսական զարգացում, ազգային տնտեսություն, ռազմական տնտեսություն, երկակի նշանակության ապրանքներ:*

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В ОБЩЕЙ СИСТЕМЕ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ

ԳԱՅՆԵ ԷՐՆԻԿՈՎՆԱ ԱՐՄԵՅՅԱՆ, *կ.ճ.ն., доцент*
старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Обеспечение защиты страны государством является первичным, ничем не заменимым общественным благом, в то время как деятельность по защите страны является разновидностью экономической деятельности, следовательно, основы обороноспособности страны - военная промышленность и система военных расходов, имеют экономическое содержание и требуют оценки их роли и значимости в общей системе развития экономики. В статье уточнены сферы охвата и компоненты оборонной промышленности, проанализированы и представлены механизмы взаимосвязи с национальной экономикой, дана схематическая интерпретация.

Ключевые слова: *военная промышленность, военные расходы, экономический рост, экономическое развитие, национальная экономика, военная экономика, товары двойного назначения.*

THE ROLE AND IMPORTANCE OF THE MILITARY INDUSTRY IN THE OVERALL SYSTEM OF ECONOMIC DEVELOPMENT

GAYANE ERNIK HARUTYUNYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Ensuring protection by the nation's government is the primary, irreplaceable public good, while the protection of the country is one of the types of economic activities, and hence, the foundations of the nation's defense: military industry and military spending are of economic substance and require assessment of their role and importance in the overall system of economic development. The article clarifies the scope and components of the defense as an industry, analyzes and provides the mechanisms of interplay with the national economy, and schematic interpretation.

Keywords: *Military industry, military spending, economic growth, economic development, national economy, military economy, dual-use goods*

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Տնտեսական աճը բարդ և բազմակողմանի տնտեսագիտական կատեգորիա է: Այն տվյալ երկրի տնտեսության զարգացման ամփոփ բնութագրիչ է, որը պայմանավորված է ոչ միայն արտադրական ռեսուրսներով, քաղաքականությամբ, օրենսդրությամբ, այլ նաև բազմաթիվ հոգեբանական և սոցիալական գործոններով:

Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսության կայուն աճը պայմանավորված է ոլորտի գործունեության ակտիվությամբ, ֆինանսական ռեսուրսների ներգրավմամբ՝ ապահովելով մրցունակություն իրենց տրամադրության տակ եղած ֆինանսական ռեսուրսների և կապիտալի շարժի ճիշտ կազմակերպման միջոցով: Հենց տնտեսական կայուն աճն է վկայում, որ ցանկացած տնտեսվարող սուբյեկտ կարող է կանգնել լուծարման կամ սնանկացման եզրին:

Տնտեսական աճը հիմնականում ընդունված է չափել 2 եղանակով, որպես համախառն ներքին արդյունքի կամ ազգային եկամտի աճ՝ որոշակի ժամանակաշրջանում կամ դրանց աճը բնակչության մեկ շնչի հաշվով: Օգտագործվում են նաև աշխատանքի արտադրողականությունը, արտադրության արդյունավետությունը, որոնք բացահայտում են հասարակական արտադրության զարգացման դինամիկան, տնտեսության մեջ քանակական փոփոխությունները¹:

Որակական տնտեսական աճը բացահայտելու համար անհրաժեշտ է տնտեսական աճի տեմպերը համադրել բնակչության հավելվածի տեմպերի հետ:

Էքստենսիվ տնտեսական աճ՝ արտադրության ծավալները աճում են արտադրական ծախսերի ավելացմանը համապատասխան՝ առանց դրանց արդյունավետության փոփոխության:

Ինտենսիվ տնտեսական աճ՝ արտադրության ծավալների աճը գերազանցում է արտադրության գործոնների ծախսերը:

Արտադրական ծավալները աճում են ավելի դանդաղ, քան արտադրության գործոնների ավելացումը, որը խոսում է դրանց օգտագործման արդյունավետության նվազման մասին:

Տնտեսական կայուն աճի տեմպերի ապահովման տեսանկյունից կարևորվում է ձեռք բերված մակրոտնտեսական կայունության ապահովումը: Դրա համար անհրաժեշտ են մակրոտնտեսական կայունությունը և տնտեսական կայուն տեմպերի պահպանմանը նպաստող հարկաբյուջետային քաղաքականությունը և ՀՀ կենտրոնական բանկի կողմից հուսալի և կանխատեսելի դրամավարկային քաղաքականության իրականացումը²:

Տնտեսության տնտեսական կայուն աճի գրավական է համարվում ոլորտի մրցակցության բարձրացումը, որին հիմնականում կօգնի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հաշվին արտադրական կարողությունների ընդլայնումը և արտահանման խթանումը:

Այս առումով կարևորվում է՝

1. միջազգային վարկի ձևավորում որպես ներդրումների գործարարության և զբոսաշրջության համար բարենպաստ և անվտանգ միջավայր,
2. գործարար միջավայրի շարունակական բարելավում և ներդրումների ներգրավման ակտիվ քաղաքականություն,
3. ազատ մրցակցություն և տեխնոլոգիաների ներդրման ու արտադրողականության աճի խթանում,
4. ֆինանսական միջնորդության էական ավելացում,

¹ Պ. Սամուելսոն, Տնտեսագիտության տեսություն:

² Daron Acemoglu & James Robinson. Why Nations Fail (Crown Publishing, 2012), 571 p.

5. ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների աշխարհագրական աճի խրախուսում,

6. նորամուծական համակարգի և տեղեկատվական հարմարության վերջնական ձևավորում¹:

Բարձր տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ է գործարար միջավայրի որակական բարելավումը: Հայաստանը վարկային ռեսուրսների մատչելիությամբ, ներդրումների պաշտպանվածությամբ, հարկերի վճարման ընթացակարգերի դյուրինությամբ, մաքսային ընթացակարգերի պարզեցմամբ և ըստ սովերային տնտեսության ծավալների համարվում է ոչ գործարար միջավայր:

Դիտարկենք գյուղատնտեսական նախարարության կողմից ներկայացված տնտեսական աճի ավելացման և նվազման ուղղությամբ ռիսկերը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Տնտեսական աճի ավելացման և նվազեցման ուղղությամբ ռիսկեր²

Տնտեսական աճի ավելացման ուղղությամբ ռիսկեր	Տնտեսական աճի նվազման ուղղությամբ ռիսկեր
<ul style="list-style-type: none"> • արտաքին ռիսկերը պայմանավորված Ռուսաստանի տնտեսական զարգացումների եղածից ավելի լավ զարգացումներով, • ՌԴ-ում արձանագրվող բարձր գնաճի շարունակության պայմաններում կբարձրանա հայկական ապրանքատեսակների գնային մրցունակությունը ՌԴ ապրանքային շուկաներում, որի պարագայում հնարավոր է արտահանման ավելացում, • տնտեսական աճի հետագա ավելացումը պայմանավորված է գյուղի զարգացմանը ուղղված կառավարության կողմից իրականացվող ծրագրերի և ոլորտում իրականացված ներդրումների ակնկալվող արդյունքները: 	<ul style="list-style-type: none"> • բնակլիմայական անբարենպաստ պայմանների հետևանքով ավելի ցածր աճի արձանագրում, որը կպահանջի լրացուցիչ ռեսուրսների ներդրում, դանդաղեցնելով կառավարության բարեփոխումները, • ամբողջական առաջարկի և պահանջարկի տեսանկյունից գնահատված ՀՆԱ-ի իրական աճի վրա էլեկտրաէներգիայի գների բարձրացման ազդեցությունը, կարող է բացասաբար ազդել տնտեսական աճի վրա, • տրանսֆերտների կանխատեսվածից պակաս ներհոսքը, կապված ՌԴ-ի հետ, կարող է սահմանափակել ներքին պահանջարկը, • էթե շարունակվի 2015թ. տնտեսական վարկավորման ցածր մակարդակը, այն կհանգեցնի տնտեսական աճի նվազմանը, • փոխարժեքի արժեզրկումը կարող է հանգեցնել արտաքին պարտքի սպասարկման լրացուցիչ բարդությունների, արտահանման և ներմուծման կառուցվածքային տեղաշարժերի:

Տնտեսության կայունացման գործընթացում գյուղատնտեսությունը ոչ միայն արտադրանքների խոշոր մատակարար է, այլև ապրանքների և ծառայությունների կարևոր սպառող, որի արդյունքում էլ մեծ ազդեցություն ունի տնտեսության կառուցվածքի ու տնտեսական աճի վրա: Միաժամանակ պետք է նշել այն իրողությունը, որ գյուղատնտեսական մթերքները արտադրվում են կլիմայական տարբեր պայմաններում, որոնց ծավալներն ու գները խիստ տարբերակված են և անկայուն³:

Հանրապետությունում դեռևս ձևավորված չեն այն բոլոր նախադրյալները, որոնք անհրաժեշտ են տնտեսության տարբեր ոլորտների, այդ թվում գյուղատնտեսության զարգացման համար: Ներկայումս հանրապետությունում ծառայել են ռազմավարական նշանակություն ունեցող պարենային ինքնաապահովվածության մակարդակի բարելավման, երկրի պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրներ, որոնք կարող են լուծվել առաջին հերթին տեղական արտադրության հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործման միջոցով, քանի որ անհրաժեշտ պարենի պահանջարկի 55-60%-ը բավարարվում է տեղական արտադրության հաշվին: Գյուղատնտեսությունը զգալի մասնաբաժին ունի Հայաստանի ՀՆԱ-ի մեջ

¹ Жукова И. В. Факторы, влияющие на экономический рост в сельском хозяйстве /И. В. Жукова // Молодой ученый, 2012, №2., .стр. 118-121.
² «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարություն» հաստատված ՀՀ կառավարության 11210 թիվ 1476:
³ Բայադյան Ա.Հ., Ֆինանսական վերլուծություն, Եր., «Լիմուշ», 2013, էջ 182:

և այն կլինի արդյունավետ, եթե աստիճանաբար նպաստի տնտեսական գործընթացների հետագա աճին: Այժմ ներկայացնենք տնտեսական աճը ապահովող որոշ ցուցանիշներ՝ ըստ 2007-2015թթ.:

Աղյուսակ 2

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը և տնտեսական աճը 2007-2015թթ.¹

Անվանումներ	2007թ	2008թ	2009թ	2010թ	2011թ	2012թ	2013թ	2014թ	2015թ
Գյուղատնտեսության համախառն արտադրանք, մլն դրամ	633	628	552	637	794	840	919	995	1002
այդ թվում՝									
բուսաբուծություն	430	406	347	393	465	511	572	605	605
անասնաբուծություն	203	222	205	244	329	329	346	388	396
Տնտեսական աճ ² (ՀՆԱ փոփոխություն), %	9.6	1.3	6.0	2.2	4.7	9.5	7.6	7.7	9.5
Գյուղատնտեսության մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում %	18.1	16.1	16.9	17.0	20.2	19.1	19.2	18.9	17.7

ԱՎԾ տվյալներ

Կատարված ուսումնասիրությունները՝ ըստ ասղյուսակ 2-ի վկայում են, որ Հայաստանում ըստ համախառն ներքին արդյունքի, տնտեսական աճի տեմպերը 2007-ին կազմել է 9,6%, 2008թ.՝ 1,3% և 2015թ.՝ 9,5%, արդյունքում այդ տարիներին գրանցվել է 0,1% անկում: Գյուղատնտեսության ոլորտում համախառն արտադրանքը, եթե 2007թ. կազմել է 633 մլրդ դրամ, ապա 2015թ.-ին այն եղել է 1002 մլրդ դրամ, ապահովելով 58.3% հավելաճի տեմպ: Միաժամանակ, գյուղատնտեսության համախառն արտադրանքում 2007թ.-ին բուսաբուծությունն ունեցել է 67.9%, իսկ անասնաբուծությունը՝ 32.1% մասնաբաժին, իսկ 2015թ.-ին այն համապատասխանաբար կազմել է 60.4% և 39.6%: Այսինքն՝ արդյունքում ի համեմատ 2007թ.-ի 2015թ.-ին բուսաբուծության ոլորտում եղել է նվազման միտում, իսկ անասնաբուծությունում՝ աճման միտում: Կայուն զարգացման ծրագրով ՀՆԱ-ում գյուղատնտեսության մասնաբաժինը դարձել էր 19,3%, 2007թ.-ին եղել է 18.1%, իսկ 2015թ.-ին՝ 17.7%: Այսինքն՝ գյուղատնտեսության բաժինը ՀՀ-ի ՀՆԱ-ում ունեցել է ոչ գծային տատանողական բնույթ:

Վերջին տարիներին գյուղատնտեսության ոլորտում իրականացված պետական քաղաքականության, ռազմավարական մի շարք միջոցառումների քաղաքականությունն իրականացնող մարմինների և տնտեսվարողների համատեղ հետևողական աշխատանքի արդյունքում կան որոշակի տեղաշարժեր՝ ոլորտի տնտեսական աճը կազմել է 6.9%, չնայած այն չի հանգեցրել գյուղատնտեսությունում զբաղվածության ավելացմանը: Տնտեսական աճի կարևոր բաղադրիչ է մրցակցության խթանումը³: Սակայն հայաստանյան շուկաներում մրցակցությանը խանգարում է շուկայի կառուցվածքը, իրավական սահմանափակող կարգավորումը, պետական վնասարար հովանավորությունը, պետական ուժեղ ձեռներեցների ներկայությունը, մրցակցության կանոնների անարդյունավետ կիրառումը:

Այժմ դիտարկենք գյուղատնտեսության ՀՆԱ-ի ծավալի, աշխատողների թվաքանակի, աշխատանքի արտադրողականության և աշխատուժի մասնակցության ցուցանիշները ուսումնասիրվող ժամանակահատվածում (ասղյուսակ 3):

¹ WWW.armstat.am

² www.parliament.am/draft_docs/5/k-862-arajarkutyunnnerov/12uxerc.Mas.1b.pdf

³ «Հայաստանի ազգային մրցակցության զեկույց» կառավարման պրակտիկայի բարելավման օրակարգը, «Տնտեսություն և արժեքներ», հետազոտական կենտրոն, «Ի-վի Քոնսալթինգ» ՓԲԸ 2012թ.:

Գյուղատնտեսության ՀՆԱ -ի ծավալի, աշխատողների թվաքանակի, մեկ աշխատողի հաշվով ՀՆԱ-ն և աշխատուժի մասնակցության ցուցանիշները 2007-2015թթ.¹

Ցուցանիշներ	2007թ	2008թ	2009թ	2010թ	2011թ	2012թ	2013թ	2014թ	2015թ
Գյուղատնտեսության ՀՆԱ-ի ծավալը, մլրդ դրամ	573,2	574,8	531,3	588,2	767,9	764,0	826,3	872,6	864,0
1. Գյուղատնտեսությունում աշխատողների թվաքանակը, հազ.մարդ	506,7	493,0	457,0	457,4	457,1	437,2	422,1	394,8	379,0
2. Մեկ աշխատողի հաշվով ՀՆԱ-ի ծավալը (տ1:տ2)	1.131	1.165	1.189	1,286	1.680	1.747	1.958	2.210	2.280
3. Գյուղատնտեսության ոլորտում աշխատուժի մասնակցությունը, %	45.9	44.1	39.5	38.6	38.9	37.1	36.3	34.8	36.5

Ըստ աղյուսակ 3-ի տվյալների, ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման, նկատելի է գյուղատնտեսությունում զբաղվածների թվի նվազում, որը ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման արդյունք է:

ՀՆԱ-ի մակարդակը քանակական ցուցանիշ է, իր կառուցվածքով այն չի կարող արտահայտել տնտեսական համակարգի իրական վիճակը: Այստեղ կարևորվում է տնտեսական աճի որակը, որը բարիքների արտադրության այն մակարդակն է, որտեղ ապահովում է հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացումը:

Մրցակցության վիճակը մտահոգիչ է հատկապես այն շուկաներում, որտեղ մրցակցության պակասը ոչ միայն արգելակում է տնտեսական աճին, այլև ազդում է գների մակարդակի վրա, որի հետևանքով նվազում է բնակչության բարեկեցությունը, թուլանում հայկական ապրանքների մրցակցությունը արտասահմանում:

Այսպիսով, յուրաքանչյուր երկրի տնտեսական քաղաքականության նպատակներից մեկը կայուն տնտեսական աճի ապահովումն է: Հայաստանը տնտեսական աճի ապահովման նոր ուղիների ներդրման կարիք ունի, որը պետք է ուղղված լինի տնտեսության մրցունակ ճյուղերի բացահայտմանը և արտահանելի հատվածի զարգացմանը:

¹ ՀՀ ԱՎԾ և ՀՀ ԳՆ տվյալներ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ԼԵՆԱ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Համառոտագիր

Տնտեսական կայուն աճը, շուկայական տնտեսության պայմաններում, պայմանավորված է ոլորտի գործունեության ակտիվությամբ, ֆինանսական ռեսուրսների ներգրավմամբ, ապահովելով մրցունակություն իրենց տրամադրության տակ եղած ֆինանսական ռեսուրսների և կապիտալի շարժի ճիշտ կազմակերպմամբ: Աղյուսակի տեսքով ներկայացված է տնտեսական աճի ավելացման և նվազման ուղղությամբ ռիսկերի դրվագներ, որոնք իրենց ազդեցությունն է ունենում ոչ միայն սննդամթերքի արտադրության, այլ նաև կայուն զբաղվածության, եկամուտների ապահովման և աղքատության մակարդակի նվազման գործում:

*Բանալի բառեր. տնտեսական աճ, ռիսկեր, գյուղատնտեսություն, մասնաբաժին, համախառն արտադրանք,
էքստենսիվ, ինտենսիվ, գործարար, արտադրության ծավալներ:*

ФАКТОРЫ, ОБУСЛОВЛИВАЮЩИЕ ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ В СЕЛЬСКОМ ХОЗЯЙСТВЕ

ЛЕНА МНАЦАКАНОВНА ОГАНИСЯН, *к.э.н.*

старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В условиях рыночной экономики устойчивый экономический рост обусловлен активностью в сфере сельского хозяйства, привлечением финансовых ресурсов, обеспечивающих конкурентоспособность путем правильной организации движения имеющихся в распоряжении сферы финансовых ресурсов и капитала. В виде таблицы представлены риски повышения и снижения экономического роста. Экономический рост выступает в качестве важнейшего показателя, обуславливающего развитие экономики, обеспечение занятости и уровень жизни населения, что оказывает влияние не только на производство продуктов питания, но и на обеспечение стабильной занятости, доходов и снижение уровня бедности.

*Ключевые слова: экономический рост, риски, сельское хозяйство, доля, валовый продукт, экстенсивный, интенсивный,
деловой, объемы производства.*

FACTORS ENSURING ECONOMIC GROWTH IN THE PROCESS OF DEVELOPMENT OF AGRICULTURE

LENA MNATSAKAN HOVHANNISYAN, *Candidate of Sciences (Economics)*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

In a market economy, sustainable economic growth is due to activity in the agricultural sector, the attraction of financial resources that ensure competitiveness through the proper organization of the mobility of available financial resources and capital. In the table the risks that increase and decrease the economic growth are identified. Economic growth is the most important indicator that determines the development of the economy, employment and the standards of living of the population, which has an impact not only on food production, but also on ensuring stable employment, income and poverty reduction.

Keywords: Economic growth, risks, agriculture, share, gross product, extensive, intensive, business, production volume

ՄԵՐԻ ԱՐՄԵՆԻ ԴՈՒԲԱՍԱՐՅԱՆ,

*ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող,*

ՔՆԱՐԻԿ ՎԱԼԵՐԻԻ ԶԱԼԱԼՅԱՆ,

*ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

ՆԵՐՔԻՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Արդի աշխարհում ներդրումները մեծ դեր և կարևոր նշանակություն ունեն: ՀՀ տնտեսության զարգացման և յուրաքանչյուր երկրի գերխնդիրներից մեկը դա ներդրումների խթանման ճիշտ ռազմավարության մշակումն ու իրականացումն է: Ներդրումների ծավալի ավելացումը հանգեցնում է զբաղվածության, ինչպես նաև արտադրության ու եկամուտների աճին և դրա հետ մեկտեղ գործազրկության և աղքատության մակարդակի կրճատմանը: Ներդրումների ճիշտ խթանումը ՀՀ-ի քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում: Ճիշտ և մտածված քաղաքականության շնորհիվ հնարավոր կլինի օտարերկրյա ներդրողներին ապահովել բարենպաստ ներդրումային միջավայր, ինչն էլ կնպաստի ներդրումների ծավալների ավելացմանը:

Ներդրումը իրենից ներկայացնում է կարևոր տնտեսական ռեսուրս, որը նպաստում է կազմակերպության մրցունակության և արդյունավետության բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության զբաղվածության ավելացմանը¹: Գոյություն ունեն ներդրումների տարբեր սահմանումներ:

Շարալի «Ինվեստիցիաներ» դասագրքում, առավել լայն իմաստով, ներդնել նշանակում է «փողից բաժանվել այսօր՝ ապագայում ավելի մեծ գումար ստանալու ակնկալիքով»²: Բլանկի «Ֆինանսական մենեջմենթի հիմունքները» գրքում ներդրումները սահմանվում են որպես կապիտալ ներդրումներ ձեռնարկատիրական գործունեության մեջ դրամային, նյութական և ոչ նյութական տեսքով՝ ընթացիկ եկամուտ ստանալու կամ ապագայում արժեքը բազմապատկելու նպատակով³: Այսինքն, եթե փորձենք ընդհանրացնել այս սահմանումները, ապա կարող ենք հանգել նրան, որ ներդրումները իրենցից ներկայացնում են փողի շարժ, որի հիմնական նպատակը եկամուտի ստացումն է:

Ներդրումները կարող են մեծ դեր ունենալ ընդունող երկրի տնտեսության վրա:

Տնտեսական աճի վրա ներդրումներն ազդում են հետևյալ կերպ.

1. Ներդրումները բերում են արտադրության աճի, որն էլ հանգեցնում է տնտեսական աճի:
2. Ներդրումների հետևանքով արտադրության աճը բերում է արտահանման ծավալների ավելացման, որը բերում է օտարերկրյա արժույթի ներհոսք դեպի տնտեսություն: Օտարերկրյա արժույթի ներհոսքը մի դեպքում կարող է օգտագործվել անձնական նպատակներով, իսկ մյուս դեպքում բերել տնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների ներհոսքի, որը կբերի արտադրողականության աճի և, հետևաբար, տնտեսական աճի:
3. Ներդրումները կարող են բերել մրցակցության աճի, որը կհանգեցնի արդեն գործող ձեռնարկություններում տեխնոլոգիաների ներդրման, դա էլ կբերի արտադրության աճի և, հետևաբար, տնտեսական աճի:


Վերը ասվածը կարող ենք առավել պատկերավոր տեսնել գծապատկեր 1-ում:

¹ Кокшарова Н., Экономическая оценка инвестиций, Сыктывкар, 2012, стр. 4.

² Sharpe W., Alexander G., Bailey J., Investments, Fifth edition, Prentice Hall International, 2001, p. 1.


³ Бланк И.А., Основы финансового менеджмента. М.: Омега-Л, 2011, стр. 203.

Այսպիսով՝ մենք վերլուծեցինք տնտեսական աճի և զբաղվածության վրա ներդրումների ազդեցության հնարավոր ուղիները: Այժմ անդրադառնանք ՀՀ ներդրումների դինամիկային:



Գծապատկեր 3. ՀՀ տնտեսության ընդհանուր ներդրումները 2000-2015թթ. մլն. դրամ¹

Գծապատկեր 3-ում փորձել ենք վերլուծել ՀՀ տնտեսության ընդհանուր ներդրումները 2000-2015թթ. ընկած ժամանակահատվածում: Ինչպես տեսնում ենք, ուսումնասիրվող ժամանակաշրջանում աճի կտրուկ միտում նկատելի է 2005-2008թթ.՝ համապատասխանաբար 2005թ.՝ 683,323 մլն.դրամ, 2006թ.՝ 953,735 մլն. դրամ, 2007թ.՝ 1,189,880 մլն. դրամ, իսկ 2008թ.՝ 1,458,375 մլն. դրամ: Սակայն հաջորդող տարիներին հիմնականում գրանցվել է նվազման միտում՝ 2009թ. կազմելով՝ 1,089,201 մլն. դրամ, 2010թ.՝ 1,137,342 մլն. դրամ, 2011թ.՝ 1,030,648 մլն. դրամ, 2012թ.՝ 1,016,492 մլն. դրամ, 2013թ.՝ 937,557 մլն. դրամ, 2014թ.՝ 939,825 մլն. դրամ և 2015թ.՝ 975,371 մլն. դրամ:



Գծապատկեր 4. ՀՀ ՕՈՒՆ-ների հոսքերը 2000-2015թթ. մլն. դոլար²

Ուսումնասիրելով օտարերկրյա ուղղակի ներդրումների վերաբերյալ 2000-2015թթ. վիճակագրական տվյալները, կարող ենք եզրակացնել, որ ներդրումների կտրուկ աճ է գրանցվել 2004թ.-ից՝ կազմելով 247,5 մլն. դոլար, ինչը նշանակում է, որ 2004թ.-ից այդ ներդրումների ծավալները սկսում են դրական միտումներ ձեռք բերել: Նման դրական դինամիկան պայմանավորված էր կապի ոլորտում կատարվող ներդրումների հետ:


¹ Տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ վիճակագրության էլ. տվյալների բազայից՝ <http://armstat.am/am/?nid=263>, 2014թ., 2015թ. տվյալները մեր կողմից վերահաշվարկվել են նախորդ ժամանակահատվածի տվյալների հետ համեմատելու նպատակով՝ ՀՀ ԱՎԾ-ի կողմից տրամադրված տվյալների հիման վրա:

² <http://armstat.am/am/?nid=443> տվյալները՝ 2016թ. փետրվարի 9-ի դրությամբ:

Ինչպես երևում է գծապատկեր 4-ից, ներդրումներն առավելագույն մակարդակի են հասել 2008թ.՝ ճգնաժամային տարում, կտրուկ անկում ապրելով 2011թ.-ին: Նշենք նաև, որ 2008թ.-ի ներդրումների աճը պայմանավորված էր հիմնականում բնակարանային շինարարությամբ:

Վերջին վեց տարիների ընթացքում նկատելի է ներդրումների անկում: 2010թ.-ին՝ 521.4 մլն. դոլար, 2011թ.-ին՝ 437.3 մլն. դոլար, 2012թ.-ին՝ 480.8 մլն. դոլար, 2013թ.-ին՝ 319.5 մլն. դոլար, 2014թ.-ին՝ 388.3 մլն. դոլար, 2015թ.-ին՝ 161.7 մլն. դոլար: Ըստ վիճակագրության ՀՀ-ում ներդրումները տարեցտարի նվազում են: 2015թ.-ին օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմել են՝ 161.7 մլն.դոլար, նախորդ տարվա համեմատ նվազելով՝ 58%-ով, իսկ 2008թ.-ի ցուցանիշի համեմատ՝ 82.5%-ով, գրեթե հավասարվելով 2003թ.-ի ցուցանիշին: Նման ցուցանիշը լուրջ մտահոգություն է առաջացնում: Ներդրումների կրճատումը որոշ չափով պայմանավորված է մի քանի խոշոր ծրագրերի, մասնավորապես «Զվարթնոց» օդանավակայանի նոր տերմինալի կառուցման, նաև «Օրանժ Արմենիայի» ներդրումային ծրագրերի ավարտով:

Պարզ է դառնում, որ եթե նվազել են օտարերկրյա ուղղակի ներդրումները, ապա առաջին հերթին դա ենթադրում է, որ ՀՀ-ն որպես ներդրումային երկիր կորցնում է իր գրավչությունը: Մակայն հարկ է նշել, որ բարենպաստ պայմաններ ստեղծելու դեպքում ներդրումային խոշոր ծրագրեր կարող են իրականացվել՝ կանխելով ներդրումային ներհոսքերը:



Գծապատկեր 5. ՀՀ-ում 4%-ից բարձր ՕՈՒՆ-ների հոսքերն՝ ըստ ճյուղային բաշխվածության 2015թ. %¹

Փորձենք դիտարկել օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի բաշխվածությունն ըստ ոլորտների: Վերլուծության մեջ ներառել ենք 2015թ. վերջին ցուցանիշները: Նշենք նաև, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսանկյունից տարիներ շարունակ հետաքրքրություն են ցուցաբերվում հետևյալ ոլորտներին՝ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման, ինֆրակառուցվածքի զարգացման, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, ցամաքային տրանսպորտի գործունեության, հեռահաղորդակցության և անշարժ գույքի ոլորտներում: Գծապատկերից պարզ է դառնում, որ 2015թ. ներդրումների մեծ մասը բաժին է ընկնում էլեկտրականության, գազի գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտին, որը 2015թ. կազմել է 33%: Նշենք նաև, որ վերոնշյալ ոլորտում գլխավոր ներդրող երկրները 2015թ. Ռուսաստանը, Կիպրոսը, Լյուքսեմբուրգն են: Երկրորդ գերակա ոլորտը հեռահաղորդակցության ոլորտն է, որտեղ համապատասխանաբար 2015թ. կազմել է 22%: Տվյալ ոլոր-

¹ <http://armstat.am/am/?nid=246> տվյալները 2016թ. փետրվարի 9-ի դրությամբ:

տում ներդրումների ներհոսք է տեղի ունեցել՝ Ֆրանսիայից, ՌԴ-ից, Սեյշելներից և Լիբանանից: Երրորդ գերակա ոլորտը հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտն է: Ի տարբերություն նախորդող երկու ոլորտներին այստեղ 2015թ. կտրուկ նվազման միտում է գրանցվել՝ կազմելով 8%: 2015թ.-ին ներդրող երկրներն են՝ Կիպրոսը, Գերմանիան, Շվեյցարիան, իսկ խմիչքի ոլորտում կատարվել է 6%-ի ներդրում: Ներդրումների ներհոսքը եղել է Ֆրանսիայից, Լյուքսեմբուրգից և Միացյալ Թագավորությունից: Անշարժ գույքի ոլորտում ներդրումները կազմել են 5%: Ներդրումների մեծ մասը կատարվել են ՌԴ-ից: 2015թ. ցամաքային տրանսպորտի գործունեությանը բաժին է ընկել 5% ներդրումներ:

Ինչպես տեսնում ենք ներդրումային նվազումներից հատկապես տուժել են հետևյալ ոլորտները՝ հանքագործական արդյունաբերության հարակից գործունեության ոլորտը, որտեղ ներդրումային հոսքերը 2007թ.՝ նախաձգնաժամային ժամանակաշրջանի հետ համեմատած կրճատվել են 9%-ով, էլեկտրականության, գազի և գոլորշու մատակարարման ոլորտը (5% կրճատում), ինչպես նաև հաղորդակցության ոլորտը, որտեղ ներդրումների հոսքերը նվազել են 4%-ով:

Հարկ է նշել, որ ներդրումների տեսանկյունից գրավիչ լինելու համար ՀՀ-ին անհրաժեշտ է ռազմավարության համալիր մշակում և իրականացում, քանզի ՀՀ-ի ներդրումային քաղաքականության հիմնական նպատակը բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումն է և ներդրումների ծավալների մեծացումը: Օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսանկյունից կարևոր է նաև ընդլայնել պետության կողմից կիրառվող միջոցառումների ընդհանուր ցանկը, հարկային և մաքսային մի շարք արտոնություններին զուգահեռ կիրառել նաև վարկային արտոնություններ:

ՆԵՐՔԻՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՄԵՐԻ ԱՐՄԵՆԻ ԴՈՒԲԱՍԱՐՅԱՆ,

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող,

ՔՆԱՐԻԿ ՎԱԼԵՐԻԻ ԶԱԼԱԼՅԱՆ,

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ

Համառոտագիր

Ներդրումների խթանումը դարձել է առանձին երկրների կողմից վարվող տնտեսական քաղաքականության առանձին ուղղություն: Արդի ժամանակաշրջանում ներդրումները կարևոր ազդեցություն ունեն տնտեսության վրա: Այդ է պատճառը, որ յուրաքանչյուր երկրի հիմնական խնդիրներից մեկը հանդիսանում է դրանց ներգրավումը և ծավալների մեծացումը: Հոդվածում քննարկվում են ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի և զբաղվածության վրա, դրա հետ մեկտեղ ներկայացվում է նաև ՀՀ ներդրումների ընդհանուր դինամիկայի վերլուծությունը:

Բանալի բառեր. *Ներդրումներ, տնտեսական աճ, արտադրության աճ, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, ներհոսք, զբաղվածություն, ճյուղային բաշխվածություն, վերլուծություն:*

МЕХАНИЗМЫ ФОРМИРОВАНИЯ И РАСПРЕДЕЛЕНИЯ ОТЕЧЕСТВЕННЫХ И ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ В РА

МЕРИ АРМЕНОВНА ГУБАСАРЯН

младший. научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

КНАРИК ВАЛЕРОВНА ДЖАЛАЛЯН

экономист 1 категории Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Стимулирование инвестиций стало новым направлением экономической политики, проводимой со стороны отдельных стран. В настоящее время инвестиции оказывают существенное влияние на экономику. В этой связи одной из главных проблем каждой страны является привлечение инвестиций и увеличение их объемов. В статье рассматривается влияние инвестиций на экономический рост и занятость, а также представляется анализ общей динамики инвестиций в РА.

Ключевые слова: *инвестиции, экономический рост, рост производства, прямые иностранные инвестиции, приток, занятость, отраслевое распределение, анализ.*

MECHANISMS OF FORMATION AND DISTRIBUTION OF DOMESTIC AND FOREIGN INVESTMENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

MERI ARMEN GHUBASARYAN

Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

KNARIK VALERI JALALYAN

First Level Economist, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Investment Promotion has emerged as a new direction of the economic policy that is carried out by various nations. The studies show that investments have a significant impact on the economy. Therefore, one of the main issues each country faces is the attraction of investments and the continuous increase of thereof. The article discusses the impact of investments on the economic growth and employment, and provides the analysis of general investment dynamics in the Republic of Armenia.

Keywords: *Investments, economic growth, production growth, foreign direct investment, inflow, employment, sectorial distribution, analysis*

ԱՆԱՅԻՏ ՍՈՒՐԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի տնտեսագետ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԻՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Տնտեսական աճի ապահովումը հանդիսանում է Հայաստանի տնտեսության զարգացման և առաջընթացի ապահովման հիմնական նպատակը:

Ցանկացած երկրի տնտեսությունը իրենից ներկայացնում է բազմառոտ արտադրատնտեսական համալիր, որն իր գործառույթների բնույթից կախված դասվում է ապրանք արտադրող (գյուղատնտեսություն, արդյունաբերություն, շինարարություն և այլն) կամ շուկայական և ոչ շուկայական ծառայություն մատուցող ոլորտներին: Ուստի, որպես արտադրատնտեսական գործունեություն իրականացնող և ծառայություններ մատուցող ոլորտ, շինարարությունն իրենից ներկայացնում է ազգային տնտեսության առանձին ինքնուրույն ճյուղ, որը նախատեսում է նոր օբյեկտների գործարկում, ինչպես նաև գործող արտադրական և ոչ արտադրական նշանակության շենքերի ու շինությունների հիմնանորոգում (վերակառուցում, վերականգնում, ուժեղացում), ընդլայնում, արդիականացում, տեխնիկական վերազինում:

Շինարարության գործընթացում ստեղծվում են ոչ միայն առարկայական բարիքներ՝ անուղղակիորեն բավարարելով հասարակության պահանջները (օրինակ, բնակարանային շենքերի կառուցում), այլ նաև ձևավորվում է տնտեսության մնացած ոլորտների գործունեության նյութական հիմքը՝ կապված արտադրական կառույցների և շինությունների, ճանապարհների, հասարակական նշանակության շենքերի և այլնի հետ: Վերը նշվածներն իրենց էությամբ կազմում են ցանկացած արտադրության նյութական հիմքը և դրա հիմնական միջոցները: Տնտեսական աճի պայման է հանդիսանում ընդլայնված վերարտադրությունը, որն անհնար է առանց լրացուցիչ ներդրումների և նոր արտադրական հզորությունների ու օբյեկտների կառուցման¹:

Ի տարբերություն տնտեսության այլ ոլորտների, որպես նյութական արտադրության ոլորտ շինարարությունն ունի ոլորտին հատուկ մի շարք առանձնահատկություններ, որոնք բացատրվում են դրա վերջնական արտադրանքի բնույթով, աշխատանքի տիպիկ պայմաններով, գործածվող մի շարք յուրահատուկ տեխնիկայով, տեխնոլոգիաներով, արտադրության կազմակերպմամբ, կառավարմամբ և նյութատեխնիկական ապահովմամբ:


Շինարարության հիմնական դերը երկրի տնտեսության դինամիկ զարգացման պայմանների ստեղծումն է: Ըստ ՀՀ վիճակագրական տվյալների (2006-2015թթ.) համախառն ներքին արդյունքում շինարարության բաժինը վերջին տարիներին ունի նվազման միտում և կազմում է մոտ 9,6% (տե՛ս աղյուսակը և գծապատկերը): Համեմատության առումով հարկ է նշել, որ Վրաստանի Հանրապետությունում այդ ցուցանիշը կազմել է 17,5%² (2015թ.): ՀՀ-ում առավել մեծ տեսակարար կշիռ գրանցվել է 2006 թվականի ՀՆԱ-ի կազմում՝ 24,24%, որը մոտ 2,5 անգամ ավել է 2015թ.-ի ցուցանիշից: Ընդ որում 2006-2008 թվականներին շինարարության ծավալներն աճել են հասնելով մինչև 858680,1 մլն դրամի, իսկ հետագա տարիներին նկատվում է նվազման միտում, և 2015 թվականին 2008 թվականի համեմատությամբ շինարարության ծավալը կրճատվել է մոտ 1,8 անգամ: Մինչդեռ ՀՆԱ-ի ցուցանիշը վերջին 10 տարիներին ունի աճման միտում և 2008թ.-ի համեմատությամբ 2015թ.-ին ավելացել է 1,4 անգամ:

¹ Т.Ю. Овсянникова, [Экономика строительного комплекса](#), Учебное пособие – Томск: Изд-во Томск. гос. архит.-строит. ун-та, 2003. – 239 с.

² <http://geostat.ge>

ՀՀ շինարարության ոլորտի ցուցանիշներն ըստ 2006-2015թթ.¹

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
ՀՆԱ, մլն դրամ (համախառն, շուկայական գներով)	2656189,8	3149283,4	3568227,6	3141651,0	3460202,7	3777945,6	4266460,5	4555638,2	4828626,3	5032089,0
Շինարարության ծավալը, ընդամենը, մլն դրամ	643827,8	671029,0	858680,1	579740,7	588807,7	504824,5	479415,6	453449,3	463858,0	481496,9
Շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	24,24	21,31	24,06	18,45	17,02	13,36	11,24	9,95	9,61	9,57
Զբաղվածներ, ընդամենը, 1000 մարդ (միջին տարեկան)	504,3	506,7	493,0	496,2	500,7	1175,1	1172,8	1163,8	1133,5	1072,6
Այդ թվում՝ շինարարություն	29,7	31,1	60,4	49,5	56,3	67,4	69,1	66,1	58,6	49,9
Շինարարության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը ՀՀ-ում, %	5,9	6,1	12,3	10,0	11,2	5,7	5,9	5,7	5,2	4,7



Գծայատկեր 1. ՀՀ ՀՆԱ-ի և շինարարության ծավալների փոփոխությունն ըստ 2005-2015թթ.

Շինարարության ոլորտը կարելի է դիտարկել որպես զբաղվածության ձևավորման և աշխատատեղերի տրամադրման մեխանիզմ՝ հազարավոր որակավորում չունեցող, թերի որակավորում և որակավորում ունեցող աշխատուժի համար: ՀՀ շինարարության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը վերջին տարիներին զգալի նվազել է: ՀՀ տվյալներով զբաղվածների կազմում 2008 թվականին շինարարությամբ զբաղվողների տեսակարար կշիռը կազմել է 12,3%, ինչը 2015թ.-ին նվազել է 7,6 տոկոսային կետով: Այն պարագայում, երբ զբաղվածների թիվը 2008 թվականին կազմել է 493 հազար մարդ, իսկ 2015 թվականին հավելաձի տեմպը կազմել է 117,6%, իսկ շինարարությամբ զբաղվողների թիվը 2008 թվականին կազմել է 60,4 հազար և նվազել 14,7%-ով: Շինարարությունը շահույթի ձևավորման գլխավոր դերակատարում ունի նաև ֆորմալ և ոչ ֆորմալ հատվածներում: Այն ավելացնում է նաև արտարժույթի հոսքը,

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2011, 2016:

որը ստացվում է շինարարական նյութերի առևտրից և ինժեներական ծառայությունների մատուցումից:

Շինարարության ոլորտը, հանդիսանալով ծախսատար, աշխատատար ոլորտ և ունենալով փոխհատուցման երկար ժամկետ, կազմում է ցանկացած երկրի տնտեսության անբաժան մասը: Ոլորտի զարգացումը զգալի ազդեցություն ունի հասարակության, տնտեսության և շրջակա միջավայրի վրա, այն անդրադառնում է առօրյա կյանքի որակի վրա: Շինարարության ծավալների կրճատումը տանում է ոլորտում ընդգրկված աշխատողների շրջանում գործազրկության, որն էլ մասնագետների արտագաղթի պատճառ է դառնում:

Թեև, համաձայն մարզերի զարգացման մի շարք ծրագրերի, վերջին տարիներին մարզերում նկատվում է շինարարության գծով աշխուժացում, այնուհանդերձ 2015 թվականին շինարարության 63,7%-ը բաժին է ընկել Երևանին, իսկ մարզերում տատանվում է 2,1-5,6%:

Հայաստանյան շինարարության մեջ զգալի բաժինը կազմում են հասարակական և բնակելի նշանակություն ունեցող շենքերը, տեսակարար կշռով երկրորդ տեղում է տրանսպորտային շինարարությունը (10,3%, 2015թ.): Ըստ ֆինանսավորման աղբյուրների, շինարարության ծավալների կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ կազմում են կազմակերպությունների միջոցները՝ 216192,11 մլն դրամ կամ 44,9% (2015թ.), մինչդեռ 2006-2008թթ.-ին բնակչության միջոցներով կատարվող շինարարությունը կազմել է մինչև 599358,71 մլն դրամ կամ 69,8%: Պետական բյուջեի և համայնքների միջոցներով ֆինանսավորվող շինարարությունը միասին կազմել է 83298,97 մլն դրամ (2015թ.), որը ընդամենի մեջ կազմում է 17,3%:

Շինարարության ոլորտն, առավել քան տնտեսության որևէ այլ ոլորտ, խոցելի է պետական քաղաքական որոշումների հանդեպ: Օրինակ, հատկապես բարձր տոկոսադրույթների պարագայում հնարավոր է բնակարանների պահանջարկի անկում: Շինարարության ծավալի ոչ զգալի փոփոխությունն անմիջականորեն ազդում է ոչ միայն ոլորտի ներսում զբաղվածության մակարդակի և շինարարական արտադրանքի ծավալների վրա, այլ նաև այն ոլորտների, որոնք փոխկապակցված են շինարարության ոլորտի հետ:

Շրջակա միջավայրի վրա իր ազդեցությամբ շինարարությունը հանդիսանում է գլխավոր անտրոպոգեն գործոններից մեկը, և այդ միջավայրի վրա ազդեցությունը տեղի է ունենում ինչպես բուն շինարարության ժամանակ, այնպես էլ արդեն պատրաստի օբյեկտների շահագործման ժամանակ: Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա աղտոտման հիմնական գործոններ են համարվում՝ հողային աշխատանքները, շինարարության համար օգտագործվող նյութերը, ապամոնտաժման աշխատանքները, շինարարական տեխնիկայի օգտագործման կողմնակի արտադրանքը, շրջակա միջավայրի և առաջին հերթին մարդու վրա աղմուկի ու դրանց տատանումների ազդեցությունը: Շինարարության ավարտից հետո, շինությունների շահագործման դեպքում առաջանում են նոր խնդիրներ, որոնցից կարող ենք թվարկել՝ արևային լուսավորության ռեժիմի խախտումը (ինսոլյացիա), տարածքի հողմային, հիդրոլոգիական ռեժիմների խախտումը, բուսականության նվազեցումը, փոշեծածկը, հողի, ջրի և ջերմային աղտոտվածությունը և այլն¹:

Վերը նշված խնդիրների լուծումներն անհրաժեշտություն են առաջացնում ընդունելու մի շարք նորմատիվ իրավական փաստաթղթեր և առաջնորդվել դրանցով:

Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի հոդված 16-ի համաձայն քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգն այդ ոլորտի գործունեության պետական կարգավորման միջոց է, որը սահմանում է հուսալիության, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ, հաշմանդամների տեղաշարժման մատչելիությունն ապահովող և այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ, ինչպես նաև նախագծման, իրականացման ու շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ, այդ թվում՝ օբյեկտին, առանձին շենքին, շինությանը, կոնստրուկցիային կամ շինարարական նյութերին ներկայացվող պահանջներով: Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը կազմում են քաղաքաշինական բնագավառի իրավական ակտերի համակարգի բաղկացուցիչ

¹ <https://www.scienceforum.ru/2015/927/14402>

մասը և հիմք են ծառայում փորձաքննության, քաղաքաշինական գործունեության վերահսկողության, վիճելի հարցերի լուծման համար¹:

Այս կերպ ՀՀ կառավարությունը ձգտում է վերահսկել կորուստները և փոխհատուցել վնասները, բայց և այնպես շատ հաճախ կապալառուները անփույթ են վերաբերվում մի շարք պահանջներին, իսկ վերահսկողության աշխատակիցներն իրենց հերթին օգտվում են լիազորություններից և «աչք են փակում» տարբեր խախտումների վրա:

Շինարարության ոլորտում գործում են մեծ քանակությամբ տարբեր կազմակերպություններ, որոնք մասնակցում են նոր օբյեկտների և արտադրական ուժերի ստեղծմանն ու ձևավորում են շինարարական համալիր: Վերջինս միջձյուղային տնտեսական համալիր է, որն իրենից ներկայացնում է նյութական արտադրության ոլորտի և նախագծադիզայնի և աշխատանքների միաձուլում, որն էլ ապահովում է հիմնական միջոցների վերարտադրությունը: Միաժամանակ շինարարական համալիրն իրականացնում է շինարարական օբյեկտների ստեղծման աշխատանքների ամբողջ գործընթացը՝ նախագծումից մինչև գործարկում, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական բազայի և նյութական ռեսուրսների արտադրություն:

Երկրի տնտեսության ծանր վիճակով պայմանավորված՝ ոլորտի ֆինանսավորման ցածր մակարդակը, կատարվող շինարարության առկա թերություններն ու թերացումները պահպանվելու դեպքում, ավելի կքայքայվի եղած համակարգը, իսկ արդյունքում այդ համակարգի վերականգնմանն ու բարելավման համար պահանջվող ներդրումների չափը կկրկնապատկվի:

Հայաստանի տարածքն ամբողջությամբ բնութագրվում է որպես սեյսմավտանգ, ինչպես նաև վտանգավոր արտածին երկրաբանական գործընթացների (սողանքներ, փլուզումներ, քարաթափեր, սելավներ և այլն) լայն տարածվածությամբ ու տեխնածին երևույթների զարգացվածությամբ: Հետևաբար, գործ ունենալով մարդկային կյանքի հետ՝

- խստագույնս պահպանել շինարարության ոլորտում ընդունված նորմատիվները, հստակեցնել համապատասխան օրենսդրական պահանջների կատարման համար պատասխանատու պետական մարմինն ու ամրագրել համապատասխան փաստաթղթերում և արդյունավետ դարձնել իրավակիրարկման մեխանիզմները,
- շինարարության ընթացքում պահպանել քաղաքի կամ մարզի ճարտարապետաշինարարական դիմագիծը և մեծ ուշադրություն դարձնել պատմամշակութային արժեք հանդիսացող շինությունների ժամանակին կատարվող վերականգնման, ուժեղացման աշխատանքներին, ազատվել ապօրինի շինություններից, բակերը վերադարձնել երեխաներին և նոր շինարարություն սկսել ոչ թե ի հաշիվ կանաչ գոտիների, այլ առկա չջահագործվող տարածքների,
- ավելացնել շրջակա միջավայրի վնասի փոխհատուցման չափը, ընդ որում նախօրոք սահմանված ավել փոխհատուցման չափը կարելի է նպատակաուղղել նոր կանաչ տարածքների ստեղծմանը, իսկ տարածքի ընտրության, կատարվող աշխատանքի վերահսկողության և ինամքի պատասխանատվությունը համապատասխանաբար հանձնել բնապահպանության նախարարությանը և վարչական շրջաններին,
- ուսումնասիրել և վարչական պատասխանատվության ենթարկել նախկինում ծառահատումների, կանաչ տարածքների հաշվին կատարված շինարարության պատասխանատու և ղեկավար մարմիններին ու շինարարության թույլտվության լիազորություն ունեցող պատգամ մարմիններին, ինչպես նաև կատարված որակական չափանիշներին չհամապատասխանող շինարարության պատասխանատուներին, իսկ հավաքագրված գումարները նպատակաուղղել ոլորտում առկա խնդիրների լուծմանը:

¹ ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին, 1998թ.:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԳՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՆԱՅԻՏ ՍՈՒՐԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնտեսագետ

Համառոտագիր

Որպես երկրի տնտեսության անբաժան մաս, շինարարության զարգացման տեմպերն արտացոլում են ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը: Նշենք, որ 2015 թվականին 2008թ.-ի համեմատությամբ շինարարության ծավալը կրճատվել է մոտ 1,8 անգամ: Մինչդեռ ՀՆԱ-ի ցուցանիշը վերջին 10 տարիներին ունեցել է աճման միտում և 2008թ.-ի համեմատությամբ 2015թ.-ին ավելացել է 1,4 անգամ: Շինարարության ծավալների կրճատումը գործազրկության աճի խթան է հանդիսանում, որն էլ իր հերթին դառնում է արտագաղթի պատճառ:

Բանալի բառեր. շինարարություն, տնտեսական աճ, համախառն ներքին արդյունք, նորմատիվներ, աշխատանքային ռեսուրսներ, զբաղվածություն, գործազրկություն, շրջակա միջավայր:

СТРОИТЕЛЬНАЯ ОТРАСЛЬ В ДЕЛЕ ОБЕСПЕЧЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА РА

АНАИТ СУРИКОВНА МАРГАРЯН

экономист Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Темпы развития строительства как неотъемлемая часть экономики страны отражают социально-экономическую ситуацию в РА. Отметим, что объем строительства в 2015 году по сравнению с 2008 годом снизился примерно в 1,8 раза. Между тем, за последние 10 лет показатель ВВП имел тенденцию к росту и в 2015 году по сравнению с 2008 годом он вырос в 1,4 раза. Сокращение объемов строительства является стимулом для роста безработицы, которая в свою очередь становится причиной эмиграции из Армении.

Ключевые слова: строительство, экономический рост, валовой внутренний продукт, стандарты, трудовые ресурсы, занятость, безработица, окружающая среда.

THE ROLE OF THE CONSTRUCTION INDUSTRY IN ENSURING THE ECONOMIC GROWTH IN THE REPUBLIC OF ARMENIA

ANAHIT SURIK MARGARYAN

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The construction industry is an indispensable part of the economy of the country and the pace of its development illustrates the socioeconomic situation in the Republic of Armenia. Notable, in 2015 the volume of construction decreased 1.8 times vis-a-vis 2008 at the same time while the GDP had a growing tendency in the last decade increasing 1.4 times in 2015 vis-a-vis 2008. The decrease of the volumes in the construction industry boosts the unemployment, resulting in emigration from Armenia.

Keywords: Construction, economic growth, gross domestic product, standards, labor resources, employment, unemployment, environment

**ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՏԵՂԸ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Էներգիան, ինչպես կապիտալն ու աշխատուժը, արտադրության և հասարակության առաջընթացի կարևոր գործոն է, ժամանակակից քաղաքակրթության զարգացման և գոյության անփոխարինելի ու կարևորագույն բաղկացուցիչ¹: Չնայած վերջին տարիներին էներգախնայող տեխնիկական միջոցների, այդ թվում լուսավորության սարքերի, շինարարության բնագավառում ջերմամեկուսիչ նյութերի, բնական լուսավորության և էներգախնայող այլ էլեմենտների լայն կիրառմանը, ինչպես նաև ռադիոէլեկտրոնային սարքավորումների էներգատարության բազմակի կրճատմանը և գիտատեխնիկական առաջընթացի այլ ձեռքբերումներին, մինևույն է, էլեկտրաէներգիայի համաշխարհային սպառումը ինչպես բացարձակ մեծությամբ, այնպես էլ մեկ բնակչի հաշվով տարեցտարի աճում է: Էլեկտրաէներգիայի սպառման և տնտեսական աճի միջև կապի բացահայտմանն ուղղված հետազոտությունների ուսումնասիրությունը թույլ է տվել եզրակացնելու, որ էլեկտրականությունը տնտեսական աճի սահմանափակող փոփոխական է, որի մատակարարման շնկերը բացասական ազդեցություն են թողնում տնտեսական աճի մեծության վրա²:


Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ փլուզումից հետո ստացել է էլեկտրաէներգիայի արտադրության լուրջ հզորություններ: Զբաղեցնելով մոտ 30 հազ քառ. կմ տարածք (ըստ զբաղեցրած տարածքի դասակարգմամբ՝ 138-րդ պետությունը) և ունենալով շուրջ 3 մլն բնակիչ (ըստ բնակչության թվաքանակի դասակարգմամբ՝ 136-րդ պետությունը)³ Հայաստանը մեկն է այն 31 երկրներից, որն ունի և շահագործում է միջուկային ռեակտոր, տիրապետում է շուրջ 2.4 գվտժ ջերմային և 1.3 գվտժ հիդրոէներգետիկ տեղակայված արտադրական հզորություններ: Էներգետիկ հզորություններով ապահովվածությունն իր դրոշմն է թողել նաև բնակչության էներգաապահովվածության բարձր ցուցանիշի վրա: Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկի չափորոշիչներով դասվում է միջին եկամուտներով երկրների ստորին խմբին: Աղյուսակ 1-ում և գծապատկեր 1-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ինչպես մեկ բնակչի հաշվով սպառած էլեկտրաէներգիայի ծավալի, այնպես էլ բնակչությանը էլեկտրաէներգիայի հասանելիության ցուցանիշով Հայաստանը զգալիորեն առաջ է եկամտային իր խմբի միջին ցուցանիշներից:

Աղյուսակ 1

**Մեկ բնակչի հաշվով սպառված էլեկտրաէներգիայի ծավալը
եկամուտների տարբեր մակարդակ ունեցող երկրների խմբերում, կվտ/ժ³**

Երկիր/երկրների խումբ	1990	2000	2010	2012
Աշխարհ	2120.4	2377.8	2956.8	3047.2
Բարձր եկամուտներով խումբ	7270.8	8794.3	9280.9	9102.6
Միջին եկամուտներով վերին խումբ	1351	1586.7	2900.7	3241.6
Միջին եկամուտներով խումբ	417.8	441.8	662	1922.2
Միջին եկամուտներով ստորին խումբ	904.8	1015.6	1737.8	718.8
Ցածր եկամուտներով խումբ	-	-	-	-
Հայաստան	2717.6	1294.8	1676.1	1832.2

¹ Jefferson, M., There's nothing much new under the Sun: The challenges of exploiting and using energy and other resources through history. Energy Policy, Volume 86, November 2015, Pages 804–811 (<http://dx.doi.org/10.1016/j.enpol.2015.01.022>)
² Sofien Tiba and Anis Omri, “Literature Survey on the Relationships between Energy, Environment and Economic Growth,” Renewable and Sustainable Energy Reviews, 2016, doi:10.1016/j.rser.2016.09.113
³ <http://data.worldbank.org/indicator/EG.USE.ELEC.KH.PC>



Գծապատկեր 1. Էլեկտրաէներգիայով ապահովված բնակչության մասնաբաժինը ելկամուտների տարբեր մակարդակ ունեցող երկրների խմբերում¹

Էներգիայի օգտագործման ծավալների աճին և էներգիայից հասարակական կյանքի տարբեր հատվածների կախվածության աճին զուգահեռ ամբողջ աշխարհում ավելի ու ավելի արդիական են դառնում էներգետիկ ապահովվածության և էներգետիկ անվտանգության հիմնահարցերը: Ցանկացած երկրի համար էներգետիկ ինքնաբավարարությունը էներգետիկ անվտանգության գերագույն նպատակն է, իսկ տարածաշրջանային էներգետիկ հանգույցներին ինտեգրվածությունը՝ էներգետիկ քաղաքականության ճկունության երաշխիք: Էներգետիկ անվտանգության վերաբերյալ գրականությունը բավականին հարուստ է, իսկ քննարկված հարցերի շրջանակը՝ լայն: Էներգետիկ անվտանգության 83 սահմանումների վերլուծությունը թույլ է տվել եզրակացնելու, որ «էներգիայի հասանելիությունը» հանդիպում է 82 սահմանումներում (99%), «ենթակառուցվածքները»՝ 60 (72%), գները՝ 59 (71%), «շրջակա միջավայրը»՝ 28 (34%), «հասարակական ազդեցությունը»՝ 31 (37%), կառավարման համակարգը՝ 21 (25%) և «էներգետիկ արդյունավետությունը»՝ 18 սահմանումներում (22%)²: Ակնհայտ է, որ հանրության շրջանում էներգետիկ անվտանգության երևույթի ընկալումներում էներգիայի հասանելիությունը առաջին աստիճանն է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հասարակական կյանքի սկզբունքորեն բոլոր բնագավառները ուղղակիորեն հենված են էներգետիկայի ինտենսիվ օգտագործման վրա, որի դեպքում էներգիայի մատակարարումների շղթայի ընդհատումը կարող է բերել անկանխատեսելի, անգամ աղետալի հետևանքների:

Անբավարար էներգետիկ ռեսուրսներով երկրներում, ինչպիսին և Հայաստանի Հանրապետությունն է, էներգիայի հասանելիությունը կապվում է էներգակիրների ներմուծման շղթայի կայունությամբ: Ընդ որում, եթե շատ երկրներում էներգիայի անհասանելիությունը հաճախ դիտվում է որպես հնարավոր սցենար կամ տեսական ռիսկ, ապա 1990-ականների սկզբներին Հայաստանը համտեսել է այդ ռիսկի ողջ դառնությունը, երբ ԽՍՀՄ փլուզումից հետո հայտնվեց էներգետիկ շրջափակման մեջ: Դրա հետևանքով 1992-1996թթ. էներգետիկ սովի պայմաններում բնակչությանն օրական միջինում 2 ժամ էր էլեկտրաէներգիա մատակարարվում, ինչը հանգեցրեց արտագաղթի, ջեռուցման նպատակով լայնածավալ անտառահատումների, իսկ շահագործման և պահպանման ռեժիմների խախտմամբ պայմանավորված հսկայածավալ բնակելի և արտադրական գույք պարզապես ոչնչացվեց կամ փոշիացվեց³: Ընդ որում, բոլոր այն գործոնները, որոնք

¹ <http://data.worldbank.org/indicator/EG.ELC.ACCS.ZS>

² Ang B.W., Choong W.L., Ng T.S., “Energy Security: Definitions, Dimensions and Indexes,” *Renewable and Sustainable Energy Reviews* 42 (February 2015): 1077–93, doi:10.1016/j.rser.2014.10.064.

³ Gevorg Sargsyan, Ani Balabanyan, and Denzel Hankinson, *From Crisis to Stability in the Armenian Power Sector: Lessons Learned from Armenia’s Energy Reform Experience*, World Bank Working Paper, 2006.


հանգեցրին Հայաստանի էներգետիկ և տնտեսական շրջափակմանը, այդ թվում Արցախյան պատերազմը, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից մինչ օրս շարունակվող Հայաստանի շրջափակումը, Վրաստանի ներքին ազգամիջյան խնդիրների առկայությունը, ռուս-վրացական անկայուն և անկանխատեսելի տնտեսական ու քաղաքական հարաբերությունները, Իրանի Իսլամական Հանրապետության դեմ պարբերաբար գործադրվող պատժամիջոցները, չեն կորցրել իրենց արդիականությունը և ցանկացած պահի կարող են նորովի արտահայտվել:

Հայաստանի Հանրապետության էներգետիկ համակարգի վերջին 15 տարիների վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն գտնվել է համեմատաբար կայուն վիճակում: 2000-2015թթ. ՀՀ էներգետիկ արտադրական հզորություններն ավելացել են 26%-ով, իսկ արտադրված համախառն էլեկտրաէներգիան՝ 31%-ով: Ընդ որում, էլեկտրաէներգիայի արտահանման և ներմուծման հաշվեկշիռը մշտապես դրական է, ինչը մատնանշում է ավելցուկային արտադրության մասին (աղյուսակներ 2-3):

Աղյուսակ 2

ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության տեղակայված հզորությունները ըստ էլեկտրակայանի տեսակների, մվտ¹

	2000	2005	2010	2015
Ընդհանուր	3231.1	3208.7	3504.5	4086.8
ատոմային	1799.4	1774.5	1931.1	2390.0
ջերմային	1024.2	1026.7	1162.0	1286.7
հիդրոէլեկտրակայաններ	407.5	407.5	407.5	407.5
այլ աղբյուրներ	-	-	3.9	2.6



Գծապատկեր 2. ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության տեղակայված հզորությունների կառուցվածքն ըստ էլեկտրակայանի տեսակների, %²

Աղյուսակ 3

Հայաստանում արտադրված, ներմուծված և արտահանված էլեկտրաէներգիան ըստ էլեկտրակայանների տեսակի, մլն կվտ/ժ³

	2000	2005	2010	2015
Արտադրվել է էլեկտրաէներգիա	5958.6	6316.9	6491.4	7798.2
Ներմուծվել է էլեկտրաէներգիա	352	337.6	246	174
Արտահանվել է էլեկտրաէներգիա	814.8	1151.1	1061	1424

¹ Ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի (ՀՀ ԱՎԾ, 2016, 2011, 2006, 2001):

² Ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի (ՀՀ ԱՎԾ, 2016, 2011, 2006, 2001):

³ Ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի (ՀՀ ԱՎԾ, 2016, 2011, 2006, 2001):



Գծապատկեր 3. Հայաստանում արտադրված էլեկտրաէներգիայի կառուցվածքը ըստ էլեկտրակայանների տեսակի, %

Գծապատկերներ 2 և 3-ում ներկայացված տվյալները բավականին կարևոր առանձնահատկություններ են բացահայտում: Համեմատելով արտադրված ընդհանուր էլեկտրաէներգիայի կառուցվածքում և ընդհանուր էլեկտրաէներգետիկ արտադրական հզորություններում տարբեր տիպի էլեկտրակայանների մասնաբաժինը, կարելի է նկատել հստակ արտահայտված անհամաչափություն: Մասնավորապես, ատոմային արտադրական հզորությունները, չնայած կազմում են ընդհանուր արտադրական հզորությունների միայն 10%-ը, ապահովել են արտադրված էլեկտրաէներգիայի 35.7%-ը: Ի հակադրություն դրա, չնայած ջերմաէլեկտրակայանների 58.5% արտադրական հզորությունների մասնաբաժնի, դրանք թողարկել են արտադրված էլեկտրաէներգիայի 35.9%-ը: Էլեկտրակայանների հիդրո և այլ տարատեսակներն ապահովել են իրենց հզորությունների մասնաբաժնին համարժեք թողարկում: Նշած դիտարկումը ցույց է տալիս, որ Հայաստանը իր ջերմային էլեկտրակայանների դրվածքային հզորությունները չի օգտագործում: Չնայած ներքին պահանջարկի ամբողջական բավարարմանն ու զուտ արտահանման դրական մեծությանը, պետք է արձանագրել, որ սկզբունքորեն առկա է դեպի Իրան էլեկտրաէներգիայի արտահանման պոտենցիալ շուկա, որը չի օգտագործվում: Առողջ տրամաբանությունը հուշում է, որ այդ պոտենցիալի չօգտագործման հիմքում պետք է որ լինեն օբյեկտիվ գործոններ:

Հայաստանի էներգետիկ համակարգը բնութագրվում է նյութատեխնիկական բազայի ֆիզիկական և բարոյական բարձր մաշվածությամբ: Չնայած վերջին տարիների մի քանի խոշոր ներդրումային ծրագրերին՝ արտադրական միջոցների գերիշխող մասը շահագործվում է 30 տարուց ավել, ազգային էներգետիկ արտադրական համակարգում առկա են անգամ մինչ 80 տարվա վաղեմության հզորություններ (աղյուսակ 4): Նմանապես հաղորդման և բաշխման ցանցերը կառուցվել են 1960-1980 թթ. և չնայած վերջին տարիներին իրականացված և շարունակաբար իրականացվող արդիականացման միջոցառումներին՝ դրանք բնութագրվում են ինչպես խափանումների բարձր ռիսկայնությամբ, այնպես էլ կորուստների մեծ ցուցանիշով:

Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ Հրազդանի ջերմաէլեկտրակայանի 1-4 բլոկները շահագործման են հանձնվել 20-րդ դարի 70-ականների սկզբներին: Ֆիզիկական և բարոյական մաշվածքից զատ՝ նշված էներգաբլոկները բնութագրվում են ցածր ՕԳԳ-ով և արտադրված էլեկտրաէներգիայի բարձր ոչ մրցունակ ինքնարժեքով: Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադը բնութագրվում է առավել մեծ հնությամբ: Բացի այդ, դրա օգտագործման հնարավորությունը սահմանափակ է, քանի որ այն սնվում է Սևանա լճից, որից ջրառը սահմանափակվում է օրենքով: Մյուս կայանների համադրումը ցույց է տալիս, որ Հայաստանի էլեկտրաէներգիայի արտադրության հզորությունների ավելի քան կեսը (2.2 գվտ) 30 և ավելի տարվա հնություն ունեն և ենթակա են արդիականացման կամ փոխարինման: Հայաստանի

ներկայիս էներգետիկ հզորությունների պահպանումը լուրջ ներդրումներ է պահանջում, հակառակ պարագայում լրջորեն վտանգվում է էներգետիկ անվտանգությունը:

Աղյուսակ 4

Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության խոշոր կայանները և շահագործման տարեթվերը¹

Անվանում	Դրվածքային հզորություն, մվտ	Շահագործման հանձնման տարի
ՀԱԷԿ	440	1980 (1989-1995 կանգառ) 1995
Երևան ՇՇԳՑԷ	272	2010
Հրազդան 1-4 բլոկներ	810	1972-1974
Հրազդան-5	480	2011
Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադ	559	1936-1962
Որոտանի ՀԷԿ-երի կասկադ	404	1970-1989

Աղյուսակներ 2-ի և 3-ի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա էլեկտրաէներգետիկ հզորությունների 68.5%-ը աշխատում են, իսկ արտադրած էլեկտրաէներգիայի 71.6%-ը արտադրվել է ներկրվող բնական գազով և միջուկային վառելիքով: Ընդ որում, եթե բնական գազը ներկրվում է 2 աղբյուրներից՝ Ռուսաստանից և Իրանից, ապա միջուկային վառելիքը կարող է ներկրվել միայն Ռուսաստանից: Իրան-Հայաստան գազատարը փոքր տրամագիծ ունի, իսկ դրանով ներկրվող բնական գազը մատակարարվում է «էլեկտրաէներգիա գազի դիմաց» ոչ առևտրային սխեմայով, հետևաբար գալիս ենք այն եզրակացության, որ Հայաստանը խիստ էներգետիկ կախվածության մեջ է գտնվում Ռուսաստանից: Ավելին, քանի որ Հայաստանը Ռուսաստանի հետ անմիջական սահման չունի, հետևաբար այդ կախվածությունն ուղեկցվում է նաև երրորդ երկրի (Վրաստանի) հետ հարաբերությունների վատթարացման ռիսկով:

Այսպիսով, գեներացնող հզորությունների արդիականացման անհրաժեշտությունը կասկածի տեղիք չի տալիս, այնուամենայնիվ, լուրջ քննարկման խնդիր է դարձել ատոմային էներգետիկային, ջերմային և վերականգնվող էներգետիկայի միջև ընտրությունը կամ ընդհանուր հզորությունների բաշխման համամասնության սահմանումը: Չնայած էներգետիկայի զարգացման ազգային ռազմավարության շրջանակներում վերականգնվող էներգետիկային փոքր դերակատարում է հատկացվում, այնուամենայնիվ, ներկայացված անվտանգության սպառնալիքները պարտադրում են նորովի քննարկել էներգիայի այդ աղբյուրի նշանակությունը:

Աշխարհի գրեթե բոլոր երկրներն էլ ունեն վերականգնվող էներգիայի բավականին մեծ պաշարներ, որոնց շահագործելը, սակայն, ոչ միշտ է տնտեսապես նպատակահարմար: Տեխնոլոգիաների զարգացման և գիտատեխնիկական նվաճումների արդյունքում վերականգնվող էներգիայի նախկինում տնտեսապես աննպատակահարմար աղբյուրը կարող է վերածվել շահեկանի, ինչը և ըստ վերջին տարիների դիտվում է շատ ուղղություններում²:

Հայաստանը վառելիքաէներգետիկ ռեսուրսների ներկայիս գների պայմաններում տիրապետում է տնտեսապես հիմնավորված ռեսուրսների բավականին լայն սպեկտր և ծավալներ: Աղյուսակ 5-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ տարբեր գնահատումներով Հայաստանում առկա են 3800-4300 մվտ պոտենցիալ հզորությամբ և 7.4-8.7 մլրդ կվտժ տարեկան թողարկման հնարավորությամբ վերականգնվող ռեսուրսներ, ինչը համարժեք է Հայաստանի ներկայիս շահագործվող էլեկտրակայանների դրվածքային հզորությանն ու տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալին:

¹ «ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036 թ.) զարգացման ուղիները» ծրագրին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից N54 առ 10.12.2015 քաղվածք:

² International Renewable Energy Agency (IRENA), “Renewable Power Generation Costs in 2014,” Renewable Power Generation Costs, 2014, 1–8.

Վերականգնվող էլեկտրաէներգիայի ռեսուրսների ներուժը Հայաստանում ըստ տեխնոլոգիայի¹

Տեխնոլոգիայի տեսակը	Հզորություն (ՄՎտ)	Արտադրություն (ԳՎտժ/տարի)
Հողմ	300	650
Արդյունաբերական արևային ՖՎ	830-1200	1700-2100
Կոնցենտրացիոն արևային կայան	1200	2400
Ապակենտրոնացված արևային ՖՎ	1300	1800
Երկրաջերմային կայան	25-150	200-1100
Աղբավայրի գազ	2	20
ՓՀԷԿ	100	340
Կենսագազ	5	30
Կենսազանգված	30	230
Ընդամենը	3800-4300	7400-8700

2015թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը հանրությանը ներկայացրեց ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիների վերաբերյալ զեկույցը, որի կիզակետում ՀՀ էներգետիկ համակարգի ֆիզիկապես և բարոյապես մաշված ենթակառուցվածքների նվազագույն ծախսերով սերնդափոխությունն է: Չնայած զեկույցում ընդհանուր առմամբ կարևորվում է վերականգնվող էներգետիկայի զարգացումը, այդուհանդերձ պետք է փաստել, որ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունը, առաջնային կարևորություն տալով նվազագույն ծախսերի քաղաքականությանը, անտեսում է էներգետիկ անվտանգության շատ հիմնահարցեր: Զեկույցում ուղղակիորեն սահմանվում է, որ անհրաժեշտ է սահմանափակել արևային ֆոտովոլտային տեխնոլոգիաներով էլեկտրակայանները՝ 70 ՄՎտ-ով, իսկ հողմային էլեկտրակայանների հզորությունը՝ 200 ՄՎտ-ով, ակնկալելով, որ երկրաջերմային պոտենցիալի ուսումնասիրությունները կտան դրական արդյունք և կհիմնավորվի ևս 30 ՄՎտ հզորությամբ երկրաջերմային կայանի կառուցումը մինչև 2036թ. ընկած ժամանակաշրջանում:

Նման մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ ուսումնասիրված հողմակայանների հարթակներում առկա է քամու բավականին մեծ անկայունություն, ինչը մեծ հզորությունների դեպքում կարող է կարգավարական խնդիրներ առաջացնել համակարգում: Միաժամանակ, արևային էլեկտրաէներգիայի ցանցային կայանների օգտագործումը հանգեցնում է համակարգում համարժեք պահուստային հզորությունների առկայության անհրաժեշտությանը, որոնց օգտագործումը հարկավոր է նախատեսել խիստ ամպամած, ինչպես նաև գիշերային ժամերին՝ հատկապես ձմեռվա սեզոնի արևային օրվա կարճ տևողության պարագայում: Հետևաբար, մեծածավալ ցանցային էներգետիկ հզորությունների ներառումը էներգահամակարգ զգալիորեն կփոխի էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը և կպահանջի համարժեք պահուստային հզորությունների առկայություն՝ ավանդական պաշարներով արտադրող կայաններում, ինչը լրացուցիչ ներդրումներ է պահանջում:

Սակայն նվազագույն ծախսերի քաղաքականության մշակման հիմքում դրված են մի քանի վիճելի դրույթներ, որոնց չիրագործման պարագայում համակարգը կփլուզվի: Նշված փաստաթղթում էներգետիկ համակարգի զարգացման քննարկումներում շեշտվում է էներգիայի արտահանման հանգամանքը: Նպատակադրվում է առկա հզորությունների հետագա զարգացում և արտադրվող էլեկտրաէներգիայի առնվազն կրկնապատկում՝ մինչև տարեկան 15 մլրդ կվտ/ժ, որից 30%-ը պետք է արտահանվի՝ որպես պոտենցիալ շուկա առանձնացնելով ԻԻՀ-ն, որը ներկայումս ունի էլեկտրաէներգիայի պակասուրդ (մյուս հարևանների հետ տեսանելի ապագայում էլեկտրաէներգիայի արտահանումը կարելի է բացառել. Վրաստանն արդեն իսկ ինքնաբավարար է, ընդ որում շատ ավելի էժան հիդրոռեսուրսներով, իսկ մյուս հարևանների հետ հարաբե-

¹ «Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագիր» Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, Երևան, 2014: http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan_final-June-27-2014-arm-final.pdf

րությունները սառեցված են): Ինչպես նոր էներգաարտադրող կայանների շինարարությունը, այնպես էլ դրանց սպասարկումը ներառվելու են սակագնի մեջ: Սակայն անտեսվում է այն հարցը, թե ինչ կլինի, եթե այդչափ արտադրական հզորությունները կառուցվեն, սակայն արտահանման ներուժը չօգտագործվի: Պատասխանը շատ պարզ է. հաստատուն ծախսերը կվերաբաշխվեն սպառվող էլեկտրաէներգիայի քանակի վրա, որի արդյունքում սակագինը կբարձրանա: Ավելին, էներգախնայող տեխնոլոգիաների հետագա զարգացման պայմաններում հարցականի տակ է նաև ներքին շուկայում էլեկտրաէներգիայի սպառման տեմպերի ավելացման առկա միտումների պահպանման կամ աճի խնդիրը: Ազդեցության երկրորդ փուլում սակագնի բարձրացումը կհանգեցնի սպառման կրճատմանն ու արտադրանքի մրցունակության անկմանը, որը կրկին կառաջացնի սակագինը վերանայելու կարիք: Հետևաբար առանց երկարաժամկետ պայմանագրերի և գնման երաշխիքների արտահանման կողմնորոշմամբ էներգետիկ հզորությունների զարգացման սցենարը ոչ միայն վտանգավոր թակարդ է, այլև վտանգում է երկրի տնտեսական անվտանգությունը:

Պետք է փաստել, որ փաստաթղթում ըստ էության քննարկված չեն ներկայումս օգտագործվող էներգետիկ ռեսուրսների մատակարարումների շղթայի գործունեության խափանումների, շուկայական կոնյունկտուրայի փոփոխության, շուկայում նոր խաղորդների հայտնվելու ռիսկերը: Ավելին, տարածաշրջանային զարգացումները, Ռուսաստանի և Իրանի նկատմամբ նոր տնտեսական պատժամիջոցների սահմանման և գործողների երկարաձգման պայմաններում ճիշտ չէ բոլոր խաղադրույթները կենտրոնացնել այդ երկրների վրա՝ անտեսելով ազգային էներգետիկ անվտանգության հարցերը: Ամենևին չթերագնահատելով տնտեսական բաղադրիչը, պետք է համաձայնել, որ անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել վերականգնվող աղբյուրների լայն կիրառության խոչընդոտները վերացնելուն:

Վերականգնվող էներգետիկայի լայնամասշտաբ կիրառման խոչընդոտները բնորոշ են գրեթե բոլոր երկրներին¹: Հողմային կայանների անհավասար բեռնվածքը, արևային էլեկտրակայանների օրական և սեզոնային հզորության տատանումները էներգիայի այդ աղբյուրների անբաժանելի հատկություններ են, ինչը չի խանգարում բազմաթիվ երկրներում դրանք հաջողությամբ զարգացնելուց: Սակայն եթե մեծ, հատկապես մի քանի ժամային գոտիներ ընդգրկող տնտեսություններում վերականգնվող էներգետիկայի միասնական ցանցերի օգտագործումը մեծապես նպաստում է էլեկտրաէներգիայի թողարկման տատանումները մեղմելուն, ապա փոքր տնտեսություններում նման եղանակի կիրառումը կապված է լրացուցիչ դժվարությունների հետ: Այս առումով տարածաշրջանային էլեկտրական ցանցերին ազգային ցանցերի սերտ ինտեգրումը հնարավորություն կտա հանդիպակաց մատակարարումներով հարթեցնել արտադրական տատանումները: Հայաստանի դեպքում այս գործիքի կիրառությունը որոշ հեռանկարներ ունի, եթե հաշվի առնենք հարևան երկրների հետ հաղորդիչ նոր գծերի կառուցման մեկնարկած ծրագրերը:

Հայկական էներգետիկ համակարգի անվտանգության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի էլեկտրաէներգիայի կուտակման հզորությունների առկայությունը, որոնք, որպես այդպիսին, ներկայումս իսպառ բացակայում են: Էներգիայի կուտակման առավել հեռանկարային եղանակները քննարկվել են բազմաթիվ հետազոտություններում: Դրանց շարքում են հիդրոակումուլյացիան, ջերմային կուտակումը, քիմիական եղանակը և այլն²:

Հայաստանի պայմաններում, հաշվի առնելով լեռնային տեղանքը, մեծ հեռանկար ունեն հիդրոակումուլյացիոն կառույցների զարգացման հնարավորությունները, մանավանդ, եթե հաշվի առնենք ՀԷԿ-երի կասկադների առկայությունը: Ցավոք, Հայաստանի երկարաժամկետ էներգետիկ զարգացման ռազմավարությունում ընդհանրապես տեղ չի տված էլեկտրաէներգիայի կուտակման հնարավորությունների քննարկմանը: Իր աշխարհագրական դիրքով և տարածաշրջանում առկա կոնֆլիկտային իրավիճակներով պայմանավորված, չնայած առկա վերականգնվող

¹ Aviel Verbruggen et al., “Renewable Energy Costs, Potentials, Barriers: Conceptual Issues,” Energy Policy 38, no. 2 (2010): 850–61, doi:10.1016/j.enpol.2009.10.036

² T. Kousksou et al., “Energy Storage: Applications and Challenges,” Solar Energy Materials and Solar Cells, 2014, doi:10.1016/j.solmat.2013.08.015

Էներգիայի մեծ պաշարներին, Հայաստանը մինչ այժմ ստիպված է եղել ընդունել իր էներգետիկ կախվածությունը որպես անխուսափելի իրողություն: Համապատասխան ծավալի էներգիայի կուտակման հզորությունները նորովի հնարավորություն կտան զարգացնելու վերականգնվող էներգետիկան՝ կիրառելով ոլորտի զարգացման պետական քաղաքականության ողջ գործիքակազմը, քանի որ վերջին տարիներին վերականգնվող էներգետիկայի բնագավառում գիտատեխնիկական նվաճումներով, ֆոտովոլտային պանելների գների անընդհատ անկումով պայմանավորված և տնտեսական նպատակահարմարության նկատառումներով վերականգնվող էներգետիկայի հենքով էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացումը նոր ոգի է ստացել¹: Ժամանակակից տեխնոլոգիաների պայմաններում վերականգնվող էներգետիկայի զարգացման խոչընդոտները գերազանցապես լուծելի են, չնայած կարող են պահանջել զգալի լրացուցիչ ներդրումներ:

¹ Achim Steiner, “Global Trends in Renewable Energy Investment 2016,” Fs-Unep-Centre, 2016, <http://fs-unep-centre.org/publications/global-trends-renewable-energy-investment-2016>

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՍԱԿԱՐԳԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՏԵՂԸ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՍԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՍԱՐԿՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Համառոտագիր

Փոքր տնտեսություններում էներգետիկ անվտանգությանը առնչվում է քաղաքական որոշումների հետ, որոնց պարագայում տնտեսական նպատակահարմարությունը ոչ միշտ է որոշվում ֆինանսական ցուցանիշներով: Հայաստանը արտադրվող էլեկտրաէներգիայի 60-70%-ի համար օգտագործում է ներմուծվող միջուկային և ածխաջրածնային վառելիք, ինչը սպառնալիք է էներգետիկ անվտանգության տեսանկյունից: Վերականգնվող էներգետիկայի հիմքով էներգետիկ անվտանգության ապահովման ուղին էներգիայի կուտակման հզորությունների գործարկումն է, ինչը լուրջ գործիք է ոլորտի զարգացման խոչընդոտների հաղթահարման գործում:

Բանալի բառեր. էներգետիկա, վերականգնվող, արևային, հողմային, անվտանգություն, ինքնարավարարություն, կախվածություն, դիվերսիֆիկացիա, կուտակում, հիդրոակումուլյացիա

ЭНЕРГЕТИЧЕСКАЯ СИСТЕМА РА И МЕСТО ВОЗОБНОВЛЯЕМОЙ ЭНЕРГЕТИКИ В ДЕЛЕ ОБЕСПЕЧЕНИЯ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ

АЙК АШОТОВИЧ МАРКОСЯН, *к.э.н.*

старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

В малых экономиках энергетическая безопасность зависит от политических решений, при которых экономическая целесообразность не всегда определяется финансовыми показателями. 60-70% производимой в Армении электроэнергии вырабатывается за счет использования импортируемого ядерного и углеводородного топлива, что представляет угрозу с точки зрения энергетической безопасности. Основным направлением обеспечения энергетической безопасности на основе возобновляемых источников энергии является запуск мощностей для аккумуляции энергии, что является серьезным инструментом преодоления барьеров на пути развития отрасли.

Ключевые слова: энергетика, возобновляемая, солнечная, ветровая, безопасность, самодостаточность, зависимость, диверсификация, накопление, гидроаккумуляция.

THE ENERGY SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE ROLE OF RENEWABLE ENERGY IN ENSURING THE ENERGY SECURITY

HAYK ASHOT MARKOSYAN, *Ph.D. in Economics*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

In small economies, energy security depends on political decisions, in which economic expediency is not always determined by financial indicators. 60-70% of the electricity produced in Armenia is produced via using the imported nuclear and hydrocarbon fuels, which is a threat from the aspect of energy security. The main direction of ensuring energy security based on renewable energy sources is the running capacities for energy storage, which is a serious tool for overcoming the barriers to the development of the industry.

Keywords: Energy sector, renewable, solar, wind, security, self-sufficiency, dependence, diversification, accumulation, hydro-accumulation

ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տ.գ.թ.,

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

ԱՐՄԻՆԵ ԳԱԳԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ, տ.գ.թ.,

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

ԿԱՆԱԶ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ԴԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԿՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ժամանակակից քաղաքակրթության ձևավորումն ու զարգացումը խիստ փոխկապակցված է օգտագործվող էներգիայի ծավալների ու տեսակների հետ: Համաշխարհային տնտեսության ներկայիս բնութագրում անվիճելի է էներգիայի և, մասնավորապես, էլեկտրաէներգիայի օգտագործման նշանակությունը: Մեքենաշինության, տրանսպորտի, ինտենսիվ գյուղատնտեսության, վերամշակող արդյունաբերության, ռադիոէլեկտրոնիկայի և շատ այլ բնագավառներ ուղղակիորեն հենված են էներգիայի ինտենսիվ օգտագործման վրա: Բիարկե, կարելի է հակառակել և փորձել հիմնավորել, որ սոցիալ-տնտեսական կյանքի շատ բնագավառներ սկզբունքորեն կարելի է կյանքի կոչել նաև առանց էներգետիկ և, մասնավորապես, էլեկտրաէներգետիկ ենթակառուցվածքների, սակայն մի բան անժխտելի է. էներգիայի և էլեկտրաէներգիայի օգտագործումը հանգեցնում է արտադրողականության բազմապատիկ աճի, հետևաբար՝ սահմանափակ ռեսուրսներով ավելի մեծաթիվ պահանջմունքների բավարարմանը:

Արդեն 20-րդ դարի առաջին կեսից ավելի ու ավելի լայն տարածում սկսեց ստանալ այն մտավախությունը, որ արդյունաբերական դարաշրջանի հիմքը հանդիսացող ածխաջրածնային վառելիքաէներգետիկ ռեսուրսները անսահմանափակ չեն, և մարդկության էներգետիկ հարաճուն պահանջները բավարարելու համար անհրաժեշտ կլինի անցում կատարել այլընտրանքային էներգիայի լայնամասշտաբ կիրառությանը: Դա իր արտահայտումը գտավ 1980-ականների սկզբին մի շարք երկրներում վերականգնվող էներգիայի առաջխաղացման ծրագրերի իրականացման տեսքով՝ արժանանալով պետության կողմից խոշոր ֆինանսավորման: Նշված բնագավառում պետության դերը կայանում է նրանում, որպեսզի մշտական աջակցություն ցուցաբերվի էներգառեսուրսների միջազգային առևտրի իրականացման և ներդրումային գործունեության ոլորտներում՝ էներգակիրները արտադրության տարածքներից սպառողներին մատակարարելու տեխնիկական, բնապահպանական, քաղաքական և իրավական բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով¹:

20-րդ դարի երկրորդ կեսը նշանավորվեց տարբեր երկրներում ածխաջրածնային վառելիքի պաշարների նոր հանքավայրերի հայտնագործմամբ, ինչը սկզբունքորեն բավարարում էր էներգետիկ պահանջները և հետաձգում այլընտրանքային վառելիքի փնտրման անհետաձգելիությունը:

Այսօր արդեն այլընտրանքային և վերականգնվող էներգետիկայի մասին մասնագիտական և հանրային քննարկումները նոր թափ են ստացել՝ պայմանավորված այնպիսի գործոններով, ինչպիսիք են ածխաջրածնային վառելիքի նոր պաշարների հայտնաբերման դինամիկայի անկումը, ջերմոցային զագերի արտանետման հետևանքով կլիմայի գլոբալ տաքացման կանխարգելման անհրաժեշտությունը, էկոլոգիական աղտոտման անընդունելի մասշտաբները, այլընտրանքային էներգիայի օգտագործման և փոխակերպման տնտեսապես հիմնավորված և մատչելի

¹ Գարապետյան Կ.Վ., էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները ժամանակակից տնտեսությունում: «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», №11-12 նոյեմբեր-դեկտեմբեր, 2008, էջ 10-15:

տեխնոլոգիաների մշակումը և այլն¹: Պետք է արձանագրել, որ այլընտրանքային էներգետիկայի համընդհանուր օգտագործման համար լուծված են բազմաթիվ խնդիրներ, որով պայմանավորված համապատասխան աջակցության մեխանիզմների ներդրման պարագայում ոլորտը լուրջ զարգացում կապրի: Համաշխարհային էներգետիկ համակարգում ներկայումս ընթացող գործընթացները միտված են առավելապես կանաչ տեխնոլոգիաների կիրառմանը՝ էներգիայի հուսալի ու մատչելի մատակարարումների ապահովման և համեմատաբար ցածր քանակությամբ արտանետումներով էներգամատակարարման առավել արդյունավետ ու բնապահպանական տեսանկյունից առավել անվտանգ համակարգերի կիրառմանը²:

Վերականգնվող էներգետիկայի զարգացմանն ուղղված միջոցառումներում մեծ տեղ է տրվում նաև պետական ֆինանսական աջակցության մեխանիզմներին: Սակայն սահմանափակ ֆինանսական ռեսուրսներով երկրների համար նման գործիքները լուրջ բեռի են վերածվում, քանի որ բնութագրվում են ինչպես մեծածավալ ֆինանսական ցուցանիշներով, այնպես էլ երկարաժամկետ բնույթով: Նշված մեխանիզմների կողքին ստեղծվել և կիրառվում են այնպիսի գործիքներ, որոնք, չնայած սահմանափակ ազդեցության բնույթին, բեռ չեն հանդիսանում պետության համար և կարող են կիրառվել ցանկացած երկրում: Նման գործիքների շարքին է դասվում կանաչ հավաստագրերի կիրառությունը³:

Կանաչ հավաստագիրը վերականգնվող էներգիայի աղբյուրների (ՎԷԱ) հիման վրա էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման հաշվառման գործիք է: Այն փաստաթուղթ է, որը տրվում է էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպություններին և հավաստում է ՎԷԱ հիման վրա որոշակի ծավալով էլեկտրաէներգիայի (որպես կանոն՝ 1 ՄՎտ) արտադրության փաստը: Նման հավաստագրեր կարող են ստանալ միայն այն արտադրողները, որոնք որակավորված են իրավասու կարգավորող մարմնի կողմից (օրինակ՝ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, հաշվիչ կենտրոն, էներգետիկ ոլորտի համար պատասխանատու նախարարություն և այլն): Ոլորտի վերահսկողության և չարաշահումների բացառման նպատակով կարգավորող մարմինները պետք է համոզվեն, որ արտադրված էլեկտրաէներգիան իրոք արտադրվել է ՎԷԱ հիման վրա, ինչը հնարավոր է համապատասխան հաշվիչ սարքերի տեղադրման պարագայում:

ՎԷԱ հիման վրա թողարկված էլեկտրաէներգիայի ծավալին համապատասխան արտադրող կազմակերպությունը ստանում է համապատասխան թվով հավաստագրեր, որոնք արդեն կարող է վաճառել նման հավաստագրերի մասնագիտացված շուկայում՝ ստանալով լրացուցիչ եկամուտներ, կամ կուտակել՝ հետագայում օգտագործելու նպատակով: Պոտենցիալ գնորդը, ձեռք բերելով հավաստագիրը, իրավունք է ստանում վկայակոչելու, որ ձեռք է բերել և սպառել է տվյալ արտադրողի արտադրած էլեկտրաէներգիան, այսինքն, ՎԷԱ հիման վրա արտադրված էլեկտրաէներգիան⁴: Գնորդի համար վերականգնող էներգիայի սպառման պարտավորություն ստանձնելը կարող է լինել ինչպես կամավոր՝ սոցիալական պատասխանատվության շրջանակներում, այնպես էլ ամրակցված լինել օրենսդրությամբ՝ պետական էներգետիկ քաղաքականության շրջանակներում: Հավաստագրերի գինը կարող է լինել ինչպես ֆիքսված, այնպես էլ ձևավորվել շուկայում՝ առաջարկի և պահանջարկի մեխանիզմների միջոցով: Նման կերպով ՎԷԱ էլեկտրաէներգիա արտադրողները եկամուտ են ստանում ինչպես արտադրված էլեկտրաէներգիայի վաճառքից, այնպես էլ այդ էներգիան սպառելու «իրավունքի» վաճառքից⁵:

¹ Насыров Т., Василов А., Завялова Л., Позычанюк П., Перспективы развития возобновляемой энергетики в Узбекистане. Ташкент, 2007 ст.13.

² Սուվարյան Ա., Մուճյան Մ., Փոքր Հիդրոէներգետիկայի զարգացման հիմնահարցերը ՀՀ-ում: «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», №5-6 (189-190) 2016, էջ 72-75:

³ Արտասահմանյան գրավանդությունում հիշատակվում է որպես Green Certificate, Renewable Energy Certificates (RECs), Green tags, Renewable Energy Credits և այլն: Փաստաթուղթը կոչվում է կանաչ՝ նկատի ունենալով էներգիայի «էկոլոգիական», «կանաչ», «վերականգնվող» հատկությունները:

⁴ Копылов А.Е., Зерчанинова И.Л., Механизм «зеленых» сертификатов возобновляемой энергии и возможности его использования в России. Москва 2006, 55 с.

⁵ Ю.А. Власенкова, О.И. Сергиенко, Эколого-экономические критерии при создании российской системы «зеленой» сертификации энергии, Научный журнал НИУ ИТМО. Серия «Экономика и экологический менеджмент», 2007, т. 1, с 38-46.

Կանաչ հավաստագրերի կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի առանձնահատկություններով: Որոշակի առանձին արտադրողի կողմից որոշակի քանակությամբ էլեկտրաէներգիայի արտադրության և ընդհանուր ցանց մատակարարելուց հետո գործնականում անհնար է պարզել, թե տվյալ էլեկտրաէներգիան ում կողմից և ինչ նպատակով է օգտագործվել: Հետևաբար, եթե որևէ կազմակերպություն կամ սպառող, իր համոզմունքների, ստանձնած սոցիալական պատասխանատվության կամ պետական քաղաքականության պարտադրված նորմերի շրջանակներում ցանկություն ունենա կամ պարտադրված լինի սպառել ՎԷԱ հիման վրա արտադրված էլեկտրաէներգիա, անգամ ավելի թանկ սակագնով, տեխնոլոգիապես անհնար է միասնական ցանցից առանձնացնել որոշակի ՎԷԱ էլեկտրակայանի արտադրած էլեկտրաէներգիան: Որպես խնդրի լուծում կարող է կիրառվել կանաչ հավաստագրերի գործիքը, որը մի կողմից հավաստում է ՎԷԱ հիման վրա էլեկտրաէներգիայի արտադրությունը, մյուս կողմից՝ դրա սպառումը:

Ինչպես նշվեց, կանաչ հավաստագրերի օգտագործումը կարող է լինել ինչպես կամավոր, այնպես էլ պարտադրված: Պարտադրված կիրառությունը հիմնականում կապված է տարբեր երկրներում էլեկտրաէներգիայի մատակարարման կառուցվածքի քվոտավորման հետ: Շատ երկրներում էլեկտրաէներգիայի մատակարարման գործընթացում վերականգնվող աղբյուրների օգտագործումը առաջ մղելու համար օրենսդրական մակարդակով սահմանվում է, որ էլեկտրաէներգիա մատակարարողը պետք է ընդհանուր ծավալի որոշակի մասն ապահովի վերականգնվող աղբյուրների հաշվին: Դա կարող է իրականացվել կամ սեփական արտադրական հզորություններ տեղակայելու, կամ ՎԷԱ հիման վրա էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպություններից «գնելու և մատակարարելու» միջոցով: Տեխնիկապես դա իրականացվում է ՎԷԱ կայաններից կանաչ հավաստագրերի ձեռքբերման միջոցով: Ընդ որում, այս դեպքում հավաստագրերը վաճառվում են իրենց ներկայացրած էլեկտրաէներգիայի ծավալի հետ միասին:

Հարկ է նշել, որ քվոտավորման մեխանիզմը կարող է ներդրվել նաև արտադրության և սպառման փուլերի նկատմամբ, այսինքն՝ կանաչ հավաստագրերի կիրառումը չի սահմանափակվում մատակարար կազմակերպությունների նկատմամբ կիրառելով: Այն կարող է կիրառվել արտադրողների և սպառողների վրա նույնպես, ինչպես պետական այնպես էլ մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպությունների նկատմամբ: Օրինակ՝ տարբեր էներգատար, էկոլոգիական տեսանկյունից ոչ մաքուր արտադրական հզորությունների համար կարող է սահմանվել իրենց սպառած էլեկտրաէներգիայի ծավալում որոշակի վերականգնվող էներգետիկ մասնաբաժին, որի հավաստման համար կրկին կիրառվում են կանաչ հավաստագրերի առքուվաճառքի գործիքները:

Եթե ՎԷԱ էլեկտրաէներգիայի սպառումը պարտադրվում է օրենսդրորեն, ապա կազմակերպությունների կողմից իրենց պարտավորության կատարման միակ ապացույցը համապատասխան ծավալով հավաստագրերի ձեռքբերումն է: Ձեռք բերված հավաստագրերի հաշվառումը կարող է իրականացվել ինչպես էլեկտրոնային ռեգիստրի, այնպես էլ ֆիզիկական կրիչի կիրառմամբ¹: Այս դեպքում կանաչ հավաստագրերի կիրառության խթանը հարկային արտոնությունների, տարբեր տույժերի և ֆինանսական այլ գործիքների կիրառումն է:

Կանաչ հավաստագրերի պարտադիր կիրառմանը զուգահեռ գործում են նաև ինքնակամ շուկաները՝ հիմնականում Եվրոպայում, Կանադայում, Ճապոնիայում, Հարավային Աֆրիկայում: Կամավոր շուկաների ստեղծման գործընթացին մասնակցում են բազմաթիվ ընկերություններ՝ մասնավոր էներգետիկ սպառողներից մինչև կառավարման մարմիններ: ՎԷԱ հիման վրա արտադրված էլեկտրաէներգիայի սպառման կամավոր համակարգն անմիջականորեն կապված է գործարարության կայուն զարգացման և սոցիալական պատասխանատվության հետ, որի իրականացումը տեղի է ունենում ֆորմալ հրապարակման միջոցով: Որպես այդպիսիք կարող են հանդիսանալ տարեկան հաշվետվությունները, սոցիալական գովազդները, որոնք անպայմանորեն պետք է ունենան հավաստիության վավերացում:

¹ Регулирование возобновляемой энергии. Учебник INOGATE. 2011г.

ՎԷԱ հիման վրա արտադրված էլեկտրաէներգիայի սպառման ինքնակամ պարտավորությունների իրականացումը տեղի է ունենում կամ սեփական կարիքները հոգալու համար վերականգնվող աղբյուրների էներգիայի ստացման սեփական կայանների ստեղծմամբ, կամ այլ արտադրողից կանաչ հավաստագրերի ձեռքբերմամբ, ինչը հաստատում է սպառված էլեկտրաէներգիան ՎԷԱ հիման վրա արտադրված լինելու հանգամանքը: Առաջին տարբերակի դեպքում անհրաժեշտ են զգալի ներդրումներ և ժամանակ, համապատասխան էներգետիկ ռեսուրսների և տարածքների առկայություն, ինչը ոչ բոլորին է հասանելի: Երկրորդ տարբերակի դեպքում ցանկացած սպառող ցանկացած պահի կարող է համեմատաբար փոքր ներդրումով ներգրավվել այս գործընթացում, ինչն ավելի շահեկան է դարձնում կանաչ հավաստագրերի տարբերակը:

Կախված ազգային օրենսդրությունից և տարբեր կազմակերպություններին անդամակցությամբ ստացված իրավունքների շրջանակից՝ կանաչ հավաստագրերի ձեռքբերումը թույլ է տալիս կազմակերպություններին ապրանքի վրա զետեղել ապրանքների էկոլոգիական մակնիշավորման պիտակներ և տարբերանշաններ՝ «Electrically GREEN», «Կանաչ էներգաապահովում», «Արտադրված է վերականգնվող էներգիայով» և այլն, ինչպես նաև վկայակոչել այդ հանգամանքը իր գովազդային նյութերում՝ ցույց տալով, որ կազմակերպությունն իր նպաստն ունի ինչպես վերականգնվող էներգետիկայի խթանման և աջակցության, այնպես էլ բնության պահպանության, գրքբալ տաքացման և էկոլոգիական այլ խնդիրների լուծման գործում:

Ինչպես նշվեց, աշխարհի տարբեր երկրներում հավաստագրերի թողարկման ու կիրառման կարգը տարբեր է, դրանք սահմանվում են տվյալ երկրի առանձնահատկություններից ու շահերից ելնելով: Կանաչ հավաստագիրն իբրև էլեկտրաէներգիայի հաշվառման և մոնիթորինգի գործիք, առաջինը կիրառվել է Նիդեռլանդներում 1997-1998 թթ.-ին «Կանաչ մակնիշավորման համակարգ» (Green label system) անվանումով¹: Այս տարբերակի դեպքում չվերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի սպառումը ենթակա էր հարկման, իսկ վերականգնվող էներգիայի կիրառման դեպքում սահմանվում էին հարկային արտոնություններ, ընդ որում այլ երկրներում թողարկված հավաստագրերը չէին կարող հարկային արտոնությունների համար հիմք հանդիսանալ: Վկայականները կարող են հանդիսանալ որպես առ ու վաճառքի առարկա, իսկ հավաստագրման համակարգն ինքնին հանդիսանում է ինքնակամ:

Կանաչ հավաստագրերի կիրառումը հետագա տարիներին լայն տարածում ստացավ ամբողջ աշխարհում, ընդ որում, գրեթե բոլոր երկրներում այն ներդրվեց որոշակի ազգային բնութագրերով և առանձնահատկություններով: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում կիրառվում է Renewables Obligation Certificates (ROCs) հավաստագրերի տեսակը, որը քվոտավորման համակարգի անբաժանելի բաղադրիչ է: Հավաստագրերը թողարկվում են վերականգնվող էներգիայի գրեթե բոլոր տարատեսակների համար, սակայն որոշակի սահմանափակումներ են դրվում կենսազանգվածի այրման տեխնոլոգիաների նկատմամբ: Ըստ ազգային օրենսդրության՝ էլեկտրաէներգիայի բոլոր լիցենզավորված արտադրողները պարտավոր են արտադրված էլեկտրաէներգիայի որոշակի նվազագույն քանակություն արտադրել վերականգնվող աղբյուրների հիման վրա: Այս պարտավորության չկատարման դեպքում արտադրողը պետք է ձեռք բերի չբավարարած էլեկտրաէներգիայի պակասող ծավալին համապատասխան կանաչ հավաստագրեր, որոնց գինը որոշվում է շուկայում²:

Բելգիայում գործում է ն՝ ազգային, և՛ տարածաշրջանային սերտիֆիկացման համակարգը: Կանաչ հավաստագրման համակարգը կիրառվում է քվոտավորման գործընթացում՝ վերականգնվող էներգիայի մատակարարների օգտին: Հավաստագրերը ենթակա են առքուվաճառքի, իսկ գինը ձևավորվում է հատուկ մասնագիտացված բորսաներում: Լրացուցիչ թողարկվում են նաև «Ծագման երաշխիքի հավաստագրեր»՝ էներգետիկայի բնագավառում տեղեկատվությունը վերջնական սպառողին ներկայացնելու նպատակով:

¹ Миненко И.Ф. Перспективы внедрения «Зеленых» сертификатов как метод государственного стимулирования развития энергетики на основе возобновляемых источников энергии. Актуальные проблемы экологического права. № 3 / 2012, стр. 73-81.

² Сорокин М.А., «Зеленые» сертификаты как инструмент субсидирования в электроэнергетике. Проблемы учета и финансов, № 1(17) 2015, стр. 56-66.

ԱՄՆ-ում թողարկվում են Renewable Energy Credits (RECs) հավաստագրերը: Կանաչ հավաստագրերի այս համակարգն ավելի շատ զարգացած է Տեխասի նահանգում: ՎԷԱ հիման վրա էլեկտրաէներգիա ստեղծողները կանաչ հավաստագրերը ստանում են դրամաշնորհների (գրանտների) տեսքով, իսկ այն մատակարարները, որոնք չեն կատարել իրենց պարտավորությունները վերականգնվող էներգիայի սահմանված քանակության ապահովման հարցում, արտադրողներից պարտավոր են գնել կանաչ վկայականներ: Այստեղ հավաստագրերը թողարկվում են վերականգնվող էներգիայի բոլոր տեսակների համար: ՎԷԱ տարբեր տարատեսակների համար կարող են սահմանվել տարբերակված գներ: Ընդհանուր առմամբ ամենաթանկը արևային էներգիայի հավաստագրերն են, որին հաջորդում են (ըստ գների նվազման) կենսազանգվածի, քամու էներգիայի և հիդրոէներգիայի համար թողարկվող վկայականները¹:

Ճապոնիայում ընդունված է կիրառել New Energy Certificates հավաստագրերը: Կանաչ հավաստագրերը հավաստում են վերականգնվող էներգիայի արտադրման ու թողարկման մասին և խթանում էլեկտրաէներգիայի նոր տեխնոլոգիաների զարգացումը: Վկայականների թողարկման համար հիմք են համարվում արևի, քամու, կենսազանգվածի, օրգանական թափոնների հիմքով աշխատող կայանները (համակարգերը): Կանաչ հավաստագրերն ուժի մեջ են երկու տարի՝ սկսած թողարկման տարուց: Կանաչ հավաստագրերի ուրույն համակարգեր են գործում նաև Դանիայում, Իսպանիայում, Իտալիայում, Ռուսաստանում, Ֆինլանդիայում և այլ երկրներում²:

Կանաչ հավաստագրերի էության բնութագրիչները ցույց են տալիս, որ կանաչ հավաստագրերն ունեն ինչպես ապրանքային, այնպես էլ արժեթղթերին բնորոշ շատ հատկություններ և դժվար է դրանք դասել որևէ կոնկրետ ապրանքային կամ արժեթղթերի խմբի: Դրանց թողարկումը ենթադրում է իրավունքների պարտադիր իրականացում՝ երաշխավորելով վերականգնվող էներգիայի արտադրության վերաբերյալ տեղեկատվության հավաստիությունը, իսկ վաճառքի դեպքում՝ մարման իրականացում (շրջանառությունից հանում): Որոշ երկրներում այն կարող է դիտարկվել որպես արժեթուղթ, մյուսներում՝ իբրև առանձնահատուկ ապրանք կամ առքուվաճառքի պայմանագիր: Դասակարգման նման տարբերակումը կարող է խնդիրներ առաջացնել հավաստագրերի շրջանառության միասնական կանոնների սահմանման գործընթացում, քանի որ տարբեր մոտեցումների դեպքում հավաստագրերը կունենան տարբեր իրավաբանական բնութագրեր, տարբեր կերպ տեղի կունենա դրանց հաշվապահական հաշվառումը, փոխանակումը և այլն³:

Կանաչ հավաստագրերի ազգային համակարգի ոչ բավարար համադրելիության հաղթահարման խնդիրներով հիմնականում զբաղվում են միջազգային կազմակերպությունները, մասնավորապես RECS (Renewable Energy Certificate System - Վերականգնվող էներգետիկայի սերտիֆիկացման համակարգ) միջազգային ասոցիացիան⁴: Այն շահույթ չհետապնդող եվրոպական կազմակերպություն է՝ գրանցված 2001 թ.-ին Բրյուսելում: Վերջինիս անդամակցում են ՎԷԱ հիման վրա էլեկտրաէներգիայի արտադրողներն ու մատակարարները, որոնք ցանկանում են մասնակցել ասոցիացիայի կողմից մշակվող ռազմավարական ու նորմատիվ փաստաթղթերի մշակման գործընթացին՝ կապված հավաստագրերի վաճառքի հետ: Ասոցիացիան զբաղվում է նաև կանաչ հավաստագրերի առևտրային համակարգի ստեղծմամբ՝ ուղղված միջազգային միասնական համակարգի ձևավորմանը: ՎԷԱ ստացվող էներգիայի արտահանումն ու ներմուծումը խթանելու համար անհարժեշտ է ստեղծել հավաստագրերի արտահանման-ներմուծման հաշվառման համակարգ՝ բացառելով կրկնակի վաճառքը և հաշվառումը, քանի որ այն կարող է արտադրվել մի երկրում, սպառվել՝ մյուսում:

Ասոցիացիային անդամակցում են 136 անդամներ 24 պետություններից՝ Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Դանիա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Կանադա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Պակիստան, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովենիա, ԱՄՆ, Թուրքիա,

¹ Emerging markets for renewable energy certificates. Opportunities and challenges / US Department of Energy. NREL. 2005.

² Марченко О.В., Соломин С.В., О мерах по стимулированию развития возобновляемых источников энергии // Science Time. 2015. № 4. С. 472–477.

³ The Green-e Renewable Electricity Certification Program summary / Center for Resource Solutions, 2006.

⁴ Копылов А., Зерчанинова И., ВИЭ: механизм "зеленых" сертификатов. Журнал "ЭнергоРынок" № 2, 2007.

Ֆինլանդիա, Ֆրանսիա, Խորվաթիա, Շվեյցարիա, Շվեդիա, Յամայկա, Ռուսաստան: Կառույցը բաց է համագործակցության համար: Հայաստանի Հանրապետությունից կազմակերպության անդամակցող անդամներ գրանցված չեն:

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանաչ հավաստագրերի մեխանիզմը լայն կիրառություն ունի ամբողջ աշխարհում: Ընդ որում, ոլորտում ներգրավված միջազգային կառույցների գործունեությունն ու միասնական իրավական դաշտի զարգացման միտումները ցույց են տալիս, որ կանաչ հավաստագրերը արդեն իսկ վերածվել են միջազգային առևտրի օբյեկտի: Ավելին, այն կարող է կիրառվել նաև միջազգային ֆինանսավորող կառույցների և զարգացման գործակալությունների կողմից զարգացող երկրներին ՎԷԱ կիրառության բնագավառում օժանդակություն ցուցաբերելու գործընթացում:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ չկա և չի կարող լինել կանաչ հավաստագրերի միասնական ընդհանուր մոդել, որը կհամապատասխանի ցանկացած երկրի պահանջներին: Տարբեր երկրներում տարբեր է նաև ՎԷԱ հիման վրա արտադրվող էլեկտրաէներգիայի մասնաբաժինը՝ տատանվելով 0-ից մինչև անգամ 100%: Տրամաբանական է ենթադրել, ՎԷԱ ընդլայնմանը զուգահեռ նվազում է կանաչ հավաստագրերի գործիքի արդյունավետությունը, իսկ 100% ՎԷԱ օգտագործման դեպքում այն գործնականում սպառում է իրեն: Ավելին, տարբեր երկրներին բնորոշ են նաև ՎԷԱ տարատեսակների տարբեր համամասնություններ, զարգացման առաջնահերթություններ և տնտեսական նպատակահարմարություն, որով պայմանավորված առանձին երկրում որոշակի ՎԷԱ-ի համար կանաչ հավաստագրերը կարող են կիրառվել կամ ոչ:

Հայաստանի Հանրապետությունում կանաչ հավաստագրերի կիրառություն ներդրված չէ, ինչը կարելի է ներկայացնել և՛ որպես բացթողում, և՛ որպես սոցիալ-տնտեսական զարգացման անբավարար մակարդակի արտացոլում: Կանաչ հավաստագրերի կիրառումը գործում է ինքնուրույն և պետության համար ֆինանսական լրացուցիչ բեռ չի ենթադրում: Ընդ որում, հասարակական ինքնագիտակցության համապատասխան մակարդակի և սոցիալական պատասխանատվության ինստիտուտների առկայության պարագայում կանաչ հավաստագրերը հատկապես արդյունավետ են վերականգնվող էներգետիկայի զարգացման սկզբնական փուլերում, երբ հավաստագրերի առաջարկը խիստ սահմանափակ է: Հետևաբար Հայաստանի Հանրապետությունում ՎԷԱ կիրառման խթանման ներկայիս գործիքակազմում կանաչ հավաստագրերի կիրառումը ժամանակի պահանջ է, ինչն արժանի է ներառվելու ՀՀ կառավարության գործունեության հետագա ծրագրերում:

ԿԱՆԱԶ ԶԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ԴԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԶԻՍԱՆ ՎՐԱ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՍԱՐԿՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*,

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԱՐՄԻՆԵ ԳԱԳԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ, *տ.գ.թ.*,

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառության խթանման ուղղությամբ ֆինանսական աջակցության մեխանիզմներին զուգահեռ կիրառվում են գործիքներ, որոնք բեռ չեն հանդիսանում պետական բյուջեի համար: Դրանցից են կանաչ հավաստագրերը, որոնց առքուվաճառքը լրացուցիչ եկամուտներ է ապահովում էլեկտրաէներգիա արտադրողներին: Հայաստանում ոլորտի խթանման ներկայիս գործիքակազմում կանաչ հավաստագրերի կիրառումը ժամանակի պահանջ է, ինչն արժանի է ներառվելու ՀՀ կառավարության գործունեության հետագա ծրագրերում:

Բանալի բառեր. էլեկտրաէներգիա, էներգիա, կանաչ, վերականգնվող, այլընտրանքային, խթանում, կայուն զարգացում, հավաստագիր, ՎԷԱ

РОЛЬ ЗЕЛЕННЫХ СЕРТИФИКАТОВ В СТИМУЛИРОВАНИИ ИСПОЛЬЗОВАНИЯ ЭЛЕКТРОЭНЕРГИИ, ВЫРАБАТЫВАЕМОЙ ИЗ ВОЗОБНОВЛЯЕМЫХ ИСТОЧНИКОВ ЭНЕРГИИ

АЙК АШОТОВИЧ МАРКОСЯН, *к.э.н.*

старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

АРМИНЕ ГАГИКОВНА МИНАСЯН, *к.э.н.*

младший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

В целях стимулирования использования возобновляемых источников энергии наряду с механизмами финансовой поддержки применяются инструменты, не обременяющие государственный бюджет. Среди них зеленые сертификаты, купля-продажа которых обеспечивает дополнительные доходы для производителей электроэнергии. Использование в Армении зеленых сертификатов в современном наборе инструментов стимулирования сферы – требование времени, заслуживающее быть включенным в программы развития правительства РА.

Ключевые слова: электроэнергия, энергия, зеленый, возобновляемый, альтернативный, стимулирование, устойчивое развитие, сертификат, ВИЭ.

THE ROLE OF GREEN CERTIFICATES IN PROMOTING THE USE OF ELECTRICITY GENERATED FROM RENEWABLE ENERGY SOURCES

HAYK ASHOT MARKOSYAN, *Ph.D. in Economics*

Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

ARMINE GAGIK MINASYAN, *Ph.D. in Economics*

Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

In order to promote the use of renewable energy sources, along with mechanisms of financial support instruments the instruments that do not burden the state budget are utilized. Green certificates are those instruments the purchase and sale of which ensures additional revenues for energy producers. The Green Certificates in Armenia, along with the existing set of tools aimed at boosting the sector growth is the need of our times that need to be included in the future programs of the Government of the Republic of Armenia.

Keywords: Electricity, energy, green, renewable, alternative, promotion, sustainable development, certificate, renewable energy source (RES)

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Էներգետիկան ցանկացած երկրի կամ տարածաշրջանի ամբողջ արտադրական կառուցվածքի և ենթակառուցյունների վրա էական ու որոշիչ ազդեցություն ունեցող ճյուղերից մեկն է: Այն հանդես է գալիս որպես տնտեսության կարևորագույն ճյուղ և զբաղվում է էներգետիկ ռեսուրսների բոլոր տեսակների արտադրման, ձևափոխման, տեղափոխման, բաշխման և օգտագործման հարցերով: Իր հերթին էներգետիկայի զարգացումը հենվում է տնտեսության այնպիսի ճյուղերի վրա, ինչպիսին են մետալուրգիան, մեքենաշինությունը, շինարարությունը, տրանսպորտը, արդյունաբերությունը և այլն:

Տնտեսության էներգետիկ ճյուղի ձևավորումն ու զարգացումը ենթադրում է ինչպես խոշոր կապիտալ ներդրումներ, այնպես էլ արտադրության և սպասարկման բնագավառում ներգրավված զգալի քանակությամբ աշխատուժ: Տնտեսության մեջ ունեցած անգնահատելի դերակատարմամբ պայմանավորված բոլոր երկրներում իշխանության տարբեր մակարդակներ ընդգրկող մարմիններ անմիջականորեն միջամտում են էներգետիկայի արտադրության, սպառման, առ ու վաճառքի, ինչպես նաև շուկայի ձևավորման գործընթացներին: Տնտեսության այս կարևորագույն ճյուղի մասին խոսելիս, կարելի է ասել, որ Հայաստանն ունի ձևավորված էներգետիկ համակարգ: Էներգետիկ համակարգին ճկունություն և կայունություն է հաղորդում աղբյուրների բազմատեսակությունը: Ընդհանուր համակարգում գործում են ԱԷԿ-ը, ՀԷԿ-երը, ՋԷԿ-երը: Առկա է էլեկտրաէներգիայի արտադրության և արտահանման ծավալների ընդլայնման ներուժ: Հայաստանն ունի հողմաէներգետիկայի բավականին զգալի ռեսուրսներ: Մեծ է նաև արևային էներգիայի ներուժը, որի օգտագործումը ջերմային էներգիա ստանալու նպատակով կարող է զգալիորեն նվազեցնել էներգակիրների քանակը: Հայաստանի համար բավականին հեռանկարային է նաև երկրաջերմային ռեսուրսների ներուժի օգտագործումը: Որպես վերականգնվող էներգատեսուրս, դրանց հետագա իրացումը հրապուրիչ կարող է դառնալ մասնավոր և միջազգային ներդրողների համար¹: Ներդրողների համար մեծ գրավչություն կարող է ներկայացնել նաև փոքր հիդրոէներգետիկայի բնագավառը, քանզի այդ մասին են վկայում 2004-2015 թթ. տրամադրված կառուցման և արտադրության լիցենզիաների քանակն ու հզորությունները: Ընդ որում, լիցենզավորված ընկերությունների անվանումների վերլուծությունը փաստում է, որ առկա են բազմաթիվ ներդրողներ, որոնք առաջին ՓՀԷԿ-երը գործարկելուց հետո պատրաստվում են ներդրումներ կատարել նոր ՓՀԷԿ-երի կառուցման նպատակով²:

Կարծիք կա, որ Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ-ից ժառանգություն է ստացել էներգետիկ հզոր կառուցվածք, որի ռացիոնալ կառավարումը կարող էր տասնամյակներ շարունակ ապահովել ոչ միայն Հայաստանի էներգետիկ պահանջները, այլ նաև էներգետիկ անվտանգությունը: Այս համատեքստում կարելի է հանգել այն եզրակացությանը, որ անկախության առաջին տարիներին էներգետիկ ճգնաժամի պատճառներում մեծ նշանակություն ունեին սուբյեկտիվ գործոնները, ինչն իր արտահայտումն է գտնում այդ տարիների ՀՀ իշխանությունների հասցեին հնչող տարբեր մեղադրանքների տեսքով:

Ներկայումս կարելի է անառարկելի համարել այն պահանջը, որ խոշոր էներգետիկ (և ոչ միայն) օբյեկտների հետազոտումը պետք է կատարվի տվյալ օբյեկտի և տեղաբաշխման վայրի

¹ Կ. Կարապետյան, Տարածաշրջանային համագործակցության և էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները Հարավային Կովկասում, Երևան, 2008, էջ 55

² Սուվարյան Ա., Մոմջյան Մ., Փոքր Հիդրոէներգետիկայի զարգացման հիմնահարցերը ՀՀ-ում: «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», №5-6 (189-190) 2016, էջ 72-75:

շրջապատող միջավայրի հետ դրա փոխազդեցության բոլոր գործոնները հաշվի առնելու պայմաններում: Միաժամանակ, կարելի է պնդել, որ սեփական անբավարար էներգառեսուրսներով տարածաշրջանների զարգացման գլխավոր ուղին պետք է լինի տնտեսության ճյուղերի և էներգիայի նկատմամբ դրանց պահանջարկի փոխադարձ համամասնական պայմանները հաշվի առնելու գիծը: ԽՍՀՄ տարիներին Հայաստանի էներգետիկ համակարգի ձևավորման պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոլորտում կատարված հանգուցային որոշումները շատ դեպքերում աչքի են ընկել անհետատեսությամբ, ակնհայտ սխալներով և չհիմնավորվածությամբ, որոնց հետևանքները ոչ միայն տեսանելի են ներկայում, այլև դժվար թե լուծում գտնեն մոտ ապագայում: Էներգետիկայի զարգացման նախկինում տարվող փուլերում այդպիսի սխալ կանխատեսումների օրինակ կարող է ծառայել հատկապես Սևանա լճի ջրերի՝ ռոտզման և էներգետիկ նպատակների համար մեծ ինտենսիվությամբ օգտագործելու անհիմն ուղին ու հետագայում լիճը արտակարգ ծանր վիճակից դուրս բերելու ձեռնարկած միջոցառումները: Դա մեծ նախագծերի մշակման և իրականացման ժամանակ հանդես բերած համակարգային դիտարկման պահանջների անտեսման ապացույց է: Լճի և դրան հարող շրջանների էկոլոգիական հավասարակշռված դրության խախտումը հետագայում բերեց անդառնալի հետևանքների, որոնց գոնե մասնակի հաշվի առնելու, գնահատելու պայմաններում բնությանը հասցված վնասները կլինեին անհամեմատ քիչ, գուցե և վերականգնելի: Չհիմնավորված որոշումների դասական օրինակ կարող է ծառայել նաև Հայկական ԱԷԿ-ի կառուցումը բարձր սեյսմիկ շրջանում, դրա հետագա գործողությունից ստիպողական հրաժարվելը և ապա 2-րդ էներգաբլոկի վերաբացման գծով թափված ջանքերը: Հաշվի առնելով Հայաստանի ներկայիս հանրապետությունում էներգետիկ վերափոխումների և արտադրական հզորությունների սերնդափոխության անհետաձգելի պահանջը, ճիշտ կլինի նախ վերլուծել ՀՀ էներգետիկ համակարգի զարգացման անցած փուլերում թույլ տրված լուրջ բացթողումները ու սխալները, կատարել անկանխակալ եզրակացություններ, ինչը կարևոր նշանակություն կունենա նրա հետագա ընթացքի ճիշտ ուղու ընտրման գործում:

Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ 20-րդ դարի սկզբներին Հայաստանն աչքի չէր ընկնում ոչ զարգացած տնտեսությամբ, և ոչ էլ արդյունաբերությամբ: Տնտեսության մեջ համեմատաբար մեծ տեղ էր զբաղեցնում գյուղատնտեսությունն ու դրանից բխող արդյունաբերության վերամշակող ճյուղերը: Առկա արդյունաբերական ձեռնարկությունները մեծ մասամբ արհեստագործական ոչ մեծ արհեստանոցներ էին: Բարձրորակ բանվորական կադրեր հատուկենտ կարելի էր հանդիպել:

Նշված իրավիճակից անցում կատարելու և տնտեսական զարգացմանը արգելք էին հանդիսանում նաև թույլ զարգացած էներգետիկ ենթակառուցվածքները: Երկրում բացակայում էին խոշոր էլեկտրակայանները, ինչպես նաև հաղորդիչ գծերն ու էներգետիկ համակարգի այլ բաղադրիչներ: Գործում էին մի քանի փոքր էլեկտրակայաններ, որոնք մեծամասամբ պատկանում էին արտասահմանյան ընկերություններին: Երկրի տարածքում գործող էլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում էր 3165 կՎտ, իսկ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը՝ 51 մլն. կՎտ: Այդ էլեկտրակայաններից առավել խոշորները տեղաբաշխված էին պղնձի հանքավայրերի մոտակայքում, որոնցից կարելի է առանձնացնել Դեբետ գետի վրա 1909թ. կառուցված Ալավերդու հիդրոէլեկտրակայանը՝ 3x360 կՎտ հզորությամբ¹: Սեփական վառելիքային ռեսուրսների բացակայությունը, այլ տարածաշրջանների հետ տրանսպորտային թույլ կապերը հնարավորություն չէին ընձեռում դիտարկել հեռավոր վայրերից ներկրվող վառելիքների վրա խոշոր էլեկտրակայանների կառուցման հնարավորությունները:

Հայաստանի խիստ կտրտված լեռնային ռելիեֆն ու ռոտզման անհրաժեշտությունը նպաստեցին սեփական ջրային ռեսուրսների համալիր օգտագործման գաղափարի ստեղծմանը: Դրա հետևանքով հանրապետության էլեկտրաէներգետիկայի հետագա զարգացումն ուղղվեց ռոտզման ջրահոսքերի վրա ոչ մեծ հզորությամբ հիդրոէլեկտրակայանների շինարարությանը: Նման կայաններից առաջինը եղավ 1920 թվականի սկզբին Երևանում ռոտզման ջրանցքի վրա հիդրոէլեկտրակայանի շինարարությունը, որին հաջորդեց Ախուրյան գետից սնվող Շիրակի ռոտզման

¹ Արշակյան Դ.Թ., Հայաստանի էներգետիկան. Անցած ուղին և զարգացման հեռանկարները: ՀՀ ԳԱԱ «Գիտության» հրատարակչություն, Երևան, 2002, 346 էջ:

ջրանցքի վրա 1928 թ.-ին գործարկված 5,3 ՄՎտ հզորությամբ Լենինականի ՀԷԿ-ը, 1932 թվականին կառուցված 25,1 ՄՎտ հզորությամբ Չորագետի ՀԷԿ-ը, 1934թ.-ին Արտաշատի ջրանցքի վրա կառուցված 2,4 ՄՎտ հզորությամբ Երևանի ՀԷԿ-2-ը: Հիդրոէլեկտրակայանների կառուցման ծրագրի իրականացման հետ միաժամանակ ծավալվել էր նաև էլեկտրական ցանցերի շինարարության հզոր ծրագիր: Չորագետի ՀԷԿ-ի գործարկմանը զուգընթաց շահագործման հանձնվեց երկրում առաջին 110 կՎ բարձրավոլտ լարման էլեկտրահաղորդման գիծը, որով Չորագետ ՀԷԿ-ը միացվեց Վանաձորի հետ:

Սակայն, նմանատիպ «փոքր ու միջին» ջրահոսքերի ու ոռոգման ջրանցքների կառուցմամբ հնարավոր չէր հասնել Հայաստանում արագ զարգացող էլեկտրաէներգիայի կայուն պահանջարկի բավարարմանը: Հանրապետությունում սեփական ռեսուրսների բացակայության փաստը կրկին ստիպեցին դիմել առկա հիդրոռեսուրսների օգտագործմանը, որի լուծումը կարող էր հանդիսանալ Սևանա լճի ջրի օգտագործումը: Էներգետիկ և ոռոգման նպատակներով Սևանա լճի և Հրազդան գետի ջրերի համալիր օգտագործումը դիտվում էր որպես Հայաստանի տնտեսության կայուն զարգացման ուղի: Այսպիսով, 1931թ.-ին կազմվեց մի ծրագիր, որի համաձայն նախատեսվում էր Հրազդան գետի վրա վեց հիդրոէլեկտրակայաններից բաղկացած կասկադի կառուցում՝ 556.4 ՄՎտ հզորությամբ և 1.21 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքով: Նույն ծրագրով նախատեսվում էր նաև ոռոգման 17 ջրանցքների կառուցում՝ Արարատյան հարթավայրի հողերի ոռոգման համար:

1940թ.-ի սկզբներին սկսվեց Սևան-Հրազդան կասկադի առաջին աստիճանի՝ Սևանի ՀԷԿ-ի շինարարությունը: Հայրենական մեծ պատերազմի պատճառով ժամանակավորապես հետին պլան մղված այս շինարարությունն ավարտվեց 1949 թ.-ին՝ շահագործման հանձնելով 34.2 ՄՎտ հզորությամբ Սևանի ՀԷԿ-ը: Այնուհետև մինչև 1961 թվականը շահագործման հանձնվեցին Արգելի, Արգնիի, Հրազդանի և Երևանի ՀԷԿ-երը: Կասկադի ՀԷԿ-երի հիմնական տեխնիկատնեսական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Սևան-Հրազդան կասկադի ՀԷԿ-երի հիմնական բնութագրերը

ՀԷԿի անվանումը	Տեղակայված հզորությունը, ՄՎտ	Միջին տարեկան արտադրանքը, մլն կՎտժ	Ջրի հաշվարկային ծախսը, մ ³ /վրկ	Առավելագույն էջքը, մ	ՀԷԿ-ի գործարկման տարին
Սևանի	34.2	57.4	65	50	1949
Հրազդանի	81.6	161.3	70	138	1959
Արգելի	224	453.5	70	297	1953
Արգնիի	70.6	199	70	118	1956
Քանաքեռի	102	225.5	60	173	1936
Երևանի	44	114.0	62	90.8	1961

Հետագա տարիներին ևս բոլոր ջանքերն ուղղվում էին Հայաստանի հարաճուն էներգետիկ պահանջմունքները բավարարել նոր ՀԷԿ-երի շինարարության միջոցով: Հատկանշական է Որոտան գետի վրա ՀԷԿ-երի կասկադի կառուցումը: Չնայած այս կասկադի հզորություններին, դրանց դերն այնքան էլ մեծ չէր հանրապետության էլեկտրաէներգիայի բավարարման մեջ, այն ավելի շատ կատարում էր էլեկտրաէներգետիկ համակարգի օրական և սեզոնային կարգավորողի դեր:

Աղյուսակ 2

Որոտանի կասկադի ՀԷԿ-երի հիմնական բնութագրերը

ՀԷԿ-ի անվանումը	Տեղակայված հզորությունը, ՄՎտ	Միջին տարեկան արտադրանքը, մլն կՎտժ	Ջրի հաշվարկային ծախսը, մ ³ /վրկ	Առավելագույն էջքը, մ	ՀԷԿ-ի գործարկման տարին
Սպանդարյանի	76	157	30	277/237	1987
Շամբի	171	330	75	96/80	1977
Տաթևի	157		33	13.6/1.8	1970

Կարևոր է նշել այն փաստը, որ Սևան-Հրազդան կասկադի բոլոր ՀԷԿ-երը հաշվարկված էին Սևանա լճի ջրի բացթողումների առավելագույն օգտագործման սկզբունքի վրա (մոտավորապես 60-70 մ³/վ): Էլեկտրաէներգիայի նկատմամբ օրեցօր աճող պահանջարկը և ՀԷԿ-երի բոլոր աստիճանների ոչ միաժամանակյա կառուցման, ինչպես նաև նախագծով սահմանված ժամանակահատվածի ձգձգմամբ (25-30 տարի) պայմանավորված Սևանա լճի ջրերի հսկայական ծավալներ բաց թողնվեցին, որոնց էներգետիկ ներուժը միայն մասնակիորեն յուրացվեց, իսկ Սևանա լճի մակարդակը կտրուկ նվազեց՝ ընդգծելով նախնական սխեմայում թաքնված թերություններն ու սխալները: 50-ականներին ԽՍՀՄ դեկավարության կողմից կազմվեց ծրագիր Սևանա լճի ջրերի մակարդակի բարձրացման նպատակով մոտակա գետերի և հատկապես Արփա գետի ջրերը դեպի Սևանա լիճ տեղափոխման միջոցառումների վերաբերյալ:

Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգը 60-ական թվականներին ուներ զարգացման զգալի հնարավորություններ (էներգահամակարգի տեղակայված հզորությունը հասցվել էր 586 ՄՎտ-ի էլեկտրաէներգիայի տարեկան 2746,8 մլն. կՎտժ արտադրանքով): Սակայն, վերջինիս նկատմամբ պահանջարկն ավելի մեծ էր, քան տվյալ համակարգի հնարավորությունները: Այդ առումով երկրում էներգետիկ նոր բազայի ստեղծումն ուղղակի անհարժեշտություն էր: Ընդունվեց Հայաստանի էներգետիկ բազան հիդրոէներգետիկից դեպի ջերմաէներգետիկի անցման ռազմավարություն: Նախագծվեցին և կառուցվեցին ջերմաէլեկտրակայաններ՝ 1963թ. Երևանում (250 ՄՎտ հզորությամբ), 1964թ.՝ Վանաձորում (49 ՄՎտ հզորությամբ) և 1967թ.՝ Հրազդանում (300 ՄՎտ հզորությամբ): 1970թ. ՀՀ էլեկտրակայանների տեղակայված հզորությունը կազմեց 1677 ՄՎտ, էլեկտրաէներգիայի արտադրանքը՝ 6107,5 մլն կՎտժ: 1960-1970 թթ. ընթացքում զգալի աշխատանքներ տարվեցին էլեկտրահաղորդման գծերի կառուցման ուղղությամբ՝ 35 Կվ լարման էլեկտրահաղորդման գծերի երկարությունն աճեց գրեթե երկու անգամ, 110 Կվ լարման գծերինը՝ 2,5 անգամ, 220 Կվ լարման գծերինը՝ 3 անգամ: Տրանսֆորմատորային ենթակայանների հզորությունն աճեց 6 անգամ՝ հասնելով 4300 ՄՎԱ-ի:

Մյուս կարևոր իրադարձությունը, որը սկզբունքային նշանակություն ունեցավ և իր դրոշմը թողեց ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքի ողջ հետագա պատմության վրա, դա Հայաստանում ԱԷԿ-ի կառուցման որոշումն էր: Հայաստանում ատոմային էներգետիկայի զարգացման ռազմավարության վերաբերյալ կան ինչպես բացասական, այնպես էլ դրական գնահատականներ: Եթե վերջինները հիմնականում հիմնված են «այլընտրանքի բացակայության» թեզի վրա, ապա բացասական վերաբերմունքը հիմնավորվում է բավականին ծանրակշիռ գործոններով¹:

Այսպես, միջուկային էներգետիկայի զարգացման սկզբնական փուլում ԱԷԿ-ները գործում էին ռազմականացված գերատեսչությունների վերահսկողության ներքո: 20-րդ դարի 60-ական թ.-ից սկսած ԱԷԿ-ների մի զգալի մասը հանձնվեց էներգետիկայի նախարարությանը, որն այս օբյեկտներին սկսեց մոտենալ «նվազագույն ծախսերի» մեթոդով: Հայկական ԱԷԿ-ը նախագծվեց հենց այդ ժամանակաշրջանում, որպես սովորական արտադրական կառույց, զուրկ անվտանգությունն ապահովող մի շարք չափից դուրս կարևոր համակարգերից և միջոցներից (երկաթբետոնյա պաշտպանիչ գմբեթ, ակտիվ գոտու հովացման համակարգ և այլն):

Այդ պատճառով պատահական չէր, որ չեռնոբիլյան ողբերգությունից շատ առաջ (դեռևս 1977-1978թթ.) հստակորեն ձևավորվեց Հայկական ԱԷԿ-ի վերակառուցման հարցը՝ նրան միջուկային անվտանգության հարկի մակարդակի բերելու նկատառումներով: Կայանի գործարկումից գրեթե 10 տարի հետո մշակվեց այդպիսի վերակառուցման նախագիծ, որի արժեքը գերազանցում էր կայանի սկզբնական արժեքին: Դրա հետ միաժամանակ պետք է մշակվեր նաև վթարի տեղայնացման ավտոմատացված համակարգը՝ մոտավորապես նույնքան արժեքով: Միանգամայն բնական էր, որ այդ նախագծի քննարկումը տեղում (1987թ. կեսերին) բերեց տրամաբանական եզրակացության՝ դրա իրականացման անիմաստության մասին: Ողջ սրությամբ դրվեց հանրապետությունում անհրաժեշտ տեխնիկական բազա ստեղծելու՝ ԱԷԿ-ի էներգաբլոկները փուլ առ փուլ շահագործումից հանելու համար:

¹ Արշակյան Դ.Թ., Հայաստանի էներգետիկան, անցած ուղին և զարգացման հեռանկարները (գիտագործնական մոտորումներ): ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստ., Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, էջ 259-265:

1988թ. դեկտեմբերի երկրաշարժը նոր սրությամբ դրեց Հայկական ԱԷԿ-ի շահագործման նպատակահարմարության հարցը, առավել ևս, որ այն գտնվում էր երկրաշարժի հարավային կտրվածքի անմիջական մոտերքում: Անմիջապես Հայաստան եկան ԽՍՀՄ մինիստրների խորհրդի վառելիքաէներգետիկ համալիրի բյուրոյի գիտատեխնիկական միջգերատեսչական խորհրդի անդամները, նախկին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի երկրի ֆիզիկայի ինստիտուտի, Ի.Վ. Կուրչատովի անվ. ատոմային էներգիայի ինստիտուտի գիտնականները, Միջին Ասիայի, Անդրկովկասի, Ուկրաինայի և արտասահմանյան մի շարք երկրների (ԱՄՆ, Ճապոնիա, Ֆրանսիա) սեյսմոլոգները: Երկրաշարժի հետևանքների և ԱԷԿ-ի սարքավորումների հետազոտությունները հաստատեցին միջգերատեսչական խորհրդի նախկինում արված եզրակացությունը ԱԷԿ-ի աշխատանքը անմիջապես դադարեցնելու մասին: Ի կատարումն նշված եզրակացության, նախկին ԽՍՀՄ մինիստրների խորհրդի որոշմամբ դադարեցվեց Հայկական ԱԷԿ-ի էներգաբլոկների աշխատանքը՝ առաջինը 1989թ. փետրվարի 25-ին, երկրորդը՝ մարտի 18-ին: Որոշմամբ նախատեսվում էր ԱԷԿ-ի բազայի վրա նոր ջերմային էլեկտրակայան կառուցելու համար անհրաժեշտ միջոցառումների մշակում: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ մի քանի տարի անց էներգետիկ ճգնաժամի հաղթահարման համատեքստում անվտանգության համակարգերի արդիականացումից հետո հայկական ԱԷԿ-ը վերագործարկվեց:

Այսպիսով, 1965-1990 թթ. ՀՀ տնտեսության զարգացման քսանհինգամյա ժամանակահատվածը հիմնականում բնութագրվում է տնտեսության մեջ կատարված կառուցվածքային փոփոխություններով: Դրանցից մեկը ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգում տեղի ունեցած փոփոխություններն էին՝ հիդրոէներգետիկից գլխավորապես ջերմաէներգետիկայի և մասամբ ատոմայինի անցումը, տնտեսության կառուցվածքային լուրջ տեղաշարժերը՝ դրանում էներգիա, վառելիք, նյութատար ճյուղերի աստիճանական փոխարինումն ավելի քիչ նյութատար ճյուղերի:

Էներգահամակարգի վերականգնման և տեխնիկական վիճակի բարելավման նպատակով գործի մեջ դրվեցին որոշ վարկային միջոցներ և տեխնիկական օգնություն, որոնք տրամադրվում են տարբեր երկրների կառավարությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից: Հիմնական գերակայությունը տրվեց ԱԷԿ-ի անվտանգության բարձրացմանը, ինչպես նաև համակարգաստեղծ ցանցի առավել կարևոր հատվածների մաշված բարձրավոլտ անջատիչների փոխարինմանը¹:

Էկոնոմիկայի և դրա էներգետիկ բազայի զարգացման ուղու ճիշտ կանխագուշակումը այսօր էլ ավելի հրատապ է դառնում: Ասվածի ճշմարտացիությունը հաստատում է նախկին ԽՍՀՄ-ի զարգացման անցած ուղու վերլուծությունը: Ցավոք, տնտեսության անցած ուղիում թույլ տրված սխալներից ու բացթողումներից միշտ չէ, որ պատշաճ հետևություններ են արվում: Ներկայումս էլ փորձեր են արվում այլընտրանքի բացակայության պատճառաբանությամբ հիմնավորել էկոլոգիական վտանգներ պարունակող բազմաթիվ փոքր ՀԷԿ-երի շինարարությունը, ատոմային նոր էներգաբլոկի կառուցման անհրաժեշտությունը, և այլ միջոցառումներ, այն դեպքում, երբ ողջ աշխարհում մեկնարկել է վերականգնվող էներգետիկայի անցման լայնամասշտաբ անդարձելի գործընթացը:

¹ Կարապետյան Կ., Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հեռանկարները, Երևան, 2008, էջ 236:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴԴՅԱԼՆԵՐԸ

ԱՐՄԻՆԵ ԳԱԳԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ, *տ.գ.թ.*

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտ.ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

ՀՀ էներգետիկայի զարգացման փուլերը տարբեր ժամանակահատվածներում տարբեր բնութագրեր են ունեցել: Թվում էր, թե խորհրդային տարիներին մեր հանրապետությունը այս ճյուղում առաջատարներից էր, սակայն այդ ժամանակահատվածում թույլ տրված սխալներն անդառնալի եղան Հայաստանի համար: Կարելի է ասել, որ Հայաստանն ունի որոշակիորեն ձևավորված էներգետիկ համակարգ՝ չնայած առակա մի շարք բացթողումների ու թերությունների: Բացթողումների շարքում հատկանշական է վերականգնող էներգիայի ստեղծումն ու կիրառումը, ինչն անկասկած իր դրական ազդեցությունը կրողն է երկրի տնտեսության զարգացման վրա:

Բանալի բառեր. էներգետիկա, տնտեսություն, ՀԷԿ, վառելիքաէներգետիկ համակարգ, հիդրոէլեկտրակայան, բազա, ժամանակահատված:

ИСТОРИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ СТАНОВЛЕНИЯ И РАЗВИТИЯ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ СИСТЕМЫ РА

АРМИНЕ ГАГИКОВНА МИНАСЯН, *к.э.н.*

младший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Этапы развития энергетики РА в разные периоды времени имели различные характеристики. Казалось, что в советские годы наша республика была одним из лидеров в этой отрасли, однако ошибки, допущенные в этот период, оказались необратимыми для Армении. Можно сказать, что в Армении, несмотря на ряд упущений и недостатков, сформировалась определенная энергетическая система. Среди упущений важно отметить развитие и использование возобновляемых источников энергии, что, безусловно, окажет положительное влияние на экономическое развитие страны.

Ключевые слова: электроэнергия, экономика, ГЭС, топливно-энергетическая система, гидроэлектростанция, база, период времени.

THE HISTORICAL BACKGROUND OF FORMATION AND DEVELOPMENT OF THE ENERGY SYSTEM OF THE RA

ARMINE GAGIK MINASYAN, *Ph.D. in Economics*

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The stages of the development of the energy sector in the Republic of Armenia in different periods of time had different characteristics. It seemed that in the Soviet years our republic was one of the leaders in this sector, but the mistakes made during this period turned out to be irreversible for Armenia. One may say that despite the number of shortages and shortcomings, a certain energy system has been formed in Armenia. Among the omissions it is important to note the development and use of renewable energy sources, which, of course, will have a positive impact on the country's economic development.

Keywords: Electric power, economy, hydropower station, fuel and energy system, hydroelectric power station, base, period of time

ԼՈՒՄԻՆԵ ՆՎԵՐԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ասպիրանտ

ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԼՂՀ-ՈՒՄ

Հայաստանի Հանրապետության տնտեսության իրավիճակի կանխատեսումները նկարագրում են այն իրական միջավայրը, որի պայմաններում գործելու է կառավարությունը: Մյուս կողմից կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն ազդում է մակրոտնտեսական միջավայրի վրա, հետևաբար մակրոտնտեսական կանխատեսումները հնարավորություն են տալիս հասկանալու, թե կառավարության որդեգրած հարկաբյուջետային քաղաքականությունը որքանով է համահունչ տնտեսության այլ հատվածների զարգացման միտումներին:

Տնտեսական կանխատեսումների իրականացման կարևոր հիմնավորումն այն է, որ ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին կառավարության համար ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Իր էությամբ տնտեսությունը կարևորված է, որը կարելի է նկարագրել ցուցանիշների հետևյալ հիմնական խմբերով.

- Համախառն առաջարկ (չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների իրական աճերով և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճով):
- Համախառն պահանջարկ (չափվում է պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, զուտ արտահանում/ՀՆԱ):
- Գնային փոփոխականներ (ՀՆԱ դեֆլյատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի գների փոփոխությունը, և գնաճ, որը չափվում է սպառողական գների ինդեքսով (ներառյալ ներմուծված սպառողական ապրանքների գները) (ՄԳԻ)):
- Ֆինանսական համակարգի խորություն (չափվում է հետևյալ փոփոխականներով՝ փողի ագրեգատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ, և ցույց է տալիս, թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),
- Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով):
- Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի և եկամուտների ծավալով, պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ):

Աղյուսակ 1-ում ներկայացված է տնտեսության ներկա իրավիճակի հակիրճ նկարագրությունը՝ ըստ վերը նշված վեց գլխավոր տնտեսական բնութագրիչների: ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են աղյուսակ 1-ում նշված ցուցանիշները:

Երկրում համախառն առաջարկն իրական արտահայտությամբ չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումարով: Դրա փոփոխությունը նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ակնկալվող զարգացումները:

ՀՀ տնտեսական հիմնական ցուցանիշներն ըստ 2012-2016թթ.

Չափորոշիչ	2012	2013	2014	2015	2016
Տնտեսական աճ (ՀՆԱ % փոփոխություն)	7.2	3.3	3.5	2.5	2.2
Ներդրումների մակարդակ (ներդրում/ՀՆԱ %)	25.3	22.3	21.1	20.1	20.3
Սպառման մակարդակ (սպառում/ՀՆԱ %)	98.1	99.1	97.9	96.3	94.5
ՀՆԱ ինդեքս դեֆլյատոր	98.8	103.4	102.7	103.2	104.0
Գնաճ միջին	2.6	5.8	3.0	4.3	4.0
Գնաճ 12-ամյա	3.2	5.6	4.6	3.0	4.0
Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ %	-1.4	-1.6	-1.86	3.8	-3.5
Ընթացիկ հաշիվ/ ՀՆԱ	-10.0	-7.6	-7.3	-5.8	6.2

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո, երկրի տնտեսական աճի կառուցվածքում տեղի են ունեցել որակական տեղաշարժեր ի օգուտ ավելի արտադրողական ճյուղերի: Տնտեսական աճին հետձգնաժամային տարիներին սկսել է առավելապես նպաստել տնտեսության արտահանելի հատվածը՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

2014 թվականին տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտներով: 2014 թվականին 3.5% աճ է արձանագրվել՝ պայմանավորված հիմնականում գյուղատնտեսության և ծառայությունների ճյուղերով: Նշված ժամանակահատվածում ծառայությունների ոլորտն աճել է 5.7%-ով, որի հաշվին ապահովվել է տնտեսական աճի 2.5 տոկոսային կետը, իսկ գյուղատնտեսության աճը կազմել է 7.6%, որն ապահովել է տնտեսական աճի 1.4 տոկոսային կետը: Արդյունաբերությունը և շինարարությունը նվազել են համապատասխանաբար 0.7% և 4.6%-ով՝ բացասական նպաստելով տնտեսական աճին:

Չնայած արտաքին աշխարհից եկող բացասական զարգացումներին՝ 2015թ. հունվար-հուլիսին տնտեսության աճի միտումը շարունակվեց: 2015 թվականի հունվար-հուլիսին գրանցվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի (SU3) 3 աճ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ցուցանիշն աճել է 4.2%-ով: Ընդ որում, տնտեսական ակտիվությանը նպաստել են հիմնականում գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը: SU3-ի աճին դրական նպաստում են ունեցել գյուղատնտեսության (3.2 տոկոսային կետ) և արդյունաբերության (0.8 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը: Ծառայությունները և շինարարությունը տնտեսական ակտիվությանը գրեթե չեն նպաստել:


2015 թվականին տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերով: 2015 թվականին ներքին տնտեսական զարգացումների միտումները և արտաքին աշխարհից եկող զարգացումները հիմք են հանդիսացել 2015 թվականին 2.5% տնտեսական աճի համար:

2016 թվականին տնտեսական աճը ավելի համեստ է՝ պայմանավորված հիմնականում արտաքին զարգացումներով, մասնավորապես Ռուսաստանի տնտեսության և պղնձի համաշխարհային գների անկմամբ: 2016 թվականի համար իրական ՀՆԱ-ի աճը ավելի ցածր է 2015 թվականի համեմատությամբ՝ 2.2%-ի չափով, որին հիմնականում նպաստում են արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերը: Տնտեսական աճի կանխատեսման մեջ հաշվի է առնվել Ռուսաստանի տնտեսական աճի միտումները:

Տնտեսության ճյուղերի առանձին տնտեսական աճի ժամանակագրական փոփոխություններն ըստ 2012-2016թթ. (ավելացված արժեքով)¹

Անվանումներ	2012	2013	2014	2015	2016
ՀՆԱ	7.2	3.3	3.5	2.5	2.2
Արդյունաբերություն	6.3	6.3	-0.7	4.1	3.7
Գյուղատնտեսություն	9.5	7.6	7.8	9.5	4.0
Շինարարություն	4.8	-7.4	-4.6	1.0	1.0
Ծառայություններ	6.3	3.1	5.7	0.6	1.3
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	9.9	3.6	1.8	-2.7	1.5

Գծապատկեր 1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված ՀՆԱ-ի իրական աճին ճյուղերի նպաստման չափերը:




Գծապատկեր 1. Տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված ՀՆԱ-ի իրական աճի տեմպերը

Շինարարության ճյուղում գրանցվել է համեստ աճի միտում: Չնայած վերջին տարիներին տնտեսությունում իրականացված շինարարության ծավալները նվազել են, 2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին ոլորտում գրանցվել է համեստ աճի միտում: 2011 թվականից շինարարության ճյուղի զարգացումները չեն դրսևորել հստակ միտումներ, ինչն արտահայտվել է ճյուղի աճի տատանողականությամբ, իսկ 2013-2014 թվականներին գրանցվել է միջինում 6% նվազում:

2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին շինարարության ծավալները իրական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել են 0.4%-ով: Շինարարության ծավալների աճին հիմնականում նպաստել է բնակչության միջոցների և միջազգային վարկերի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների համապատասխանաբար 21.4% և 24.9% աճերը: Բացասական նպաստում են ունեցել համայնքների և պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների համապատասխանաբար՝ 77.6% և 8.9% նվազումները:

2015 թվականի առաջին յոթ ամիսներին տնտեսությունում իրականացված շինարարության ծավալում խոշոր մասնաբաժին են ունեցել անշարժ գույքի հետ կապված՝ (29.6%), տրանսպորտի՝ (9.5%), կացության և հանրային սննդի կազմակերպում՝ (7.9%), ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և մշակում՝ (7.3%) և էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ (7.0%) գործունեության տեսակներով իրականացված շինարարության ծավալները:

¹ www.parliament.am ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումներ, Մաս I-Բ, էջ 82:



Գծապատկեր 2. Տնտեսության ճյուղերի և առանձին ոլորտների տեսակարար կշիռները ՀՆԱ-ում՝ ըստ 2012-2016 թթ.

Ստորև ներկայացված են շինարարության ցուցանիշները ՀՀ-ում՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների, վերջին 2012-2015 թթ.:

Աղյուսակ 3

Շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների (2012-2015թթ.)¹

Ֆինանսավորման աղբյուրները	2012		2013		2014		2015	
	Շինարարության ծավալը, մլն դրամ	ընդամենի նկատմամբ (%)	Շինարարության ծավալը, մլն դրամ	ընդամենի նկատմամբ (%)	Շինարարության ծավալը, մլն դրամ	ընդամենի նկատմամբ (%)	Շինարարության ծավալը, մլն դրամ	ընդամենի նկատմամբ (%)
Ընդամենը	479415.6	100	453449.3	100	463858.0	100	481496.9	100
<i>այդ թվում՝</i>								
պետական բյուջեի	84994.5	17.7	80421.3	17.7	71298.4	15.4	73860.2	15.3
համայնքների միջոցների	21581.6	4.5	10948.1	2.4	19973.6	4.3	9555.9	2.0
միջազգային վարկերի	38079.5		29476.9		37532.7		51844.8	
<i>այդ թվում՝</i>								
Զարգացման և վերակառուցման Եվրոպական բանկի վարկի	5270.4	1.1	2491.0	0.6	6252.2	1.3	3302.0	0.7
Համաշխարհային բանկի վարկի	15815.2	3.3	11530.5	2.5	6681.7	1.5	17241.1	3.6
Ասիական զարգացման բանկի վարկի	1915.8	0.4	6494.6	1.4	20814.6	4.5	17428.8	3.6
Միջազգային համագործակցության ճապոնիայի բանկի վարկի	2931.7	0.6	-	-	-	-	-	-
Գերմանիայի զարգացման բանկի վարկի	10801.2	2.3	6863.8	1.5	2823.7	0.6	1821.5	0.4
Ռուսաստանի Դաշնության	828.4	0.2	-	-	-	-	-	-
մարդասիրական օգնության միջոցների	8687.5	1.8	9178.2	2.0	6982.4	1.5	14067.8	2.9
<i>այդ թվում՝</i>								
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	628.9	0.1	643.0	0.1	433.9	0.1	1477.8	0.3
ՄԱԿ-ի միջոցների	20.8	0.0	78.6	0.0	268.9	0.1	29.2	0.0
Հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	2738.8	0.6	2759.7	0.6	2479.0	0.5	2310.7	0.5
այլ	5299.0	1.1	5696.9	1.3	3800.6	0.8	10250.1	2.1
կազմակերպությունների միջոցների	228043.0	47.6	192449.1	42.5	219231.9	47.3	215940.3	44.9
բնակչության միջոցների	98029.5	20.4	130975.7	28.9	108839.0	23.4	116277.0	24.1

¹ www.armstat.am Շինարարությունը ՀՀ-ում 2011-2015թթ., էջ 16;


Այժմ ավելի մանրամասն ներկայացնենք 2016թ. շինարարության տվյալները ՀՀ-ում:

2016-ին Հայաստանում իրականացվել է գրեթե 398 մլրդ դրամի շինարարություն: 2015-ի համեմատ՝ շինարարության ծավալը նվազել է 11%-ով:

2016-ին շինարարության 25 %-ը կատարվել է բնակչության միջոցներով, ընդհանուր ցուցանիշում գերակշռել են միջազգային վարկերով կատարված շինարարական աշխատանքները:

2016-ին բնակչության միջոցներով կատարվել է գրեթե 100 մլրդ դրամի շինարարություն, որը 2015-ի համեմատությամբ նվազել է 12%-ով:

2016-ին կատարված շինարարության գումարային ցուցանիշները՝ ըստ դրանց ֆինանսավորման աղբյուրների, առանձնացրել ենք զծապատկերում:




Գծապատկեր 3. 2016-ի շինարարությունը՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների (կատ. շին-ը մլրդ դրամ)¹

Այդ տարի կատարված շինարարությունում նվազել են թե՛ պետական բյուջեով, թե՛ Խամայնքային միջոցներով, թե՛ մարդասիրական օգնությամբ, թե՛ բնակչության միջոցներով և թե՛ օտարերկրյա ներդրումներով կատարված շինարարության ծավալները:

2016-ին միջազգային վարկային միջոցներով կատարվել է գրեթե 60 մլրդ դրամի շինարարություն: Այն կազմել է կատարված շինարարության ընդհանուր ցուցանիշի 15%-ը: 2015-ի համեմատ 2016-ին միջազգային վարկային միջոցներով կատարված շինարարությունն աճել է 28%-ով:

Հայաստանում վարկային միջոցներով 2016-ին կատարված շինարարության ցուցանիշներն ամփոփված են զծապատկերում:



Գծապատկեր 4. 2016-ի միջազգային վարկերով կատարված շինարարություն (մլրդ դրամ)

Նշենք, որ Ասիական զարգացման բանկի տրամադրած վարկերով այս տարի կատարված շինարարությունն աճել է 38%-ով, իսկ Համաշխարհային բանկինը՝ 31%-ով:

¹ www.hetq.am 2016-ի շինարարության ծավալները, նյութ. Դ. Ղազարյան:

ԼՂՀ տնտեսական ցուցանիշները:

Վերջին տարիներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսությունը բնութագրվել է տնտեսական աճի բարձր ցուցանիշներով, մասնավորապես 2008-2012 թվականներին միջինում գրանցվել է համախառն ներքին արդյունքի 10.4 % իրական աճ: Այդ տարիների տնտեսական աճին նպաստել են տնտեսության բոլոր ճյուղերը, առավելապես ծառայությունների մատուցման ոլորտը՝ միջինում 7.4 տոկոսային կետով և գյուղատնտեսության ոլորտը՝ 1.5 տոկոսային կետով: Հատկանշական է, որ նշված տարիների ընթացքում բնակչության բարեկեցությունը բնութագրող՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մեծությունը կրկնապատկվել է, իսկ արտադրողականությունը բնութագրող մեկ աշխատողին ընկնող ՀՆԱ-ն աճել է՝ շուրջ 80.0 %-ի չափով:

2012 թվականի ՀՆԱ-ն իրական արտահայտությամբ նախորդ տարվա նկատմամբ աճել է 9.9%-ով և կազմել 150.0 մլրդ դրամ: Ընդ որում, աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում. այսպես՝ ծառայությունների ոլորտի հաշվին ապահովվել է տնտեսական աճի 8.9 տոկոսային կետը (15.5 տոկոս իրական աճի պայմաններում) և գյուղատնտեսության հաշվին՝ 3.0 տոկոսային կետը (24.0 տոկոս իրական աճի պայմաններում):

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակի արդյունքներով համախառն ներքին արդյունքն իրական արտահայտությամբ աճել է 7.2 %-ով:

Կառավարության կողմից վարվող տնտեսական քաղաքականությունը, նախորդ տարիների և 2013 թվականի առաջին կիսամյակի դրական զարգացումները հիմք են հանդիսացել տնտեսական աճի տեմպի կանխատեսման համար: Ընթացիկ տարվա և միջնաժամկետ հատվածի համար ծրագրվել է ՀՆԱ-ի 9.0 տոկոս տարեկան իրական աճ:

Միջնաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումների հիմնական սցենարը կառուցվել է ԼՂՀ նախագահի նախընտրական ու ԼՂՀ կառավարության գործունեության ծրագրերի հենքի վրա և ենթադրում է դրանցով նախանշված քաղաքականությունների և միջոցառումների հետևողական և ամբողջական իրագործում: 2014-2016թթ. հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները ներկայացված են ստորև բերված աղյուսակում¹:

Աղյուսակ 4

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներն ըստ 2012-2016թթ.

Ցուցանիշներ	2012	2013	2014	2015	2016
Անվանական ՀՆԱ (մլն դրամ)	150016	168400	189100	212300	238300
Տնտեսական աճ, %	9.9	9.0	9.0	9.0	9.0
ՀՆԱ դեֆլյատոր, %	0.7	3.0	3.0	3.0	3.0
Գնաճ, նախորդ տարվա նկատմամբ, %	3.0	5.0	4.0+/-1.5	4.0+/-1.5	4.0+/-1.5

Ծրագրային ժամանակահատվածում տնտեսության հիմնական ճյուղերի իրական աճի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Տնտեսության հիմնական ճյուղերի իրական աճի ցուցանիշներն ըստ 2012-2016թթ. (%)

Ցուցանիշներ	2012	2013	2014	2015	2016
ՀՆԱ-ի իրական աճ	9.9	9.0	9.0	9.0	9.0
Արդյունաբերություն	-0.8	4.5	8.5	9.0	9.5
Գյուղատնտեսություն	23.9	20.0	9.5	10.0	10.0
Շինարարություն	-12.6	1.0	3.5	3.5	3.5

¹ <https://minfin-nkr.am> ԼՂՀ 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր: Գլուխ 2 ԼՂՀ տնտեսական ցուցանիշների կանխատեսում, էջ 12:

2008-2012 թվականներին արդյունաբերության ճյուղում միջին հաշվով գրանցվել է 6.5% իրական աճ: Հանքագործական արդյունաբերությունը 2008-2012 թվականների ընթացքում իրական արտահայտությամբ միջին տարեկան կտրվածքով նվազել է 7.4 տոկոսով:

2013 թվականի առաջին կիսամյակում արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալները աճել են 3.2 տոկոսով:

2014-2016 թվականների համար կանխատեսվում է արդյունաբերության իրական աճ տարեկան միջին 9.0 տոկոսի չափով:

2008-2012թթ. գյուղատնտեսության ճյուղի միջին տարեկան աճը կազմել է 11.8 տոկոս (ի տարբերություն դրանց նախորդող հինգ տարիների, երբ միջին տարեկան աճը կազմել է 4.5 տոկոս):

2012 թվականին գյուղատնտեսությունը աճել է 23.9 տոկոսի չափով:

2013 թվականի առաջին կիսամյակում գյուղատնտեսական արտադրանքի ծավալն աճել է 21.7 տոկոսի չափով:

Հաշվի առնելով առաջին կիսամյակի զարգացումները մինչև տարեվերջ ակնկալվում է գյուղատնտեսության իրական աճ շուրջ 20.0 տոկոսի չափով՝ հիմնականում բուսաբուծության հաշվին:

2014-2016 թվականներին ճյուղի միջին տարեկան աճը կանխատեսվում է 9.8 տոկոսի չափով, որի համար հիմք է հանդիսացել կառավարության կողմից նախատեսվող միջոցառումների իրականացումը:

Վերջին հինգ տարիների ընթացքում շինարարության ծավալը միջին տարեկան կտրվածքով աճել է 14.1 տոկոսով՝ արձանագրելով ամենաբարձր աճի տեմպը 2009թ.՝ 33.5 տոկոս: 2008-2012թթ. շինարարության ծավալի զգալի մասը՝ 39.5 %-ը, իրականացվել է պետական բյուջեի միջոցների հաշվին:

Շինարարական աշխատանքներն ըստ տնտեսության ճյուղերի հիմնականում իրականացվել են կոմունալ տնտեսության ոլորտում (19.5 տոկոս), բնակարանային տնտեսության ոլորտում (18.3 տոկոս) և տրանսպորտի և կապի ոլորտում (13.1 տոկոս):

2013 թվականի առաջին կիսամյակում շինարարության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել են 1.9 տոկոսով:

2013 թվականի համար ակնկալվում է կապիտալ շինարարության ծավալի աննշան աճ՝ շուրջ 1.0 %-ով: 2014-2016 թվականների համար կանխատեսվում է աճ՝ տարեկան 3.5 %-ով:

2012թ. նախորդ տարվա համեմատ 27,2 տոկոսով աճել է օտարերկրյա ներդրողների միջոցներով իրականացված շինարարությունը, իսկ ֆինանսավորման մյուս աղբյուրների հաշվին իրականացված շինարարական աշխատանքների ծավալները նվազել են 0,1-24,9 տոկոսով:

ԼՂՀ-ում շինարարությունը 2012թ. հիմնականում իրականացվել է պետական բյուջեի, օտարերկրյա ներդրողների, կազմակերպությունների, Արցախի ներդրումային հիմնադրամի մարդասիրական օգնության, արտաբյուջետային և այլ միջոցների հաշվին՝ համապատասխանաբար կազմելով 37.7 տոկոս (նախորդ տարվա՝ 40.9 տոկոսի դիմաց), 15.9 տոկոս (նախորդ տարվա՝ 10.9 տոկոսի դիմաց) և այդպես շարունակ:

2013թ. նախորդ տարվա համեմատ 2.3 անգամ աճել է կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարությունը, 39.2 տոկոսով՝ օտարերկրյա ներդրողների և 17.0 տոկոսով՝ այլ միջոցների հաշվին իրականացված շինարարությունը, իսկ ֆինանսավորման մյուս աղբյուրների հաշվին իրականացված շինարարական աշխատանքների ծավալները նվազել են 0.1-91.7 տոկոսով:

ԼՂՀ-ում շինարարությունը 2013թ հիմնականում իրականացվել է պետական բյուջեի, կազմակերպությունների, օտարերկրյա ներդրողների, մարդասիրական օգնության և այլ միջոցների հաշվին՝ համապատասխանաբար կազմելով 31.6 տոկոս (նախորդ տարվա՝ 37.3 տոկոսի դիմաց), 29.9 տոկոս (նախորդ տարվա՝ 15.4 տոկոսի դիմաց), 18.5 տոկոս (նախորդ տարվա՝ 15.7 տոկոսի դիմաց), 5.7 տոկոս (նախորդ տարվա՝ 7.1 տոկոսի դիմաց) և 7.8 տոկոս (նախորդ տարվա՝ 7.8 տոկոսի դիմաց):

Շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների (2012-2015)¹

Ֆինանսավորման աղբյուրները	2012		2013		2014		2015	
	Շինարարության ծավալը, մլն դրամ	ընդամենի նկատմամբ (%)	Շինարարության ծավալը, մլն դրամ	ընդամենի նկատմամբ (%)	Շինարարության ծավալը, մլն դրամ	ընդամենի նկատմամբ (%)	Շինարարության ծավալը, մլն դրամ	ընդամենի նկատմամբ (%)
Ընդամենը	37890.3	100	45219.9	100	50523.5	100	50145,3	100
<i>այդ թվում՝ ի հաշիվ՝</i>								
ԼՂՀ պետական բյուջեի	14301.0	37.7	14299.4	31,6	14690.6	29,1	12107,4	24,1
Համայնքների միջոցների	201.9	0.5	123.0	0,3	187.6	0,4	186,7	0,4
Արտաբյուջետային միջոցների	2617.5	6.9	1936.9	4,3	2780.1	5,5	2338,8	4,7
Արցախի ներդրումային հիմնադրամի միջոցների	2912.3	7.7	241.2	0,5	398.0	0,8	169,5	0,3
Մարդասիրական օգնության միջոցների	2695.2	7.1	2585.5	5,7	6850.4	13,5	6968,7	13,9
Օտարերկրյա ներդրումների	6007.8	15.9	8362.1	18,5	6753.9	13,4	1671,9	3,3
Կազմակերպությունների միջոցների	5475.7	14.5	13512.2	29,9	13875.4	27,4	18253,7	36,4
Անհատ կառուցողների կամ բնակչության միջոցների	679.4	1.8	651.1	1,4	1208.0	2,4	644,7	1,3
այլ	2999.5	7.9	3508.5	7,8	3779.5	7,5	7803,9	15,6

2016թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում, համադրելի գներով, թողարկվել է 39563,1 մլն դրամի արդյունաբերական արտադրանք: 2015թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, համադրելի գներով, կազմել է 104,0 տոկոս:

Արտադրված արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ըստ արդյունաբերության բաժինների հետևյալն է. հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝ 26,9 տոկոս, մշակող արդյունաբերություն՝ 34,5 տոկոս, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 37,3 տոկոս, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում՝ 1,3 տոկոս:

2016թ. հունվար-սեպտեմբերին պատրաստի արտադրանքի իրացումը փաստացի գործող գներով կազմել է 39388,5 մլն դրամ կամ թողարկված արտադրանքի 99,7 տոկոսը:

2016թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում իրացվել է 6525.5 տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, արտադրվել է՝ 41111.5 տոննա կաթ, 32856.8 հազ. հատ ձու: 2015թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ մսի արտադրությունը աճել է 13,2 տոկոսով, իսկ կաթի և ձվի արտադրության ծավալները նվազել են համապատասխանաբար՝ 5,2 և 9,2 տոկոսով:

2016թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում իրականացվել է 26379.9 մլն. դրամի շինանրարական աշխատանքներ, որը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ նվազել է 4,2 տոկոսով²:

¹ www.stat-nkr.am Շինարարությունը ԼՂՀ-ում 2011-2015թթ., էջ 1:

² www.stat-nkr.am Շինարարությունը ԼՂՀ-ում 2016թ. հունվարից դեկտեմբեր, էջ 11:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՄ ԵՎ ԼՂՀ-ՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ՆՎԵՐԻ ՄԻԶԱՅԵԼՅԱՆ

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ասպիրանտ

Համառոտագիր

Հոդվածը ներկայացնում է ընթացիկ տնտեսական իրավիճակը ՀՀ-ում և ԼՂՀ-ում:

Վերը կատարված վերլուծությունները վերաբերում են ՀՀ-ի և ԼՂՀ-ի շինարարության զարգացման միտումներին: 2016-ին ՀՀ-ում շինարարության ծավալը նվազել է 11%-ով, ԼՂՀ-ում՝ 4,2%-ով:

Անցման շրջանի քաղաքական և տնտեսական բարդությունները, ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները և նոր ալիքի սպասումները իրենց ազդեցությունն են թողել ՀՀ տնտեսության հիմնարար փոփոխականների վրա: Անհրաժեշտ է հաշվի առնել ձեռք բերված տնտեսական իրողությունները և առաջնորդվել տնտեսական շահերով:

Բանալի բառեր. շինարարություն, տնտեսություն, ֆինանսավորման աղբյուրներ, տնտեսական ցուցանիշներ, պետական բյուջե, համախառն ներքին արդյունք, տնտեսական աճ:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ СТРОИТЕЛЬСТВА В РА И НКР

ЛУСИНЕ НВЕРОВНА МИКАЕЛЯН

аспирант Шушинского технологического университета

Аннотация

В статье представлены текущая экономическая ситуация в РА и НКР, а также макроэкономические перспективы. Результаты анализов относительно тенденций развития сферы строительства РА и НКР показывают, что в последние годы как в РА, так и в НКР наблюдалось уменьшение объемов строительства. Так, в 2016 г. по сравнению с 2015 г. в Армении объемы строительства уменьшились на 11%, а в НКР снижение составило 4,2%.

Политические и экономические сложности переходного периода, последствия финансово-экономического кризиса на данном этапе и ожидания новой волны сказались на фундаментальных переменных экономики РА.

При ориентации страны, принятии политических решений в первую очередь необходимо учесть приобретенные в ходе развития экономические реалии и руководствоваться экономическими интересами.

Ключевые слова: строительство, экономика, источники финансирования, экономические показатели, государственный бюджет, валовой внутренний продукт, экономический рост.

THE TRENDS OF DEVELOPMENT OF CONSTRUCTION IN THE RA AND NKR

LUSINE NVER MIKAELYAN

Ph.D. Student, Shushi Technology University

Abstract

The article illustrates the current economic situation in the RA and NKR, and macroeconomic prospects. The foregoing analyzes refer to the tendencies in the development of the construction of Armenia and the NKR. In the RA, in recent years, the volume of construction has decreased. In 2016 the construction volume decreased by 11% in Armenia, by 4.2% in the NKR. The political and economic difficulties of the transition region, the consequences of the financial and economic crisis and the expectations of the new wave entailed their influence on the fundamental economic variables of Armenia. It is necessary to consider the development of acquired economic realities and be guided by economic interests.

Keywords: Construction, economy, sources of financing, economic indicators, state budget, gross domestic product, economic growth

ՌԱԶՄԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԷԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Ռազմական ծախսերի դերը տնտեսական աճի ապահովման համատեքստում միանշանակ չի ընկալվում տնտեսագիտության տեսության մեջ: Դասական տնտեսագիտության ներկայացուցիչները դիտարկում են պետական ռազմական ծախսերը որպես տնտեսական աճի վրա բացասաբար ազդող գործոն՝ հիմնվելով ռազմական ծախսերի աճ-մասնավոր ներդրումների նվազում-ամբողջական պահանջարկի կրճատում մոդելի վրա: Որոշ տնտեսագետներ էլ ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացումը դիտարկում են որպես տնտեսական ռեսուրսների այնպիսի օգտագործում, որը երկարաժամկետ հատվածում չի նպաստում երկրի տնտեսական զարգացմանը: Ըստ այդ մոտեցման ռազմական ծախսերի ավելացումը մինչև ՀՆԱ-ի որոշակի մակարդակ հնարավորություն է ընձեռում կարճաժամկետում ստանալ որոշակի տնտեսական օգուտներ, որոնք սակայն, բավական սահմանափակ են, իսկ երկարաժամկետում նրանց ազդեցությունը չեզոքանում է: Այս մոտեցումներից յուրաքանչյուրը յուրովի ընդունելի է, սակայն լինելով տնտեսության յուրօրինակ ճյուղ, դրա ազդեցությունը մեծապես պայմանավորված է նաև երկրի զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացման արդյունավետությամբ: Այնուամենայնիվ, տեսական վերլուծություններում մատնանշվում են տնտեսական աճի վրա ռազմաարդյունաբերության ոլորտի դրական ազդեցության հետևյալ իրողությունները^{1,2}

- *Ռեսուրսների վերաբաշխում:* Պետական ռազմական ծախսերն ուղղակի և անուղղակի հնարավորություն են մասնավոր հատվածում ներդրումների աճի, ենթակառուցվածքների բարելավման և ամբողջական պահանջարկի խթանման համար:
- *Արտադրական շղթայի կազմակերպում:* Ռազմական ծախսերն ապահովում են տնտեսության տարբեր ճյուղերի միջև արդյունավետ կապ (կրթություն, ՏՏ, արդյունաբերություն)՝ հարմարեցնելով դրանք ռազմական ոլորտի պահանջներին:
- *Դրական էքստերնալներ:* Ռազմաարդյունաբերական համակարգի կողմից մշակված գիտելիքների և տեխնոլոգիաների դեպի մասնավոր հատված՝ քաղաքացիական նշանակության արտադրություններին փոխանցման միջոցով:

Տնտեսության վրա ռազմաարդյունաբերության ոլորտի ազդեցության ուղղությունները գնահատելու նպատակով ուսումնասիրել ենք ռազմաարդյունաբերության զարգացման հիմքով տնտեսական աճի էական ցուցանիշներ արձանագրած երկրների փորձը: Վիճակագրության ուսումնասիրման ժամանակ կարևորել ենք ոչ միայն ռազմական ծախսերի բացարձակ ցուցանիշները, այլև մեկ շնչին բաժին ընկնող ռազմական ծախսերը, ռազմական ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին (քանի որ ռազմական ծախսերը մեծ ազդեցություն ունեն սոցիալական բեռի վրա), պետական ծախսերում ռազմական ծախսերի տեսակարար կշիռը, որի բարձր մակարդակը հանգեցնում է տնտեսության այլ ոլորտներում կատարվող ծախսերի նվազման, ինչպես նաև՝ ԳՀՓԿՍ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին, որի բարձր մակարդակը վերոնշյալ ցուցանիշների բարձր մակարդակների դեպքում ենթադրում է ռազմաարդյունաբերության ոլորտի արդիականացման և նորագույն տեխնոլոգիաների ներդրման/արտադրման հնարավորություններ:

SIPRI (Խաղաղության հիմնախնդիրների հետազոտման ստոկհոլմյան ինստիտուտ) հրա-

¹ J. P. Dunne and M. Uye. Defence Spending and Development. University of the West of England, 2007 p. 19.

² Smith, Dan and Ron Smith. Military Expenditure, Resources and Development. University of London, Birkbeck College Discussion Paper, No. 87, November, 1980.

պարակած տվյալների համաձայն¹, վերջին 35 տարիների ընթացքում պետությունները բացարձակ թվերով ավելացրել են ռազմական ծախսերը, մինևույն ժամանակ գրեթե հաստատուն պահելով դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ-ում և պետական ծախսերի կազմում: Ռազմաարդյունաբերության զարգացումը որպես ռազմավարական ուղղություն ընտրած երկրների մեծամասնությունը (երկրները թվարկված են աղյուսակ 1-ում) տիրապետում են տնտեսական զգալի ռեսուրսների և ունեն ռազմաարդյունաբերական արտադրանքի իրացման մեծ շուկաներ: Որոշ երկրներում էլ՝ Իսրայել, Նվ. Կորեա, Սինգապուր, շեշտը դրվել է նոր տեխնոլոգիաների և մասնագիտացված ռազմաարդյունաբերական կառույցների զարգացման վրա: Այս երկրներում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ռազմական ծախսերը 2014թ.-ին 1.5-3 անգամ գերազանցել են 1990թթ. մակարդակը՝ նույն ժամանակաշրջանում արձանագրելով տնտեսական աճի բարձր ցուցանիշներ: Կարևորել ենք հատկապես այդ երկրների փորձի ուսումնասիրությունը որպես փոքր բաց տնտեսություններ՝ բացահայտելու համար ռազմաարդյունաբերության ոլորտի և տնտեսական աճի փոխկապվածությունները:

Իսրայել: Իսրայելի ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացումն ուսումնասիրելիս ուշադրության են արժանի մի քանի հանգամանքներ՝ արտաքին թշնամիների առկայությունը, տնտեսության չափերը, ռազմական և քաղաքացիական ոլորտների հարաբերակցությունը և տեխնոլոգիական զարգացվածության մակարդակը, որի վրա, ի դեպ, մեծ ազդեցություն է ունեցել տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակը: Ռազմաարդյունաբերության ոլորտի կայացման սկիզբը Իսրայելում 1950-ական թթ.-երն էին: Նախապես հիմնվելով նորաստեղծ պետական ընկերությունների վրա, արդեն 1950-ական թթ. կեսերից երկիրն ուներ հասակ գիտախնդակցիոն կողմնորոշում, ինչի արդյունքում 1958թ. հիմնադրվեց Իսրայելի ռազմաարդյունաբերության հիմնաքարը հանդիսացող՝ Ռաֆաել ընկերությունը: Նույն ժամանակաշրջանում հիմնվեցին մի շարք հարակից ընկերություններ, որոնք կարճ ժամանակում վերափոխվեցին ռազմական տեխնիկայի արդիականացման կենտրոնների (օրինակ՝ Israel Aircraft Industry-ն)²: Մեծ ուշադրություն էր հատկացվում ռազմաարդյունաբերության ոլորտում բարձր տեխնոլոգիաների ներդրմանը՝ մասնավոր ընկերությունների հետ համագործակցության միջոցով, ինչի արդյունքում կայացավ այս ոլորտի ներկայիս ամենախոշոր ընկերությունը՝ Tadiran-ը: Ռազմաարդյունաբերության ոլորտում զբաղված աշխատողների թիվը 1950-1970թթ. աճեց շուրջ 20 անգամ³, իսկ ոլորտը վերածվեց Իսրայելի տնտեսության խոշորագույն ճյուղերից մեկի՝ ապահովելով ռազմական արտադրանքի արտահանման ծավալների շարունակական աճ: Զարգացման այս միտումները շարունակվեցին սառը պատերազմի ամբողջ ընթացքում: Ավելին, այդ ժամանակահատվածում Իսրայելի տնտեսության տեխնոլոգիական առաջընթացն ապահովում էին հենց ռազմաարդյունաբերական կառույցները, որոնք իրենց առջև խնդիր ունեին արտասահմանյան էմբարգոյի, սահմանափակ մարդկային և բնական ռեսուրսների պայմաններում արդիականացնել իսրայելական ռազմական տեխնիկան: Խնդրի արդյունավետ լուծումը պահանջում էր նաև բարձր կրթական մակարդակի ապահովում և բարձրորակ մասնագետների պատրաստում, ինչի վրա էլ հատուկ ուշադրություն դարձրին Իսրայելի իշխանությունները, և արդյունքում բարձրորակ կադրեր պատրաստվեցին նաև տնտեսության այլ ճյուղերի (այդ թվում նաև՝ ռազմաարդյունաբերության հետ համագործակցող) համար, ինչն էլ հետագայում նպաստեց տնտեսության ընդհանուր զարգացմանը: Փաստորեն, տնտեսության զարգացմանը զուգահեռ ռազմաարդյունաբերության ոլորտն այստեղ ոչ միայն չկորցրեց տնտեսության լոկոմոտիվի դերն, այլև ժամանակի ընթացքում ամրապնդեց այն:

Ինչ վերաբերում է ռազմական ծախսերին, ապա վիճակագրական տվյալները փաստում են, որ 1970-2015թթ. ընթացքում դրանք շարունակաբար աճել են տարեկան 8.6 մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով 17.5 մլրդ ԱՄՆ դոլար, ինչն ամենաբարձր ցուցանիշն է տարածաշրջանում:

¹ Հնդվածում երկրների ռազմական ծախսերի և ռազմաարդյունաբերության վերաբերյալ բոլոր տվյալները աղբյուրը www.sipri.org էլ. կայքն է, եթե այլ հղում նշված չէ:

² Dan Peled. Defense R&D and Economic Growth in Israel: A Research Agenda, Haifa 2001, p. 27.

³ Sharon Sadeh. Israel's Defense Industry in the 21st Century: Challenges and Opportunities. Strategix Assessment Volume 7, No. 3 December 2004, p. 31-40.

Ներկայում Իսրայելի ռազմաարդյունաբերության ոլորտն ընդգրկում է շուրջ 150 ընկերություն, որոնք, ըստ իրենց նշանակությամբ, կարելի է բաժանել երեք ենթադասերի՝

1. Խոշոր պետական կազմակերպություններ, որոնցից մի քանիսն առաջատար դիրքեր ունեն համաշխարհային շուկայում: SIPRI տվյալների համաձայն, իսրայելական ռազմաարդյունաբերության ոլորտի երեք ընկերություններ ընդգրկված են աշխարհի 100 ամենախոշոր ընկերությունների ցանկում՝ համապատասխանաբար 29, 32 և 43-րդ տեղերում: Նրանց համախառն տարեկան շրջանառությունը կազմում է շուրջ 9 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ դրանցում զբաղվածների թիվը 35,000 է: Հարկ է նշել, որ թեև ռազմաարդյունաբերության արտադրանքի շուկայում գործում է պետական մոնոպոսոնիա, սակայն արտադրանքի 70%-ը նեղ մասնագիտական որակների շնորհիվ ունի արտահանման կողմնորոշում^{1,2}:

2. Մասնավոր միջին ընկերություններ, որոնք հիմնականում թողարկում են ռազմաարդյունաբերական արտադրանք, սակայն բավական մեծ է նաև քաղաքացիական նշանակության արտադրությունը՝ հիմնականում հեռահաղորդակցության ոլորտում:

3. Նեղ մասնագիտացված փոքր և միջին ընկերություններ, որոնց արտադրանքն ուղղված է սպասարկելու ռազմաարդյունաբերության ոլորտի ներքին պահանջները:

Տեխնոլոգիական զարգացումների անընդհատությունը վերջին 50 տարիների ընթացքում ապահովեցին ռազմաարդյունաբերության ոլորտի՝ տնտեսական աճի վրա ազդեցության փոխանցման մեխանիզմների կայացմանը բոլոր ուղղություններով, մասնավորապես՝ ամբողջական պահանջարկի խթանումը դրական է անդրադարձել Իսրայելում գյուղատնտեսության, բժշկության և հեռահաղորդակցության ոլորտների զարգացման վրա: Իր ազդեցությունն է ունեցել նաև ՀՆԱ-ի կազմում ԳՀՓԿԱ ծախսերի մեծ տեսակարար կշիռը՝ մոտ 4%, որը Իսրայելում երկու անգամ գերազանցում է զարգացած երկրների միջին մակարդակը և այդ ցուցանիշով զիջում է միայն Հվ. Կորեային (տե՛ս աղյուսակ 1): Գիտության ոլորտին միջոցների հատկացումը սկզբնական շրջանում իրականացվում էր հիմնականում պետության կողմից, սակայն զգալի արտոնություններ էին տրամադրվում նաև մասնավոր ներդրողներին, մասնավորապես՝ ընդհանուր ԳՀՓԿԱ ծախսերի մինչև 50%-ի չափով դրամաշնորհներ էին տրամադրվում այն ընկերություններին, որոնք զբաղվում են տեխնոլոգիական նոս-հաունների մշակմամբ, մինչև 30%-ի չափով՝ քաղաքացիական ապրանքների արտադրության ոլորտում ինովացիաների կիրառմամբ ծրագրեր իրականացնող կազմակերպություններին և 20%-ի չափով՝ ռազմական արտադրանքի թողարկմամբ զբաղվող ընկերություններին: Ընդ որում, գյուղական համայնքներում իրականացվող ծրագրերի դեպքում հատկացումներն ավելանում են ևս 10%-ով:

Աղյուսակ 1

ԳՀՓԿԱ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին³

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
ԱՄՆ	2.51%	2.55%	2.63%	2.77%	2.82%	2.74%	2.76%	2.70%	2.73%	0.00%
Չինաստան	1.32%	1.38%	1.38%	1.46%	1.68%	1.73%	1.79%	1.93%	2.01%	2.05%
ՌԴ	1.07%	1.07%	1.12%	1.04%	1.25%	1.13%	1.09%	1.13%	1.13%	1.19%
Գերմանիա	2.42%	2.46%	2.45%	2.60%	2.73%	2.71%	2.80%	2.87%	2.83%	2.87%
Հվ. Կորեա	2.63%	2.83%	3.00%	3.12%	3.29%	3.47%	3.74%	4.03%	4.15%	4.29%
Բրազիլիա	1.00%	0.99%	1.08%	1.13%	1.12%	1.16%	1.14%	1.15%	1.24%	0.00%
Թուրքիա	0.59%	0.58%	0.72%	0.73%	0.85%	0.84%	0.86%	0.92%	0.94%	1.01%
Իսրայել	4.04%	4.13%	4.41%	4.33%	4.12%	3.93%	4.01%	4.13%	4.09%	4.11%
Լեհաստան	0.57%	0.55%	0.56%	0.60%	0.67%	0.72%	0.75%	0.88%	0.87%	0.94%
Սինգապուր	2.16%	2.13%	2.34%	2.62%	2.16%	2.01%	2.15%	2.00%	2.00%	2.19%
Շվեդիա	3.39%	3.50%	3.26%	3.50%	3.45%	3.22%	3.25%	3.28%	3.31%	3.16%

¹ Mark Broude, Saadet Deger, Somnath Sen. Defence, innovation and development: The case of Israel. Journal of Innovation Economics & Management. 2013/2 N12, p. 37- 57.

² Shefi, Y., Tishler, A. The effects of the world defense industry and US military aid to Israel on the Israeli Defense Industry: a differentiated products model, Defence and Peace Economics, 16 (6), 2005, p. 427-448.

³ Աղբյուրը՝ data.worldbank.org էլ. կայք:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ռազմաարդյունաբերության զարգացումը դրականորեն է անդրադարձել Իսրայելի բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման վրա, ինչի արդյունքում այսօր ԳՀՓԿԱ ներդրումների միայն փոքր մասն է բաժին ընկնում պետությանը, որը, սակայն, շարունակում է մնալ բարձր տեխնոլոգիական արտադրանքի հիմնական սպառողներից մեկը, իսկ ոլորտի արտադրանքի մեծ մասն ուղղվում է ռազմական կարիքների բավարարմանը¹:

Ինչպես արդեն նշել ենք, Իսրայելի ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացմանը զուգընթաց երկրում կատարելագործվեցին նաև կրթության, մարդկային կապիտալի և գործարարության բնագավառները: Իսրայելական բանակի կադրերը, հատուկ պատրաստություն անցնելով խոշորագույն տեխնոլոգիական կենտրոններում, զինվորական ծառայությունն ավարտելուց հետո հնարավորություններ էին ստանում իրենց գիտելիքները փոխանցել քաղաքացիական ոլորտ, ինչի արդյունքում իսրայելական ստարտափերի և Նասդաքի շուկայում ցուցակված ընկերությունների մեծ մասի հիմնադիրներն իսրայելական բանակի նախկին զինծառայողներ են: Իսկ օտարերկրյա, մասնավորապես ԱՄՆ-ի ներդրողները ներդրումային որոշումներ կայացնելիս նախապատվությունը տալիս են հենց այդպիսի ընկերություններին: Այսօր Իսրայելում գործում է շուրջ 4000 այդպիսի ընկերություն, որոնցից շատերը զբաղված են ռազմական տեխնոլոգիաները քաղաքացիական կյանքում ներդնելով (բժշկություն, հեռահաղորդակցություն, անվտանգություն և այլն):

Ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացումը մեծապես նպաստեց նաև Իսրայելի կապիտալի շուկայի զարգացմանը, որը մինչև 1970-1980թթ. թերզարգացած էր: Ինչպես արդեն նշվել է, ԳՀՓԿԱ ծախսերի ֆինանսավորման զգալի մասն իրականացվում էր պետության կողմից, որի շարունակականությունը արդյունավետ պահանջարկի խթանման հիմքեր ստեղծեց՝ դրական էքստերնալներ առաջացնելով ամբողջ տնտեսությունում, ինչն էլ իր հերթին նպաստեց օտարերկրյա կապիտալի ներգրավմանը, արտահանման ծավալների մեծացմանը և բարձրացրեց արժեթղթերի շուկայի կապիտալիզացիայի մակարդակը:

Ամփոփելով ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացման Իսրայելի փորձի ուսումնասիրությունը կարելի է փաստել, որ այն մշտապես հանդիսացել է տնտեսության լոկոմոտիվ ճյուղ, որի շուրջ կառուցվել է Իսրայելի ժամանակակից տնտեսությունը: Պետական նպատակաուղղված քաղաքականությունը, ԳՀՓԿԱ ծախսերի դրամաշնորհային ֆինանսավորման մեխանիզմները և արդյունավետ պահանջարկի ձևավորումը դարձան այն հիմնաքարը, որը զգալիորեն նպաստեց տնտեսական աճին:

Մինգապուր: Ռազմարդյունաբերության ոլորտը մշտապես համարվել է Մինգապուրի երկարաժամկետ զարգացման առաջնային գործոն, ինչն էլ պայմանավորել է ոլորտին ուղղված պետական ծախսերի մշտական աճը: Այսպես, 1970-ական թվականներին ռազմական ծախսերը լինելով ընդամենը 927 մլն. ԱՄՆ դոլար, արդեն 2000-ական թթ. կազմում էին 7.3 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2015թ. 10.2 մլրդ ԱՄՆ դոլար: Հատկանշական է, որ երկրի ռազմական ծախսերը աճել են ՀՆԱ-ին համապատասխան նշված ժամանակահատվածում, շարունակելով մնալ ՀՆԱ-ի 4%-ի սահմաններում, սակայն պետական ծախսերում տեսակարար կշռի նվազման միտումով (26%-ից մինչև 16%): Այս հանգամանքը հիմնավորվում է 1980-ական թթ. Մինգապուրի պաշտպանական համակարգի կառուցմամբ, որը հիմնվում էր ռազմաարդյունաբերության շվեդական և շվեյցարական մոդելների վրա՝ շեշտադրելով ռազմական, տնտեսական և սոցիալական գործոնների զարգացման վրա: Մինգապուրի տնտեսական աճի բարձր տեմպերը հնարավորություն տվեցին նպատակաուղղված ավելացնել երկրի ռազմական ծախսերը և բարենպաստ տնտեսական հենք ստեղծել երկրում տեխնոլոգիական առաջընթացի համար: Ներկայում Մինգապուրը ԳՀՓԿԱ ծախսերի և ՀՆԱ-ի հարաբերակցությամբ առաջատար տեղ է զբաղեցնում ոչ միայն տարածաշրջանում, այլև գերազանցում է մի շարք եվրոպական զարգացած պետությունների: Այսպես 2005-2014թթ.-ին այս ցուցանիշը մշտապես տատանվել է ՀՆԱ-ի 2.15%-ի շրջանակներում, ինչը գրեթե կրկնակի անգամ բարձր է զարգացած երկրների համաշխարհային միջինից: Երկրի ռազմական բազայի և ԳՀՓԿԱ ծախսերի ավելացման շնորհիվ, արդեն 21-րդ դարի սկզբին երկիրը

¹ Ugurhan Berkok, Christopher Penney, Karl Skogstad. Defence Industrial Policy Approaches and Instruments. July 2012, p. 68.

կարողացավ կազմակերպել ռազմամթերքի, փոքր ռազմանավերի և բարձր տեխնոլոգիաների հենքով ռազմական սարքավորումների և մեքենաների սեփական արտադրություն, ինչպես նաև՝ ռազմական տեխնիկա (ԱԹՄ-ներ, կապի միջոցներ և ռազմանավեր) արտահանել Եվրոպա և ԱՄՆ:

Ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացման սկզբնական շրջանում Սինգապուրում հովանավորչական մեխանիզմներ էին կիրառվում՝ բացառելով օտարերկրյա կապիտալի մասնակցությունը և համատեղ ընկերությունների ստեղծումը: Ոլորտին հատկացվող պետական միջոցներն ուղղվում էին տնտեսական կլաստերների ստեղծմանը և գործող ընկերությունների խոշորացմանը, ինչի արդյունքում ստեղծվեցին մի շարք առաջատար ընկերություններ, օրինակ՝ ST Engineering հոլդինգի կազմում՝ ST Aerospace, ST Electronics, ST Kinetics և ST Marine ընկերությունները: Վերջիններիս առանձնահատկությունն այն է, որ դրանք մասնագիտացված են երկակի նշանակության ապրանքների արտադրությունում, ընդ որում, 2010 թ. տվյալներով այդ ընկերությունների վաճառքների միայն 40%-ն է բաժին ընկնում ռազմական արտադրանքին: Այս մոտեցումը հատուկ է Եվրոպական մի շարք երկրների (Շվեդիա, Գերմանիա) և ԱՄՆ-ին:

Արտադրության ոլորտում օտարերկրյա ընկերությունների մուտքի արգելքին զուգահեռ Սինգապուրը շարունակում է մեծ քանակությամբ ռազմական արտադրանք ներկրել Արևմուտքից՝ դրանց տեխնոլոգիական փոխանցման մեխանիզմների (լիցենզավորման և կրկնօրինակման) հենքով սեփական արդյունաբերություն կազմակերպելու նպատակով: Նման տարբերակով են զարգացել ռազմաարդյունաբերության համար կարևոր՝ ավիաշինության, նավաշինության և այլ ոլորտներ: Սինգապուրում համատեղ ընկերությունների ստեղծման արգելքը տեղական ընկերություններին ստիպեց ակտիվորեն ներգրավվել համաշխարհային գործընթացներին՝ գումարներ ներդնելով և նորարարական արտադրության միավորումներ ձևավորելով այլ պետություններում՝ ԱՄՆ-ում, Չինաստանում, Հվ. Կորեայում: Արդեն 2000-ական թթ. Սինգապուրյան ընկերությունները շուրջ 100 մասնաճյուղ ունեին 23 տարբեր երկրներում, ինչն էլ հնարավորություն ընձեռեց խթանել արտահանման գործընթացը և ներկայացնել Սինգապուրի ռազմական և քաղաքացիական արտադրանքը համաշխարհային շուկաներում: Օրինակ, ST Aerospace-ը ավիաարտադրանքի տեխնիկական սպասարկում իրականացնող խոշոր ընկերություն է աշխարհում (գրասենյակներ Ասիայում, Եվրոպայում և ԱՄՆ-ում), որը լիցենզավորման հիմունքներով կատարում է Boeing, Airbus, McDonnell Douglas ընկերությունների արտադրված ինքնաթիռների տեխնիկական սպասարկումը և միաժամանակ մասնագիտացած է ռազմական անօդաչու թռչող սարքերի արտադրությունում: Նմանատիպ կերպով են գործում նաև Սինգապուրի ռազմաարդյունաբերության ոլորտը ներկայացնող մյուս ընկերությունները՝ համատեղելով ռազմական և քաղաքացիական արտադրությունը արտահանման լայն կողմնորոշմամբ:

Սինգապուրի ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացման փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ընդգծել հետևյալ առանձնահատկությունները¹.

- Ռազմական ծախսերի բարձր տեսակարար կշիռ և կայունություն, որը, հիմնականում կրում է ներդրումային բնույթ, դրանով իսկ հնարավորություն տալով կարճ ժամանակում զարգացնել ռազմաարդյունաբերության կարևոր ուղղությունները, խթանել նրանց սպասարկող փոքր գիտատար ընկերությունների ստեղծումն ու զարգացումը: Սակայն, պետք է նկատել, որ ռազմական ծախսերի մեծ տեսակարար կշիռը հնարավոր դարձավ ապահովել հիմնականում Սինգապուրի տնտեսական աճի բարձր ցուցանիշների շնորհիվ, հետևաբար դա բացասական ազդեցություն չունեցավ բնակչության կենսամակարդակի վրա:

- Պետական նպատակաուղղված քաղաքականություն՝ ռազմաարդյունաբերության ոլորտում ինքնաբավ արտադրություն կազմակերպելու հարցում: Զարգացման սկզբնական շրջանը Սինգապուրի համար հատկանշվել է հարևան պետությունների հետ լարված հարաբերություններով և ծովահենության բարձր մակարդակով, ուստի սեփական ռազմական արտադրանքի թողարկումը պետության կողմից սկսեց դիտվել որպես կարևոր առաջնահերթություն: Ընտրվեց

¹ Adrian Kuah and Bernard Loo. Examining the defence industrialization – economic growth relationship: The case of Singapore. Institute of Defence and Strategic Studies, Singapore, 2004, p. 32.

ուրտի կլաստերային զարգացման սկզբունքը, որը հետագայում համատեղվելով բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հետ, Մինգապուրին ոչ միայն դուրս բերեց միջազգային շուկաներ, այլև նպաստեց ռազմական արդյունաբերության, մարդկային կապիտալի և SS ոլորտի հիման վրա «պաշտպանական էկոհամակարգի» ստեղծմանը, որի շրջանակներում ապահովվում էր տնտեսության ռազմական ու քաղաքացիական ոլորտների միջև մարդկային կապիտալի, գիտելիքի և տեխնոլոգիաների արդյունավետ փոխանցման գործընթացը:

- Մարդկային կապիտալի զարգացման և փոքր գիտատար ընկերությունների ստեղծման պետական ֆինանսավորում: Կրթություն ստանալով արտասահմանյան առաջատար բուհերում տեխնիկական և բնական գիտությունների բնագավառում, ուսանողները հնարավորություն են ստանում մասնակցել ռազմաարդյունաբերության ոլորտում գործող նախագծերին, իսկ հետագայում նաև՝ հիմնադրել իրենց սեփական գիտատար ընկերությունները՝ նպաստելով երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտադրությանը:

- Զարգացման որոշակի մակարդակից հետո ռազմաարդյունաբերության ոլորտում զբաղված ընկերությունների ուղղակի պետական ֆինանսավորման դադարեցում, քանի որ զարգացման սինգապուրյան դոկտրինի համաձայն, պետական միջոցների վատնումը թույլ չտալու նպատակով, այս ոլորտում գործող ընկերություններն առաջին հերթին պետք է հանդես գան որպես կայուն և արդյունավետ տնտեսավարող սուբյեկտներ: Այս հանգամանքը ստիպեց ոլորտի ընկերություններին արտաքին ֆինանսավորման աղբյուրներ փնտրել բոսաներում՝ պարտքային գործիքների թողարկմամբ, ինչը բարձրացրեց նրանց գործունեության նկատմամբ հասարակության վստահությունը և հանգեցրեց միջոցների առավել արդյունավետ կառավարման և երկակի նշանակության ապրանքների արտադրության ավելացման:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները, նկատենք որ տնտեսական ռեսուրսների բացակայությամբ, տնտեսական ու ռազմական շրջափակմամբ պայմանավորված խնդիրները Մինգապուրի իշխանությունները լուծեցին տնտեսության մի շարք կարևոր ոլորտների փոխկապակցված զարգացման շնորհիվ: Մասնավորապես, ռազմաարդյունաբերության ոլորտում շեշտադրելով երկակի նշանակության ապրանքների արտադրության վրա, և զուգահեռ կերպով զարգացնելով տնտեսության նորարարական հատվածը, Մինգապուրը կարողացավ լուրջ հաջողությունների հասնել՝ ապահովելով բարձր տեխնոլոգիական արտադրության ներդրումը տնտեսության բոլոր ոլորտներում՝ որպես ռազմաարդյունաբերության զարգացման դրական արտաքին էֆեկտ:

Հարավային Կորեա: Հվ. Կորեայում ռազմական ծախսերի աննախադեպ բարձր աճի տեմպերը (1970-ական թթ.-ին 2.3 մլրդ ԱՄՆ դոլարից մինչև 38.6 մլրդ ԱՄՆ դոլար 2015թ.-ին) տնտեսագետների շրջանում լայն քննարկումների առիթ է հանդիսացել՝ դրանց նպատակահարմարության և բաց թողնված տնտեսական հնարավորությունների շուրջ, քանի որ սովորաբար պետության ռազմական ծախսերը պակաս արդյունավետ են դիտվում քաղաքացիական նշանակության պետական ծախսերի համեմատությամբ: Հվ. Կորեայում տնտեսության վրա ռազմական ծախսերի ազդեցության գնահատման բազմաթիվ հետազոտություններ կան: Դրանցից մեկում բացահայտվել է, որ 1975թ.-ից սկսած Կորեայի ռազմական տեխնոլոգիաները բարելավվել են 240%-ով՝ գերազանցապես այս ոլորտում կատարված պետական ծախսերի շնորհիվ: Մեկ այլ հետազոտությունում ուսումնասիրվել է Կորեայի ռազմաարդյունաբերության ազդեցությունը քաղաքացիական ոլորտի վրա՝ երեք հիմնական ուղղություններով՝ համախառն ազգային արդյունքի աճ, աշխատանքային հնարավորությունների ստեղծում և երկակի նշանակության տեխնոլոգիաների արտադրություն: Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ ռազմաարդյունաբերական արտադրանքի 1% աճը հանգեցրել է ՀԱԱ-ի 1.52%, ընդհանուր զբաղվածության 1.68% աճ, թեև քաղաքացիական տեխնոլոգիաների արտադրության վրա ազդեցությունը նշանակալի չի եղել¹:

Տնտեսական նման զարգացումների մեկնակետը կարելի է համարել 1970-ական թթ.-ը, երբ տնտեսական քաղաքականությունը թիրախավորեց կապիտալատար՝ մասնավորապես ծանր, քիմիական և ռազմական արդյունաբերության ճյուղերի զարգացումը, որոնք սահմանվեցին

¹ Lee, Yong Hak. Defense Industry And Its Impacts On Economic Growth In Korea. June, 1992, p. 10.

որպես զարգացման գերակա ուղղություններ: Թեթև արդյունաբերության ոլորտում ներդրումների կրճատման արդյունքում առաջացած ազատ դրամական միջոցների հաշվին երկրում զարգացում ապրեցին ծանր մեքենաշինությունը, նավաշինությունը և մետալուրգիան: Բացի այդ ռազմարդյունաբերության ոլորտի զարգացման համար անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցների հավաքագրման նպատակով ստեղծվեց ազգային ներդրումային ընկերություն, որտեղ բանկերի կողմից պարտադիր ներդրվում էր ներգրավված ավանդների որոշ մասը: Մեծ ուշադրություն էր դարձվում նաև բարձր որակավորում ունեցող մարդկային կապիտալի ներգրավմանը արտասահմանից, մասնավորապես ԱՄՆ-ից: Արդյունքում ձևավորվեց ռազմարդյունաբերության զարգացման բավարար հենք՝ միջազգային շուկայում մրցունակ ապրանք արտադրելու և արտահանման կողմնորոշում որդեգրելու համար, քանի որ կորեական շուկան բավական փոքր էր մեծ թվով ընկերությունների արտադրանքն իրացնելու տեսանկյունից: Ներկայում Հվ. Կորեայի ռազմական արտադրանք թողարկող ընկերություններից 5-ը գտնվում են աշխարհի խոշորագույն 100 ընկերությունների ցանկում՝ շուրջ 6.4 մլրդ ԱՄՆ դոլար տարեկան ընդհանուր շրջանառությամբ (2015թ):

Կորեական արտադրանքն առավել մրցունակ դարձնելու համար պետության կողմից սահմանվեց այս ոլորտում գործող ընկերությունների տնտեսական արտոնությունների փաթեթ, որն ընդգրկում էր շուկայականից 4% ցածր տոկոսադրույքով արտաքին ֆինանսավորում ներգրավելու հնարավորություն, արտահանման պետական երաշխիքների տրամադրում, ոլորտում աշխատողներին ռազմական ծառայությունից ազատում և այլն: Արդյունքում կտրուկ աճեց ոլորտում գործող ինչպես խոշոր արդյունաբերական, այնպես էլ փոքր գիտատար ընկերությունների թիվը: Գործընթացն արագացնելու նպատակով երկրում 10%-ով բարձրացվեց եկամտահարկն ու շրջանառության հարկը, որից ստացված միջոցները պետք է ուղղվեին ռազմական ծրագրերի իրականացմանը: Նկատենք, որ Կորեայում ԳՀՓԿԱ ծախսերի մեծ մասը իրականացվում է այս հարկատեսակի շնորհիվ, իսկ ՀՓԿԱ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությամբ Կորեան առաջատարն է աշխարհում. ցուցանիշը տարիներ շարունակ գերազանցում է զարգացած երկրների միջին ցուցանիշը 4, իսկ լավագույն ցուցանիշները՝ 2 անգամ, 2014թ-ին կազմելով 4.29%: Տնտեսական ռեսուրսների մեծ հոսքը, սակայն հանգեցրեց ոլորտում մրցակցության բարձր մակարդակի, որը թեև տնտեսական տեսանկյունից դրական է, սակայն սահմանափակ շուկայում մեծ կշիռ ունենալու նպատակով ընկերությունները սկսեցին դիվերսիֆիկացնել իրենց արտադրանքը, ինչն էլ սահմանափակեց մասշտաբի էֆեկտի և մասնագիտացման շնորհիվ հնարավոր արտադրանքի բարելավման հնարավորությունները: Ի տարբերություն Սինգապուրի, Հվ. Կորեայի ռազմարդյունաբերության ոլորտում չկայացավ նաև զարգացած երկրներից տեխնոլոգիական տրանսֆերի գործընթացը, ինչը ստիպեց Կորեայի իշխանություններին մեծ ֆինանսական միջոցներ հատկացնել ազգային գիտահետազոտական կենտրոններին՝ սեփական ռազմական արտադրանք նախագծելու նպատակով:

Հատկանշական է, որ Կորեան ծանր արդյունաբերության ոլորտին զուգահեռ մեծ ուշադրության դարձրեց նաև էլեկտրոնիկայի և բարձր տեխնոլոգիաների ոլորտներին և դրանց համատեղ կիրառությանը ռազմարդյունաբերության ոլորտում: Ավելին, ռազմարդյունաբերության ոլորտի զարգացումը հանգեցրեց որակավորված աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճին¹: Վերափոխվեց նաև մարդկային կապիտալի դերը, ստեղծվեցին զարգացման նոր հնարավորություններ արտասահմանյան կրթություն (դպրոցական լավագույն 1% աշակերտներին առաջարկվում է արտասահմանյան կրթություն, հետագայում ռազմարդյունաբերության ոլորտում աշխատելու պայմանով), ազգային կրթական համակարգի բարեփոխումներ ուղղված ինժեներների, ՏՏ մասնագետների և որակյալ կառավարիչների պատրաստմանը: Մեծ ուշադրություն էր դարձվում նաև օտարերկրյա մասնագետների ներգրավմամբ ուղեղների ներհոսքին, մասնավորապես Կորեայի տեխնոլոգիական համալսարաններում կտրուկ աճեց հրավիրված դասախոսական անձնակազմը, խրախուսվում էր նաև այլ երկրներում աշխատող բարձր որակավորում ունեցող

¹ Lee D. Olvey, James R. Golden, and Robert C. Kelley, *The Economics of National Security* (Wayne, NJ, Avery Publishing Group, 1984).

կորեացի մասնագետների վերադարձը: Մարդկային կապիտալի ներհոսքը նպաստեց ոչ միայն ռազմաարդյունաբերության զարգացմանը, այլև տնտեսական մեծ հնարավորություններ ստեղծեց մյուս ոլորտների կայուն զարգացման համար (քաղաքացիական նշանակության այնպիսի արտադրական ոլորտներում, ինչպիսիք են ավտոմոբիլաշինությունը, էլեկտրոնիկան և նորարարական տեխնոլոգիաների ոլորտը):

Այսպիսով, կարելի է փաստել, որ Հվ. Կորեայի ռազմաարդյունաբերության զարգացումը զգալի դրական ազդեցություն է ունեցել ամբողջ տնտեսության համար: Ըստ Ադրիան Կյուայի հետազոտության արդյունքների, ռազմաարդյունաբերության ոլորտում կատարված ԳՀՓԿԱ ծախսերի միջինում 1 կետով ավելացումը 3 կետով ավելացնում է տեղեկատվական, նավաշինության և ռազմամթերքի արտադրության ցուցանիշները¹: Իհարկե, ըստ նույն հետազոտության արդյունքների ինովացիոն ոլորտի զարգացումը իրենից ենթադրում է ոչ միայն ԳՀՓԿԱ ծախսերի ավելացում, այլև նպատակաուղղված ազգային ինովացիոն համակարգի կայացում, ինչն էլ կատարվեց Հվ. Կորեայի իշխանությունների կողմից հետագա տարիների ընթացքում:

Թեև Հվ. Կորեայի ռազմաարդյունաբերությունն այսօր համարվում է ամենամրցունակներից մեկն աշխարհում, այնուամենայնիվ, այն շարունակական կատարելագործման մարտահրավերներ ունի: Մասնավորապես, այս ոլորտի զարգացման նպատակով երկրում բավարար կերպով չի խթանվում պետական ինստիտուտների, խոշոր արդյունաբերական կառույցների և փոքր գիտատար ընկերությունների սերտ համագործակցումը, ինչի արդյունքում տեղի է ունենում ռեսուրսների անարդյունավետ օգտագործում նոր տեխնոլոգիաների մշակման և ներդրման փուլում, երբ դրանով զբաղվում են միաժամանակ մի քանի ընկերություններ: Բացի այդ, ռազմաարդյունաբերության ոլորտի խոշոր ընկերությունները գործում են հիմնականում պետական ֆինանսավորմամբ, մինչդեռ ոլորտի զարգացման Սինգապուրի փորձը ցույց է տալիս, որ մասնավոր կապիտալի ներգրավմանն ուղղված ընկերությունների քայլերն ակնհայտորեն բարձրացրել են դրանց գործունեության արդյունավետությունը: Ցածր է նաև երկակի նշանակության ապրանքների արտադրության տեսակարար կշիռն ամբողջ արտադրության մեջ, ինչը նվազեցնում է տեխնոլոգիաների և գիտելիքի փոխանցման հնարավորությունները տնտեսության տարբեր ոլորտների միջև:

Վերոնշյալ երկրներում ռազմաարդյունաբերական համալիրի կայացման փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսական զարգացման գործընթացներում ռազմական ծախսերի արդյունավետությունը պայմանավորվում է տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի հստակ պլանավորմամբ, որի շրջանակներում ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը պետք է զուգորդվի տվյալ երկրում մրցակցային առավելություններ ապահովող ճյուղերի զարգացմամբ: Հայաստանի ներկա տնտեսական իրողություններն առավելապես պահանջում են ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացումը զուգորդել տնտեսության այլ ոլորտների զարգացման հետ (քիմիական արդյունաբերություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ռոբոտաշինություն և այլն): Նման մոտեցումը թույլ կտա՝ մի կողմից ինովացիոն լուծումներով ապահովել ռազմաարդյունաբերական համալիրի արդյունավետությունը, մյուս կողմից՝ կխթանի ռազմաարդյունաբերության ոլորտի կողմից երկրում ստեղծվող արտադրանքի (այդ թվում և ինովացիոն ապրանքների) նկատմամբ գնողունակ պահանջարկի ձևավորումը: Ինչպես ցույց տրվեց վերոնշյալ երկրների փորձի ուսումնասիրմամբ, այս ճանապարհին երկրին հասանելի և միջազգային փորձով հիմնավորված գործիքները բազմազան են, սակայն նրանց արդյունավետ կիրառումը իրենից ենթադրում է ինովացիոն լուծումների հստակ ուղղվածությամբ տնտեսական զարգացման երկարաժամկետ ռազմավարության առկայություն:

¹ *Adrian Kuah and Bernard Loo*. Examining The Defence Industrialization-Economic Growth Relationship: The Case of Singapore. 2004.

ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՄԵՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԷԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

ՎԱՐՅԱԳՆ ՌԱՖԱԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆ, տ.գ.թ.,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված են ռազմարդյունաբերության ոլորտի զարգացման առանձնահատկությունները փոքր բաց տնտեսություններում՝ Իսրայել, Սինգապուր, Հվ. Կորեա: Հոդվածի նպատակն է բացահայտել ռազմարդյունաբերության կայացման և տնտեսական աճի փոխկապվածությունները և հաջողված միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում: Հոդվածում ցույց է տրվում, որ ոլորտի զարգացման ճանապարհին երկրին հասանելի գործիքների արդյունավետությունը մեծապես կախված է երկրում ինովացիոն լուծումների հստակ ուղղվածությամբ տնտեսական քաղաքականության առկայությունից:

Բանալի բառեր. Ռազմարդյունաբերություն, ռազմական ծախսեր, տնտեսական աճ, նորարարական զարգացում, ԳՀՓԿԱ ծախսեր:

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ СТРАН, ДОБИВШИХСЯ ЗНАЧИТЕЛЬНОГО УЛУЧШЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА НА ОСНОВЕ РАЗВИТИЯ ВОЕННО-ПРОМЫШЛЕННОЙ ОТРАСЛИ

ՎԱԳՆ ՐԱՖԱԵԼՈՎԻՇ ՍՈՍՅԱՆ, Կ.Յ.Ո.

младший научный сотрудник Института экономики им. Котаняна НАН РА

Аннотация

В статье рассматриваются особенности развития военно-промышленного сектора стран с малой открытой экономикой (Израиль, Сингапур, Южная Корея). Целью статьи является выявление взаимосвязи между процессом становления военной промышленности и экономическим ростом, а также возможностей локализации успешного международного опыта в Армении. В статье показано, что эффективность инструментов, доступных стране на пути развития сектора, во многом зависит от наличия в стране экономической политики, четко ориентированной на инновационные решения.

Ключевые слова: военная промышленность, военные расходы, экономический рост, инновационное развитие, расходы на НИОКР.

EXPERIENCE OF COUNTRIES THAT HAVE REPORTED A SIGNIFICANT ECONOMIC GROWTH BY DEVELOPING THE MILITARY-INDUSTRIAL SECTOR

ՎԱԿՆ ՐԱՖԱԵԼ ՍՈՍՅԱՆ, Ph.D. in Economics

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article discusses the characteristics of development of the military-industrial sector in small open economies countries (Israel, Singapore, and South Korea). The purpose of the article is to identify the interplay of the process of formation and building the military industry with the economic growth, and possibilities of applying and introducing the best international practice in Armenia. The article shows that the efficacy of the instruments available in a given nation to develop this sector of economy largely depends on the availability of economic policy clearly oriented at generating, providing innovation solutions.

Keywords: Military industry, military spending, economic growth, innovative development, R&D spending

ՏԱԹԵՎԻԿ ԱՐԱՅԻ ՈԱՖԱԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյան անվան տնտեսագիտական
ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ

ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Վերազգային կորպորացիաները(ՎԱԿ), գործելով իրենց դուստր ընկերությունների և մասնաճյուղերի միջոցով աշխարհի մի քանի տասնյակ երկրներում, միասնական գիտատեխնիկական ռազմավարության շնորհիվ տնօրինում են հսկայական գիտաարտադրական և շուկայական ներուժի, ինչն էլ ապահովում է զարգացման բարձր տեմպեր¹: Ըստ ՄԱԿ-ի սահմանման, ՎԱԿ-երը միջազգայնորեն գործող ֆիրմաներ են երկու կամ ավելի երկրներում, որոնք կառավարում են այս կամ այն ստորաբաժանումները մեկ կամ մի քանի կենտրոնների կողմից²:

Տնտեսագիտական գրականության մեջ հանդիպում են ՎԱԿ-երի մեկ այլ սահմանումներ: ՎԱԿ-երը օտարերկրյա ակտիվներով ազգային մենաշնորհներ են, որոնց արտադրական և առևտրաիրացումային գործունեությունը դուրս է գալիս մեկ պետության շրջանակներից: Դրանց գործարար ակտիվությունը տարբեր երկրներում իրագործվում է մասնաճյուղերի և դուստր ընկերությունների հիմնադրման ճանապարհով³: Սյսպիսով, ՎԱԿ-երը հանդիսանում են կապիտալի միջազգային շարժի և տեխնոլոգիաների փոխանցման միջոց, որոշում են համաշխարհային շուկայի դինամիկան, կառուցվածքը և մրցունակության աստիճանը:

ՎԱԿ-երի բնորոշ գծերը հետևյալն են.

- Նրանք տիրապետում են հսկայական ծավալի բնական ռեսուրսների, կապիտալի և արտադրական գործոնների:
- Հնարավորություն ունեն տեղակայել իրենց մասնաճյուղերը տարբեր երկրներում, հաշվի առնելով նրանց ներքին շուկայի չափերը տարողությունը, տնտեսական զարգացման մակարդակը, աշխատուժի որակը, մնացած տնտեսական ռեսուրսների առկայությունը, աճը և ենթակառուցվածքը:
- Հնարավորություն ունեն կապիտալ կուտակել ՎԱԿ-երի ամբողջ համակարգում, այդ թվում փոխառու միջոցներ ընդունող երկրներում, որոնց կիրառումը առավել շահավետ է ընկերության բոլոր ոլորտների համար:
- Ամբողջ աշխարհի ֆինանսական ռեսուրսները օգտագործում են իրենց նպատակների համար:
- Մշտական տեղեկատվություն են ապահովում ապրանքի վիճակի, մյուս երկրների արտարժույթի փոխանակման և ֆինանսական շուկաների մասին, որը թույլ է տալիս բավականին արագ իրականացնել կապիտալի տեղաշարժ այդ պետության մեջ, և հնարավորություն է ընձեռնվում առավելագույն շահույթ ստանալ: Միաժամանակ ֆինանսական ռեսուրսները բաշխում է այնպիսի եղանակով, որ նվազագույնի հասցնի ռիսկերը:
- Ապահովում են ռացիոնալ կազմակերպական կառուցվածք, որը մշտապես բարելավվում է ՎԱԿ-ի ղեկավարության կողմից:
- Առաջնորդվում են միջազգային կառավարման փորձով, որը ներառում է արտադրության և մարքեթինգի օպտիմալ կառավարումը:
- Պահպանում են ընկերության կայուն բարձր հեղինակությունը՝ ապահովելով էժան և հուսալի կապեր մայր ընկերությունների և օտարերկրյա մասնաճյուղերի հետ: Ինչպես նաև գործնական մեծ կապերը այդ մասնաճյուղերից որևիցե մեկի և տեղական ընկերություն-

¹ Ленский Е.Ф.,Цветков В.А.,Транснациональные финансово-промышленные группы и межгосударственная экономическая интеграция, реальность и перспективы-М., АФПИ еженедельника Экономика и жизнь,1998, стр.29.

² Авдокушин Е.Ф.,Международные экономические отношения, Масква, 2004, стр.211.

³ Долгов С.И.,Транснациональные корпорации и прямые иностранные инвестиции как основа глобализации-Б1998,стр.201,Шиман М. Государство и транснациональные компании-М.,1999,стр.75.

ների հետ: Ապահովում է տվյալների չափավոր օգտագործելու հնարավորությունը, որոնք նախատեսված են տվյալ երկրի օրենքով:

ՎԱԿ-երի դերը համաշխարհային տնտեսության մեջ պայմանավորված է հետևյալով.

1. ՎԱԿ-երը հստակեցնում են համաշխարհային տնտեսության դինամիկան և կառուցվածքը, ինչպես նաև մրցակցության մակարդակը համաշխարհային շուկաներում:
2. Որպես ներդրող՝ ՎԱԿ-երը վերահսկում են օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) և միջազգային կապիտալի հոսքերը և իրենց ազդեցությունն են ունենում զարգացող երկրների տնտեսական զարգացման մակարդակի վրա: Միննույն ժամանակ նրանք ունեն ոլորտային ազդեցություն զարգացած երկրներում¹:
3. ՎԱԿ-երը խթանում են միջազգային աշխատանքային միգրացիային, մասնագիտական գիտելիքների տարածմանը, տարբեր երկրների աշխատակիցների փորձի փոխանակմանը: Այսպիսով, նրանք ստեղծում են զլոբալ աշխատաշուկա, որտեղ տրվում է մասնագիտական ուսուցում:
4. ՎԱԿ-երը առանցքային դեր են խաղում տեխնոլոգիաների և գիտելիքների փոխանակման վրա՝ կենտրոնացնելով НИОКР-լաբորատորիաներ (ԳՏՓԿԱ) իրենց հետազոտական կենտրոններում:
5. Այն ՎԱԿ-երը, որոնք, աստիճանաբար զարգանալով, վերածվում են համաշխարհային կորպորացիաների, վերահսկվում են նահանգների կողմից:
6. Քանի որ, զլոբալացումը հանգեցնում է աշխարհում նոր քաղաքական համակարգի, որը լուրջ հակամարտության մեջ է Վերսալյան մոդելի հետ, ՎԱԿ-երը պետությունից խլում են նրանց գործառնությունների մի մասը՝ բարեկեցությունը, զբաղվածությունը, սոցիալական պաշտպանությունը, բնապահպանության անվտանգությունը, կրթությունը և այլն:

Առաջին ՎԱԿ-ը (Dutch East India Company), ստեղծվել է 1602թ.-ին, որին հետևեցին մի շարք համանման կառույցներ: Որից Hudson Bay ընկերությունը մինչև այսօր գործում է: Մակայն վերջին 300 տարիների ընթացքում, ՎԱԿ-երը սկսեցին ավելի դանդաղ ձևավորվել: Ներկայումս աշխարհում գոյություն ունեն մոտ 82000 ՎԱԿ, որոնք էլ իրենց հերթին ունեն 810000 առանձին մասնաձյուղեր: Նրանք վերահսկում են համաշխարհային առևտրի ավելի քան 50%-ը: ՎԱԿ-երի 90% մասնաբաժինը բաժին է ընկնում արտոնագրերի, լիցենզիաների, նոու-հաունների վաճառքի վրա²: 2014թ.-ին 500 խոշորագույն ՎԱԿ-երի թվին են դասվել 128 ամերիկյան և 95 չինական ընկերություններ: Բացի այդ, ամերիկյան Wal-Mart Stores կորպորացիան՝ տարեկան 476,294 մլն դոլար եկամուտով, Fortune 500 2014 վարկանիշային աղյուսակում գտնվում է առաջատար դիրքում: Այսպիսով, ԱՄՆ-ը համարվում է առաջատարը, սակայն Ճապոնիան, Չինաստանը, Արևմտյան Եվրոպայում նույնպես ունեն բարձր ցուցանիշներ:

ՎԱԿ-երի ճյուղային կառուցվածքը տարբերակված է: ՎԱԿ-երի 60%-ը ներգրավված են էլեկտրոնիկայի, մեքենաշինության, քիմիական և դեղագործական արդյունաբերության մեջ, 37%-ը՝ ծառայությունների ոլորտում, 3%-ը՝ արդյունահանող արդյունաբերությունում և գյուղատնտեսությունում³:

Խոշորագույն ՎԱԿ-երի մեծամասնության համար նորարարության գործունեությունները ընդհանուր են, սակայն կոնկրետ ռազմավարությունները, որոնք օգտագործվում են ճապոնական, ամերիկական և եվրոպական ընկերությունների կողմից, տարբերվում են: Դա պայմանավորված է ոչ միայն տնտեսական նկատառումներով, այլև մայր երկրի ՎԱԿ-երի տնտեսական քաղաքականության առաջնայնությամբ:

Այսպես, եվրոպական ՎԱԿ-երը հաճախակի տեղադրում են իրենց НИОКР լաբորատորիաները Եվրոպայի այն երկրներում, որտեղ կենտրոնացած են բարձրակարգ կադրերը: Օրինակ, Asea (Շվեդիա) և Brown-boveri (Շվեյցարիա) ընկերությունները միաձուլվելով ստեղծեցին

¹ Братимов О.В., Горский Ю.М., Делягин М.Г., Коваленко А.А. Практика глобализации: игры и правила новой эпохи. М., 2000. 344 с.

² Попова А.В., Гриванов Р.И. Транснациональные корпорации как субъект международных экономических отношений // Материалы VII Международной студенческой электронной научной конференции «студенческий научный форум», 2015.

³ Ромашкин Т.В., СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ ТНК В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ, Саратов 2016.

նոր էներգետիկ հետազոտության կենտրոն, սակայն ոչ թե Շվեդիայում կամ Շվեյցարիայում, այլ Գերմանիայում, որտեղ հնարավոր է գտնել համապատասխան բարձրակարգ մասնագետներ¹:

Մեփական լաբորատորիա բացելու այլընտրանք կարող է հանդիսանալ տվյալ ՎԱԿ-ին անհրաժեշտ գյուտի կամ տեխնոլոգիայի մշակման արտապատվիրումը որևէ երկրի, արդեն իսկ, գործող գիտահետազոտական կառույցի:

Դիտարկենք ՎԱԿ-երի հնարավոր ազդեցությունը մայր երկրի արտահանման վրա:

Այն պարագայում, որ ՎԱԿ-ը մասնաձյուղ է բացում այնպիսի երկրում, որտեղ նախկինում արտահանում էր մայր ձեռնարկությունում արտադրված արտադրանքը, մայր երկրի արտահանումը կրճատվում է:

Այն դեպքում, երբ ՎԱԿ-ը մասնաձյուղ է բացում այնպիսի երկրում, որտեղ նախկինում մայր ձեռնարկության կողմից արտադրված արտադրանք չէր արտահանվում (տվյալ երկրի հեռավորության կամ այլ պատճառներով), ապա մայր երկրի արտահանման փոփոխությունն այլ հավասար պայմաններում տեղի չի ունենում: Մակայն ՎԱԿ-երի գործունեությունը ազդում է ոչ միայն մայր երկրի, այլ նաև ընդունող և այլ երկրների արտահանման վրա: Մասնավորապես, որևէ երկրում մասնաձյուղ բացելով, և տվյալ երկրից հարևան և մոտակա երկրներ արտադրանքը արտահանելով, ՎԱԿ-երը մեծացնում են ընդունող երկրի արտահանման ծավալները:

ՎԱԿ-երը համաշխարհային նորարարական գործընթացների վրա ազդում են նաև ռազմավարական միավորումներ ստեղծելով: Սա կազմակերպման այնպիսի ձև է գիտատեխնիկական կորպորացիաների և արդյունաբերական ընկերությունների միջև, որի դեպքում ներգրավված կողմերը պատասխանատու են հետևյալ պահանջներին.

1. Ներդրում են կատարում նոր գիտական և տեխնոլոգիական գիտելիքներ ստանալու համար, արդեն համագործակցության համար ընտրված ոլորտներում, կամ կատարում են փոխանակում իրենց մոտ գտնվող տեխնոլոգիաների:
2. Այդ համագործակցությունից ստացած օգուտները բաժանում են իրար մեջ և դրանց իրականացման համար օգտվում են իրենց վերահսկման իրավունքից:
3. Պահպանում են ինքնուրույնություն ու անկախություն՝ գործընկերներից ստանալով միայն այն, ինչի կարիքն ունեն:

Վերջին տարիներին արագ տեմպերով զարգանում է արտապատվիրումը, որի անհրաժեշտությունը ցույց է տալիս, թե ինչպես է արտապատվիրման պատճառները և սոցիալ-տնտեսական հետևանքները ազդում մայր և ընդունող երկրներում: Արտապատվիրումը անգլերենից թարգմանաբար նշանակում է «արտաքին աղբյուրների օգտագործում», որը ձևավորվում է ՎԱԿ-երի գործառույթների մի մասի փոխանցման հիման վրա:

Արտապատվիրման հիմնական սկզբունքը կայանում է հետևյալում. «Թողնում եմ ինձ այն, ինչ կարող եմ անել բոլորից լավ: Տալիս եմ դրսի կատարողին այն, ինչ նա կարող է կատարել ավելի լավ, քան մյուսները »²:

Առաջին արտապատվիրողները եղել են այն երկրների իրավաբանական ֆիրմաները, որոնք ունեն իրավունք վեճերը դատարանով լուծելու համար:

Արտապատվիրումը պայթյունավտանգ է դարձել 20-րդ դարի վերջում: Կենտրոնանալով հիմնական առարկայի և ոչ հիմնական գործառույթների փոխանցման վրա, այն դարձել է գործիք ընկերությունների գործունեության օպտիմալացման համար: Այսպիսով, ընկերությունները արտապատվիրում են ռիսկերի նվազեցման և սեփական իրավունքների բացակայության պայմաններում:

Արտապատվիրումը լինում է արդյունաբերական և տեղեկատվական: Վերջին տարիներին ավելի տարածվեց տեղեկատվական արտապատվիրումը(SS), որը փոխանցվում է երրորդ կողմի կապալառուին մի շարք ներքին ծառայությունների համար, այդ թվում իր ծրագրային արտադրանքի, դիմումների, ենթակառուցվածքների օգտագործման համար: Ներկայումս SS արտապատվիրման խոշոր սպառողները համարվում են ՎԱԿ-երը և տարբեր երկրների կառավարությունները:

¹ Мовсесьян А., Либман А. Современные тенденции в развитии и управлении ТНК. "Проблемы теории и практики управления", №1, 2010.

² Ромашкин Т.В., СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ ТНК В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ, Саратов 2016.

Հատկապես այն լայն տարածում ունեցավ ինտերնետի զարգացման պայմաններում՝ հնարավորություն տալով ընկերություններին համագործակցել SS արտապատվիրատուների հետ այնպես, ինչպես իրենց սեփական ստորաբաժանումներով: Մեկ այլ արտապատվիրման տեսակ է արդյունաբերության արտապատվիրումը: Այն ընկերության ռազմավարական տարր է, որի դեպքում ընկերությունը իր ամբողջ գործառնությունները կամ մի մասը տալիս է մեկ այլ ապրանքների արտադրությամբ զբաղվող կազմակերպությանը: Արդյունաբերական արտապատվիրումը լինում է 2 տեսակ.

1. նյութերի և մասերի արտապատվիրում
2. արտադրական գործառնությունների արտապատվիրում: Օրինակ, շինարարական ընկերությունները արդյունաբերական ծառայությունների ոլորտում կարող են փոխանցել ինժեներական, դիզայնի, արտադրական սարքավորումների, մարքեթինգի հետ կապված նախագծեր: Այսինքն, երրորդ կողմի մասնագետները բանիմաց են և ավելի լավ են աշխատում, ավելի էժան, քան ընկերությունների փորձագետ-հաճախորդները: Երկրորդ խմբի մեջ են մտնում արդյունաբերական օբյեկտների մաքրման, գործարանի ներքին լոգիստիկայի վերանորոգման աշխատանքները:

ՎԱԿ-երի արտապատվիրման դրական ազդեցությունը մայր երկրի համար.


1. ՎԱԿ-երի համար ոչ շահութաբեր գործառնություններից ազատումը և դրանց կենտրոնացումը եկամտաբեր և խոստումնալից ոլորտներում:
2. Արտադրողականության բարձրացումը:
3. ՎԱԿ-երի կողմից ծախսերի նվազեցումը: Սա կայանում է նրանում, որ յուրաքանչյուր ՎԱԿ ունի այնպիսի գործառնություն, որոնք չեն ստեղծում ավելացրած արժեք և ձեռնարկությանը չեն ապահովում շահույթով: Բայց, քանի որ այս գործառնությունները նաև անհրաժեշտ են, հետևաբար ավելի արդյունավետ է օգտվել արտապատվիրումից:
4. Աշխատանքի կատարման ժամանակի կրճատում: Օրինակ, նոր արտադրանքի թողարկման համար ՎԱԿ-երը օգտվում են հին տեխնոլոգիաներից, որը շատ ժամանակատար է և մրցակցային շուկայում հանգեցնում է կորուստների: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում նոր տեխնոլոգիաների պատվիրման, որը կարճ ժամանակում կարող է վերածվել նոր նյութի:
5. Հնարավորություն է տալիս ապահովել ՎԱԿ-երի արտադրության բարձր վարկանիշը:

ՎԱԿ-երի արտապատվիրման դրական ազդեցությունները ընդունող երկրների համար.

1. Տեխնոլոգիական նորարարությունների արագացման պրոցեսները: Ընդունող երկրների ՎԱԿ-երը արտապատվիրող ընկերություններից կիսաֆաբրիկատներ և այլ բաղադրիչներ ստանալու ակնկալիքով ստիպված են փոխանցել նրանց ժամանակակից տեխնոլոգիաներ, որն էլ հանգեցնում է տեխնոլոգիական նորարարությունների արագացմանը:
2. Բնակչության զբաղվածության և աշխատողների եկամտի բարձրացում:
3. Կառավարման մեթոդների արդիականացում:

Անդրադառնանք նաև այն հարցին, թե ինչպես է ՎԱԿ-երի գործունեությունը անդրադառնում երրորդ երկրների արտահանման վրա, որոնցում ՎԱԿ-երը չունեն ոչ մայր ձեռնարկություն, ոչ մասնաձյուղ: Այսպիսի երկրների արտահանման վրա ՎԱԿ-երի գործունեությունը կարող է ազդել միայն արտապատվիրումների միջոցով:

Ամփոփելով տնտեսագիտական գրականությունում առկա կարծիքները՝ ներկայացնենք ՎԱԿ-երի ազդեցությունը երկրների արտահանման վրա գծապատկեր 1-ի միջոցով.



Գծապատկեր 1. Երկրի արտահանման վրա ՎԱԿ-երի ազդեցության մեխանիզմը

Այսպիսով՝ Վակ-երը երկրի արտահանման վրա կարող են ազդել հետևյալ կերպ.

1. ՎԱԿ-երը՝ լրացուցիչ լաբորատորիաներ չբացելով, կարող են պատվիրել արդեն գործող լաբորատորիաներից իրենց անհրաժեշտ տեխնոլոգիաների կամ գործընթացների մշակումը:
2. ՎԱԿ-երը որևէ երկրի կազմակերպություններին կարող են արտահանել իրենց արտադրական գործընթացի որևէ օղակ: Օրինակ, հագուստի արտադրությամբ զբաղվող ՎԱԿ-երը կարող են բամբակից կտորի ստացման գործընթացը արտապատվիրել որևէ երկրի ձեռնարկությանը, և պատրաստի կտորից հագուստի մոդելավորումը, վերջնական կարումը և փաթեթավորումը իրականացնել սեփական ձեռնարկությունում:

Այս եղանակով, ՎԱԿ-երը կայուն արտահանման ծավալներ են ապահովում այն երկրի համար, որից արտապատվիրում են իրենց արտադրական շղթայի համար անհրաժեշտ որևէ օղակ:

3. Տարածաշրջանի երկրների շուկաները մոտեցնելու համար, ՎԱԿ-երը մասնաճյուղ են բացում մի երկրում, որտեղից էլ արտադրված արտադրանքը արտահանվում է հարևան երկրներ՝ մեծացնելով տվյալ երկրի արտահանման ծավալները:

Փաստորեն, ՎԱԿ-երը զգալի ազդեցություն ունեն համաշխարհային տնտեսության վրա ընդհանրապես և առանձին երկրների տնտեսությունների վրա մասնավորապես: Մեծ է ՎԱԿ-երի դերակատարությունը հատկապես զարգացող երկրների արտահանման ընդլայնման հարցում: Հաշվի առնելով վերոհիշյալ եզրահանգումները, կարելի է դրանք հետագայում օգտագործել ի շահ ՀՀ արտահանման ընդլայնմանը:

ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ԱՐՏԱՅԱՆՍԱՆ ԸՆԴԱՅՆՍԱՆ ՀԱՐՑՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ԱՐԱՅԻ ՈԱՖԱԵԼՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթայանյան անվան տնտեսագիտական
ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

Համառոտագիր

Սույն հոդվածում ներկայացվում է ՎԱԿ-երի էությունը, բնորոշ գծերը և դրանց դերը համաշխարհային տնտեսության մեջ: ՎԱԿ է համարվում երկու և ավելի մասնաճյուղերից կազմված ընկերությունը: Ներկայումս աշխարհում գոյություն ունեն բազմաթիվ խոշորագույն ՎԱԿ-եր, որոնք ներգրավված են տարբեր ոլորտներում: Հոդվածում ներկայացվում է ՎԱԿ-երի դերը արտապատվիրման մեջ՝ առանձնակի ուշադրություն դարձնելով երկրի արտահանման ընդլայնման հարցում դրանց դերակատարությանը:

Բանալ իրադեր. Վերազգային կորպորացիա, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, տեղեկատվական տեխնոլոգիա, արտապատվիրում, արտահանում, նորարարություն, աշխատուժ:

РОЛЬ ТРАНСНАЦИОНАЛЬНЫХ КОРПОРАЦИЙ В ВОПРОСЕ РАСШИРЕНИЯ ЭКСПОРТА

TATEVIK ARAEBNA RAFAELYAN

экономист I категории Института экономики им. М. Котаян НАН РА

Аннотация

В статье представлены сущность, характерные черты и роль транснациональных корпораций (ТНК) в мировой экономике. К ТНК относятся компании, имеющие филиалы в двух и более странах. В настоящее время в мире существует множество ТНК, вовлеченных в различные области. В работе представлена роль ТНК в применении аутсорсинга с уделением особого внимания вопросу об их роли в расширении экспорта страны.

Ключевые слова: транснациональные корпорации, прямые иностранные инвестиции, информационные технологии, аутсорсинг, экспорт, инновации, рабочая сила.

THE ROLE OF TRANSNATIONAL CORPORATIONS IN THE GROWTH OF EXPORTS

TATEVIK ARA RAFAELYAN

*First Level Economist, M. Kotayyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article discusses the meaning, characteristics and role of transnational corporations (TNCs) in the global economy. TNCs are companies that have branches and/or subsidiaries in two or more nations. Currently various TNCs do business in various sectors of the economy. The paper presents the role of TNCs in outsourcing with a particular emphasis on their role in the growth of the exports of a nation.

Keywords: Transnational corporations, foreign direct investment, information technology, outsourcing, exports, innovation, labor force

ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.*

ԴՈՆԱՐԱ ՅՈՎԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՅԱՐՑՈՒՄ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՅԱՅԱՍԱՆՈՒՄ

Ժամանակակից աշխարհը բնորոշվում է ինտեգրման և գլոբալացման բարձր աստիճանով: Ներկայումս համաշխարհային տնտեսությունում գրեթե գոյություն չունեն ամբողջապես փակ և ինքնաբավ տնտեսություններ: Յուրաքանչյուր երկիր կապված է արտաքին աշխարհի հետ առևտրային, տրանսպորտային, ֆինանսական և այլ գործընթացներով:

Միջազգային փորձը վկայում է, որ անկախ տվյալ երկրի զարգացման աստիճանից և անկախ համաշխարհային տնտեսությունում դրա դերակատարությունից, այդ տնտեսությանն ինտեգրման գործընթացն առավել արագ է ընթացել այն երկրներում, որոնցում օտարերկրյա ներդրումներն առավել մեծ ծավալներով են իրականացվել: Ներդրումների ներգրավումը հատկապես կարևոր է անցումային տնտեսություն վարող այն երկրներում, որտեղ սեփական ներդրումների սահմանափակ ծավալը շրջայաբար հանգեցնում է բազմաթիվ անցանկալի հետևանքների, այդ թվում՝ աշխատատեղերի անբավարար քանակ, աղքատություն, պետական բյուջեի եկամուտների սակավություն, պետական ներդրումների չնչին հնարավորություն և այլն, որոնք խոչընդոտում են երկրի պոտենցիալ զարգացման հնարավորությանը: Այսպիսով, օտարերկրյա ներդրումների բացակայության պայմաններում տնտեսության ակտիվացման համար պետությունը ստիպված է լինում կատարել արտերկրից ֆինանսական փոխառություններ, որոնք, գուցե տվյալ պահին այդ խնդրին մասամբ լուծում տալու հնարավորություն են ստեղծում, սակայն ավելացնում են արտաքին պարտքը՝ մեծ բեռ դնելով ներկա և ապագա սերունդների ուսերին:

Փաստորեն, ներդրումների ներգրավումը և դրա համար նպաստավոր պայմանների ստեղծումը դառնում է հատկապես զարգացող ու անցումային տնտեսություն ունեցող երկրների առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից մեկը:

Ճգնաժամի սոցիալական ազդեցության առաջին փոխանցման ուղին կարելի է ասել, որ այն յուրաքանչյուր երկրում դիտարկվում է որպես աշխատանքի շուկա, և արդյունքում շատ երկրներ 2008թ.-ի վերջից բախվել են և դեռևս բախվում են այս ոլորտի խնդիրների լուծման դժվարությունների հետ: Մի շարք հեղինակներ անդրադարձել են այս խնդրին և ուսումնասիրել, թե ՕՈՒՆ-ը ինչ ազդեցություն է ունենում գործազրկության վրա: Հեղինակներից շատերն ուսումնասիրության արդյունքում բացահայտել են դրական կապ: Օրինակ՝ Ջուզաննա Բրինցիկովան և Լուբոմիր Դարմոն վերցրել են Կենտրոնական Եվրոպայի 1993-2012 թթ.-ի պանելային տվյալները¹: Հեղինակները պարզել են, որ այս տարածաշրջանում ՕՈՒՆ-ը այդքան էլ նշանակալի ազդեցություն չի ունենում գործազրկության վրա: Դա բացատրվում է նրանով, որ այդ ժամանակահատվածում ՕՈՒՆ-ի միջոցով ոչ թե ստեղծվել են նոր ձեռնարկություններ, այլ մասնավորեցվել է նախկին պետական ձեռնարկությունները:

Վիորելա Բեատրիչե Լակոպոլոն վերցրել է Ռումինիայի 2004-2012 թթ.-ի տվյալները²: Արդյունքում հեղինակը բացահայտել է բացասական կապ, այսինքն՝ եթե ներդրումները աճում

¹ Zuzana Brincikova, Lubomir Darmo, «The impact of FDI inflow on employment in v4 countries», european scientific journal february 2014 /special/ edition vol.1 ISSN: 1857 – 7881 (Print) e - ISSN 1857- 7431, pp.245-252

² Viorela Beatrice Iacovoiu, «Impact of Capital Investments on Unemployment in the Context of Economic Crisis. The Case of Romania», Economic Insights – Trends and Challenges, Vol.I (LXIV) No. 4/2012, pp. 36 – 47.

են, ապա գործազրկության մակարդակը նվազում է:

Այլ հեղինակների էմպիրիկ վերլուծության արդյունքում պարզվել է, թե ինչ չափով կփոխվի գործազրկությունը, եթե 1 միավորով փոփոխվի ՕՈՒՆ-ը: Օրինակ՝ Ելիզաբեթա Դջամբասկան և Ալեքսանդրա Լոզանոսկան վերցրել են Մակեդոնիայի 1999-2013թթ. տվյալները¹: Արդյունքում հեղինակները ստացել են դետերմինացիայի գործակիցը 0,601, որը ենթադրում է, որ 60,1% գործազրկության փոփոխությունը բնութագրվում է կոռուպցիայով, ինֆիլացիայով, բնակչության քանակով և ՕՈՒՆ-ով: Հեղինակները բացահայտել են, որ 1 միավոր ՕՈՒՆ-ի աճը հանգեցնում է 0.067 միավոր գործազրկության աճի: Այսպիսով, վերլուծության արդյունքում հայտնաբերվել է, որ ՕՈՒՆ-ը ունի դրական ազդեցություն:

Նայրա Ջեբը, Ֆու Քիանգը և Մուհամեդ Մուհալի Շարիֆը վերցրել են Պակիստանի 1995-2011թթ.-ի տվյալները²: Արդյունքում հեղինակները ստացել են դետերմինացիայի գործակիցը 0,89, որը ենթադրում է, որ 89% գործազրկության փոփոխությունը բնութագրվում է կոռուպցիայով, ինֆիլացիայով, բնակչության քանակով և ՕՈՒՆ-ով: Վերլուծությունից պարզ դարձավ, որ 1 միավոր ՕՈՒՆ-ի աճը հանգեցնում է 2.75 միավոր գործազրկության կրճատման:

Համիդահ Մուհդ Իրփանը, Ռոսֆաձիմի Մաթ Սաադը, Աբու Հասսան Շարի Մո Նորը, Արդ Հալիմ Մո Նուրը և Նուրազիլահ Իբրահիմը վերցրել են 1982-2012թթ.-ի տվյալները³: Արդյունքում հեղինակները ստացել են դետերմինացիայի գործակիցը 0,8912, որը ենթադրում է 89,12% գործազրկության փոփոխությունը բնութագրվում է ՕՈՒՆ-ով, ՀՆԱ-ով, փոխանակման կուրսով և օտարերկրյա աշխատուժով: Հեղինակները պարզեցին, որ 1% ՕՈՒՆ-ի աճը հանգեցնում է 0.2553 միավոր գործազրկության կրճատման:

Ադամ Պ. Բալչերզակը և Միրոսլավա Ջուրեկը վերցրել են Լեհաստանի 1995-2009թթ.-ի տվյալները⁴: Արդյունքում հեղինակը ստացել է, որ կարճաժամկետ հատվածում 1 միավոր ՕՈՒՆ-ի աճը հանգեցնում է 804,55 միավոր գործազրկության կրճատմանը:

Մալիկ Դանիշ Հաբիբը և Մաիմա Սարվարը վերցրել են Պակիստանի տվյալները⁵: Արդյունքում հեղինակները պարզել են, որ 1 միավոր ՕՈՒՆ-ի աճը հանգեցնում է 66143,98 միավոր գործազրկության աճի:

Դավիթ Մայոմը վերցրել է 48 աֆրիկյան երկրների 1991- 2009թթ. տվյալները⁶: Արդյունքում հեղինակը ստացել է, որ 1 միավոր ՕՈՒՆ-ի աճը հանգեցրել է 0,00714 միավոր գործազրկության կրճատմանը:

Սաֆեթ Կուրտովիչը, Բորիս Սիլյկովիչը և Միլոս Միլանովիչը վերցրել են բալկանյան երկրների 1998-2012թթ.-ի տվյալները⁷: Արդյունքում հեղինակները պարզել են, որ 1 միավոր ՕՈՒՆ-ի աճը հանգեցնում է 0,556964 միավոր գործազրկության կրճատմանը:

Հանս Ջորգ Սքեմերերը վերցրել է Տունեսական զարգացման և համագործակցության կազմակերպության անդամ 19 երկրների տվյալները⁸: Արդյունքում հեղինակը պարզել է, որ 1 % ՕՈՒՆ-ի աճը հանգեցրել է 0,8% գործազրկության կրճատմանը:

¹ Elizabeta Djambaska, Aleksandra Lozanoska, «Foreign direct investment and unemployment evidence from the republic of Macedonia», International Journal of Economics, Commerce and Management United Kingdom Vol. III, Issue 12, December 2015 Licensed under Creative Common Page 73 <http://ijecm.co.uk/> ISSN 2348 0386, pp .73-85.

² Fu Qiang and Muhammad Suhail Sharif, Nayyira Zeb, «Foreign direct investment and unemployment reduction in Pakistan», Int.J. Eco. Res., 2014, v5i2, 10-17 ISSN: 2229-6158, pp.10-17.

³ Hamidah Muhd Irpan, Rosfadzimi Mat Saad, Abu Hassan Shaari Md Nor, Abd Halim Md Noor, and Noorazilah Ibrahim, «Impact of foreign direct investment on the unemployment rate in Malaysia», ScieTech 2016 IOP Publishing Journal of Physics: Conference Series 710 (2016) 012028 doi:10.1088/1742-6596/710/1/012028, pp.1-10.

⁴ Adam P. Balcerzak, Mirosława Żurek, «Foreign Direct Investment and Unemployment: VAR Analysis for Poland in the Years 1995-2009», European Research Studies, Volume XIV, Issue (1), 2011, pp. 4-12.

⁵ Malik Danish Habib, Saima Sarwar, «Impact of Foreign Direct Investment on Employment Level In Pakistan: A Time Series Analysis», Journal of Law, Policy and Globalization www.iiste.org ISSN 2224-3240 (Paper) ISSN 2224-3259 (Online) Vol.10, 2013, pp. 46-55.

⁶ David Mayom, «The Impact of Foreign Direct Investment on Labor Market Measures: Evidence from Sub-Saharan Africa», pp. 1-28.

⁷ Safet Kurtovic, Boris Siljkovic, Milos Milanovic, «Long-term impact of foreign direct investment on reduction of unemployment: panel data analysis of the Western Balkans countries», Journal of Applied Economics and Business Research JAEBR, 5 (2): 112-129 (2015), pp.112-129.


⁸ Hans-Jörg Schmerer, «Foreign Direct Investment and Search Unemployment: Theory and Evidence», IAB Discussion Paper Articles on labour market issues 4/2012, pp. 1-28.

Այսպիսով, նշված էմպիրիկ հետազոտությունների արդյունքների հիման վրա կարող ենք ասել, որ ՕՈԻՆ-ի և գործազրկության միջև առկա է բացասական կապ:


Անդրադառնանք ՕՈԻՆ-ի և գործազրկության ցուցանիշների դինամիկայի վերլուծությանը ՀՀ-ում և աշխարհում:

Դիտարկելով ՀՆԱ-ում ՕՈԻՆ տեսակարար կշռի տվյալները աշխարհում և ՀՀ-ում (գծ. 1)՝ կարող ենք փաստել, որ ՀՀ-ում այդ ցուցանիշի աճի կամ նվազման միտումները հիմնականում համահունչ են եղել դրա համաշխարհային միտումներին, սակայն գրեթե միշտ այս ցուցանիշը ՀՀ-ում ավելի մեծ է եղել համաշխարհային միջինից:

Իսկ գործազրկության դինամիկան ըստ 1992-2015թթ. ներկայացված է գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 1. ՕՈԻՆ-ի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում աշխարհում և Հայաստանում 1992-2015թթ., %¹



Գծապատկեր 2. Գործազրկության մակարդակը՝ հաշվարկված «Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանությամբ», %²

Գործազրկության մակարդակի ցուցանիշը ևս ՀՀ-ում մշտապես բարձր է եղել համաշխարհային ցուցանիշից, որը բնորոշ է զարգացող տնտեսություն ունեցող գրեթե բոլոր երկրներին:

Այժմ փորձենք գնահատել գործազրկության վրա ՕՈԻՆ-ի ազդեցությունն աշխարհում և Հայաստանում 4 ռեգրեսիոն մոդելների միջոցով՝ տարանջատելով համաշխարհային միջին տվյալների, բարձր եկամտով, միջին եկամտով երկրների և ՀՀ տվյալների միջոցով գնահատումը:

¹ http://databank.worldbank.org/data/reports.aspx?Code=NY.GDP.MKTP.KD.ZG&id=af3ce82b&report_name=Popular_indicators&populartype=series&ispopular=y#

² 2008թ. գործազրկության հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է, այդ պատճառով մինչ այդ և դրանից հետո տվյալները համադրելի չեն:

Ժամանակային շարքերի ստացիոնարության ապահովման նպատակով ՕՈՒՆ-ի փոխարեն կօգտագործենք ՕՈՒՆ-ի աճի, իսկ գործազրկության փոխարեն՝ գործազրկության աճի ժամանակային շարքերը:

Գործազրկության և ՕՈՒՆ կապի բացահայտման համար կօգտագործենք գործազրկության և ՕՈՒՆ հետևյալ ժամանակային շարքերը՝ 1992-2014թթ. ՀՀ-ի համար (դիտարկումների թիվը կազմել է 23՝ ճշգրտումից հետո), 1991-2014թթ.՝ աշխարհի, բարձր և միջին եկամտով երկրների համար (դիտարկումների թիվը կազմել է 24՝ ճշգրտումից հետո):

Պորելացիոն գործակիցների վերլուծությունը (աղյուսակ 1) ցույց է տալիս, որ ինչպես աշխարհում, այնպես էլ՝ բարձր եկամտով երկրներում ՕՈՒՆ-ի և գործազրկության միջև առկա է նշանակալի բացասական կորելացիոն կապ, իսկ միջին եկամտով երկրներում և հատկապես Հայաստանում՝ այդ կապը թույլ բացասական է:

Աղյուսակ 1

ՕՈՒՆ-ի և գործազրկության միջև կորելացիայի գործակիցները աշխարհում և Հայաստանում

ՕՈՒՆ-ի և գործազրկության միջև կորելացիայի գործակիցները աշխարհում	ՕՈՒՆ-ի և գործազրկության միջև կորելացիայի գործակիցները բարձր եկամտով երկրներում	ՕՈՒՆ-ի և գործազրկության միջև կորելացիայի գործակիցները միջին եկամտով երկրներում	ՕՈՒՆ-ի և գործազրկության միջև կորելացիայի գործակիցները ՀՀ-ում
-0.70	-0.62	-0.44	-0.25

Փոքրագույն քառակուսիների եղանակով մեր կողմից գնահատվել է $DUNEMPLOYMENT(t) = c_0 + c_1 * DFDI(t) + e$ գործազրկության վրա ՕՈՒՆ-ի ազդեցությունը ցույց տվող մոդելը ՀՀ-ի, աշխարհի, բարձր և միջին եկամտով երկրների համար՝ աղյուսակ 2, 3, 4, 5:

Աղյուսակ 2

ՕՈՒՆ-ի ազդեցությունը գործազրկության վրա աշխարհում

Dependent Variable: DUNEMPLOYMENT				
Method: Least Squares				
Date: 02/08/17 Time: 16:07				
Sample(adjusted): 1992 2014				
Included observations: 23 after adjusting endpoints				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	0.007398	0.032266	0.229269	0.8209
DFDI(-1)	-3.30E-13	7.25E-14	-4.560103	0.0002
R-squared	0.497542	F-statistic		20.79454
Adjusted R-squared	0.473615	Prob(F-statistic)		0.000170

Համաձայն աղյուսակի տվյալների՝ աշխարհում միջին հաշվով 100 մլրդ դոլարով ՕՈՒՆ-ի աճի փոփոխությունը հանգեցնում է գործազրկության կրճատման փոփոխության 0.033 տոկոսային կետով:

Բարձր եկամտով երկրներում այդ ազդեցությունն ավելի մեծ է համաշխարհային միջինից. 100 մլրդ դոլարով ՕՈՒՆ-ի աճի փոփոխությունը հանգեցնում է գործազրկության կրճատման փոփոխության 0.0896 տոկոսային կետով՝ աղյուսակ 3:

ՕՈՒՆ-ի ազդեցությունը գործազրկության վրա բարձր եկամտով երկրներում

Dependent Variable: DUNEMPLOYMENT				
Method: Least Squares				
Date: 02/25/17 Time: 14:21				
Sample(adjusted): 1992 2014				
Included observations: 23 after adjusting endpoints				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	0.056029	0.097048	0.577329	0.5699
DFDI(-1)	-8.96E-13	2.48E-13	-3.610208	0.0016
R-squared	0.382963	F-statistic		13.03360
Adjusted R-squared	0.353580	Prob(F-statistic)		0.001643

Աղյուսակ 4-ի տվյալների համաձայն՝ ՕՈՒՆ-ի աճի փոփոխությունը 100 մլրդ դոլարով շատ ավելի մեծ չափով (0.12 տոկոսային կետով) է կրճատում գործազրկությունը միջին եկամտով երկրներում:

ՕՈՒՆ-ի ազդեցությունը գործազրկության վրա միջին եկամտով երկրներում

Dependent Variable: DUNEMPLOYMENT				
Method: Least Squares				
Date: 02/25/17 Time: 14:23				
Sample(adjusted): 1992 2014				
Included observations: 23 after adjusting endpoints				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	0.011024	0.045615	0.241683	0.8114
DFDI(-1)	-1.27E-12	5.58E-13	-2.268696	0.0340
R-squared	0.196848	F-statistic		5.146982
Adjusted R-squared	0.158603	Prob(F-statistic)		0.033951

Աղյուսակ 5-ում ներկայացված են ՀՀ գործազրկության վրա ՕՈՒՆ-ի ազդեցության տվյալները:

ՕՈՒՆ-ի ազդեցությունը գործազրկության վրա ՀՀ-ում

Dependent Variable: DUNEMPLOYMENT				
Method: Least Squares				
Date: 02/25/17 Time: 14:36				
Sample(adjusted): 1993 2014				
Included observations: 22 after adjusting endpoints				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	0.101496	1.163799	0.087211	0.9314
DFDI(-1)	-1.05E-08	9.09E-09	-1.158598	0.2603
R-squared	0.062896	F-statistic		1.342348
Adjusted R-squared	0.016041	Prob(F-statistic)		0.260268

Աղյուսակի վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ ՀՀ-ում ՕՈՒՆ-ի ազդեցության չափը գործազրկության կրճատման գործում հնարավոր չեղավ գնահատել, քանի որ դիտարկվող մոդելի արդյունքները վիճակագրորեն նշանակալի չեն: Այս հանգամանքը կարող է ունենալ բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Սակայն կարծում ենք, որ տվյալ պարագայում ամենաեական գործոն է հանդիսացել 2008թ.-ից ՀՀ-ում գործազրկության հաշվարկման մեթոդաբանության փոփոխությունը: Թեպետ ռեգրեսիոն վերլուծության համար մենք տվյալների համադրելիության ապահովման նպատակով կիրառել ենք Համաշխարհային բանկի կողմից ներկայացվող Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանությամբ գործազրկության հաշվարկը: Սակայն, այդուհանդերձ, ՀՀ ԱՎԾ-ն չի իրականացրել մեկ ընդհանուր մեթոդաբանությամբ գործազրկության հաշվարկ դիտարկվող ժամանակահատվածում, և Համաշխարհային բանկի տվյալների բազայում տեղակայվել են անհամադրելի տվյալներ:

Այդուհանդերձ, ինչպես բարձր և միջին եկամտով երկրների, այնպես էլ՝ համաշխարհային միջին տվյալների վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ ՕՈՒՆ-ը հանգեցնում է գործազրկության կրճատման: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել ՀՀ-ում հետագա զբաղվածության քաղաքականության մշակման համար:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ,

*ՀՀ ԳԱԱ Մ.Բոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.*

ԴՈՆԱՐԱ ՀՈՎԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ,

*ՀՀ ԳԱԱ Մ.Բոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

Համառոտագիր

Ներդրումների ներգրավումը հատկապես կարևոր է անցումային տնտեսություններում, որտեղ սեփական ներդրումների սահմանափակ ծավալը շղթայաբար հանգեցնում է բազմաթիվ անցանկալի հետևանքների՝ աշխատատեղերի անբավարար քանակ, աղքատություն, պետական բյուջեի եկամուտների սակավություն և այլն, որոնք խոչընդոտում են երկրի պոտենցիալ զարգացման հնարավորությանը: Հոդվածի նպատակն է գնահատել ՕՈՒՆ-ի ազդեցությունը գործազրկության վրա աշխարհում, միջին եկամուտ ունեցող երկրներում, ինչպիսին նաև Հայաստանն է:

***Բանալի բառեր.** Օտարերկրյա ներդրումներ, գործազրկություն, բարձր և միջին եկամտով երկրներ, կոռելացիոն վերլուծություն, էկոնոմետրիկ վերլուծություն:*

РОЛЬ ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ В СОКРАЩЕНИИ УРОВНЯ БЕЗРАБОТИЦЫ В МИРЕ И В АРМЕНИИ

ЛИЛИТ НОРАЙРОВНА САРГСЯН, *к.э.н.*

научный сотрудник Института экономики им. М.Котаяна НАН РА

ДОНАРА ОВИКОВНА ГРИГОРЯН

экономист 1 категории Института экономики им. М.Котаяна НАН РА

Аннотация

Привлечение инвестиций особенно важно в условиях переходной экономики, где ограниченный объем собственных инвестиционных ресурсов вызывает множество нежелательных последствий, таких как недостаточное количество рабочих мест, бедность, низкий уровень доходов государственного бюджета и так далее, которые препятствуют потенциальным возможностям развития страны. Целью данной статьи является оценка влияния ПИИ на уровень безработицы в мире, а также в странах со средним уровнем доходов, таких как Армения.

***Ключевые слова:** иностранные инвестиции, безработица, страны с высоким и средним уровнем дохода, корреляционный анализ, эконометрический анализ.*

THE ROLE OF FDI IN UNEMPLOYMENT REDUCTION IN THE WORLD AND IN ARMENIA

LILIT NORAYR SARGSYAN, *Ph.D. in Economics*

Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

DONARA HOVIK GRIGORYAN

First Level Economist, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The attraction of investments is of a primary importance especially in developing countries where the limited volume of domestic investments entail a number of negative aftermaths - insufficient number of workplaces, poverty, scarcity of state budget revenues, etc. that hinder the development potential. The purpose of the article is to estimate the impact of the FDI upon the unemployment in the world as well as in middle-income nations like Armenia.

***Keywords:** Foreign investment, unemployment, high and middle income nations, correlation analysis, econometric analysis*

ՏԱՏՅԱՆԱ ԼԱՉԱՐԻ ՕՅԱՆՅԱՆ

Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող տ.գ.թ.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ցանկացած երկրի, այդ թվում նաև ՀՀ կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը գնահատվում է հիմնվելով տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի ժամանակագրական ցուցանիշների փոփոխությունների վրա: Տնտեսական զարգացումը տվյալ երկրի հեռանկարային բարելավման ու նրա բարգավաճման կարևոր գործոնն է, որը քաղաքական նշանակություն ունի ոչ միայն պետության, այլ նաև կենսական կարևորություն երկրի բնակչության համար¹: Այդ համատեքստում էլ կարևորվում են արդյունաբերության ոլորտին վերաբերող հիմնահարցերը, որին իրենց հետազոտություններում անդրադարձել են նաև հայրենական տնտեսագետներից Ա. Արշակյանը², Ա. Վ. Դարբինյանը³ և ուրիշներ, որոնք համարում են, որ արդյունաբերության քաղաքականության զարգացումը կախված է

- մակրոտնտեսական և միկրոտնտեսական մակարդակներից,
- պետության կողմից տնտեսության միջամտության աստիճանից,
- արտաքին առևտրի քաղաքականության ուղղվածությունից՝ կապված ներմուծման ու արտահանման կողմնորոշման հետ:

Մյուս կողմից արդյունաբերական քաղաքականությունն է, որ նպաստում է դրա առանձին ենթաճյուղերի, կազմակերպությունների համար նախօրոք մշակված ծրագրերով պայմանավորված ներդրումային միջոցառումների իրականացմանը⁴: Արդյունաբերական քաղաքականության մեկ այլ մեկնաբանմամբ «այն տնտեսության առանձին ճյուղերի կամ ենթաճյուղերի հիմնախնդիրների լուծման նպատակով դրանց նկատմամբ տվյալ երկրի կառավարության կողմից վարվող հատուկ քաղաքականություն է, կամ արդյունաբերության կառուցվածքի ձևավորմանն ուղղված քաղաքականությունը»⁵:


Բացի տեսական մեկնաբանություններից, ներկայացնենք նաև արդյունաբերության վերաբերյալ՝ վիճակագրական տվյալներով պայմանավորված համապատասխան վերլուծություններ: Ուստի այդ նպատակով դիտարկենք 2007-2015 թվականների ՀՀ արդյունաբերության արտադրանքի ծավալները՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների (աղյուսակ 1 և գծապատկեր 1):

Աղյուսակ 1

ՀՀ Արդյունաբերության արտադրանքի ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների (2007-2015թ.թ.)⁶

Անվանումները	վրդ. դրամ								
	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ընդամենը՝ արդյունաբերություն այդ թվում՝	716.5	739.3	669.4	824.4	999.0	1104.0	1224.3	1272.6	1322.0
• հանքագործություն	113.5	93.3	104.6	145.5	170.5	193.3	196.8	193.2	220.7
• մշակող արդյունաբերություն	478.0	509.0	443.6	544.7	644.8	699.0	777.0	847.7	839.4
• էլեկտրաէն., գազի, ջրի արտ. և բաշխում	125.0	137.0	121.2	116.2	165.7	211.7	250.5	231.7	261.9

¹ Բայաթյան Ա., Ֆինանսական վերլուծություն, Երևան, 2013, 1, էջ 58-70:
² Արշակյան Ա., Արդյունաբերական քաղաքականություն (Կայացումը և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում), Երևան, «Տնտեսագետ», 2003թ., 280էջ:
³ Դարբինյան Ա., Հայաստանը ինտեգրացման գործընթացում, Երևան, 2000, 144 էջ:
⁴ NC Fetridge D., The economics of industrial policy in Canadian industrial Polic in Action, Toronto, Univesity of Toronto Press. 1985. p. 1.
⁵ Абалкин Л.И. Концептуальные вопросы разработки промышленной политики в условиях современной Российской экономики. Труды вольного экономического общества России. М.1997.с.28-33.
⁶ Արդյունաբերական արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը (2007-2015 թթ.), առավել մանրամասն գտնվում է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրքում:



Գծապատկեր 1. Արդյունաբերական արտադրանքի ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների (2007-2015 թթ.)

Ըստ աղյուսակ 1-ից և գծապատկեր 1-ից պարզվում է, որ արդյունաբերական արտադրանքի ծավալներն ուսումնասիրվող տարիների ընթացքում ունեցել են աճման միտումներ: Այսպես՝ ընդամենը արդյունաբերության գծով 2015 թվականին 2007թ.-ի նկատմամբ ավելացել է 84.5% -ի չափով, իսկ ըստ տնտեսական գործունեության տեսակների, համապատասխանաբար, այսպիսին է եղել պատկերը՝ հանքարդյունաբերական գծով (93.9%), մշակող արդյունաբերության գծով (75.6 %) և էլեկտրաէներգետիկայի, գազի, ջրի արդյունաբերության գծով (109.5%):

Թե ինչպիսին է ՀՀ արդյունաբերական արտադրանքի ծավալների տեսակարար կշիռները՝ ըստ 2007-2015 թթ., ներկայացնենք աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

ՀՀ արդյունաբերական արտադրանքի ծավալների կառուցվածքն ըստ գործունեության տեսակների (2007-2015)¹ %

Անվանումները	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
1.Հանքագործ.արդյուն.	15.9	12.6	15.7	17.7	17.0	17.5	16.0	15.2	16.7
2.Մշակող արդյունաբ.	66.7	68.9	66.2	66.1	64.4	63.3	63.5	66.7	63.5
3.Էլեկտրէն.գազի, ջրի արտ. ու բաշխում	17.4	16.5	18.1	14.2	16.6	19.6	20.5	18.2	19.8
Ընդամենը՝ արդյունաբերություն	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են այն մասին, որ ըստ ուսումնասիրվող տարիների ՀՀ արդյունաբերությունում, արտադրանքի ծավալների ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում մշակող արդյունաբերությանը, որը տատանվում է 66.7-63.5%: Այսինքն՝ արդյունքում ունեցել է նվազման միտում 3.2%-ի չափով, իսկ աճման միտում են ունեցել մնացած երկու ոլորտները:

Պարզաբանման համար, այժմ դիտարկենք ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը, որը կարևոր և արտադրանք արտահանող ոլորտներից մեկն է: Ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ՀՀ-ում իրականացվում է հանքերի արդյունաբերական մշակում և դրանց համահունչ էլ շատ է կարևորվում այն, որպեսզի կատարվի ստացված հումքի վերամշակում, այսինքն՝ հանքաքարն անցնի մշակման հնարավորինս սահմանված չափով շրջափուլեր: Բացի հանքաքարի արդյունահանողից ու խտանյութի արտադրությունից, իրականացվում է նաև երկրորդ շրջափուլը՝ խտանյութից մետաղի ստացումը: Հանքահումքային ռեսուրսների առկայությունը

¹ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2016 թ.:

ցանկացած երկրի տնտեսությանը տալիս է առավելություն, քանի որ դրանք ունեն կարևոր արտադրատնտեսական և արդյունաբերական նշանակություն: Միաժամանակ պետք է նշել այն իրադրությունը, որ թեև ՀՀ-ն ռեսուրսներով այնքան էլ հարուստ չէ, բայց մեր երկրում կան մետաղական և ոչ մետաղական ռեսուրսների էական պաշարներ: Տարբեր գնահատականներով պղնձի ու մոլիբդենի պաշարների 2-5%-ը գտնվում է մեր երկրում: Ներկայումս, ՀՀ լեռնահանքային համալիրը և դրա հումքային ներուժը բաղկացած են հիմնականում երկաթի, պղնձամոլիբդենի ու պղնձի, ոսկու, այլ բազմամետաղային հանքավայրերից՝ ցինկի, կապարի և հազվագյուտ մետաղների պարունակությամբ, հարստացման, վերամշակման և ձուլման արտադրություններից: Երկրի խնդիրներից է այդ ռեսուրսների օգտագործումից օգուտներ քաղելը և, միևնույն ժամանակ, դրանց արդյունահանումից առաջացող վնասները նվազագույնի հասցնելը: Հանքարդյունաբերությունը, որը ներառում է օգտակար հանածոների արդյունահանումը և առաջնային մշակումը, 2014 թ. պաշտոնական վիճակագրության համաձայն՝ կազմել է ՀՀ համախառն ներքին արդյունքի մոտ 4.5 %-ը, արդյունաբերական արտադրանքի 17%-ը և արտահանման 30%-ը: Այնուհետ, 2015 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքների համաձայն 17.7% աճ է գրանցվել հանքագործական արդյունաբերության ու բացահանքերի շահագործման ոլորտում, իսկ արտահանման աճի տեմպը կազմել է 43%: Ընդ որում, հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ճյուղում արտահանման ծավալների աճը գրանցվել է 2015 թ.-ին և 2014թ.-ի համեմատ հիմնական արտադրատեսակների (պղնձի և մոլիբդենի) զծով՝ այն էլ համաշխարհային գների էական նվազման պայմաններում¹:

Ուսումնասիրությունները վկայում են նաև այն մասին, որ 2015 թվականին Հայաստանի ամբողջ արդյունաբերության մոտ 41.2%-ը (2007 թ.-ի 48.5%-ի փոխարեն) ապահովել է **Երևանը** (տե՛ս աղյուսակ 3-ը): Դա նշանակում է, որ երկրի արդյունաբերության ոլորտում Երևանի շուրջ կենտրոնացվածությունը մեծ է, քանի որ 10 մարզերը միասին ապահովել են ընդամենը 58.8 %-ը: Սա նշանակում է, որ չի օգտագործվում մարզերի ամբողջ ներուժը և Երևանի շուրջ կենտրոնացումն այս տարիների ընթացքում չի փոփոխվել:

Աղյուսակ 3

ՀՀ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ըստ մարզերի և ք.Երևանի (2007-2015թթ.) %

Անվանումներ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Հայաստանի Հանրապետ.	100	100	100	100	100	100	100	100	100
ք.Երևան	48.5	49.0	45.2	43.0	42.4	40.2	40.9	42.1	41.2
Արագածոտն	1.3	1.8	1.8	1.8	2.2	1.7	2.0	2.3	1.9
Արարատ	7.3	8.0	8.6	8.8	8.1	9.3	10.0	10.2	12.9
Արմավիր	4.2	4.5	5.1	4.5	4.2	4.0	4.0	4.2	4.3
Գեղարքունիք	1.3	1.4	1.8	1.4	1.8	1.9	1.9	1.8	2.2
Լոռի	6.0	5.7	6.7	7.3	7.3	7.2	6.1	5.4	8.9
Կոտայք	10.5	12.2	12.3	10.3	10.5	12.9	13.4	13.0	10.3
Շիրակ	2.3	2.4	2.7	3.1	4.3	3.6	3.4	3.8	3.0
Սյունիք	17.2	13.5	14.1	18.3	17.8	17.7	16.5	15.3	13.3
Վայոց ձոր	0.8	0.8	0.9	0.8	0.8	0.8	1.0	1.2	1.2
Տավուշ	0.6	0.7	0.8	0.7	0.6	0.7	0.8	0.7	0.7

Այս ամենի բացասական հետևանքն այն է, որ մայրաքաղաքում աշխատատեղերն ու հետևաբար բնակչության խտությունն ավելի մեծ է, քան մարզերում: Դա էլ իր հերթին հանգեցրել է այն բանին, որ կենսամակարդակը Երևանում և մարզերում անհամաչափ է և պարզաբանման

¹ Arnef.com/hy/news/2015

համար նշենք, որ նախորդ տարի (2014թ.) մշակող արդյունաբերության մասնաբաժինը Երևանի արդյունաբերության ընդհանուր ծավալում զբաղեցրել է 80.6% և հիմնականում՝ սննդամթերքի, խմիչքների, ծխախոտատեսակների և հիմնական մետաղների արտադրությունների գծով: Դրանք միասին ապահովել են մշակող արդյունաբերության 77% սննդամթերք՝ 35.4 %, խմիչքներ՝ 11.6%, ծխախոտատեսակներ՝ 13%, հիմնային մետաղներ՝ 17%: Սննդամթերքի մասնաբաժինն ամենամեծն է, քանի որ դրա ենթաճյուղերն ավելի շատ են: Հարկավոր է նշել, որ 10 տարում տնտեսության պատասխանատուներին չի հաջողվել այնպիսի քաղաքականություն վարել, որը կնպաստեր Երևանում տեքստիլ արդյունաբերության, հագուստի, կաշվե իրերի, կահույքի և այլ արտադրությունների զարգացմանը:

Վերջին տարիներին Երևանում արտադրության ծավալներով աչքի է ընկնում պոլիգրաֆիական գործունեության և գրաված կրիչների բազմացման ոլորտը, ինչպես նաև՝ ռետինե և պլաստմասե իրերի արտադրությունը:

Ուսումնասիրելով արդյունաբերության ոլորտի և դրա ճյուղերի զարգացումը, եկանք այն եզրակացության, որ մեր նպատակը պետք է լինի մակրոտնտեսական կայունության վերականգնումն ու տնտեսության աճի երկարաժամկետ և կայուն հիմքերի ապահովումն արդյունաբերության ոլորտում:

Այս նպատակների իրականացման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել արդյունաբերության զարգացման հեռանկարային ծրագիր, որտեղ նշվեն

- վառելիքաէներգետիկ, բնական և այլ պաշարների արդյունավետ և նպատակային օգտագործումը,
- արդյունաբերության նյութատար, էներգատար, և գիտատար ճյուղերի զարգացումը,
- արդյունաբերության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների արագ ներդրումը,
- Երևանում և դրա շուրջ արդյունաբերության համակենտրոնացման մակարդակի իջեցումը՝ փոքր և միջին արդյունաբերական բիզնեսի կազմակերպությունների հանրապետության սահմանային, լեռնային շրջաններում կազմակերպելու ու զարգացնելու միջոցով,
- արտադրատեսակների ձևավորման, ինչպես նաև կլաստերների կազմակերպման խրախուսումը,
- արտահանվող արտադրանքի արտադրության զարգացման խթանումը,
- համագործակցություն տարբեր երկրների հետ և արտաքին շուկաների լայնացումը:

Արդյունաբերության զարգացման համար կարևորվում են տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա ծառայությունների խրախուսումը: Բացի դրանից նաև կարևորվում է պետության աջակցությունն առկա բարձրորակ կադրային ներուժի օգտագործմանը, ինչպես նաև ծառայությունների ոլորտի զարգացմանը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՏԱՏՅԱՆԱ ԼԱԶԱՐԻ ՕԴԱՆՅԱՆ, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Համառոտագիր

Հետազոտությունում վերլուծվել են տնտեսական աճի ապահովման գործընթացները ՀՀ արդյունաբերությունում 2007 – 2015 թվականների վիճակագրական տվյալներով: Ինչպես ցույց տվեցին հետազոտությունները, նշված տարիներին արդյունաբերությունը զարգանում էր ոչ համաչափ, ինչը կապված էր ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ: Ներկայացրած են աղյուսակներ և գծապատկերներ, որտեղ արտացոլված են ՀՀ արդյունաբերության արտադրանքի ծավալները և դրանց կառուցվածքն ըստ ճյուղերի, մարզերի և ք. Երևանի:

Բանալի բառեր. տնտեսական աճ, արդյունաբերություն, ճգնաժամ, էլեկտրաէներգիա, հանքագործական, մշակող, ջրամատակարարում, արտադրանք, կառուցվածք, ճյուղ, մարզ:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ПРОМЫШЛЕННОСТИ РА

ТАТЬЯНА ЛАЗАРЕВНА ОГАНЯН, *к.э.н.*

старший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

В статье на основе статистических данных проведен анализ экономического роста в промышленности РА за период 2007-2015 гг. Как показали исследования, за рассматриваемый период вследствие экономического кризиса промышленность РА развивалась неравномерно. Приведены таблицы и графики, отражающие объемы промышленного производства РА и структуру производства продукции по отраслям, марзам и г. Еревану.

Ключевые слова: экономический рост, промышленность, кризис, электроэнергия, горнодобывающая, обрабатывающая, водоснабжение, производство, структура, отрасль, регион.

INDUSTRY DEVELOPMENT PATTERN IN ARMENIA

TATYANA LAZAR OHANYAN, *Candidate of Sciences (Economics)*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article provides the analysis of the growth of the industry in the Republic of Armenia for the period 2007-2015 based on the statistical data. As studies show, during the discussed period the industry in the Republic of Armenia being hit by the Global Financial and Economic crisis reported an irregular growth pattern. The tables and charts illustrate the pattern of industrial output and the composition of the industry by sectors of the economy, marzes and Yerevan city.

Keywords: Economic growth, industry, crisis, energy sector, mining, manufacturing, water supply, production, composition, sector, region

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԱՇՈՏ ՀԱԿՈՒԻ ԲԱՅԱԴՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող

ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏԸ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

2008թ.-ից սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը կրկին արդիական դարձրեց այն տնտեսական հայեցակարգը, ըստ որի՝ կայուն տնտեսական աճ ապահովելու համար մակրոտնտեսական կարգավորումն ու տնտեսության պետական միջամտությունն անհրաժեշտություն են: Համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլում աշխարհի զարգացած ու զարգացող գրեթե բոլոր երկրներում տնտեսական աճի տեմպերը դանդաղել են, և ճգնաժամի երկրորդ ակիբը փորձագետներն անխուսափելի են համարում: Նման պայմաններում տնտեսական աճի ապահովման ու խթանման արդյունավետ մեխանիզմների որոնման հիմնախնդիրն արդիական է, իսկ դրա լուծումը տեսական ու գործնական բնույթի բազմաթիվ դժվարություններ ու խոչընդոտներ ունի: Տնտեսական աճը մեր երկրի համար ևս կարևոր նպատակ է, քանի որ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային արդյունքի ավելացումը նրա կենսամակարդակի բարձրացման կարևորագույն պայման է: Տնտեսական աճի ապահովման բարդությունն ու բազմակողմանիությունը, յուրաքանչյուր երկրի տնտեսական կյանքի առավել կարևոր բնութագրիչ լինելու հանգամանքը, տնտեսական աճի վրա դինամիկ փոփոխվող տնտեսական միջավայրի ազդեցության առանձնահատկությունները, ինչպես նաև տնտեսական աճի գործոնների բացահայտման մեթոդաբանական դժվարությունները պայմանավորում են տնտեսագետների մշտական ուշադրությունն այդ հիմնախնդրին¹:

ՀՀ-ում սոցիալ տնտեսական զարգացումները վերջին տարիների ընթացքում կարելի է բաժանել ժամանակային երեք հիմնական փուլերի: Դրանք են՝


- Առաջին փուլը 2002-ից 2008 թվականի սեպտեմբեր ընկած ժամանակահատվածն է, երբ տնտեսությունը բնութագրվում էր տնտեսական երկնիշ աճով:
- Երկրորդ փուլը 2008 թվականի չորրորդ եռամսյակից մինչև 2009 թվականի վերջ ընկած ժամանակահատվածն է, երբ տնտեսությունը մտավ անկման փուլ, որը պայմանավորված էր համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով:
- 2010 թվականից սկսված հետճգնաժամայինը կարելի է բնութագրել որպես տնտեսության չափավոր աճի փուլ:

ՀՀ-ում տնտեսական աճն ունի յուրահատուկ գծեր և պահանջում է հատուկ ուսումնասիրություն, որոնց թվին կարելի է դասել երկրի տարածքային անհամաչափ զարգացումը, երկարաժամկետ ներդրումների պակասը, արտագաղթի ահագնացող տեմպերը և ՀՆԱ-ի զգալի անկումից հետո դրա վերականգնման անհրաժեշտությունը: Արդյունքում, վերը թվարկված խնդիրները տնտեսական աճի ապահովման հնարավորությունների բացահայտման և ուսումնա-

¹ Pritchett L., Understanding Patterns of Economic Growth // The World Bank Economic Review. 2000. Vol. 14. N 2. R 221— 250.

սիրության հիմնախնդիրը դարձնում են էլ ավելի հրատապ: ՀՀ տնտեսական աճի ապահովման գործընթացում կարևոր դերակատարում ունի տրանսպորտի ոլորտը:

Ցանկացած երկրի տնտեսությունը չի կարող բարեհաջող գործել առանց տրանսպորտի ոլորտի, որը կարևոր դեր է խաղում երկրի տնտեսությունում և դրա կառուցվածքում (տե՛ս գծապատկերը) համարվում է անբաժանելի մասը: Տրանսպորտի աշխատանքից է կախված արդյունաբերական կազմակերպությունների, գյուղատնտեսության, մատակարարումների, առևտրի զարգացումը և բնականոն գործունեությունը: Մեծ է դրա նշանակությունը նաև արտաքին տնտեսական կապերում, երկրի պաշտպանության, նոր տնտեսական շրջանների զարգացման գործում¹:



Գծապատկեր 1. Տնտեսության կառուցվածքը

Տրանսպորտը բավարարում է մարդու ամենակարևոր կարիքներից մեկը, մասնավորապես՝ կապված բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների հետ: Մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հանդիսանալով արտադրողական ուժերի բաղկացուցիչ մաս, նպաստում է տնտեսության զարգացմանը և հանդիսանում է աշխատողների նյութական ու սոցիալական կենսամակարդակի բարձրացման որոշիչ գործոններից մեկը:

Հայաստանի Հանրապետության համար, որը գտնվում է կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Հարավային Կովկասում, տրանսպորտի հարցում մարտահրավերներ են առաջացնում տեղանքը, տեղադրությունը և աշխարհաքաղաքական իրավիճակը: Լինելով ցամաքային երկիր, Հայաստանի տնտեսությունը, մեծապես պայմանավորված է տրանսպորտային ծախսերից և միջսահմանային հաղորդակցումից: Ինչևէ, Հայաստանի դիրքը լուրջ խնդիր է հարուցում տրանսպորտի ոլորտի համար: Բաց են միջազգային սահմաններից միայն երկուսը՝ հյուսիսում Վրաստանի և հարավում Իրանի հետ: Ադրբեջանի հետ արևելյան սահմանը փակվել է դեռևս 1991 թվականին, իսկ Թուրքիայի հետ արևմտյան սահմանը՝ 1993 թվականին: Մեկ այլ հիմնախնդիր է Հայաստանի խիստ մայրցամաքային կլիման՝ ձմեռային շրջանի շատ ցածր ջերմաստիճաններով և ձնառատ տեղումներով, որոնք սահմանափակում են երկրի տնտեսական գործունեությունը: Այս խնդիրների հետևանքով էլ մեծանում են տրանսպորտային ծախսերը, մասնավորապես՝ առևտրի առարկա հանդիսացող ապրանքների դեպքում, իսկ ենթակառուցվածքների զարգացումն ու պահպանումը դառնում է ծախսատար: Բացի վերոնշյալները, Հայաստանն ունի նաև խիստ սահմանափակ թվով երկաթուղային գծեր և լայնածավալ ճանապարհային ցանց: Թեպետ ցանցի հզորությունները համարժեք են տրանսպորտի գծով նախատեսվող պահանջարկը մինչև 2020 թվականը բավարարելու համար, սակայն ֆինանսական միջոցների բացակայության հետևանքով ենթակառուցվածքները ենթարկվել են արագ քայքայման: Վերջին տարիներին գերակայությունը տրվել է ենթակառուցվածքների վերականգնմանն ու վերակառուցմանը, որոնց համար արտաքին աղբյուրներից՝ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից, Լինսսի հիմնադրամից, Հազարամյակի

¹ Экономика транспорта: Учебник и практикум, Под редакцией Е.В. Будриной, М.: Юрайт, 2016, 366 стр.

մարտահրավերների կորպորացիայից և Համաշխարհային բանկից ստացվել է մոտ 350 մլն ԱՄՆ դոլար¹:

Պետք է նշել այն խոչընդոտը, որ փակ սահմանների հետևանքով էապես աճում են տրանսպորտային ծախսերը, կրճատվում միջազգային առևտրի հնարավորությունները, սահմանափակվում տեղական բեռնափոխադրումների ոլորտի զարգացումը, խաթարվում նյութատեխնիկական մատակարարման ոլորտի հեռանկարները և նվազում երկաթուղու դերը: Հետևաբար, այս պարագայում կարևորվում է Սևծովյան նավահանգիստների մատչելիության ապահովումը, որն ըստ էության կնվազեցնի առևտրի պակասուրդը մեկ երրորդով կամ կիսով չափ, ինչպես նաև կապահովի ՀՆԱ-ի 30%-նոց աճ: Երկրի տարածքի միջին բարձրությունը՝ 1800մ , և խիստ կլիման, շատ ցածր ձմեռային ջերմաստիճանը, առատ ձյունն ու հորդառատ անձրևներն առկա են ամբողջ երկրում, ներառյալ՝ հիմնական տրանսպորտային ուղիներում: Նշված գործոնների համադրությունը հանգեցնում է ինչպես տրանսպորտային, այնպես էլ ենթակառուցվածքի շահագործման և զարգացման բարձր ծախսերի:

Տնտեսական անկախություն ստանալուց հետո ժառանգված ենթակառուցվածքային համակարգը բավականին կոտ էր՝ ինչպես ցանցի ծածկույթի, այնպես էլ թողունակության առումով, և այդ դժվարին տարիներին տրանսպորտի ենթակառուցվածքների վիճակը վատացավ, քանի որ ֆինանսավորման բացակայության պատճառով տեխնիկական սպասարկման աշխատանքները դադարեցվեցին: Սակայն, այնուհանդերձ, անկախության հետագա տարիների ընթացքում ՀՀ կառավարության կողմից մշակված ռազմավարությանը համահունչ տնտեսական աճ է գրանցվել: Այդ ռազմավարությունը նաև զգալիորեն փոփոխել է տրանսպորտի ոլորտի կառավարումը: Դեռ ավելին, կատարվող ներդրումները և արտահանումը խրախուսելու նպատակով ՀՀ կառավարությունը գործարար միջավայրի բարելավման միջոցով ամրապնդել է այլ երկրների հետ տնտեսական հարաբերությունները:

Աղյուսակ 1


ՀՀ տրանսպորտի ոլորտի ցուցանիշները ՀՆԱ-ում ըստ 2011-2015թթ²

Ցուցանիշներ	2011	2012	2013	2014	2015
ՀՆԱ, մլն. դրամ(համախառն շուկայական գներով)	3777945,6	4266460,5	4555638,2	4828626,3	5032089,0
Տրանսպորտի ծավալն ընդամենը, մլն.դրամ	117422,2	130856,8	120135,6	144518,3	120812,6
Տրանսպորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	3,1	3,07	2,6	3,0	2,4
Զբաղվածներ, ընդամենը 1000 մարդ, այդ թվում՝	1175,1	1172,8	1163,8	1133,5	1072,6
Տրանսպորտի ոլորտում, 1000 մարդ	48,7	51,6	51,2	45,5	39,9
Տրանսպորտի ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը, %	4,1	4,4	4,4	4,0	3,7

Աղյուսակ 1-ի տվյալներից ակնհայտ է, որ չնայած այն հանգամանքին, որ 2015թ.-ին 2011թ.-ի համեմատ տրանսպորտի ծավալն աճի միտում է ունեցել, այնուամենայնիվ տրանսպորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում նվազել է 0,7%-ային կետով: Իսկ ինչ վերաբերվում է զբաղվածներին, ապա ՀՀ-ում և՛ զբաղվածների ընդհանուր թիվն է նվազել, և՛ կոնկրետ տրանսպորտի ոլորտում զբաղվածների թիվը (0,4%-ային կետով):

¹ Հայաստանի տրանսպորտային հեռանկարները, տրանսպորտի ոլորտի գլխավոր պլան, տրանսպորտ և կապ, Հայաստան, 2011, 36 էջ:

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016, էջ 60, 234:



Գծապատկեր 2. ՀՀ ՀՆԱ-ի և տրանսպորտի ոլորտի ցուցանիշները¹

Տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը պետության կայուն և դինամիկ զարգացման կարևորագույն նախադրյալն է, որը նպաստում է երկրի տնտեսական ակտիվության աճին: Զարգացած ենթակառուցվածքները նվազեցնում են տնտեսական տարածքների միջև հեռավորությունը, ինչն էլ, իր հերթին, ազդում է թե՛ արտադրության, թե՛ իրացման ծախսերի կրճատման վրա: Միաժամանակ տրանսպորտային ենթակառուցվածքները տարբեր երկրների և տարածաշրջանների շուկաները դարձնում են ավելի մատչելի՝ նպաստելով արտաքին շուկաներում երկրից արտահանման մրցունակության մակարդակի բարձրացմանը: Տրանսպորտային զարգացած ենթակառուցվածքների, այդ թվում դրանց արդյունավետ տեսակների առկայությունը հնարավորություն է տալիս ապրանքներն ու ծառայություններն անվտանգ և ժամանակին հասցնելու գնորդներին: Տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումն առավել կարևոր է այն երկրներում, որոնք ծովային սահման չունեն և արդյունքում որոշակի դժվարություններ են առաջանում համաշխարհային շուկա մուտք գործելու և դրա առավելություններից օգտվելու համար: Հայաստանի պարագայում դեպի ծով անմիջական կապի, համապատասխան տրանսպորտային ենթակառուցվածքների և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների հետ ընդհանուր սահմանի բացակայությունն այդ երկրների ապրանքային շուկաներին արդյունավետ ինտեգրվելու հիմնական խոչընդոտն է: Բացի դրանից, ապրանքների փոխադրման ընթացքում Վրաստանի սահմանը հատելով, որոշակի խնդիրներ են առաջանում տարանցման գործընթացների հետ կապված, որը մեծացնում է տրանսակցիոն ծախսերը և ազդում ոչ միայն արտահանվող ապրանքների մրցունակության, այլև ներմուծվող ապրանքների գների վրա:

Այժմ աղյուսակների տեսքով ներկայացնենք ՀՀ-ում ընդհանուր օգտագործման տրանսպորտի հիմնական ցուցանիշները (աղյուսակ 2) և տրանսպորտի առանձին տեսակների բեռնափոխադրումների տեսակարար կշիռները (աղյուսակ 3):

¹ Կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016-ի տվյալների:

ՀՀ տրանսպորտի ոլորտի հիմնական ցուցանիշներն ըստ 2006-2015թթ.¹

Հ/Հ	Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Փոխադրվել են բեռներ, հզ.տոննա, այդ թվում՝	9676,4	10296,1	9389,3	9806,7	10577,5	9720,8	12094,1	12315,5	10157,6	11052,6
-	Երկաթուղային տրանսպորտով	2719,6	2983,7	2755,1	2942,6	3063,3	3269,4	3460,2	3275,2	3057,6	2531,7
-	Ավտոմոբիլային տրանսպորտով	5730,4	5864,5	5065,3	5636,4	6196,0	4944,2	6840,1	7319,6	5384,0	6864,9
-	Օդային տրանսպորտով	9,3	10,0	10,8	8,4	8,8	10,0	12,3	10,4	10,4	10,2
-	Մայրուղային խողովակաշարով	1217,1	1437,9	1558,1	1219,3	1309,4	1497,2	1781,5	1710,3	1705,6	1645,8
2	Բեռնաշրջանառությունը, մլն. տոննա-կմ, այդ թվում՝	2368,3	2874,9	3015,0	2597,6	3126,3	3525,3	4267,9	4247,9	4232,7	3746,0
-	Երկաթուղային տրանսպորտի	668,0	770,5	705,0	717,9	743,2	815,9	867,3	851,0	786,1	640,3
-	Ավտոմոբիլային տրանսպորտի	91,2	132,9	179,4	181,8	235,8	230,6	513,0	641,1	726,4	479,4
-	Օդային տրանսպորտի	12,4	13,1	13,1	9,5	9,7	9,1	11,2	5,6	2,0	-
-	Մայրուղային խողովակաշարով	1596,7	1958,4	2117,5	1688,4	2137,6	2469,7	2876,4	2749,8	2718,2	2626,3
3	Փոխադրվել են ուղևորներ, մլն. ուղևոր, այդ թվում՝	245,8	251,8	247,5	249,3	251,6	249,8	248,5	241,3	225,8	208,9
-	Երկաթուղային տրանսպորտով	0,7	0,6	0,7	0,8	0,8	0,6	0,6	0,4	0,4	0,4
-	Ավտոմոբիլային տրանսպորտով	214,0	216,0	207,7	206,3	206,0	207,0	207,8	202,1	189,1	175,0
-	Թեթև մարդատար տաքսիներով	10,0	12,5	14,9	17,2	18,0	17,9	17,7	15,7	12,8	10,3
-	օդային տրանսպորտով	1,2	1,4	1,5	1,5	1,7	1,7	1,8	1,8	2,1	1,9
-	տրոլեյբուսով	4,1	3,6	3,4	4,3	4,9	5,3	5,4	5,4	5,4	5,3
-	մետրոպոլիտենով	15,4	17,3	18,9	18,9	19,9	17,0	14,9	15,6	15,8	15,8
-	ճոպանուղով	0,4	0,4	0,4	0,3	0,3	0,3	0,3	0,3	0,2	0,2
4	Ուղևորաշրջանառությունը, մլն. ուղևոր-կմ	3485,6	3769,1	3982,9	3792,2	3937,8	3631,3	3471,1	2858,4	3008,5	2525,0
-	Երկաթուղային տրանսպորտի	27,7	23,9	26,6	34,5	50,1	49,4	53,0	55,1	51,9	44,3
-	Ավտոմոբիլային տրանսպորտի	2479,1	2566,2	2615,7	2355,5	2344,3	2379,7	2449,7	2457,0	2420,9	2307,6
-	Թեթև մարդատար տաքսիների	79,4	103,3	126,0	159,5	167,2	161,8	161,4	141,7	114,7	88,3
-	օդային տրանսպորտի	822,2	993,6	1127,1	1151,3	1278,6	951,3	725,5	120,4	336,0	-
-	տրոլեյբուսի	18,5	16,3	15,4	19,5	21,9	23,9	24,1	24,2	24,0	23,8
-	մետրոպոլիտենի	58,5	65,6	71,9	71,7	75,5	64,6	56,7	59,2	60,1	60,0
-	ճոպանուղով	0,2	0,2	0,2	0,2	0,2	0,6	0,7	0,8	0,9	1,0

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, 2016, էջ 328-329.

ՀՀ բեռնափոխադրումների, բեռնաշրջանառության, ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության ընդհանուր ծավալում տրանսպորտի առանձին տեսակների գծով տեսակարար կշիռն ըստ 2006-2015թթ.¹

Ցուցանիշները	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Բեռնափոխադրումներ ընդամենը, այդ թվում՝	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Երկաթուղային	28,1	29,0	29,3	30,0	29,0	33,6	28,6	26,6	30,1	22,9
Ավտոմոբիլային	59,2	56,9	54,0	57,5	58,5	50,9	56,6	59,4	53,0	62,1
Օդային	0,1	0,1	0,1	0,1	0,1	0,1	0,1	0,1	0,1	0,1
Սայրուղային խողովակաշարային	12,6	14,0	16,6	12,4	12,4	15,4	14,7	13,9	16,8	14,9
Բեռնաշրջանառություն ընդամենը, այդ թվում՝	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Երկաթուղային	28,2	26,8	23,4	27,6	23,8	23,1	20,3	20,0	18,6	17,1
Ավտոմոբիլային	3,9	4,6	6,0	7,0	7,5	6,5	12,0	15,1	17,1	12,8
Օդային	0,5	0,5	0,4	0,4	0,3	0,3	0,3	0,1	0,1	-
Սայրուղային խողովակաշարային	67,4	68,1	70,2	65,0	68,4	70,1	67,4	64,8	64,2	70,1
Ուղևորափոխադրումներ ընդամենը, այդ թվում՝	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Երկաթուղային	0,2	0,3	0,3	0,3	0,3	0,2	0,3	0,2	0,2	0,2
Ավտոմոբիլային	87,0	85,7	83,9	82,8	81,8	82,9	83,6	83,8	83,7	83,8
Թեթև մարդատար տաքսիներ	4,1	5,0	6,0	6,9	7,2	7,2	7,1	6,5	5,7	4,9
Օդային	0,5	0,6	0,6	0,6	0,7	0,7	0,7	0,7	0,9	0,9
Էլեկտրատրանսպորտ	8,1	8,5	9,2	9,4	10,0	9,0	8,3	8,8	9,5	10,2
Ուղևորաշրջանառություն ընդամենը, այդ թվում՝	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Երկաթուղային	0,8	0,6	0,7	0,9	1,3	1,4	1,5	1,9	1,7	1,7
Ավտոմոբիլային	71,1	68,1	65,6	62,1	59,5	65,5	70,6	86,0	80,5	91,4
Թեթև մարդատար տաքսիներ	2,3	2,7	3,2	4,2	4,2	4,5	4,6	5,0	3,8	3,5
Օդային	23,6	26,4	28,3	30,4	32,5	26,2	20,9	4,2	11,2	-
Էլեկտրատրանսպորտ	2,2	2,2	2,2	2,4	2,5	2,4	2,4	2,9	2,8	3,4

Աղյուսակ 2-ի և 3-ի տվյալներից ակնհայտ երևում է, որ բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ամենամեծ տեսակարար կշիռ ունի ավտոմոբիլային տրանսպորտը, որը 2015-ին 2014-ի համեմատ ավելացել է 9,1 %-ով, իսկ ամենափոքր տեսակարար կշիռ ունի օդային տրանսպորտը, որը վերջին 10 տարիներին մնացել է անփոփոխ: Բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում ամենամեծ տեսակարար կշիռ ունի մայրուղային խողովակաշարային տրանսպորտը, որն ըստ վերջին 10 տարիների տվյալների տատանվել է 65-70%-ի սահմաններում, իսկ ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության ծավալում ամենամեծ տեսակարար կշիռ ունի ավտոմոբիլային տրանսպորտը:

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, 2016, էջ 330:

Տրանսպորտային փոխադրումներից հասույթը և ծախսերը¹

Ցուցանիշները	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ուղևորների փոխադրումներից հասույթ	80 744,2	83 383,5	97 058,1	95 318,5	100 082,8	94 148,8	87 790,4	53 209,9	57 537,8	39 990,9
ծախսեր	80 183,3	72 094,1	89 677,7	96 681,4	107 449,2	99 997,5	94 403,5	53 956,1	62 865,9	43 095,1
Բեռների փոխադրումներից հասույթ	20 316,1	21 672,0	29 166,2	29 543,7	32 924,1	38 465,9	54 135,6	60 894,8	60 432,5	48 296,6
ծախսեր	26 457,4	22 857,6	29 311,1	31 679,5	29 986,5	32 057,2	46 674,5	51 401,8	50 751,9	41 131,6
Օժանդակ և լրացուցիչ տրանսպորտային գործունեությունից հասույթ	24210,1	27039,2	36890,8	37431,9	39486,5	44686,3	47295,1	51702,3	61825,2	55282,2

Աղյուսակ 4-ի տվյալներից երևում է, որ 2006-2010թթ. ուղևորների փոխադրումներից հասույթը աճել է, իսկ 2010-2015թթ. ունեցել է նվազման միտում, և 2015թ.-ին 2010թ.-ի համեմատ նվազել է մոտ 60%-ով: Նույն միտումը նկատվում է նաև ծախսերի մասով: Իսկ ինչ վերաբերում է բեռների փոխադրումներից և օժանդակ ու լրացուցիչ տրանսպորտային գործունեությունից հասույթին, ապա 2006-2014թթ. աճել է, իսկ 2015թ.-ին 2014թ.-ի համեմատ նվազել է, համապատասխանաբար 20,1%, 10,6%-ով:

Հայաստանի տրանսպորտի ոլորտի զարգացման ռազմավարությունը մինչև 2020թ. հետապնդում է կառավարման, ենթակառուցվածքների և տեխնոլոգիաների բարելավման նպատակ՝ տրանսպորտի ոլորտի կատարողականը մինչև 2020թ. առավելագույնի հասցնելու համար, և նախատեսում է բարգավաճում երկարաժամկետ կտրվածքում՝ տրանսպորտի արդյունավետ, ծախսարդյունավետ և բնապահպանության և սոցիալական տեսանկյուններից կայուն զարգացող ենթակառուցվածքների և ծառայությունների ձևավորման և մատուցման միջոցով²: Ռազմավարությունը մշակվել է անցյալի նվաճումների հիման վրա՝ տրանսպորտի ոլորտի հետ կապված ներկա ու ապագա մարտահրավերները հաղթահարելու և ներկա ու ապագա համաշխարհային շուկաների ընձեռած պոտենցիալ հնարավորություններն օգտագործելու համար: Այն մշակելիս հաշվի է առնվել նաև արդյունքների առումով ՀՀ կառավարությունից ունեցած ակնկալիքների աճը՝ սահմանափակ ռեսուրսների և ՀՀ կառավարության ինտելեկտուալ հարկաբյուջետային և արտաքին պարտքի քաղաքականությունների համատեքստում: Ռազմավարությունը քաջալերում է համագործակցությունը կառավարության ներսում և արտաքին ֆինանսավորման կառույցների հետ, ինչպես նաև մասնավոր հատվածի հետ՝ ռազմավարության տեսլականին հասնելու համար:

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, 2016, էջ 334-336:

² Ասիական զարգացման բանկ, Հայաստանի տրանսպորտի ոլորտի զարգացման ռազմավարություն 2020, Երևան, 2008:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը և հարկաբյուջետային և արտաքին ֆինանսավորման հնարավոր սահմանափակումները (ներառյալ Հայկական սփյուռքի կողմից տրամադրվող ֆինանսավորումը) ՀՀ կառավարությունից կպահանջեն ավելի ակտիվորեն հետևել ռազմավարությանը. կառավարության ներսում և Հայաստանի հարևան երկրների հետ տրանսպորտի և առևտրի հեշտացման հզորացված համակարգման հետ մեկտեղ արդյունավետ կերպով նպատակադրել բարձր գերակայություն ունեցող ներդրումները՝ սահմանափակ ռեսուրսների միջոցով արագ և ծախսարդյունավետ արդյունքների հասնելու համար: Տրանսպորտին և առևտրին սպառնացող խոչընդոտները ծախսարդյունավետ կերպով վերացնելը կարևոր է Հայաստանում կայուն, համակողմանի տնտեսական զարգացում և բիզնեսի զարգացում ապահովելու համար, և առանցքային՝ տնտեսական հնարավորությունները տնտեսական իրականությունների վերածելու և երկրի համար ավելի լավ ապագա կերտելու համար:

Հայաստանի աշխարհագրական և տնտեսական առանձնահատկությունները պահանջում են, որպեսզի մշակվի տրանսպորտի ազգային ռազմավարություն: Ճանապարհների վերականգնումը, տրանսպորտային և ընդհանրապես արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների ձևավորումը և զարգացումը հեռավոր շրջաններում կլուծեն բնակչության զբաղվածության հարցը: Այն կձևավորի միջմոդուլային (փոխադրումների համար տրանսպորտի մեկից ավելի տեսակ նախատեսող) արդյունավետ և մրցունակ տրանսպորտային համակարգ, որը կնպաստի տնտեսական աճին և կյաթանի միջազգային տնտեսական համագործակցությունը:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏԸ ԴՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԱՇՈՏ ՀԱԿՈԲԻ ԲԱՅԱԴՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող

ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածում քննարկվում են ՀՀ տնտեսությունում տրանսպորտի ոլորտի դերի և տնտեսական աճի գործընթացում վերջինիս մասնաբաժնի փոփոխության հարցերը, քանի որ տնտեսական աճը մեր երկրի համար կարևոր նպատակ է, և բնակչության մեկ շնչի հաշվով ազգային արդյունքի ավելացումը նրա կենսամակարդակի բարձրացման կարևոր պայման: ՀՀ-ում տնտեսական աճն ունի յուրահատուկ գծեր և պահանջում է հատուկ ուսումնասիրություն, որոնց թվին կարելի է դասել՝ երկրի տարածքային անհամաչափ զարգացումը, երկարաժամկետ ներդրումների պակասը, արտագաղթի ահագնացող տեմպերը և ՀՆԱ-ի զգալի անկումից հետո դրա վերականգնման անհրաժեշտությունը: Ճանապարհների վերականգնումը, տրանսպորտային և ընդհանրապես արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների ձևավորումը և զարգացումը հեռավոր շրջաններում կլուծեն բնակչության զբաղվածության հարցը, որը դրական կազդի տնտեսական աճի վրա:

Բանալի բառեր. *տնտեսական աճ, տրանսպորտ, ՀՆԱ, զբաղվածություն, ֆինանսատնտեսական ճգնաժամ, տրանսպորտային ֆոնադրումներ, ճանապարհներ, տնտեսություն*

ТРАНСПОРТНАЯ ОТРАСЛЬ В ДЕЛЕ ОБЕСПЕЧЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА РА

АШОТ АКОПОВИЧ БАЯДЯН, *д.э.н., профессор*

зав. отделом, главный научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА

МЕРИ ГАГИКОВНА МАНУЧАРЯН, *к.э.н.*

научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА

Аннотация

В статье рассматриваются роль транспортной отрасли РА и вопросы изменения ее доли в процессе обеспечения экономического роста, являющегося важнейшей целью нашей страны и проявляющегося в увеличении национального продукта на душу населения и соответственно повышении его жизненного уровня. Экономический рост в РА обладает уникальными характеристиками и требует специального исследования, к числу которых можно отнести неравномерное территориальное развитие страны, отсутствие долгосрочных инвестиций, растущие темпы миграции и необходимость его восстановления после значительного падения ВВП. Восстановление дорог, формирование и развитие транспортной, производственной и социальной инфраструктуры в целом позволят решить вопрос занятости населения в отдаленных районах, что положительно повлияет на экономический рост.

Ключевые слова: *экономический рост, транспорт, ВВП, занятость, финансово-экономический кризис, транспортные перевозки, дороги, экономика.*

THE ROLE OF THE TRANSPORT INDUSTRY IN THE PROCESS OF ENSURING ECONOMIC GROWTH

ASHOT HAKOB BAYADYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*

Head of Department, Chief Research Associate M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

MERI GAGIK MANUCHARYAN, *Ph.D. in Economics*

Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article examines the role of the transport industry of the Republic of Armenia, and the issues related to the change of its share in the process of ensuring economic growth as the economic growth is an important goal for our country, and increasing the GDP per capita is an important condition for enhancing the standards of living. The characteristic of economic growth in the Republic of Armenia are unique and requires special research. Among the characteristics are inequitable regional development of the country, lack of long-term investments, a growing rate of emigration and the recovery of the GDP growth rates after significant decline. The restoration of roads, the formation and development of transport, production and social infrastructure in general will address the issue of employment in remote areas, which will positively affect the economic growth.

Keywords: *Economic growth, transport, GDP, employment, financial-economic crisis, transportation, roads, economy*

ԷԲԱ ԱՐԿԱՂԻԻ ԲԱԲԱՅԱՆ, *տ.գ.թ., պրոֆեսոր*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

ԻՐԻՆԱ ԱՇՈՏԻ ՏԱՐԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵՋ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հայաստանում կրթությունն առավել կարևորվող և առաջնային համարվող բնագավառներից է, և պետական ու ազգային կարևորագույն խնդիր է համարվում կրթական համակարգի պահպանումը, զարգացումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը: Բնագավառի հետագա զարգացումը դիտվում է որպես տնտեսության առաջնային գերակայություն: Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը¹:

Կրթության ոլորտի բարեփոխումները Հայաստանում սկսվել են անկախության հռչակումից հետո՝ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում: Անցած տարիների ընթացքում իրականացված բարեփոխումների արդյունքում լուծվել են կրթական համակարգում առկա բազմաթիվ խնդիրներ, նախադրյալներ են ստեղծվել հետագա զարգացման համար: Այդուհանդերձ, ինչպես նշվում է կրթության զարգացման պետական ծրագրում, կրթության համակարգը դեռևս հեռու է իր առաքելության լիարժեք և ամբողջական իրականացումից, մյուս կողմից՝ զարգացմանը զուգընթաց առաջ են եկել նաև նոր մարտահրավերներ: Որակյալ կրթության ապահովումը, բնակչության բոլոր խավերի համար դրա մատչելիության բարձրացումը միջին, երկարաժամկետ հատվածում տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության մեղմման կարևորագույն գործոններից մեկն է, ինչն ամրագրված է նաև «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում»²:


Քանի որ հանրապետության կրթական համակարգում տարեցտարի գնալով խորանում են բևեռացման և հասանելիության խնդիրները, հարկ ենք համարում անդրադառնալ վերջիններիս: Այդ նպատակից ելնելով՝ ուսումնասիրվել են կրթության մեջ համախառն ընդգրկվածության ցուցանիշները, որոնց հիման վրա կարելի է դատել այս կամ այն սոցիալական խմբի համար կրթական ծառայությունների մատչելիության մասին: Ցուցանիշը հաշվարկային է, ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 30-ական թվականներից: Աշակերտների համախառն ընդգրկվածության մասին ցուցանիշները կիրառվում են կրթության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով: Կրթահամակարգում ընդգրկվածության ցուցանիշը սովյալ կրթահամակարգ հաճախող երեխաների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է մշտական բնակչության նույն կրթահամակարգի համար պաշտոնապես սահմանված տարիքային խմբի թվաքանակի նկատմամբ: Տարրական դպրոցներում աշակերտների ընդգրկվածությունը ցույց է տալիս տարրական դասարանների (1-4-րդ) աշակերտների թվաքանակի հարաբերությունը համապատասխան տարիքի (6-9 տարեկան) բնակչությանը՝ արտահայտված տոկոսով), հիմնական դպրոցներում՝ հիմնական դասարանների (1-9-րդ) աշակերտների թվաքանակի հարաբերությունն է համապատասխան տարիքի (6-14 տարեկան) բնակչությանը՝ արտահայտված տոկոսով, ավագ դպրոցներում՝ աշակերտների թվաքանակի հարաբերությունն է համապատասխան տարիքի (15-17 տարեկան) բնակչությանը՝ արտահայտված տոկոսով, միջնակարգ դպրոցներում՝ հանրակրթական դպրոցների աշակերտների (1-12-րդ դասարանների)

¹ ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիր:

² Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության որոշում 8.08.2003 № 994-Ն:

թվաքանակի հարաբերությունն է համապատասխան տարիքի (6-17 տարեկան) բնակչությանը՝ արտահայտված տոկոսով:

ՀՀ շարունակական կրթության համակարգի որակի ապահովման և արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է երեխաների վաղ ընդգրկումը կրթական ծրագրերում: Վաղ և ինտենսիվ նախապատրաստումը անհրաժեշտ է, որպեսզի երեխաները պատրաստ լինեն տարրական և հետագա մակարդակներում ուսուցմանը: Մակայն մատչելիության առումով այսօր ամենախոցելին նախադպրոցական կրթությունն է (տե՛ս գծապատկեր 1)¹: Թեև 2000-2015թթ. ընթացքում նախադպրոցական ծրագրերում համախառն ընդգրկվածությունը աճել է, այնուամենայնիվ այն մնում է շատ ցածր: 2015 թ. տվյալներով ՀՀ-ում նախադպրոցական տարիքի երեխաների միայն 35,7%-ն է հաճախել նախադպրոցական հաստատություններ (քաղաքային համայնքներում՝ 28,6%, գյուղական համայնքներում՝ 16,6%): Գյուղական համայնքների մեծ մասում (մոտ 80%-ում)² երեխաները զրկված են մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից: Համեմատության կարգով նշենք, որ 1989թ.-ին Հայաստանում նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածությունը հասնում էր մինչև 60%, իսկ ՏՀԶԿ երկրներում ընդգրկվածության մակարդակը, որպես կանոն, գերազանցում է 80%³-ը:



Գծապատկեր 1. Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում (0-5 տարեկան բնակչությունից) ըստ քաղաքային ու գյուղական համայնքների, 2000-2015թթ.⁴

Ցածր ընդգրկվածության հիմքում ընկած են մի շարք պատճառներ.

1996թ. տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի ընդունման արդյունքում նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար պատասխանատու դարձավ համայնքը, և այդ ժամանակից ի վեր նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայությունները սկսեցին ֆինանսավորվել տեղական բյուջեից և ծնողների կողմից վճարվող գումարներից: Բյուջեի սղության պատճառով տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ չեն կարողանում ապահովել նախադպրոցական ուսումնական հաստատությունների լիարժեք գործունեությունը: Շատ գյուղական համայնքներում մանկապարտեզների շինությունները դեռևս գոյություն ունեն, սակայն դրանց վերաբացումը լուրջ ներդրումներ է պահանջում, ինչն անհասանելի է հատկապես փոքր գյուղական համայնքների համար: Մյուս կողմից, ինչպես հայտնի է, վերջին տարիների ընթացքում, փոքր քաղաքների և գյուղական համայնքների բնակչության թիվը զգալիորեն նվազել է՝ կապված արտագաղթի հետ, որը հանգեցրել է հատկապես

¹ Տվյալները վերցված են ԱՎԾ ՀՀ սոցիալական վիճակը 2000թ., 2010-2015 թթ. հրապարակումներից:

² womennet.am/նախադպրոցական-տարիքի-երեխաներ-80-տոկոս/

³ www.review.uz/index.php/statji-main.../632-obrazovanie-nachinaetsya-s-detskogo-sada


⁴ Չնայած նախադպրոցական կրթության տարիք է համարվում 2-6, ԱՎԾ տվյալները ներկայացված են 0-5 տարիքային խմբի համար:

նախադպրոցական տարիքի երեխաների թվի կտրուկ նվազմանը: Այն համայնքներում, որտեղ երեխաների թիվը փոքր է, վերոնշյալ ծախսերը ֆինանսապես անհասանելի են և չեն էլ կարող ապահովվել ծնողների կողմից վճարվող գումարների հաշվին: Մինևս ժամանակ կան խնդիրներ, որոնք հիմնականում անկայուն սոցիալ-տնտեսական իրավիճակի հետևանք են: Գործազրկությունն ու ընտանիքների աղքատությունը խոչընդոտ են հանդիսանում երեխաների նախադպրոցական կրթության մատչելիության ապահովման համար: Խնդիրը հատկապես բարդ է փոքր գյուղական համայնքներում, որտեղ և՛ համայնքային նվազ բյուջեն, և՛ նախադպրոցական տարիքի երեխաների թիվը չի կարող ապահովել մանկապարտեզների լիարժեք գործունեությունը:

Նշենք, որ մանկապարտեզ չհաճախելու հանգամանքը ունի ուղղակի բացասական հետևանքներ ոչ միայն աշխատող մայրերի լրացուցիչ ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, նրանց համար աշխատանքն ու ընտանիքը համատեղելու պայմաններ ստեղծելու առումով: Մանկապարտեզը խիստ կարևոր օղակ է հանրակրթության շեմին 5-6 տարեկան երեխաների համար հավասար մեկնարկային հնարավորություններ ապահովելու տեսանկյունից: Թեպետ «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագրով» նպատակ է դրվել մինչև 2015 թվականը ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5-6 տարեկանների) ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%-ի, սակայն այդ նպատակին հասնելու նախադրյալները՝ 2016-ի դրությամբ դեռևս բացակայում էին:

Բազմաթիվ երկրներում նախադպրոցական տարիքի երեխաների համար հավասար մեկնարկային հնարավորությունների ձեռքբերման հարցը դպրոցում որակյալ կրթություն ստանալու ուղղությամբ կրում է առաջնահերթ բնույթ: Օրինակ, Ֆինլանդիայում, Բելգիայում, Շվեյցարիայում, Կանադայում, Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ երկրներում երեխաների նախապատրաստումը դպրոցին պարտադիր է և անվճար կամ կախված է ընտանիքների եկամուտների մակարդակից՝ պետության կողմից մասամբ փոխհատուցվում է (Գերմանիա, Նիդեռլանդներ) կամ սուբսիդավորվում (Ճապոնիա):

Հայաստանում հանրակրթության մեջ ընդգրկվածության էական խնդիր չկա: Համեմատական առումով համախառն ընդգրկվածությունը միջնակարգ կրթությունում բավականին բարձր է: Վերջին տարիներին այն միջինում կազմել է մոտ 90%¹: Սակայն համախառն ընդգրկվածության առումով, ըստ միջնակարգ կրթության աստիճանների, կան որոշ տարբերություններ (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Դպրոցներում աշակերտների ընդգրկվածության ցուցանիշը 2008-2015թթ.²

¹ Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր, էջ 5:

² Տվյալները վերցված են ԱՎԾ Հայաստանի սոցիալական վիճակը 2008-2015 թթ. հրապարակումներից:

Չնայած Հայաստանում բավականին բարձր է ընդգրկվածությունը տարրական դպրոցներում (1-4 դասարաններ), այնուամենայնիվ 2015 թվականի արդյունքներով այն կազմել է 91,6%: Այլ կերպ ասած՝ Հայաստանում դպրոց հաճախելու տարիքի երեխաներից 8,4%-ը ներկայումս ուսում չի ստանում: Համեմատության համար նշենք, որ 2011 թվականին դպրոցահասակ երեխաների 99%-ը հաճախել է տարրական դասարաններ: Բայց հաջորդած տարիներին դպրոց չհաճախող երեխաների թիվը գնալով աճել է (4,8% 2012 թ., 5,9% 2013թ., 6,9% 2014 թ.), և այժմ այն հասել է Հայաստանի համար աննախադեպ բարձր ցուցանիշի: Վերջին երկու տարում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաների դպրոց չհաճախելու պատճառները տարբեր են: Դրանց թվում են՝ հաշմանդամությունը, ծնողի անպատասխանատու վերաբերմունքը երեխայի կրթության հարցին կամ մշակութային առանձնահատկությունները, լեզվի հետ կապված խնդիրները, միգրացիան, ծայրահեղ աղքատությունը կամ անբարենպաստ ընտանեկան հանգամանքները: Որոշ երեխաներ ընդհատումներով են դպրոց հաճախում, ինչը հաճախ տեղի է ունենում ընտանեկան հանգամանքների կամ միգրացիայի պատճառով: Այսօր միգրացիայի հետևանքով Հայաստանի հատկապես սահմանամերձ համայնքներում դպրոցներ են փակվում, կամ արտագաղթի պատճառով առաջին դասարանցիներ չկան: Որոշ ընտանիքներում դպրոցահասակ երեխաները ստիպված են աշխատել՝ իրենց ընտանիքներին օգնելու նպատակով և դպրոց չեն հաճախում այդ պատճառով: Թեկուզ մեկ երեխա, որ դպրոց չի հաճախում արդեն իսկ խնդիր է մեր երկրի համար, որի բնակչությունը մինչ վերջերս գրեթե 100 տոկոսով գրագետ էր համարվում:

Ներկայացված գծապատկերի տվյալները վկայում են, որ հիմնական կրթական համակարգում (5-9 դասարաններ) բարձր է համախառն ընդգրկվածության աստիճանը: Ըստ վիճակագրության տվյալների՝ հանրապետությունում 2015 թ. համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում 2008թ. համեմատությամբ աճել է 2,8%-ով (93,5%-ից դառնալով 96,3%): Պետք է նշել, որ հիմնական դպրոցի համախառն ընդգրկվածության ցուցանիշը միատարր է տարածքային, գենդերային ու աղքատության խմբերի առումով, և այս իմաստով էական անհավասարություններ չկան: Պետությունը երաշխավորում է հիմնական դպրոցում համընդհանուր պարտադիր ուսուցումը: 2015 թ. Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) ազգային շրջանակում սահմանվել էր հիմնական դպրոցում 99% ընդգրկվածություն:

Հիմնական դպրոցն ավարտողների մի մասն իր կրթությունը գերադասում է շարունակել նախնական ու միջին մասնագիտական կրթական ծրագրերով: Մյուս կողմից, նկատվում է հիմնական կրթությունը ստանալուց հետո կրթահամակարգը թողնողների թվի ավելացման միտում՝ հիմնական դպրոցների շրջանավարտների մի մասն ուսումը դադարեցնում է հիմնական կրթության ավարտից հետո: Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿՀ) արդյունքների, ընդհանուր առմամբ, եթե 2012 թ. ընթացքում 15-17 տարեկան երեխաների 13,6% -ը որևէ ուսումնական հաստատություն չի հաճախել, ապա 2014թ.՝ 14,2%-ը: 2012թ. աշակերտների 80,2%-ը պատճառաբանել է, որ ավարտել է դպրոցը կամ կրթությունը, իսկ 2014 թ.՝ 89,5%¹: Անշուշտ, նրանց մի մասը, ըստ երևույթին, արտագաղթել է, սակայն այդ մասին տեղեկատվությունը բացակայում է: Միևնույն ժամանակ, ավագ դպրոցում կրթությունը չեն շարունակում հիմնականում բնակչության ամենաաղքատ խավերն ու գյուղական բնակչությունը: Կրթության վրա աղքատության ազդեցության մասին են վկայում ՀՀ ԱՎԾ տվյալները, որի համաձայն ամեն տարի 9-րդ դասարանները ավարտած ավելի քան 4000 աշակերտ չի շարունակում կրթությունը, որոնց 12%-ը պատճառաբանում է, որ կրթական ծառայությունները շատ թանկ են և չեն կարող շարունակել²: Եթե 2014թ.-ի ընթացքում 15-17 տարեկան

¹ ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015, Մաս 3, Հայաստան. ոչ նյութական աղքատություն, էջ 167; ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, 2013, Մաս 3, Հայաստան. ոչ նյութական աղքատություն, էջ 169:

² <http://www.aravot.am/2015/05/11/570330/>


երեխաների 1.5%-ի համար կրթական ծառայությունները շատ թանկ էին, և, դրանով պայմանավորված, նրանք թողել են ուսումը, ապա 2015 թ.՝ 3.7%-ի համար:¹

Ի տարբերություն հիմնական կրթության, առավել մտահոգիչ է ավագ դպրոցի պատկերը, որը կոչված է ապահովելու ինքնուրույն կյանքի համար շրջանավարտի պատրաստվածությունը և միաժամանակ հանդիսանալու միջանկյալ օղակ պարտադիր հիմնական և մասնագիտական կրթության միջև: Ավագ դպրոցում ընդգրկվածության և ուսումնական առաջընթացի ապահովման գործընթացը անկայուն և պակաս արդյունավետ է: Մինչև 2010 թ. գրանցվել է զգալի առաջընթաց, երբ միջնակարգ դպրոցի ավագ դասարաններում ընդգրկվածությունը կազմում էր 84,4%, սակայն իրավիճակը գնալով վատթարացավ և 2015 թ. այդ ցուցանիշը իջավ մինչև 57,9%, չնայած այն հանգամանքին, որ 2012 թ. համախառն ընդգրկվածությունը 2011 թ. համեմատությամբ աճել էր 1.7%-ով (72.4%-ից դառնալով 74.1%): Դուրս մնացածների նման թիվը մտահոգիչ է, քանի որ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում այս իրողությունը կարող է թուլացնել երկրի կրթական մակարդակը՝ դրանից բխող հետագա սոցիալական և տնտեսական հետևանքներով: Ավագ դպրոցում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը ցածր է, քանի որ հիմնական դպրոցն ավարտելուց հետո համապատասխան տարիքի բնակչության մի մասը շարունակել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Այսինքն, ավագ դպրոցում ընդգրկվածության ցածր մակարդակը դեռևս չի նշանակում, որ սովորողների զգալի մասը հիմնական դպրոցից հետո դուրս է մնում կրթությունից: Այլ խնդիր է, թե սոցիալական որ խմբերի երեխաներն են շարունակում կրթությունն ավագ դպրոցում և հավակնում կրթության ավելի բարձր մակարդակի: Ավագ դպրոցում ամենահարուստ խմբի համախառն ընդգրկվածությունը ամենաաղքատից 1.3 անգամ ավելի բարձր է²: Ըստ դիտարկումների, ավագ դպրոց գնում են միայն շատ թե քիչ կայուն սոցիալական վիճակ ունեցող երեխաները և քաղաքային համայնքներին մոտ ապրող երեխաները, որտեղ գործում են ՀՀ ավագ դպրոցների 95,5%-ը: Այսօր գյուղական համայնքներում լուրջ խնդիր է ավագ դպրոցների հասանելիությունը: Աշակերտների մի մասը ստիպված է աշխատել դպրոց հաճախելու փոխարեն: Աղքատ աշակերտներն առավել զրկված են, քանի որ նրանց ընտանիքներն ի վիճակի չեն վճարել մասնավոր պարապմունքների համար, հատկապես նրանք, ովքեր մտադիր են ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություններ, որտեղ կրթությունը բավականին թանկ է: Այս երևույթը հստակ արտացոլվում է մասնագիտական կրթական ծրագրերում, այդ թվում նաև բուհական կրթահամակարգում ընդգրկվածության ցուցանիշներում, որոնք էապես անհավասար են աղքատ և ոչ աղքատ խավերի համար: Այսպիսով, հիմնական դպրոցն ավարտելուց հետո հանրակրթական համակարգից դուրս եկածների մեծ մասն աղքատներն են:

Ինչ վերաբերում է նախնական մասնագիտական և միջին մասնագիտական համակարգերում ընդգրկվածության ցուցանիշներին (տե՛ս գծապատկերներ 3), ապա պետք է նշել, որ 2007-2015 թթ. ցուցանիշները հաստատուն կերպով աճել են համապատասխանաբար 4%-ից մինչև 7.2% և 8.2% մինչև 10.9%, ինչը պայմանավորված է համակարգում անվճար ուսուցման տեղերով համալրմամբ: Սովորողների թվաքանակի ավելացմանը կնպաստի նաև 2017 թ.-ից երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անցումը դեպի երաշխավորված անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանը: Չնայած ցուցանիշների աճին՝ դրանք դեռ ցածր են ոչ միայն ԿԱԵ և ԱՊՀ երկրների ցուցանիշների համեմատ, այլև բարձրագույն մասնագիտական կրթության ընդգրկվածության ցուցանիշներից:

¹ ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015, Մաս 3, Հայաստան. ոչ նյութական աղքատություն, էջ 168, ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, Մաս 3, Հայաստան. ոչ նյութական աղքատություն, էջ 169:

² Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011–2015 թվականների պետական ծրագիր, էջ 5:



Գծայատկեր 3. Ընդգրկվածություն մասնագիտական ուսուցման համակարգում¹

Եթե եվրոպական երկրներում ԲՈՒՀ-ի 1 շրջանավարտին ընկնում է 3 միջին մասնագիտական կրթությամբ ուսանող, ապա մեզ մոտ բարձրագույն և միջին մասնագիտական հարաբերությունը 2,5/1-ի է²: Եթե երկիրը չի հենվում այս ոլորտի շրջանավարտ մասնագետներով ձևավորված շերտի վրա, ապա այդ երկիրը բավականին թույլ է: Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի զարգացումը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական աճի, աղքատության և գործազրկության ծավալների կրճատման կարևոր գրավականներից են:

Այսօր Հայաստանի աշխատաշուկայում միջին մասնագիտական կրթություն ունեցողի և բարձրագույն կրթություն ունեցողի պահանջարկը գերակայում է ի հոգուտ միջին մասնագիտականի, մինչդեռ մեր կրթական շուկայում երկար տարիներ բարձրագույն կրթության ոլորտում առկա է ավելի մեծ պահանջարկ, քան միջին մասնագիտականի, ինչը նշանակում է, որ տասնյակ հազարավոր մասնագետներ, ովքեր ավարտում են պետական և ոչ պետական բուհերը այսօր պահանջված չեն աշխատաշուկայում: Ըստ 2013-2014թթ. Հայաստանի ազգային մրցունակության հինգերորդ զեկույցի՝ «Աճի հրամայականը և խոչընդոտները», Հայաստանում գործազուրկների մոտ 27%-ը ունեն բարձրագույն կրթություն³:

Հաշվի առնելով միջին մասնագիտական կրթության դերն ու նշանակությունը տնտեսության զարգացման գործընթացում՝ ներկայումս հանրապետությունում առկա են ներդրված սոցիալական գործընկերության լավ մեխանիզմներ՝ գործատուի և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ զարգացնելու միջին մասնագիտական կրթության ոլորտը: Մակայն գործատուների մասնակցության և սոցիալական գործընկերության մակարդակը ոլորտում դեռևս բավարար չէ, և դրա հետագա զարգացումը և ամրապնդումը ևս արդի խնդիրներից է: Կրթության այս օղակի այսօրվա առկա մարտահրավերներից են կրթության բովանդակության արդիականացումը ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցումը, կառավարման արդյունավետության բարձրացումը, նյութատեխնիկական բազայի ամրապնդումը ու նոր տեխնոլոգիաների ներմուծումը կրթական գործընթաց և այլն: Հայաստանում նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև շարունակական կրթության ոլորտի զարգացումները պետք է իրականացվեն Եվրոպայում այդ ոլորտների զարգացման միտումներին՝ Բոլոնիայի և Թուրինի գործընթացներին համապատասխան: Աշխատաշուկայի և կրթական համակարգի փոխադարձ կապի ապահովման համատեքստում, որպես բնակչության զբաղվածության, աշխատաշուկայի ար-

¹ Տվյալները վերցված են ԱՎԾ Հայաստանի սոցիալական վիճակը 2007թ., 2008թ., 2010թ., 2013-2015թթ. հրապարակումներից:


² <http://www.panorama.am/am/news/2010/04/14/armen-ashotyan/1123437>

³ [//www.hartak.am/arm/print.php?id=13088](http://www.hartak.am/arm/print.php?id=13088)

դյունավետ հավասարակշռության երկարաժամկետ ապահովման հեռանկարային միջոց, մեծ նշանակություն ունի նաև մասնագիտական կողմնորոշումը, սակայն Հայաստանում մասնագիտական կողմնորոշման գործուն և կայացած համակարգ երբևէ չի եղել:

Անդրադառնալով բարձրագույն կրթության համակարգին նշենք, որ թեև վերջին տասնամյակում բարձրագույն կրթության ընդգրկվածությունը Հայաստանում զգալիորեն աճել է՝ հասնելով մոտ 30%-ի, այն դեռևս ցածր է միջին եվրոպական ցուցանիշից: Արևմտյան Եվրոպայի երկրներում բարձրագույն կրթության մեջ ընդհանուր ընդգրկման ցուցանիշը կազմում է 45%-50%, իսկ Շվեդիայում և Նորվեգիայում՝ 65%¹:

Հայաստանում համախառն ընդգրկվածության ցուցանիշը բակալավրիատում 2007-2015 թթ. աճել է 8,5%-ով (44.4%-ից դառնալով 52,9 %) (տե՛ս գծապատկեր 4), մինչդեռ մագիստրոսի կրթական ծրագրերում նույն ժամանակահատվածում այդ ցուցանիշը աճել է ընդամենը 3,7% (3.4%-ից դառնալով 12,7 %):



Գծապատկեր 4. Ընդգրկվածությունը բարձրագույն մասնագիտական կրթության մեջ²

Հայաստանում մագիստրոսական կրթություն ստանալու ցանկությունը պարզապես փոքր է, քանի որ բարձրագույն կրթության համակարգն ուսանողների կողմից դիտվում է որպես դեռևս ամբողջությամբ չկայացած, իսկ կրթության բովանդակության տեսանկյունից մագիստրատուրա գնալու նպատակահարմարությունը ցածր (բովանդակային առումով մագիստրոսի կրթական ծրագրերի դասընթացները հաճախ կրկնում են բակալավրինը): Բացի այդ, մագիստրոսական կրթությունը չի կապում ուսանողին աշխատաշուկայի հետ: Բուհերը ուղղակի տրամադրում են կրթություն այն մասնագիտությունների գծով, որոնց համար առկա է ֆինանսավորում, հետևաբար չեն կարողանում ապահովել որակյալ շրջանավարտներ շուկայի համար: Նշենք, որ արտասահմանյան երկրների մեծ մասում մագիստրոսական կրթությունն ընդհատվածից է սկսում: Մարդն ավարտում է բակալավրիատը, գնում է աշխատանքի, տեսնում է ինչ կարիք կա իր առաջընթացի համար, հետո նոր ընտրում է մագիստրոսական կրթությունը: Հայաստանում անընդհատ է այդ գործընթացը, և մագիստրոսական կրթությունը բակալավրիական կրթության մեխանիկական շարունակությունն է: Չնայած բակալավրիատում ընդգրկվածության ոչ ցածր ցուցանիշի, այնուամենայնիվ, Հայաստանում չի ապահովվում բարձրագույն կրթության հավասար մատչելիություն: Այն էապես տարբեր է սոցիալական տարբեր խմբերի համար և հատկապես ցածր է աղքատ և ծայրահեղ աղքատ ընտանիքներից երիտասարդների համար: Այսպես, 2015 թ. բարձրագույն կրթության սոցիալական չափայնության վերլուծության համաձայն,


¹ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR10-14_1.pdf

² Տվյալները վերցված են ԱՎԾ Հայաստանի սոցիալական վիճակը 2007–2015 թթ. հրապարակումներից:

դպրոցն ավարտելուց հետո ոչ աղքատ ընտանիքներից ԲՈՒՀ ընդունվողների ցուցանիշը կազմել է 44%, այնինչ աղքատ ընտանիքներից դպրոցն ավարտելուց հետո ԲՈՒՀ է ընդունվել աշակերտների 25%-ը, ծայրահեղ աղքատ ընտանիքներից՝ 10%-ը միայն¹: Ըստ ՏՏԿՀ 2014թ. արդյունքների, բարձրագույն կրթական հաստատություններում համախառն ընդգրկվածությունն ամենաաղքատ քվինտիլում կազմել է 35%, մինչդեռ ամենաբարեկեցիկ V քվինտիլում՝ 60%²: Ներկայումս մայրաքաղաքի և մարզերի դպրոցների միջև որակական մեծ տարբերությունը և մասնագետների պակասը հաճախ խոչընդոտ են դառնում մարզաբնակ երիտասարդների համար ԲՈՒՀ-ում սովորելու համար: Սոցիալական բևեռացման պատճառներից մեկն էլ այն է, որ ուսանողների վարձավճարները, որոնք ձևավորում են բարձրագույն կրթության ֆինանսավորման 80%-ից ավելին, ուսումնառության ընթացքում լրացուցիչ ֆինանսական դժվարություններ են ստեղծում ուսանողների և նրանց ընտանիքների համար, որոնք իրենց հերթին խնդիրներ են առաջացնում բարձրագույն կրթության մատչելիության և հավասարության տեսանկյունից:

Կրթության ոլորտում բևեռացվածությունն ու որակյալ կրթության անհասանելիությունը վտանգավոր է, քանի որ այն աղքատացման տանող և ապագան ռիսկային դարձնող ուղի է: Գտնում ենք, որ բացի աղքատության կրճատումից անհրաժեշտ է մշակել և իրականացնել միջոցառումներ՝ ուղղված կրթական բոլոր մակարդակներում բոլորի ընդգրկվածության խրախուսմանն ու խթանմանը: Մասնակի լուծում կարող է դառնալ, օրինակ, պետական սուբսիդավորումը, խոցելի խմբերից ուսանողներին կրթաթոշակների, ուսանողական վարկերի և դրամաշնորհների հատկացման տեսքով և այլն:

Կրթության մատչելիության ու որակի բարձրացման նպատակով առանցքային է պետական ծախսերի կտրուկ ավելացումը: Թեև վերջին տարիներին կրթությանն ուղղվող պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են որոշակի դրական տեղաշարժեր (տե՛ս գծապատկեր 5), այնուամենայնիվ Հայաստանում ՀՆԱ-ի նկատմամբ կրթական ծախսերի մասնաբաժնի ցուցանիշը Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ պետությունների համեմատ դեռևս մնում է բավական ցածր: Կրթության բոլոր մակարդակների գծով ծախսերը կազմում են ՀՆԱ-ի մոտավորապես 3.0 տոկոսը՝ ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշի մոտ կեսը³:



Գծապատկեր 5. Կրթության գծով տարեկան բյուջետային ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ⁴


¹ www.aravot.am/2015/05/11/570330/

² ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015, Մաս 3, Հայաստան. ոչ նյութական աղքատություն, էջ 169.

³ ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարություն, էջ 5:

⁴ Գծապատկերը կազմվել է ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիման վրա:

ՀՀ նախաճգնաժամային զարգացման ծրագրերով նախատեսվում էր կրթությանը հատկացվող պետական ծախսերի աճ: Ակնկալվում էր, որ կրթության ոլորտին պետական հատկացումների մասնաբաժինը կկայունանա ՀՆԱ-ի աճի պայմաններում՝ մինչև 2015թ. հասնելով 4.5% հենանիշին: Սակայն, տնտեսական անկումը թելադրեց պետական ծախսերի կրճատում կրթության ոլորտում, ինչն իր հերթին խոչընդոտեց բարեփոխումների պատշաճ իրագործումը և թիրախների կատարումը: Պետական ծախսերի ցածր մակարդակը մասամբ փոխհատուցվում է կրթության ոլորտում մասնավոր ծախսերի համեմատաբար բարձր մակարդակով (ՀՆԱ շուրջ 1.9%), ինչը նպաստում է կրթության ընդհանուր ծախսերի աճին¹: Կրթության ոլորտին ուղղված պետական հատկացումների գերակշիռ մասը՝ 82–83%-ը (տե՛ս գծապատկեր 6) ուղղվում է հանրակրթությանը՝ միջնակարգ կրթության համակարգին, քանի որ հանրակրթությունը կրթության ոլորտում ծրագրային գերակայություն է: Մինևույն ժամանակ տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների պայմաններում հատուկ կարևորություն են ստանում մասնագիտական և վերապատրաստման ծրագրերի որակի բարձրացումը և համապատասխանեցումը սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին: Մասնագիտական կրթական ծրագրերը կլանում են ոլորտի պետական ընդհանուր ծախսերի 17–18%-ը: Մասնագիտական ծրագրերում նախատեսված պետական ծախսերի մոտ 71.6%-ն ուղղված է բարձրագույն կրթությանը, իսկ 28.4%-ը՝ միջին մասնագիտականին²:



Գծապատկեր 6. Կրթության բնագավառում պետական ծախսերը 2002-2015թթ. ըստ կրթական մակարդակների (% , բնագավառի ընդհանուր ծախսերի նկատմամբ)³

Հարկ է նշել, որ միջին մասնագիտական կրթության համակարգում տարեցտարի պետական ֆինանսավորման ավելացման միտում կա, որը պայմանավորված է ոլորտում ներկայումս ընթացող բարեփոխումներով՝ ուղղված աղքատության կրճատմանը: Չնայած մասնագիտական ծրագրերում գերակշռում են բարձրագույն կրթության վրա կատարված պետական ծախսերը, այնուամենայնիվ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ներկայիս խնդիրներից մեկը դրա համեմատական կախվածությունն է այն պետական ու մասնավոր ռեսուրսներից, որոնք ֆինանսավորում են այդ համակարգը և ԲՈՒՀ-երի ընթացիկ գործունեությունը: Բարձրագույն կրթության ոլորտի ընդհանուր ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 0.9 %, այն դեպքում, երբ ՏՀԶԿ երկրներում՝ 1.5%⁴: Բարձրագույն կրթությանն ուղղվող պետական միջոցները չեն հասնում ՀՆԱ-ի 0.3%-ին⁵, մինչդեռ երկրների ճնշող մեծամասնության համար պետական միջոցները մնում են բարձրագույն կրթության ֆինանսավորման հիմնական աղբյուրը: Ներկայումս ոլորտի

¹ Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011–2015 թվականների պետական ծրագիր, էջ 23:
² ՀՀ կրթության զարգացման 2011–2015 թթ. պետական ծրագիր, էջ 24:
³ Գծապատկերը կազմվել է ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիման վրա:
⁴ ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարություն, էջ 5:
⁵ Նույն տեղում:

Ֆինանսավորման հիմնական աղբյուրը ուսանողներից գանձվող վարձավճարներն են, որոնք կազմելով դասավանդման բոլոր եկամուտների 80%-ից ավելին, բավականին բարձր են՝ համեմատած շատ այլ երկրների հետ: Միջազգային ուսումնասիրությունները փաստում են, որ այն բուհերը, որոնց բյուջեի գերակշիռ մասը (60-70%-ից ավելին) գոյանում են վարձավճարներից, զարգացման հեռանկար չունեն: Սա լուրջ խնդիր է հայաստանյան բուհերի համար:

Որպեսզի պետությունը հնարավորություն ունենա բարձրացնել կրթության որակը և մատչելիությունը բոլոր մակարդակներում անհրաժեշտ է ապահովել պետական բյուջեից կրթությանը հատկացվող միջոցների շարունակական աճ և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմներ:

Ինչպես տեսնում ենք, կրթության պետական ֆինանսավորման նման իրավիճակը և ֆինանսավորման բեռի տեղափոխումը բնակչության վրա աստիճանաբար խորացնում է մարդկային աղքատության հիմնախնդիրը: Ներկայումս տնային տնտեսությունների ոչ համաչափ ծախսերը կրթության վրա վտանգում են կրթության համատարած հասանելիությունը: Ի լրումն հավասարության խախտմանը կրթության հասանելիության ոլորտում, ի հայտ է գալիս նաև անհավասարություն կրթության որակի առումով, ինչով խախտվում է երեխայի որակյալ կրթություն ստանալու իրավունքը: Դրա վառ ապացույցն է այսօր գյուղական համայնքներում բազմակարգ դպրոցների ստեղծումը, ինչը հետևանք է աշակերտների թվի նվազման՝ պայմանավորված արտագաղթով և ծնելիության մակարդակի կրճատմամբ:

Քանի որ տարատեսակ են կրթական ոլորտի և ենթաոլորտների մարտահրավերները, ապա միայն ոլորտային քաղաքականություններն իրականացնելու միջոցով հնարավոր կլինի կրթության համակարգում ապահովել ոչ միայն ընդգրկվածության բարձր մակարդակ, այլև սահուն անցում կատարել մի կրթական որակավորումից մյուսին: Կրթական համակարգի բարեփոխումները և համակարգում իրականացվող քաղաքականության հետ կապված խնդիրները կարևոր են Հայաստանի համար, քանի որ մարդկային կապիտալի ձևավորումն ու պահպանումը կենսամակարդակի բարձրացումն ու աղքատության կրճատումն ապահովող կարևոր գործոն է:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵՋ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԷԲԱ ԱՐԿԱԴԻԻ ԲԱԲԱՅԱՆ, աշխ.գ.թ., պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

ԻՐԻՆԱ ԱՇՈՏԻ ՏԱՐԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Կրթության բնագավառի գերխնդիրն է որակյալ կրթության ապահովումը, դրա մատչելիության ընդլայնումը բնակչության համար: Այս կամ այն սոցիալական խմբի համար կրթական ծառայությունների մատչելիության մասին կարելի է դատել կրթության մեջ ընդգրկվածության ցուցանիշներով, որոնք համարվում են կրթության համակարգի որակը բնութագրող հիմնական բաղադրիչներից մեկը: Քանի որ հանրապետության կրթության տարբեր համակարգերում առկա են բնակչության ընդգրկվածության ցուցանիշների վերաբերյալ խնդիրներ, հարկ ենք համարում անդրադառնալ դրանց ուսումնասիրությանը, որոնք կարող են կիրառվել կրթության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:

Բանալի բառեր. *կրթություն, որակ, համախառն ընդգրկվածություն, նախադպրոցական կրթություն, տարրական, հիմնական, ավագ դպրոցներ, մասնագիտական համակարգ, բարձրագույն կրթություն, պետական ծախսեր:*

К ВОПРОСУ ПОКАЗАТЕЛЕЙ ОХВАТА РАЗЛИЧНЫХ УРОВНЕЙ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ В РА

ЭБА АРКАДЬЕВНА БАБАЯН, к.географ.н., профессор

ведущий научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

ИРИНА АШОТОВНА ТАРАНЯН

научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

В сфере образования РА главным приоритетом является повышение качества образования и расширение его доступности для населения. О доступности образования для той или иной социальной группы можно судить по показателям валового охвата системой образования, которые являются одним из основных компонентов, характеризующих качество образования. Поскольку сегодня на разных уровнях системы образования имеются проблемы с охватом населения образованием, считаем необходимым обратиться к их исследованию, которые могут быть использованы при разработке стратегий, решении тактических проблем, выявлении тенденций развития сферы и других целей.

Ключевые слова: *качество, валовый охват, дошкольное, начальное, основное, образование, средняя школа, профессиональная система, высшее образование, государственные расходы.*

ON THE ISSUE OF INDICATORS OF COVERAGE OF VARIOUS LEVELS OF THE EDUCATIONAL SYSTEM IN THE REPUBLIC OF ARMENIA

EBA ARKADI BABAYAN, Candidate of Sciences (Geography), Professor

Leading Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

IRINA ASHOT TARANYAN

Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

In the sphere of education of the Republic of Armenia, the main priority is to improve the quality of education and expand its accessibility to the population. The accessibility of education for a particular social group can be judged from the indicators of gross enrollment in the education system, which are one of the main components characterizing the quality of education. Having regarded that at different levels of the education system there are issues regarding the coverage of the population by education, we consider it necessary to conduct a research, which can be used in developing strategies, solving tactical problems, identifying trends in the development of the sphere and other purposes.

Keywords: *Quality, gross coverage, preschool, primary, basic, education, secondary school, professional system, higher education, public expenditure*

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՄՆԻՑ ԱՌԱՎԵԼ ՄԵԾ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային միգրանտներին պաշտպանելու և ծագման ու նպատակակետ երկրների, ինչպես նաև հենց միգրանտների համար աշխատանքային արտագաղթի օգուտները օպտիմալ դարձնելու համար անհրաժեշտ է ունենալ աշխատանքային արտագաղթի հստակ քաղաքականություն: Աշխատանքային միջազգային միգրացիան վերազգային երևույթ է, հետևաբար, դրա արդյունավետ կարգավորման համար պետք է ցուցաբերել երկկողմ, տարածաշրջանային և միջազգային մոտեցումներ:

Բացի աշխատանքային միգրացիայի համաշխարհային բնույթից և աճի միտումից՝ կան նաև գործոններ, որոնք բնորոշ են Հայաստանի աշխատանքային արտագաղթի միտումներին¹: Հայերը հիմնականում գաղթում են սոցիալ-տնտեսական պատճառներով, իսկ աշխատանքային արտագաղթը պատշաճ կերպով չի կառավարվում, ինչի պատճառով այն դրական հետևանքները, որ արտագաղթը կարող է ունենալ, ակներև չեն: Որպեսզի առավել լավ պատկերացնենք միգրացիոն հոսքի միտումները, ներկայացնենք Հայաստանի միգրացիոն հոսքերի դինամիկ պատկերը՝ հիմք ընդունելով ետխորհրդային Հայաստանի միջպետական միգրացիոն գործընթացների հետևյալ չորս քանակական չափանիշներով և որակական հայտանիշներով որոշակիորեն տարբերվող փուլերը².

1. Ապակայունացման փուլ (1988-1991թթ.),
2. Զանգվածային արտահոսքի փուլ (1992-1994թթ.),
3. Արտահոսքի ծավալների նվազման և կայունացման փուլ (1995-2001թթ.),
4. Էվոլյուցիոն զարգացումներին վերադարձի փուլ (2002-2007թթ.),
5. Արտահոսքի ծավալների աճի փուլ (2008-2016թթ.):

Ապակայունացման փուլում վճռորոշ հանդիսացան հասարակական-քաղաքական բնույթի գործոնները, ինչպես նաև սպիտակի երկրաշարժը: Արտաքին միգրացիոն իրավիճակի ապակայունացումը սկսվեց փախստականների ներհոսքով: 1988-92թթ. երկիրն ընդունեց շուրջ 420 հազար փախստականների, ինչը հավասարազոր էր այդ տարիների բնակչության մոտ 12%-ին: Փախստականների մեծ մասը՝ 360 հազարը, Ադրբեջանից էր, մյուսները՝ փլուզվող կայսրության ազգամիջյան բախումների այլ գոտիներից: Որոշ ուշացումով՝ 1990-1992թթ., տեղի ունեցավ շուրջ 160 հազար հայաստանաբնակ ադրբեջանցիների արտահոսքը³:

Զանգվածային արտահոսքի փուլը պայմանավորված էր անմիջական ազդեցություն ունեցող այնպիսի գործոններով, ինչպիսիք են զանգվածային գործազրկությունը, տնտեսական անկումը և բնակչության համատարած աղքատացումը: Այս փուլի թե՛ էմիգրանտների, թե՛ իմիգրանտների համակցությունները հիմնականում կազմված էին երկու հոսքերից. աշխատանք-

¹ Հայաստան վերադարձած անձանց վերաինտեգրման ուղղորդման ուղեցույց, Եր., ՄՄԿ, 2013թ., էջ 36:

² «ՀՀ միգրացիոն վիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով» Հայ-սլավոնական համալսարան, ծրագրի ղեկավար՝ տ.գ.թ. Ա.Վարդանյան, թեմայի գիտական ղեկավար Ռ. Եգանյան, Եր., 2013թ., էջ 6, հինգերորդ փուլը ներկայացված է հեղինակի կողմից:


³ Կարապետյան Ս., Արտաքին միգրացիան և նրա ուղղությունները Հայաստանում, Հայաստանի մարդկային զարգացման զեկույց, Եր., 2006 թ., էջ 11-13:

քային և, այսպես կոչված, «սոցիալ-կենցաղային»: Այս փուլում երեք տարիների ընթացքում երկրից մեկնեցին և չվերադարձան 610-620 հազար մարդ¹:

Արտահոսքի ծավալների նվազման և կայունացման փուլում երկրի իրավիճակի որոշ շտկմամբ և գերբարձր էմիգրացիոն ակտիվությամբ պայմանավորված մեկնումների միջին տարեկան թիվը 3.5 անգամ զիջեց 1992-1994թթ. բարձրանիշին: «Սոցիալ-կենցաղային» հոսքին փոխարինելու եկավ ավելի փոքր, բայց, որպես կանոն, մշտական արտագաղթի բերող «ընտանիքի վերամիավորում» ենթահոսքը: Հարկ է նշել նաև, որ այդ տարիներին չվերադարձածների թիվը կազմում էր 250 հազար մարդ, ինչը մոտ 2.5 անգամ պակաս էր քան 1992-1994թթ.²:

Էվոլյուցիոն զարգացումներին վերադարձի փուլը իր մեջ ներառում է 2002-2007թթ.: Այս ժամանակահատվածում արտաքին միգրացիոն գործընթացներին մասնակցած անձանց ընդհանուր թիվը կազմել է մոտ 230 հազար մարդ: Աշխատանքային միգրանտների բացարձակ թիվը եղել է 162-189 հազ. միջակայքում³:

Հիմք ընդունելով Հայ-սլավոնական համալսարանի հետազոտական խմբի կողմից իրականացված «ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով» վերնագրով վերլուծությունը՝ նշենք, որ 2008-2012թթ. արտաքին արտագաղթի բացասական մնացորդի ամբողջական մեծության փորձագիտական գնահատականը կազմել է 225 հազ. մարդ⁴:



* Այս փուլը հաշվարկված է հետևյալ կերպ. 2008-2012թթ. համար հիմք է ծառայել Հայ-սլավոնական համալսարանի կողմից կատարված հետազոտությունը՝ ՀՀ միգրացիոն վիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով», էջ 129 և 2013-2016թթ. ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ահմանահատման տվյալները (225 000 + 29 400=254 000 մարդ)

Գծապատկեր 1. ՀՀ միգրացիոն պատկերը 1988-2016թթ.⁵

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանյան առավել ծավալուն միգրացիոն հոսքի՝ մեկնողների, մուտքի հիմնական երկիրը, ինչպես ետխորհրդային ողջ ժամանակում, շարունակում է մնալ ՌԴ-ը: Այն հանդիսացել է 2008-2013թթ. ժամանակահատվածում 89.4%-ի նշանակետ երկիրը, ինչը զգալիորեն գերազանցում է 2002-2007թթ. նույն մեծությանը՝ 76,4%⁶: Մեկնումների առումով

¹ «ՀՀ միգրացիոն վիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով», Հայ-սլավոնական համալսարան, ծրագրի ղեկավար՝ տ.գ.թ. Ա. Վարդանյան, թեմայի գիտական ղեկավար Ռ. Եգանյան, Եր., 2013թ., էջ 7:

² Նույն տեղում, էջ 8:



³ 2002-2008 թթ. Հայաստան վերադարձող միգրանտների հետազոտություն, -Եր., «Ասողիկ» հրատ. 2008թ., էջ 10:

⁴ «ՀՀ միգրացիոն վիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով», էջ 129:

⁵ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով շարադրանքի մեջ նշված հղումները, ՀՀ ՏԿՆ ՄՊԾ և ԱՎԾ-ի տվյալները, <http://www.armstat.am/am/?nid=80&id=1554>, <http://www.armstat.am/am/?nid=80&id=1659>, <http://www.armstat.am/am/?nid=82&id=1768>:

⁶ Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց: ՀՀ ԱՎԾ, UNFPA, Երևան, 2007., էջ 64:

ՌԴ նշանակալիությունը հատկապես ցայտուն է դարձնում այն փաստը, որ այս առումով երկրորդ հորիզոնականը զբաղեցնող երկիր՝ Ֆրանսիա, ուղևորվել են մեկնածների ընդհանուր թվի ընդամենը 1.5%-ը: Կարևոր է նշել, որ 2002-2007թթ. համեմատ մեկնածների թվում ՌԴ-ից գատ, մնացած բոլոր ուղղությունների մասնաբաժինները բավականին կտրուկ կերպով նվազել են: Այսպես, ԱՊՀ այլ երկրներ մեկնածների բաժինը 3.4%-ից, իջել է մինչև 0.9%-ի, Եվրոպական բոլոր երկրներ մեկնածներինը՝ 9.8%-ից 4.4%-ի, ԱՄՆ մեկնածներինը՝ 4.8%-ից 1.2%-ի¹:



Գծապատկեր 2. Մեկնելու ցանկություն ունեցող միգրանտների բաշխվածությունը՝ ըստ մեկնման երկրի²

Գծապատկեր 3. Աշխատանքային նպատակով ավելի նախապատվություն ունեցող երկրները³

Գծապատկեր 2-ից, 3-ից ու վերը ներկայացված շարադրանքից երևում է, որ 2002թ.-ից սկսած ՌԴ միգրացիոն հոսքերը ավելանում են, մասնավորապես աշխատանքային, ինչը բացատրվում է այդ երկրում օրինական և անօրինական զբաղվածության լայն հնարավորություններով, գործարարությամբ զբաղվելու և աշխատելու իրավունք ստանալու դյուրինությամբ, ծառայությունների ոլորտում աշխատանք գտնելու հնարավորություններով, ինչպես նաև մշակութային և լեզվական նախապատվություններով:

Ներկայումս Հայաստանը չունի արտագնա աշխատանքի շուկային առնչվող ռազմավարական ծրագրեր, և պետությունն ինքն ակտիվ միջոցներ չի ձեռնարկում զբաղվածությանն առնչվող միջպետական համաձայնագրեր կնքելու կամ ընդհանրապես իր քաղաքացիների համար աշխատանքային արտագաղթի նոր, օրինական ուղիներ բացահայտելու ուղղությամբ: Ուստի, երկրի անվտանգության սպառնալիքից ելնելով՝ անհրաժեշտ է մշակել և իրականացնել ռազմավարական ծրագրեր և քաղաքականություն՝ աշխատանքային արտագաղթի առկա հոսքերը կազմակերպելու և կառավարելու համար: Արտագաղթի համատեքստում աշխատանքի շուկային առնչվող քաղաքականության ընդհանուր նպատակը աշխատանքային միգրանտների համար օրինական ճանապարհներ ստեղծելն է, որպեսզի.

- ՀՀ-ում նվազի գործազրկության մակարդակը,
- խթանվի աշխատանքային միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ապահովվի արտագաղթը դեպի այնպիսի երկրներ, որտեղ միգրանտների շահերը կլինեն պաշտպանված, և նրանք կկարողանան ակնկալել պատշաճ եկամուտ,

¹ Նույն տեղում էջ 64

² Գծապատկերը կազմվել հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով Զ. Թադևյան «Արտագնա աշխատանքային միգրացիա, գնահատականներ և մտորումներ», «Ամբերդ» մատենաշարի տվյալները:

³ Գծապատկերը կազմվել հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով «Հայաստանի բնակչության թվի անկումը»/Ճգնաժամի անկունքները և դրանց հաղթահարման ուղիները, (Հայ-սլավոնական համալսարանի հետազոտական խմբի տվյալները), Եր., 2013թ.:

- խթանվի նոր հմտությունների ձեռքբերում ու փորձի փոխանակում և այլն:

Պետական քաղաքականության նպատակայնությունը բարձրացնելու համար մեր կողմից մշակվել է մեթոդաբանություն, որի հիման վրա կարելի է դասակարգել և ներկայացնել աշխատանքային արտագաղթի տեսանկյունից առավել նպատակահարմար երկրները: Մեթոդաբանության մշակումը նպատակ ունի.

1. բարձրացնել ՀՀ-ից արտաքին աշխատանքային միգրացիոն հոսքերի հետ կապված խնդիրների պետական կարգավորման գործընթացների արդյունավետությունը,
2. բարձրացնել արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանության համակարգը և կանխել նրանց իրավունքների խախտման հնարավոր դեպքերը,
3. նպաստել արտերկրում արտագնա աշխատանքի մեկնողների աշխատանքային պայմանների բարելավմանը:

Նպատակահարմարության տեսանկյունից պետությունների գնահատման արդյունքում յուրաքանչյուր պետության շնորհվում է որոշակի հաշվարկային միավոր: Որքան բարձր է այդ միավորը, այնքան այդ պետությունը նախընտրելի է ՀՀ քաղաքացիների համար արտագնա աշխատանքի մեկնելու տեսանկյունից:

Պետությունների ցանկի ձևավորման համար նախատեսվող ցուցանիշները և դրանց ազդեցության տեսակարար կշիռը ներակացված է աղյուսակ 1-ում:

Նշված ցուցանիշներն ըստ իրենց ազդեցության գնահատման և վերագրվող միավորի (ՑՄ) դասակարգվում են.

- ուժեղ ազդեցության՝ 5 միավոր,
- միջին ազդեցության՝ 3 միավոր,
- թույլ ազդեցության՝ 1 միավոր:

Ցուցանիշների ազդեցության կարևորությունը հաշվի է առնվում ցուցանիշի ազդեցության տեսակարար կշռով (ՏԿ): Բոլոր ցուցանիշների ազդեցության տեսակարար կշիռների գումարը հավասար է 20-ի: Ցուցանիշների ազդեցության տեսակարար կշիռները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1-ում բերված ցուցանիշների գնահատումը կատարվում է փորձագետների կողմից: Նպատակակետ հանդիսացող երկրները դասակարգվում են ըստ ցուցանիշների, որտեղ նշվում է, թե յուրաքանչյուր երկրի համար ցուցանիշը ինչ բնույթի ազդեցություն ունի:

Աղյուսակ 1-ում բերված «Նպատակակետ երկրի ընտրության այլ ընդհանրական ցուցանիշներ» ցուցանիշի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ պայմանները.

1. նպատակակետ երկրում թափուր աշխատատեղերի և ՀՀ-ում գործազուրկների մասնագիտությունների համընկնումը,
2. նպատակակետ երկիր այլ երկրներից աշխատուժի ներհոսքի աստիճանը,
3. նպատակակետ երկիր այլ երկրներից ժամանած աշխատողների աշխատանքի պայմանները,
4. նպատակակետ երկրում՝ ըստ մասնագիտական որակավորման աշխատուժի պահանջարկը և այլն:

ՀՀ քաղաքացիների արտագնա աշխատանքի մեկնելու նպատակակետ երկրների որոշման համար նախ պետք է որոշել դրանց նպատակահարմարության միավորը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$P = \sum [ՑՄ(i) \times ՏԿ(i)]$$

որտեղ՝

P-ն նպատակահարմարության միավորն է,

ՑՄ(i) – i-րդ ցուցանիշի գնահատման միավորն է,

ՏԿ(i) -ին՝ i –րդ ցուցանիշի տեսակարար կշիռն է (ըստ աղյուսակ 1-ի):

Եթե աղյուսակ 1-ում բերված ցուցանիշներից որևէ մեկը հնարավոր չէ գնահատել, կապված վիճակագրական տեղեկատվության բացակայության կամ անորոշության հետ, ապա երկրի նպատակահարմարության միավորի հաշվարկման համար այդ ցուցանիշի տեսակարար կշիռը համամասնորեն բաշխվում է մյուս ցուցանիշների մեջ:

Ցուցանիշների ազդեցության տեսակարար կշիռը և գնահատման կարգը

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Ազդեցության բնույթը			Տեսակարար կշիռ
		Ուժեղ	Միջին	Թույլ	
1.	ՀՀ-ից նպատակակետ երկիր աշխատանքային էմիգրացիոն հոսքերի ծավալները	Եթե վերջին երեք տարիներին տվյալ երկրի ուղղությամբ միգրացիայի տարբերության միջին արժեքը կազմել է երկրի միգրացիայի տարբերության միջին արժեքի 30%-ից ավելին	Եթե վերջին երեք տարիներին տվյալ երկրի ուղղությամբ միգրացիայի տարբերության միջին արժեքը կազմել է երկրի միգրացիայի տարբերության միջին արժեքի 10-20 %-ը	Եթե վերջին երեք տարիներին տվյալ երկրի ուղղությամբ միգրացիայի տարբերության միջին արժեքը կազմել է երկրի միգրացիայի տարբերության միջին արժեքի 10%-ից պակաս	1.8
2.	ՀՀ-ի հետ նպատակակետ երկրի մշակութային ընդհանրության մակարդակը	Մշակույթի ոլորտում փորձագետների կողմից կատարվող գնահատում, որը հենվում է մշակութային ծրագրերի փոխանակման, փոխադարձաբար մշակութային օրերի անցկացման, ՀՀ տարբեր մշակութային համույթների և անհատ կատարողների ելույթների արդյունավետության հիման վրա:			0.8
3.	Նպատակակետ երկրում հայկական սփյուռքի ձևավորվածության մակարդակը	Նպատակակետ երկրում վերջին երեք տարում.			1.3
		Մշտապես գործել է. - հայկական կրթական հաստատություն(ներ), - հայկական եկեղեցի, - հայկական մշակութային կենտրոններ, - հայկական ԶԼՄ-ներ:	-հայկական մշակութային կենտրոններ	Մշտապես գործել է. - հայկական կրթական հաստատություն(ներ) - հայկական եկեղեցի	
4.	Նպատակակետ երկրի հետ ՀՀ-ի դիվանագիտական հարաբերությունների և դիվանագիտական ենթակառուցվածքների զարգացվածության մակարդակը	ՀՀ-ն և նպատակակետ երկիրը վերջին երեք տարիներին ունեցել են.			1.8
		- փոխադարձ դիվանագիտական ներկայացուցչություններ, - մշտական պարբերական գործող ավիակապ:	- միակողմանի դիվանագիտական ներկայացուցչություններ, - մշտական պարբերական գործող ավիակապ:	- միակողմանի դիվանագիտական ներկայացուցչություններ, - ոչ պարբերական գործող ավիակապ:	
5.	Նպատակակետ երկրում պաշտոնապես հայտարարված գործազրկության մակարդակը	Վերջին երեք տարիներին նպատակակետ երկրում գործազրկության մակարդակը եղել է տարածաշրջանի հարևան երկրների գործազրկության միջին մակարդակի համեմատ`			2.3
		մինչև 10%-ով ավելի	10%-ից 30% ով ավելի	30%-ից ավելի	
6.	Նպատակակետ երկրում մարդու իրավունքների պաշտպանության կարգավորվածության մակարդակը	Վերջին երեք տարիներին նպատակակետ երկիրը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ըստ դասակարգման զբաղեցրել է հետևյալ տեղերը`			1.3
		1-20	21-40	41-ից բարձր	

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Ազդեցության բնույթը			Տեսակարար կշիռ
		Ուժեղ	Միջին	Թույլ	
7.	Նպատակակետ երկրում օտարերկրյա աշխատատեղի իրավունքների ու շահերի պաշտպանության ենթահամակարգի զարգացածության մակարդակը	Վերջին երեք տարիների արդյունքների վերլուծության հիման վրա փորձագետի կողմից կատարվում է գնահատում, ցուցանիշի ուժեղ, միջին և թույլ ազդեցությունները բացահայտելու համար: Գնահատման համար հիմք է ընդունվում տվյալ երկրում օտարերկրյա աշխատողների իրավունքների խախտման վերաբերյալ վիճակագրությունը:			1.3
8.	Նպատակակետ երկրի տնտեսական, տեխնոլոգիական և կրթական զարգացվածության աստիճանը	Վերջին երեք տարիների արդյունքների վերլուծության հիման վրա փորձագետի կողմից կատարվում է գնահատում, ցուցանիշի ուժեղ, միջին և թույլ ազդեցությունները բացահայտելու համար: Գնահատման համար հիմք է ընդունվում տվյալ երկրի գրաված դիրքը երկրների ըստ տնտեսական զարգացվածության մակարդակի դասակարգման ցուցակում, ինչպես նաև այդ երկրի կրթական հաստատությունների ռեյտինգը միջազգային դասակարգման ցանկում:			1.0
9.	Աշխատանքային էմիգրանտների կողմից աշխատած դրամական միջոցների հնարավոր չափը	Վերջին երեք տարիներին նպատակակետ երկրում միջին աշխատավարձի մակարդակը տարածաշրջանի հարևան երկրների միջին աշխատավարձի համեմատ կազմել է.			2.6
		30%-ից ավելի	(10-30)%	10%-ից պակաս	
10.	Նպատակակետ երկրում սոցիալական պաշտպանվածության համակարգի զարգացվածության աստիճանը	Վերջին երեք տարիների արդյունքների վերլուծության հիման վրա փորձագետի կողմից կատարվում է գնահատում, ցուցանիշի ուժեղ, միջին և թույլ ազդեցությունները բացահայտելու համար: Գնահատման համար հիմք է ընդունվում տվյալ երկրի սոցիալական պաշտպանության համակարգի իրավական դաշտի, շահառուների ներգրավվածության, շահառուների բավարարվածության ցուցանիշները դրանց վերաբերյալ վիճակագրական տվյալները:			1.3
11.	Նպատակակետ երկրի տնտեսական զարգացման հեռանկարները	Վերջին երեք տարիների արդյունքների վերլուծության հիման վրա փորձագետի կողմից կատարվում է գնահատում, ցուցանիշի ուժեղ, միջին և թույլ ազդեցությունները բացահայտելու համար: Գնահատման համար հիմք է ընդունվում տվյալ երկրի վերջին երեք տարիներին տնտեսական աճի, ՀՆԱ-ի աճի տեմպերը:			1.3
12.	Նպատակակետ երկրում ազատ տեղաշարժման, ինչպես նաև հարևան երկրների հետ տրանսպորտային հաղորդակցման հնարավորությունները	Վերջին երեք տարիների արդյունքների վերլուծության հիման վրա փորձագետի կողմից կատարվում է գնահատում, ցուցանիշի ուժեղ, միջին և թույլ ազդեցությունները բացահայտելու համար: Գնահատման համար հիմք է ընդունվում տվյալ երկրի տրանսպորտային համակարգի զարգացվածությունը՝ մասնավորապես ուղևորափոխադրումների տարեկան ծավալը, այդ թվում հարևան երկրների հետ ուղևորափոխանակման հնարավորությունները:			1.0
13.	Նպատակակետ երկրի ընտրության ընդհանրական այլ ցուցանիշներ	Վերջին երեք տարիների արդյունքների վերլուծության հիման վրա փորձագետի կողմից կատարվում է գնահատում, ցուցանիշի ուժեղ, միջին և թույլ ազդեցությունները բացահայտելու համար: Գնահատման համար հիմք են ընդունվում տվյալ նպատակակետ երկրին բնորոշ մի շարք լրացուցիչ պայմաններ:			2.2

Որևէ երկրի նպատակահարմարության միավորի հաշվարկման համար արդյունքները ներմուծվում են աղյուսակ 2-ում և կատարվում համապատասխան հաշվարկ (օրինակը բերված է ստորև):

Աղյուսակ 2

Նպատակահարմարության միավորի հաշվարկման օրինակ

h/h	Ցուցանիշի անվանումը	Ազդեցության գնահատականը	Տեսակարար կշիռը	Կշռված գնահատականը
1.	Վերջին երեք տարիներին ՀՀ-ից տվյալ երկիր աշխատանքային էմիգրացիոն հոսքերի ծավալները	5	1,8	9
2.	ՀՀ-ի հետ նպատակակետ երկրի (հասարակության) մշակութային ընդհանրության աստիճանը	3	0,8	2.4
3.	Հայկական սփյուռքի ձևավորվածության աստիճանը	5	1,3	6.5
4.	ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների և դիվանագիտական ենթակառուցվածքների զարգացածության աստիճանը	5	1,8	9
5.	Տվյալ երկրում պաշտոնապես հայտարարված առկա թափուր աշխատեղերի ծավալները ըստ որակավորումների	3	2,3	6.9
6.	Աշխատաշուկայի իրավական կարգավորվածության աստիճանը	3	1,3	3.9
7.	Իմիգրանտների, այդ թվում՝ օտարերկրյա աշխատուժի իրավունքների ու շահերի պաշտպանության ենթահամակարգի զարգացածության աստիճանը	1	1,3	1.3
8.	Իմիգրացիայի նպատակակետ հանդիսացող երկրի տնտեսական, տեխնոլոգիական և կրթական զարգացվածության աստիճանը	5	1,0	5
9.	Աշխատանքային էմիգրանտների վաստակի հնարավոր չափը	3	2,6	7.8
10.	Երկրում սոցիալական պաշտպանվածության համակարգի զարգացվածության աստիճանը	3	1,3	3.9
11.	Երկրի տնտեսական զարգացման հեռանկարները	3	1,3	3.9
12.	Ընդունող երկրում ազատ տեղաշարժման, ինչպես նաև հարևան երկրների հետ տրանսպորտային հաղորդակցման հնարավորությունները	5	1,0	5
13.	Նպատակակետ երկրի ընտրության ընդհանրական այլ ցուցանիշներ	3	2,2	6.6
Ընդամենը՝		71.2		

$$P = \sum [2\Phi U(i) \times S\psi(i)] = 5 \times 1,8 + 3 \times 0,8 + 5 \times 1,3 + 5 \times 1,8 + 3 \times 2,3 + 3 \times 1,3 + 1 \times 1,3 + 5 \times 1,0 + 3 \times 2,6 + 3 \times 1,3 + 3 \times 1,3 + 5 \times 1,0 + 3 \times 2,2 = 71,2$$

Բերված օրինակում P=71.2, տրամաբանական է՝ որքան ցուցանիշը մոտ լինի 100, այնքան երկիրը առավել նպատակահարմար կհամարվի արտագաղթողների համար:

Երկրների համար ձևավորվում է ըստ միավորների դասակարգման աղյուսակ (հարմարության տեսանկյունից երկրների ռեյտինգավորում): Այդ ցանկը ժամանակի ընթացքում կարող է փոփոխվել, կախված ցուցանիշների փոփոխությունից, ըստ որի որոշ երկրներ կարող են դառնալ առավել նպատակահարմար, իսկ մյուսները ընդհակառակը դադարեն նպատակահարմար լինելուց:

Ներկայացված մեթոդաբանությունը և ցուցանիշը կարող են հիմք հանդիսանալ ՀՀ էմիգրացիոն քաղաքականության մշակման համար, ինչպես նաև հնարավորություն կտան ՀՀ քաղաքացիներին ընտրել առավել նպատակահարմար երկիր աշխատանքային էմիգրացիան կազմակերպելու համար:

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԱՌԱՎԵԼ ՄԵԾ ՀԵՏԱԶԵՐԶՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐԿԱԴԻԻ ԴԱԼԼԱԶՅԱՆ, *տ.գ.թ.*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության

ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Հնդվածում ներկայացված է ՀՀ միգրացիոն իրավիճակը 1988-2016թթ. և առկա միտումները: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ այդ ժամանակահատվածում ՀՀ-ից մեկնել են 1.659400 մարդ, և այդ հոսքը շարունակական բնույթ է կրում, որն ունի ինչպես տնտեսական, սոցիալական, այնպես էլ երկրի անվտանգության սպառնալիք: Եվ, որպեսզի միգրանտները արտագաղթեն առավել նախընտրելի երկիր՝ հաշվի առնելով մի շարք ցուցանիշներ, մշակվել և ներկայացվել է աշխատանքային արտագաղթողների տեսանկյունից առավել մեծ հետաքրքրություններ ներկայացնող պետությունների գնահատման մեթոդաբանություն՝ համապատասխան մոդելի առաջադրմամբ:

Բանալի բառեր. *միգրացիոն հոսք, նպատակակետ երկիր, աշխատանքային արտագաղթ, նպատակակետ երկրների գնահատման կարգ, թափուր աշխատատեղ, նպատակահարմարության միավոր:*

МЕТОДОЛОГИЯ ОПРЕДЕЛЕНИЯ ГОСУДАРСТВ, ПРЕДСТАВЛЯЮЩИХ НАИБОЛЬШИЙ ИНТЕРЕС С ТОЧКИ ЗРЕНИЯ ТРУДОВЫХ МИГРАНТОВ РА

СВЕТЛАНА АРКАДЬЕВНА ДАЛЛАКЯН, *к.э.н.*

младший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

В статье представлена миграционная ситуация РА за период 1988-2016 гг. и существующие тенденции. По результатам исследования стало ясно, что за данный период из Армении уехало 1,659,400 человек и этот поток носит непрерывный характер, представляя собой угрозу как социально-экономического характера, так и для безопасности страны. С целью определения стран, наиболее предпочтительных для размещения мигрантов, с учетом ряда показателей разработана и представлена методология оценки государств, представляющих наибольший интерес с точки зрения трудовых мигрантов, с предложением соответствующей модели.

Ключевые слова: *миграционный поток, страны-реципиенты, трудовая миграция, порядок оценки стран назначения, свободные рабочие места, баллы целесообразности.*

THE METHODOLOGY OF DETERMINING THE STATES OF GREATEST INTEREST TO LABOUR MIGRANTS FROM THE REPUBLIC OF ARMENIA

SVETLANA ARKADI DALLAQYAN, *Ph.D. in Economics*

Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article provides the state of migration in Armenia for the period 1988-2016 and trends over the time. The research findings state that during the discussed period 1,659,400 people left Armenia and this outflow is of a continuous nature, being a threat both of a socioeconomic nature and to the security of the country. With the aim of identifying the most preferred countries by the migrants, a methodology of country preference assessment is elaborated and presented that is based on various indicators that are incorporated in the model proposed by the author.

Keywords: *Migration flow, recipient country, labor migration, methodology of host country assessment, availability of vacancies, rationale scores*

ՎԱՅԵ ԳՈՒՐԳԵՆԻ ԵՆԳԻՐԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ԲՆԱՊԱՐԿՈՒՄԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից բնապահպանական վերահսկողությունը շրջակա միջավայրի կառավարման համակարգի կարևոր մեխանիզմներից մեկն է, որի հիմնական նպատակն է ապահովել շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտներում իրականացվող տնտեսական ու գործունեության այլ տեսակներին օրենքով սահմանված էկոլոգիաիրավական նորմերի/պահանջների կատարումը: Բնապահպանական վերահսկողության միջազգային պրակտիկան ունի որոշակի ընդհանրություններ, հատկապես ԱԵԿԿԱ-ի երկրներում ստուգման օբյեկտների, մակարդակների, ձևերի և մեթոդների դասակարգման մասով¹: Ներկայիս բնապահպանական վերահսկողության քաղաքական վեկտորները ուղղված են բնօգտագործման թույլտվությունների և տեսչական գործունեության գնահատման ու կատարելագործման նոր մեխանիզմների, ցուցանիշների որոնմանը ու համակարգմանը՝ IT- տեխնոլոգիաների միջոցով:

Տվյալ համատեքստում հիմնավորված է գիտակիրառական հետաքրքրությունը էկոլոգիական հսկողության համակարգում բնապահպանական իրավունքի և իրավակիրառման նորմերի պահպանման համալիր ու բովանդակալից ինդիկատորների մշակման և ներդրման նկատմամբ: Գիտակցելով գործընթացի նշանակությունը գլոբալ համագործակցության շրջանակներում **INECE-էկոլոգիական համապատասխանության և իրավակիրառման միջազգային ցանցը OECD-ի** և մի շարք այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ 2003թ.-ից սկսեց էկոլոգիական հսկողության համակարգի գնահատման նախագծի իրականացումը: Գործընթացին մասնակցեցին աշխարհի ավելի քան 20 երկրներ, միջազգային և հասարակական կազմակերպություններ²: Արդյունքում «բեռնվածություն-վիճակ-արձագանքի» մոդելին համապատասխան առանձնացված են ինդիկատորների 3 տեսակներ՝

1. Շրջակա միջավայրի վրա բեռնվածության ինդիկատորներ (ներառյալ ուղղակի և անուղղակիները):
2. Շրջակա միջավայրի ինդիկատորներ:
3. Հասարակության կողմնորոշման կամ արձագանքի ինդիկատորներ:

Առավել հետաքրքիր է հասարակական արձագանքի ինդիկատորների կիրառման պրակտիկան, որը Հայաստանում անարդյունավետ է, իսկ հասարակության արձագանքը հիմնականում տարերային, քան ազդեցիկ բնույթի է: Այս հանգամանքը ինչ-որ չափ խոչընդոտում է հասարակական կարծիքի ինստիտուտի ձևավորմանը: Դրան նպաստում է նաև հասարակության կողմից էկոլոգիական իրավունքի և իրավակիրառման նորմերի տեղեկացվածության ցածր աստիճանը, որն էլ ի վերջո բերում է հասարակության՝ որպես «պասիվ դիտորդի» ամրապնդմանը: Պարզաբանման համար նշենք, որ **Բելգիայում**, օրինակ, իրավակիրառման պրակտիկան համարվում է արդյունավետ այն դեպքում, երբ էկոլոգիական հսկողության համակարգում առկա են՝

- բավականաչափ և բարձր որակյալ անձնակազմ,
- հստակ նպատակներ,
- օգտագործվող ինդիկատորներ,
- անհրաժեշտ իրավական գործիքներ,
- հարմար գործիքներ ստուգումների իրականացման համար,

¹ Яндыганов Я.Я Экономика природопользования М. -2005- с. 336-340.

² Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экономического правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), 176 с.

- կադրերի պատրաստման մշտապես գործող մեխանիզմներ¹:

Անհրաժեշտ է նշել, որ ինդիկատորների մշակման և ներդրման գործընթացին արդյունավետ մասնակցություն ունեցան՝ **Չինաստանը, Կանադան, Չեխիան, Գանան, Ղազախստանը, Մեքսիկան, Նիդեռլանդները, Ռուսաստանը, Թայլանդը և ԱՄՆ-ը**: Միաժամանակ վերոնշյալ երկրներում օգտագործվող ինդիկատորներն ունեն որոշակի նմանություն, իսկ ինդիկատորների ցանկը և երկրում կիրառվող հսկողության գործընթացի արդյունավետությունն անմիջականորեն կախված են էկոլոգիական քաղաքականության ու օրենսդրության կատարելիության աստիճանից: Առկա են նաև տարբերություններ, այսպես, օրինակ, **Չինաստանում** հաջողությամբ օգտագործվում է շրջակա միջավայրի որակը բնութագրող տրանսպորտային մայրուղիների աղմուկի միջին մակարդակը $dB (Cp)$, իսկ ահա **Մեքսիկայում PROFERA** – շրջակա միջավայրի պահպանության գործակալությունը ռազմավարական տեղեկատվության համակարգի օգնությամբ պետական կառավարման բոլոր մարմինները կարող են ստուգել երկրի հիմնական ռազմավարությունների իրականացման ընթացքը: Օգտագործվում է նաև բարձր ռիսկայնությամբ գրանցված արդյունաբերական ձեռնարկությունների ինդիկատորը (%-ներով): Իր հերթին՝ **Նիդեռլանդների** տեսչական պրակտիկայում առանձնացված են ռիսկի ինդիկատորների 4 դաս, որոնց գնահատման հիմքում ընկած են բնակչության առողջության, անվտանգության, կայունության և սոցիալական գործոնները (այն դեպքում, եթե տեսչությունը չի ապահովում օրենսդրության պահպանումը)²: Երկրում մշակված է և տեսչական պրակտիկայում կիրառվում է ռիսկերի որոշման և օրենսդրության պահպանման սանդղակ և ենթադրվում է, որ տեսչական ստուգումներում ռիսկի ու օրենսդրության պահպանման մատրիցների կիրառումը էապես բարձրացնում է գործունեության արդյունավետությունը և դրանով կանխում է ռիսկերի և վտանգների առաջացումը, նվազագույնի հասցնելով հասարակական առողջության վրա բացասական ազդեցությունները: Հայաստանի բնապահպանական վերահսկողության համակարգում նման գործիքների կիրառումը խիստ սահմանափակ է:

Ուշագրավ է հատկապես **Շոտլանդիայում** բնապահպանական օրենսդրության և իրավակիրառման նորմերի պահպանման ինդիկատորների մշակման ու կիրառման փորձը: Այդ երկրում շրջակա միջավայրի պահպանության գործակալությունը բնապահպանության և բնօգտագործման ոլորտների կարգավորող մարմինն է: Գործակալության հաստիքը կազմում է 1000 աշխատակից, որոնք ծառայություն են իրականացնում երկրի 21 բնակավայրերում, ընդ որում, բնապահպանական (այդ թվում տեսչական) գործունեության բյուջեն կազմում է 50 մլն ֆունտ ստերլինգ (մոտ 83 մլն ԱՄՆ դոլ): Գումարի կեսը տրամադրում է պետությունը, իսկ մյուս կեսը հավելում են կարգավորման սուբյեկտների վճարներից: Փորձի ուսումնասիրումը վկայում է տվյալ երկրում կիրառվող տեսչական հսկողության արդյունավետության մասին: Դա պատահական չէ, քանի որ այն հիմնված է օրենսդրության, բնապահպանական լիցենզիաների տրամադրման, իրավակիրառման, դատական հետապնդման, կամավոր համաձայնությունների և օպտիմալ պրակտիկայի խրախուսման մեխանիզմի վրա:

Հայաստանում, այդպիսի մեխանիզմի կիրառման անհրաժեշտությունը ակնհայտ է այն պարզ պատճառով, որ տնտեսական (հատկապես ձեռնարկատիրական) գործունեության նախագծերի բնապահպանական փորձաքննության օրենսդրությունը գրեթե անտեսել է հետևախազային վերլուծության, կամ այլ կերպ մոնիթորինգային փուլի անցկացումը: Իրավիճակը բարդանում է նրանով, որ մոնիթորինգային ստուգումներում «չեզոք» դիրքում է գտնվում նաև տեսչական ծառայությունը: Հետևաբար ոլորտում առկա «**տեսչական հսկողության անորոշություն**» երևույթն, իր էությանը, պահանջում է ստուգման նոր մեխանիզմի կիրառումը գիտական որոնումների և առաջատար միջազգային փորձի տեղայնացման միջոցով:

¹ Поль Бернер. Бельгия. Индикаторы соблюдения природоохранного законодательства и правоприменения./ Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экономического правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), с. 60-65.

² Анжелик А.А. ван дер Шрааф, Ян ван дер Плос. Индикаторы соблюдения природоохранного законодательства и правоприменения в Нидерландах./ Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экономического правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), с. 110-112.

Էկոլոգիական հսկողության ամերիկյան համակարգում մշակված են նույնիսկ ինդիկատորների որոշման չափորոշիչներ, իսկ դրանցից ընտրված առավել խոստումնալիցներն օգտագործվում են երկու նպատակով՝

- հասարակայնության, ԱՄՆ-ի կոնգրեսի և ադմինիստրատիվ բյուջետային վարչության առաջ հաշվետվության ներկայացման:
- ռազմավարությունների և ծրագրերի վերլուծության ու կատարելագործման համար¹:

Այսպիսով, էկոլոգիական հսկողության համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման ու միջազգային արդի գիտական բնապահպանական նախաձեռնությունները կողմնորոշված են էկոլոգիական իրավունքի և իրավակիրառման նորմերի պահպանման ինդիկատորների մշակման և ներդրման բարդ և գիտատար գործընթացին: Որպես կողմնորոշիչ ընտրված են երեք հիմնական չափորոշիչ՝

- կողմնորոշվածություն իրականացվող քաղաքականության վրա և օգտակարություն օգտագործողների համար,
- վերլուծական հուսալիություն,
- չափելիություն:

Էկոլոգիական հուսալիության տեսանկյունից բնապահպանական ինդիկատորները պետք է ունենան գիտատեխնիկական հիմնավորում, ինչպես նաև փոխկապակցված լինեն տնտեսական մոդելների, կանխատեսումների և տեղեկատվական համակարգերի հետ: Ուստի, այդ առումով էլ Հայաստանի տեսչական հսկողության համակարգի կատարելագործման անելիքները բավականին բազմազան են, հաշվի առնելով «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ նոր օրենքի (2005թ.) գործածության և ոլորտում իրավակիրառման մեխանիզմի վերանայման ու կատարելագործման հրատապությունը: Դա են պահանջում նաև ԱԵԿԿԱ-ի երկրների համար մշակված շրջակա միջավայրի պահպանության ոլորտի հսկողության պետական մարմինների բարեփոխումների դեկավար սկզբունքները:

Էկոլոգիական վերահսկողության համակարգի ռազմավարական գերակայություններում հատուկ նշանակություն ունի բնապահպանական գործունեության արդյունավետության ստուգման կամ հսկողության նոր մեխանիզմների որոնումը: Այս տեսանկյունից համոզիչ և ուշագրավ է հատկապես էկոլոգիական աուդիտի ժամանակակից մեթոդաբանության գրագետ կիրառման հնարավորությունը բնապահպանական վերահսկողության համակարգում: Նման բացը առավել նկատելի է զարգացող երկրների տեսչական պրակտիկայում, որտեղ դեռևս իշխում է ավանդական ստուգման մեթոդների կիրառման մեխանիզմը, ցուցանիշների ընտրությունը և գնահատումը ավելի մոտ է «վավերագրական գործավարությանը», քան ազդեցիկ տեսչական հսկողությանը, այն էլ հետադարձ ազդեցության բացակայության պայմաններում: Այս առումով էկոլոգիական աուդիտի՝ որպես բնապահպանական հսկողության նոր մոտեցումների անելիքները և մեթոդոլոգիական բացահայտումները բավականին շատ են:

Հեռանկարային է նաև էկոլոգիական փորձաքննության մեթոդաբանական առավել ազդեցիկ մոտեցումների օգտագործումը նախագծային լուծումների լավագույն տարբերակների ընտրության գործընթացներում: Հայտնի է, որ էկոլոգիական փորձաքննությունն իր գործառնական նշանակությամբ հսկողության ուժեղ տեսակ է ՇՄԱԳ գործընթացի նկատմամբ: Միաժամանակ էկոլոգիական փորձաքննությունը հսկելով ՇՄԱԳ-ի գիտագործնական որակը նպաստում է տնտեսական և գործունեության այլ տեսակների էկոլոգացմանը, իսկ ազդեցությունների հետ կապված վնասների, ռիսկի և վտանգների պարտադիր գնահատմանը: Այդ հիմնախնդրի լուծումն առավել կարևորվում է ինովացիոն (նորամուծական) գործունեության աշխուժացման տեսանկյունից, ինչն առ այսօր չի ստացել անհրաժեշտ մակարդակի գիտական հիմնավորում:

ՀՀ-ում բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման նախադրյալներ կարելի է համարել գլոբալ բնապահպանական և ազգային արդի սոցիալ-տնտեսական ու էկոլոգիական հիմնախնդիրների գիտակցումը, դրանց լուծման գերակայությունների ընդու-

¹ Майкл Стал. Показатели действенности программ обеспечения соответствия природоохранным требованиям: Опыт АООС США./ Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экономического правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), с. 137-153:

նումը: Հրատապ է դառնում նաև բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը միտված վերահսկողության ոչ ավանդական մոտեցումների մշակումն ու օգտագործումը: Սակայն, եթե զարգացած երկրներում բնապահպանական վերահսկողությունը դարձել է տնտեսության բարելավման և շրջակա միջավայրի պահպանության համակարգում կառավարման արդյունավետ իրավական գործիք, ապա մեր հանրապետությունում այս ուղղությամբ իրականացված աշխատանքները դեռևս չեն ապահովում շոշափելի բնապահպանական էֆեկտ: Էկոլոգիական վերահսկողությունը կարծես թե դուրս է մնացել բնապահպանական գիտության շրջանակներից, թեև «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի (2005թ.) համաձայն պետական տեսուչի աշխատանքը կատարվում է նաև ուսումնասիրությունների, բացատրությունների/խորհրդատվությունների միջոցով (հոդ. 26):

Այսպիսով, ընդհանրական առումով նշենք, որ տնտեսական գործունեության էկոլոգիական կարգավորման արդի ուսումնասիրություններում առավել ուշագրավ են այն հիմնախնդիրները, որոնցում շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման հարցերը ստանում են գիտական նոր մարմնավորում: Հետաքրքիր և հեռանկարային է, օրինակ, միջճյուղային հաշվեկշռի մոդելի հիման վրա էկոլոգիական խախտումներից առաջացած վնասների գնահատման մեթոդական մոտեցումը, իսկ արդեն մշակված այդ մոդելի միջոցով տնտեսական արդյունքի վրա շրջակա միջավայրի որակի ազդեցության հաշվառմամբ հնարավոր դարձավ որոշել ազդեցությունն ուղղակի ծախսերի գործակիցների վրա այն դեպքերում, երբ փոխվում է միջավայրի վիճակը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԴՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՅԵ ԳՈՒՐԳԵՆԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Համառոտագիր

Հոդվածում առաջ քաշված խնդիրներից և դրանց վերլուծության արդյունքներից պարզվել է, որ մի շարք երկրներում, հատկապես նորանկախ պետություններում, այդ թվում նաև Հայաստանում, էկոլոգիական խնդիրների բազմությունը և բարդությունը, էկոլոգիական անվտանգության ապահովման օրենսդրության անկատարությունը/անարդյունավետությունը պահանջում են նոր օրենսդրական ակտերի ու իրավակիրառման մեխանիզմների ստեղծումն ու ներդրումը բնապահպանական օրենսդրության խախտման և էկոլոգիական հանցագործությունների կանխման/պրևենցիայի ապահովման տեսանկյունից:

Բանալի բառեր. *Բնապահպանական վերահսկողություն, շրջակա միջավայր, էկոլոգաիրավական նորմ, բնապահպանական իրավունք, էկոլոգիական քաղաքականություն, ռիսկի ինդիկատոր, էկոլոգիական խնդիրներ, բնապահպանական լիցենզիա, բնապահպանական փորձաքննություն, էկոլոգիական աուդիտ*

НАУЧНАЯ НАПРАВЛЕННОСТЬ И ЭФФЕКТИВНОСТЬ ПРИМЕНЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОГО КОНТРОЛЯ

ВАГЕ ГУРГЕНОВИЧ ЕНГИБАРЯН

соискатель Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

По результатам анализа проблем, поднятых в статье, стало ясно, что в ряде стран, особенно в новых независимых государствах, в том числе и в Армении, многообразие и сложность экологических проблем, несовершенство/неэффективность законодательства в области обеспечения экологической безопасности требуют создания и внедрения новых законодательных актов и механизмов правоприменения с точки зрения обеспечения предотвращения/превенции экологических преступлений и нарушения экологического законодательства.

Ключевые слова: *экологический контроль, окружающая среда, экологическая норма, экологическое право, экологическая политика, индикатор риска, экологические проблемы, экологическая лицензия, экологическая экспертиза, экологический аудит.*

SCIENTIFIC ORIENTATION AND EFFECTIVENESS OF ENVIRONMENTAL CONTROL

VAHE GURGEN YENGIBARYAN

Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

According to the results of the analysis of the issues raised in the article, it became clear that in some countries, especially in the newly independent states, including Armenia, the variety and complexity of environmental issues, inadequate/ineffective legislation in the field of environmental security require the drafting and adopting new legislation and law enforcement mechanisms from the standpoint of inhibiting/preventing environmental crimes and violations of environmental legislation.

Keywords: *Environmental control, environment, ecological norm, environmental law, environmental policy, risk indicator, environmental issues, environmental license, environmental assessment, environmental audit*

ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ СОЦИАЛЬНОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Социальная политика представляет собой часть общей политики государства, которая касается, прежде всего, отношений между социальными группами, обществом и его членами, связанных с изменением в социальной структуре, ростом благосостояния населения, улучшением качества жизни граждан страны, удовлетворением их материальных и духовных потребностей, улучшением образа жизни. Данные показатели являются одними из важнейших, так как определяют уровень благосостояния и степень процветания каждого государства, ведь, по сути, удовлетворенность граждан напрямую связана с развитием государства в целом¹. Сегодня под социальной политикой государства понимают воздействие органов управления страны на социальную сферу общества, их деятельность в целях удовлетворения социальных потребностей людей, и прежде всего повышения уровня жизни, предоставление социальных услуг населению².

В условиях рыночной экономики социальная политика должна создавать необходимые предпосылки для удовлетворения населения его основных потребностей. Без эффективной реализации этой стратегической задачи не будет нормальное функционирование рыночного хозяйства. Эффективная социальная политика должна основываться на следующих принципах:

- **Принцип экономической эффективности и социальной справедливости.** Важность этого принципа в том, что он является объединенным. Данный принцип гласит: экономическая эффективность не противопоставляется справедливости и, наоборот – справедливость – экономической эффективности.
- **Принцип единства социальной защиты и самозащиты, помощи и самопомощи.** Любая форма социальной защиты, а равно и социальной политики, в конкретно-исторических условиях не может соответствовать социальным потребностям, если она не опирается на активность и самоактивность тех, кто нуждается в этой защите.
- **Принцип subsidiarности.** Те социальные проблемы, которые могут быть решены на локальном организационном уровне, не должны передаваться в ведение более высокой организации. Практическое следование этому принципу развивает способность индивидов, социальных групп, общественных организаций, органов власти к самостоятельным действиям, повышает их ответственность за положение дел на их уровне деятельности. Согласно этому принципу предпочтение в решении социальных проблем должно быть отдано негосударственным органам, что содействует развитию инициативы общественных организаций.
- **Принцип необходимости поиска новых социальных приоритетов и ориентиров, утверждения их в жизни общества.** При всей важности базисных потребностей – в пище, одежде, жилище, безопасности, социальная политика не может быть ограничена, а тем более исчерпана заботой об их удовлетворении. «Высшие» потребности – в справедливости, добре, красоте, истине – также необходимы человеку. Неудовлетворенность этих потребностей вызывает многочисленные социальные аномалии и патологии. Принижение нравственных критериев или тем более отказ от них в деятельности работников социальной сферы содействует её дегуманизации.

Принципы социальной политики были выработаны в процессе организации развития общества и приобрели новое содержание в ходе разработки основ эффективного государства. В настоящее время наиболее приоритетными должны являться два принципа: социальная солидарность и индивидуальная социальная ответственность.

Основными приоритетами социальной политики являются³:

¹ Асланова С. Х. Современные проблемы социальной политики государства и пути их совершенствования // Молодой ученый. – 2015. – №9. – с. 511-514.

² Кушлин, В. Государственное регулирование экономики: Учебник. – М.: Экономика, 2013, с. 496.

³ Асланова С. Х. Современные проблемы социальной политики государства и пути их совершенствования // Молодой ученый. – 2015. – №9. – с. 511-514.

- увеличение уровня оплаты труда отдельных категорий работников бюджетной сферы, развитие и реформирование пенсионного и социального обеспечения, повышение адресности социальных выплат;
- реализация мер по стимулированию трудовой мобильности населения, по профессиональной подготовке и переподготовке кадров, созданию новых рабочих мест, отвечающих требованиям инновационной экономики. Должны также реализовываться меры, направленные на привлечение высококвалифицированных иностранных специалистов;
- развитие системы здравоохранения путем реформирования системы обязательного медицинского страхования, модернизации используемого оборудования и технологий, формирования сети современных центров высоких медицинских технологий, а также перинатальных центров, продолжения реструктуризации учреждений здравоохранения, развития стационарозамещающих медицинских технологий, использования механизмов государственно-частного партнерства в здравоохранении, увеличения доли медицинских учреждений новых организационно-правовых форм;
- развитие открытости системы образования к внешним запросам, применение проектных методов, конкурсное выявление и поддержка лидеров, успешно реализующих новые образовательные подходы на практике, адресность инструментов ресурсной поддержки и комплексный характер принимаемых решений;
- стимулирование жилищного строительства, в первую очередь строительства комфортного жилья экономического класса и малоэтажного жилищного строительства, восстановление снизившихся в условиях кризиса темпов роста покупки жилья на условиях ипотеки.

Как известно, целью социальной политики является создание в обществе благоприятного социального климата, то есть условий, обеспечивающих удовлетворение основных жизненных потребностей населения. Социальную политику государства можно рассматривать как его специфическую деятельность, направленную на реализацию права каждого гражданина свободно участвовать во всех сферах социально-экономической, трудовой, духовной жизни общества, направленной на удовлетворение сущностных потребностей человека, интересов социальных групп при постоянном выявлении и учете социальных последствий экономических, политических, мировоззренческих преобразований¹.

На современном этапе развития экономики Республики Армения особую актуальность приобрело повышение эффективности социальных инвестиций, поскольку под воздействием финансово-экономического кризиса резко увеличилось количество безработных и ухудшился уровень жизни населения. Государственную политику в области повышения эффективности социальных инвестиций в экономике можно условно разделить на два направления²:

- 1) политику органов государственной власти, направленную на активизацию роли частного бизнеса в социальных инвестициях;
- 2) политику органов государственной власти в области эффективного использования социальных инвестиций.

Для реализации политики в целях активизации роли частного бизнеса органы государственной власти должны выполнять следующие функции.

В сфере аналитической деятельности:

- проведение мониторинговых исследований процесса формирования гражданского общества, выявление динамики развития общественных и межрегиональных связей в целях устранения негативных явлений;
- изучение ситуации, выявление наиболее перспективных форм и благоприятных условий межсекторного взаимодействия, разработка рекомендаций для органов государственной власти и управлений на территории региона, органов государственной власти региона и органов местного самоуправления по формированию механизмов эффективного межсекторного взаимодействия в регионе;
- анализ, обобщение и использование в практике наиболее ценного отечественного и зарубежного опыта инициативного решения группами населения социально значимых вопросов;
- мониторинг социально ответственных компаний, определение рейтинга социально ответственных компаний и опубликование его в СМИ;
- мониторинг удовлетворенности качеством обслуживания населения социальными учреждениями.

¹ <http://www.webarhimed.ru/page-630.html>

² Салова Н.Ю. Основные направления повышения эффективности социальных инвестиций в современной российской экономике // Российское предпринимательство. – 2010. – № 10-2 (169). – с. 55-58. <http://bgscience.ru/lib/6359/>

В социально-экономической сфере:

- привлечение негосударственных некоммерческих организаций и коммерческих организаций к разработке и выполнению программ социально-экономического развития;
- поддержка негосударственных некоммерческих организаций, содействующих развитию отечественного производства;
- поддержка социально ответственных компаний;
- создание условий для реализации предпринимательских инициатив негосударственных некоммерческих организаций;
- совершенствование механизмов участия негосударственных некоммерческих организаций и коммерческих организаций в реализации социальной политики;
- установление и развитие партнерства между органами государственной власти и управлениями на территории региона, органами государственной власти региона, органами местного самоуправления, работодателями и работниками, взаимодействие с профсоюзами и другими общественно-профессиональными структурами;
- развитие благотворительности и мобилизация финансовых и материальных средств для социальной поддержки нуждающихся, привлечение дополнительных источников финансирования благотворительной деятельности и т.д.

Преследуя цель повышения уровня жизни населения, социальная политика охватывает 4 основных сектора жизни общества:

1. демографию (естественное воспроизводство населения);
2. труд (рынок труда, занятость, подготовка и переподготовка, кадров, условия и охрана труда, социально партнерство);
3. личные доходы (заработная плата, пенсии, пособия и т.п.);
4. социальную инфраструктуру (жильё, школы, дошкольные учреждения, учреждения здравоохранения и культуры и т.п.).

В современном развитом обществе усиливается тенденция к развитию общественных институтов, служащих саморегулированию и самоорганизации общества. Такие институты – важный элемент гражданского общества, их поддержка – характерная черта «эффективного» государства. Зрелое в гражданском отношении общество способно не только дополнять социальные усилия государства, но и осуществлять их корректировку, необходимый контроль над ними в цивилизованных, ненасильственных формах. Если предположить, что социальная политика ориентирована на формирование информационного общества, то она с неизбежностью должна содействовать реализации следующих задач:

- быстрый рост человеческого потенциала - как условия для помощи продуктивной жизни членов общества;
- формирование нового среднего класса как определяющей социальной силы общества и основного носителя человеческого потенциала нации;
- развитие гражданского общества и правового государства как неременного условия расширенного воспроизводства человеческого потенциала.

Следует отметить, что особенности нынешнего состояния общества обуславливают семь главных принципов социальной доктрины, определяющей социальную концепцию развития страны, ее социальную политику и соответствующие программы действий:

1. Оптимальное сочетание либерализма и социальных гарантий. В исторической ситуации, когда еще не сложились соответствующие предпосылки и значительная часть населения не способна адекватно реагировать на трудности переходного периода, проведение чисто либеральной политики, как показал мировой опыт, приводит к социальному кризису, к блокированию социальной адаптации, к дезориентации отдельных групп граждан и, как следствие, к его интенсивной маргинализации.
2. Радикальное повышение трудовой мотивации, ориентированной на все группы в целом и каждый слой населения – в отдельности. Социальная парадигма развития исходит из того, что локомотив экономической динамики – это трудоспособные граждане, обладающие квалифицированным трудовым потенциалом, высокой социальной активностью и мобильностью, способностью легально адаптироваться к сложившимся условиям и реализовать эффективные модели своей деятельности.
3. Центральное место среди социальных институтов сегодня занимает семья, которая оказывает определяющее влияние не только на демографические процессы в обществе, но и на состояние

Миграция, несомненно, в первую очередь дело свободного волеизъявления граждан. В экономическом плане миграция имела как положительное, так и отрицательное значение. Так, она поддерживала жизнь не только самих мигрантов, но и их родных, которые продолжали жить в Армении, благодаря их денежным переводам, что в свою очередь, стимулировало развитие предпринимательства, малого бизнеса, торговли и сферы услуг.

Трудовая миграция из Армении вела к снижению как социальной напряженности, так и уровня безработицы. Одновременно, миграция оказывала и свое отрицательное воздействие на все сферы жизни в республике, а именно: миграция охватывала молодежь в возрасте до 35 лет, а также население приграничных регионов и работников отраслей стратегического значения. За этот период увеличилась «утечка мозгов», что оказало неблагоприятное воздействие на армянскую экономику. В республике изменилась и структура занятости, превратив членов домашних хозяйств из производителей в потребителей.

Особым образом миграция повлияла на генофонд нации, когда численность населения уменьшилась на количество мигрантов и одновременно снизился естественный прирост, так как дети стали рождаться в других странах. Вместе с тем, миграция стала причиной нежелательных изменений возрастной структуры, уменьшился размер семей, на «брачном рынке» девушки в количественном отношении стали преобладать над юношами, увеличился и средний брачный возраст.

К отрицательным воздействиям относится и то, что за счет эмиграции молодежи население стареет, а повышение удельного веса пожилых сопровождается снижением удельного веса трудоспособных и несовершеннолетних¹.

Из вышеизложенного следует, что первоочередной задачей РА являются поиски действенных методов сокращения миграционных потоков населения, создание благоприятных условий для бизнеса, обеспечение новых достойно оплачиваемых рабочих мест, эффективная защита прав и интересов работников, повышение уровня жизни населения, укрепление нравственных ориентиров у нового поколения армян, сохранение достойного отношения к национальным традициям и семейным ценностям. В связи с этим возникает необходимость осуществления эффективной государственной политики, направленной на регулирование проблем миграции, главной целью которой является сокращение миграционных потоков, в частности, оттока молодых людей из Армении.

Поскольку эффективное регулирование миграционных процессов в Республике Армения имеет важное стратегическое значение для обеспечения динамичного развития экономики, повышения уровня жизни населения, создания новых рабочих мест, стимулирования платежеспособного спроса и улучшения деятельности компаний, то оно должно находиться в центре внимания государства и общества.

Объективность законов, присущих миграции населения доказывает то, что недоучет их действия или полное игнорирование приводит к таким негативным последствиям как рост

¹ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ ճարտարագիտական համալսարան «Երիտասարդ տնտեսագետների գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան 2004թ. ք. 26 էջ:

нелегальной миграции, нарушение в размещении производительных сил, недоразвитие транспортных связей, снижение уровня жизни, возникновение социальных конфликтов¹.

Первоочередной целью государственной миграционной политики является регулирование миграционных потоков, преобладание негативных последствий стихийно развивающихся процессов миграции, создание условий для беспрепятственной реализации прав мигрантов, а также обеспечение гуманного отношения к лицам, ищущим убежища на территории страны въезда. Институциональной основой любой политики являются субъекты, к которым, прежде всего, относят органы государственной власти, общественные объединения, физических лиц и др.².

Миграционную политику и ее институциональные элементы можно рассматривать как предмет регулирования конституционного права. Следовательно, к конституционно-правовым основам миграционной политики можно отнести, прежде всего, конституционные принципы миграционной политики, конституционно-правовой статус субъектов миграционной политики, основы правового регулирования миграционной политики и формы осуществления государственно-властных, контрольных полномочий в сфере миграции.

Как известно, миграционная политика призвана регулировать миграцию населения, в частности, трудовую миграцию. С внешней трудовой миграцией населения, точнее с одной из ее разновидностей – сезонной трудовой миграцией (отходничеством), как с массовым явлением Армения столкнулась еще в советские времена. Нужно подчеркнуть, что это было не чисто армянским феноменом, а в той или иной мере практиковалось населением и других регионов СССР (Грузия, Молдова, Азербайджан, северокавказские автономии РСФСР и т.д.

Так, в условиях полного отсутствия возможностей бизнес внедрений, все заработки мигрантов (в среднем в 3-4 раза превышающие уровень годового дохода средней семьи Армении), направлялись на удовлетворение текущих и перспективных потребностей семей (улучшение жилищно-бытовых условий, приобретение имущества, решение образовательных и медицинских проблем и т.д.). В большинстве случаев, практически, во всех отношениях человеческого развития, обеспечивались положительные подвижки, что несомненно имело важное социальное значение. А то, что определенная часть этих средств направлялась на создание лучших стартовых условий для молодых семей, имело положительное значение и в демографическом отношении. Таким образом, появившееся по существу как стратегия выживания, это явление со временем переросло в стратегию процветания и развития.

С другой же стороны, явление сопровождалось и негативными социальными последствиями, имеющими демографический оттенок: перерасход физических сил мигрантов; обострение проблем устойчивости брака и семьи, воспитания детей (вследствие длительного отсутствия отцов семейств и супругов); ввоз и распространение инфекционных болезней, в т.ч. венерических и т.п.

Все вышеотмеченное имело место на всем протяжении 70-х и 80-х годов.

Однако, помимо этого, отходничество влияло на демографическое развитие Армении, тем, что во многом определяя размеры потоков, как постоянных эмигрантов, так и иммигрантов, являлось одним из факторов формирования и изменения общей миграционной ситуации страны.

К началу 80-х годов отходничеством в Армении занимались уже 35-40 тыс. человек, или более 1% населения и около 2% трудовых ресурсов³. Этот трудовой десант, состоящий в основном из мужчин среднего возраста, в промежутке весна-осень находился в эмиграции и, занимаясь главным образом строительными работами, вносил заметный вклад в развитие регионов въезда. В экономическом отношении для Армении такие последствия данного явления были положительными: обеспечивалась более рациональная занятость и приток значительных финансовых средств (трансферов). Однако, помимо этого, отходничество влияло на демографическое развитие Армении тем, что во многом определяя размеры потоков, как постоянных эмигрантов, так и иммигрантов, являлось одним из факторов формирования и изменения общей миграционной ситуации страны.

В целом, миграционные процессы тех лет в основном носили конструктивный характер. Межреспубликанский поток, в большинстве случаев, начиная как с образовательной миграцией (перерастающая зачатую в постоянную миграцию, нередко с последующим переездом семьи), обеспечивал приток трудовых ресурсов активных возрастов, увеличение абсолютных и относительных величин

¹ Комплексное исследование внешней миграции Арм.ССР, Гос.комитет по труду и занятости Арм.ССР, НИИЭП Госплана Арм.ССР., Ереван, 1985г., с., 14.

² Э.Бабаян «О разновидностях и особенностях миграционных процессов». Сб. научных статей – 2016г., ИЭ им. Котаняна НАН РА, Ереван, изд. «Гитутюн», с. 347-352.

³ Чесноков А.С. Международное регулирование прав мигрантов, Международные процессы, Журнал теории международных отношений и мировой политики, том 13, № 1(40), январь-март, 2015, с.2.

репродуктивного и брачного континентов, что не могло не оказывать благоприятного влияния на процессы естественного воспроизводства. Практически всецело семейный же репатриационный поток, обеспечивая соприкосновение с соотечественниками, являющимися носителями иных ценностей и представлений, новых технологий и навыков, вносил заметную лепту в развитие экономики и социально-культурной сферы Армении.

Единственным негативным аспектом миграции того периода было углубление диспропорций территориального размещения населения вследствие концентрации основной части как иммигрантов, так и внутренних мигрантов в Ереване и его городах спутниках.

Таким образом, как непосредственно, так и опосредственно, трудовая миграция 70-х годов в целом осуществляла роль положительного фактора демографического развития Армении. Практически с самого начала независимости, под комплексным натиском экстремальных явлений, непосредственно влияющих практически на каждого человека, таких как: экономический коллапс и массовая безработица, шоковая терапия и почти поголовное и одномоментное обнищание населения, транспортная и энергетическая блокада и их такие метастазы, как паралич энергетической и коммунально-бытовой сфер и общественного транспорта и т.д., миграционная и прежде всего, трудовая, подвижность населения РА резко подскочила.

По оценкам НСС РА, за всего лишь три года – 1992-1994, общая величина отрицательного сальдо миграции составила 475,8 тыс.человек, или 13,4% населения в 1992г. По оценкам же выборочного обследования 1995г. эта величина была несколько больше: 495-535 тыс.человек или 14-15% населения. По данным этого же обследования численность эмигрантов этих трех лет составила примерно 621-687 тыс.человек (почти 2/3 из которых выехали индивидуально).

Отсутствие необходимых и достаточных экономических и социальных предпосылок не только прекращения, но и хотя бы сокращения величин оттока населения, позволяет утверждать, что миграция будет продолжать оставаться важным фактором демографического развития Армении. При этом то, что в течение ближайших лет в результате особенностей передвижки возрастов произойдет последовательное и значительное сокращение численности людей активных репродуктивных и брачных возрастов, т.е. тех, которые одновременно являются наиболее активными участниками эмиграционных и трудовых миграционных процессов, дает право предположить, что еще более значительными окажутся отрицательные последствия миграции на рождаемость и брачность населения.

В настоящее время модель управления миграцией в РА является децентрализованной, т.е. различные функции и операции –такие, как контроль въезда, пребывания, проживания и выезда иностранцев, эмиграции граждан, трудовой миграции, убежища и т.д. – осуществляются различными государственными структурами.

На основе данных о прибывших и выбывших пассажирах Армении за 2000-2016-ый гг. составлен график динамики пересечения границы Армении за тот же период 2000-2016 период.




Рисунок 2: Динамика пересечения границы Армении за 2000-2016 период.

Государственная миграционная служба (ГМС) является центральным органом, отвечающим за разработку и реализацию государственной политики в области управления миграционными процессами, а также за координацию деятельности государственных учреждений, занимающихся вопросами миграции в области разработки политики и правовых актов. ГМС также несет ответственность за предоставление убежища иностранным гражданам и лицам без гражданства. ГМС разрабатывает и реализует программы в соответствии с интеграционной политикой, принятой государством в отношении беженцев – вынужденных переселенцев из Республики Азербайджан в 1988-1992 годах. ГМС также разрабатывает и реализует соответствующие программы, направленные на борьбу с нелегальной миграцией.

Итак, эффективное регулирование миграционных процессов в РА имеет важное стратегическое значение для обеспечения динамичного развития экономики, повышения уровня жизни населения, стимулирования платежеспособного спроса и улучшения деятельности компаний. Так как в ракурсе регулирования миграционных процессов особую важность приобретает совершенствование миграционной политики, то им должны быть озабочены как государственные органы, так и общество в целом.

Таким образом, эффективное регулирование потоков и совершенствование миграционной политики тесно связаны с осуществлением действенных программ обеспечения занятости и развития экономики. В современных условиях Армении, единственным способом минимизации оттока населения может стать разработка и целенаправленное претворение в жизнь, в рамках единой государственной миграционной политики системы эффективных экономических и социальных мер и мероприятий, которые в состоянии были бы обеспечить по возможности более широкий переход от практики безвозвратных трудовых поездок к возвратным.

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸԹԱՑՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱԼՎԱՐԴ ԹԵՎՈՍԻ ՉԱՏԻԿՅԱՆ, *տ.գ.թ.,*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, փոխտնօրեն
ԷԲԱ ԱՐԿԱԴԻԻ ԲԱԲԱՅԱՆ, *աշխ.գ.թ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Համառոտագիր

Ժամանակակից հասարակության զարգացման փուլում միգրացիոն գործընթացները հասել են զլոբալ մասշտաբների՝ գրավելով մոլորակի բոլոր երկրամասերը, սոցիալական շերտերը և հասարակության խմբերը, հասարակական կենսագործունեության տարբեր ոլորտները:

Միգրացիան առաջին հերթին դա անկասկած քաղաքացիների ազատ կամքի դրսևորումն է: ՀՀ-ում միգրացիոն գործընթացների արդյունավետ կարգավորումը ունի կարևոր ռազմավարական նշանակություն տնտեսության հավասարաչափ զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, նոր աշխատատեղերի ստեղծման, վճարունակ պահանջարկի շահագրգռվածությանը նպաստելու և կազմակերպությունների գործունեությունը բարելավելու գործում:

Բանալի բառեր. միգրացիա, գործընթաց, ոլորտ, կենսագործունեություն, կարգավորում, տնտեսություն, կարգավիճակ, հսկողություն, պետություն:

ВОПРОСЫ РЕГУЛИРОВАНИЯ МИГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ В РА

АЛВАРД ТЕВОСОВНА ЗАТИКЯН, *к.э.н.*
заместитель директора, старший научный сотрудник
Института экономики им. М. Котаняна НАН РА
ЭБА АРКАДЬЕВНА БАБАЯН, *к.географ.н., профессор.*
ведущий научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

На современном этапе развития общества миграционные процессы приобрели глобальные масштабы, охватив все континенты планеты, социальные слои и группы общества, различные сферы общественной жизнедеятельности.

Миграция, несомненно, в первую очередь дело свободного волеизъявления граждан.

Эффективное регулирование миграционных процессов в РА имеет важное стратегическое значение для обеспечения динамичного развития экономики, повышения уровня жизни населения, создания новых рабочих мест, стимулирования платежеспособного спроса и улучшения деятельности компаний.

Ключевые слова: миграция, процесс, сфера, жизнедеятельность, регулирование, экономика, статус, контроль, государство.

THE ISSUES ON REGULATING THE MIGRATION PROCESSES IN ARMENIA

ALVARD TEVOS ZATIKYAN, *Candidate of Sciences (Economics)*
Deputy Director, Senior Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia
EBA ARKADI BABAYAN, *Candidate of Sciences (Geography), Professor*
Leading Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

At the current stage of the development of society, the migration processes have widely spread over the world, covering all continents, social strata and groups of society, different spheres of social life. Migration, inevitably and first of all, is the expression of free will of citizens. Effective regulation of migration processes in the Republic of Armenia is of strategic importance to ensuring the dynamic development of the economy, and improving the living standard of the population, creating new jobs, and stimulating the demand and improving the performance of companies.

Keywords: Migration, process, sector, activity, regulation, economy, status, control, state

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԵՎԵՌԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԸՍՏ ԵԿԱՄՏԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Բնակչության եկամուտների բաշխման անհավասարության գնահատման ամենատարածված և առավել հաճախ կիրառվող գործիքները հանդիսանում են անհավասարության ինդեքսները, որոնք լայնորեն օգտագործվում են սոցիալ-տնտեսական տարբեր հետազոտություններում: Այս ինդեքսները կիրառվում են ինչպես տարբեր երկրների միջև համեմատական վերլուծությունների, այնպես էլ կոնկրետ երկրի ներսում անհավասարության գնահատման ժամանակ:

Անհավասարության ինդեքսները բազմազան են, սակայն եկամուտների բաշխման վրա եկամուտների ձևավորման աղբյուրներից յուրաքանչյուրի ազդեցության գնահատման տեսանկյունից առավել նպատակահարմար է Ջինի գործակցի կիրառությունը: Վերջինս, ի տարբերություն անհավասարության մյուս ինդեքսների, հաշվի է առնում յուրաքանչյուր անհատի եկամտի մակարդակի շեղումը ոչ միայն միջին եկամտի մակարդակից, այլ նաև մյուս բոլոր անհատների եկամուտների մակարդակներից:

Ընդհանրացված Ջինի գործակցին ընդունված է ներկայացնել հետևյալ բանաձևով.

$$G = \frac{2}{\bar{y}n^2} \sum_{i=1}^n \left(r_i - \frac{n+1}{2} \right) y_i$$

որտեղ n -ը հասարակության անդամների կամ տնային տնտեսությունների քանակն է, y_i -ն՝ i -րդ անդամի (տնային տնտեսության) եկամուտն է, \bar{y} -ը միջին եկամուտն է, r_i -ն i -րդ անդամի (տնային տնտեսության) կարգն է եկամուտների սանդղակում: Եկամուտների ամենացածր մակարդակ ունեցող անդամի (տնային տնտեսության) համար r_i -ն հավասար է 1, իսկ ամենաբարձրի համար՝ n :

Գործակցին ընդունում է 0-ից 1-ն ընկած արժեքները. Ջինի գործակցի 0 արժեքը համապատասխանում է բացարձակ հավասարությանը, իսկ 1 արժեքը՝ բացարձակ անհավասարությանը (առկա բոլոր եկամուտները կենտրոնացած են հասարակության որոշակի խմբի կամ որևէ անհատի ձեռքում)¹:

Թեև Ջինի գործակցը բնակչության եկամուտների բաշխման անհավասարության գնահատման ամենատարածված ինդեքսն է, այնուամենայնիվ վերջինիս տրոհումն ըստ առանձին խմբերի ամբողջությամբ հնարավոր չէ: Այսինքն ամբողջ հասարակության համար հաշվարկված Ջինի գործակցը հավասար չէ առանձնացված խմբերի Ջինի գործակցների հանրագումարին²: Եթե փորձենք տրոհել Ջինի գործակցին ըստ բնակչության առանձնացված խմբերի, ապա բացի միջխմբային և ներխմբային հավասարությունները բնութագրող անդամներից կունենանք նաև մնացորդային անդամ, որի իմաստն այդքան էլ ըմբռնելի չէ: Միննույն ժամանակ, Ջինի ինդեքսը լիովին տրոհելի է՝ տրոհումից առաջացած մնացորդը հավասար է 0-ի, երբ առանձնացված յուրաքանչյուր խմբում աղբյուրից հարուստ դասակարգումը չի խախտվում, այսինքն՝ դիտարկվող խմբում յուրաքանչյուր անհատի համապատասխան կարգը նույնն է ինչ եկամտի ընդհանուր բաշխման մեջ³: Այսպիսով, Ջինի գործակցը հնարավոր է տրոհել ըստ եկամտի

¹ Christine Jones, Ana Revenga and others “Making Transition Work for Everyone: Poverty and Inequality in Europe and Central Asia”, Appendix A, The World Bank, October 2000, page 373.
² Jonathan Haughton, Shahidur R. Khandker “Handbook on Poverty and Inequality”, The World Bank, Washington, 2009, chapter 6, pages 104-106.
³ Lorenzo Giovanni Bellù, Paolo Liberati “Policy Impacts on Inequality: Decomposition of Income Inequality by Subgroups” Analytical tools, Module 052, page 4.

ձևավորման աղբյուրների և գնահատել յուրաքանչյուր աղբյուրի տեսակի ազդեցությունը եկամուտների բաշխման վրա:

Նշանակենք G_k^* -ով եկամտի k -րդ բաղադրիչի կոնցենտրացիայի գործակիցը.

$$G_k^* = \frac{2}{\bar{y}n^2} \sum_{i=1}^n \left(r_i - \frac{n+1}{2} \right) y_{k,i}$$

որտեղ $y_{k,i}$ -ն i -րդ անհատի եկամտի k բաղադրիչն է:

Ջինի գործակիցը նշված կոնցենտրացիայի գործակիցների կշռված գումարն է.

$$G = \sum_{k=1}^K \frac{\bar{y}_k}{\bar{y}} G_k^* = \sum_{k=1}^K S_k G_k^*$$

որտեղ S_k -ն k -րդ բաղադրիչի կշիռն է ամբողջ եկամտում: k -րդ բաղադրիչի տոկոսային մասնակցությունը եկամտային անհավասարության մեջ կներկայացվի հետևյալ կերպ.

$$P_k = S_k \frac{G_k^*}{G} \times 100\%$$

Անհավասարության ամբողջական ուսումնասիրության համար անհրաժեշտ է նաև իմանալ եկամտի յուրաքանչյուր տեսակի սահմանային մասնակցության չափը անհավասարության մեջ: Այլ կերպ ասած, որքանով անհավասարությունը կաճի եթե եկամտի k -րդ բաղադրիչն աճի x տոկոսով: Ջինիի գործակիցի էլաստիկությունն ըստ S_k -ի ներկայացվում է ստորև բերված բանաձևով.

$$\epsilon_{G,S_k} = \frac{S_k(G_k^* - G)}{G}$$


Այսպիսով, եթե k -րդ բաղադրիչի կոնցենտրացիայի գործակիցն ավելի մեծ է, քան Ջինիի ընդհանուր գործակիցը, ապա եկամտի k -րդ աղբյուրի աճը կհանգեցնի անհավասարության ավելացմանը: Համապատասխանաբար եթե k -րդ աղբյուրի կշիռն աճի 1 տոկոսով, անհավասարությունը կաճի ϵ_{G,S_k} տոկոսով¹:

ՀՀ բնակչության եկամուտների բաշխման անհավասարության մակարդակը 2004-2015 թվականների ընթացքում խիստ տատանողական բնույթ է կրել. 2004-2006 թվականներին անհավասարության մակարդակը կրճատման միտում է դրսևորել, իսկ 2009 թվականից ի վեր սկսել է աճել: Արդեն իսկ 2015 թվականին գրանցված անհավասարության 0.38 ցուցանիշը 0.05 կետով գերազանցում է 2006 թվականի ցուցանիշը, որն ամենացածրն է եղել դիտարկված տարիների ընթացքում:


Հարկ է նշել, որ Ջինիի գործակիցը գնահատվել է ըստ SS մեկ չափահասի հաշվով եկամտի ցուցանիշի՝ հիմնվելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 2004 թվականից հրապարակվող Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության (SSԿԱՀ) բազաների վրա (տե՛ս գծապատկեր 1):

Հայաստանում ամենահարուստ և ամենաաղքատ խավերի եկամուտների միջև տարբերությունը թեև վերջին տարիներին շարունակաբար ավելացել է, այնուամենայնիվ հարևան երկրների և Ռուսաստանի համեմատությամբ սոցիալական բևեռացվածությունը բավականին մեղմ է: Համաշխարհային բանկի գնահատականների համաձայն 2014 թվականին Հայաստանում Ջինիի գործակիցը կազմել է 31.5, այն պարագայում, երբ այս ցուցանիշը Վրաստանում 40.1 է եղել, Իրանում՝ 37.4, Թուրքիայում՝ 40.2, և Ռուսաստանում՝ 41.6 (տե՛ս գծապատկեր 2):

¹ Christine Jones, Ana Revenga and others “Making Transition Work for Everyone: Poverty and Inequality in Europe and Central Asia”, Appendix A, The World Bank, October 2000, pages 374-375.



Գծապատկեր 1. Ջինիի գործակցը 2004-2014 թվականներին ՀՀ-ում¹



Նշում՝ *2013թ., **2012թ.
Աղբյուր՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա

Գծապատկեր 2. Ջինիի գործակցը ընտրված երկրներում, 2014 թվական

2015 թվականին, ինչպես և նախորդող տարիներին, ՀՀ բնակչության SS մեկ շնչի հաշվով եկամուտների կառուցվածքում էական դերակատարում ունեն վարձու աշխատանքից ստացված եկամուտը՝ 52.1 տոկոս, և պետական տրանսֆերտները (թոշակներն ու նպաստները)՝ 16.7 տոկոս, հաջորդում են ինքնազբաղվածությունից ստացված եկամուտը (8.8 տոկոս) ու տրանսֆերտները (8.5 տոկոս): Ոչ դրամական եկամուտները կազմում են ընդամենը 5.3 տոկոսը (տե՛ս աղյուսակ 1):

Եկամուտների բաշխման անհավասարության մակարդակում եկամտի աղբյուրներից յուրաքանչյուրի մասնակցության գնահատման համար Ջինիի անհավասարության գործակիցը տրոհենք ըստ եկամտի ձևավորման հիմնական աղբյուրների: Ստացված արդյունքների համաձայն (տե՛ս աղյուսակ 2) սոցիալական բևեռացվածության 92.6 տոկոսը պայմանավորված է եկամուտների 3 տեսակներով. 72.1 տոկոսը պայմանավորված է վարձու աշխատանքից ստացվող եկամտով, 10.3 տոկոսը՝ տրանսֆերտներով, 10.2 տոկոսը՝ ինքնազբաղվածությունից եկամտով: Եկամուտների մյուս տեսակների ունեցած դերը բնակչության եկամուտների բաշխման անհավասարության մեջ բավականին փոքր է:

¹ Գծապատկեր 1-ում, աղյուսակ 1-ում և 2-ում տվյալները հաշվարկվել են հեղինակի կողմից:

Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով ամսական եկամտի կառուցվածքն ըստ եկամտի ձևավորման աղբյուրների, տոկոս

	2004	2008	2010	2011	2012	2013	2014	2015
Դրամական եկամուտներ	85.7	90.8	91.6	92.3	92.9	93.1	94.1	94.7
Եկամուտ վարձու աշխատանքից	41.6	49.0	48.6	48.9	48.7	48.0	47.9	52.1
Եկամուտ ինքնազբաղվածությունից	6.9	8.1	6.4	6.3	7.2	7.5	9.3	8.8
Եկամուտ գյուղմթերքի և կենդանիների վաճառքից	9.5	6.0	3.4	4.7	5.3	5.4	5.0	4.8
Եկամուտ սեփականությունից	0.1	0.1	0.1	0.4	0.3	0.4	0.4	0.2
Պետական թոշակներ և նպաստներ	11.6	16.5	17.1	17.5	17.1	16.6	15.8	16.7
Տրանսֆերտներ	11.6	16.5	11.4	11.1	10.0	10.5	11.6	8.5
Այլ եկամուտներ	5.2	2.0	4.6	3.4	4.3	4.7	4.1	3.6
Ոչ դրամական եկամուտներ	14.3	9.2	8.4	7.7	7.1	6.9	5.9	5.3
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ

Ջինիի գործակցի տրոհումն ըստ եկամտի աղբյուրների, 2015 թվական

	Կշիռը ընդամենը եկամտի մեջ S_k	Կոնցենտրացիայի գործակից G_k^*	Բացարձակ մասնակցություն $S_k G_k^*$	Հարաբերական մասնակցություն P_k
Եկամուտ վարձու աշխատանքից	0.527	0.513	0.270	0.721
Եկամուտ ինքնազբաղվածությունից	0.090	0.425	0.038	0.102
Պետական թոշակներ և նպաստներ	0.161	0.041	0.007	0.017
Տրանսֆերտներ	0.083	0.469	0.039	0.103
Ոչ դրամական եկամուտներ	0.054	0.077	0.004	0.011
Այլ եկամուտներ	0.086	0.200	0.017	0.046
Ընդամենը	1.000	-	0.375	1.000

Եկամուտների բաշխման անհավասարության մակարդակի վրա պետական տրանսֆերտների և ոչ դրամական եկամուտների ազդեցությունը բացասական է, իսկ վարձու աշխատանքից և ինքնազբաղվածությունից եկամտի, տրանսֆերտների ազդեցությունը՝ դրական: Անհավասարության և եկամտի աղբյուրների միջև այսպիսի հարաբերակցության մասին է վկայում Ջինիի գործակցի էլաստիկությունն ըստ եկամտի առանձին աղբյուրների (տե՛ս աղյուսակ 3):

Ջինիի գործակցի էլաստիկությունն ըստ եկամտի աղբյուրների, 2015 թվական

	Էլաստիկության գործակից E_{G, S_k}
Եկամուտ վարձու աշխատանքից	0.194
Եկամուտ ինքնազբաղվածությունից	0.012
Պետական թոշակներ և նպաստներ	-0.143
Տրանսֆերտներ	0.021
Ոչ դրամական եկամուտներ	-0.043
Այլ եկամուտներ	-0.040

Ընդ որում, ընդամենը եկամտում վարձու աշխատանքից եկամտի կշռի 1 տոկոսով աճը կհանգեցնի անհավասարության մակարդակի 0.19 տոկոս ավելացմանը, համապատասխանա-

բար պետական տրանսֆերտների 1 տոկոս աճը կհանգեցնի անհավասարության կրճատմանը 0.14 տոկոսով:

Այսպիսով, ՀՀ բնակչության շրջանում առկա սոցիալական բևեռացվածությունը մեծամասամբ պայմանավորված է վարձու աշխատանքից ստավող եկամտով: Իսկ անհավասարության մակարդակը մեղմելու լավագույն տարբերակը կարող են հանդիսանալ պետական տրանսֆերտները:

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԵՎԵՐԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԸՍՏ ԵԿԱՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

ԼԻԼԻԹ ԳԱՐԻԿԻ ԶԱԿՈՔՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ասպիրանտ

Համառոտագիր

Հայաստանում վերջին տարիներին նկատվող սոցիալական բևեռացվածության աճը պահանջում է եկամուտների բաշխման ավելի խորը ուսումնասիրություն: Հոդվածում ներկայացվել է Ջինիի գործակցի տրոհման միջոցով եկամուտների բաշխման վրա եկամուտների ձևավորման աղբյուրների ազդեցության գնահատման մեթոդաբանությունը և այն կիրառվել է ՀՀ բնակչության եկամուտների համար: Գնահատվել և վերլուծվել են անհավասարության մակարդակի վրա եկամուտների յուրաքանչյուր տեսակի ազդեցության բնույթը և չափը:

Բանալի բառեր. եկամուտների բաշխում, սոցիալական բևեռացվածություն, անհավասարության ինդեքսներ, Ջինիի գործակցից, Ջինիի գործակցի տրոհում, Ջինիի գործակցի էլաստիկություն, եկամուտների ձևավորման աղբյուրներ, կոնցենտրացիայի գործակցից:

ОЦЕНКА СОЦИАЛЬНОЙ ПОЛЯРИЗАЦИИ НАСЕЛЕНИЯ РА ПО ИСТОЧНИКАМ ФОРМИРОВАНИЯ ДОХОДОВ

ЛИЛИТ ГАРИКОВНА АКОПЯН

аспирант Армянского государственного экономического университета

Аннотация

Рост социальной поляризации населения, наблюдаемый в последние годы в Армении, требует более глубокого изучения распределения доходов. В статье представлена методология оценки влияния источников формирования доходов на распределение доходов с помощью коэффициента Джини в разбивке. Даны оценка и произведен анализ характера и степени влияния каждого вида дохода на уровень неравенства.

Ключевые слова: распределение доходов, социальная поляризация, индекс неравенства, коэффициент Джини, коэффициент Джини в разбивке, эластичность коэффициента Джини, источники формирования доходов, коэффициент концентрации.

THE ASSESSMENT OF THE SOCIAL POLARIZATION OF THE POPULATION OF THE REPUBLIC OF ARMENIA BY SOURCES OF INCOME

LILIT GARIK HAKOBYAN

Ph.D. Student, Armenian State University of Economics

Abstract

The growth of social polarization of the population observed in recent years in Armenia requires a deeper study of the income distribution. The article presents a methodology for assessing the impact of sources of income on income distribution using the Gini coefficient in the breakdown. The assessment and the analysis of the nature and the extent of the impact of each type of income on the level of inequality have been carried out.

Keywords: Income distribution, social polarization, inequality index, Gini coefficient, Gini coefficient in the breakdown, the elasticity of the Gini coefficient, sources of income, the concentration coefficient

ԿԱՊԻ ՈԼՈՐՏԸ ՀԱՄԱԽԱՈՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հայտնի է, կապը տնտեսության ոչ պակաս կարևոր և ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերից մեկն է, որն ապահովում է տեղեկատվության փոխանակությունը: Ի տարբերություն տնտեսության մյուս ճյուղերի, կապի համակարգը Հայաստանում եղել է նաև մինչև խորհրդային կարգերի հաստատումը. այդ ժամանակ կապի հիմնական միջոցը փոստն էր: Հեռագրական կապ էր հաստատվում Թիֆլիսի և Երևանի, ապա Դիլիջանի և Ալեքսանդրապոլի միջև, իսկ ահա 1913թ. Հայաստանում գործում էր կապի 26 ձեռնարկություն, որոնք հիմնականում գտնվում էին խոշոր քաղաքներում:

Ինչպես ողջ Խորհրդային Միությունում, այդ թվում նաև Հայաստանում կապի միջոցների տեխնիկական զարգացումն ընթանում էր բարձր տեմպերով: Տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում մշակվում և ներդրվում էին հաղորդման մեծ հուսալիություն, արագություն, սարքավորումների բարձր թողունակություն ունեցող համակարգեր, որոնք իրենց հիմնական գործառույթների իրականացումից զատ, նպաստում էին նաև աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Նշվածի ապացույցն են նաև այդ տարիներին ոլորտում կատարված խոշոր կապիտալ ներդրումները, մասնավորապես՝ 1921-1977թթ. ընթացքում կատարված ներդրումները կազմեցին 180.7 մլն ռուբլի: Կապի տնտեսությունը զարգանում էր բուռն թափով, իսկ 1970-ականներին տեխնիկական միջոցների արագ տեմպերով կատարելագործումը հնարավորություն տվեց հանրապետության խոշոր քաղաքներում և գյուղերում կառուցել կապի բաժանմունքներ, հեռախոսային և լարային ռադիոհաղորդումների ցանցեր, միջքաղաքային ավտոմատ և կիսաավտոմատ կայաններ: Հանրապետությունում սկիզբ դրվեց հեռախոսային ցանցի զարգացմանը, որը հնարավորություն ընձեռեց կապ հաստատել ինչպես հանրապետության խոշոր բնակավայրերի, այնպես էլ Խորհրդային Միության տարբեր քաղաքների, հետագայում նաև արտասահմանյան ցանկացած երկրի հետ: 1978թ. վերջին Հայաստանում կապի ձեռնարկությունների թիվը հասավ 793-ի, որից 510-ը գյուղական բնակավայրերում¹: Կապի ոլորտում իրենց ուրույն տեղն ունեին ռադիոն, հեռուստատեսությունը, հեռախոսակապը, իսկ այժմ նաև տեղեկատվական տեխնոլոգիաները:

Այժմ ներկայացնենք կապի ոլորտի հիմնական ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

Կապի ոլորտի հիմնական ցուցանիշները ըստ 2011-2015թթ.²

Ցուցանիշները	2011	2012	2013	2014	2015
Առաքվել են հեռագրեր, 1000 միավոր	35,5	34,0	34,0	35,5	22,7
Միջքաղաքային հեռախոսային խոսակցություններ, մլն.	19,4	25,1	28,1	29,3	28,5
Միջազգային հեռախոսային խոսակցություններ, մլն.	5,5	5,5	4,4	3,6	2,8
Հիմնական հեռախոսային ապարատների քանակը, որոնք էլք ունեն ընդհանուր օգտագործման հեռախոսային ցանց, 1000 միավոր	601,0	598,8	592,3	582,0	562,5
Հեռուստակայանների քանակը	227	239	247	252	252
Մալուխային հեռուստատեսության բաժանորդների քանակը, 1000 միավոր	18,6	55,6	70,2	86,1	89,1
Բջջային կապի ակտիվ բաժանորդների քանակը, 1000 միավոր	3210,8	3322,8	3346,3	3459,1	3464,5
Ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակը, 1000 միավոր	1818,8	1914,1	2036,3	2084,2	2199,8
Որից՝ բջջային հեռախոսակապով	1435,2	1471,7	1550,1	1561,8	1585,3
Կապի ծառայություններից հասույթը, մլն. դրամ (առանց ԱԱՀ-ի ընթացիկ գներով)	171785,6	176170,7	183914,1	180730,5	169386,7

¹ Վ.Խոջաբեկյան, Խ.Փափազյան, Հայաստանի հաղորդակցության ուղիների և կապի համակարգի հիմնախնդիրների շուրջ «21-րդ դար», թիվ 3 (17), 2007թ.:

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, էջ 341-342:

Աղյուսակ 1-ի տվյալներից պարզ երևում է, որ 2015թ.-ին 2014թ.-ի համեմատ կապի ծառայություններից ստացված հասույթը նվազել է 6,7%-ով, իսկ 2015թ.-ին 2011թ.-ի համեմատ՝ 1,4%, որը սակայն էականորեն չի ազդել ՀՆԱ-ի վրա:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտը 2000թ. հայտարարվել է Հայաստանի տնտեսության գերակա ճյուղերից մեկը, որի զարգացումը սկզբունքային շահութաբերություն է ունենալու գիտելիքահեն տնտեսության անցնելու գործընթացում:

2008թ. ՀՀ կառավարությունը ընդունեց ոլորտի զարգացման նոր տասնամյա ռազմավարությունը, որը ներառում է ենթակառուցվածքի զարգացման, SS շրջանավարտների որակավորման բարձրացման, սկսնակ ընկերությունների համար վենչուրային և ֆինանսավորման այլ մեխանիզմների ստեղծման և այլ խնդիրներ: Նոր ռազմավարության որոշակի նպատակներից են՝ կառուցել նոր տեխնոպարկեր և ինկուբատորներ, ստեղծել խոշոր վենչուրային հիմնադրամ, ընդլայնել հայկական շուկայի ծավալները տեղական SS արտադրանքի և ծառայությունների համար, մեծացնել օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՆԱ-ի կազմավորման գործընթացում իր ուրույն տեղն ունի նաև կապի ոլորտը, ուստի այդ նպատակով 2011-2015թթ. տվյալների հիման վրա ներկայացրել ենք աղյուսակ 2-ը:

Աղյուսակ 2.

ՀՀ ՀՆԱ և կապի ոլորտը՝ ըստ 2011-2015թթ¹

մլ.ն. դրամ

Ցուցանիշները	2011	2012	2013	2014	2015
ՀՆԱ-ի արժեքը (y)	3777945,6	4000722,0	4555638,2	4828626,3	5032089,0
Կապի ոլորտի հասույթը (x)	171785,6	176170,7	183914,1	180730,5	169386,7

ՀՆԱ-ի և կապի ոլորտի հասույթի միջև փոխկապվածության բացահայտման համար հաշվարկել ենք կոռելացիայի և դետերմինացիայի գործակիցները:

Regression Statistics	
Multiple R	0,120312186
R Square	0,014475022
Adjusted R Square	-0,314033304
Standard Error	613638,3957
Observations	5

	df	SS	MS	F	Significance F
Regression	1	16591968065	16591968065	0,044062877	0,847184137
Residual	3	1,12966E+12	3,76552E+11		
Total	4	1,14625E+12			

	Coefficients	Standard Error	t Stat	P-value	Lower 95%	Upper 95%
Intercept	2556905,938	8970346,092	0,285039831	0,794158996	-25990738,84	31104550,71
x	10,6696414	50,82921442	0,209911594	0,847184137	-151,0916042	172,430887


$$\hat{Y} = a_0 + a_1 \cdot X$$

$$\hat{Y}_t = 2556905,9 + 10,669 \cdot X_t$$

$a_1 = 10,66$ նշանակում է, որ կապի հասույթի 1 մլն դրամով ավելացումը ՀՆԱ-ն ավելացրել է 10,669 մլն դրամով:

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, էջ 341-342:

Հաշվարկված կոռելացիոն գործակցի համաձայն ուսումնասիրվող երևույթների միջև կապն ուղիղ է, բայց շատ թույլ:



Գծապատկեր 1. ՀՆԱ-ի և կապի ոլորտի միջև կապը

Ըստ հաշվարկված դետերմինացիայի գործակցի 2011-2015թթ. ՀՆԱ-ի տատանումների շուրջ 1,45%-ը պայմանավորված է կապի ոլորտի հասույթի տատանումներով, իսկ մնացածը՝ այլ և պատահական գործոնների արդյունք է:

ՀԶԾ-ին նախորդող ժամանակաշրջանում կառավարության մասնակցությամբ մի շարք նախաձեռնություններ են իրականացվել նշված նպատակներին հասնելու նպատակով: Այսպես, 2007 թ. National Instruments կորպորացիան հիմնեց ճարտարագիտական և գիտահետազոտական գրասենյակ Երևանում: 2008 թ. սկիզբ են առել և ներկայումս շարունակական են Գյումրու տեխնոպարկի գործարկման աշխատանքները, որտեղ հիմնվել է D-Link International կազմակերպության ծրագրային մշակումների տարածաշրջանային լաբորատորիան: 2011 թ. ՀՀ կառավարության և «Մայքրոսոֆթ» կորպորացիայի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակում 2011թ. մայիսին Երևանում բացվեց «Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնը», որի նպատակն է «Մայքրոսոֆթ» կորպորացիայի գործիքների և ծրագրերի կիրառմամբ ստեղծել միջավայր՝ մասնագիտական գիտելիքների ու կարողությունների զարգացման համար:

12.10.2016թ. ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում «Հայաստան» ներդրումային համաժողովի շրջանակում կազմակերպված թեմատիկ նիստի մասնակիցներն անմիջականորեն կառավարության ներկայացուցիչների կողմից տեղեկություններ են ստացել կապի ոլորտի ներկա զարգացումների մասին: Համաժողովը կազմակերպել է Հայաստանի զարգացման հիմնադրամը՝ մեր երկրում ներդրումները խթանելու նպատակով¹:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Արթուր Առաքելյանը հանդես է եկել ընդարձակ զեկույցով: «Հայաստանն իր աշխարհագրական դիրքով կապի և տրանսպորտի ոլորտում հավակնում է ծառայել որպես կարևոր խաչմերուկ: Այսօրվա կապի ոլորտում հասանելի ենթակառուցվածքները և իրականացվող գործողություններն արդեն իսկ վկայում են դրա մասին», - նշել է նա: Ուշագրավ քննարկման առարկա են դարձել կամրջող հաղորդակցության ենթակառուցվածքները:

Կապի ու հաղորդակցության թեմայով լիագումար նիստի մասնակիցների համար «Կորպորատիվ Ամերիկա» ընկերությունը ներկայացրել է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի», իսկ նիդեռլանդական ծագման «ՎիմպլԿոմ» ընկերությունը՝ կապի ոլորտում իրենց ներդրումների ու գործունեության հաջող փորձի վերաբերյալ շնորհանդեսներ:

¹ 12.10.2016թ. ԱՄՆ, Նյու Յորք, «Հայաստան» ներդրումային համաժողով:

Ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է կատարել SS շրջանավարտների որակավորման բարձրացում արտասահմանում, սկսնակ ընկերությունների համար վենչուրային և ֆինանսավորման այլ մեխանիզմների ստեղծում: Անհրաժեշտ է նաև կառուցել նոր տեխնոպարկեր և ինկուբատորներ, ստեղծել խոշոր վենչուրային հիմնադրամ, ընդլայնել հայկական շուկայի ծավալները տեղական SS արտադրանքի և ծառայությունների համար, մեծացնել օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները:

ԿԱՊԻ ՈԼՈՐՏԸ ՀԱՄԱԽԱՆՈՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՒՍԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, տ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածում քննարկվում են ՀՀ տնտեսությունում կապի ոլորտի դերի և տնտեսական աճի գործընթացում վերջինիս մասնաբաժնի փոփոխության հարցերը: Տնտեսական աճի պրոբլեմի փոխկապակցությունը մյուս տնտեսական պրոբլեմների հետ արտահայտվում է նրանով, որ վերջիններիս նպատակը ի վերջո լայն իմաստով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումն է: Հոդվածում հաշվարկվել են կոռելացիայի և դետերմինացիայի գործակիցները, համաձայն որի պարզվել է, որ ուսումնասիրվող երևույթների միջև կապն ուղիղ է, բայց շատ թույլ:

***Բանալի բառեր.** կապի ոլորտ, տնտեսական աճ, ՀՆԱ, օտարերկրյա ներդրումներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, հասույթ, կոռելացիա, դետերմինացիա:*

ОТРАСЛЬ СВЯЗИ В ОБЕСПЕЧЕНИИ ВВП И АНАЛИЗ ИХ ВЗАИМОСВЯЗИ

МЕРИ ГАГИКОВНА МАНУЧАРЯН, к.э.н.

научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В статье рассматриваются вопросы, связанные с ролью отрасли связи в экономике РА и изменением ее доли в процессе обеспечения экономического роста. Взаимосвязь проблемы экономического роста с другими экономическими проблемами проявляется в том, что их целью в конечном счете является обеспечение социально-экономического развития страны. Расчет автором коэффициентов корреляции и детерминации позволил сделать вывод, что между исследуемыми явлениями существует прямая, но очень слабая связь.

***Ключевые слова:** отрасль связи, экономический рост, ВВП, иностранные инвестиции, информационные технологии, выручка, корреляция, детерминация.*

THE ROLE OF COMMUNICATIONS INDUSTRY IN ENSURING GGDP GROWTH AND THE ANALYSIS OF THEIR INTERPLAY

MERI GAGIK MANUCHARYAN, Ph.D. Candidate of Sciences (Economics)

Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article discusses the issues that are related to the role of the communications industry in the economy of Republic of Armenia and the changes in its share in the process of ensuring the economic growth. The interplay of economic growth related issue with the other economic problems ultimately affects the socio-economic development of the country. Calculation of the coefficients of correlation and determination by the author allowed concluding that between the studied phenomena there is a direct but very weak relationship.

***Keywords:** Communications industry, economic growth, GDP, foreign investment, information technology, revenue, correlation, determination*

ԱՉԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԶՅ-ՈՒՄ

Ցանկացած պետության կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենսամակարդակի բարելավումն է: Շուկայական տնտեսության պայմաններում ազգաբնակչության զբաղվածության վիճակն էական ազդեցություն ունի կենսամակարդակի բարելավման վրա, քանի որ դրա արդյունքում ստացված վարձատրությունը հանդիսանում է եկամուտների ամենակայուն և հուսալի աղբյուրը: Եկամուտների աճը պայմաններ է ստեղծում կյանքի որակը բարելավելու համար: Կենսամակարդակը ներկայացվում է որպես երկրի բնակչության կյանքի պայմանների ամբողջություն, որը համապատասխանում է նրա տնտեսական զարգացման ձեռք բերած մակարդակին: Կենսամակարդակը բնութագրող ոչ բոլոր ցուցանիշներն են, որ ընդհանրական են երկրների համար: Կան երկրներ, որտեղ կարևորվում է բժշկական ապահովագրությունը, ուրբանիզացման մակարդակը, սակայն գոյություն ունեն կենսամակարդակը բնութագրող հիմնական ամփոփ ցուցանիշներ, որոնք ընդհանրական են շատ երկրների համար: Դրանք են՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ, տնային տնտեսությունների (SS) կողմից սպառված ապրանքների ու ծառայությունների ծավալը, ծնելիության և մահացության ցուցանիշները, միջին ամսական անվանական աշխատավարձը, ամսական կենսաթոշակի միջին չափը, տնտեսապես ակտիվ բնակչությունը, գործազրկության մակարդակը, զբաղվածության մակարդակը, նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը մեկ շնչի հաշվով, կրթական տարբեր մակարդակների բնակչության թիվը, բնակչության բաշխումն ըստ եկամտային խմբերի և այլն:

Բնակչության բարեկեցության և կենսամակարդակի գնահատման կարևոր ցուցանիշ է հանդիսանում աղքատության մակարդակը: Ըստ ՄԱԿ-ի՝ աղքատությունը ներառում է գործազրկությունը, որը բնորոշվում է որպես եկամտային աղքատություն և բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունների սահմանափակություն և հասանելիություն: Ֆրանսիացի տնտեսագետ Վիմոնտը գտնում է, որ գործազրկության լուծման համար կարևոր նշանակություն ունի աշխատանքի արտադրողականությունը, քանի որ հենց բարձր արտադրողականություն ունեցող ճյուղերն են ապահովում տնտեսական աճ, ազդում են գործազրկության մակարդակի վրա և միաժամանակ ստեղծում նոր աշխատատեղեր: Ընդ որում՝ դրանց ազդեցությունը զբաղվածության ընդհանուր մակարդակի վրա կլինի համարված ցածր արտադրողականության մակարդակ ունեցող ճյուղերի զարգացմամբ, որոնք ունեն էական սոցիալական օգտակարություն, և որոնց գործունեությունը կարող է ֆինանսավորվել տնտեսական աճի արդյունքում ձևավորվող եկամուտների հաշվին¹:

Միջազգային կառույցների գնահատմամբ աղքատության պատկերը Հայաստանում շատ ավելի տխուր է: Մասնավորապես, եթե ըստ ԱՎԾ-ի՝ ամսական 41 հազար 698 դրամից ավելի եկամուտ ունեցողը աղքատ համարվել չի կարող, ապա Համաշխարհային բանկի (ՀԲ) ուսումնասիրությունների համաձայն՝ Հայաստանում 2 միլիոնից ավելի մարդ աղքատ է, քանի որ նրանց ամսական եկամուտը չի գերազանցում 72 հազար դրամը (ՀԲ-ը որպես չափանիշ վերցրել է օրական 5 դոլար եկամուտը)²: Ըստ «Հազարամյակների զարգացման նպատակներ» զեկույցի՝ օրական 1.25-2 ԱՄՆ դոլարով գոյատևողը համարվում է չափավոր աղքատ, իսկ 2-4 ԱՄՆ

¹ VIMONT CL. Evolution demographique, marche du travail et croissance de la productivite//Problemes econ.-P., 2000- N 2656/2657. -P. 38-31.

² <http://www.azatutyun.am/a/28217530.html>

դուլարի դեպքում՝ գրեթե աղքատ¹: 2015թ. աղքատության մակարդակը կազմել է 29.8%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 0.2 տոկոսային կետով: Ընդ որում, ծայրահեղ աղքատ բնակչության մակարդակը նվազել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 2.0%: 2015թ. աղքատության խորությունը գնահատվել է 4.7%՝ 2014թ. 4.5%-ի համեմատ, իսկ աղքատության սրությունը մնացել է անփոփոխ՝ կազմելով 1.3%²:

Բնակչության կրթական մակարդակի բարձրացումը ազդում է բնակչության վերարտադրության վրա մի քանի ուղղություններով: Որպես կանոն, բարձր կրթական մակարդակով ընտանիքներում նվազում է երեխաների թիվը, բայց ապահովվում է նրանց բարեկեցությունը, առողջությունը և աճող սերնդի կրթությունը: Աշխատանքային միգրանտների աճող քանակը կարևոր ազդեցություն ունի վերարտադրության վրա, քանի որ բնակչության այս հատվածը չի մասնակցում իրենց երկրում վերարտադրության գործընթացին: Իրականում ծնելության սանդղակը կարող է ավելի բարձր լինել, քանի որ այս միգրանտները ընդգրկված չեն ռեզիդենտ բնակչության մեջ³:

Ընդունված է, որ կրթական մակարդակի բարձրացումը ազդում է նաև ամուսնական տարիքի վրա, այսինքն՝ ամուսնանում են կրթություն ստանալուց և աշխատանք ձեռք բերելուց հետո, ավելի ուշ տարիքում են ունենում առաջին և, հատկապես, երկրորդ երեխաներին: Աճել է կնոջ ամուսնական տարիքը, որի միջինը 2015թ. կազմել է 28 տարեկան, այն դեպքում երբ տասը տարի առաջ այդ ցուցանիշը կազմում էր 23 տարեկան⁴: Արդյունքում ընկել է նաև պտղաբերության գործակիցը: Մեկ կնոջը բաժին է ընկնում 1,6 երեխա: Բնակչության կրթական մակարդակը որոշում է աշխատանքային ռեսուրսների օգտագործման հնարավորությունը ժամանակակից աշխատանքային ձևերում և դրանով ապահովում բարձր մասնագիտական որակավորում:

Իրավագետ Լ. Բարնետը գտնում է, որ կրթության զարգացման և եկամուտների ավելացմանը զուգընթաց աշխարհի բնակչության աճը լրջագույն խնդիր է և անհրաժեշտություն է առաջանում այն սահմանափակել: Այսպիսով, որքան բարձր է երկրում բնակչության կրթական մակարդակը, այնքան դանդաղ է վերարտադրության գործընթացը⁵:

Բարձր մասնագիտական որակավորում ունեցող կանայք ավելի հաճախ են ամուսնալուծվում, քանի որ վստահ են իրենց նյութական ապահովվածության վրա: Այդ ամենը վկայում է ծնելիության մակարդակի իջեցման հավանականության մասին՝ կախված բնակչության կրթական մակարդակի հետագա զարգացմամբ: Առողջությունը բնակչության կենսունակության համար դիտվում է որպես հիմնական հատկություն, հնարավորություն տալով արդյունավետ կատարել իր սոցիալական և կենսաբանական գործառնությունները կյանքի կոնկրետ պայմաններում:

Ժողովրդագրության մեջ բնակչության առողջապահությունը ուսումնասիրում է նոր սերնդի կենսական և կայուն վերարտադրության տեսակետից: Առողջապահություն հասկացությունը ներառում է երկարակեցությունը, ստեղծագործական և աշխատանքային ակտիվության երկարատև պահպանումը՝ հիվանդության և տառապանքի բացակայության պայմաններում: Այսպիսով, առողջապահության հասկացության մեջ ներառվում է ինչպես ֆիզիոլոգիական հատկությունները՝ հիվանդության առկայությունը կամ բացակայությունը, այնպես էլ բնակչության սոցիալական ընդունակությունները՝ երկար ապրելու և ակտիվ աշխատելու ունակությունները: Առողջապահության այդպիսի հասկացությունը համապատասխանում է ինչպես մարդկանց կենսաբանական իրավիճակին, այնպես էլ կոնկրետ սոցիալական, տնտեսական, էկոլոգիական կյանքի պայմաններին, որոնցից էլ կախված է բնակչության կենսունակությունը: Այդ պատճառով էլ բնակչու-

¹ www.worldbank.org/topic/poverty

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, էջ 106:

³ VOLUME 19, ARTICLE 25, PAGES 973-1018 PUBLISHED 01 JULY 2008 <http://www.demographic-research.org/Volumes/Vol19/25/> DOI: 10.4054/DemRes.2008.19.25 Research Article Slovakia: Fertility between tradition and modernity Michaela Potančokovna Boris Vaňo Viera Pilinská Danuša Jurčovníková p. 1005.

⁴ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2015, էջ 98:

⁵ [Larry D. Barnett/ Demographic factors in attitudes towards population growth and control, Journal of Biosocial Science /Volume 4/ Issue 1/ January 1972, https://doi.org/10.1017/S0021932000008300,2008, pp.9-23.](https://doi.org/10.1017/S0021932000008300)

թյան առողջապահությունը սոցիալ-կենսաբանական երևույթ է: Այն կախված է ինչպես մարդկանց օրգանիզմի առանձնահատկություններից, այնպես էլ կյանքի արտաքին պայմաններից: Բնակչության կյանքի որակը բնութագրող ցուցանիշներին զուգահեռ, վիճակագրական ցուցանիշների համակարգում կարևոր տեղ են զբաղեցնում բնակչության առողջության վիճակը, կրթական մակարդակի ու մշակութային զարգացումները բնութագրող ցուցանիշները: Ներկայացնենք ՀՀ-ում կենսամակարդակի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշներն ստորև բերված աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 1

ՀՀ-ում կենսամակարդակի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները 2011-2015թթ.¹

Անվանումը	2011	2012	2013	2014	2015
Միջին ամսական անվանական աշխատավարձը (դրամ)	108092	140739	146524	158580	171615
Նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը (դրամ)	27 062	29 696	29 122	35 813	40 441
Սպառողական գների ինդեքս (%)	104.7	103.2	105.6	104.6	99.9
Տնտեսապես ակտիվ բնակչություն	1440.9	1418.3	1388.4	1375.7	1 316.4
Տնտեսական ակտիվության մակարդակ (%)	63.0	62.7	63.4	63.1	62.5
Գործազրկության մակարդակ (%)	18.4	17.3	16.2	17.6	18.5
Զբաղվածության մակարդակ (%)	51.4	51.9	53.2	52.0	50.9
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (դոլար)	3 363	3 293	3 680	3 852	3 504
Նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը մեկ շնչի հաշվով (դրամ)	45736.8	41816.6	52038.5	57 927.6	54 413.6

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ 2015թ.-ին 2014թ.-ի համեմատությամբ միջին ամսական անվանական աշխատավարձն ավելացել է 13035 դրամով, նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը ավելացել է 4628 դրամով, սպառողական գների ինդեքսը նվազել է 4.7 տոկոսային կետով, տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը նվազել է 59300-ով, տնտեսական ակտիվության մակարդակը նվազել է 0.6 տոկոսային կետով, ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով նվազել է 348 դոլարով, և նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը մեկ շնչի հաշվով նվազել է 3514 դրամով: Ինչպես տեսնում ենք նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը 2015թ. կազմել է 40441, մինչդեռ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը մեկ շնչի հաշվով կազմել է 54 413.6:

Տնտեսության զարգացման և ազգաբնակչության կենսամակարդակի բարելավման գործում մեծ նշանակություն ունի եկամուտների ծավալների ավելացումը, քանի որ վերջինս խթանում է գնողունակ պահանջարկը և դրական ազդեցություն է գործում ամբողջ տնտեսության զարգացման վրա: Ուստի փորձենք անդրադառնալ անցումային տնտեսություններում եկամուտների ծավալների ազդեցությանը կենսամակարդակի բարելավման վրա:

Целью данного исследования является оценка экономического эффекта от внедрения информационных технологий в лечебных учреждениях на примере реально действующей МИС работающей в ЗАО «Республиканский Медицинский Центр «АРМЕНИЯ».

Успех внедрения информационной системы в РМЦ «АРМЕНИЯ» обусловлен выбором качественной и инновационной модели информационной системы. Данная система основана на использовании системы реляционных баз данных, с использованием облачных технологий на основе специальной операционной системы для бизнеса «ЗОНО». В основе данной системы лежат следующие принципы:

- ведение единой персонифицированной базы данных пациентов, позволяющей оперативно получать объективную информацию в различных аспектах в зависимости от потребностей;
- создание единого информационного пространства посредством использования облачных технологий в рамках глобальной сети «Интернет»;
- обеспечение информационной безопасности и несанкционированного доступа к базам данных;
- использование клиент-серверных технологий как программной основы для построения единого информационного пространства;
- поточность разработки и внедрения различных модулей программы.

За счет использования единого справочного аппарата значительно сократился объем вводимой информации, повысилась ее достоверность. С помощью действующей МИС проводится учет оказанных медицинских услуг, по платным и договорным услугам, экономический и статистический анализ деятельности РМЦ, контроль качества оказания медицинских услуг, а также выполнение сервисных функций (резервное копирование и архивирование базы данных, пристраивание модулей системы и возможность расширения системы). Данная МИС позволяет управленческому аппарату медицинского центра оперативно получать информацию о различных аспектах деятельности учреждения и своевременно принимать необходимые, обоснованные управленческие решения. За счет использования комплекса достигается значительная экономия времени при составлении статистических и финансовых отчетов. Отчеты формируются автоматически, практически без больших временных затрат.

В связи с тем, что отдача от внедрения медицинских информационных технологий (ИТ) в целом складывается из экономии средств по отдельным направлениям их расходования, то оценки достигаемого экономического эффекта могут быть получены путем выявления как можно более полного спектра преимуществ, обеспечиваемых информационными системами. Основной сложностью приложения общего подхода к проектам внедрения информационных технологий в здравоохранении является экономическая оценка их результатов. Существует мнение, что внедрение медицинских информационных технологий, собственно как любых информационных технологий, имеет исключительно затратный характер, а их отдача выражается не стоимостными показателями, а только качественными: повышением качества медицинского обслуживания, облегчением работы медицинского персонала, улучшением здоровья пациентов и т. д. Такое мнение возникло из-за отсутствия не реальной экономической выгоды, обеспечиваемой информационными технологиями, а из-за разработанных методов измерения экономического эффекта. Экономическая эффективность определяется соотношением затрат и полученного результата; совокупной оценкой, характеризующей основные экономические показатели: выручка (ΔR), прибыль (ΔV), количество услуг (ΔU)¹. Экономический эффект от использования ИТ в медицинском учреждении может оцениваться величиной годовой экономии от снижения затрат на обслуживание одного пациента. В нашем исследовании была посчитана реальная эффективность от внедрения специализированной медицинской информационной системы в Республиканском

¹ Girosi F., Meili R., Scoville R. Extrapolating evidence of health information technology savings and costs. - Santa Monica, Calif.: RAND Corporation, 2005. - 345p.

Медицинском Центре АРМЕНИЯ. Прирост прибыли за счет снижения себестоимости посещений после внедрения ИТ определялся по следующей формуле:

$$\Delta V = (C_d - C_n) \times n_p \quad (1)$$

где C_d и C_n – себестоимость (затраты на обслуживание одного посетителя) одного посещения до и после внедрения МИС, тыс. драм;

n_p – количество посещений после внедрения МИС за год.

Количество услуг (в данном случае – посещений) определялось путем хронометража с использованием информационной системы и путем ручного ввода информации. Полученные результаты сравнивались. Так в 2016 году выписалось из медицинского центра 14 760 пациентов. Себестоимость лечения одного выписанного пациента до внедрения МИС в 2013 году составляло примерно 120 тыс. драм, тот же показатель после внедрения МИС в 2016 году составил примерно 117,6 тыс. драм. Фактически прирост прибыли себестоимости после внедрения МИС составил около 36 000 тыс. драм.

Выручка оценивалась по следующей формуле:

$$\Delta R = N_{\text{услуг}} \times P_{\text{ср}} \quad (2)$$

где $N_{\text{услуг}}$ – количество услуг (посещений);

$P_{\text{ср}}$ – средняя стоимость услуги.

По результатам 2016 года выручка от лечения больных в стационаре превысило 1 883 млн. драм, при средней стоимости услуг – 127,6 тыс. драм. Выгоды от внедрения информационных технологий реальны. В общем случае к первичным выгодам относятся:

- информированность руководства;
- снижение затрат труда на учет;
- уменьшение потерь от погрешностей учета;
- повышение точности и оперативности текущих управленческих процедур.

В результате проведенного исследования было доказано, что внедрение специализированной МИС позволило получить годовую экономию в сумме 48 тыс. драм. на одно рабочее место. Затраты на внедрение описанной МИС окупятся в течение 2-3 лет. Производительность труда медицинских работников возросло в среднем на 20%, что позволило увеличить количество принятых пациентов врачом на 3 человека в день. Это подтверждает экономический эффект от внедрения информационных технологий в медицинских учреждениях.

Информационные технологии в медицине – один из способов и конкретных путей перехода к инновационной экономике. Внедрение информационных технологий в работу лечебных учреждений (на примере Республиканского медицинского центра) позволит повысить производительность труда медицинских работников. Внедрение информационных технологий в медицине позволяет улучшить качество обслуживания пациентов, способствует оказанию медицинской консультации большему количеству пациентов без потери качества, содействует скорости доступа к данным каждого пациента.

Перспективные инновации и конкурентоспособные промышленные решения и технологии являются составной частью такой новой области, как инновационная экономика. Информатизация здравоохранения позволяет выйти на новый, более качественный и перспективный уровень развития здравоохранения.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

ՆՈՐԱՅՐ ՄԱՐԱՏԻ ԶՐՄՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Համառոտագիր

Հոդվածում քննարկվում է բժշկական հաստատություններում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման հարցերը: Կատարվել է «ԱՐՄԵՆԻԱ» ՀԲԿ ՓԲԸ-ի և նրա ենթակառուցվածքների մասնագիտացված բժշկական տեղեկատվական համակարգի և դրա ֆունկցիոնալ հնարավորությունների վերլուծություն, դրա դերը բժշկական կենտրոնի գործունեության համակողմանի վերլուծության մեջ: Հիմնավորվել է բժշկական հաստատություններում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման տնտեսական արդյունավետությունը: Մշակվել է բժշկական հաստատություններում տեղեկատվական համակարգի ներդրման արդյունավետության գնահատման ալգորիթմը:

Բանալի բառեր. առողջապահության ինֆրամատացում, բժշկական տեղեկատվական համակարգ (ԲՏՀ), առողջապահության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման արդյունավետությունը:

ПОВЫШЕНИЕ ЭФФЕКТИВНОСТИ УПРАВЛЕНИЯ В СФЕРЕ ЗДРАВООХРАНЕНИЯ ПУТЕМ ВНЕДРЕНИЯ СПЕЦИАЛИЗИРОВАННЫХ ИНФОРМАЦИОННЫХ СИСТЕМ

НОРАЙР МАРАТОВИЧ КРМОЯН

аспирант Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В статье рассмотрены вопросы внедрения информационных технологий в учреждениях здравоохранения. Проведен анализ специализированной медицинской информационной системы, а также ее функциональных возможностей ЗАО РМЦ «АРМЕНИЯ» и его инфраструктуры, представлена роль системы в комплексном анализе деятельности медицинского центра. Обоснована экономическая эффективность внедрения информационных технологий в медицинских учреждениях. Разработан алгоритм оценки эффективности внедрения медицинской информационной системы в медицинских учреждениях.

Ключевые слова: информатизация здравоохранения, медицинская информационная система (МИС), эффективность от внедрения информационных технологий в медицине.

THE EFFICACY OF MANAGEMENT IN THE HEALTHCARE THROUGH THE IMPLEMENTATION OF SPECIALIZED INFORMATION SYSTEMS

NORAYR MARAT KRMÖYAN

Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article discusses the issues of introducing the information technology in the health care institutions. The analysis of the Republican Medical Center "Armenia" CJSC and its infrastructure of specialized medical information technology and its functionality is carried out, and the role of the system within the comprehensive analysis of the performance of the medical center is provided. Economic efficacy of introducing information technology in medical institutions is justified. An algorithm for assessing the efficacy information technology if introduced in healthcare institutions is elaborated.

Keywords: Utilization of information technology in the healthcare institutions, medical information system (MIS), efficacy of introducing information technology in healthcare institutions

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՌՈՐԲԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող, բաժնի վարիչ*

ԱՐՏԱԿԱԶԴ ՍՈՒՐԵՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ,*

ՀՃՊՀ Էկոնոմիկայի և մենեջմենթի ամբիոնի վարիչ

«ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ...» ՊԱՏՄԱԲԱՆԸ

Գիտության փորձը, նոր նյութերի շրջանառությունն ու չուսումնասիրված օղակները, միշտ էլ հնարավորություն են տալիս ընդլայնելու այս կամ այն մտածողի հայացքների մասին պատկերացումները: Քիչ ուսումնասիրություններ չեն գրվել տնտեսագետ Ավետիք Արասխանյանի տնտեսագիտական հայացքների վերաբերյալ: Խոսքը վերաբերում է նրա «Die französische Getreidehandelspolitik bis zum Jahre 1789 on Jhrem Zussmenhange mit derland, Volks und Finanzwizhschaft Frankreichs» ուսումնասիրությանը (հրատարակված է Լեյպցիգում 1882-ին անվանի տնտեսագետ Գուստավ Շմոլերի առաջաբանով), որի համար նրան շնորհվել է իրավական և քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Արասխանյանի տնտեսագիտական հայացքները բնութագրող աշխատություններում, նշված մենագրությանը կատարվել է թոռուցիկ անդրադարձ: Վերջինս դարձել է սույն հոդվածի քննության առարկան, որը լրացնում և ամբողջացնում է տնտեսագետի հայացքների պարագծերը:

* * *

Արասխանյանի աշխատությունն արժանանում է եվրոպական երկրների, մասնավորապես Գերմանիայի և Ֆրանսիայի գիտական շրջանների ուշադրությանը: «Գերմանական քաղաքական շաբաթաթերթ»-ում տպագրված գրախոսության հեղինակը նշում է, որ Արասխանյանը տնտեսական երևույթները քննելիս առաջնորդվում էր ոչ թե «տիեզերական ռեցեպտներով», այլ ինքնուրույն վերլուծական մեթոդով, և որ աշխատությունը «կատարելապես» հաջողված լինելով, շնորհում է մեզ մի վերին աստիճանի հետաքրքիր և ուսանելի ընթերցանություն¹:

Աշխատության առաջին մասը՝ Ֆրանսիայում հացահատիկային առևտրի մունիցիպալ կանոնակարգման պատմությունն է XIII-XIV դարերում, այդ կանոնակարգման օրենսդրական ակտերի խրոնոլոգիան, ժամանակի ընթացքում կատարվող որոշակի տարրերի համալրումների պատմությունը: Պատմական դպրոցի հետազոտական մեթոդին բնորոշ պատմողական ծավալումները, պայմանավորված նյութի առանձնահատկություններով, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում խնդրի համակարգման առաջին փորձի առումով և հավակնում սկզբնաղբյուրի: Հացահատիկը «ժողովրդի հիմնական սննդամթերքի», «առևտրի ամենատարածված առարկան ցանկացած արդյունաբերական զարգացման անհրաժեշտ նախապայմանի», «աշխատավարձի չափի կարգավորիչի», «վճարման միջոցի» և այլ հատկություններով, իր ազդեցություններն է ունեցել «ազգային քաղաքական, սոցիալական և տնտեսական ոլորտների փոփոխությունների վրա, շատ կողմերով արտահայտում է քննարկվող ժամանակաշրջանի՝ որպես ժողովրդատնտեսական քաղաքականության մեջ գերակշռող դերի առանձնահատկությունը:

¹ «Արձագանք», 1883թ. №30 (շաբաթաթերթը տպագրել է նշված գրախոսությունն ամբողջությամբ):

Տրանսիայում մունիցիպալ մակարդակով հացահատիկի քաղաքականությունը դարերի պատմությունն ուներ՝ սկսած Գալիայի հռոմեական տիրապետության ժամանակներից, որը երկրի թագավորական իշխանությունները ժառանգել էին «առանց վերապահումների»: Հայտնի է, որ XII դարից աստիճանաբար քաղաքային կառուցվածքը, քաղաքական կյանքը Եվրոպայում ընդունում է հաստատուն ձևեր: Վանքերը, միջնադարյան դղյակները, գյուղերը վեր էին ածվում քաղաքների: Ինչպես բնութագրել է հետազոտողներից մեկը, նույնիսկ «ուշ միջնադարում քաղաքային կյանքը դեռևս ընթանում էր գյուղական մթնոլորտում»¹: Այդ իմաստով էլ Արասխանյանը միջնադարյան քաղաքների առանձնահատկությունը դիտում էր այն, որ դրանք «կիսով չափ կազմված էին գյուղատնտեսական համայնքներից»: Բնակչության աճի հետ անհրաժեշտություն էր առաջանում հարակից գյուղական շրջաններից գյուղատնտեսական մթերքներով ապահովումը, ձևավորելով քաղաքային շուկան: Քաղաքային իշխանությունների գլխավոր խնդիրը դառնում է էժան գներով սննդամթերքի համաչափ ապահովումը: Պահանջվեցին հարյուրամյակներ մինչ այդ «տեղական էգոիզմը» ենթարկվեց որոշակի օրենսդրական նորագոյությունների: Կառավարման համակարգի դեկին ի սկզբանե Փարիզի ինքնավար իշխանությունն էր, հետագայում՝ առևտրականների գիլդիայի ղեկավարը և քաղաքի ավագանին, ավելի ուշ՝ թագավորական իշխանությունը մարմնավորող կառավարիչը և այլն, որոնք համապատասխան շահերից ելնելով շուկայական օրենսդրության մեջ կատարում էին վերանայումներ, որոնց հանգամանորեն անդրադառնում է Արասխանյանը:

Նեղ մասնագիտական առումներից դուրս որևէ հետաքրքրություն չի ներկայացնում ցորենի առևտրի օրենսդրական ակտերի այդ ամբողջ փոփոխությունների պատմության շարադրանքը: Բայց այդ նորոգության մեջ ուշադրության են զարնում որոշակի տարրերի առկայության հանգամանքը, որը շատավիղ է գծում շուկայական հարաբերությունների էվոյուցիայի պատկերացումների առումով:

Մի քանի ուշագրավ վկայակոչումներ.

- «Բլատիերները (ցորենի առևտրով զբաղվածները - Ռ.Ս.), առևտրի ժամանակ միմյանց չպետք է խանգարեն, այնպես, ինչպես քաղաքացիները»,
- «Թույլ չէր տրվում ցորենի առևտրով զբաղվել անձանց, ովքեր պաշտոն էին զբաղեցնում, ովքեր հեշտությամբ կարող էին չարաշահումներ կատարել և առևտրով զբաղվելիս որոշակի առավելություններ ունենային»,
- «հացահատիկի կշռողները ընտրվում էին ազնիվ քաղաքացու համբավ ունեցող մարդկանցից... պարտավոր էին շուկայում հսկել կարգ ու կանոնը, կանխելիս խարդախ գործարքները: ... Նա իրավունք չունեին զբաղվել հացահատիկի առևտրով կամ Փարիզի որևէ քաղաքացու հաշվին հացահատիկ գնել, եթե վերջինս շուկայում ներկայացուցիչ չունի»,
- ազնվականներին արգելված էր հացի առևտրով զբաղվել, հակառակ դեպքում, «պետք է հրաժարվեին ազնվականի վարքուբարքից... նրանք մինևույն հարկերն ու տուրքերն էին վճարում, ինչ որ մյուս առևտրականները»,
- գործում էին շուկա մտնելու, հացահատիկի որակի, մեծածախ և մանրածախ առևտրականների միջև փոխհարաբերությունները, հացթուխների գործունեությունը, գների վերահսկողությունը, պահեստավորումը և շուկան կարգավորող այլ օրենսդրական ակտեր²:

* * *

¹ Кулишер И.М. История экономического быта западной Европы, Челябинск, 2000, с. 217.

² Awetis Arachianantz, Die französische Getreidehandelspolitik bis zum Shre 1789 in ihrem Zusammenhang mit der land, Volks- und Fiennanzwirthschaft Frunkreichs, Leipzig, 1883, էջ 4-29 (Վ. Դանիլով-Դանիելյանը ԽՍՀՄ շուկայական հարաբերությունների մուտքի սկզբում, 1990-ին այսպիսի մի ընդհանրացում է կատարել. «Արևմուտքում շուկան ձևավորվել է ոչ մեկ հարյուրամյակի ընթացքում (եթե նույնիսկ սահմանափակվենք կապիտալիզմով), այն դարձել է հասարակության մշակույթի տարր, զարգանալով համապատասխան սոցիալական միջավայրում, և իհարկե ներգործելով այդ միջավայրի էվոյուցիայի վրա: Եթե շուկան մշակույթի տարր է, ապա դա և պատմությունն է, և ավանդույթ, և արարողություն, չգրված և գրված օրենքներ: Այդ բոլորը ոչ միայն երկու տարում, երկու հնգամյակում էլ չի ձևավորվի» («Новый мир», 1990, №5, с. 193): Այդ է վկայում Արասխանյանի աշխատությունը):

Արասխանյանն անդրադառնում է այն առանձնահատկություններին, որոնք բնորոշ էին ֆրանսիական հացահատիկային առևտրի քաղաքականությանը սկսած XV դարի վերջերից մինչև XVI դարի վերջերը: Դա, ըստ էության, ներքին առևտրի ազատականացման պայքարի և սկիզբ առնող արտահանման ժամանակաշրջանն էր: XIV դարի 60-ական թվականներից Ֆրանսիայում մարզերն ու երկրամասերը բաժանված էին երկու մեծ քաղաքական խմբերի: Դրանց մի մասը բնորոշվում էր բավական ինքնուրույն կառավարման համակարգով, իսկ մյուսները կախված էին թագավորական կենտրոնական իշխանությունից: Դա նշանակալից չափով պայմանավորեց երկրի հացահատիկային առևտրի քաղաքականության և մաքսային օրենսդրության ձևավորման բնույթը: Սահմանվել էին ներքին մաքսատուրքեր մի մարզից մյուսը ապրանքների տեղափոխման համար: Ֆրանսիայի պետական ֆինանսների հիմնական աղբյուրը հողագործությունից գանձվող հարկերն էին, ինչը նրանում զբաղված աշխատանքը դարձնում էր անարդյունավետ պայմանավորելով դարերի ընթացքում կրկնվող սովը, որը, ինչպես նկատում է Ֆերնան Բրոդելը, «վերադառնում էր համառությամբ, դառնալով մադկանց կենսաբանական ռիթմի տարրը»¹: Արասխանյանն անդրադառնալով 1484թ. բռնկված այդպիսի սովահարությանը, նկարագրում է հետևյալ պատկերը. «շատերը մահացան աղքատությունից ու սովից», շատերը դիմեցին փախուստի դեպի Անգլիա... ոմանք հուսահատությունից սպանեցին իրենց կանանց ու երեխաներին սննդամթերքի բացակայության պատճառով: Բանող կենդանիների պակասի պատճառով շատ տղամարդիկ, կանայք ու երեխաներ իրենք պետք է լծվեին ու հող հերկեին, ոմանք էլ դա անում էին գիշերով, չվճարած հարկերի համար բանտարկվելու վախից: ... հողերի մեծ մասը մնում էին անմշակ»²: Ու, թեև XI դարի վերջերից Ֆրանսիայի առանձին շրջաններում «վաղ ճորտատիրության» փոխարեն կարելի էր հանդիպել «առավելապես հարկատու գյուղացիների», այնուհանդերձ դեռ ժամանակ պահանջվեց մինչև գյուղացիության ճորտային կախվածության լրիվ վերացումը: Ընդ որում XIII դարից սկիզբ առած ճորտատիրության վերացմանն ուղղված շարժումը, որոշակի աջակցության էր արժանանում նաև թագավորի կողմից, գտնելով որ «ավելի լավ է ունենալ հարկատու հպատակներ, քան դժգոհ ճորտեր»: XIV-XV-XVI դարերում թագավորական հրամանագրերը նպատակ ունեին «բոլոր հողատերերի համար ճորտատիրության վերացումը դարձնել պարտադիր»: XVII դարում արդեն առկա էր ճորտատիրության «մեղմ տեսակը»: Այդ ամենն իր ազդեցությունն էր ունենում հացահատիկային արտադրության և դրանով պայմանավորված հացահատիկային առևտրի ծավալների ու քաղաքականության վրա: Այս վերջին իմաստով հացահատիկային առևտուրը ուներ միջմարզային բնույթ: Արտաքին առևտրի կարգավորմանն ուղղված որոշակի միջոցառումները, ըստ էության սկսվում է XV դարից: Արասխանյանի աշխատության մեջ ներկայացվում է միջմարզային առևտրի ազատականացման, մաքսատուրքերի, «թագավորական իրավունքով» արտաքին առևտրի ազատությունների ու սահմանափակումների և այլ հարցերի վերաբերյալ դարեր ձգվող կոնկրետ պատմական բովանդակությունը հրովարտակների ու էդիկտների մեջ:

* * *

Ֆրանսիայի թագավոր Հենրիխ IV նախարար Սուլլիով սկսվում է մի նոր ժամանակաշրջան հացահատիկային առևտրի քաղաքականության պատմության մեջ: Հայտնի է Հենրիխ IV այն արտահայտությունը, թե «ամեն մի գյուղացի կիրակի օրերին իր ապուրում պետք է հավ ունենա», որը լրացվեց Սուլլիի այն խոսքերով, թե «հողագործությունը և անասնապահությունը պետության համար այն պտուկներն են, որոնք միանգամայն փոխարինում են Պերուի ոսկու հանքերին»:

Ֆրանսուա Քենեն անդրադառնալով Ֆրանսիայի տնտեսական պատմությանը, ժողովրդի վիճակը բարելավելու կենսական հարցի առումով բացառիկ է դիտում Սուլլիի գործունեությունը. «Այդ մեծ նախարարը ճիշտ է որոշել թագավորության տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքները, ելակետ ունենալով, որ թագավորի հարստությունը, պետության հզորու-

¹ Фернан Бродель, Материальная цивилизация, Экономика и капитализм, XV-XVII вв. Т. 1, М. 2006, с. 45.

² Awetis Arachaniantz, Die franzosicede ..., նշվ.աշխ., էջ 46:

թյունը, ժողովրդի երջանկությունը հիմնված է հողից ստացվող եկամուտների վրա, այսինքն՝ գյուղատնտեսության և գյուղատնտեսական արդյունքների արտաքին առևտրի վրա»¹: Արասխանյանն այդ ոգով մեծարում է Սուլլիի տնտեսական քաղաքականությունը, որը հիմնված լինելով որոշակի ուսումնասիրությունների վրա, նրան թույլ տվեց իրականացնելու իր վերաձևումները: Ինչպես, օրինակ, հացահատիկի առևտրի ազատությունը, որը նախորդ ժամանակներում սկզբունքորեն ընդունված չի եղել, ավելին՝ հացահատիկի արտահանումը արգելելը դիտելով որպես «սոցիալական անհրաժեշտություն»: Նա, ըստ էության, տնտեսական քաղաքականության մեջ առաջադրում է սկզբունքներ, որի իրացումները ենթադրում են երկրի ընդհանուր փոխհարաբերությունների ներդաշնակություն: Հացահատիկի արտահանման ազատությունը, որպես երկարատև առևտրային քաղաքականության սկզբունք և միաժամանակ որպես ֆինանսական համակարգի հիմք առաջին անգամ հենց Սուլլիի կողմից է հիմնավորվել: Հացահատիկի առևտրի ազատության և ծաղկող ֆինանսների գաղափարի այդ կապը Սուլլիի մոտ տնտեսական երևույթների խորը ընկալման արդյունք էր, ըստ որի ժողովրդի շահերն ամբողջովին համընկնում էին պետության շահերի հետ և միմյանց փոխապայմանավորում»²: Խնդիրը կարևոր էր ոչ միայն որպես «նորություն», այլ, որ նա այդ համոզմունքը «գուտ տեսականից տարավ գործնական ոլորտը»: Արասխանյանը վերլուծում է Ֆրանսիայի տնտեսական շարժման նախորդ ընթացքը, ընդհանրացնելով այն հանգուցային կետերը, որոնք, ըստ էության, պայմանավորել են Սուլլիի վերակառուցման ծրագրի ուղղությունները, կապված պետական պարտքը մարելու, հարկահավաքման ծախսերը նվազեցնելու և պետական եկամուտները ավելացնելու հետ: Սուլլիի ծրագրի կարևոր բաղկացուցիչներից էր հարկային համակարգի փոփոխությունը, որը ենթադրում էր ժամանակին գործող տնտեսական կողմնորոշիչների փոփոխություն: Պետական պարտքի մարումը ոչ թե հարկերի աճի միջոցով, այլ «գյուղացիների հարկատու լինելու ունակությունն ավելացնելու միջոցով», որը կարող էր միայն ինչպես հացահատիկի, այնպես էլ գյուղատնտեսության այլևայլ ոլորտների արտադրության աճի պայմաններում: «Եզրակացնելով բոլոր այն պահերը, որոնք որոշիչ կերպով ազդում էին Սուլլիի հողագործության և հացահատիկային քաղաքականության վրա, - նկատում է Արասխանյանը, - գալիս ենք այն արդյունքին, որ այդ քաղաքականությունը թելադրված էր ոչ թե պատահական իրադարձություններով, այլ ուղղորդվում էր գիտակցված և փաստերով հիմնավորված սկզբունքներով: Պետական եկամուտն ավելացնելու և ապահով դարձնելու ցանկությունը, Սուլլիին բերեց ժողովրդի ընդհանուր բարեկեցության անհրաժեշտության մտքին: Դա, ըստ իրեն, այն ժամանակվա ֆրանսիական հարաբերությունների պայմաններում, հնարավոր էր միայն գյուղատնտեսության՝ բոլոր իր ճյուղերով հանդերձ, աջակցության շնորհիվ: Դա նրան կրկին հնարավոր էր թվում միայն, մի կողմից գյուղացուն՝ կառավարման և ֆիսկալ մարմինների կամայականությունից հեռու և ապահով պահելով, և մյուս կողմից հացահատիկի ներքին և արտաքին առևտրի ազատության միջոցով արտադրանքի ապահովման և իրացման շնորհիվ»³: Եվ Սուլլին գտնում էր, որ Ֆրանսիան տնտեսական առումով միայն հողագործության համար է ստեղծված, իսկ մանուֆակտուրային արտադրությունը (բացառությամբ որոշ տեսակների) պետք է «թողնվեն արտասահմանին»: Հացահատիկային արտադրության աճը և ազատ առևտուրը հնարավորություն կտա «երկիր բերել օտար փող, որը կբաժանվի հացահատիկի արտադրողներին, «ըստ յուրաքանչյուրի մասնակցության չափի և առևտրականների միջև»: Սուլլիի այս ծրագիրը ենթադրում է մի «ավելի բարձր ներդաշնակության ծրագիր», որպես «Աստծո կողմից տրված ներդաշնակություն»: Փաստորեն Սուլլին առաջադրում էր աշխատանքի միջազգային բաժանման, երկրների մասնագիտացման գաղափարը, որը տարբեր պետությունների փոխկախվածության արդյունքում, որպես մի տնտեսական ամբողջություն, նրանք «չկարողանան առանց միմյանց յուրա գնալ», որը և կդառնա «դրանց միջև խաղաղություն տիրելու ամենաբարձր երաշխիքը»⁴:

¹ Франсуа Кенэ, Избранные экономические произведения, М., 1960, с. 99:

² Awetis Arachianantz, Die franzosicede ..., նշվ.աշխ., էջ 60:

³ Awetis Arachianantz, Die franzosicede ..., նշվ.աշխ., էջ 75:

⁴ Awetis Arachianantz, Die franzosicede ..., նշվ.աշխ., էջ 86:

Ա.Արասխանյանը 1610-1660-ական թվականները առանձնացնում է որպես մի ժամանակաշրջան, որում հացահատիկի վերաբերյալ օրենսդրությունը մնացել էր նույնը. բնորոշ Սուլլիի ժամանակներին: Թեև առկա էր առևտրի ազատություն, բայց այն շնչավորվեց հիմնավոր տեղաշարժերով: Սուլլիի ռեֆորմները հետագա ժամանակաշրջանի առումով կարող էին առավել արդյունավետ լինել իրենց շարունակական ընթացքի մեջ: Մինչդեռ Հենրիխ IV և Սուլլիից հետո «սառեց այդ ոգին»: Թվում էր, թե նշված երկու ժամանակահատվածների «նպատակները նույնն էին՝ խոշոր հանրային աշխատանքներ, որոշակի հարկերի և պետական աշխատողների քանակի կրճատում, օտարված պետական տարածքների և գույքի ետգնում, անասնաբուծության և ագրարային տնտեսության զարգացում, առևտրի խոչընդոտների վերացում, ...սակայն բաց էր այս ամենին ուղղված օրենսդրության կիրառումը»¹: Հարկային ճնշման, պետական պարտքի խելագար աճի, ցանքատարածությունների կրճատման, երկրում սկիզբ առած քառասյին կացության և այդ ընթացքում հացահատիկի վերաբերյալ ընդունված շուրջ 161 օրենքները կիսատ պռատ գործողության արդյունքում ճյուղի արտադրությունը դարձնում էին ավելի անարդյունավետ: Դրանով պիտի բացատրել Ֆրանսիայում պարբերաբար կրկնվող սովահարությունները: Արասխանյանն առանձնացնում է երեք հիմնական պատճառներ, որոնք պայմանավորեցին 1660թ. Ֆրանսիայի տնտեսության ճգնաժամային կացությունը «1) ցածր արտադրությունը երկրի ներքում, 2) փոփոխությունը գյուղատնտեսության և հացահատիկային առևտրի Ֆրանսիայի արդյունաբերության և ընդհանուր արտաքին առևտրի նկատմամբ, 3) Ֆրանսիայի և ամբողջ եվրոպական հացահատիկային առևտրի կապի փոփոխությունը»²:

Ինչպես հայտնի է, մերկանտիլիզմի քաղաքականության տարրերն արդեն առկա էին Ֆրանսիայի տնտեսության ավելի վաղ շրջանում, երբ մի շարք ապրանքների գծով արգելվում էր արտահանումը, իսկ այլ ապրանքների գծով՝ ներմուծումը: Երկիրն արդյունաբերական առումով հետ էր մնացել մայրցամաքի մյուս զարգացած երկրներից: Երկրում արտոնությունների և սուբսիդիաների միջոցով արմատավորվում էր մանուֆակտուրային՝ հատկապես ճոխության առարկաների արտադրությունը: Այդ քաղաքականությունը շարունակում էր իրականացնել նաև Ռիշելյեն, որը, որպես միջոցառումների որոշակի համակարգ, ձևավորվեց Լյուդովիկոս XIX նախարար Կոլբեռի կողմից, որի անունով էլ այն ստացավ կոլբեռիզմ անվանումը: «Առևտուրը պատերազմ է», իսկ արտասահմանյան շուկաներում եվրոպական մյուս երկրների հետ կարելի է մրցակցել միայն սեփական ապրանքների արտահանության միջոցով: Հիմնվում էին բազմաթիվ մանուֆակտուրաներ, ձեռնամուխ լինում ծովային նավատորմի ստեղծմանը, հրավիրվում մասնագետներ այլ երկրներից և այլն: Մշակվել էր հայրենական արտադրությունը խթանող որոշակի հարկային համակարգ, ուղիներ էին մշակվում սեփական արտադրությունն իրականացնելու գաղութներից ներմուծվող հումքի վրա, միջոցառումներ, որոնք էականորեն նպաստեցին հայրենական արդյունաբերության և առևտրի զարգացմանը: Ինչպես նկատում է Արասխանյանը, Ֆրանսիայի տնտեսական կյանքում ավարտվում է «հացահատիկի առևտրի պատմության դասական շրջանը»³: Նա զուգահեռներ է գծում երկու նախարարների՝ Սուլլիի և Կոլբեռի կողմից իրականացվող քաղաքականությունների միջև: Երկուսի ժամանակ էլ Ֆրանսիայի ազգային հարստության զարգացումը «ոչ միայն խախտվել է, այլ նաև խթանվել»: Խոսքը վերաբերում է «ընդհանուր ազգային հարստությանը» և ոչ առանձին գյուղատնտեսությանը կամ արդյունաբերությանը: Հայրենական հացի արտահանությունն արգելող օրենքները չէին նպաստում գյուղատնտեսության զարգացմանը, իսկ ցածր գները չէին շահագրգռում հողի մշակությանը, հսկայական հողատարածություններ մնում էին անմշակ: Գյուղական աշխատանքը դարձել էր ոչ արդյունավետ, բնորոշ էր դարձել «բնակչության միգրացիան դեպի խոշոր քաղաքներ»: Ֆրանսուա Քենեն, անդրադառնալով Կոլբեռի քաղաքականությանը, նկատում է, թե կառավարությունը կարող է նպաստել առևտրի ծաղկմանը և արդյունաբերության զարգացմանը, միայն մշտապես հոգալով եկամուտների մեծացման մասին, քանի որ միայն եկամուտն է գրավիչ

¹ Նույն տեղում, էջ 100:

² Նույն տեղում:

³ Awetis Arachianantz, Die franzosicede ..., նշվ.աշխ., էջ 110:

դարձնում առևտրականներին և արհեստավորներին ու հատուցում նրանց գործունեությունը. «Անհրաժեշտ է հոգ տանել ծառի արմատների, այլ ոչ թե սահմանափակվել մտահոգվելով ճյուղերի մասին: Թողնենք ճյուղերը... չանտեսենք հողը, որը դրանց զարգացման և աճի համար նյութեր է տալիս: Պր-ն Կոլբեռն ամբողջությամբ տարված արդյունաբերության զարգացման մտահոգությամբ, սակայն համարում էր, որ անհրաժեշտ է կրճատել հարկերը և հողագործներին միջոցներ տրամադրել անկում ապրող գյուղատնտեսության վերականգնման համար: Բայց նա չկարողացավ դա կապակցել պետության շահերի հետ: Նա չասաց գլխավորը՝ հարկման ժամանակ որոշակի համակարգի հետևելու անհրաժեշտության և հացահատիկի ազատ առևտրի լուծման անհրաժեշտության մասին»: Կոլբեռն ամբողջ մտահոգությունն արդյունաբերությունն էր, որը արգելակելով հացի արտահանությունը, ըստ Արասխանյանի, նպատակ ուներ՝ «1. որքան կարելի է էժանացնել ցորենի գինը, որպեսզի դրանով բանվորի վարձը ևս, որքան կարելի է իջնի, բանվորի աշխատանքը էժան լինի: 2. Բանվորի վարձն էժանացնելով, ֆրանսիական գործարանները կարողանային ավելի էժան գնով ապրանքներ դուրս բերել, քան Անգլիան, Հոլանդիան և այլն, դրանցով Ֆրանսիան կարողանար խլել մյուս երկրների գործարանական արդյունքների առևտուրը»²: Այնուհանդերձ Արասխանյանը Կոլբեռնի քաղաքականության օգտին բերում է որոշակի փաստարկներ: Առաջին հերթին դա կապված էր Սուլլիից հետո ընկած՝ Ֆրանսիայի ընդհանուր տնտեսական քաղաքականության հետ, որն իր էության մեջ լինելով «հակազուղացիական», անտեսում էր հացահատիկային առևտրի հարցը. «գյուղացին ոչինչ չափ չէր գտնում հողը առաջվա չափ տարածությամբ մշակելու կամ որևէ կատարելագործություն մտցնելու երկրագործության սովորական սիստեմների մեջ: Առաջանալու, ծաղկելու փոխարեն, երկրագործությունը, մի խոսքով ընկավ հետադիմության մեջ»³: Մանուֆակտուրային արտադրության զարգացումը Ֆրանսիայում դարձել էր օրակարգի հարց, միջազգային տնտեսական հանրության մեջ տեղ զբաղեցնելու համար: Արասխանյանը չի ժխտում, որ Կոլբեռնի նախարարության տասնամյակները նաև կորուստների ժամանակաշրջան էր, որում անտեսված էին գյուղատնտեսության շահերը, որը հասել էր ծայրագույն քայքայման: Բայց դա նաև ձեռքբերումների ժամանակաշրջան էր, երբ Կոլբեռնի մերկանտիլիստական քաղաքականության շնորհիվ, Ֆրանսիան դարձել էր եվրոպական մայրցամաքի առևտրական ու արդյունաբերական ազգերից մեկը:

Ա.Արասխանյանը, Ֆրանսիայի տնտեսության համար կատարած ռեֆորմների վերափոխական նկրտումների առումով, զուգահեռ է գծում Կոլբեռնի և Թյուրգոյի միջև: Վերջինս մի կարճատև ժամանակ (1774-76-ին) լինելով Ֆրանսիայի ֆինանսների գլխավոր վերահսկիչը, իրականացրեց մի շարք ռեֆորմներ՝ հարկերի, հացի առևտրի, ցեխերի մասին, որոնք ուղի էին հարթում տնտեսական ազատության համար: Կոլբեռն որպես «պետական մեծ այր» նպատակ ուներ հասնել «որոշակի հաջողությունների նույնիսկ առավել անբարենպաստ հանգամանքներում», որ ցածր գների մակարդակը ընդհանուր բնույթ էր կրում սկսած XIV դարից, պայմանավորված էր ոչ այնքան արգելքների քաղաքականությամբ, որ, ինչպես ցույց է տալիս նախորդ շրջանի և կոլբեռնյան փուլի համեմատական վերլուծությունը, նրա անմիջական նպատակը գյուղատնտեսության մեջ «հացահատիկի ցածր գների կառավարումն էր», որ մինչև Թյուրգոն բացահայտեց այն «խորը փոխադարձ կապը, որ գոյություն ունի աշխատավորների դրույքաչափերի և պարենային ապրանքների գների միջև»⁴ և այլն:

Ֆրանսիայի գյուղատնտեսությունը, կապված հացի արտահանության արգելման հետ, անհաղորդ էր համաշխարհային գներին: Մինչդեռ շուկայական հավասարակշռության գներին համապատասխան են հասարակական արտադրության որոշակի համամասնություններ: Ամեն մի արտադրող ապրանքներ է գնում այլ արտադրողներից: Հետևապես շուկայական փոխանակությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ գնումների մի փակ շղթա, որոնք իրար են կապում բոլոր ապրանք արտադրողներին: Այդ իմաստով էլ, տնտեսական հավասարակշռության և առաջընթացի կարևոր պայմաններից մեկը ֆրանսիացի մտածող Պ.Բուազիլբերը համարում է «համամաս-

¹ Франсуа Кенэ, նշվ. աշխ., էջ 87:

² Ա.Արասխանյան, Հողի արդյունաբերությունը և հասարակությունը, Թիֆլիս, 1884, էջ 10:

³ Նույն տեղում, էջ 10:

⁴ Awetis Arachianantz, նշվ. աշխ., էջ 116:

նական գինը»: Ինչպես նկատում է Արասխանյանը, երկրում աստիճանաբար սկսում է ձևավորվել այն ուղղությունը, որը գյուղատնտեսության մեջ տեսնում էր «որպես ամբողջ տնտեսության կարևոր և անփոխարինելի բաղադրիչ»: Դա ըստ էության, կուլտիվի և նոր տնտեսական ուղղության սկզբնավորման և պայքարի ժամանակաշրջանն էր: Խոսքը վերաբերում է ֆիզիոկրատների ուղղությանը: Բուագիլբերի առաջադրած շատ գաղափարներ դարձան այն տեսական դրույթները, որոնք իրենց զարգացումը ստացան ֆիզիոկրատների ուսմունքում: Ինչպես նկատում է Արասխանյանը «Այս հեղինակն առաջինն էր, ով հացահատիկի առևտուրը դարձրեց գիտական ուսումնասիրության առարկա և, ինչպես վկայում են նրա աշխատությունները, բոլոր հիմնական գաղափարները դրանցում ամբողջապես նորությ էին պարունակում: Ցանկացած գրառում չի ամբողջացնում տվյալ ժամանակի հանրության գաղափարները, դրանք դեռևս պետք է անցնեին երկար ու խիզախ պայքարի երկարատև ժամանակահատված, ձևավորեին լիարժեք սերունդը՝ ի դեմս ֆիզիոկրատների դպրոցի առաջացումը»¹:

Բուագիլբերը գտնում է, որ, եթե շատ բան պայմանավորված է «հացահատիկի արտահանման արգելքի հետ», ուրեմն «անհրաժեշտ է արտահանման արգելքներին պատերազմ հայտարարել»: Նման և այդ կարգի նրա արտահայտությունները հիմք են տվել տնտեսագիտական մտքի պատմաբաններին Բուագիլբերին համարելու մանչեստերյան դպրոցի նախահայրերից մեկը, ինչը ենթադրում է ներմուծման և արտահանման բացարձակ ազատության ուսմունքը: Մինչդեռ իրականում մանչեստերյան ուսմունքը հետամուտ էր հացի նկատմամբ ցածր գների սահմանում և դրվատում էր արտասահման մրցակցության մուտքը, մինչդեռ, նկատում է Արասխանյանը, Բուագիլբերը կարևորում էր հացի նկատմամբ բարձր գները և ձգտում է սահմանափակել ներմուծումը և արտահանման դժվարությունների վերացումով հնարավորություն տալ հայրենական գյուղատնտեսությանը օգտվելու արտասահմանյան բարձր գներից: Այսպիսով, Արասխանյանը առանձնացնում է հացահատիկի առևտրի վերաբերյալ Բուագիլբերի ծրագրի երկու առանցքային կողմերը. Ներքին առևտուրն ազատել սահմանափակումներից, ինչը հնարավորություն կտա ընդլայնել ապրանքների և փողի շրջանառությունը ներքին շուկայում, հացահատիկի շուկան դարձնել ազատ և արհեստականորեն պահվող ցածր գների փոխարեն, որը չի ծածկում արտադրության ծախսերը, թողնել մրցակցության միջոցով նրա բնական կարգավորմանը: Նկատենք, որ հենց դա առիթ տվեց տնտեսագետներից մեկին ասելու, որ թեև Բուագիլբերի մոտ բացակայում է «lass'er-faire et laisser passer» արտահայտությունը, այնուամենայնիվ, այն «պտտվում էր նրա լեզվի ծայրին»:

Արասխանյանն անդրադարձ է կատարել նաև Բուագիլբերի կողմից պետության կարգավորիչ ֆունկցիաների մեկնություններին: Նա ավելի հստակ էր իր հակամերկանտիլիստական գրվածքներում: Նրա աշխատությունները գերազանց աղբյուրներ են Ֆրանսիայի ընդհանուր վիճակի և, հատկապես գյուղատնտեսական ու կուլտուրական անկման վերաբերյալ: Արասխանյանը դրվատանքով է խոսում նաև Վոբանի մասին, ով առաջարկում էր, որ պետության բոլոր հպատակները հավասարապես մասնակից դառնան ուղղակի հարկերի վճարմանը, սահմանելով «միասնական հարկ» սեփականության բոլոր ձևերից ու եկամուտներից: Սակայն ոչ մեկը, և ոչ էլ մյուսը չհասան «գիտական ճշմարտության բարձրացման, որ կարողանային դպրոց հաստատել»²:

Հատկապես XVIII դարի կեսերից սկսած ակնհայտ էր դարձել մի բարձրացող հետաքրքրություն հողի նկատմամբ, առաջ բերելով այն հայեցողությունը, որը երկրի և ազգի հիմքը կապում էր այդ ճյուղի հետ: Հասարակական մտքի ուշադրությունը ագրարային հարաբերությունների ուսումնասիրման հարցերն էին: Արասխանյանն անդրադառնում է մի ամբողջ շարք մտածողների, ովքեր նախանշեցին տնտեսագիտական մտքի մի նոր պոտենցիալի հայտնությունը: Այն իրագործեց Ֆրանսուա Քենեն՝ ստեղծելով տնտեսական մտածողության նոր դպրոց՝ ֆիզիոկրատների դպրոցը: «Հացի առևտրի հարցը ստացավ առաջնային կարևորություն, - գրում է Արասխանյանը,- թերևս այն ժամանակվա տնտեսագիտական գրականության ամենատարած-

¹ Awetis Arachaniantz, նշվ. աշխ., էջ 148:

² Ա. Արասխանյան, Հողի արդյունաբերությունը..., էջ 8:

ված թեման, նույնիսկ բարձրադիր կանայք սկսեցին կարդալով գտնել այդ գրվածքներում ճաշակի խնդիրը»¹:

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ, ինչպես Վոլտերն է գրում. «Բանաստեղծություններով ողբերգություններով, կատակերգություններով, օպերաներով, վեպերով և առավել ևս բարոյականության և աստվածաբանության հարցերի մասին մտորումներով հագեցված ֆրանսիական ժողովուրդը մոտավորապես 1750 թվականին, վերջապես, սկսեց մտածել հացի մասին»²:

XVIII դարի կեսերին և ֆրանսիական հեղափոխության նախօրեին երկրի գյուղատնտեսության ընդհանուր վիճակի մեջ ոչինչ չէր փոխվել: Ինչպես վկայում է Արասխանյանը, ժամանակի նշանավոր մտածողների՝ Գալիանեի, Գուրնեի, Թյուրգոյի, Նեկերի հայացքներում իշխում էր ֆիզիոկրատական տնտեսական ուսմունքի այն հիմնադրույթը, ըստ որի զուտ արդյունքը ստեղծվում է գյուղատնտեսության մեջ: Իսկ ազատ առևտրի նրանց պահանջը, գլխավորապես պայմանավորված էր այն ենթադրությամբ, թե հացի արտահանման ազատությունը կհանգեցներ հացի գների աճին, հետևապես նաև հողագործության և «զուտ արդյունքի» աճին: Այսինքն, ազատ առևտուրն ակնկալում էր ոչ թե գների իջեցում, այլ գների աճ. «ոչ հացահատիկի արտահանության վրա բացարձակ արգելք, ոչ էլ դրա բացարձակ ազատությունը»: Իսկ ինչպես վկայում են աշխատության մեջ բերված վիճակագրական տվյալները, 1760-ական թվականներից սկսած մինչև 1789թ. առևտուրը կարգավորող օրենքները, որոնց անդրադառնում է Արասխանյանը, չհանգեցրին ճյուղի դրական տեղաշարժերի:

«Գերմանական քաղաքական շարաթաթերթի» գրախոսողը դրվատում է Արասխանյանի աշխատությունը, ընթերցողին խորհուրդ տալով կարդալու այն, որը «հեղինակին ջանասիրության, սրամտության և պատմելու ընդունակության (Darstellungsyabe) հավասարապես պատիվ է բերում», միաժամանակ ցանկություն հայտնելով իրականացնելու հարցի պատմության հետազոտությունը հետագա ժամանակաշրջանի համար: Այն չիրականացավ: Արասխանյանը մերժում է Գուստավ Շմոլերի առաջարկը աշխատելու իբրև «Սոցիալական գիտությունների» տարեգրքի խմբագրի օգնականի և «պրոֆեսորական ասպարեզը» քաղաքատնտեսության ամբիոնում, նախընտրելով «իր հայրենի երկրում... ծառայելու ազգի առաջադիմությանը»:

¹ Awetis Arachianantz, Die franzosicede ..., էջ 147:

² Стен ` В.В.Святловский, История экономических идей, М., 1923, с. 104-105.

«ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ...» ՊԱՏՄԱԲԱՆԸ

ՌՈՐԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող, բաժնի վարիչ

ԱՐՏԱՎԱԶԴ ՍՈՒՐԵՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*,
ՀՃՊՀ Էկոնոմիկայի և մենեջմենթի ամբիոնի վարիչ

Համառոտագիր

Քիչ ուսումնասիրություններ չեն գրվել հայտնի տնտեսագետ Ավետիք Արասխանյանի տնտեսագիտական հայացքների վերաբերյալ: Խոսքը նրա «Die französische Getreidehandelspolitik bis zum Jahre 1789 on Jhrem Zussmenhange mit derland, Volks und Finanzwizhschaft Frankreichs» աշխատության մասին է, որին գրականության մեջ կատարվել է թողուցիկ անդրադարձ: Այն դարձել է սույն հոդվածի քննության առարկան: Ֆրանսիայի հացահատիկային առևտրի քաղաքականության պատմության նրա արժարձումները լրացնում և ամբողջացնում են տնտեսագետի հայացքների պարագծերը:

Բանալի բաներ. *հացահատիկային առևտրի պատմություն, հաղագործություն, արտահանում, հարկային համակարգ, մերկանտիլիզմի քաղաքականություն, կոլբերիզմ, ֆիզիոկրատների դպրոց:*

ИСТОРИК «ФРАНЦУЗСКОЙ ТОРГОВОЙ ПОЛИТИКИ ...»

РОБЕРТ НЕРСЕОВИЧ САРИНЯН, *д.э.н., профессор*
зав. отделом, главный научный сотрудник Института экономики им. М.Котаняна

АРТАВАЗД СУРЕНОВИЧ ТАТЕВОСЯН, *к.э.н., доцент*
зав. кафедрой экономики и менеджмента
Национального политехнического университета Армении

Аннотация

Написано немало исследований об экономических воззрениях известного экономиста Аветика Арасханяна. Речь идет о его работе «Die französische Getreidehandelspolitik bis zum Jahre 1789 on Jhrem Zussmenhange mit derland, Volks und Finanzwizhschaft Frankreichs» на немецком языке, которая в литературе упомянута лишь мимоходом. Исследованию этой работы и посвящена настоящая статья. Анализ истории развития политики зерновой торговли Франции дополняет и делает целостным линию взглядов А.Арасханяна.

Ключевые слова: *история зерновой торговли, земледелие, экспорт, налоговая система, политика меркантилизма, кольбертизм, школа физиократов.*

THE HISTORIAN OF "FRENCH TRADE POLICY ..."

ROBERT NERSES SARINYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

ARTAVAZD SUREN TADEVOSYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*,
Head, Economics and Management Department
National Polytechnic University of Armenia

Abstract

A lot of research has been carried out regarding the economic views of the well-known economist Avetik Araskhanyan. It is about his work "Die Französische Getreidehandelspolitik bis zum Jahre 1789 on Jhrem Zussmenhange mit derland, Volks und Finanzwizhschaft Frankreichs" in German, which in the literature is mentioned only fleetingly. This article is devoted to the investigation of this work. An analysis of the history of the development of the grain trade policy of France supplements and makes the line of views of A. Araskhanyan complete.

Keywords: *The history of grain trade, harvesting, exports, tax system, mercantilism policy, Colbertism, the school of physiochrats*

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ УПРАВЛЕНЧЕСКОЙ МЫСЛИ

Управление как сфера человеческой деятельности появилось давно. Во все времена совместная работа больших или малых групп людей, так или иначе, требовала управления, а именно: планирование, распределение обязанностей между работниками, объяснения каждому исполнителю его выгоды или необходимости участия в общем деле, контроля за работой со стороны старших.

Согласно представлениям историка основной концепцией управления является то, что каждый, будь он руководителем или подчиненным, должен находиться в нужное время на нужном месте и соответствовать своей работе. Этот принцип был выявлен Платоном и Аристотелем и получил в науке управления понятие «правильный человек в правильном месте».¹

Понятие мотивации тесно связано с проблемой управления персоналом. Рассмотрим и проведем анализ некоторых теорий мотивации. Многочисленные теории мотивации стали появляться ещё в работах древних философов. В настоящее время таких теорий насчитывается уже не один десяток. Чтобы их понять, важно знать предпосылки их возникновения.

Истоки современных теорий мотивации следует искать там, где впервые, как таковые, зародились психологические знания.

Взгляды на сущность и происхождение мотивации человека на протяжении всего времени исследования этой проблемы неоднократно менялись, но неизменно располагались между двумя философскими течениями: рационализмом и иррационализмом. Согласно рационалистической позиции, а она особенно отчетливо выступала в работах древних философов вплоть до середины 19 века, человек представляет собой уникальное существо особого рода, не имеющее ничего общего с животными. Считалось, что он, и только он, наделен разумом, мышлением и сознанием, обладает волей и свободой выбора действий. Мотивационный источник человеческого поведения усматривается исключительно в разуме, сознании и воле человека.

Иррационализм как учение распространяется в основном на животных. В нем утверждалось, что поведение животного в отличие от человека несвободно, неразумно, управляется темными, неосознаваемыми силами биологического плана, имеющими свои истоки в органических потребностях.

Первыми собственно мотивационными, психологическими теориями, вобравшими в себя рационалистические и иррационалистические идеи, следует считать возникшие в 17–18 вв. теорию принятия решений, объясняющую на рационалистической основе поведение человека, и теорию автомата, объясняющую на иррационалистической основе поведение животного. Первая появилась в экономике и была связана с внедрением математических знаний в объяснение поведения человека, связанного с экономическим выбором. Затем была перенесена на понимание человеческих поступков и в других сферах его деятельности, отличных от экономики.

Развитие теории автомата, стимулированное успехами механики в 17–18 вв., далее соединилось с идеей рефлекса как механического, автоматического, врожденного ответа живого организма на внешние воздействия. Раздельное, независимое существование двух мотивационных теорий: одной – для человека, другой – для животных, поддержанное теологией и разделением философии на два противоборствующих лагеря – материализм и идеализм, – продолжалось вплоть до конца 19 века.

Вторая половина 19 века ознаменовалась рядом выдающихся открытий в разных науках, в том числе в биологии – появлением эволюционной теории Ч. Дарвина. Она оказала влияние не только на природоведение, но и на медицину, психологию и другие гуманитарные науки. Под влиянием теории эволюции Дарвина в психологии началось интенсивное изучение разумных форм поведения у животных (В. Келер, Э. Торндайк и др.) и инстинктов у человека (З. Фрейд, У. Макдугалл, И.П. Павлов и др.).

За тысячи лет до того, как слово «мотивация» вошло в лексикон руководителей, было хорошо известно, что можно намеренно воздействовать на людей для успешного выполнения задач

¹ Յու. Սուվարյան, Վ. Միրզոյան, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013, էջ 77:

организации. Самым первым из применяемых приемов был метод кнута и пряника. В Библии, древних преданиях и даже античных мифах можно найти множество историй, в которых короли держат награду перед глазами предполагаемого героя или заносят меч над его головой. Это было обычным явлением в странах Запада в конце XIX в. В течение почти всего периода промышленной революции экономические и социальные условия жизни в сельских местностях Англии были так тяжелы, что фермеры наводняли города и буквально выпрашивали как милостыню возможность работать по 14 ч. в сутки на грязных, опасных для жизни фабриках за плату, которой едва хватало, чтобы выжить. Когда Адам Смит писал свой труд «Исследование о природе и причинах богатства народов», жизнь для простого человека была очень тяжелой. На эту концепцию «экономического человека», которая рассматривалась выше, несомненно, очень большое влияние оказало наблюдение этих жестоких реалий. В условиях, когда большинство людей боролось за выживание, был вполне понятен вывод, к которому пришел Смит, о том, что человек всегда, когда ему представится такая возможность, будет стараться улучшить свое экономическое положение.

Когда, примерно в 1910 г., возникла «школа научного управления», жизнь трудящихся существенно не улучшилась, несмотря на достижения технологии. Однако Тейлор и его современники уже осознали всю глупость заработков на грани голода. И они сделали мотивацию по типу кнута и пряника более эффективной, когда объективно определили понятие «достаточной дневной выработки» и предложили оплачивать труд тех, кто производил больше продукции, пропорционально их вкладу. Увеличение производительности труда, явившееся результатом использования этого метода мотивации, в сочетании с более эффективным применением специализации и стандартизации, было впечатляющим. Успех мотивации по типу кнута и пряника был так велик, что приятные ощущения от него до сих пор сохраняются у руководителей.

Уже давно идентифицированы потребности и влечения как основные элементы в составе человеческой личности, но только со времени приложения теорий Чарльза Дарвина к проблемам психологической адаптации к окружающей среде были обнаружены две важные связи между идеями Дарвина и мотивацией. Первая состоит в том, что люди в силу своей принадлежности к животным, по крайней мере частично, действуют под влиянием инстинктов (утоления жажды, голода, стремления к продолжению рода и т. д.). Вторая заключается в эволюционной роли поведенческих характеристик, к которым относится способность к мотивации, - такой же, как роль характеристик физических.

